Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀՐ. Ռ. ՍԻՄՈՆՅԱՆ

ԹՈՒՐՔ ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» 1986

ԳՄԴ 63. 3 (0) 53
Ս 504

Գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Մ. Վ. Արզումանյան, *պատմական գիտությունների թեկնածու* Ռ. Պ. Կոնդակչյան

Խմբագիր՝ Կ. Ս. Վարդանյան

Грачик Рубенович Симонян

ИДЕОЛОГИЯ И ПОЛИТИКА ТУРЕЦКОЙ НАЦИОНАЛЬНОЙ БУРЖУАЗИИ

(На армянском языке)

Ереван «Айастан» 1986

Սիմոնյան Հր. Ռ.

Ս 504 Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը։ /Խմբ. Կ. Ս. Վարդանյան/.— Եր.։ Հայաստան, 1986. 564 էջ.

Գրքում պատմական իրադարձությունների ֆոնի վրա բացահայտվում է թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը կազմող հայացքների և դրանց վրա խարսխված քաղաքականության էությունը։ Աշխատությունն ընդգրկում է անցյալ դարի 50-ական թվականներից մինչև ներկա դարի 20-ական թվականներն ընկած ժամանակահատվածը։

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար։

Ս $\frac{0302030900}{701\ (01)\ 86}$ 58—86 ԳՄԴ 63. 3 (0) 53

© «Հայաստան» հրատարակչություն, 1986

Երկու խոսք

Վերջին հարյուրամյակում Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքն ընթանում է թուրք ազգային բուրժուազիայի գաղափարական ազդեցության ներքո։ Դեռևս անցյալ դարի կեսերից սկսած նորածագ և առաջադիմող այդ դասակարգն իր ճանապարհին հանդիպեց բազում խոչընդոտների։ Դրանք, որ հիմնականում պայմանավորված էին երկրի սոցիալ-տնտեսական հետամնացությամբ, Թուրքիայի կիսագաղութային վիճակով և այլ պատճառներով, կապիտալիստական զարգացման ընթացքից ետ էին պահում թուրք ազգային բուրժուազիային։ Բայց վերջինս մտադիր չէր հաշտվելու ստեղծված իրավիճակի հետ։ Երկրի տնտեսական, ապա և քաղաքական կյանքում գերիշխող դիրքեր գրավելու համար նա դիմեց ամենաարմատական միջոցների. բազմապիսի միջոցառումներ իրականացրեց և՛ տնտեսության, և՛ քաղաքականության բնագավառում։ Իր գործողությունները հիմնավորելու համար նա առաջ քաշեց բազմաթիվ տեսակետներ, գաղափարներ, կոնցեպցիաներ, որոնք և կազմեցին նրա, որպես դասակարգի, գաղափարախոսական զինանոցը։

Սույն աշխատության հեղինակը նպատակ է հետապնդում ցույց տալ թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսության ծագման ու զարգացման ընթացքը, նրա հետագա փոխակերպումների էտապները։ Գրքում տրված չէ հետազոտվող ժամանակաշրջանում թուրք ազգային բուրժուազիայի առաջացման, ձևավորման և պայքարի, նրա գործած ավերածությունների և կրած պարտությունների համակողմանի պատմությունը։ Այստեղ չկան պատմական դեպքերի մանրամասն նկարագրու-

թյուններ։ Շեշտը դրված է թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսության վերլուծության, նրա կոնցեպցիաների բովանդակության բացահայտման վրա։ Իսկ դրա համար անհրաժեշտ է այս կամ այն կերպ պատասխանել մի շարք ընդհանուր հարցադրումների. ե՞րբ, ինչպե՞ս և սոցիալ-տնտեսական ինչպիսի՞ պայմաններում առաջ եկավ ու ձևավորվեց կապիտալիստական զարգացման ընթացքից ետ մնացած թուրք ազգային բուրժուազիան, ինչպիսի՞ յուրօրինակ ճանապարհ անցավ նա, «ընթացքից ետ մնալն» ի՞նչ առանձնահատկություններով դրսևորվեց նրա գաղափարախոսության և պրակտիկ գործունեության մեջ, ինչպիսի՞ արգելքներ նա հաղթահարեց ֆեոդալական-միապետական կարգերի դեմ մղած պայքարում, ինչո՞ւ այդ բուրժուազիան հազվագյուտ հետևողականություն հանդես բերեց իր զարգացման սկզբնական ժամանակներում դավանած բուրժուազգայնական լիբերալ և ազատական գաղափարները հետագայում ծայրահեղ ազգայնական, շովինիստական, մարդատյաց հայացքների մի կուռ սիստեմի վերափոխելու և այն պետական գաղափարախոսության աստիճանի բարձրացնելու հարցերում։

Թուրք ազգային բուրժուազիայի առաջ քաշած գաղափարները ցույց են տրված պրակտիկ գործողությունների մեջ այնքանով, որքանով այդ գործողությունների նկարագրությունները նպաստում են տվյալ գաղափարի, ուսմունքի, կոնցեպցիայի բովանդակության բացահայտմանը։

Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանության սաղմնավորման, զարգացման և վերջնական ձևավորման պրոցեսը տևել է շուրջ 55—60 տարի՝ անցյալ դարի 60-ական թվականներից մինչև ներկա դարի 10-ական թվականների կեսերը։ Հետագա տասնամյակներին նա առաջ է քաշել զանազան գաղափարներ ու հայացքների համակարգեր, որոնք հիմնականում բոլորն էլ անցյալում արտահայտած մտքերի կրկնություններ էին, այդ մտքերի զանազան մեկնաբանություններ, որոնք նոր ժամանակներում հարմարեցվել են թուրքական բուրժուազիայի դասակարգային պահանջներին։ Այդ մուծումները որևէ էական փոփոխություն չեն մտցրել թուրքական բուրժուազիայի արդեն ավարտուն և վերջնական տեսք ընդունած տեսական զինանոցում, այլ միայն տարբեր կողմերից ու տարբեր չափերով լրացրել ու կոնկրետացրել են նրա այս կամ այն գաղափարական կոնցեպցիան։

Թուրք ազգային բուրժուազիայի առաջացման և ձևավորման պատմական ժամանակահատվածը հարուստ է այնպիսի իրադարձություններով, որոնք բախտորոշ նշանակություն ունեցան հայ ժողովրդի համար։ Այդ ժամանակաշրջանին են վերաբերում հայ ժողովրդի հիմնական՝ արևմտյան հատվածի գերմարդկային ճիգերը՝ դուրս գալու թուրքական տիրապետության պայմաններում ստեղծված ահավոր կացությունից, նրա ազատագրական ոգորումները և վերջապես նրա համազգային սպանդն իր չորսհազարամյա հայրենիքում։ 1860—1920-ական թվականներն ընդգրկող ժամանակահատվածը ոչ միայն ճակատագրական եղավ արևմտահայության համար, այլև իր խոր կնիքը թողեց ողջ հայ ժողովրդի հոգեկան աշխարհի վրա։

Գրքում բացահայտված են թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանության հիմնական կոնցեպցիաները՝ օսմանիզմ, իսլամիզմ, պանիսլամիզմ, «նոր օսմանիզմ», թուրքիզմ, պանթուրքիզմ և այլն։ Սակայն շեշտը դրված է այդ գաղափարաբանության պսակը կազմող պանթուրքիզմի վրա։ Այն, որպես թուրք ռեակցիոն բուրժուազիայի քաղաքական իդեալ, իր մեջ ծայրահեղ շովինիզմ ու մարդատյաց ռասիզմ է միավորում, հանդես գալիս միլիտարիզմի և ագրեսիայի դրոշով։ Կոնկրետ ու որոշակի է պանթուրքիզմի ելակետը. նախախնամությունը Թուրքիային օժտել է պատմական մեծ առաքելությամբ՝ ստեղծել թուրքական մի լայնածավալ կայսրություն և նրա մեջ միավորել այն բոլոր հողերը, որոնց վրա բնակվում են թուրքական լեզվախմբին պատկանող ժողովուրդները։ Թեև յոթ տասնամյակ է անցել պանթուրքիզմի վերջնական ձևավորումից, բայց նրա սկզբնավորումը շուրջ մեկդարյա պատմություն ունի։ Այդ երկար ժամանակաշրջանում թուրք ազգային բուրժուազիան բազում ձախողումներ է կրել իր քաղաքական իդեալի իրականացման համար մղվող պայքարի ճանապարհին։ Չնայած դրան, նա չի հուսահատվել. դեռ ավելին, այսօր էլ այդ իդեալը խորթ չէ նրան։ Պատահական չէ, որ ժամանակ առ ժամանակ ականատես ենք լինում ժամանակակից Թուրքիայում պանթուրքիզմի և իսլամիզմի ռազմաշունչ գաղափարների վերառկայծմանը։ Պանթուրքիզմը դեռ կենդանի է, և հնարավոր պայմանների դեպքում այն ունակ է իր դերի մեջ մտնելու։

Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը բուրժուական գաղափարախոսության օրգանական, անբաժան մասն է։ Բայց այն ունի մի շատ կարևոր առանձնահատկություն, մի էական հատկանիշ, որը նրան զանազանում է կապիտալիստական մնացած երկրների բուրժուազիայի գաղափարախոսությունից։ Ինչպես հայտնի է, բուրժուական գաղափարախոսությունն իր բնույթով ընդհանրական է և այն սահմանափակված չէ որևէ երկրի ազգային սահմաններով։ Կապիտալիստական այս կամ այն երկրի բուրժուազիայի, նրա գաղափարախոսների կողմից առաջ քաշված տեսական որևէ դրույթ, գաղափար, ուսմունք վաղ թե ուշ դառնում է նաև կապիտալիստական մյուս երկրների բուրժուաների սեփականությունը, տեղ գրավում նրանց տեսական զինանոցում։ Ուրիշ խոսքով, բուրժուական գաղափարները և ուսմունքները կիրառելի են կապիտալիստական բոլոր երկրներում։ Այլ է թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսության պարագան։ Իր մեջ ներառելով բուրժուական գաղափարախոսության ամենառեակցիոն կողմերը, այդ գաղափարախոսությունը կոչված է անմիջականորեն ծառայելու հենց թուրք բուրժուազիայի դասակարգային շահերին։

Հեղինակ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ։ ԹՈՒՐՔ ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

19-րդ դարի 40—50-ական թվականներ։ Օսմանյան կայսրության մեջ, ներքին սոցիալ-տնտեսական և արտաքին-քաղաքական բարդ պայմաններում, ծայրահեղորեն դանդաղ ու ցավագին սկսեցին սաղմնավորվել կապիտալիստական հարաբերությունները։

Կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար առավել բարենպաստ պայմաններ կային կայսրության եվրոպական մասի, Անատոլիայի ծովահայաց և Միջերկրական ծովի առափնյա քաղաքներում։ Այս վայրերում այդ հարաբերությունների սաղմնավորման տարրեր մենք տեսնում ենք է՛լ ավելի վաղ՝ դեռևս անցյալ դարի 30-ական թվականներին։ Առաջին հերթին հենց այդ քաղաքներում էին դրսևորվում արտադրության կապիտալիստական եղանակին բնորոշ նախադրյալները, դրանցում էին կատարվում ապրանքների արտադրությունն ու շրջանառությունը, որոնք բուրժուական հասարակարգի գլխավոր տարբերիչ գծերն են։

Ծովափնյա նավահանգստային քաղաքներում կապիտալիստական արտադրության սաղմնավորումը հիմնականում կատարվում էր ավանդական տնայնագործական արտադրության հիմքի վրա. աստիճանաբար հանդես էին գալիս նաև խոշոր մանուֆակտուրաներ և ֆաբրիկաներ։

Պրոֆ. Ա. Դ. Նովիչևը գրում է. «19-րդ դարի 30-ական թվականներից քաղաքներում (Օսմանյան կայսրության։— Հ. Ս.) սկսեցին զարգանալ արդյունաբերության մի քանի ճյուղեր՝ կաշեգործության, բրուտագործության, զենքի, տեքստիլ։ Կանոնավոր բանակը տեղական արդյունաբերական արտադրանքի

խոշորագույն սպառողն էր։ Բուն արդյունաբերության մեջ էլ սկսեցին երևան գալ առաջադիմական պրոցեսներ. աճեց աշխատանքի բաժանումը, երևան եկան մանուֆակտուրաներ և նույնիսկ ֆաբրիկաներ... Այսպիսով, թուրքական արդյունաբերության մեջ հանդես եկան կապիտալիստական տարրեր... Նկատելիորեն աշխուժացավ ներքին և հատկապես արտաքին առևտուրը, որն իր հերթին նպաստում էր ծովեզրյա և ներքին առևտրական գլխավոր ուղիների վրա ընկած քաղաքների զարգացմանը»[1]։

Ի տարբերություն նավահանգստային քաղաքների, կայսրության ներքին նահանգներում ամենուրեք տարածված էր մանր ապրանքային արտադրությունը։ Ավանդական արհեստավորական արտադրությունը նույնպես աստիճանաբար ընդգրկվում էր նոր ձևավորվող կապիտալիստական զարգացման ոլորտը, չնայած այդ պրոցեսը շատ դանդաղ էր ընթանում։ Իբրև կանոն, կայսրության ներքին նահանգներում մանր ապրանքային արտադրության արդյունքի միայն մի փոքր մասն էր դուրս գալիս շուկա։ Այսպես, օրինակ, Վանի վիլայեթի 900 արհեստանոցներում, որտեղ աշխատում էր 2300 մարդ, այսինքն՝ յուրաքանչյուր արհեստանոցում միջին հաշվով 2,5 մարդ, տարեկան պատրաստվում էին 90 հազար կտոր բամբակե և բրդե տարբեր տեսակի գործվածքներ, որից միայն 25 հազարն էր վաճառքի հանվում վիլայեթի սահմաններից դուրս[2]։ Այդ արտադրանքի է՛լ ավելի փոքր մասն արտահանվում էր արտասահմանյան շուկաներ, որտեղ հատկապես մեծ պահանջարկ կար թուրքական այնպիսի պատրաստի արտադրատեսակների նկատմամբ, ինչպիսիք էին մետաքսը, թավիշը, մահուդը, սաֆյանը, նախշազարդ պատյաններով սառը զենքերը։

Կապիտալիստական հարաբերություններն է՛լ ավելի դանդաղ, բայց այնուամենայնիվ թափանցում էին նաև գյուղատնտեսության մեջ։ Գյուղում այդ հարաբերությունների զարգացման համար բարենպաստ հող կար բալկանյան նահանգներում, բայց ընդհանուր պրոցեսից դուրս չմնացին նաև կայսրության փոքրասիական տարածքները։ Կապիտալիստական հարաբերությունների ներմուտին գյուղ նպաստում էր այն, որ կառավարությունը

[1] **Ա. Դ. Новичев.** Турция. Краткая история. М., 1965, с. 80.

[2] Տե՛ս **Ю. Петросян.** Младотурецкое движение, изд-во «Наука», М., 1971, էջ 35։

արտոնություններ էր տվել այն հողատերերին ու վարձակալներին, որոնք մշակում էին տեխնիկական կուլտուրաներ և հատկապես բամբակ, որի գինն այդ ժամանակ միջազգային շուկայում խիստ բարձրացել էր։ 1858 թվականին ընդունված հողային նոր օրենքով իրավական ձևակերպում տրվեց հողատիրության ռազմաավատական սիստեմի վերացմանը։ Դրան հաջորդեց հողի մասին 1867 թվականի օրենքը, որով հողը դառնում էր առևտրական լայն գործարքների առարկա։ Գյուղատնտեսության մեջ ապրանքադրամական հարաբերությունների զարգացումն առաջ բերեց գյուղացիների շահագործման կապիտալիստական ձևեր։

Մինչև 18-րդ դարի վերջերը և 19-րդ դարի սկզբները թուրք ֆեոդալական վերնախավերի համար հողատիրությունը հարստացման ոչ թե հիմնական, այլ օժանդակ աղբյուր էր։ Հիմնական աղբյուրը շարունակում էր մնալ նոր երկրների գրավումը և կողոպուտը։ Բայց, այժմ, 19-րդ դարի կեսերին, խոսք չէր կարող լինել նոր գրավումների և պատերազմների միջոցով հարստանալու մասին։ Գլխավոր մտահոգությունը եղած ընդարձակածավալ տարածքների պահպանումն էր։ Կայսրության հողերի մեծ մասը, այն էլ ամենալավ հողերը, պատկանում էին խոշոր կալվածատերերին, գլխավորապես՝ տեղի թուրք բեգերին կամ մայրաքաղաքում նստած պետական մակաբույծ պաշտոնյաներին ու փաշաներին։ Թալանի հույս չունենալով դրսում, նրանք արդեն սկսել էին հետաքրքրություն ցուցաբերել հողի տնտեսական շահութաբերության նկատմամբ, մտածել նրա նկատմաբերությունը բարձրացնելու մասին։ Առանձին խոշոր կալվածատիրական տնտեսություններում սկսեցին օգտագործել վարձու աշխատանքը, երևացին գյուղատնտեսական մեքենաներ։ Աճում էր գյուղատնտեսության ապրանքայնությունը, մեծանում էր արտահանվող գյուղատնտեսական ապրանքների ծավալը։ Թուրք ֆեոդալներից շատերի համար հողատիրությունը հարստացման օժանդակ աղբյուրից վերաճում էր հիմնականի։

Որոշ բարեփոխումների ենթարկվեց վարչակառավարական և դատական համակարգը։ Այդ բարեփոխումների անհրաժեշտության գաղափարը ծագել էր վաղուց, դեռ 18-րդ դարի վերջերին և արդեն 19-րդ դարի 30-ական թվականներից դարձել էր քա-

ղաքական անհետաձգելի պահանջ։ Բարեփոխումների նպատակն էր՝ կառավարման սիստեմի բարելավման միջոցով պահպանել կայսրության ամբողջականությունը, ապաքինել «հիվանդ մարդուն», ինչպես այն ժամանակ ընդունված էր անվանել Թուրքիան։

1839 թվականին սուլթան Աբդուլ Մեջիդը ազդարարեց սուլթանական մի հրովարտակ, որի ներշնչողը և կազմողներից մեկը Լոնդոնի նախկին դեսպան, մեծ վեզիր Մուստաֆա Ռեշիդ Ալի փաշան էր։ Հրովարտակը, որ հայտնի է Նվիրական հրովարտակ կամ Գյուլհանեի հաթթ-ի շերիֆ անվամբ[1], կառավարման արևելյան բռնապետական ձևերից հրաժարվելու և եվրոպական ձևերին անցնելու առաջին փորձն էր։ Այն հռչակում էր առանց դավանանքի խտրության կայսրության բոլոր հպատակների կյանքի, պատվի և ունեցվածքի անվտանգություն։ Ազդարարվում էր նաև, որ հետայսու քրիստոնյաները իսլամներին «հավասար» իրավունքներ են ստանում[2]։

Մեծ վեզիր Ռեշիդ փաշան մի քանի տարի ջանքեր էր գործադրում երկիրը կառավարելու հաթթ-ի շերիֆի հռչակած սկզբունքներով. հետապնդում էր զեղծումները, փորձում էր կանխել զանազան պաշտոնյաների ապօրինի արարքները և այլն[3]։ Հին Թուրքերն այնքան էին դայրացած բարեփոխումների ջատագով Ռեշիդ փաշայի վրա, որ մեղադրանք էին հարուցում, թե նա «բացարձակապես անհավատներին ծախված մի «գյավուր» է»[4]։

Նույն սուլթանի՝ Աբդուլ Մեջիդի օրոք, 1856 թվականին, հրա-

[1] Անունը ստացել է մայրաքաղաք Ստամբուլի Գյուլհանե պալատից, որի պարտեզում Ռեշիդ փաշան 1839 թ. նոյեմբերի 3-ին հռչակեց հաթթ-ի շերիֆը։

[2] Տե՛ս Д. Т. Розен, История Турции от победы и реформы в 1826 году до Парижского трактата в 1856 году, СПб. 1872, ч. 2 էջ 19, А. Убичин и П. де Куртейл, Современное состояние Отоманской империи (статистика, правление, администрация, финансы, армия, общины немусульманские и пр.), СПб. 1877, էջ 203—207, «Турецкий сборник» (к событиям на Ближнем Востоке), СПб., 1909, էջ 73—76, Ф. Шабанов, Государственный строй и правовая система Турции в период танзимата, Баку, 1967, էջ 42—50:

[3] Տե՛ս А. Ф. Миллер. Мустафа паша Байрактар, М.—Л., 1947.

[4] «Գրական տարեցույց», ԺԲ տարի, Մարսել, 1956, էջ 19—20։

պարակվեց երկրորդ հրովարտակը, որի նախագիծը կազմել և սուլթանին էր ներկայացրել մեծ վեզիր Ֆուադ փաշան։ Այս հրովարտակը, որը ստացավ Արքունի հրովարտակ կամ հաթթ-ի հումայուն անունը, հիմնականում կրկնում և լրացնում էր Գյուլհանեի հաթթ-ի շերիֆը[1]։

Հետագա տարիներին Բարձր Դուռը, ինչպես այն ժամանակ անվանում էին Թուրքական կառավարությանը, հռչակեց նաև մի քանի ուրիշ ռեֆորմներ։ Մասնավորապես, 1843 թվականի սեպտեմբերին, ընդունվեց զինվորական ռեֆորմի մասին օրենքը, որի համաձայն օսմանյան բանակը վերակազմվեց. եվրոպական բանակների նման այն բաժանվեց երկու հատվածի՝ ա) գործող բանակ (նիզամիե), որտեղ զորակոչված երիտասարդները ծառայում էին հինգ տարի և բ) պահեստի բանակ (ռեսիֆ)՝ յոթ տարվա ծառայության ժամկետով։ Սրա հիման վրա կազմվեց օսմանյան հինգ բանակ[2]։ 1864 թվականին ընդունված վիլայեթների մասին օրենքով երկրում ստեղծվեց վարչական նոր սիստեմ[3]։

Բարենորոգումների ժամանակաշրջանը Թուրքիայում ստացավ բանզիմաթ[4] անունը։ Սովորաբար ամեն մի ռեֆորմ տրվյալ երկրի հասունացած ներքին պահանջմունքների, սոցիալ-տնտեսական փոփոխություններ կատարելու անհրաժեշտության արդյունք է։ Այդ բանը սակայն չի կարելի ասել Թուրքիայում այդ ժամանակ հռչակած առաջին բարենորոգումների մասին։ Դրանք ըստ էության արմատական վերափոխումներ չէին, այլ երկչոտ փորձեր ինչ-որ կերպ կարգ ու կանոն հաստատելու երկրում, կարգավորելու ֆեոդալիզմը, դրանով իսկ ամրապնդելու գոյություն ունեցող կարգերը։

Անդրադառնալով այս հանգամանքին, սովետական Թուրքագետ Ա. Ֆ. Միլլերը նշում է, որ հիշատակված ռեֆորմների խթանը Թուրքիայի ներքին առաջադիմությունը չէր, ինչպես դա տեղի էր ունենում ուրիշ երկրներում։ «Գլխավոր, եթե ոչ միակ պատճառը ղեկավար դասակարգի ոչ մեծ լուսավորյալ խմբի

[1] Տե՛ս «БСЭ», второе издание, т. 43, М., 1956, էջ 498:

[2] Տե՛ս «Գրական տարեցույց», ԺԲ տարի, էջ 18—19։

[3] Տե՛ս А. Ф. Миллер, Краткая история Турции, ОГИЗ-Госполитиздат, М., 1948, էջ 6:

[4] Անունը առաջացել է բանզիմա բառից, որը նշանակում է վերափոխում, կարգավորում:

ձգտումն էր՝ ռեֆորմների միջոցով կայսրությունը փրկել մոտալուտ կործանումից»[1]։ Կիսատ-պռատ այս ռեֆորմները չէին կարող սակայն կործանումից փրկել կայսրությունը։ Պատահական չէ, որ դրանց ազդարարություններն այդպես էլ մնացին թղթի վրա։ «Խղճուկ կերպով խորտակվեցին քաղաքակրթության ուղին բռնելու թուրքական կառավարության բոլոր փորձերը...»[2],— գրում էր Կ. Մարքսը։

Բայց թանզիմաթն այնուամենայնիվ որոշ դրական հետք թողեց կայսրության հասարակական-քաղաքական կյանքում։ Մասնավորապես այն նպաստեց երկրում սահմանադրական գաղափարների աստիճանական տարածմանը։ Այնուհետև հարկ է նշել, որ թուրք բարենորոգիչները շատ էին մտահոգված իմանալու, թե արդյոք թուրքերն ի վիճակի՞ են յուրացնելու, ընդօրինակելու կրթության, ռազմական գործի, տեխնիկայի, պետության և տնտեսության կառավարման ասպարեզներում Եվրոպայում ձեռք բերված նվաճումները։ Այդ մտահոգությունից մղված, թուրքական կառավարությունը սկսեց թուրք երիտասարդության առաջին խմբերն ուսման ուղարկել եվրոպական կենտրոններ՝ ժամանակի ռազմական տեխնիկան և պատերազմներ վարելու արվեստը ուսումնասիրելու նպատակով։

Այս ամենը ցույց էր տալիս, որ Օսմանյան կայսրությունը թեկոխում էր վերափոխումների ուղի։

Բայց, չնայած երկրի ներքին դրության բարելավման նպատակով ձեռնարկված ռեֆորմներին և մյուս միջոցներին, Օսմանյան կայսրությունը 19-րդ դարի կեսերին շարունակում էր ծայրահեղ հետամնաց մի պետություն մնալ։

Զարգացման խիստ ցածր մակարդակի վրա էր գյուղատնտեսությունը։ Թուրքական ֆեոդալական վերնախավերը դաժանորեն շահագործում էին ոչ միայն նվաճված հողերի տեղաբնիկ գյուղացիությանը, այլև թուրք գյուղացիներին։ 19-րդ դարի կեսերին թուրք կալվածատիրոջը Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը բնութագրում էին որպես «ֆեոդալիզմի ամենացածր ու բարբարոսական աստիճանի վրա» կանգնած ֆեոդալի[3]։ Տառապալից

[1] **Α. Φ. Миллер,** Мустафа паша Байрактар, с. 73.
[2] **К. Маркс** и **Ф. Энгельс,** Соч., т. 9, с. 6.
[3] *Տե՛ս նույն տեղը։*

կյանքով ապրող այլադավան ու այլալեզու գյուղացիության հետ միասին թուրք գյուղացին աստիճանաբար ամենաչքավորներից մեկն էր դառնում աշխարհում։

Հողազուրկ կամ սակավահող գյուղացիները վարձակալում էին տերունական կամ կալվածատիրական հողերը և, իբրև վարձատրություն, սեփական գործիքներով հերկում ու ցանում էին բեգերի ու արքունու հողերը, հավաքում ու տեղավորում բերքը։ Այդ բոլորի դիմաց աշխատավոր գյուղացիները ստանում էին բերքի չնչին քանակությունը միայն, որը հազիվ ապահովում էր նրանց չարքաշ գոյությունը։ Գյուղատնտեսության մեջ վարձակալական սիստեմը խանգարում էր արտադրողական ուժերի զարգացմանը, խոչընդոտում կապիտալիստական հարաբերությունների ներթափանցմանը գյուղ։

Ծայրահեղ հետամնաց եղանակով էր վարվում անասնապահությունը, որը քոչվոր թուրքերի, քրդերի ու արաբների ավանդական զբաղմունքն էր։ Ըստ որում, գերադասվում էր ոչխարաբուծությունը։ Ինչպես հարյուրամյակներ առաջ, 19-րդ դարի կեսերին նույնպես, խաշնարածությունը շարունակում էր մնալ նրանց ապրուստի հիմնական, եթե ոչ միակ, աղբյուրը։

Գյուղացիական մասսաների թշվառ վիճակի գլխավոր պատճառներից մեկը կայսրության հարկային սիստեմն էր։ Գյուղացին վճարում էր բազմաթիվ հարկեր՝ տասանորդ (աշար), հողային հարկ, անասնահարկ և այլն։ Մուսուլմանական օրենսդրությամբ ֆեոդալական բնահարկը՝ աշարը, գյուղացիներից գանձվում էր բերքի մեկ տասներորդ մասի չափով։ Բայց Օսմանյան կայսրությունում աշարի չափերը հասել էին մինչև բերքի մեկ ութերորդին։ Սուլթանական կառավարությունը, որը չէր կարողանում ծայրը ծայրին հասցնել և շարունակ փողի կարիք էր զգում, ինչպես աշարի, այնպես էլ ուրիշ հարկերի հավաքումը վերապահում էր փողատերերին՝ տալով կապալով։ Կապալառուները պետության գանձարան էին մուծում աշարի կամ մյուս հարկերի գումարային արժեքն ամբողջ գավառի կամ նույնիսկ նահանգի համար և դրա դիմաց իրավունք ստանում հավաքելու հարկերը։ Կաշառելով պաշտոնյաներին և ոստիկաններին, կապալառուները բռնի միջոցներով հավաքում էին նախատեսվածից երկու-երեք անգամ ավելի, հարստանում գյու-

ղացիական զանգվածների նորանոր թշվառությունների հաշվին[1]։ Նրանք աշարը կորզում էին բերքի կեսին հասնող չափերով[2]։ Իսկ եթե պարտքերի ծանրությունից տնքացող գյուղացիները փորձում էին ըմբոստանալ պետության հարկային քաղաքականության դեմ, նետվում էին բանտերը, ենթարկվում դաժան հալածանքների։

Գյուղատնտեսության հետամնացության ու քայքայման պատճառներ էին նաև հաղորդակցության ճանապարհների բացակայությունը, բազմաքանակ վաշխառուների կամայականությունները և այլն։

Շարունակում էր հետամնաց վիճակում մնալ արդյունաբերությունը։ Խոր անկումից դուրս չէին գալիս մետաքսագործությունը, բրդի մանվածքի արտադրությունը, կաշեգործությունը։ Ծայրահեղ ցածր էր տեխնիկայի մակարդակը լեռնահանքային արդյունաբերության մեջ՝ Դիարբեքիրի պղնձաձուլարաններում, Տրապիզոնի հանքերում և այլն։ Շատ լեռնագործական ձեռնարկություններում տեխնիկայի մակարդակն այնքան ցածր էր, որ հանքաքարի մշակման ժամանակ մետաղի 20—40 տոկոսի կորուստ էր լինում[3]։ Տեխնիկայի մակարդակը շատ ցածր էր նաև գյուղատնտեսական հումքի նախնական վերամշակման ձեռնարկություններում։ Տեղական արդյունաբերության զարգացման համար գրեթե անհաղթահարելի արգելքներ էին վարչական անօրինությունները, ներքին մաքսատուրքերը և հատկապես կյանքի ու սեփականության երաշխավորված անվտանգության բացակայությունը։

Արմատական վերափոխման կարիք ուներ Թուրքիայի պետական կառավարման սիստեմը։ Կ. Մարքսը նշում էր, որ այդ սիստեմն ուղղակի խոչընդոտ է առաջադիմության ճանապարհին[4]։

Սուլթանական կառավարության և տեղական փաշաների կամայականությունները սահմաններ չէին ճանաչում։ Երկրում

[1] Տե՛ս **И. И. Голобородько (И. Южанин)**, Старая и новая Турция, М., книгоиздательство «Польза», 1908, էջ 165։

[2] Տե՛ս **Д. Е. Еремеев**, На стыке Азии и Европы. Очерки о Турции и турках, изд-во «Наука», Главная редакция восточной литературы, М., 1980, էջ 134։

[3] Տե՛ս **Н. Р. Овсяный**, Современная Турция, СПб, 1877, էջ 135—136։

[4] Տե՛ս **К. Маркс** и **Ф. Энгельс**, Соч., т. 9, էջ 25։

(բացառություն էր կազմում Պոլիսն իր շրջակա տարածքով) չկար կանոնավոր դատական կազմակերպություն, մշակված չէր պետական ֆինանսական քաղաքականություն, կանոնավոր հարկային սիստեմ, որի հետևանքով շահատակությունների դուռը չէր փակվում կաշառակեր պաշտոնյաների առջև։ Ցանկացած ժամանակ պետական պաշտոնյաները կարող էին բռնագրավել հպատակների, հատկապես քրիստոնյա հպատակների, ունեցվածքը։ Այդ էր պատճառը, որ, ասենք, Անատոլիայում արդեն զգալի փող կուտակած հույն, հայ, ինչպես նաև նոր-նոր ձևավորվող թուրք առևտրական բուրժուազիան խուսափում էր արդյունաբերության և բանկային գործի մեջ գումարներ ներդնելուց և ամեն ճիգ գործադրում էր, որպեսզի աչքի չընկնի, մնա ստվերում։ Նրանք ամեն կերպ աշխատում էին գաղտնի պահել շահույթները, թաքցնել կուտակված փողը, որը շրջանառության մեջ կապիտալի վերածվելու փոխարեն թաքստոցներում դառնում էր մեռած գանձ։

Այդ ամենը նկատի ունենալով, Ֆ. Էնգելսը գրել է. «Թուրքական, ինչպես և արևելյան ամեն մի տիրապետություն անհամատեղելի է կապիտալիստական հասարակության հետ. ստացված հավելյալ արժեքը ոչնչով երաշխավորված չէ սատրապների ու փաշաների գիշատիչ ձեռքերից, չկա բուրժուական ձեռնարկատիրական գործունեության առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի անձի ու նրա սեփականության անվտանգությունը»[1]։ Մի ուրիշ առիթով նա նշում էր. «Պետություններն Արևելքում միշտ ունեցել են միայն երեք գերատեսչություն. ֆինանսների (սեփական երկրի կողոպուտ), պատերազմների (սեփական երկրի և ուրիշ երկրների կողոպուտ) և հասարակական աշխատանքների (վերարտադրության մասին մտահոգություն)»[2]։

Թուրքիայի տնտեսության, հատկապես արդյունաբերության հետամնացության գլխավոր պատճառներից մեկն օտարերկրյա կապիտալի բռնացումն էր, նրա հետզհետե ուժեղացող ներխուժումը երկրի տնտեսություն։ Չխոսելով արտաքին շուկայի մասին, թուրքական արդյունաբերությունն իր արտադրանքով ի վիճակի չէր դիմագրավելու օտարերկրյա ապրանքների մրցակցությանը նաև ներքին շուկայում։ Օսմանյան կայսրության

[1] **К. Маркс** и **Ф. Энгельс**, Соч., т. 22, с. 33.

[2] Նույն տեղը, հ. 28, էջ 221։

և օտարերկրյա պետությունների միջև կնքված առևտրական անիրավահավասար պայմանագրերը, եվրոպական մրցակցության պայմաններում, տեղական արդյունաբերությանը զրկում էին ամեն տեսակ պաշտպանությունից։

Դարի կեսերին դրվեցին Օսմանյան կայսրությունն արտասահմանյան կապիտալի կիսագաղութ դառնալու հիմքերը։ Սուլթանական կառավարության ֆինանսական դրության շարունակվող վատթարացման հետևանքով պետական բյուջեում գոյացել էր հսկայական ճեղքվածք։ Օտարերկրյա տերություններից կայսրության անընդհատ աճող կախվածության առավել ցայտուն արտահայտություններից մեկն արտասահմանյան ֆինանսիստների և արդյունաբերողների կողմից երկաթուղիների կառուցման, օգտակար հանածոների շահագործման, կոնցեսիաների, բանկերի և դրանց բաժանմունքների ստեղծման իրավունքի ձեռքբերումն էր։ Թուրքիան աստիճանաբար վերածվում էր արևմտյան տերությունների ագրարային-հումքային կցորդի։

Տնտեսության մեջ ստեղծված ծանր վիճակը գնալով խորանում էր կառավարման անարխիկ սիստեմի պատճառով։ Թուրքական սուլթանները, կառավարության անդամները, պետական պաշտոնյաներն ամենից շատ մտահոգված էին իրենց անձնական բարեկեցության, քան պետության կառավարումը բարելավելու խնդրով։ Այն դեպքում, երբ երկիրը գտնվում էր ֆինանսական ծանր պայմաններում, պաշտոնյաներից շատ քչերն էին մտածում պետական միջոցները խնայողաբար օգտագործելու մասին։ Ճանապարհների ու դպրոցների փոխարեն կառուցվում էին պալատներ ու զբոսանավեր, անարտադրողաբար վատնվում էին ժողովրդի ստեղծած արժեքները։

Միջոցների մյուս մեծ բաժինը հատկացվում էր բանակի ու նավատորմի պահպանմանը։ Պետության հսկայական տարածքի վրա սփռված ռազմական ամրությունների ու բերդերի, թուրքական ռազմական միավորումների պահպանման ծախսերն իրենց ահռելի ծանրությամբ ընկած էին կայսրության բոլոր ժողովուրդների, այդ թվում թուրք աշխատավոր ժողովրդի վրա։ «Եվրոպայի հիվանդ մարդու»՝ Օսմանյան կայսրության տրոհման, բաժան-բաժան անելու հեռանկարը, սարսափի մատնելով սուլթաններին և թուրքական կառավարությանը, նրանց մղում էր այն բանին, որպեսզի միջոցներ չխնայվեն բանակի մեծացման ու վերազինման համար։ Իսկ դա նորանոր վիթխարի գումարներ էր պահանջում։ Դրանք չգտնելով սեփական գանձարանում, կառավարությունը դիմում էր արտաքին նոր պարտքերի ու փոխառությունների, ավելի ուժեղացնելով իր կախվածությունը եվրոպական պետություններից։

Ինչպես տեսնում ենք, օսմանյան տնտեսության անմխիթար վիճակի պատճառները բազմազան էին։ Հարկ է նշել մի կարևոր հանգամանք ևս՝ տիրապետող ազգի՝ թուրքերի արտադրական փորձի պակասը, որ հիմնականում թելադրված էր նրանց պատմական ավանդույթներով։

Կայսրության թուրք բնակչության հիմնական մասը չէր մասնակցում առևտրաարդյունաբերական գործունեությանը։ Թուրքական հասարակության վերին և միջին խավերը սերնդից սերունդ արհամարհելի բան էին համարում ստեղծագործ աշխատանքով, մասնավորապես արհեստներով և առևտրով զբաղվելը։ Կռիվն ու կողոպուտը թե՛ ավելի հեշտ էին, թե՛ ավելի պատվաբեր, ուստի թուրքերն իրենց գլխավոր կոչումը համարում էին բանակային ծառայությունը, պատերազմելը և ավարառումը։ **Միշտ գինավառ, ձիարշավի և ռազմական խաղերի մեջ մարզված, դեռ** մանուկ հասակից սրի, նիզակի, նետի գործածությանը վարժված, արկածների անհուն ծարավով, իրենց ամենօրյա պահանջմունքների մեջ ժուժկալ, մի խոսքով աշխարհակալ ցեղերի բոլոր անհրաժեշտ «առաքինություններով» օժտված թուրքերն իրենց հետ անհուն դժբախտություններ էին բերում այն տարածքներում, որտեղով անցնում էին։ Վիկտոր Հյուգոյի «Այստեղով թուրքն է անցել» պատկերավոր արտահայտությունը վկայությունն էր դրա։ «Հավատի մարտիկների» ընչաքաղցությունը, նրանց ավարառության կիրքը և թալանչիական ավյունը սահմաններ չգիտեին[1]։

---

[1] Տե՛ս **Стефан Цвайг**, Собр. соч., М., 1963, т. 3, էջ 24—30:

1453 թվականին գրավելով Կոստանդնուպոլիսը և ոչնչացնելով բյուզանդական պետությունը, թուրքերը խուժեցին Բալկաններ և եվրոպական այլ տարածքներ, ամենուրեք ահ ու սարսափ սփռելով։ 1454—1459 թթ. նրանք նվաճեցին Սերբիան, 1456 թ.՝ Մոլդավիան, 1460 թ.՝ Հունաստանը, 1463 թ.՝ Բոսնիան, ապա՝ Տրապիզոնյան կայսրությունը։ 1475 թ. Ղրիմի խանը իրեն ճանաչեց թուրքական սուլթանի վասալ, մեկ տարի հետո (1476 թ.) իրեն վասալ ճանաչեց նաև Վալախիան։ 1516—1517 թվականներին թուրքերը գրավեցին Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը, Հեջազը, ապա մտան Եգիպտոս։ Թուրքական սուլթանը մամլուքների ձեռքին խաղալիք դարձած արաբական վերջին խալիֆից վերցնելով կրոնապետի իրավունքները, իրեն հռչակեց աշխարհի բո-

Անդրադառնալով թուրքական նվաճումներին, «Պատմության փիլիսոփայություն» աշխատության մեջ գերմանացի մեծ փիլիսոփա Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Հեգելը գրել է. «Այն ժամանակ թուրքերը դեռ միանգամայն առողջ, ուժերով լի մի ազգ էին, որի հզորությունը հիմնված էր նվաճումների վրա, որն այդ պատճառով էլ շարունակ պատերազմներ էր մղում և զինադադարներ կնքում։ Նվաճված հողերը, ինչպես ֆրանկների մոտ, բաժանվում էին ռազմիկների միջև, որոնք դրանք ստանում էին որպես անձնական, այլ ոչ թե որպես ժառանգական սեփականություն... Օսմանների բանակի ընտրանին՝ ենիչերիները, սարսափ էին ներշնչում եվրոպացիներին։ Նրանց հավաքագրում էին գեղեցիկ և ուժեղ քրիստոնյա տղաներից, գլխավորապես՝ հունահպատակների շրջանում, ամեն տարի իրականացվող զինակոչային հավաքներում, ապա խստորեն դաստիարակում իսլամի ոգով և պատանի հասակից սովորեցնում տիրապետել զենքին։ Ապրելով առանց ծնողների, եղբայրների և քույրերի, առանց կանանց, նրանք ճգնավորների պես միանգամայն անկախ և ահարկու ջոկատ էին»[1]։

Թուրք-օսմանների կողմից նվաճված ժողովուրդներն ընկան ծանր լծի տակ, որը մեծապես արգելակում էր նրանց սոցիալ-տնտեսական զարգացումը։

Հաջող արշավանքներից ու արտաքին ավարառումներից հետո էլ թուրքերը չէին լծվում աշխատանքային գործունեության։ Մասնավորապես նրանց առևտրական գործառնությունը, ինչպես նկատել է Ֆ. Էնգելսը, սահմանափակվում էր «քարավաններ թալանելով»[2]։

Արհեստով զբաղվելն արժանավայել չհամարելով, բաժին էր

լոր մուսուլմանների հոգևոր առաջնորդ (խալիֆ)։ 16-րդ դարում օսմանյան հզոր նավատորմը վերահսկում էր համարյա ողջ Միջերկրածովյան ավազանը։ 1521 թ. թուրքական զորքերը գրավեցին Բելգրադը։ 1526 թ. թուրքերը տիրացան Հունգարիայի մեծ մասին, 1529 թ. հասան Վիեննայի դարպասներին։ Միաժամանակ նրանք փոփոխակի հաջողություններով շարունակում էին կռիվներ մղել Պարսկաստանի դեմ։ 1574 թ. մտան Թունիս, ապա իրենց ենթարկեցին Ալժիրն ու Մարոկկոն։ 1672 թ. Լեհաստանից նրանք խլեցին Պոդոլիան և Աջափնյա Ուկրաինան։ Օսմանյան կայսրությունը հասավ իր հզորության գագաթնակետին։ Նրա սահմանները Վիեննայի դարպասներից տարածվում էին մինչև Պարսից ծոցը, Ատլանտյան օվկիանոսից մինչև Լեհաստան և Ղրիմ։

[1] **Гегель**, Сочинения, М.—Л., Соцэкгиз, 1935, с. 402.

[2] **К. Маркс и Ф. Энгельс**, Соч., т. 9, с. 25.

թողնված բացառապես երկրորդ կարգի մարդկանց, «գյավուրներին»՝ քրիստոնյա հպատակներին և հրեաներին։ Արհեստավորական արտադրության հին կենտրոնների՝ Պոլսի, Իզմիրի, Բրուսայի, Կոնիայի, Կեսարիայի, Ամասիայի, Տրապիզոնի, Էրզրումի, Թոքատի (Եվդոկիա), Վանի արհեստավորները, չնչին բացառությամբ, քրիստոնյաներ էին, առավելապես՝ հայեր։ Փոքր Ասիայի, Սիրիայի, Հայաստանի քաղաքներում դեռ թուրքերից շատ առաջ արհեստները հասել էին զարգացման բարձր աստիճանի, իսկ արհեստագործական տարբեր կենտրոններում շատ արհեստներ, առաջին հերթին ոսկերչությունը, հայ վարպետները հասցրել էին կատարելության։ Հայկական ճարտարապետության, որմնանկարչության, մանրանկարչության, երաժշտության, գրչության հետ միասին այն դարձել էր ազգային անկրկնելի արվեստի հռչակված ճյուղերից մեկը։ Հայ ոսկերիչներն ազնիվ մետաղներից, թանկագին և կիսաթանկարժեք քարերից պատրաստում էին անձեռակերտ հրաշալիքներ՝ ոսկե հատիկներով կամ ուլունքաշար ապարանջաններ, շղթայանախշ վզնոցներ, մարջանից հյուսվածքներ ունեցող ասեղնագործ գոտիով ճարմանդներ, մատանիներ ու մատնոցներ, փիրուզի ակերով նրբահյուս արծաթե գոտիներ, նրբագույն զարդերով սուփեր՝ հիացմունք առաջացնող կափարիչներով։ Նրանց ոսկի ձեռքերի ստեղծագործություններից էին նաև եկեղեցական շատ սպասքներ, իրեր, ծիսական հանդերձանքներ՝ կանթեղներ, խորանի զարդախաչեր, մեռոնատուփեր, խնկամաններ, բուրվառներ, աշտանակներ, գավազաններ, սկիհներ, արծաթով ու փայլուն ակներով զարդարված ձեռագրերի պահպանակներ, ավետարանների ոսկյա կազմեր և այլն։ Ամենուրեք հայտնի էին նաև արհեստների մյուս ճյուղերի հայ վարպետների ստեղծագործությունները՝ ինքնատիպ փայտյա փորագրություններ, մետաղյա գեղարվեստական ընտիր աշխատանքներ, մասնավորապես պղնձե նախշահյուս սկուտեղներ, ափսեներ, յուղամաններ, գավաթներ, զարդասալիկներ, այնուհետև արտակարգ գեղեցկության հախճապակե և ճենապակե սափորներ, թասեր, պնակներ։ Բացառիկ հետաքրքրություն և արժեք էին ներկայացնում հայ վարպետների պատրաստած ասեղնագործ սփռոցներն ու ծածկոցները, անձեռոցիկները, հելունահյուս ժանյակները, կրոնական և պատմական կերպարներ պարունակող ոսկեթել և արծաթաթել մեծ ու փոքր վարագույրները, հոգևոր անձանց զգեստները, վակասները, կա-

նանց գոգնոցները, հողաթափերը, գույնզգույն ամպհովանիները, տղամարդկանց տնային հագուստները՝ բեհեզից կամ թանկագին կերպասից կարված զարդանախշ պատմուճանները, պարեգոտները և այլն։

Մեծապես հռչակված էին նաև հայ գորգագործները։ Պատմական աղբյուրները վկայում են, որ Կեսարիայում, Սեբաստիայում, Վասպուրականում, Արցախում, Սյունիքում և Հայաստանի այլ վայրերում գործած հայկական նուրբ ու շքեղ գորգերը (վիշապագորգեր, արծվագորգեր, օձագորգեր և այլն) դարեր շարունակ բարձր են գնահատվել նույնիսկ ամենահեռավոր շուկաներում։ Դրանք աչքի էին ընկնում բազմագույն զարդանախշերով, գեղարվեստական հնարքների բազմազանությամբ։

Շվեյցարացի արևելագետ Ադամ Մեցը, արաբական խալիֆաթի 9—10-րդ դարերի պատմությանը նվիրված իր աշխատության մեջ գրում է, որ միջնադարում ամենաբարձր արժեք ունեին պարսկական, հայկական և բուխարական բրդյա գորգերը[1]։ Միաժամանակ նա նշում է, որ ժամանակակիցները, ինչպես օրինակ, միջնադարյան արաբ հեղինակ Սաալիբին նկատում էր, որ այն ժամանակներում այնուամենայնիվ «ամենից բարձր գնահատվում էին հայկական գորգերը»[2]։ Այդպես է գրել նաև արաբ հեղինակներից մեկ ուրիշը՝ Աբու-լ-Կասիմը։ Վկայակոչելով արաբական միջնադարյան աղբյուրները, Ա. Մեցը հիշատակում է, որ օմեյադյան խալիֆ ալ-Վալիդ 2-րդի տան հատակն ու պատերը ծածկված էին հայկական գորգերով։ Միջնադարում ընդունված էր ամենաթանկագին ու ամենահարգի նվերներից համարել հայկական գորգերը։ Ի դեպ, խալիֆ ալ-Մուկտադիրին իր մեկ վասալից նվեր էր ստացել հայկական յոթ գորգ։ Այդ ժամանակների հեղինակներից մեկը գրել է, որ պարսկական գորգերից ամենից շատ գնահատվում էին այն գորգերը, որոնք չէին զիջում հայկականներին։ Իբն Ռուստան հիշատակություն է թողել այն մասին, որ պարսկական լավագույն գորգերը և հատկապես Իսֆահանում գործած գորգերը գովում էին այն բանի համար, որ դրանք ամենից շատ էին նմանվում շքեղագույն հայկական գորգերին։ Հետագայում Մարկո Պոլոն նկատել է. «Հայաստանում գործում են ամենալավ և ամենագեղեցիկ գորգերը»[1]։

Իհարկե, Օսմանյան կայսրության տարբեր վայրերում կային նաև թուրք արհեստավորներ։ Բայց նրանք գերազանցապես զբաղվում էին առանձին հմտություններ չպահանջող արհեստներով, որոնք կապված էին խաշնարածության հետ, այն է՝ կաշվի նախնական մշակում, թամբագործություն, թաղիքագործություն և այլն։

Նույնանման վիճակ էր առևտրի բնագավառում, այսինքն՝ գործունեության այն ոլորտում, որտեղ ամենից արագ էր կատարվում կապիտալի սկզբնական կուտակումը, հետևաբար՝ կապիտալիստական հարաբերությունների հասունացումը։ Օսմանյան կայսրության մեջ առևտրով զբաղվում էին դարձյալ ոչ թուրք ազգության անձինք՝ հույները, հայերը, լևանտինցիները՝ Սիրիայի և Լիբանանի քրիստոնյաները, սլավոնները։ Անդրադառնալով այդ իրողությանը, Ֆ. Էնգելսը հենց այդպես էլ գրում էր. «Ո՞վ է առևտուր անում Թուրքիայում։ Համենայն դեպս, ոչ թուրքերը... ծովային խոշոր նավահանգիստներում հաստատված հույները, հայերը, սլավոնները և արևմտաեվրոպացիներն իրենց ձեռքում են պահում ամբողջ առևտուրը...»[2]

Քանի որ թուրքերը և ընդհանրապես մահմեդականներն ամոթալի բան էին համարում առևտուր անելը, ուստի վաշխառուների և բանկիրների թվում նույնպես մուսուլմաններ չկային։ Տոկոսներով փող պարտք տալու իսլամական արգելքն իր դավանակիցներին զրկում էր կապիտալի նախասկզբնական կուտակման այդ հնարավորությունից[3]։

Քրիստոնյաները, մասնավորապես հայերը, առևտրով զբաղվում էին ավանդաբար։ Դեռ շատ հնուց հայերը բազմաթիվ երկրներում հայտնի էին առևտրատնտեսական իրենց ակտիվ գործառնությամբ։ Հետաքրքրական է հայերի մասին գերմանացի փիլիսոփա Էմանուել Կանտի կարծիքը, որ նա արտահայտել է «Մարդաբանություն պրագմատիկական տեսանկյունից» աշխատության մեջ։ Նա գրել է. «...հայերի մեջ տիրապետում է հատուկ տեսակի մի ինչ-որ առևտրական ոգի, այն է՝ նրանք

---

[1] Տե՛ս **Адам Мец.** Мусульманский ренессанс, изд. 2-е, изд-во, «Наука», М., 1973, էջ 369։

[2] Նույն տեղը։

[1] **Адам Мец.** Мусульманский ренессанс, с. 369.

[2] **К. Маркс** и **Ф. Энгельс,** Соч., т. 9, с. 25.

[3] Տե՛ս **Д. Е. Еремеев,** На стыке Азии и Европы, էջ 114։

զբաղվում են փոխանակությամբ, ոտքով ճամփորդելով Չինաստանի սահմաններից մինչև Գվինեայի ափի Կորսոյի հրվանդանը։ Դա վկայում է այդ խելամիտ և աշխատասեր ժողովրդի առանձնահատուկ ծագումը, որը հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք տանող ուղղությամբ անցնում է գրեթե ամբողջ Հին աշխարհը և կարողանում սիրալիր ընդունելություն գտնել բոլոր ժողովուրդների մեջ, որոնց մոտ նա լինում է։ Դա ապացուցում է նրանց բնավորության (որի նախասկզբնական ձևավորումը մենք արդեն ի վիճակի չէինք հետազոտելու) գերազանցությունը...»[1] Հայերը, սակայն, չէին սահմանափակվում ցամաքային առևտրով։ Դեռևս մեր թվարկությունից շատ առաջ հայ վաճառականները նավարկում էին Տիգրիս և Եփրատ գետերում և Հայաստանից ապրանքներ արտահանում հին աշխարհի շատ երկրներ։ Հեգելը, հենվելով Հայաստանի և հայերի մասին հայտնած այն տեղեկությունների վրա, որ թողել են անտիկ աշխարհի մտածողներ Հերոդոտը[2], Քսենոֆոնը[3], Պլուտարքոսը[4], Ստրաբոնը[5] և ուրիշներ, նշում էր, որ «Հայաստանից սկիզբ առնող այդ գետերի վրա շատ զարգացած է եղել նավագնացությունը, նավերը լողացել են դեպի Բաբելոն մասամբ Հայաստանից, մասամբ հարավից, և դրա շնորհիվ քաղաքում (Բաբելոնում։— Հ. Ս.) կուտակվում էին անհաշիվ հարստություններ»[6]։

Պատմական աղբյուրներում բազում հիշատակություններ կան, որոնք վկայում են, որ հետագա շատ դարերում նույնպես հայ վաճառականները ապրանքներ էին տանում ամենահեռավոր երկրներ, ինչպես ցամաքային ուղիներով ու գետերով, այնպես էլ ծովերով և օվկիանոսներով։ Նրանք միջազգային ծովա-

[1] **Й. Кант,** Соч. в шести томах, т. 6, М., 1966, с. 572—573.

[2] *Տե՛ս* **Геродот,** История, Л., 1972, էջ 73, 252, 253:

[3] *Տե՛ս* **Ксенофонт,** Полн. собр. соч., т. 1, С.-Петербург, 1887, էջ 102, 103, 118:

[4] *Տե՛ս* **Плутарх,** Сравнительные жизнеописания. В трех томах, т. II, М., 1963, էջ 183:

[5] *Տե՛ս* **Страбон,** География. Изд-во «Наука», 1964, էջ 49, 54, 56—57, 68, 79, 83—87, 89, 118, 129, 264, 466—468, 472—477, 479—484, 491—502, 507—508, 513—515, 521—522, 524—525, 633, 625, 662, 686—687, 689, 691—693, 725, 756:

[6] **Гегель,** Соч., т. 8, М.—Л., 1935, с. 38.

յին առևտուր էին անում Արևելքի բոլոր երկրների հետ, մեծածավալ ու արժեքավոր բեռներ էին փոխադրում Միջերկրական ծովով, Պարսկական ծոցով, Մալակյան նեղուցով, Հնդկական օվկիանոսով, Հարավարևելյան Ասիայի ծովերով, հասնում էին մինչև Հնդկաստան, Չինաստան, Ճավա, Ֆիլիպիններ և այլուր, ուրիշ ուղղություններով նավարկելով գնում էին Ջենովա, Վենետիկ, Ֆրանսիա, Իսպանիա, Ղրիմ, Աստրախան... Եվ ամենուրեք ցանկալի հյուրեր էին։ Հայ վաճառականներն ունեին սեփական նավեր, իրենց ապրանքները կարողանում էին պաշտպանել ծովահենների հարձակումներից, միջազգային ասպարեզում հաջողությամբ մրցում էին այլազգի առևտրականների հետ և շատ դեպքերում նրանց դուրս մղում շուկաներից։

Սակայն գաղութային ժամանակներում վիճակն աստիճանաբար փոխվեց ի վնաս հայ ծովագնացների և վաճառականների։ Սրանց շահերը ակամայից ընդհարվեցին խորամանկորեն կամ զինու զորությամբ Հնդկական օկիանոսի երկրներ թափանցող եվրոպական գաղութարարների շահերին։ Զդիմանալով հայերի հետ տնտեսական ազատ մրցակցությանը, հատկապես 17-րդ դարում պորտուգալական, ապա անգլիական, ֆրանսիական, հոլանդական և մյուս գաղութարարները դիմեցին բռնի ուժի, իրենց մատչելի բոլոր միջոցներով (պետական ապարատ, ռազմական նավատորմ, ծովահենություն) ձգտելով ճնշել հայ վաճառականների ծովային առևտուրը։ Այդ տեսակետից առանձին եռանդ էին դրսևորում անգլիացիները։ Հայ մրցակիցներին տրանսպորտի սեփական միջոցներից զրկելու և դրանով իսկ նրանց միջազգային առևտուրը քայքայելու համար անգլիական գաղութարարները ծովահենների միջոցով բռնագրավում էին նրանց նավերը, թալանում ապրանքները։ Այս հարցը հետազոտող Յու. Գ. Բարսեղովը «Եվրոպական ծովահենության դեմ հայ վաճառականության պայքարի պատմությունից» հոդվածում գրում է. «Հայերի ծովային առևտրի բազմադարյան պատմությունը միաժամանակ մի դրամատիկ պատմություն է աշխարհի տարբեր մասերում եվրոպական ծովահենության դեմ նրանց մղած պայքարի մասին»[1]։ Եթե այդ հակամարտության մեջ եվրոպական գաղութարարների նպատակը գաղութային թա-

[1] «Պատմա-բանասիրական հանդես», № 2, 1984, էջ 35։

լանը և իրենց ծովային գերիշխանությունը հաստատելն էր, ապա «ընդհակառակը, հայերի, ինչպես նաև Արևելքի մյուս ժողովուրդների պայքարը եվրոպական գաղութարարների դեմ, դրսևորվելով տարբեր ձևերով, օբյեկտիվորեն և սուբյեկտիվորեն նպաստում էր նավագնացության ազատության, բաց ծովի առաջադիմական սկզբունքների հաստատմանը»[1]։

Չնայած դրան, հայ վաճառականները հետագա դարերում նույնպես նշանակալի դեր ունեին միջազգային առևտրում։ Նիկողայոս Ադոնցն իր ուսումնասիրություններից մեկում, անդրադառնալով տարբեր երկրներում կազմավորված հայ գաղթօջախների տնտեսական գործունեությանը 16—17-րդ դարերում, նշում էր, որ դրանք սերտորեն կապված էին իրար և ասես մի միասնական ցանց էին կազմում։ «Այդ ցանցի բոլոր թելերը,— գրում էր նա,— միանում էին Հայաստանում, մի հանգույցի մեջ, Ջուլֆա քաղաքում, Արաքս գետի ափին»[2]։

Թուրքական սուլթանները և մյուս իշխանավորները գնահատում էին հայերի աշխատասիրությունը, արհեստների մեջ և առևտրում նրանց ցուցաբերած տաղանդը։ Տիեզերական մայրաքաղաքը՝ նորանվաճ և ավերակ Կ. Պոլիսը շենացնելու համար սուլթան Մեհմեդ 2-րդը ամենատարբեր տեղերից՝ Փոքր Ասիայից, Բալկաններից, անգամ Ղրիմից, տեղահան արեց և այնտեղ բերեց քրիստոնյաների, մասնավորապես հայերի, նրանց մի շարք արտոնություններ տալով։ Բրուսայի հայոց առաջնորդ Հովակիմ եպիսկոպոսին Կ. Պոլիս բերելով, սուլթանը նրան պատրիարք կարգեց Թուրքիայում ապրող հայերի վրա (1462 թ.) և նրանց կրոնական ինքնավարություն տվեց։ Հետագա դարերում նույնպես թուրքական սուլթանները հովանավորում էին բազմաշնորհ արհեստավորներին ու վաճառականներին[3]։ Արդեն 19-րդ

[1] «Պատմա-բանասիրական հանդես», № 2, 1984, էջ 35։

[2] «Սովետական Հայաստան» ամսագիր, № 3, 1985, էջ 13։

[3] Նույն բանը մենք տեսնում ենք հարևան Պարսկաստանում, որտեղ վեհապետները և այլ իշխանավորներ ստիպված սատարում էին քրիստոնյա, մասնավորապես հայ արհեստավորներին և ընդհանրապես հայությանը, որպես աշխատունակ տարրի։ Թուրքական սուլթան Մեհմեդ 2-րդից մեկ և կես դար հետո նույն բանն արեց Շահ-Աբասը՝ Արևելյան Հայաստանի տարածքից հայ բնակչության մեծ զանգվածներ բռնի ուժով տեղափոխելով իր մայրաքաղաք՝ Սպահան, նրանց տալով արհեստների և պետական առևտրի մենաշնորհը։ Հայերը մայրաքաղաքի մոտ կառուցեցին իրենց քաղաքը՝ Նոր Ջուղան և մեծ թափ հաղորդեցին պարսկական արհեստներին և առևտրին։ Սա-

դարի առաջին տասնամյակներին վերջիններս իրենց ծանրակշիռ խոսքն էին ասում ոչ միայն կայսրության ներքին շուկաներում, այլև ամուր կապեր էին հաստատել արտաքին շուկայի հետ։ Օտարերկրյա կապիտալի և կայսրության արտադրողների միջև հանդես էին գալիս իբրև միջնորդներ։ Իսկ նույն դարի երկրորդ կեսից սկսած, երբ Օսմանյան կայսրությունն աստիճանաբար վերածվում էր արտասահմանյան կապիտալի կցորդի, կայսրության այլազգի բուրժուազիան սկսեց ստանալ այդ կապիտալի ակտիվ աջակցությունը։ Նրա առավել աչքի ընկնող շատ ներկայացուցիչներ իրավունք ստացան օգտվելու և՛ թուրքական, և՛ եվրոպական որևէ երկրի հպատակությունից։ Վերջին հանգամանքը նրանց համար ապահովում էր կապիտուլյացիոն առանձնաշնորհումներ, որն իր հերթին նպաստում էր ոչ թուրք բուրժուազիայի տնտեսական դիրքերի ամրապնդմանը, միաժամանակ նրան հնարավորություն էր տալիս իր ձեռքում է՛լ ավելի կենտրոնացնելու ոչ միայն ամբողջ արտաքին, այլև ներքին առևտրի և արդյունաբերական արտադրության գերակշիռ մասը։

Քրիստոնյաները, մասնավորապես հայերը, մեծ դեր էին խաղում Օսմանյան կայսրության ոչ միայն տնտեսական, այլև հասարակական-քաղաքական կյանքում, կայսրության վարչական գործերում, գիտության և մշակույթի բնագավառներում[1]։

կայն հետագայում թուրք-աղվան-նոմադական ցեղերի հարվածներից Սեֆևիների դինաստիան կործանվեց, իսկ քրիստոնյա հայերը և արևապաշտ մնացած պարսիկները հալածանքների ենթարկվեցին։ Հայ մեծահարուստներն անցան Հնդկաստան, Ռուսաստան և այլուր, իսկ արևապաշտ պարսիկներն ապաստան գտան Հնդկաստանի արևմտյան տարածքներում։ Ընդամենը մեկերկու տասնամյակում երկիրն աղքատացավ, ետ շպրտվեց նրա զարգացումը։ Անդրադառնալով այդ իրողությանը, ֆրանսիացի մեծ լուսավորիչ, փիլիսոփա և գրող Շառլ Լուի դե Սեկոնդա Մոնտեսքիոն (1689—1775 թթ.) իր «Պարսկական նամականի» հայտնի վեպում (1821 թ.) գրում էր. «Հայերին քշելով հույս ունեին (Սեֆեիններից հետո ազգամիջյան կռիվներով իշխանությունն իրարից խլող պարսկական շահերը։— Հ. Ս.) պետության մեջ մեկ օրում վերացնել բոլոր վաճառականներին և գրեթե բոլոր արհեստավորներին։ Ես հավատացած եմ, որ մեծ Շահ-Աբասը կգերադասեր, որ իր երկու ձեռքն էլ կտրեին, քան թե կստորագրեր մի այդպիսի հրովարտակ։ Իր ամենաաշխատասեր հպատակներին Մեծ Մողոլի և Հնդկական մյուս թագավորների մոտ քշելը նրա համար հավասարազոր կլիներ իր երկրի կեսը կորցնելուն» (Монтескьё, Персидские письма, М., 1956, с. 205)։

[1] Տե՛ս Ս. Բախտիկեան, Արաբկիր և շրջակա գյուղերը (Բեյրութ, 1924), Գ. Սխալեան, Պարտիզակն ու պարտիզակցին (Կահիրե, 1938), Թ. Ազատեան,

Հայերը բոլոր մարզերում հավատարմորեն ծառայում էին թուրքական պետությանը և այդ իսկ պատճառով նույնիսկ իշխանությունների կողմից ստացել էին «միլլեթ-ի սադրկա» («հավատարիմ ազգ») անունը[1]։ Գերմանացի զինվորական Մոլթկեն դրա համար հայերին անվանել է նույնիսկ «քրիստոնյա թուրքեր»։

Կայսրության մեջ հայերն առաջիններից մեկն էին, որ ուժ տվեցին թանզիմաթյան բարենորոգումներին, ցույց տվեցին, թե ինչպես պետք է դեմոկրատացնել, բարեփոխել վարչակառավարական համակարգը՝ աչքի առաջ ունենալով եվրոպականը։

Եվրոպական կրթություն ստացած հայ նոր սերունդն արդեն 19-րդ դարի 40-ական թվականներին հանդես եկավ 100 հազարից ավելի հայ բնակչություն ունեցող Կ. Պոլսի համայնքի և հայոց պատրիարքարանի գործերը ժողովրդավարական հիմքերի վրա դնելու պահանջով։ Ուսումնառած երիտասարդները մի շարժում ծավալեցին, որի նպատակն էր հասարակությանը մասնակից դարձնել ազգային բոլոր կարևոր գործերին, ինչպես նաև սահմանափակել պատրիարքի բացարձակ իշխանությունը, թուլացնել Պոլսի հայ ամիրաների ազդեցությունը, որոնք չէին ցանկանում որևէ փոփոխություն մտցնել համայնքի կյանքում։

Հենվելով եվրոպական ժողովրդավարական սկզբունքների վրա և ելնելով 1839 թվականի հաթթ-ի շերիֆի ընձեռած հնարավորությունից, Պոլսի հայ նոր սերունդը մեծ եռանդով ու ջանքերով հասավ այն բանին, որ պատրիարքարանի գործերի համար կազմեցին հատուկ ժողովներ (հանձնաժողովներ), որոնք ընտրվում էին առանց դասակարգային խտրության։ Առաջին՝ Լիմտական հանձնաժողովը կազմվեց 1841 թվականին։ Ավելի ուշ՝ 1847 թվականին, պատրիարքարանին առընթեր գործող ընդհանուր վարչության համար ստեղծվեցին կրոնական և քաղաքական ժողովներ՝ բաղկացած համապատասխանաբար 14 և 20 անդամներից։ 1853 թվականին ստեղծվեց ուսումնական խորհուրդ։ Հանձնաժողովներ և խորհուրդներ կազմելուց հետո բնականաբար առաջ եկավ դրանց փոխադարձ իրավասությունները ճշտելու, այսինքն՝ կանոնադրություն ունենալու պահանջը։ Դա այսպես կոչված Ազգային սահմանադրությունը եղավ, որ կյանքի կոչեցին պոլսահայ համայնքի երիտասարդ, լուսավորյալ գործիչներ Նահապետ Ռուսինյանը, Սերվիչեն, Գրիգոր Աղաթոնը, Գրիգոր Օտյանը և Նիկողայոս Պալյանը[1]։

Ազգային սահմանադրության մշակման արտոնությունը հայ ուսումնականները բխեցրել էին 1856 թվականի հաթթ-ի հումայունից, որով սուլթան Մեջիդը ոչ իսլամ ազգություններին թույլատրել էր ձեռնարկել իրենց ներքին կյանքի բարեփոխությունը[2]։

Սահմանադրության նախագիծը, որպեսզի ուժ ստանար և գործածության մեջ դրվեր, պետք է հաստատվեր կառավարության կողմից։ Բայց Բարձր Դուռը դժվարությամբ գնաց դրան։ Երեք տարի տևած բանակցություններից և ժողովրդական ցույցերից հետո միայն, 1863 թվականի մարտին, թուրքական կառավարությունը հատուկ ֆերմանով վավերացրեց և արտոնեց հայոց Ազգային սահմանադրությունը[3]։ Այդ փաստաթուղթն իր լուսավոր (հայ ժողովուրդը կայսրության մեջ առաջինը և առայժմ միակն էր, որն ինչ-որ չափով ներքին սահմանադրական կյանքով ապրելու իրավունք էր ստանում՝ հիմքում ունենալով ժողովրդավարական սկզբունքներ) և ստվերոտ (Պոլսի մոտ 100 000 հայությունը տալիս էր 160, իսկ կայսրության մընացած ողջ հայությունը՝ 60 երեսփոխան) կողմերով նշանակալից նվաճում էր հայոց կյանքում։

Հայերը վարչակառավարական բարձր ունակություններ էին

Ակն ու ակնեցիք (Ազգագրական և կենսագրական հիշատակարան), Իստամբուլ, 1943, Հ. Ոսկանեան, Կարինն ու կարինցին (Վիեննա, 1950), Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն Մալաթիոյ հայոց (Բեյրութ, 1951), նույնի՝ Պատմութիւն Եվդոկիոյ հայոց (Կահիրե, 1952), Թ. Ազատեան, Տատեան գերդաստանը և իր ականավոր դեմքերը (Իստամբուլ, 1952), Ս. Քեչեան, Այնթապ հայոց (Լոս Անջելոս, 1953), Մ. Արսլանեան, Բարերդը և շրջակայքը (Փարիզ, 1954), Ե. Չարըգ, Հուշամատեան Բարձր Հայքի (Բեյրութ, 1957), Ա. Պերպերեան և Վ. Եղիշեան, Պատմագիրք Աղապաղարի (Փարիզ, 1960), Հ. Սիմոնեան. Եդեսիա (Բեյրութ, 1963), Հ. Սիրունի, Պոլիսը և իր դերը (Բեյրութ, 1965) և այլն։

[1] Տե՛ս Ж. Кайзер, Европа и новая Турция, Госиздат, М., 1925, էջ 64։

[1] Տե՛ս Վահան Զարդարեան, Յիշատակարան (1512—1933), Ա. հատոր, թիվ 1—10։ Գահիրե, 1933, էջ 15, Աղդե քհնյ. Փայլակեան, Եկեղեցական պատմություն հայոց, Փարիզ, 1942, էջ 288։

[2] Տե՛ս Լևոն Թյուրյուճեան, Հայաստանեաց եկեղեցվոյ մեջ ամբողջեն անչատ հասարակություն չկա, Պեյրութ, հրատ. «Զարթոնք-ի», 1956, էջ 6։

[3] Տե՛ս Աղդե քհնյ. Փայլակեան. Եկեղեցական պատմություն հայոց, էջ 288։

դրսևորում ոչ միայն ներքին՝ ազգային կյանքում, այլև պետական կառավարման մեջ։ Բազմաթիվ հայեր վարում էին պատասխանատու պաշտոններ և ամենայն բարեխղճությամբ ու նվիրումով էին կատարում իրենց պարտականությունները։

Ինչպես վարչակառավարական, այնպես էլ առևտրաարդյունաբերական գործառնությունը ենթադրում է կուլտուրական զարգացման որոշակի աստիճան։ Իսկ կայսրության իշխող թուրք բնակչությունը գտնվում էր կուլտուրական զարգացման ցածր մակարդակի վրա։ Անդրադառնալով այդ իրողությանը, «Արվեստների և գիտությունների թշվառ վիճակը թուրքերի մոտ» վերտառությամբ իր ամենաառաջին աշխատություններից մեկում Հեգելը նշում էր, թե քաղաքակիրթ մարդուն զարմանք է պատճառում թուրքերի կուլտուրական ցածր աստիճանը[1]։ Եվ դա այն տերիտորիայի վրա, որը մի ժամանակ շքեղ Բյուզանդիոնն էր զբաղեցնում, որտեղ տարբեր ժամանակներում գոյություն են ունեցել իրենց առաջադիմությամբ այսօր էլ զարմանք պատճառող քաղաքակիրթ պետություններ՝ պատմական Պափլագոնիան, Կապադովկիան, Փոյուգիան, Կիլիկիան, Լիդիան, Բյութանիան, Լիկիան, Պոնտոսը, Գաղատիան և այլն։ Բավական է ասել, որ թուրքերեն առաջին գիրքը տպագրվել է միայն 1729 թվականին[2], այսինքն՝ Գուտենբերգի տպագրության գյուտից (1445 թ.) 284, հայերեն տպագիր գրքից (1512 թ.) 217, Թուրքիայում (Կոստանդնուպոլսում) առաջին հայերեն գրքի տպագրությունից (1567 թ.) 162 տարի հետո[3]։ 19-րդ դարի սկզբին անգամ թուրքերի 90 տոկոսն անգրագետ էր, այն դեպքում, երբ, ասենք, Անատոլիայի հույների շրջանում անգրագետների թիվը կազմում էր 50 տոկոս, իսկ հայերի շրջանում միայն 33 տոկոս[4]։ 18-րդ դարի երկրորդ կեսին Թուրքիայում գործում էին բազմաթիվ հայկական տպարաններ, որից 3-ը՝ Կոստանդնուպոլսում[1], 10-ից ավելին՝ Զմյուռնիայում[2]։ Այդ տպարանները մեծ տպաքանակներով հրատարակում էին գրական, պատմական, գիտական, կրոնական բովանդակության գրքեր, օրացույցներ և այլն, որոնք լայնորեն տարածվում էին ոչ միայն մայրաքաղաքում և կայսրության հայ բնակչություն ունեցող մյուս քաղաքներում, այլև Արևմտյան Հայաստանի քաղաքներում և գավառներում։

Ի տարբերություն քրիստոնյաների, թուրքերի կուլտուրական կյանքի լծակներն ամբողջովին գտնվում էին ֆեոդալական «մտավորականության» միջնախավի՝ մուսուլմանական հոգևորականության և օսմանյան բյուրոկրատիայի ձեռքին, որոնք հռչակված էին իրենց պահպանողականությամբ, տգիտությամբ ու խավարամոլությամբ։

Ծանր էր Օսմանյան կայսրության ոչ միայն ներքին, այլև միջազգային դրությունը։

Ինչպես վերևում ասվեց, թուրքական պետությունն իր հզորության գագաթնակետին էր հասել 17-րդ դարի 70-ական թվականներին։ Բայց նույն դարի 80-ական թվականների սկզբներին եվրոպական երկրներում արդեն հասունացել էր համատեղ ուժերով թուրքերին ետ մղելու միտքը։ Թուրքական ներխուժման սպառնալիքը նրանց ստիպեց համախմբվել ընդհանուր թշնամու դեմ։ Հեգելը գրում էր. «Եվրոպական պետությունների ընդհանուր շահը արտաքին քաղաքականության ասպարեզում պայքարն էր ընդդեմ թուրքերի, այն սոսկալի ուժի, որ սպառնում էր հեղեղել Եվրոպան Արևելքից... Եվրոպական արևելքի բոլոր պետությունները՝ Ավստրիան, Հունգարիան, Վենետիկը և Լեհաստանը պետք է պայքարեին թուրքերի դեմ։ Լեպանտոյի ճակատամարտը փրկեց Իտալիան և գուցե նաև ամբողջ Եվրոպան բարբարոսների հեղեղից»[3]։

1683 թվականին, երբ թուրքերը կրկին պաշարել էին Վիեննան, լեհական թագավոր Յան Սոբիսկին, աջակից ունենալով ավստրիական բանակը և գերմանական իշխանությունների ցինված ջոկատները, Խոտինի ճակատամարտում գլխովին

---

[1] Տե՛ս **Куно-Фишер,** Гегель, его жизнь, сочинения и учение. Первый полутом, Москва—Ленинград, 1933, էջ 5, **Арсений Гулыга,** Гегель, изд-во «Молодая гвардия», М., 1970, էջ 11, **А. П. Дворцов,** Гегель, М., 1972, էջ 4:

[2] Տե՛ս **А. Х. Рафиков,** Очерки истории книгопечатания в Турции, изд-во «Наука», Ленинград, 1973, էջ 103:

[3] Տե՛ս **Д. Е. Еремеев,** На стыке Азии и Европы, էջ 114, **А. Х. Рафиков,** Очерки истории книгопечатания в Турции, էջ 66:

[4] Տե՛ս **Д. Е. Еремеев,** На стыке Азии и Европы, էջ 114:

---

[1] Տե՛ս **А. Х. Рафиков.** Очерки истории книгопечатания в Турции, էջ 66:

[2] Տե՛ս **С. А. Бабаян.** Армянская книга, Ереван, 1956, էջ 32—33:

[3] **Гегель,** Сочинения, с. 402.

ջախջախեցին թուրքական բանակը։ Դա թուրքերի առաջին խոշոր պարտությունն էր Արևմուտքում։ Դրանից անմիջապես հետո 1684 թվականին ստեղծված հակաթուրքական «Սրբազան լիգան» (Ավստրիան, Լեհաստանը, Վենետիկը և 1686 թվականից՝ Ռուսաստանը) մեկ և կես տասնամյակ (1684—1699) կռիվներ էին մղում թուրքերի դեմ, որի հետևանքով Հունգարիան ազատագրվեց թուրքական լծից։ Սա սկիզբն էր երկանց։ Օսմանյան ընդարձակ կայսրությունը սկսեց ճարճատել և դիմել դեպի անկում։

Օսմանյան կայսրությանն ուժգին հարվածներ էր հասցնում հատկապես Ռուսաստանը։ 1768—1774, 1787—1791, 1828—1829 թվականների ռուս-թուրքական պատերազմներում Թուրքիան ջախջախիչ պարտություններ էր կրել և զրկվել իր բազմաթիվ տիրույթներից։ 19-րդ դարի առաջին տասնամյակներին անկախություն ստացավ Հունաստանը, ձևական դարձավ Թուրքիայի տիրապետությունը Միջերկրական ծովի աֆրիկյան ափերի վրա, Անգլիան ձեռքը դրեց Եգիպտոսի վրա, մեծ ինքնուրույնության հասան արաբական թերակղզու շեյխերը։ Չնայած Ղրիմի պատերազմում (1853—1856) Ռուսաստանի պարտությանը, Թուրքիայի համար, այնուամենայնիվ, այդ «հաղթությունը» պյուռոսյան հաղթանակի էր նման։ Պատերազմի հետևանքով երկրի տնտեսությունը քայքայվել էր աներևակայելի չափերով։ Թուրքիային ցույց տված ռազմական օգնության դիմաց պատերազմից հետո Անգլիան ու Ֆրանսիան ուղղակի քամում էին կայսրության տնտեսությունը, պահանջում հսկայական պարտքերի շուտափույթ մարում։ Թուրքիան խնդրում էր երկարաձգել պարտքերի մարման ժամկետները և խրվում էր նորանոր պարտքերի մեջ։

Օգտվելով Օսմանյան կայսրության աճող տնտեսական կախվածությունից, եվրոպական երկրները սկսեցին ավելի հաճախակի միջամտել երկրի ներքին գործերին։ Դա հիմնականում իրականացնում էին Պոլսի իրենց դեսպանների միջոցով, և մի շարք պատրվակներով, առաջին հերթին՝ «ռեֆորմներ անցկացնելու» գործում սուլթանական կառավարությանն «օգնելու» պատրվակով։ 60—70-ական թվականներից դրան ավելացավ մի նոր՝ կայսրության քրիստոնյա բնակչությանը մահմեդականների կամայականություններից, հալածանքներից ու ջարդերից պաշտ-

պանելու պատճառաբանությունը։ Իրականում եվրոպական պետությունները մտահոգված էին ոչ թե բուն այդ խնդրով, այլ իրենց մերկ շահերով։ «Քրիստոնյաների պաշտպանությունը» լոկ մի պատրվակ էր, որից նրանք ձգտում էին օգտվել առավել արդյունավետությամբ։

Երկրի տնտեսական և քաղաքական կյանքին միջամտությունը եվրոպական երկրների համար հնարավորություն էր ստեղծում տիրապետող դիրքեր գրավել այնտեղ։ Ավելին, ցանկության դեպքում նրանք կարող էին բաժան-բաժան անել կայսրությունը և այն վերածել գաղութային տերիտորիայի։ Բայց գաղութարարները նման քայլի չէին դիմում։ Պատճառը, ինչպես նշել է ֆրանսիական մանրբուրժուական սոցիալիստ Պիեռ Ժոզեֆ Պրուդոնը, միջազգային ասպարեզում հավասարակշռության սկզբունքի պահպանման ձգտումն էր, «միջազգային նախանձը»[1], պետությունների միջև եղած կատաղի մրցակցությունն ու պայքարը, որն իր խորքում մերժում էր որևէ առանձին տերության միահեծան իշխանությունը Օսմանյան կայսրության վրա։

Ինչպես տեսնում ենք, տվյալ ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության համար բնորոշ էին գյուղատնտեսության և արդյունաբերական արտադրության հետամնացությունը, արտաքին քաղաքական հարցերում ինքնուրույնության կորուստը, սոցիալական և ազգային հակասությունների հետագա սրումը։

Բուրժուազիայի կազմում թուրքերը երկրորդական դիրքերում էին։ Ճիշտ է, քրիստոնյա բուրժուազիայի մեծ ակտիվությունը և նրա ձեռք բերած հաջողությունները չէին նշանակում, թե թուրքերը լիովին դուրս են մղված առևտրական և արդյունաբերական գործառնությունից։ Անհամեմատ դանդաղ, սակայն սաղմնավորվում և քայլ առ քայլ դիրքեր էր նվաճում նաև թուրք արդյունաբերական և առևտրական ազգային բուրժուազիան։ Առայժմ չկարողանալով դուրս գալ արտաքին շուկա, նա իր խոսքն արդեն ասում էր ներքին շուկայում։

Ինչևիցե, կայսրության մեջ ստեղծվել էր յուրօրինակ մի

---

[1] Տե՛ս **П. Ж. Прудон,** Война и мир. Исследование о принципе и содержании международного права. М., изд. Черенца и Ко, 1864, էջ 195—196։

գրություն. պետությունը թուրքական էր, բայց երկրի տնտեսության մեջ իշխող դիրքեր էին նվաճում ոչ թուրքերը, այլազգի «գյավուրները»։ Չխոսելով օտարերկրյա կապիտալի ամենազոր մրցակցության մասին, բարձրացող երիտասարդ թուրքական բուրժուազիան հենց սկզբից ևեթ հանդիպել էր քրիստոնյա բուրժուազիայի գրեթե անհաղթահարելի թվացող մրցակցությանը։ Պատմության և հասարակական հարաբերությունների ընթացքից ետ մնացած թուրքական բուրժուազիան գտնում էր, որ ինքն անիրավահավասար պայմանների մեջ է, ուստի ավելի ու ավելի բացահայտ էր դժգոհություն արտահայտում ստեղծված իրավիճակից։ Նա այլևս չէր հանդուրժում, որ կայսրության ոչ մահմեդական բուրժուազիան ենթակա չէ իշխող ազգի բուրժուազիային, ավելին, իրեն նա մղել էր տնտեսական կյանքի ետնախորշերը։ Այլազգի բուրժուազիային արդյունաբերության բնագավառից, ներքին ու արտաքին ասպարեզներից դուրս մղելը, շուկային միանձնյա տիրելը, տնտեսական ամուր դիրքեր նվաճելը դարձավ բարձրացող թուրք ազգային բուրժուազիայի գլխավոր մտահոգությունը։

Իր համար ստեղծված աննպաստ վիճակի գլխավոր պատճառը բարձրացող թուրքական բուրժուազիան տեսնում էր կայսրության քաղաքական կարգերի, սուլթանական պետության ռազմաֆեոդալական ռեժիմի անկարողության մեջ։ Ուստի, որպեսզի կայսրության ներսի այլազգի բուրժուազիայի և օտարերկրյա կապիտալի դեմ սկսվող իր պայքարը հաջողությամբ պսակվեր, թուրք երիտասարդ ազգային բուրժուազիայի մեջ գնալով խորանում էր այն համոզումը, որ պետք է փոխել դարն ապրած ֆեոդալական-սուլթանական բռնապետական ռեժիմը՝ ոչ թե այն ոչընչացնելու, այլ բարեփոխելու միջոցով։ Նա դժգոհ էր, որ գոյություն ունեցող կարգերն արգելակում են երկրի առաջընթացը ընդհանրապես, բայց հատկապես դժգոհ էր, որ Բարձր Դուռը հարկ եղած արգելքներ չէր դնում օտարերկրյա ապրանքների ներթափանցման դեմ, ինչպես պետքն է չէր ճնշում կայսրության այլազգի կոմպրադորական բուրժուազիային, նրան չէր զրկում բոլոր արտոնություններից և առանձնաշնորհումներից։ Թուրքական բուրժուազիան մտադիր չէր ձեռքերը ծալած սպասելու, թե իրադարձություններն ինչպես են զարգանալու իր համար ոչ ձեռնտու հունով, ինչպես է գնալով խորանալու կայսրության մեջ ծայր առած տնտեսական և քաղաքական ճգնաժամը։ Նա պահանջում էր երկրի քաղաքական կարգն ու կառավարման սիստեմն այնպես վերափոխել, որպեսզի կայսրության այլազգիները հնարավորություն չունենան տնտեսական մարզում «ոտք գցելու» թուրքերի հետ։ Տնտեսության զարգացման մեջ չունենալով առաջատար դեր, բայց լինելով տիրապետող ազգի բուրժուազիա, նա պահանջեց առայժմ ապահովել իր դիրքերը քաղաքականության մեջ, ձեռք բերել պետության կառավարման գործին ակտիվորեն մասնակցելու լայն իրավունքներ։ Այդ նպատակով նա նորանոր ուղիներ էր փնտրում, հանդես էր գալիս տնտեսական կյանքում և հասարակական հարաբերությունների մեջ հօգուտ իրեն բարեփոխումներ մտցնելու առաջարկություններով, առաջ էր քաշում տնտեսական ու քաղաքական ծրագրեր։ Նրա ծավալած պրակտիկ գործունեությունը շուտով առաջ քաշեց դրանց գաղափարական հիմնավորման պահանջը։ Այլ խոսքով, թուրք ազգային բուրժուազիան կարիք ուներ սեփական գաղափարաբանության, որի մեջ պետք է մարմնավորվեին իր՝ որպես դասակարգի աշխարհայացքը, իրչերն ու նպատակները։

Եվ այսպես, բարձրացող երիտասարդ թուրքական բուրժուազիան քաղաքական ասպարեզ էր իջնում իր նպատակին հասնելու հաստատ վճռականությամբ։ Նա կռվի մեջ էր մտնում երկու ճակատով՝ ընդդեմ կայսրության այլազգի բուրժուազիայի, որն իր ձեռքն էր գցել տնտեսության հիմնական լծակները, և ընդդեմ արտասահմանյան կապիտալի, որը հարստահարում էր կայսրության բոլոր ժողովուրդներին անխտիր, արգելակում երկրի արտադրողական ուժերի զարգացումը, ետ պահում նրա առաջընթացը, խանգարում թուրք ազգային բուրժուազիայի տնտեսական դիրքերի ամրապնդմանը։ Հետագա տասնամյակներին նա կարևորություն էր տալու մերթ կայսրության այլազգի բուրժուազիայի, մերթ օտարերկրյա կապիտալի դեմ մղվող պայքարին։

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ։ ՕՍՄԱՆԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԳԾԻ ՎՐԱ

Կայսրության տնտեսական և կուլտուրական առաջընթացի գլխավոր խոչընդոտը սուլթանական ֆեոդալական կարգերն էին։

Հարկ է նշել, որ ֆեոդալական արիստոկրատական վերնախավից, հատկապես նրա առավել կրթված ներկայացուցիչների շարքերից ելնում էին գործիչներ, որոնք երկիրն արդիականացնելու զանազան ուղիներ էին փնտրում, շեշտը դնելով եվրոպական քաղաքակրթությունն ընդօրինակելու անհրաժեշտության վրա։

Նրանցից մեկը նշանավոր պետական ու քաղաքական գործիչ, մեծ-եպարքոսի և արտաքին գործերի մինիստրի պաշտոններ վարած Ֆուադ փաշան էր։ «Օսմանյան կայսրությունը վտանգի մեջ է,— գրում էր նա։— Մեր հարևանների ձեռք բերած սրընթաց առաջադիմությունը և մեր նախահայրերի գործած անըմբռնելի սխալներն այսօր մեզ դնում են չափազանց տագնապալի կացության մեջ»[1]։ Ծաղրելով այն «տգետ հայրենասերներին», որոնք կարծում էին, թե «հին միջոցներով» կարելի է կայսրության «անցյալ մեծությունը վերահաստատել», Ֆուադ փաշան ասում էր, թե դա անհնարին բան է, քանի որ եվրոպական երկրները «առաջադիմեցին՝ մեզ ետ թողնելով... թեպետ մենք ևս փոքրիշատե առաջացել ենք»[2]։ Մենք չենք կարող դանդաղ ընթացքով առաջադիմել, ասում էր նա, պետք է առաջադիմել այնպես, ինչպես Եվրոպայի մյուս ազգերը։

[1] *«Արօր» հանդես, Ա. տարի, 1910, № 6, էջ 178։*

[2] *Նույն տեղը։*

Այնուհետև Ֆուադ փաշան գտնում էր, որ «մեր բոլոր քաղաքական և քաղաքացիական հաստատությունները պետք է փոխվեն։ Անցյալի բավականին օգտակար շատ օրենքներ մեր արդի հասարակությանը վնասակար են։

... Ամեն մի օգտակար գյուտ, ամեն նոր առաջադիմություն, ուր որ և ինչ ժողովրդի մեջ էլ երևան գան՝ հեթանոսների թե մահմեդականների, Մեդինեի թե Փարիզի մեջ, մահմեդականներին են վերաբերում, հետևաբար եվրոպացիների կողմից հանդես բերված օրենքները և կերպերը օրինակելու ոչ մի արգելք չունենք», մանավանդ որ եվրոպական առաջադիմության մեջ «մեր կրոնի ոգուն հակառակ ոչինչ և բացարձակապես ոչինչ չկայ»[1]։

Այսպիսի տեսակետները և գործելակերպը, ըստ էության ուղղված լինելով ավատական կարգերի դեմ, օբյեկտիվորեն նպաստում էին երկրում բուրժուական հարաբերությունների ձևավորմանը։

Բայց Թուրքիայի առաջադիմության դրոշակակիրը բնավ էլ արիստոկրատական վերնախավը և նրա առավել կրթված ու լուսավորյալ ներկայացուցիչները չէին։ Այդ դերում հանդես եկավ նորակիրթ, բայց տակավին սակավաթիվ իսլամ մտավորականությունը, որը Թանզիմաթի տարիներին սերվել էր Թուրք միջին շերտերից[2]։

Հենց այդ մտավորականությունն էր դարձավ բարձրացող Թուրք բուրժուազիայի և լիբերալ տրամադրված Թուրք կալվածատերերի շահերի արտահայտիչը։

Ձևավորվող Թուրք մտավորականության միջավայրում 60-ական թվականներին ծնունդ առան լիբերալ-բուրժուական սահմանադրական գաղափարներ, որոնք 70-ական թվականներին վերածվեցին քաղաքական մի շարժման, որը սահմանադրական շարժում անունը ստացավ։

1865 թվականին հիմնադրվեց գաղտնի մի կազմակերպություն, որը կոչվեց «Նոր օսմանների ընկերություն»։ Նրա անդամները շուտով հայտնի դարձան «երիտասարդ Թուրքեր» կամ «Նոր

[1] *«Արօր», Ա. տարի, 1910, № 6, էջ 179—180։*

[2] *Տե՛ս* **А. Д. Желтяков, Ю. А. Петросян.** История просвещения в Турции (конец XVIII — начало XX века), М., 1965, էջ 34—63։

օսմաններ» անուններով[1]։ Կազմակերպության անունը բխում էր նրա անդամների որդեգրած հիմնական գաղափարից՝ օսմանիզմի դոկտրինայից։

«Նոր օսմանների» սոցիալական կազմը խայտաբղետ էր. նրանց շարքերում կային ֆեոդալական-բյուրոկրատական վերնախավի ոչ քիչ թվով ներկայացուցիչներ, զինվորականներ, պետական գործիչներ, ուսուցիչներ, պաշտոնյաներ, լրագրողներ։

«Նոր օսմանների» ղեկավարներ և գաղափարական առաջնորդներ դարձան թուրք նշանավոր պոետ և գրող Մեհմեդ Նամըկ Քեմալը, հայտնի գրող ու հասարակական գործիչ Իբրահիմ Շինասին, գրող Աբդուլ Զիայ բեյը, գրականագետ և հրապարակախոս Այի Սուավի էֆենդին, գեներալ Հյուսեին Վասֆի փաշան, հասարակական գործիչներ Նուրի բեյը, Մեհմեդ բեյը և ուրիշներ։ Ավելի ուշ շարժման ղեկավարներն իրենց կողմը գրավեցին ականավոր թուրք պետական գործիչ, երկրի եվրոպականացման ջատագով Ահմեդ Միդհատ փաշային[2]։

Իրենց հայացքներն ու գաղափարները «նոր օսմանները» քարոզում էին «Իթթիհադ» («Միասնություն»), «Ինկիլյաբ» («Հեղափոխություն»), «Ուլյում» («Գիտելիք»), «Տասվիր-ի էֆկյար» («Գաղափարների արտահայտիչ»), «Մուխբիր» («Թղթակից»), «Միրատ» («Հայելի»), «Ուտարիտ» («Սուրհանդակ»), «Իբրետ» («Խրատ»), «Խադիկա» («Այգի») և այլ թերթերի միջոցով[3]։ Այդ պարբերականները հրատարակվում էին Փարիզում և Լոնդոնում, ապա գաղտնի ճանապարհներով փոխադրվում կայսրության տարբեր տերիտորիաներ, տարածվում զինվորականության, մտավորականության, հատկապես սովորող երիտասարդության շրջանում։

Ի՞նչ գաղափարներ էին քարոզում «նոր օսմանները», ինչպիսի՞ ծրագրերով էին նրանք ոգեշնչվում։

Ժամանակաշրջանի թուրքական լիբերալ վերնախավերի, մասնավորապես բարձրացող թուրք ազգային բուրժուազիայի տրամադրությունների արտահայտիչները հիմնականում մտահոգված էին իրենց դասակարգի շահերի պաշտպանության խնդրով։ Իսկ թուրք նորածագ բուրժուազիայի շահերը պահանջում էին, որ այդ դասակարգն ունենա գործունեության լայն ասպարեզ, տիրի հումքի բազմազան աղբյուրների և ընդարձակածավալ շուկաների։ Այդպիսի հնարավորություններ թուրք բուրժուազիային ընձեռում էր Օսմանյան կայսրությունն իր հսկայածավալ տարածքներով, մարդկային և նյութական անբավ ռեսուրսներով։ Բայց կայսրությունը դեպի գահավեժ անկում էր գնում։ Պետք էր նախ և առաջ կանգնեցնել երկրի կործանարար ընթացքը, այն փրկել վերահաս քայքայումից։

Այդ նպատակով «նոր օսմաններն» առաջ քաշեցին մի շարք ծրագրեր։ Դրանք բազմարնույթ և բազմատեսակ լինելով, ենթակա էին իրենց հիմնական գաղափարին՝ օսմանիզմին։

Առաջին մտահոգությունը կայսրության ամբողջականության *պահպանման հարցն էր։ Հենց կայսրության ամբողջականության նախադրյալից էին ելնում միջնադարյան թուրքական հասարակության ավանդական երկու գաղափարները՝ օսմանիզմը և իսլամականությունը։ Ավելին, օսմանիզմը (օսմանլըլըկ) պաշտոնական այն գաղափարախոսությունն էր, որը մարմնավորված էր կայսրության քաղաքական սիստեմի մեջ։*

Միջնադարյան պաշտոնական, իր ավանդական ձևով օսմանիզմի գաղափարը ելնում էր նրանից, որ Օսմանյան կայսրությունը նրանում ընդգրկված բոլոր ժողովուրդների ընդհանուր հայրենիքն է՝ «օսմանյան համայնքը» («ումմետ-ի օսմանիե»)։ Այդ ժողովուրդները, օսմանյան համայնքին պատկանող բոլոր անձինք, անկախ իրենց լեզվից ու դավանանքից, օսմանցիներ են՝ «օսմաններ», թուրքական սուլթանի հավատարիմ հպատակներ։ Նրանք բոլորն էլ պարտականություններ ունեն աստվածատուր իշխանության հանդեպ։

Կարելի է մտածել, թե ավանդական օսմանիզմը ջատագով էր կայսրության ժողովուրդների իրավահավասարության սկզբունքին։ Բայց իրականում այն մի գլխավոր նպատակ էր հետապնդում՝ օսմանյան համայնքի մեջ անառարկելիորեն պահպանել թուրքերի տիրապետող դիրքը հայերի, հույների, սլավոնների, արաբների, քրդերի և կայսրության մյուս բոլոր ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ։ Ասելով, թե բոլոր ժողովուրդները պար-

[1] *Սովետական պատմական գրականության մեջ ընդունված է «նոր օսմաններ» անվանել երիտթուրքական շարժման սկզբնավորման շրջանի գործիչներին, հատկապես՝ 60—70-ական թվականների սահմանադրականներին, իսկ 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի դրանց հետևորդներին՝ «երիտասարդ թուրքեր»։*

[2] *Տե՛ս* **В. Стамбулов,** Намык Кемаль, М., 1935:

[3] *Տե՛ս* **И. И. Голобородько (И. Южанин),** Старая и новая Турция, էջ 107:

տականություն ունեն սուլթանի հանդեպ, օսմանյան կառավարողները, սակայն, խստորեն զատորոշում էին տարբեր ժողովուրդների և կրոնական համայնքների պարտականությունների բնույթն ու ծավալները, սուլթանի «բարեհաճ վերաբերմունքից» օգտվելու նրանց հնարավորությունները, այսինքն՝ նրանց իրավունքները պետության ներսում։

Ավանդական օսմանիզմը կայսրությունը դիտում էր իբրև միասնական մի օրգանիզմ, որի գլուխը թուրքերն էին, մարմինը՝ արաբները, քրդերը, մյուս բոլոր մահմեդականները, իսկ բանող մասերը՝ ոտքերն ու ձեռքերը՝ քրիստոնյաները։ Մեկն առանց մյուսի գոյություն ունենալ չէր կարող։ Բայց այդ ժողովուրդներից յուրաքանչյուրը խիստ որոշակի տեղ ու դեր ուներ կայսրության մեջ։ Թուրքը օսմանյան հասարակության սերուցքն էր, թանկագին տարրը, որին վերուստ վերապահված էր տիրող լինելու։ Արաբն ու քուրդը թուրքի հենարանն էին։ Մյուսները կոչված էին աշխատելու և պահելու կայսրության գլուխն ու մարմինը։

«Նոր օսմանները» օրինաչափ, բնական և արդարացի համարեցին ավանդական օսմանիզմի գաղափարը և գտան, որ նրա շուրջը կարելի է սերտորեն համախմբել կայսրության բոլոր ժողովուրդներին և նրանց միասնության հիմքի վրա պահպանել կայսրության ամբողջականությունը։ Սրանից ելնելով, նրանք օսմանիզմը դրեցին իրենց ողջ գաղափարաբանության հիմքում։

Բայց, ելնելով ժամանակաշրջանի նոր պահանջներից, «նոր օսմանները» նոր ձևով սկսեցին մեկնաբանել օսմանիզմի տարբեր դրույթները, փորձեցին ավանդական այդ ձևին նոր բովանդակություն տալ, այն հարմարեցնելով թուրքական առաջացող բուրժուազիայի քաղաքական պահանջներին։ Այլ խոսքով, նրանք հրապարակ հանեցին «նոր օսմանիզմը», որը պետք է դառնար բարձրացող թուրքական բուրժուազիայի կարևորագույն գաղափարաքաղաքական կոնցեպցիաներից մեկը։

Հիմնական և հապաղում չհանդուրժող հարցերից մեկը կայսրության տնտեսական դրության կարգավորումն էր։ Դրավելով բնաաշխարհագրական բացառիկ բարենպաստ դիրք, ունենալով հումքային, մարդկային մեծաքանակ ռեսուրսներ[1], Թուրքիան, սակայն, չէր կարողանում հասնել նույնիսկ միջին զարգացում ունեցող պետություններին։ Դրա հիմնական պատճառը շարունակում էին մնալ օսմանյան ռազմաֆեոդալական կարգերը։

Տնտեսական առաջադիմությունը խթանելու համար տենդայնորեն նոր ուղիներ փնտրելով, «նոր օսմանները» հանդես եկան որպես եվրոպական լուսավորության, գիտության և տեխնիկայի ջատագովներ, լայն պրոպագանդա սկսեցին Թուրքիան եվրոպական ուղիով տանելու, այսինքն՝ բուրժուական զարգացման օգտին։

Կայսրության հետզհետե վատթարացող տնտեսական դրությունը «նոր օսմանները» բացատրում էին մի շարք պատճառներով։

Քանի որ իրենց հիմնական մտահոգության առարկան թուրքերն էին, ուստի նրանք առաջին հերթին մատնացույց էին անում թուրք գյուղացիների տնտեսական ծանր դրությունը։ Թուրք գյուղացու թշվառ վիճակի գլխավոր պատճառը նրանք համարում էին գոյություն ունեցող հարկային սիստեմը, վաշխառուների անսանձ կամայականությունները, պետական պաշտոնյաների շահատակությունները, որոնք ամեն քայլափոխի խախտում էին սահմանված պետական օրենքներն ու կարգը, անձնական հարստություն դիզում ժողովրդին և պետական գանձարանը կողոպտելու միջոցով։

«Նոր օսմանները» գտնում էին, որ կայսրության կառավարման համակարգը, սուլթանական կարգերը բխում են թուրքերի պատմական ավանդույթներից և հիմնականում համապատասխանում են նրանց շահերին։ Բայց քանի որ նրանք ոչ միայն թուրքության, այլև ամենից առաջ նրանից սերված բուրժուազիայի շահերի արտահայտիչներն էին, ուստի տրտունջ էին հայտնում, որ այդ կարգերը բարենպաստ պայմաններ չեն ստեղծում թուրքական արդյունաբերության զարգացման, առևտրաարդյունաբերական բուրժուազիայի առաջադիմության համար։

Թուրքիայի արդյունաբերության հետամնացության պատճառը համարելով կառավարման բռնապետական սիստեմը, «նոր օսմանները» գտնում էին, որ սուլթանական կարգերն ի վիճակի չեն զարգացող թուրքական արդյունաբերությունը պաշտպանելու օտարերկրյա ապրանքների մրցակցությունից, արտասահման-

[1] Թուրքական կառավարության 1876 թվականի պաշտոնական տվյալներով կայսրության ուղղակի հպատակների թիվը կազմում էր մոտ 23 միլիոն, իսկ կայսրությունից կախման մեջ գտնվող երկրների բնակչության հետ միասին՝ ավելի քան 47 միլիոն մարդ (տե՛ս **Օ. Գ. Ինջիկյան**, Буржуазия Османской империи, изд-во АН Армянской ССР, Ереван, 1977, էջ 26)։

յան կապիտալի կործանարար ճնշումից ու բռնադատումից։ Նրանք գտնում էին նաև, որ այդ կարգերն ի վիճակի չեն զսպելու կայսրության տնտեսության մեջ ամուր դիրքեր հաստատած կամ հաստատող քրիստոնյա բուրժուազիային։ Վերջինիս նկատմամբ ունեցած իրենց թշնամանքը նրանք տարածում էին հույն, հայ, հրեա, սլավոն բնակչության վրա, քրիստոնյա ամբողջ բնակչությունը դիտելով որպես օտարերկրյա հարստահարիչների աջակից։

Կայսրության հետամնացության, նրա տկարության գլխավոր պատճառներից մեկը «նոր օսմանները» համարում էին թուրք բնակչության կրթական ու կուլտուրական ցածր մակարդակը։ Ալի Սուավին գրում էր, որ Եվրոպայի սոցիալական, քաղաքական և կուլտուրական առաջադիմության կարևոր խթանիչը եղել և մնում է ժողովրդական լուսավորությունը։ Ուստի, ասում էր նա, եթե թուրքերը մտադիր են առաջադիմության ուղին ընտրել, ապա անպայման պետք է յուրացնեն եվրոպական քաղաքակրթությունը։

Թուրք ժողովրդի կրթության և լուսավորության խնդիրներին հատկապես շատ է անդրադարձել «նոր օսմանների» նշանավոր տեսաբան, լուսավորիչ, նոր օսմանյան գրականության հայր Իբրահիմ Շինասին։ Հիմնավոր կրթություն ստանալով Փարիզում, Շինասին 1862 թվականից սկսում է հրատարակել Թուրքիայում առաջին մասնավոր հասարակական-քաղաքական «Թասվիր-ի էֆկյար» («Գաղափարների արտահայտիչ») թերթը։ Այս պարբերականում, ինչպես և իր խմբագրած «Թերջյուման-ի ախվալ» («Իրադարձությունների մեկնաբան») թերթում նա պահանջ էր առաջադրում՝ որքան հնարավոր է արագորեն ընդօրինակել կառավարման եվրոպական սիստեմը, Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի, Ավստրիայի տնտեսության և կուլտուրայի, գիտության և տեխնիկայի նվաճումները[1]։

«Նոր օսմանները» մեծագույն տհաճությամբ և անսքող զայրույթով էին շեշտում այն հանգամանքը, որ կայսրության ոչ թուրք ժողովուրդները, հատկապես հայերը, հույները, հրեաները, բուլղարները, իրենց կրթական մակարդակով ավելի բարձր են կանգնած թուրքերից և մյուս մահմեդական ժողովուրդներից։ Այս հանգամանքը նոր օսմանները բացատրում էին նրանով, որ, իբր, կայսրության ներսում քրիստոնյաների համար ապրուստի ավելի գերադասելի պայմաններ են ստեղծված, քան թուրքերի և մուսուլմանական մյուս ժողովուրդների։ Այնինչ ճշմարտությունն այլ էր։ Թուրքական դպրոցները գտնվում էին կառավարության հովանու ներքո, պահպանվում էին պետական միջոցներով։ Ինչ վերաբերում էր ոչ թուրք դպրոցներին, ապա կառավարությունն ընդհանրապես դրանցով չէր զբաղվում։ Այդ դպրոցները պահպանվում էին բացառապես ազգային-բարեգործական կազմակերպությունների ջանքերով՝ կայսրության կրոնական համայնքների համար պատմականորեն ստեղծված կրթական ինքնավարության իրավունքի հիման վրա։ Բանն այն էր, որ թուրքական դպրոցների պահպանման համար կառավարության հատկացրած դրամական և այլ միջոցների մեծ մասն իր նպատակին չէր ծառայում. այն զարտուղի ճանապարհներով մտնում էր պետական պաշտոնյաների գրպանը։ Վիճակն այլ էր քրիստոնյաների մոտ. քրիստոնյա բնակչության հանգանակություններից գոյացած գումարները, խիստ հաշվառված լինելով, լիովին տրամադրվում էին դպրոցական կարիքներին։

Թուրք բնակչության կրթության և լուսավորության ցածր մակարդակի պատճառների վերաբերյալ «նոր օսմանների» պատճառաբանությունները, հեռու լինելով իրականությունից, թուրք հասարակության մեջ խեղաթյուրված պատկերացում էին ստեղծում կրթության բնագավառում քրիստոնյաների կարծեցյալ «արտոնությունների» մասին, ատելություն բորբոքում «գյավուրների» հանդեպ, որոնց մեղքով էին մուսուլմանները իբր տգիտության ու խավարի մեջ մնացել։

Իբրահիմ Շինասին և «նոր օսմանների» մյուս տեսաբանները շատ կարևոր նշանակություն էին տալիս Օսմանյան կայսրության մեջ տիրապետող թուրք-օսմաներեն գրական լեզվի կամ «օսմաներեն լեզվի» («լիսան-ը օսմանի») կատարելագործմանն ու ժողովրդականացմանը։

Թուրք-օսմանյան գրական լեզուն թուրքերենից, արաբերենից ու պարսկերենից փոխառված բազմաթիվ արտահայտությունների ու դարձվածքների յուրատեսակ խառնուրդ էր։ Այդ լեզուն դիտվում էր իբրև օսմանյան պոեզիայի ու կուլտուրայի գոհար և նրան տիրապետում էին միայն ամենակրթված թուրքերը, մտավորականները, դեկավար անձինք, ավագանին և բարձր զինվո-

[1] Տե՛ս **Вл. Гордлевский,** Очерки по новой османской литературы, Москва, 1912, էջ 4—13։

բականությունը։ Ուստի օսմաներենի անաղարտության պահպանումը կայսրությունը կառավարողների և մահմեդական կրոնի բարձրաստիճան սպասավորների գլխավոր մտահոգություններից մեկն էր։

Թուրք-օսմաներեն գրական լեզվի կողքին գոյություն ուներ այսպես կոչված «երկրորդ» լեզու, այսինքն՝ թուրք ժողովրդի խոսակցական լեզուն, ռամիկների լեզուն, որը վերնախավերն արհամարհանքով անվանում էին «թուրքերեն»՝ գռեհիկ իմաստով։

Եվ ահա «նոր օսմանները» առաջադրեցին օսմաներենի փոխարեն «թուրքական լեզու» («լիսան-ը թյուրքի») ստեղծելու պահանջը։ Նրանք գտնում էին, որ նախ օսմաներենը պետք է մաքրել օտարամուտ, գլխավորապես արաբական և պարսկական բառերից, որոնք անըմբռնելի, անհասկանալի էին թուրք ժողովրդի հասարակ խավերին։ Ապա պետք է երկրորդ քայլն անել՝ օտարամուտ բառերից մաքրված օսմաներենը միաձուլել թուրք ժողովրդական խոսակցական լեզվին։

Օսմաներենը ժողովրդականացնելու և թուրքացնելու պահանջին զուգահեռ «նոր օսմանները» առաջադրեցին նաև գրականությունը թուրքացնելու խնդիրը, այն է՝ պարզեցնել գրելաոճը, թուրքական գրականությունն ազատագրել պարսկականի ուժեղ ազդեցությունից, գրական ստեղծագործությունները մոտեցնել թուրք հասարակ ժողովրդին, գրական երկերը ստեղծել նրա լեզվով։ Նրանք հատկապես խանդավառված էին ժողովրդական պոեզիայով և գտնում էին, որ իսկական թուրքական պոեզիան ապրում է ժողովրդական ակունքներում, թուրք ժողովրդի ներքնախավերում, նրա լեգենդներում ու ավանդավեպերում, հետևապես ամենուրեք «թուրք» տարրի մեջ էին փնտրում ժողովրդական երգ ու պատում, ասք ու էպոս։

«Նոր օսմանները» նաև խնդիր առաջադրեցին ռեֆորմի ենթարկել մուսուլմանական աղոթքները, որոնք գրված էին և ասվում էին արաբերեն։ Նրանք անհրաժեշտ էին համարում այդ աղոթքները թարգմանել թուրքերեն։

Թուրք լեզվի և գրականության ժողովրդականացման պահանջը, որ առաջադրեցին «նոր օսմանները», ձևավորվող թուրք մտավորականության ազգային ինքնագիտակցության մի թույլ առկայծում էր, սաղմն էր թուրքական բուրժուազիայի դեռևս չկազմակերպված տարերային նացիոնալիզմի։ Հարևանցիորեն նշենք, որ նման պահանջ ժամանակին առաջադրել են և այսօր էլ առաջադրում են ազգային կուլտուրայի և ազգային ոգու դրոշակակիր հռչակված, բարձրացող բուրժուազիայի գաղափարախոսները, և ըստ էության դա առաջադեմ պահանջ էր։ Բայց թուրքական անագորույն իրականության պայմաններում «նոր օսմանների» առաջ քաշած այդ առաջադեմ գաղափարը դարի վերջին դառնալու էր թուրք ազգային բուրժուազիայի վայրենի շովինիզմի՝ թուրքիզմի գաղափարախոսության բաղկացուցիչ մասը։ Ինչպես հետո կտեսնենք, թուրք ժողովրդի լեզվի անաղարտության ու մաքրության մասին Իբրահիմ Շինասիի և «նոր օսմանների» մյուս գաղափարախոսների մտքերը հետագայում օգտագործեցին նաև պանթուրքականները իրենց մարդատյաց գաղափարները հիմնավորելու համար։

«Նոր օսմաններին» շատ էր զբաղեցնում կրոնի խնդիրը։ Դա պատահական չէր, քանի որ օսմանյան կայսրության հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում իսլամի դերը հսկայական էր։ Բացառիկ մեծ նշանակություն տալով մահմեդականությանը, նրանք բոլորն էլ գտնում էին, որ Օսմանյան կայսրության միասնականության պահպանման համար կրոնը վիթխարի ուժ է և որ այն թուրքերի հետագա հզորության գլխավոր երաշխիքն է ինչպես կայսրության ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։

Առաջադրելով Օսմանյան կայսրության կառավարման համակարգը սահմանադրական հիմքերի վրա վերափոխելու պահանջը, «նոր օսմանները» միաժամանակ համոզված էին, որ մուսուլմանական կրոնը, շարիաթի սկզբունքներն ու նորմերը ոչ միայն չեն հակասում սահմանադրական կառավարման գաղափարներին և, ընդհանրապես, լիբերալ ռեֆորմներին, այլև ներդաշնակ են դրանց։ Մահմեդական կրոնում, ասում էին նրանք, խտացված են Արևելքի դարավոր իմաստությունները, մի բան, որ չի կարելի աչքաթող անել։

«Նոր օսմանները» գտնում էին, որ կայսրության շահերը պահանջում են Արևելքի կրոնական սկզբունքները սերտորեն միավորել Արևմուտքի գիտական նվաճումների հետ, մշտապես հետևել, որպեսզի մուսուլմանական կրոնն արգելք չլինի եվրոպական գիտական և տեխնիկական մտքի յուրացման ճանապարհին։ Այսպիսով, «նոր օսմանները» ձգտում էին կրոնը դարձ-

նել նաև իրենց հասարակական-քաղաքական գաղափարների իրականացման ակտիվ միջոց։

Ինչպես տեսնում ենք, ձևավորման առաջին իսկ քայլերից թուրքական ազգային բուրժուազիան իրեն հռչակեց մահմեդականության հետևողական պաշտպան։ Ի տարբերություն եվրոպական բուրժուազիայի, որը վերընթաց զարգացման ժամանակաշրջանում ֆեոդալական կարգերի դեմ պայքարը, որպես կանոն, զուգորդում էր միջնադարյան եկեղեցու և նրա գաղափարախոսության դեմ պայքարի հետ, թուրքական բուրժուազիան հենց սկզբից սատարեց իսլամը։ Կրոնի հարցին այս առանձնահատուկ մոտեցումը կամա թե ակամա նրան նախանձախնդիր էր դարձնում ջատագովելու իսլամիզմը և կրոնի հիմնական հարցերում համերաշխվելու սուլթան-խալիֆի, մուսուլմանական բարձրագույն կղերի հետ։

Թուրքական լիբերալ-բուրժուական շարժման գործիչները մեծ նշանակություն էին տալիս այնպիսի մի կարևոր խնդրի, ինչպիսին Օսմանյան կայսրությունում ազգային հարցն էր։

Եթե տնտեսության, քաղաքականության ու կուլտուրայի հարցեր քննարկելիս «նոր օսմանները» ռեակցիոն գաղափարների հետ արտահայտում էին նաև այնպիսի մտքեր, որոնք 19-րդ դարի երկրորդ կեսի Օսմանյան կայսրության մռայլ իրականության մեջ, անկասկած, առաջադիմական էին, ապա նույնը չի կարելի ասել ազգային հարցում նրանց հայացքների ու գաղափարների մասին։

Ազգային հարցում «նոր օսմանների» գաղափարների ձևավորումը համընկավ կայսրության քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման վերելքին։

1861 թվականին թուրքերի դեմ ապստամբություն բարձրացրին Հերցեգովինայի և Բոսնիայի գյուղացիները։ Նույն թվականին Բարձր Դուռը ճանաչեց ռումին ժողովրդի պետականությունը։ 1862 թվականին թուրքական վերջին կայազորները հեռացան Սերբիայից։ 1866 թվականին պայքարի ելան Կրետե կղզու հույները, իսկ 1875 թվականին նորից ապստամբություն բռնկվեց Բոսնիայում և Հերցեգովինայում։

Թուրքական բռնակալության հասցրած տառապանքներից, կեղեքումներից, հալածանքներից ու անիրավություններից գավառների հայ ժողովուրդը դարձել էր դժբախտ ու հալածական։ Կայսրության քրիստոնյա ժողովուրդների ապստամբական շարժումները չէին կարող անհետևանք մնալ հայության համար։ Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում նույնպես ծնունդ էին առնում դիմադրական շարժումներ։ Մերթ այստեղ, մերթ այնտեղ հայերը դիմում էին զենքի։ Իր մասշտաբներով և բնույթով հակասուլթանական ապստամբությունների շարքում առանձնապես մասսայական էր Զեյթունի հայ լեռնականների 1862 թվականի ապստամբությունը։ Զեյթունի հերոսական պաշտպանությունը հույս ու հավատ ներշնչեց արևմտահայությանը։ Հայրենասիրական խանդավառ ալիքը տարածվեց հայկական լեռնաշխարհով մեկ[1]։ Թուրքական իշխանություններին մեծ հոգսեր պատճառեցին նաև Մուշի հայերի 1863 թվականի զինված ելույթները և Զարսանջակի հայերի հուզումները 1865 թվականին։ Օսմանյան առաջին մեջլիսի նախագահ Ահմեդ Վեֆիք փաշան, Ռյուշտու փաշան, Կադրի բեյը և սուլթանական ուրիշ բարձրաստիճան պաշտոնյաներ խոստովանում էին, որ հայ ժողովրդի դժգոհության ու ընդվզումների պատճառը սուլթանական բռնակալական վարչակարգն ու կառավարման սիստեմն է[2]։ Սակայն Զեյթունի և Արևմտյան Հայաստանի տարբեր շրջանների հայ բնակչության անջատ-անջատ դիմադրական ելույթները մնացին իբրև առանձին դրվագներ՝ Արևմտահայ գավառը մնաց հարբստահարիչների ճանկերում։

Ազգային հարցի մասին թուրքական առաջին սահմանադրականների հայացքների զարգացմանը զգալիորեն նպաստեց արդեն հիշատակված Ֆուադ փաշան՝ 1856 թվականի հաթթ-ի հումայունի հղացողն ու ներշնչողը։ 1869 թվականին, մահվանից մեկ օր առաջ նա Աբդուլ Ազիզ սուլթանին ուղարկեց իր «քաղաքական կտակը», որտեղ Օսմանյան կայսրության ապագայի նկատմամբ մեծագույն մտահոգությամբ ներշնչված շարադրել էր իր մտքերը։ Ֆուադ փաշան Աբդուլ Ազիզին խորհուրդ էր տա-

---

[1] Տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Զեյթունի 1862 թվականի ապստամբությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1962, 4 (19), Հ. Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1967, էջ 484—499. Հ. Մ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը 1909—1921 թթ., «Հայաստան» հրատ., Երևան, 1969, էջ 161—191. Գ. Գալստեան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու Յորք, 1934։

[2] Տե՛ս Ե. Գ. Աղաթոն, Կեանքիս յիշատակները, Ժնև, 1931, էջ 125, 132, 149։

լիս բոլոր միջոցներին դիմել գահավեժ ընթացքով կործանում գնացող Օսմանյան կայսրությունը փրկելու համար։ Շարադրելով իր կարծիքն Անգլիայի (որին «մեր օտար դաշնակիցների» շարքում համարում էր առաջինը), Ֆրանսիայի («որի հետ միշտ ամենամեծ հարգանքով են վերաբերվում»), Ավստրիայի (որը «Բարձր Դռան ամենահարմար դաշնակիցը պետք է լինի»), Պրուսիայի (որը վաղ թե ուշ պետք է զբաղվի արևելյան խնդրով՝ հօգուտ Թուրքիայի) և, վերջապես, Ռուսաստանի (որը «մեր կայսրության բնական թշնամին» է) մասին, Ֆուադ փաշան այնուհետև անցնում էր երկրի ներքին կացությանը և դրա հետ կապված խնդիրներին[1]։

Այս խնդիրների թվում ամենակարևորը Ֆուադ փաշան համարում էր ազգային-ազատագրական շարժումների դաժան ճնշումը, կայսրության ամբողջականության պահպանումը։ Շարադրելով իր հայացքները Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների մասին, Ֆուադ փաշան խիստ բացասաբար էր արտահայտվում նրանց հանդեպ։ Նա գտնում էր, որ բնավ չպետք է մտածել քրիստոնյաներին երբևիցե ինքնավարություն, առավել ևս՝ անկախություն տալու մասին։ «Արդի պետությունների կազմության մեջ միակ հաստատուն դրությունը,— ասում էր նա,— մեծ համախմբումների մեջ է»[2]։ Նա հակաբնական և մեծագույն սխալ էր համարում Հունաստանի անկախության փաստի հետ հաշտվելը։ Հունաստանը, ասում էր Ֆուադ փաշան, ըստ էության ոչնչություն է, իսկ նրա ժողովուրդը՝ արհամարհանքի արժանի մի ղանգված։ «Պետք չէ, որ մոռանանք Հունաստանին՝ ինքնին անկարևոր մի երկիր, բայց ձանձրացուցիչ մի գործիք թշնամի պետության ձեռքում։ Եվրոպացի բանաստեղծները, կազմելով այս ուրվական թագավորությունը, կարծեցին, թե պետք է կարողանային վերակենդանացնել մի ազգի, որ երկու հազար տարուց ավելի մեռել էր արդեն։ ...Հելլենական ցեղի ոգին միշտ մեր դատի թշնամին պետք է լինի։ ...Այս նենգավոր ու չարասիրտ ժողովրդի ոտնձգությունների դեմ լավագույն պաշտպանությունն իր եպերելի սնափառության և բացարձակության մեջ է, որոնցով նա մեր բոլոր արևելյան ազգերի աչքում օրէցօր ավելի ատելի, ավելի անտանելի է դառնում։ Մեր քաղաքականության նպատակը պետք է լինի՝ հնարավոր չափով անջատել հույներին մեր

[1] Տե՛ս «Արօր», Ա տարի, № 6, 1910, էջ 181—182։
[2] Նույն տեղը, էջ 185։

մյուս քրիստոնյաներից։ Ամեն բանից ավելի՝ մենք պարտավոր ենք բուլղարներին հեռացնել հույն եկեղեցու տիրապետությունից՝ առանց նրանց կցելու ռուս կամ հռոմեական կղերականությանը»[1]։ Ֆուադը նույնպիսի որակումներ էր տալիս սլավոնական մյուս ժողովուրդներին և հրեաներին՝ նրանց առավել կարող, բանիմաց ներկայացուցիչներին կայսրության շահերին ի նպաստ օգտագործելու վերապահությամբ հանդերձ։

Ապա, անդրադառնալով Օսմանյան կայսրության մեջ բնակափակված հայությանը, Ֆուադ փաշան, որն, իմիջիայլոց, ակտիվ դեր էր խաղացել Թուրքահայոց Ազգային սահմանադրության, կամ ավելի ճիշտ, ինչպես ասվեց վերևում՝ Կ. Պոլսի հայ համայնքի կանոնադրության կազմման ժամանակ, գրում էր. «Բարձր Դուռը երբեք չպետք է ների որևէ մեքենայություն, որի նպատակը լինի հայ և օրթոդոքս եկեղեցիների միությունը»[2]։ «Մասնավորապես հայերը հակում են ցույց տալիս դեպի ոտնձգություն, և խելացի բան է նրանց եռանդը չափավորելը, ասպարեզը տալով միայն նրանց, ովքեր պարկեշտորեն ընդունում են մեր կայսրության միավոր սկզբունքը»[3]։

Մեծագույն արհամարհանք տածելով կայսրության ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ և վճռականապես մերժելով նրանց որևէ ինքնուրույնություն տալու գաղափարը, Ֆուադ փաշան գրում էր. «Մի մեծ Գերմանիա 40 000 000 բնակչությամբ, մի Ֆրանսիա, բնության կողմից զորավոր կերպով պաշտպանված մի Անգլիա. այս բոլոր ազգությունները կկարողանան իրենց զորավոր և օգտակար անհատականությունը պահպանել ժամանակի ընթացքում։ Բայց մի Մոնթենեգրո, մի սերբիական իշխանություն, մի հայկական թագավորություն, ամենափոքր օգուտ չտալով ո՛չ իրենց և ո՛չ մարդկությանը, կարող են առավել կամ նվազ ցնորական պետություններ լինել, մարդկային հին բաժանումների դժբախտ մնացորդներ, ամեն նոր աշխարհակալի անխուսափելի որսը՝ դրանով իսկ վտանգելով աշխարհի խաղաղությունը»[4]։

Բարեխղճորեն սերտելով Ֆուադ փաշայի տված դասերը, թուրքական առաջին սահմանադրականներն Օսմանյան կայսրու-

[1] «Արօր», Ա. տարի, № 6, 1910, էջ 181—182։
[2] Նույն տեղը։
[3] Նույն տեղը, էջ 185։
[4] Նույն տեղը։

թյան մեջ ազգային հարցի լուծմանը մոտենում էին ակնհայտ ռեակցիոն մեծապետական դիրքերից։ Խոսելով սահմանադրական կարգերի, քաղաքական ազատությունների և այլ բարեմասնությունների մասին, նրանք այդ բոլորը կիրառելի էին համարում միմիայն կայսրության թուրք տարրերի շրջանում։

Հանդես գալով որպես կայսրության ամբողջականության պահպանման մոլեռանդ ջատագովներ, «նոր օսմանները» գրտնում էին, որ նրանում լիովին պետք է բացառել ոչ թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները և կրոնական պայքարը։ Նրանց մտքով չէր էլ անցնում ազգային անկախություն տալ կայսրության մեջ բռնափակված որևէ ժողովրդի։ Անհերքելիորեն ժխտելով ոչ թուրք ժողովուրդների ազատ զարգացման իրավունքը, նրանք գտնում էին, որ սուլթանի տիրապետությունից ազատվելու ամեն մի փորձ պետք է արյան մեջ խեղդել։ Բալկանյան սլավոնների, հույների, հայերի, արաբների, քրդերի և կայսրության մյուս ոչ թուրք ժողովուրդների ազատագրական շարժումները որակվում էին իբրև եվրոպական տերությունների կողմից հրահրվող խռովություններ, իսկ դրանց դաժան ճնշումը համարվում՝ արդար գործ։ Իրենց երկրի անկախության համար պայքարող չեռնոգորցիներին որակում էին «ավազակներ», Կրետե կղզու հույների ապստամբությունը՝ «սատանայական խռովություն»։

Ինչպես վերևում ասվեց, «նոր օսմանները» ոչ թուրք ժողովուրդների ապստամբությունների հիմնական պատճառը համարում էին կայսրության ներքին գործերին եվրոպական տերությունների միջամտությունը, դրսից պարբերաբար կրկնվող հրահրումները։ Առանձին դեպքերում նրանք ընդունում էին, որ ճնշված ժողովուրդների մի շարք ապստամբությունների պատճառը, իրոք, իշխանությունների դեսպոտիզմը և պետական չինովնիկների կամայականությունն է։ Բայց նույնիսկ այդպիսի դեպքերում էլ նրանք ոչ մի արդարացում չէին տեսնում այդ շարժումների համար։ Առանձին վերապահումներով հանդերձ, այդ հարցում նրանք հետևողականորեն պաշտպանում էին կառավարությանը։ Ավելին, սուլթանական ռեժիմը խստորեն քննադատում էին ոչ թե այլազգիների նկատմամբ անլուր բռնություններ գործադրելու, այլ եվրոպական տերությունների ճնշման տակ Մոլդավիային, Վալախիային, Սերբիային անկախություն տալու և այն բանի համար, որ հարկ եղած վճռականություն չի դրսևորում վերջ տալու կայսրության ժողովուրդների կենտրոնախույս ձգտումներին, մեկընդմիշտ խեղդելու ազգային-ազատագրական շարժումները։

Արդարացնելով թուրք նվաճողների դաժան ասիմիլյատորական քաղաքականությունը և անտեսելով ոչ թուրք ժողովուրդների դարավոր ազգային տառապանքների փաստերը, «նոր օսմանները» պնդում էին, թե իշխանությունների կամայականություններից քրիստոնյա ժողովուրդներն ավելի քիչ են տուժել, քան կայսրության մեջ իշխող թուրքերը և մյուս մուսուլման ժողովուրդները։ Դրա պատճառը նրանց կարծիքով այն էր, որ կայսրության քրիստոնյա ժողովուրդները, իբր, օգտվում են եվրոպական տերությունների հովանավորությունից ու պաշտպանությունից, իսկ թուրքերը և մահմեդականները միայն արժանանում են այդ նույն տերությունների հակակրանքին ու թշնամությանը, որոնք գումարվելով սուլթանական իշխանության կամայականություններին, անտանելի վիճակ են ստեղծում նրանց համար։

Շարունակելով իրենց խորհրդածությունները Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների մասին, «նոր օսմաններն» ավելի հեռուն են գնում։ Նրանց գլխավոր գաղափարախոսներից Միդհատ փաշան 1878 թվականին Փարիզում լույս ընծայած իր «Թուրքիան, նրա անցյալն ու ապագան» գրքում գրում էր, թե ոչ թուրք բոլոր ժողովուրդների համար Օսմանյան կայսրությունն իսկական բարիք է եղել, որովհետև նրանք իբր հնազանդվել են ոչ թե օսմանյան դաժան ու արյունոտ լծին, ոչ թե թուրքական սուլթանների յաթաղանին, այլ նրանց ողորմածությանը։ Սուլթաններն իբր եղել են արդարադատ ու անկողմնակալ, ոչ մի ճնշում չեն գործադրել նվաճած ժողովուրդների հանդեպ։ Այս տեսակետը հավատարմորեն պաշտպանում և խրախուսում էին «նոր օսմանների» մյուս ղեկավարներն ու տեսաբանները։

Այսպիսով , բարձրացող թուրքական բուրժուազիան, ինչպես կրոնի, այնպես էլ ազգային հարցում տարակարծիք չէր տիրապետող պետական-քաղաքական ռեժիմի հետ։ Սա նույնպես բարձրացող թուրքական բուրժուազիայի առանձնահատուկ գծերից մեկն էր։ Եթե Եվրոպայում, բուրժուական հեղափոխությունների դարաշրջանում, բուրժուազիան գոնե առժամանակ և ձևականորեն ընդունում էր ազգերի ազատության և

ինքնուրույնության սկզբունքը, ապա թուրքական բուրժուազիան լսել անգամ չէր ուզում այդ մասին։

Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման մտահոգությամբ տարված, առաջին թուրք սահմանադրականները կայսրության ոչ թուրք ժողովուրդների ազատագրական շարժումներին ամբողջ ուժով հակադրում էին միասնական հայրենիքի, հետևաբար նաև՝ օսմանյան ընդհանուր հայրենասիրության գաղափարը։ «Միասնական երկիր՝ միասնական ժողովրդով»,— ասում էր Միդհատ փաշան։ Ալի Սուավին գրում էր, թե օսմանյան ընդհանուր հայրենիքի սահմաններում բոլոր ժողովուրդները կազմում են մի օրգանիզմ, մի ամբողջություն։

19-րդ դարի 70-ական թվականներին «ընդհանուր հայրենիքի» գաղափարի պրոպագանդումը նոր օսմանների կողմից այնքան ուժգին էր տարվում, որ այդ գաղափարը շուտով լայնորեն թափանցեց նաև երկրի տիրող շերտերը, կառավարական շրջանները, սուլթանի արքունիքը։ Նախկինում ընդունված «օսմանյան համայնք» («ումմետ-ի օսմանիե») տերմինի փոխարեն թերթերի էջերում ու բանավոր վիճաբանությունների ժամանակ ավելի ու ավելի հաճախ էր օգտագործվում «օսմանյան ժողովուրդ» («օսմանլը միլլետի») տերմինը։ Ավելին, Ալի Սուավին առանձին դեպքերում նույնիսկ օգտագործում էր «օսմանյան ազգ» տերմինը, դրա տակ, իհարկե, նկատի չունենալով կայսրության ժողովուրդների էթնիկական-բիոլոգիական միասնությունը։ «Օսմանյան ազգը» նրա մոտ նույնացած էր «օսմանյան ժողովուրդ» հասկացության հետ։ Այդ հետո, երեք տասնամյակ հետո էր, որ «օսմանյան ազգ» հասկացության տակ երկրորդ սերնդի թուրք ազգայնականները՝ «երիտասարդ թուրքերը», նկատի էին ունենալու կայսրության բոլոր ժողովուրդների համատարած ձուլումը թուրք ազգի մեջ։

Ազգային հարցում «նոր օսմանների» բացահայտ շովինիստական դիրքորոշումը խիստ բացասաբար անդրադարձավ ֆեոդալական ինքնակալ ռեժիմի դեմ նրանց պրակտիկ պայքարի վրա, որովհետև այն խանգարում էր թուրք սահմանադրականների և կայսրության քրիստոնյա բուրժուական գործիչների միջև ընդհանուր դաշինք ստեղծելուն։

Ինչպես հետո կտեսնենք, հետագա տարիներին «նոր օսմանների» օսմանիզմի գաղափարը զգալի փոփոխություններ կրեց։ Փոխվեց նաև նրանց վերաբերմունքը այդ դոկտրինայի նկատ-

մամբ։ Նրանցից շատերն աստիճանաբար հեռացան օսմանիզմից և, որդեգրելով ավելի ռեակցիոն գաղափարներ, շեշտը դրեցին իսլամիզմի վրա, այսինքն՝ սկսեցին քարոզել թուրքերի գլխավորությամբ ոչ թե կայսրության բոլոր ժողովուրդների, այլ միայն մուսուլման ժողովուրդների միավորման գաղափարը։

«Նոր օսմանների» գաղափարական գինանոցում միայն իսլամիզմի և օսմանիզմի դոկտրինները չէին, որ տեղ ունեին։ Թուրք առաջին սահմանադրականների տեսական գործունեության օրինաչափ արդյունքն այն եղավ, որ նրանք հետագայում է՛լ ավելի նեղացրին իրենց հայրենասիրության շրջանակները։ «Միասնական ժողովրդի» օսմանիստական գաղափարից անցնելով Օսմանյան կայսրության մահմեդական ժողովուրդների միավորման գաղափարին, «նոր օսմանները» հաջորդ քայլն արեցին։ Նրանք առաջինն էին, որ քաղաքական հողի ընդերքը նետեցին թուրքական նացիոնալիզմի սերմերը, որոնք հետագայում վերաճեցին պանթուրքիզմի ռեակցիոն գաղափարախոսության[1]։

«Նոր օսմանները» առաջինը սկսեցին խոսել այն մասին, թե «թուրքական ռասան» («թյուրք ըրկը») իր բոլոր՝ պատմական, քաղաքական, ռազմական և կուլտուրական կողմերով ամենաբարձր ու ամենահին ռասան է, որն անգնահատելի դեր է խաղացել մարդկության պատմության մեջ։ Իբրահիմ Շինասին, Նամըկ Քեմալը և ուրիշները շատ հաճախ էին օգտագործում ու լայնորեն պրոպագանդում ֆրանսիացի պոետ, պատմաբան և քաղաքական գործիչ Ալֆոնս դե Լամարթինի (1791—1869) խոսքերը, որ նա արտասանել էր Ֆրանսիայի ազգային ժողովում, 1839 թվականի հունիսի 24-ին։ Այդ ծայրահեղ ռեակցիոնների մասին Ֆր. Էնգելսն ասել է. «Վերամբարձ սրիկա Լամարթինը ժողովրդին դավաճանելու այդ դարաշրջանի դասական հերոսն էր, դավաճանություն, որ թաքնված էր բանաստեղծական ծաղիկների և հռետորական խաբուսիկ փայլի ներքո»[2]։ Եվ ահա այդ «դասական հերոսը» իր ճառում թուրքերին կոչ էր անում չթուլացնել կրոնական մոլեռանդությունը, որի ուժով է «անվթար մնում Օսմանյան կայսրությունը», «այլապես հույներն ու հա-

---

[1] Տե՛ս **Ю. А. Петросян,** Младотурецкое движение, изд-во «Наука», М., 1971, էջ 130։

[2] **К. Маркс и Ф. Энгельс.** Соч., т. 7, с. 203.

յերը գլուխ կբարձրացնեն»։ Այս բառերն արտասանել է այն նույն մարդը, որը Վենետիկի Մխիթարյան հայերի միաբանության Փարիզի Մուրադյան վարժարանում ժամանակին հայասիրական խանդավառ ճառեր էր ասում։

«Նոր օսմաններին» հատկապես հետաքրքրում էր Լամարթինի՝ թուրքերի մասին հայտնած հիացական կարծիքը։ «Թուրքերը,— ասել էր նա,— արևելյան ժողովուրդների մեջ առաջին տեղն են գրավում։ Ե՛վ իբրև մարդ, և՛ իբրև ազգ նրանք ազնվագույն են։ Իրենց նկարագիրը բոլորից ազնվական է և զարգացած։ Նրանց քաջասրտությունը մինչև այժմ անաղարտ է մնացել, նրանց կրոնական, ազգային ընտանեկան առաքինությունները բոլոր անկողմնակալ մարդկանց հիացումն են առաջ բերում։ Այդպիսի մի ցեղ մարդկությանը միայն պատիվ է բերում»[1]։

Իր հերթին Լամարթինը թուրքերին բնութագրելիս հենվում էր միջնադարյան մուսուլմանական հեղինակների գրական այն երկերի վրա, որոնցում գովերգվում էին թուրքական ցեղերի «աստծու տված» «բարեմասնությունները»։

«Մարդկությանը պատիվ բերող» թուրքական ցեղը կայսրության սահմաններից դուրս ուներ իր բազմաթիվ ճյուղավորումները, որոնց նկատմամբ «նոր օսմանների» հետաքրքրությունը գնալով աճում էր։ Նրանք մի առանձին շահագրգռություն հանդես բերեցին Միջին Ասիայի, Ղազախստանի և թուրքալեզու մյուս ժողովուրդների հանդեպ՝ առաջ քաշելով դրանց պատմությունը խորապես ու լայն ծավալով ուսումնասիրելու պահանջ։ Դրա առաջին օրինակներից մեկը տվեց Ալի Սուավին, որը «Ուլյում» հանդեսում մի շարք նյութեր տպագրեց թուրքալեզու ժողովուրդների մասին։ Նա գրում էր, թե ինքը չի կարող անտարբեր լինել այն «թուրքական մուսուլմանների պատմական բախտի հանդեպ, որոնք դավանում են մեր կրոնը, պատկանում են մեր ցեղին ու ընտանիքին»[2]։ Կարելի է ասել, որ հենց այստեղից էլ սկիզբ է առնում պանթուրքիզմը, իհարկե, դեռ նախնական, դեռ տարերային ու անկազմակերպ ձևով։ Պանթուրքիզ-

[1] «Տրապիզոնի թեմի վիճակավոր Յովհաննես արք. Նազլեանի յուշերը Մերձավոր արևելքի 1914—1928 շրջանի քաղաքական-կրոնական դեպքերուն մասին», Ա. հատոր, Պեյրութ-Լիբանան, 1960, էջ 3։

[2] Քաղված է՝ **Ю. А. Петросян**, Младотурецкое движение, էջ 130։

մի դեռևս աղոտ այս առկայծումը որոշ ժամանակ անց թափանցեց թուրք մտավորականության նեղ շրջանակից ներս, առայժմ, սակայն, մնալով որպես մշուշապատ գաղափար։

Դեպի թուրքալեզու ժողովուրդները «նոր օսմանների» նման բուռն հետաքրքրությունը արդյունք էր օսմանիզմի կենսունակության նկատմամբ իրենց մոտ առաջ եկած հիմնավոր կասկածների։ «Նոր օսմանների» գաղափարախոսների այս կամ այն հոդվածում ժամանակ առ ժամանակ, ճիշտ է դեռ անորոշ ձևով, փայլատակում էր այն միտքը, թե պատմական կտրուկ շրջադարձերի պահերին կայսրության ոչ թուրք մուսուլմանները նրա ամբողջականությունը պահպանելու հարցում հազիվ թե նույնպիսի շահագրգռություն հանդես բերեն, ինչպես նրա թուրք քաղաքացիները։

«Նոր օսմանները» պարզ տեսնում էին, որ Օսմանյան կայսրությանն ամենից շատ սպառնում է Ռուսաստանը։ Սա ակտիվորեն աջակցում էր բալկանյան սլավոնական և հայ ժողովուրդների ազատագրական պայքարին։ Դրան հակառակ քաղաքականություն էին վարում Անգլիան և եվրոպական այլ տերությունները, որոնք այն ժամանակ կայսրության ամբողջականության պահպանման կողմն էին և հանդես էին գալիս ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների դեմ։ Եվ որքան «նոր օսմանները» ատելությամբ էին լցված դեպի Ռուսաստանը, նույնքան անսքող համակրանք էին տածում Անգլիայի և եվրոպական մյուս տերությունների հանդեպ։

Հայտնի է, որ Կ. Մարքսը անիրագործելի և հետադիմական էր համարում եվրոպական տերությունների ձգտումը՝ պահպանելու Օսմանյան կայսրությունն այնպիսի տեսքով, ինչպիսին այն ժամանակ էր։ «Փաստն այն է,— գրել է Կ. Մարքսը 1853 թվականին,— որ հարկ կլինի այսպես թե այնպես թուրքերի վերջը տալ (նկատի ունի թուրքական կայսրության վերջը։— Հ. Ս.)»[1]։

Իհարկե, Անգլիայի օսմանամետ քաղաքականությունը կեղծ էր։ Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման պատրվակով անգլիական կառավարությունը ձգտում էր իր գերիշխող ազդեցությունը տարածել նրա ընդարձակածավալ տարածքների վրա, խոչընդոտել Ռուսաստանի ազդեցության ուժե-

[1] **К. Маркс** и **Ф. Энгельс**, Соч., т. 9, с. 392.

դացմանը Բալկաններում և Արևելքում։ Այսպես թե այնպես, Թուրքիայի պատմության մեջ «նոր օսմաններն» առաջինն էին, որ առաջ քաշեցին Արևելքում, մասնավորապես Օսմանյան կայսրության մեջ ռուսական ազդեցության ուժեղացման դեմ վճռական պայքար ծավալելու խնդիրը։ Այս պահանջը հետագայում դարձավ բոլոր պանթուրքականների հավատո հանգանակը։

«Նոր օսմանների» սոցիալ-քաղաքական և գաղափարական հայացքները կարևոր նշանակություն ունեցան Թուրքիայի հասարակական-քաղաքական և փիլիսոփայական մտքի զարգացման համար։ Բազմազան կոնցեպցիաներով հարուստ նրանց գաղափարական դինամոցում, ինչպես տեսանք, այնուամենայնիվ առանձնանում էր հիմնականը՝ օսմանիզմը։ Օսմանյան կայսրությունը կարելի է վերահաս կործանումից փրկել և նրա ամբողջականությունը պահպանել երկրի կառավարման համակարգը բարելավելու, սուլթանի անեզր իշխանությունը սահմանադրությամբ և եվրոպական պառլամենտով սահմանափակելու միջոցով. սա էր «նոր օսմանների» հիմնական քաղաքական եզրակացությունը և պահանջը։ Առաջադրելով սահմանադրական միապետության խնդիրը, «նոր օսմանները» այնուհետև ավելի հեռու գնացին՝ պահանջելով նաև իրարից անջատել օրենսդիր և գործադիր իշխանությունները։ Ըստ նրանց մշակած նախագծի, պառլամենտը պետք է քննարկեր և որոշումներ ու օրենքներ ընդուներ, սուլթանին վերապահվում էր դրանք հաստատելու կամ մերժելու իրավունքը, իսկ հասարակության պարտքն էր՝ հաստատված որոշումներն ու օրենքները իրականացնել կյանքում։

Այս ընդհանուր խնդիրներից բացի «նոր օսմանները» նաև մասնավոր խնդիր էին առաջադրում՝ ձգտել այն բանին, որպեսզի երկրի կառավարման համակարգի բարելավումը ամենափոքր չափով իսկ չսահմանափակի կայսրության հիմնական իշխող տարրի՝ թուրքերի արտոնություններն ու առանձնաշնորհումները։

«Նոր օսմանների» գաղափարները հող նախապատրաստեցին պրակտիկ սահմանադրական շարժման համար, որի բարձրակետը եղավ օսմանյան առաջին սահմանադրության ընդունումը և թուրքական առաջին պառլամենտի գումարումը։ Բայց այդ բարձրակետին «նոր օսմանները» հեշտությամբ չհասան։ Իրենց գաղափարներն իրականացնելու ճանապարհին նրանք հանդի-

պեցին կայսրության կառավարող վերնախավերի բուռն դիմադրությանը։ Սուլթանական պահպանողական կառավարությունը լսել անգամ չէր ուզում որևէ ռեֆորմի, հասարակական-քաղաքական կյանքում որևէ փոփոխության մասին։ Եվ ահա, ճակատ առ ճակատ հանդիպեցին հին, իրենց դարն ապրած սուլթանական կարգերը և եվրոպական հովերով տարված «նոր օսմանները»։ Մեկը մյուսին տեղի տալ չէր ուզում։ «Նոր օսմանները» մտադիր չէին հաշտվել գոյություն ունեցող կարգերի հետ, հետևապես նրանք սուլթանի դեմ բռնեցին բացահայտ պայքարի ճանապարհը։ Սուլթանական բռնապետական կարգերի տապալման հեռանկարն այնպես էր գրավել նրանց միտքը, որ այդ նպատակի իրականացման համար նրանք ներգրավեցին նույնիսկ հակասուլթանական քրիստոնեական ուժերին, դրդեցին նրանց խռովությունների ու ըմբոստությունների։ Ավելին, նրանցից շատերը նույնիսկ մասնակցեցին թուրքական տիրապետության դեմ ուղղված այն խոշոր ապստամբություններին, որոնք 70-ական թվականների կեսերին տեղի ունեցան նախ Բոսնիայում և Հերցեգովինայում, ապա՝ Բուլղարիայում։

Մեծ տերությունները պատրաստվում էին միջամտել գործին՝ Թուրքիային ստիպել անկախություն շնորհել ապստամբ երկրներին։ Երկյուղ կրելով տերությունների միջամտությունից, «նոր օսմաններին» համակիր Միդհատ փաշան կառավարության մի շարք ուրիշ անդամների հետ միասին կազմակերպեց և 1876 թվականի մայիսի 30-ին պետական հեղաշրջում իրականացրեց, որի հետևանքով գահընկեց արվեց սուլթան Աբդուլ Ազիզը։ Հեղաշրջումից հետո որոշ ժամանակ իշխանությունը փաստորեն գտնվում էր Միդհատ փաշայի և նրա գործակիցների՝ «նոր օսմանների» ձեռքին։ Աբդուլ Ազիզին հաջորդեց սուլթան Աբդուլ Համիդ II-ը։ Դեռ իրեն ամուր չզգալով գահի վրա, սա ստիպված էր ընդունել Միդհատ փաշայի և Նամըկ Քեմալի կողմից մշակված սահմանադրության նախագիծը, որը և հանդիսավորությամբ հռչակվեց 1876 թվականի դեկտեմբերի 23-ին։

Սահմանադրությունը Թուրքիայի համար, անկասկած, կարևոր ակտ էր, որով նախատեսվում էր ստեղծել երկպա-

---

[1] Այդ շրջանում Միդհատ փաշայի գլխավոր խորհրդականներից և ջերմ աջակիցներից մեկը Գրիգոր Օտյանն էր (տե՛ս «Արօր», Ա. տարի, № 6—7, 1910, էջ 116)։

լատյա պառլամենտ, ազդարարել օրենքի առջև բոլոր օսմանցիների իրավահավասարություն՝ անկախ կրոնի տարբերությունից, բուրժուական «ազատություններ» և այլն։ Օսմանյան կայսրության կառավարման սիստեմը հռչակվում էր իբրև սահմանադրական միապետություն, որի պայմաններում սահմանափակվում էին սուլթանի իրավունքները։

Շուտով, սահմանադրության հիման վրա, 1877 թվականի ամռանը հրավիրվեց օսմանյան առաջին պառլամենտը, որում ընտրվել էր 119 անդամ (71 մուսուլման և 48 քրիստոնյա)։ Դրանց թվում կային թուրքեր, արաբներ, հայեր, հույներ, հրեաներ, բուլղարներ, սերբեր, բոսնիացիներ և քրդեր։ Պառլամենտի կազմում պետական ոչ մի պաշտոնյա չկար, որովհետև օսմանյան սահմանադրության համաձայն պետական ծառայության մեջ գտնվողները չէին կարող ընտրվել պառլամենտի անդամ։ Պառլամենտը քննարկեց և ընդունեց մի շարք կարևոր օրինագծեր, պառլամենտականները համարձակորեն խիստ քննադատության կրակի տակ առան սուլթանին և արքունիքը։

Մեծ էր առաջին թուրքական պառլամենտի առաջադիմական նշանակությունը, այն թուրքական բուրժուազիայի՝ իր իրավունքների համար լեգալ պայքարի առաջին դպրոցը եղավ։ Բարձր գնահատելով այդ պառլամենտի գործունեությունը, 1877 թվականի հունիսին Ֆ. Էնգելսը գրել է. «Ա՜յ, եթե մեզ մոտ Գերմանիայում այնպիսի պառլամենտ լիներ, ինչպես Կոստանդնուպոլսում»[2]։

Շատ չանցած, արդեն 1877 թվականի սկզբին, Աբդուլ Համիդը, երբ բավականաչափ ամրապնդել էր իր դիրքերը, ռեպրեսիաներ սկսեց «նոր օսմանների» դեմ, բանտ նետեց կամ աքսորեց շարժման մասնակիցներից շատերին։ Նա մեծ վեզիրի պաշտոնից զրկեց Միդհատ փաշային և նրան արտաքսեց երկրից։ Բայց սուլթանն իրեն հանգիստ չէր զգում, քանի դեռ կենդանի էր Միդհատ փաշան։ Երկյուղելով նրա տակավին ուժեղ ազդեցությունից, սուլթանը որոշեց վերացնել Միդհատին. նրա հրամանով նախկին մեծ վեզիրը խեղդամահ արվեց[3]։

---

[1] Տե՛ս **Ա. Ֆ. Միլլեր,** Краткая история Турции, էջ 95։

[2] **К. Маркс** и **Ф. Энгельс,** Соч., т. 34, с. 216.

[3] Տե՛ս **Կ. Թումանեան,** Պատմություն արևելյան խնդրոյ և առաջնորդ հայկական հարցի, հատոր Բ., Լոնտոն, 1905, էջ 511—512։

1878 թվականի փետրվարին սուլթան Աբդուլ Համիդը լուծարքի ենթարկեց պառլամենտը և արգելեց սահմանադրությունը։ Ավարտվեց «նոր օսմանների» գործունեության ժամանակաշրջանը, շարժումը կես ճանապարհին մնաց։ Թուրքիայի գլխավոր դժբախտությունը այն է, 1878 թվականի փետրվարին գրել է Կ. Մարքսը Վիլհելմ Լիբկնեխտին, որ «Թուրքերը ժամանակին հեղափոխություն չարեցին Կոստանդնուպոլսում...»[1]

Թուրք սահմանադրականների պարտությունից հետո հաստատվեց սուլթան Աբդուլ Համիդի ինքնակալ բռնապետական դաժան ռեժիմը, որը տևեց ավելի քան երեսուն տարի։

---

[1] **К. Маркс** и **Ф. Энгельс,** Соч., т. 34, с. 247.

ԱԲԴՈՒԼՀԱՄԻԴՅԱՆ ՄՂԶԱՎԱՆՋԻ ՏԱՐԻՆԵՐԸ: ՊԱՆԻՍԼԱՄԻԶՄԸ ՈՐՊԵՍ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔ

«Նոր օսմանների» շարժման ճնշումից հետո սկսվեց աբդուլ-համիդյան արյունալի ռեժիմի ժամանակաշրջանը։

Ընդդիմադիր ուժերի ընդհատակ անցնելուն զուգընթաց առժամանակ դանդաղեց Թուրքականության գաղափարների նետած սերմերի ծլարձակումը, այնպես որ մինչև 80-ական թվականների վերջերը Թուրքական բարձրացող ազգային բուրժուազիայի գաղափարախոսության հետագա ձևավորման պրոցեսը տեղատվության մեջ էր։

19-րդ դարի վերջին քառորդում Օսմանյան կայսրությունը շարունակում էր մնալ հետամնաց վիճակում։ Գյուղատնտեսության քայքայման ընթացքն ավելի մեծ թափ էր առել։ Մշակելի հողատարածությունների մոտ երկու երրորդը (65,5%) գտնվում էր ֆեոդալների և կալվածատերերի ոչ մեծ խմբի ձեռքին։ Այդ հողերի միայն մեկ երրորդն էր պատկանում գյուղացիությանը, և հենց դա էր գլխավոր պատճառը, որ վերջինիս չէր հաջողվում թոթափել տնական թշվառությունը[1]*։*

Անմխիթար վիճակում էր նաև արդյունաբերությունը։ Ճիշտ է, քաղաքներում տեղական բուրժուազիայի կողմից կառուցվում էին բամբակազտիչ, բրդի գզման ու լվացման, ծխախոտի և հումքի այլ տեսակների նախնական վերամշակման նոր գործարաններ, բայց դրանք գլխավորապես կոչված էին բավարարելու օտարերկրյա կապիտալի պահանջմունքները։

Դրան հակառակ, եվրոպացիների կապիտալ ներդրումները հնարավորություն էին տալիս օգտակար հանածոներով լի վայրերում կառուցել հանքահորեր, գցել առաջին երկաթուղիները։ Վերջիններս հատկապես կարևոր նշանակություն էին ձեռք բերում Անատոլիայում, որի խորքերից դեպի ծովային նավահանգիստներ էին տարվում քրոմի հանքաքար, ածուխ, բամբակ, բուրդ, ծխախոտ և հումքի այլ տեսակներ։

Այդ մասնակի առաջընթացը, սակայն, չէր կարող փոխել արդյունաբերության ընդհանուր վիճակը։ Բավական է ասել, որ նույնիսկ 90-ական թվականներին կայսրության լայնաբձակ տարածքում հաշվվում էր ընդամենը 40—50 հազար արդյունաբերական բանվոր[1]*։*

Կայսրության շուկան ավելի մեծ չափերով հեղեղվեց արտասահմանյան էժան ապրանքներով, որոնք տակնուվրա էին անում երկրի ավանդական արհեստագործական արտադրությունը, նրան մղում լճացման ու անկման։ Եթե նախկինում Թուրքիան արտահանում էր զգալի քանակությամբ արհեստագործական պատրաստի արտադրանք, մասնավորապես տարբեր տեսակի մետաքսե և բրդյա գործվածքներ, ապա այժմ անգլիական թավիշը, ֆրանսիական սատինը, իտալական մետաքսե գործվածքները վերջնականապես ետնախորշեր էին մղում տեղական արտադրությունը[2]*։*

19-րդ դարի վերջին քառորդում երկրի տնտեսության հիմնական ճյուղերն արդեն եվրոպական խոշոր տերությունների ֆինանսատնտեսական վերահսկողության տակ էին։ Արտաքին առևտուրը վնասով էր կատարվում։ Մեծ չափերով կնքվում էին արտաքին նոր փոխառություններ, որ ավելի էր խորացնում տնտեսական դժվարությունները։ Միայն 1854—1878 թվականներին Թուրքիան եվրոպական երկրների հետ կնքել է մոտ 5,3 միլիարդ ֆրանկի փոխառություն[3]*։ Հետագա տարիներին եվրոպական երկրները ավելի կատարելագործեցին փոխառությունների կնքման մեխանիզմը, մի բան, որ Արևմուտքից Թուրքիայի կախվածության ամրապնդման արդյունք էր։ Օսմանյան կայսրությունը վերջնականապես վերածվում էր արևմտյան տերությունների կիսագաղութի։*

---

[1] *Տե՛ս* **А. Ф. Миллер,** Краткая история Турции, *էջ* 114—115:

[1] *Տե՛ս* **А. Ф. Миллер,** Краткая история Турции, *էջ* 115:

[2] *Տե՛ս* **Д. Е. Еремеев,** На стыке Азии и Европы, изд-во «Наука», Главная редакция восточной литературы, М., 1980, *էջ* 121—122:

[3] *Տե՛ս* **Аб. Алимов,** Турция. В книге «Очерки по истории Востока в эпоху империализма», Соцэкгиз, М.—Л., 1934, *էջ* 15:

Երկրի ղեկի մոտ շարունակում էին մնալ այն ժամանակվա թուրքական հասարակության ամենառեակցիոն խավերի ներկայացուցիչները։ Սուլթանական ռեժիմի ամրապնդմանը հիմնականում տոն էին տալիս թուրք, արաբ, չերքեզ և քուրդ կալվածատերերը, մուսուլմանական բարձր հոգևորականությունը, ֆեոդալական-սուլթանական բյուրոկրատիան։

Պետության կառավարումն իրականացնում էին տգետ ու խավարամիտ մարդիկ։ 80—90-ական թվականներին Օսմանյան կայսրության մինիստրների թվում բարձրագույն կրթություն ունեցող չկար։ Ավելին, պետական այն չինովնիկները, որոնք քիչ թե շատ կանոնավոր կրթություն էին ստացել, համարվում էին անբարեբաստ տարրեր։

Ֆեոդալական-միապետական ռեժիմի նեխվածությունն իր տիպիկ մարմնավորումն էր գտել սուլթանի արքունիքում՝ բաղկացած մոտ 12 հազար հոգուց, որի պահպանման վրա ծախսվում էին հսկայական միջոցներ։ Միայն սուլթանի հարեմին, որտեղ կար ավելի քան 300 կին, այնքան միջոցներ էր տրամադրվում, որը կբավականացներ 10 հազար հոգուց բաղկացած մի զորագունդ հանդերձավորելու և կերակրելու։ Որոշ տվյալներով այդ ժամանակ թուրքական սուլթանների անձնական ծախսերը կազմում էին կայսրության բոլոր ծախսերի 1/7 մասը[1]։

Աբդուլ Համիդի կառավարման տարիները սարսափի տարիներ էին։ Մոլեգնող ռեակցիան ավերներ էր գործում լուսավորության և կրթության մարզերում։ Ամենուրեք խեղդվում էր առաջադեմ ու ազատամիտ ամեն միտք ու գաղափար։ Ուժեղ հսկողության տակ դրվեցին դպրոցները, որոնց ծրագրերն արմատապես վերաձևվեցին։ Ուսումնական պլաններից հանվեցին այն բոլոր առարկաները, որոնք կարող էին «շփոթ առաջ բերել» սովորողների մտքերում։ Էապես ուժեղացավ կրոնի ազդեցությունը դպրոցների վրա. աշակերտները պարտավոր էին ողջ մանրամասնությամբ սովորել մուսուլմանական սրբերի վարքը, նրանց մասին եղած զանազան պատմություններ[2]։ Մուսուլմանական դպրոցները շարունակում էին մնալ սխոլաստիկայի և խավարամոլության օջախներ։

[1] Տե՛ս **П. И. Чихачев**, Великие державы и восточный вопрос. М., 1970, էջ 190—191։

[2] Տե՛ս **И. И. Голобородько (И. Южанин)**, Старая и новая Турция, էջ 83—92։

Անտանելի վիճակ էր ստեղծվել մամուլի համար։ Փակվեցին բազմաթիվ թերթեր. եղած մի քանի թերթերը կոչված էին միայն փառաբանելու սուլթանին, նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականությունը։ Ամլության դատապարտվեց թուրքական մշակույթը, գրականությունն ու արվեստը։

Ամենուրեք թագավորում էին անօրինականություններն ու կամայականությունները, անասելի չափերի հասան պետական պաշտոնյաների չարաշահումները։ Զուր չէ, որ աբդուլ Համիդյան ժամանակաշրջանը հենց իրենք՝ թուրքերը, անվանեցին «զուլումի» («ճնշման», «բռնության») ժամանակաշրջան։ Ստեղծված ծանր վիճակը Թուրքիայի աշխատավոր մասսաներին պարբերաբար սոցիալական ընդվզումների էր մղում տիրող դասակարգերի դեմ։

Աբդուլ Համիդ II-ի կառավարման տարիները բնութագրվում էին հատկապես ոչ թուրք ազգերի ու ժողովուրդների հանդեպ հալածանքների ուժեղացմամբ։

Կայսրության մահմեդական այլազգի ժողովուրդները՝ արաբները և քրդերը, ձգտելով ազատագրվել թուրքական տիրապետությունից, ժամանակ առ ժամանակ դիմում էին զենքի։

Ավելի համառ, տևական էին կայսրության քրիստոնյա ժողովուրդների հակասուլթանական ընդվզումներն ու ապստամբությունները։ Դրանք մեծ ծավալ ընդունեցին հատկապես կայսրության բալկանյան տիրույթներում։ Ապստամբական մի ելույթից մի նոր ելույթի էր դիմում բուլղար ժողովուրդը։ Չնայած թուրքերն արյան մեջ խեղդում էին այդ ելույթները, բայց 1876 թվականին բուլղարները նորից զենք վերցրին։

Դիմադրական նոր շարժումներ ծնունդ առան նաև Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում։ Բայց թուրքական իշխանություններն ինչպես ամենուր, այնպես էլ Արևմտյան Հայաստանում արյան մեջ խեղդում էին դիմադրական բոլոր փորձերը։ Ամեն մի ելույթ ճնշելուց հետո թուրքերն ավելի ու ավելի կատաղի ու անգիջում էին դառնում հայերի նկատմամբ։

Հայերի հանդեպ գործադրած դաժանություններն ու վայրենի կամայականությունները սպասված արդյունքը չէին տալիս։ Արևմտահայ ժողովրդի համար սկսվեց ազգային-քաղաքական զարթոնքի, ազգասիրության և հայրենասիրության ուժգին պոռթկումի և եռուզեռի մի ժամանակաշրջան։ Դա վառ հույսերի ու բյուրեղյա երազանքների, եվրոպական դավաճանության

և դառն հուսախաբությունների, թուրքական նոր ոճիրների և հայկական նոր ընդվզումների ժամանակաշրջան էր լինելու։

Կ. Պոլիսը դարձել էր հայ ազգային զարթոնքի ու հայրենասիրության քուրա։ Ինչպես նշում էր հայ ազգային գործիչներից Մ. Սերոբյանը, Հայաստան անունը նոր նշանակություն էր ստացել պոլսահայի համար։ Թերթերի հիմնական նյութը Հայաստանում կատարվող իրադարձություններն էին։ Հայ գյուղացու անեծք տառապանքների մասին հնչեցնելով տխուր լարեր, բանաստեղծները նաև երգում էին Զեյթունի քաջությունը։ Կայսրության մայրաքաղաքի կյանքը կարծես հայացել էր։ Նույնիսկ արևածագից մինչև վերջալույս դառն դատող մշեցի բեռնակիրներն ազգային զարթոնք էին ապրում։

Ազատության բաղձանք փայփայող հայ գործիչների մի մասը ելնում էր նրանից, որ հայ ժողովուրդը միայնակ, սեփական ուժերով չի կարող ազատություն նվաճել։ Ուստի ինչպես բռնակալների ճիրաններում հեծող փոքր ժողովուրդների մեծ մասը, այնպես էլ հայ ժողովուրդը տենչում էր օգնություն ստանալ դրսից, տվյալ դեպքում քրիստոնյա որևէ պետությունից։

Պիեռ Ժոզեֆ Պրուդոնը գտնում էր, որ Օսմանյան կայսրության «ասիական նահանգներում, որտեղ թուրքերը բազմաքանակ են և մոտ են իսլամիզմի կենտրոնին»[1], փոքր ժողովուրդներն ուղղակի անզոր են օսմանյան դիակի դիմաց և նրանց ազատագրության գործը շատ ավելի դժվար կլինի, քան կայսրության եվրոպական նահանգների ժողովուրդներինը։ «Որտե՞ղ է բնիկ ցեղերի այն ուժը, որը կարողանար այդ իրավիճակում փոխարինել թուրքական կառավարությանը Կանդիայում, Ռոդոսում, Կիպրոսում, Սիրիայում, Անատոլիայում, Հայաստանում»,— հարցնում է Պրուդոնը և անմիջապես պատասխանում, որ այդ ուժը պետք է դրսում տեսնել, որ թուրքական լծից բնիկների, այդ թվում հայերի ազատագրությունն անհնարին է առանց մեծ տերությունների անմիջական աջակցության[2]։

1877 թվականի ապրիլի 12-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային՝ Օսմանյան կայսրության քրիստոնյաներին ազատագրելու նշանաբանով։

[1] **Պ. Ж. Прудон,** Война и мир. Исследование о принципе и содержании международного права, с. 194.

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 194—196։

1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմում ռուսական զորքերի տարած հաղթանակների շնորհիվ Բուլղարիան վերջապես ազատագրվեց օսմանյան դարավոր բռնակալական լծից և 1878 թվականին անկախություն ստացավ։

Բուլղարների և բալկանյան մի քանի ուրիշ ժողովուրդների հակաթուրքական ապստամբությունների հաջող ելքը պայմանավորված էր Ռուսաստանի ուղղակի աջակցությամբ։ Եվ թեպետ ցարիզմը Բալկաններում շահադիտական ու զավթողական նպատակներ էր հետապնդում, այն է՝ այնտեղ ամրապնդել իր դիրքերը, ապա գրավել Ստամբուլը և նեղուցները, այնուամենայնիվ ռուսական քաղաքականությունը նպաստում էր թուրք կեղեքիչներին Բալկաններից դուրս մղելուն, բալկանյան ժողովուրդների ազատագրությանը, և դրանով իսկ օբյեկտիվորեն դրական դեր էր խաղում։

Բալկանյան ժողովուրդների ազատագրական շարժումները ոգեշնչում էին Օսմանյան կայսրության մեջ բռնակալված հայ ժողովրդին, որը հույս ուներ բախտակից դառնալ բուլղարների երջանկությանը։ Դեսպան կոմս Իգնատևի հետ հանդիպման ժամանակ Պոլսի հայոց պատրիարքարանի փոխ-առաջնորդ Տ. Գեորգ ծ. վրդ. Ռուսճուզյանը ասել է, թե «այս պատերազմը քրիստոնեայի փրկության պատերազմ է, ինչպես պուլկարներն ազատուեցան, հայերն ալ, ոչ նուազ հարստահարեալ, հավատացած են, թե՝ պիտի փրկուին»[1]։

Արևմտահայության հոգում վառ հույսեր արթնացրին հատկապես Կովկասյան ճակատում ռուսական բանակների տարած փայլուն հաղթանակները։ Արևմտյան Հայաստան մտած հաղթական ռուսական զորքը գեներալ Տեր-Ղուկասովի գլխավորությամբ հասավ մինչև Էրզրում։ Հայերի գիտակցության մեջ գնալով խորանում էր այն համոզումը, որ թուրքական անագորույն լծից կարելի է ազատագրվել միմիայն Ռուսաստանի օգնությամբ, նրա զենքի ուժով։ Ուստի նրանք ռուսական զորքերին ամենուրեք դիմավորում էին անսքող խանդավառությամբ, ցնծում էին, տոնում մոտալուտ ազատության հաղթանակը։ Ռուսական զորքերի գլուխ հայազգի զորահրամանատարների՝ Լորիս

[1] Արտավազդ վարդապետ, Տաթև, տարեցոյց կրոնական-բանասիրական-գրական, 1928, Դ. տարի, Հալեպ-Սուրիա, էջ 122։

[2] Տե՛ս «История СССР с древнейших времен до наших дней». в двенадцати томах, т. V, изд-во «Наука, Москва, 1968, էջ 258:

Մելիքովի, Տեր-Ղուկասովի, Լազարևի գտնվելն արևմտահայերն ընկալեցին որպես ռուսահայերի կողմից ուղարկված օգնություն։

Բայց ավա՜ղ, ամառային գիշերվա երազը շատ շուտով փոխվելու էր մռայլ իրականության։

Դեպքերը զարգանում էին ի վնաս հայության։ Պատերազմը, հատկապես նրա ավարտը, արևմտահայ ժողովրդի պատմության մեջ նոր, օրհասական ժամանակների սկիզբը դարձավ։

Հայ ժողովրդի ազատագրության ճանապարհին այնպիսի մի անհաղթահարելի խոչընդոտ կանգնեց, ինչպիսին անգլո-ռուսական հակամարտությունն էր։ Անգլիան չէր կարող հանդուրժել Ռուսաստանի կողմից Հայաստանի գրավումը, որովհետև դա կնշանակեր դեպի իր ասիական գաղութները, ամենից առաջ դեպի Հնդկաստան տանող ճամփաների կորուստ։ Ուստի դիվանագիտական վարագույրների ետևում նա ամեն ինչ արեց, որպեսզի Ռուսաստանը հրաժարվի Հայաստանում իր գրաված տարածքներից։

1878 թվականի ապրիլի 19-ին (մարտի 3-ին) Սան Ստեֆանոյում, հայ մեծահարուստ Տատյանի ապարանքում հաշտության նախնական պայմանագիր կնքվեց Ռուսաստանի և Թուրքիայի միջև։ Ռուսաստանի պահանջով պայմանագրի մեջ մտցվեց 16-րդ կետը, որտեղ ասված էր. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրաված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»[1]։

Ինչպես տեսնում ենք, պայմանագրի 16-րդ հոդվածը պաշտոնապես ընդունում էր երեք իրողություններ՝ որ կա Հայաստան անունով երկիր, մի բառ, մի աշխարհագրական անուն, որ օսմանյան կառավարողների ջանքերով վաղուց էր դուրս մղվել դիվանագիտական փաստաթղթերից, թուրքական քարտեզներից, որ հայերի ապահովությունը վտանգված է քրդերից ու չերքեզներից և, վերջապես, որ Թուրքիայի կազմի մեջ մտնող հայ բնակչություն ունեցող մարզերը կարիք ունեն անհապաղ բարենորոգումների[1]։

Թե Բ. Դուռն ինչպես էր «անհապաղ կենսագործելու» այդ բարենորոգությունները, Սան Ստեֆանոյի պայմանագրում ոչինչ չէր ասված։ Ենթադրվում էր, որ նախնական պայմանագրի այդ բացը լրացնելու էր Բեռլինի կոնգրեսը, որը պետք է մշակեր Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրի վերջնական տեքստը։

Բեռլինի կոնգրեսը գումարվեց 1878 թ. ամռանը Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի պահանջով՝ գլխավորապես Ռուսաստանի տերիտորիալ ձեռքբերումները և Բալկաններում ու Փոքր Ասիայում նրա ազդեցության ուժեղացումը սահմանափակելու համար։ Կոնգրեսին հայության պահանջները ներկայացնելու նպատակով Կ. Պոլսից Բեռլին գնաց նաև հայկական պատվիրակություն։

Բայց հենց Բեռլինում հօդս ցնդեցին արևմտահայության ակնկալությունները։ 1878 թվականի հուլիսի 13-ին կնքված պայմանագիրը, որը ստորագրեցին Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի և Թուրքիայի ներկայացուցիչները, իր մեջ ներառեց 61-րդ հոդվածը, որը փոխարինեց Սան Ստեֆանոյի նախնական պայմանագրում Ռուսաստանի պահանջով մտցված 16-րդ կետին։ Զարաբաստիկ 61-րդ հոդվածը ձևակերպվեց այսպես. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից։ Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը»[2]։

---

[1] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923)», Երևան, Հայաստան, 1972, էջ 92։

[1] Հարկ է նշել, որ Սան Ստեֆանոյի պայմանագրի 51 և 52 հոդվածները նույնպես, որոնք նվիրված էին կրոնական իրավունքների հարցին, անուղղակիորեն շոշափում էին հայության շահերը, չնայած հոդվածներում «հայ» կամ «Հայաստան» անունը ուղղակի չկար։

[2] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923)», էջ 128։

Ինչպես տեսնում ենք, հոդվածից դուրս էր մղված «Հայաստան» անունը, իսկ թուրքերի կողմից իրագործվելիք բարենորոգությունները եվրոպական տերությունների հավաքական պաշտպանության տակ էր դրվում, մի բան, որ, ինչպես հետագա իրադարձությունները ցույց տվեցին, ձևական էր ամբողջությամբ և զոհի նկատմամբ դահճի մոլեգնության խտացման մի հարմար առիթ եղավ միայն։ Հոդվածն իրական ոչ մի երաշխիք չէր տալիս, թե հնարավոր կլինի հայկական տերիտորիաներում հաստատել քիչ թե շատ տանելի կարգ ու կանոն, հայերին զերծ պահել բռնություններից ու ջարդերից։

Այն ժամանակ, երբ եվրոպական դիվանագիտությունը Բեռլինի կոնգրեսում գերմանական կանցլեր Բիսմարկի ղեկավարությամբ սպանում էր հայերի՝ մոտալուտ ազատության բոլոր հույսերը, փշրում նրանց բյուրեղյա երազները՝ դրա փոխարեն տերությունների ձևական պրոտեկտորատը թողնելով հայկական վեց վիլայեթների վրա, ցարական զորքերը, հեռանալով գրաված հայկական տերիտորիաներից, վերադառնում էին Ռուսաստան։ Ռուսաստանի հանդեպ արևմտահայության անսքող ու բուռն համակրանքը չէր վրիպել թուրք բռնադատիչների աչքից։ Նրանք շտապեցին հայերից վրեժ լուծել ինչպես այդ համակրանքի, այնպես էլ պատերազմում կրած իրենց պարտության համար։ Հուսահատ հայ բնակչությունը սկսեց բողոքի ձայն բարձրացնել։ Պոլսի հայ պատրիարքարանը բազմաթիվ տեղեկագրեր ուղարկեց կառավարությանը՝ բողոքելով կատարվող ոճիրների դեմ։ Բայց բոլոր խնդրանքները անհետևանք մնացին։ Ավելին, սուլթանի կառավարությունը մշակեց հայկական վիլայեթներում հայությունը հրով ու սրով ոչնչացնելու դիվային պլան։

Արդուլ Համիդը, մահմեդական վերնախավը, թուրք կառավարողները նոր ուժով շարունակեցին բորբոքել թուրքերի, քրդերի և չերքեզների մոտ առանց այն էլ ուժեղացող ատելությունը հայերի նկատմամբ։ Հայ ժողովուրդը Սան Ստեֆանոյի համար պետք է վարձահատույց լիներ անլուր տառապանքներով և արյան հեղեղներով։

Բարձրացող և կերպարանք առնող հայկական հարցի նկատմամբ թուրք կառավարողների վերաբերմունքի ցայտուն դրսևորումներից մեկը մեծ վեզիր, հայատյաց Քյամիլ փաշայի մտորումներն էին, որ նա թղթին է հանձնել 1879 թվականին։ Ահա թե ինչ էր մտորում փաշան։

«Եթե Եվրոպայում մեր ծոցում օձ տաքացրինք, ապա պետք չէ, որ նույն հիմարությունն անենք մեր ասիական Տաճկաստանում. խելոքությունն այն է, որ ջնջենք ու վերացնենք այն բոլոր տարերքները, որոնք մի օր կարող են մեզ համար նույն վտանգը ծնել և օտարների միջամտության համար առիթ ու նրանց ձեռքին գործիք լինել»[1]։

Ապա, անցնելով Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ թուրքական կառավարության վարելիք քաղաքականության խնդրին, Քյամիլ փաշան գրում էր. «Հիմա, այսօր, գոնե Անգլիայի շահերը պահանջում են, որ Փոքր Ասիայի (մենք և Անգլիան «Հայաստան» բառը ոչ միայն չենք ճանաչում, այլև այդ անունը արտասանողների կզակները պետք է ջախջախենք) մեր ունեցած երկրները ազատ մնան օտարի միջամտությունից և միջամտության ամեն առիթներից. ուստի այդ սուրբ նպատակի համար պետք է, և պետական իրավունքը պահանջում է, որ անհետացնենք ամեն մի կասկածելի տարր, որպեսզի ապագան ապահովենք. ուրեմն այդ հայ կոչված ազգը պետք է վերացնենք, անհետացնենք, ճզմենք։ Այդ բանը գլուխ բերելու համար մեզ որևէ բան չի պակասում. պատրաստի ունենք ամեն գործիք՝ քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամեն ինչ. կրոնական պատերազմ կհայտարարենք, և դա հեշտ պատերազմ կլինի այնպիսի մի ազգի դեմ, որը ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ պաշտպան։ Ընդհակառակը, մենք զենք էլ ունենք, զինվորություն էլ, և, բացի այդ, աշխարհիս ամենամեծ և ամենահարուստ տերություններից մեկը (խոսքը Անգլիայի մասին է.— Հ. Ս.) մեր զինակիցն է, մեր ասիական աշխարհի երաշխավորը»[2]։

Առաջին անգամ այսպես բացահայտորեն առաջ քաշելով հայությունը հրով և սրով վերացնելու խնդիրը, Քյամիլ փաշան նշում էր, որ այդ դեպքում կվերանա հայկական հարցը, հետևապես և կայսրության ներքին գործերին եվրոպական տերությունների միջամտության գլխավոր առիթը։ «Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնյա Եվրոպան տաճկական Ասիայի

[1] «Փորձ» հանդես, 1879, № 7, էջ 204։
[2] Նույն տեղը, էջ 204—205։

մեջ կրոնակից փնտրի, բայց չգտնի, այն դեպքում մեզ կթողնի հանգիստ և մենք հնարավորություն կունենանք զբաղվելու մեր ներքին գործերով և բարեկարգություններով...»[1]

Քյամիլ փաշայի խոսքերից պարզ երևում է նաև, որ թուրքական կառավարող շրջաններում տակավին վաղ էր ձևավորվել այն անհերթեթ և զրպարտչական մտայնությունը, թե Օսմանյան կայսրության բոլոր դժբախտությունների հիմնական պատճառը հայ ժողովուրդն է, հետևապես նրա ոչնչացմամբ կբարելավվեն թուրքերի գործերը։ «Այն ժամանակ կարող ենք մեր ձայնը բարձրացնել, այն ժամանակ կարող ենք մեր հին փառքը կենդանացնել, մեր ելմտական վիճակը կանոնավորել, մեր դատարաններն օրինավորել, արհեստներ, գիտություններ ծաղկեցնել, փոխանակ դաս առնելու Եվրոպայից, դաս տալ նրան...»[2]

Հայ ժողովրդի նկատմամբ ծայր առած բռնությունների ծավալման գործոնների շարքում 70-ական թվականների վերջերից ևս մեկը ավելացավ. օսմանյան լուծը թոթափած Բուլղարիայից և եվրոպական մյուս մարզերից մուսուլման բնակչությունը մասսայաբար գաղթում և բնակություն էր հաստատում Ասիական Թուրքիայում։ Այսպես կոչված մուհաջիրների այդ հոսանքը սուլթանն ուղղեց Արևմտյան Հայաստան։ Հայկական բոլոր վիլայեթները դարձան անլուր կամայականությունների ասպարեզ։ Մուհաջիրները հայ շինականներից բռնագրավում էին ունեցվածքը, լավագույն հողերը, մասսայաբար բնակություն հաստատում այնտեղ։ Միայն երեք տարվա ընթացքում (1879—1882) Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերում բնակություն հաստատեցին ավելի քան 78 հազար թուրքեր[3]։

19-րդ դարի 60-ական թվականներից սկսած Արևմտյան Հայաստանում մշտական բնակություն հաստատեցին նաև տասնյակ հազարավոր ռուսաստանյան մահմեդականներ։

Ջախջախելով իմամ Շամիլի գլխավորած կովկասյան լեռնականների ապստամբական շարժումը, ռուսական իշխանությունները նրանց առջև պայման դրեցին՝ թողնել անառիկ լեռները և Հյուսիսային Կովկասի հարթավայրերում հողաբաժիններ ստանալով մշտական բնակություն հաստատել այնտեղ. հրաժարվելու դեպքում նրանց հրամայված էր հեռանալ Ռուսաստանից։

Իր հերթին թուրքական կառավարությունը, որ ակտիվ աջակցություն էր ցույց տվել լեռնականներին և քաջալերել նրանց ապստամբությունները, այժմ նրանց շրջանում ծավալեց հակառուսական ուժգին պրոպագանդա։ Օսմանյան կայսրության դռները լայնորեն բացելով լեռնականների առջև և օգտագործելով իսլամի ռեակցիոն գաղափարախոսությունը, կառավարությունը նրանց կոչ արեց գալ Թուրքիա։

Ռուսական պաշտոնական տվյալներով, Շամիլի կռիվների ընթացքում և հետո Թուրքիա են գաղթել 418 հազար լեռնականներ՝ չերքեզներ, աբխազներ, օսեր, կաբարդիններ, բալկարներ, ինգուշներ, չեչեններ, կարաչաևցիներ, լեզգիներ, ավարցիներ։ Լեռնականների Թուրքիա մեկնելու պատճառներից էին նաև ազգային և գաղութային ճնշման ուժեղացումը, ֆեոդալների կամայականությունները, սակավահողության և հողազրկության աճը[1]։

Թուրքիա մեկնած կովկասյան մուհաջիրներից 200 հազարն ուղղվեց Արևմտյան Հայաստան՝ գլխավորապես Սեբաստիայի վիլայեթը, մասամբ էլ Էրզրումի, Տիգրանակերտի, Բիթլիսի և Վանի վիլայեթները։

Կովկասյան լեռնականների Թուրքիա գաղթելը մի կատարյալ աղետ էր հայության գլխին։

Իրենց հարազատ բնակավայրերը թողած լեռնականները մերկ ու սոված ընկան Արևմտահայաստան։ Սկզբնական շրջանում կառավարությունն ինչպես հայ և հույն, այնպես էլ թուրք գյուղացիներին պարտավորեցրեց՝ ոչ միայն ապաստան տալ չերքեզներին, այլև կերակրել ու խնամել նրանց։ Բայց շատ չանցած

---

[1] «Փորձ», 1879, № 7, էջ 205։

[2] Նույն տեղը։

[3] Ա. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1965, էջ 33։

[1] Տե՛ս **Մ. Կ. Абаев**, Балкария. Исторический очерк, էջ 624։ **Г. А. Дзидзария**, Мухаджирство и проблемы истории Абхазии XIX столетия, Сухуми, 1982։ Դեպի Թուրքիա լեռնականների գաղթի մասին մանրամասն տե՛ս **А. Х. Касумов**, Разные судьбы, Нальчик, 1967, **Т. Х. Кумыков**, Кази Атажукин, Нальчик, 1962։

[2] Թեպետ գաղթած լեռնականները պատկանում էին կովկասյան դանդաղ ցեղերի և ժողովուրդների, բայց նրանց բոլորին Թուրքիայում անվանում էին չերքեզներ։

Թուրք գյուղացիներն ըմբոստացան և հրաժարվեցին կատարել իրենց վրա դրած պարտականությունը։ Չերքեզները իշխանությունների ակնհայտ քաջալերանքով սկսեցին կենտրոնական քրիստոնյաների, գլխավորապես հայերի բնակեցված շրջաններում, խլել նրանց վարելահողերը, տիրանալ շարժական և անշարժ գույքին։ Սպառազեն չերքեզները շատ անգամ գյուղերից դուրս էին վռնդում հայ գյուղացիներին և տեղավորվում նրանց տներում։ Այն վայրերում, ուր չերքեզները ոտք էին դնում, անպակաս էին ամենավայրենի բռնությունները, թալանը, սպանությունները։

Դաղթն աղետաբեր էր նաև իրենց՝ չերքեզների համար։ Թուրքիայի խարդախ դավերը, նրա թիկունքում կանգնած արևմտյան տերությունների մեքենայությունները շատ թանկ նստեցին կովկասյան մուհաջիրների վրա։ Խաբեության և բռնության զոհ դարձած դժբախտ լեռնականներից շատերը մեռան ճանապարհներին, տեղ հասածները խոստացած դրախտի փոխարեն օտարություն, աղքատություն ու զրկանք տեսան։ Մյուսները Թուրքիայից տուն էին վերադառնում քայքայված, հյուծված, երբեմն էլ ընտանիքի անդամների մի մասը կորցրած։

Կովկասյան լեռնականների մեծ զանգվածներով հոսքը Թուրքիա ըստ էության խաղաքարտի վրա դրեց այդ ժողովուրդների բուն ֆիզիկական գոյությունը։ Չնայած Թուրքիայում հաստատված չերքեզները վայելում էին սուլթանական կառավարության հովանավորությունը, բայց, չունենալով ազգային որոշակի դիմագիծ և ինքնուրույն մշակույթ, նրանք շատ շուտով ձուլվեցին Թուրքերին։ Այնպես որ երեք-չորս տասնամյակ հետո մոտ կես միլիոնի հասնող այդ խոշոր բազմությունից մնացել էին միայն փոքրիկ խլեակներ։

Մյուս կողմից լեռնականների գաղթը մեծ հարված էր Հյուսիսային Կովկասի, Դաղստանի, Աբխազիայի սոցիալ-տնտեսական և կուլտուրական զարգացմանը։ Բավական շատ էին այն դեպքերը, երբ Թուրքիա մեկնելու նպատակով լեռնականները չնչին գներով վաճառում էին ողջ ունեցվածքը, սակայն ինչ-ինչ պատճառով ետ էին կանգնում իրենց մտադրությունից՝ բայց արդեն լիակատար աղքատության դուռը հասած։

Լեռնականների շրջանում հանդես եկած առաջադեմ գործիչները ցույց էին տալիս գաղթողների ողջ ողբերգությունը, դատապարտում իրենց իշխանների և ազնվականների Թուրքամետ

կողմնորոշումը, մերկացնում Թուրքական պրովոկատորների և գործակալների կործանարար գործելակերպը, ամեն ինչ անում, որպեսզի իրենց խաբված հայրենակիցները իմանան ճշմարտությունը և հրաժարվեն Թուրքիա մեկնելու մտադրությունից[1]։

Առաջավոր այդ մարդկանց գործունեությունը հսկայական դրական նշանակություն ունեցավ իրենց ժողովուրդների համար։ Կովկասում մնացած լեռնականները, որոնց շարքերը խիստ նոսրացել էին, ամուր կապված մնացին հարազատ լեռներին, դրանով իսկ պաշտպանելով իրենց ֆիզիկական գոյությունը։

Հայ ժողովրդի գլխին եկած բազում դժբախտություններին գումարվում էին խաշնարած և զինված քրդերի չդադարող հարձակումներն ու բռնագրավումները։

Թուրքիայի քրդերն իրենց թվաքանակով զգալի չափով զիջում էին Թուրքահայերին[2]։ Սակայն վայելելով սուլթանների, երկրի կառավարիչների բարեհաճ վերաբերմունքը, զինված կատարելագործված զենքերով, նրանք թափանցեցին Արևմտյան Հայաստանի սահմաններից ներս։ Քրդական հետամնաց խավերը Թուրք կառավարողների ձեռքին հարմար գործիք էին իրենց հայաջինջ քաղաքականությունն իրականացնելու համար։ Թուրքական իշխանությունները մի շարք միջոցների դիմեցին, որպեսզի հայերն ավելի հոծ զանգվածներով թողնեն ու հեռանան հայրենի երկրից։

Դեռևս 60—70-ական թվականներին Արևմտյան Հայաստանից ծայր առած պանդխտության հետևանքով շատ տեղերում հողը զրկվել էր մշակողից։ Կառավարությունը կյանքի կոչեց խարդախ մի օրենք, որի համաձայն այն հողատարածությունները, որոնք մի քանի տարի շարունակ մնում էին անմշակ, համարվում էին մահլուլ (անտեր) և չնչին գնով վաճառվում էին մահմեդականներին, նրանց տալով նաև կալվածատիրական արտոնագրեր։ Նույն կերպ էին վարվում նաև վանքապատկան կալվածքների հետ։ «Օրենքի համաձայն» հայերի կալվածքների և արոտավայրերի մեծ մասն ուղղակի բռնագրավվեց։ Ամոան

---

[1] Տե՛ս «Общественно-политическая мысль одыгов, балкарцев и карачаевцев в XIX — начале XX века (Материалы конференции 28—29 марта 1974 года)», Нальчик, 1976, էջ 141—142, 233, 258—259, 270։

[2] 20-րդ դարի սկզբին Թուրքիայում քրդերի թիվը հաշվվում էր 1—1,5 միլիոն, իսկ Պարսկաստանում՝ 800 հազար։

ամիսներին քրդերն իրենց հոտերով բարձրանում էին հայկական արոտավայրերը, դրանք հետզհետե դարձնում իրենցը[1]։ Այդ երևույթը գնալով մասսայական բնույթ ընդունեց։ Լեռնային բարձր արոտավայրերը գրավելուց հետո քրդերն իջան դաշտային շրջաններ։ Գրեթե ամենուրեք և ամեն օր քուրդ ցեղապետերը, աղաները, դերեբեյները, ապա՝ մուֆթիները, շաղիները գրավում էին հայերի հոտերը, այգիներն ու դաշտերը, տները և գյուղերը։ Այս ապօրինությունների հետևանքով պանդխտությունից վերադարձած և առանց հողի մնացած հայ գյուղացիները, ինչպես նաև պանդխտության չմեկնած, բայց թալանված ու աղքատացած հայ բնակչությունը վերածվում էին մարաբաների (բատրակների, ճորտերի)։ Արդեն հողազուրկ դարձած հայ գյուղացիներն ամենափոքր դիմադրության համար հաճախ կյանքով էին հատուցում։ Որոշ տեղերում հայերը կատաբելապես ստրկացվում էին և ձուլվում քրդերին։ Բազմաթիվ վայրերից ծայր էին առնում գաղթականների նոր զանգվածային քարավաններ։ Հայը ստիպված թողնում էր հարազատ երկիրը, քրդին զիջելով տունը, այգին, արտը, արոտավայրերը։ Հայ աղջիկների հափշտակումը մահմեդականների համար սովորական բան էր դարձել։

Այնպես որ 19-րդ դարի կեսերին Կենտրոնական Հայաստանի լեռներն արդեն քրդերի ձեռքին էին։ Դարի վերջին Արևմտահայաստանի լեռների դգալի մասը քրդաբնակ էր, քաղաքները՝ կիսով չափ թուրքաբնակ, համեմատաբար զուտ հայկական էին մնացել լեռների ու քաղաքների միջև եղած հովիտներում ընկած գյուղերը։

Ստեղծված պայմաններում դժբախտ ժողովուրդը երեք ընտրություն ուներ՝ լիովին հարմարվել ստեղծված ստրկական իրավիճակին. թողնել հայրենի երկիրն ու հեռանալ օտար հորիզոններ. ազատության համար դիմել զենքի։ Համակերպվել այդ վիճակին անհնարին էր։ Հայրենի բնաշխարհից հեռացողների թիվն էլ քիչ չէր։ Բայց հայ ժողովրդի կենսունակ մասը, հատկապես երիտասարդությունը, արմատապես տրամադրվեց իր անագորույն ներկայի և ապագա բախտի հանդեպ։

---

[1] Տե՛ս Սարգիս և Միսակ Բալեաններ, Հարազատ պատմություն Տարոնոյ, էջ 9։

[2] Տե՛ս Голобородько (И. Южанин), Старая и новая Турция, էջ 229։

1877—1878 թվականները և դրանց հաջորդած երկու-երեք տարիները նոր ընթացք տվեցին հայ ժողովրդի ազատագրական ոգորումներին։ Ռուս-Թուրքական պատերազմի ժամանակ ազատության կարճատև պահեր ապրած արևմտահայությունը, որ կարծես շոշափել էր այդ ազատությունը և երազել ապագա բախտավոր օրերի մասին, ավելի ուժգին էր զգում գաղանային ձևեր ընդունած նոր ոճիրները։ Այս պայմաններում կարճատև ժամանակում սպառվեց արևմտահայ հասարակական-քաղաքական մտքի ռոմանտիզմի շրջանը։ Եկավ պատրանքապատ մտայնության և անհող ակնկալությունների վերջը, որոնց սնուցող երակն այն թյուր տեսակետն էր, թե բացառված չէ խնդրանքներով ու պաղատանքներով Թուրքիայի կազմում հայության օգտին բարեփոխումների հասնելը։

Իրենց պատիվն ու ինչքը պաշտպանելու համար հայերը սկսեցին հակադարձ միջոցների դիմել։ Հրացանը դալիս էր փոխարինելու աղաչանքին։ Սկսվում էր հայ ժողովրդի սրբազան դատի համար պայքարի՝ ազգային-ազատագրական շարժման ժամանակաշրջանը[1]։ Գայլից պաշտպանվելու համար պետք էր գավազանի դիմել։

---

[1] Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման պատմության հարցերին հանգամանորեն անդրադարձել են բազմաթիվ ուսումնասիրողներ ինչպես մեզ մոտ, այնպես էլ արտասահմանում։ Առաջիններից մեկը մեծավաստակ Լեոն էր (Առաքել Բաբախանյան)։ Արժեքավոր աշխատություններով հայագիտությունը հարստացրած տաղանդավոր պատմաբանը, սակայն, առանձին ուսումնասիրություններում՝ «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» երկհատոր մենագրության մեջ (հատոր I, Փարիզ, 1934 թ., հատոր II, Փարիզ, 1935 թ.), «Անցյալից» (Թիֆլիս, 1925), «Հայոց պատմություն. նորագույն շրջան» (անտիպ) գրքերում տուրք տվեց ժամանակի պատմագիտության մեջ տեղ գտած մի շարք սխալ միտումների։ Կանգնած լինելով լիբերալ-բուրժուական, սուբյեկտիվ-իդեալիստական պատմահայեցողության դիրքերում, նա անկարող եղավ ճիշտ լուսաբանելու հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման առանձին հարցեր։ Ավելին, դատապարտելով շարժումը, այն համարեց հայ քաղաքական կուսակցությունների կողմից արհեստականորեն հրահրված մի բան, ռուսական ցարիզմի արտաքին քաղաքականության սադրանքների հետևանք։ Լեոն փորձում էր հիմնավորել այն անընդունելի տեսակետը, թե Արևմտյան Հայաստանի հայ բնակչությունը ակամայից պետք է համակերպվեր իր ստրկական վիճակին, մերվեր անագորույն ճակատագրին, չպետք է ինքնապաշտպանության դիմեր։ Նա գտնում էր, որ իրենք՝ արևմտահայերը, բնավ տրամադիր չէին զենք վերցնելու և որ նրանց այդ բանին են դրդել արևելահայերը։

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման պատմության գի-

Այդ տարիների իրադարձություններն իրենց հողմապտույտի մեջ առան նաև Արևելյան Հայաստանը։ Արևմտահայության վզին դրված թուրքական անագորույն լուծը դեն շպրտելուն սատարեց և նրա ազատագրական պայքարն իր հարազատ գործը համարեց ռուսահայությունը։

Գիտակցելով, որ միայնակ չեն կարող շահել կռիվը, արևմտահայերը գործնական օգնություն էին սպասում կովկասահայերից։ Նրանք իրենց կովկասցի եղբայրակիցներին խնդրում էին զենք տալ հանուն ինքնապաշտպանության, հանուն ազատության պայքարի։ Եվ կովկասահայերը չհապաղեցին։ Անձնազոհության աննախադեպ օրինակներ էր տալիս երիտասարդությունը, կազմվում էին հայդուկային ջոկատներ, որոնք թափանցում էին Արևմտահայաստան, իրենց հետ բերելով հույս և ոգևորություն։

Կովկասահայ գրողներն ու մտավորականության այլ ներկայացուցիչներ, գալով Արևմտյան Հայաստան, տեսնում էին իրենց ազգակիցների վիճակը, ընթերցողներին պատմում նրանց դառն ճակատագրի, թուրքական դաժան լծի տակ նրանց անեզր տվայտանքների մասին։

Արևմտահայաստանում սկսված ազատագրական շարժման և թուրքական բռնակալության տակ հեծող իր եղբայրների նկատմամբ կովկասահայության բուռն համակրանքի հողի վրա ձևավորվեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման գաղափարաբանությունը, որի սկզբնավորողը ռուսահայ առաջադեմ մտավորականությունն էր։

Ազատագրական շարժման գաղափարախոսությունն ըստ էության երկու անմիջական նպատակ էր հետապնդում։ Առաջին, հայ ժողովրդի մեջ խորացնել սերը և նվիրվածությունը Ռուսաստանի, ռուս ժողովրդի հանդեպ։ Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո հայ ժողովրդի պատմական ճակատագրում տեղի էր ունեցել արմատական շրջադարձ։ Ժողովրդի ազգային հարցը լուծվել էր այն առումով, որ նա ոչ միայն փրկվել էր ֆիզիկական ոչնչացման վտանգից, այլև բռնել էր տնտեսական և կուլտուրական աստիճանական վերելքի ուղին։ Դա հայ ժողովրդի՝ դարերից եկող ռուսական կողմնորոշման գաղափարի հաղթանակն էր։ Այժմ հայ հասարակական-քաղաքական մտքի գլխավոր մտահոգությունը թուրքական լծի տակ տառապող հայության ֆիզիկական գոյության պահպանումն էր, նրա՝ որպես ազգային հավաքականության փրկությունը։ Օրինակն արդեն կար և այն չափազանց ոգևորիչ էր. Ռուսաստանը ձեռք էր մեկնել հայ ժողովրդի մի կործանվող հատվածին, նրան ազատել պարսիկ ղզլբաշների բռնադատումից։

Հայ ազատագրական շարժման գաղափարախոսության երկրորդ գլխավոր խնդիրն արևմտահայության հոգեբանության արմատական վերափոխումն էր։ Թուրքական դարավոր բռնակալությունը խաթարել էր ժողովրդի ազգային գիտակցությունը, կոտրել նրա կորովը, պատվաստել չարին չդիմադրելու, ուժեղին հնազանդվելու արատները։ Հարկավոր էր հայ ժողովրդի միջից հանել ստրկամտության ախտը, թոթափել նրա դարավոր թմբիրը, սթափեցնել անտարբերության նիրհից, բացել աչքերը, ինքնագիտակցության բերել, վստահություն ներշնչել սեփական ուժերի նկատմամբ։ Պետք է ընդդիմանալ բռնությանը՝ մարդկայնորեն ապրելու բնական իրավունք ձեռք բերելու համար. այս էր եզրակացությունը։

Խաչատուր Աբովյանն (1809—1848) իր «Վերք Հայաստանի» վեպով առաջինը սկիզբ դրեց ազգային վերածնության գաղափարին։ Ժամանակակիցներից ոչ մեկն այնպիսի խորությամբ չըմբռնեց մեծ Ռուսիայի հետ Արևելյան Հայաստանի միավորման պատմական նշանակությունը, ինչպես Աբովյանը։ Ավելին, նա ռուսական տիրապետությունը դիտում էր իբրև հայության տենչանքները պսակող մի հանգամանք, իբրև մի հանգրվան հայկական հարազատ պետականության վերականգնման ճանապարհին։ Անդրադառնալով ռուսական զորքերի կողմից Երևանի մշակման գործում հատկապես մեծ են ակադեմիկոսներ Աշոտ Հովհաննիսյանի, Աբգար Հովհաննիսյանի և Մկրտիչ Ներսիսյանի ծառայությունները։ Ըստ էության նրանք են մշակել նաև մարքսիստական-լենինյան դիրքերից այդ շարժման ուսումնասիրության կոնկրետ մեթոդները։ Եթե նկատի ունենանք, որ շարժման պատմությունը դեռ շատ մութ ծալքեր ունի, ապա գիտական պրոբլեմներին նրանց մշակած մեթոդներով մոտեցումը մեծապես հեշտացնում է ներկա և գալիք հետազոտողների գործը։ Շարժման պատմության լուսաբանմանը արժեքավոր աշխատություններ են նվիրել ակադեմիկոսներ Ծ. Պ. Աղայանը, Գ. Ա. Գալոյանը, Գ. Բ. Ղարիբջանյանը, պրոֆեսորներ Մ. Վ. Արզումանյանը, Զ. Տ. Գրիգորյանը, Հ. Գ. Ինճիկյանը, Հ. Ն. Կարապետյանը, Ջ. Ս. Կիրակոսյանը, Ա. Ն. Մնացականյանը, Ա. Ս. Համբարյանը, Ա. Հ. Հարությունյանը, Շ. Ռ. Հարությունյանը, Հ. Մ. Ղազարյանը, Վ. Ա. Պարսամյանը, Հ. Մ. Պողոսյանը, Ե. Ղ. Սարգսյանը, Ռ. Փ. Հովհաննիսյանը և ուրիշներ։

վանի ազատագրման պատմական նշանակությունը, Աբովյանը գրում էր. «Քանի Հայաստանն իր փառքը կորցրել էր, քանի հայք իրանց գլուխն էին թրի տեղ թշնամու ձեռքը քցել, էս օրը, էս ուրախությունը չէին տեսել, չէին վայելել»[1]։

Աբովյանը քաջ գիտակցում էր, թե հայ ժողովրդի համար ինչ մեծագույն բարիք էր պարսկական բիրտ լծից ազատագրվելը և Ռուսաստանի հետ միավորվելը։

Նա ըմբռնում էր, որ Ռուսաստանը ազատագրական առաքելություն ունի ոչ միայն հայ ժողովրդի, այլև ուրիշ ժողովուրդների նկատմամբ։

Ի՞նչ պետք է անի Ռուսաստանի կազմի մեջ մտած հայությունը։ Աբովյանը պատասխանում էր. նոր պայմաններում նա պետք է առավելագույնս օգտվի ստեղծված կացության բարիքներից, կազդուրվի անարդ լծի վերքերից, ռուս ժողովրդի հետ միասին ընթանա առաջադիմության ուղիներով։ Նա հայ մարդուն պատվիրում էր՝ «... ռուսաց հզոր քաջ ձեռքի տակին» հանգստություն ստանալուց հետո ազատություն ստացած քո երկրին «մուղայիթ կենաս, արյունդ թափես, քո ազգը պահես, քեզ անուն ճարես»[2]։ «Ազգը պահելու» հիմնական պայմանը նոր պայմաններում նա համարում էր ազգասիրությունը, հայրենասիրությունը, մայրենի լեզվի պահպանությունն ու զարգացումը։ Դիմելով հայ մատաղ սերնդին, Աբովյանն ասում էր. «Երեխեք, ձեր ջանին մեռնիմ, ձեզ եմ ասում իմ դարդը, ձեզ համար եմ գրում, ձեր երեսին ղուրբան. հողումն էլ ըլիմ, եկեք, վրես կանգնեցեք. թե ազգասիրությունն ու հայրենասիրությունը ձեզ վնաս տա, անիծեցեք ինձ, թե օգուտ՝ օրհնեցեք և լսեցեք ձեր ընկերների լացն ու սուգը, նրանց հորնըմոր կսկիծն ու ձեր հորնըմոր ծոցումը դինջ հանգստանալիս՝ ասածներս մտքներդ բերեք»[3]։ Ապա՝ «Մեկ ազգի պահողն էլ լեզուն ա ու հավատը, թե սրանց էլ կորցնենք, վայն եկել ա մեր օրին»[4]։ «... Լեզուդ փոխիր, հավատդ ուրացիր, էլ ընչո՞վ կարես ասիլ, թե ո՞ր ազգից ես։ Ինչ քաղցր, պատվական կերակուր էլ տաս երեխին, էլի իր

[1] Խաչատուր Աբովյան, Երկեր, Երևան, 1984, էջ 228—229։
[2] Նույն տեղը, էջ 204։
[3] Նույն տեղը, էջ 142։
[4] Նույն տեղը, էջ 9։

մոր կաթը նրա համար շաքարից էլ ա անուշ, մեղրից էլ»[1]։ Ուստի նա կոչով դիմում էր հայոց նոր սերնդին. «Ձեզ եմ ասում, ձեզ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնիմ, ձեր արևվին ղուրբան. տասը լեզու սովորեցեք, ձեր լեզուն, ձեր հավատը ղայիմ բռնեցեք»[2]։

Թուրքական անագորույն լծի տակ տառապող հայության համար իբրև կոչ էր հնչում մեծ հայրենասերի հետևյալ խոսքերը. «Անտեր երկրի, անօգնական ազգի կամ անճար մարդի ցավն ո՞վ կքաշի, թե ինքը չքաշի»[3]։ «Թուր որ չունիս՝ գլուխդ կտրում են, օղլուշադդ քաշում, կերածդ հարամ անում, դատածդ խլում, քեզ էլ ասիր անում. աշխարհքն էսպես ա, ի՞նչ կարաս անիլ։ ... Աղոթքն իր տեղը, թուրն՝ իրը։ Աստված դշին, հայվանին էլ յա չանգ ա տվել, յա պոչ, յա ատամ, որ չանգոդ, հարու տա, կծի, իր գլուխը պահի»[4]։ Աբովյանն այն միտքն էր անցկացնում, թե ազգը չի կարող հարգանք ներշնչել ուրիշ ժողովուրդների, եթե նա չունի արժանապատվության խոր զգացում, գլխահակ է օտարի սրի առջև, հաշտ է նրա կրնկին, որ եթե դարավոր թշնամիները անպատիժ ամեն ինչ անում են, ապա «... մեղավորը նրանք չեն, մենք ենք։ Մենք, որ իրար թասիբ քաշենք, իրար քոմակ անենք, իրար պայծառացնենք, շենացնենք, ծովն էլ տեղիցը վեր կենա մեզ տակով չի կարալ անիլ, ինչ թե օսմանցին, յա պարսիկը...»[5]

Հայ հասարակական-քաղաքական մտքի հետագա ամբողջ զարգացումը գնաց ժողովրդի մեծ զավակի թողած պատգամների, նրա ռուսասեր հայացքների հզոր ազդեցության ներքո։

Իր ստեղծագործություններում պաշտպանելով ու զարգացնելով համընդհանուր աշխատանքի և նրա արդյունքներից հավասարապես օգտվելու տեսակետը, հայ առաջին սոցիալիստ Միքայել Նալբանդյանը (1829—1866) դրանից մակաբերել էր հայոց ազատության գաղափարը։ Նրա «Ազատություն» բանաստեղծությունը բոլորի շուրթերին էր[6], իսկ հայրենիքի ազատության համար իր եղբորը կրակի դաշտ ուղարկող իտալուհու

[1] Խաչատուր Աբովյան, Երկեր, էջ 81։
[2] Նույն տեղը, էջ 82։
[3] Նույն տեղը, էջ 99։
[4] Նույն տեղը, էջ 103։
[5] Նույն տեղը, էջ 77։
[6] Տե՛ս Միքայել Նալբանդյան. Երկեր, Երևան, 1985, էջ 19—20։

մասին նրա չքնաղ բանաստեղծությունը երգի էր վերածվել և դարձել արևմտահայ ազատագրական շարժման հիմնը[1]։

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի.
Բայց երանի՜, որ յուր ազգի
Ազատության կը զոհվի։

Նալբանդյանը նույնպես Ռուսաստանի մեծ ջատագովն էր։ Լինելով ժամանակի ռուս առաջադիմական հասարակական մտքի ներկայացուցիչների՝ Բելինսկու, Գերցենի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Օգարյովի գաղափարակիցն ու գինակիցը, Նալբանդյանը տեսնում էր երկու Ռուսաստան՝ ցարի ու կալվածատերերի և շահագործվող ու հարստահարվող ժողովրդական Ռուսաստանը։ Նա վերջիններիս ազատագրական շարժման հետ էր կապում Ռուսաստանի լուսավոր ապագան, իսկ Ռուսաստանի կազմի մեջ գտնվող բոլոր ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրությունը կապում էր հզոր ու անպարտելի Ռուսաստանի վերածնության հետ։ «Ռուսիո մեջ խմորված ազատությունը,— գրում էր նա,— համարձակ կարելի է մարդկային ազատություն անվանել, վասնզի ազատությունը հողի վրա կհիմնվի, քանզի ոչ միայն ինքը ռուսը կուզե իր ազատությունը, այլև կքարոզե, թե Լեհաստան, Ֆինլանտիա, Փոքր Ռուսիա (15 միլիոն ժողովուրդ), Կովկաս, Վրաստան և Հայաստան պետք է որ ազատ ըլլան... Ռուսիո ազատությունը ընդհանուր մարդկության ազատության վերաբերմամբ մե՜ծ խորհուրդ ունի...»[2]

Դեպի Ռուսաստան գաղափարական-քաղաքական կողմնորոշման նման ավանդույթների ու պատգամների ուժգին ազդեցության տակ էր ձևավորվում հայ ժողովրդի ազատագրական շարժման գաղափարաբանությունը։

Ռուսաստանի օգնությամբ թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրության ջերմ երկրպագուներից էր Ստեփանոս Նազարյանցը (1812—1879)։ «Հյուսիսափայլում» լույս ընծայած «Հայերի կոչումը մարդկության մեջ» հոդվածում նշելով, որ նրանց քաղաքական ձգտումներն անձնավորվում են Ռուսաստանի կազմում, Նազարյանցը գրում էր. «...Հայերը ճշմարտապես և իրավացի շնորհակալ են Ռուսաստանին, որ ազատել է նորանց մի անտանելի, անարգական ստրկությունից և բացել է նոցա առջև մի նոր քաղաքական կեանքի ասպարեզ։ Բայց թող մեր հայերը ճանաչեն յուրեանց մեծ բարերարի շնորհը և գործ դնեն նրան արժանապես, ամենայն պատրաստությամբ և յոժարությամբ ընդունելով Ռուսաստանի ձեռքից եվրոպական լուսավորության թանկագին պարգևը և ավանդելով յուրեանց ազգին այնպիսի կերպով, ինչպես կարող էր դա օրհնաբեր լինել հայերին»[1]։

Նազարյանցը գտնում էր, որ հայերը չպետք է բնավ մոռանան, որ ռուս վեհապետները, մանավանդ Պետրոս Մեծը և Եկատերինա II-ը հյուրընկալում էին Ռուսական կայսրության սահմաններից ներս ապաստան փնտրող տարաբախտ հայորդիներին, նրանց թույլ էին տալիս ստեղծել ապրելու տանելի պայմաններ։ Դրա վկայությունը, ասում էր Նազարյանցը, ռուսական տարբեր քաղաքներում եղած և այսօր էլ իրենց գոյությունը դեռ պահող հայկական գաղթօջախներն են։

«Ազգային մտածությունք» հոդվածում նշելով, որ հայ ժողովուրդն իր պատմական բախտը հավերժ կապել է Ռուսաստանի հետ և որ հայության և Ռուսաստանի շահերը իրար միաձուլված են, Նազարյանցը գրում էր, որ ներքին կյանքում կամ արտաքին ճակատի վրա Ռուսաստանի ձեռք բերած ամեն մի հաջողություն հայ ժողովրդի հաջողությունն է, ընդհակառակը, նրա անհաջողությունը կամ պարտությունը հայ ժողովրդի անհաջողությունն ու պարտությունն է։ «Հայերս... ունեմք նոյն օգուտք և վնասք, ինչ որ ունի թագավորություն (ռուսաց։— Հ. Ս.) ներքուստ և արտաքուստ»[2]։

Հայ ազատագրական շարժմանը հզոր լիցք էր հաղորդում Ռաֆայել Պատկանյանի (1830—1892) մարտական պոեզիան։ Բանաստեղծը գովերգում էր ազատ ու անկախ Հայաստանը, նրա սքանչելի բնությունը, մարդկանց։ «Արաքսի արտասուքը» հիշեցնում էր անցած-գնացած վաղնջական դարերի ազատ Հայաստանը, երբ Արաքսն իր ժիր ու կայտառ ալիքներով ուրախություն էր բերում երջանիկ հային։ Այժմ գետը ողբում էր իր ժողովրդի

[1] Տե՛ս Միքայել Նալբանդյան, երկեր, էջ 33—36։
[2] Նույն տեղը, էջ 480։

[1] «Հյուսիսափայլ», 1859, հունվար, էջ 12։
[2] «Հյուսիսափայլ», 1864, մարտ, 227։

ստրկական վիճակը։ Նրա ափերը, նրա կանաչապատ մարգագետիններն ու այգիները նամազի վայր էին դարձել Թուրքերի համար։ Պոետին տանջում էր հարազատ ժողովրդի դժբախտ վիճակը։ Նա հակաբանական էր համարում հայության լուռ համակերպությունը օտարի լծին, նրա անեզր համբերությունը։ «Վարդանի երգը» բանաստեղծությունում հորձանք են տալիս Պատկանյանի հայրենասիրական զգացմունքները.

«Հիմի Է՞լ լռենք, եղբարք, հիմի Է՞լ,
Երբ մեր թշնամին իր սուրն է դրել,
Իր օրհասական սուրը մեր կրծքին,
Ականջ չի դնում մեր լաց ու կոծին.
Ասացե՛ք, եղբարք հայեր, ի՞նչ անենք.—
Հիմի Է՞լ լռենք»[1]։

70—80-ական թվականների հայ ժողովրդի ազգային-ազատագրության խոշորագույն գաղափարախոսը Գրիգոր Արծրունին (1845—1892 թթ.) էր, որն այդ տարիներին հայ հասարակական գործիչների թվում ամենահեղինակավոր դեմքն էր։

1872 թվականի հունվարին Գր. Արծրունին լույս ընծայեց և սկսեց խմբագրել «Մշակ» թերթը, որի շուրջը համախմբվեցին երիտասարդ տաղանդավոր գրողներ։ Թերթի աշխատակիցներից էին Րաֆֆին, Արփիար Արփիարյանը, Մկրտիչ Փորթուգալյանը և ուրիշներ, որոնք իրենց նվիրել էին ժողովրդի լուսավորության, նրա մեջ քաղաքական կյանքի նկատմամբ հետաքրքրություն սերմանելու գործին։ Այդ գրողները «Մշակի» էջերում պսակազերծում էին կովկասահայ կյանքի արատները, բազմաթիվ թղթակցություններում և ուսումնասիրություններում ցույց տալիս կովկասահայերի համակրանքը Թուրքիայում հարստահարվող իրենց եղբայրների և քույրերի նկատմամբ[2]։ Ինքը՝ «Մշակի» խմբագիրը գտնում էր, որ արևմտահայությունը Թուրքական լծից կարող է ազատագրվել միայն ու միայն Ռուսաստանի օգնությամբ, ռուսական զենքի ուժով։

«Մշակում» սկսեցին լույս տեսնել տաղանդաշատ Րաֆֆու (1835—1888) պատմվածքները, վիպակներն ու վեպերը, որոնցից շատերում նա պատմում էր բարբարոս թշնամիներից գերված ու հարստահարված արևմտահայության դառն կյանքի մասին, միաժամանակ խթանում տառապող ժողովրդի ազգային զարթոնքը, բորբոքում հայրենասիրության կրակը, հայ երիտասարդությանը բացահայտ պայքարի մղում թուրքական բռնապետության դեմ։ Իր ստեղծագործություններով Րաֆֆին երկար ժամանակ իշխում էր հայ հասարակության տարբեր խավերի հոգու և մտքերի վրա։

«Կայծեր» վիպում Րաֆֆին նկարագրում է մի խումբ երիտասարդ հայ հեղափոխականների պայքարը թուրքական կառավարության դեմ։

«Ջալալեդդին» վիպակի (1878 թ.) գլխավոր հերոսը՝ Սարհատը, դաժանորեն պատժում է թուրքերի հասցրած վերքերից արդեն մահացող հարազատ հորը, անիծում նրան և նրա հետ միասին հայ հին սերնդին, որ համակերպվել էր ստրկության հետ, համարձակություն չուներ զինվելու և կռվի ելնելու ինքնապաշտպանության համար։ Որդին նախատում է նրան այն բանի համար, որ նա մշտապես քարոզել է՝ հնազանդ լինել չարին (ասել է թե՝ չարագործի ձեռքը եթե չես կարող կտրել, ուրեմն պետք է համբուրես և դնես գլխիդ), նրա ամենադաժան արարքներին անգամ պատասխանել բարությամբ («Մենք հայեր ենք, մեր գլուխը պետք է միշտ ցած ծռած լինի, մեր լեզուն միշտ մունջ պետք է լինի և մեր ձեռքը պետք չէ, որ բարձրանա օտարի գլխի վրա...»)[1]։ Պապերի ստրկական խոնարհության համար դայրույթով նզովելով նրանց հիշատակը, Սարհատը միաժամանակ վճռականապես ըմբոստանում է «հալածողի ոտները լիզելու»[2] մտայնության դեմ։ Նա համազգային ողբերգություն է համարում «հայրենիքի գերեզմանական անշարժությունը»[3]։ «Չարի հետ պետք է չար լինել, բարիի հետ՝ բարի»,— ասում է նա։ «Եվ ո՞վ կարող է օգնել մի ժողովրդի, որ ինքն իր ձեռքով է սրում թշնամու սուրը։ Ավելի քան բռնակալը, մենք ինքներս մեզ համար պատրաստեցինք ստրկության շղթաները... նրանց դարբնեցին մեր պապերը և կաշկանդեցին կավակներին։ Եվ թող անիծյալ լինեն նրանք... որ խլեցին մեզանից ամեն մի երկաթի

[1] Ռաֆայել Պատկանյան, *Երկերի ժողովածու*, հ. II, Երևան, 1964, էջ 27։
[2] Տե՛ս Խ. Մալումյան, *Մտքի մշակը. Գրիգոր Արծրունու գրական գործունեության 25-ամյակի առիթով*, Թիֆլիս, 1890։

[1] Րաֆֆի, *Երկերի ժողովածու*, հ. IV, Երևան, 1984, էջ 24։
[2] Նույն տեղը։
[3] Նույն տեղը, էջ 37։

կտոր և մի դանակ էլ չթողեցին մեզ մոտ...»[1] «Ջալալեդդինի» հերոսներից մեկ ուրիշը, դիմելով հայրերին ու պապերին, ասում է. «Եթե դուք այս վանքերի տեղը, որոնցով լիքն է մեր երկիրը, բերդեր շինեիք. եթե դուք սուրբ խաչերի և անոթների փոխարեն, որ սպառեցին ձեր հարստությունը, զենքեր գնեիք. եթե դուք այն անուշահոտության տեղ, որ խնկվում են մեր տաճարներում, վառոդ ծխեիք, այժմ մեր երկիրը բախտավոր կլիներ։ Այլևս քուրդերը մեր երկիրը չէին քանդի, մեր որդիքը չէին կոտորի և մեր կանայքը չէին հափշտակի...»[2]

Ինքնապաշտպանական պայքարի դուրս գալու անհրաժեշտության մասին «Ջալալեդդինում» արտահայտած մտքերը Բաֆֆին շարունակում է «Խենթը» վեպում (1880 թ.)։ Վեպի հերոսներից Հայրապետը ցավով նշելով, որ հայ ազգը անմիաբան է, ասում է. «...Քանի մենք այդպես կլինենք, մեր վիճակը միշտ անբախտ կմնա... Մեր գլխին կտան, մեր երեսին կթքեն, մեր կին, մեր աղջիկը, մեր ապրանքը, մեր հողը մեր ձեռքից կխլեն... և մենք ստիպված կլիննենք համբերել ամեն տեսակ անպատվությունների, ամեն տեսակ չարչարանքների, և մի ողորմելի գրաստի նման պետք է մեր թշնամու համար աշխատենք, որ նա գոհ և բախտավոր ապրի։ Իսկ մենք պիտի փառք տանք աստծուն, որ գոնե խնայում են մեր կյանքին, գոնե թույլ են տալիս մի չնչին զեռունի նման քարշ գալ երկրի վրա...»[3]

Ստրկությանը համակերպվելու բարոյախոսությունը զայրույթով մերժող Բաֆֆին խոր վիշտ էր ապրում այն բանի համար, որ դեռ շատ «փոքր է սարհատների թիվը»[4]։ Բայց հուսադրողն այն էր, որ Սարհատը և նրա ընկերները արդեն անվերադարձ ընտրել էին հայրենիքի ազատության համար պայքարի փշոտ ճանապարհը։

Արևմտահայ ժողովրդի տառապալից կյանքի սև պաստառի վրա առկայծում էր ապագա ազատ Հայաստանի կերպարանքը։ «Խենթի» գլխավոր հերոս Վարդանի (Խենթ) երազում գալիք 200 տարվա հեռավորությունից հայտնվում է այդ Հայաստանը՝ «բոլորովին կերպարանափոխված, բոլորովին վերանորոգված՝ կառավարման դեմոկրատական համակարգով, համալսարաններով ու թանգարաններով, համայնական ֆաբրիկաներով և գործարաններով»[1]։

Ազատության երգիչների ստեղծագործությունները հայերի, հատկապես աշխատավորների՝ գյուղացիների, արհեստավորների ու բանվորների համար ազգային վերածնության ճանապարհին ոգեշնչման անսպառ աղբյուր էին։

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության ձևավորման ժամանակաշրջանին է վերաբերում նաև հայության հետ քրդերի մերձեցման, հայ-քրդական դաշինքի ստեղծման ուղղությամբ հայ մտավորական, հասարակական-քաղաքական գործիչների կատարած առաջին լուրջ փորձերը։ Դա պատահական չէր, քանզի հայության ազգային-ազատագրական շարժման ելքը մեծապես պայմանավորված էր նրանով, թե վերջինիս նկատմամբ ինչպիսի դիրք կբռնի ամենամոտ հարևանը՝ քուրդ ժողովուրդը։

Քաղաքական հողի վրա հայերի և քրդերի մերձեցմանը կարող էին նպաստել պատմական, մշակութային, կենցաղային և բազմաթիվ այլ հանգամանքներ։ Դարեր շարունակ հայերն ու քրդերն ապրում էին կողք կողքի, նույն հողի վրա, նույն երկրների տակ։ Նրանք միմյանցից փոխառել էին բազմաթիվ սովորություններ, կենցաղային գծեր և այլն։ Այսպես, շատ քրդեր սովորություն ունեին իրենց հանգուցյալներին մահմեդական ծիսակատարությամբ թաղելուց հետո շիրիմն օրհնել քրիստոնեական ծեսով ու խաչով։ Հայերից փոխառված էին նաև ավանդական այլ սովորություններ[2]։

Դեռևս 1860-ական թվականներին հայերն առաջին լուրջ փորձերն արեցին քրդերի հետ մերձեցման ուղղությամբ։ Սկզբնական շրջանում հայկական միջավայրում իշխող մտայնությունն այն էր, որ անհրաժեշտ է քրդերի մեջ լուսավորական լայն աշխատանքներ տանել, նրանց օգնել բարձրացնելու կուլտուրական մակարդակը, որպեսզի հնարավոր լիներ «մեղմելու անոնց բարքերը», կարգավորելու հայ-քրդական հարաբերությունները։ 1862 թվականին այդ նպատակին լծվեց «Բարեկարգություն արե-

---

[1] Բաֆֆի. Երկերի ժողովածու, հ. IV, էջ 25։
[2] Նույն տեղը, էջ 53։
[3] Նույն տեղը, էջ 212։
[4] Նույն տեղը, էջ 33։

---

[1] Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. IV, էջ 411—423։
[2] Տե՛ս եղիշե Ց. Մելիքեան, Հարք-Խնուս, տպ. կաթողիկոսութեան հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, Լիբանան, 1964, էջ 44—45։

վելեան» կազմակերպությունը։ Նման խնդիր ուներ նաև Վանի Վարժապետանոցը։

Քրդերի մեջ լուսավորություն տարածելու և կրթելու միջոցով նրանց հայերին մոտեցնելու, ավելին, քաղաքական հողի վրա նրանց հետ դաշինք ստեղծելու գաղափարը հայ մտավորականության շրջանում լայն տարածում ուներ նաև 70—80-ական թվականներին։ Րաֆֆու «Խենթի» հերոսներից մեկը՝ Սալմանը (Դուդուկչյան), «մի ուրախալի բան» էր պատմում. «...այսօր տեսություն ունեցա մի քանի քրդերի հետ, խոսում էի նրանց դպրոցի և կրթության օգտավետության մասին։ Մեծ եղավ իմ զարմանքը, երբ նրանք ցույց տվին ամեն տեսակ պատրաստակամություն, հայտնելով, թե սիրով կհանձնեն իրենց որդիները հայոց դպրոցներում, երբ ուսումը այդքան լավ բան է։ Նրանց խոսակցությունից երևում էր, թե իրանք էլ շատ գոհ չեն, որ իրանց որդիները ավազակներ են լինում։ Եվ իրավ, այդ ժողովուրդը ինչո՞վ է մեղավոր, որ մնացել է վայրենի, որ իր ապրուստը որոնում է ավազակության և մարդասպանության մեջ։ Մեղավորը մենք ենք, որ մինչև այսօր չաշխատեցինք կրթել նրանց։ Մեր սեփական շահերը պահանջում են անել այդ։ Եթե ցանկանում ենք ազատ մնալ գազանների կատաղությունից, պետք է աշխատենք նրանց ընտելացնել, պետք է աշխատենք նրանց վարժեցնել ավելի խաղաղ և ավելի քաղաքակրթված կյանքի։ Թուրքիան հոգ չէ տանում քրդերի կրթության մասին, և այդ շատ հասկանալի է, որվհետև քրդի վայրենությունը ավելի նպաստավոր է նրան։ Բայց մենք պետք է հոգ տանենք, որովհետև վնասը մեզ է հասնում։ Մենք չենք դիպչի նրանց կրոնին, մենք միայն կկրթենք նրանց։ Այնուհետև «ջուրը իր բնական ճանապարհը կգտնե...»[1]

Նկատի ունենալով քրդերին, Րաֆֆին իր հերոսներից մեկի բերանով ասում էր. «Ահա մի գեղեցիկ ժողովուրդ իր սկզբնական պարզության մեջ, դրանից կարելի է հրաշալի բան շինել։ Վայրենի տունկը, երբ պատվաստվում է մշակված և ավելի քաղաքակրթված տունկի հետ, հիանալի պտուղներ է տալիս։ Ի՞նչ կլիներ, եթե այդ առողջ և կենդանի տարրը խառնվեր հայերի հետ...»[2]

[1] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. IV, էջ 278։
[2] Նույն տեղը, էջ 365։

Առանձին քուրդ գործիչներ հետաքրքրություն և շահագրգռություն հանդես բերեցին հայ-քրդական համերաշխություն ստեղծելու հանդեպ։ Լեոյի վկայությամբ Բեդրի-խան Բեյի գլխավորած քրդական մեծ ապստամբության ժամանակ (1846 թ.) նրա երկու զավակները քրդերին կոչ էին անում հայերի հետ համագործակցություն ստեղծել, որը սակայն չհաջողվեց գլուխ բերել։ Նման փորձեր եղան նաև Եզդանշիրի կռիվների (1854 թ.) ժամանակ։ 80-ական թվականներին Շամդինանի շեյխ Ուբեյդուլլահն իր նախագահությամբ գումարված ցեղապետերի ժողովում բուռն կերպով ընդդիմանում էր թուրքերի կողմից կաշառված այն շեյխերի դեմ, որոնք հայերի ընդհանուր ջարդ կազմակերպելու առաջարկություն էին արել։ Երևելի այդ քուրդն իր ազգակիցներին բացատրում և խստորեն ազդարարում էր, թե թուրքերը քրդերին կհանդուրժեն և կարևորություն կտան այնքան ժամանակ, քանի դեռ կան հայերը։

Հաշվի առնելով առանձին քուրդ առաջնորդների նման տրամադրությունները, 1880 թվականին Կ. Պոլսի հայ քաղաքական շրջանները Դերսիմ և Միջագետքի սահմաններ ուղարկեցին Փիլիպոս Քեչեյանին (Փիլիկ), խնդիր առաջադրելով գաղտնի բանակցել և համագործակցության կապեր հաստատել քրդերի հետ։ Վեց տարի հետո՝ 1886 թվականին նա վերադարձավ Պոլիս՝ բերելով անհրաժեշտ տեղեկություններ քրդերի կյանքի, կենցաղի, հայ-քրդական դաշինքի ստեղծման հնարավորությունների վերաբերյալ։

Բայց այդ և նման ձեռնարկների դրական արդյունքները չընչին էին։ Հայերի հետ գործակցության համար իբրև վարձատրություն քրդերը, որպես կանոն, պահանջում էին մեծ քանակությամբ դրամ և զենք, մի պահանջ, որի կատարումն անհնարին էր։ Իբրև կրոնակիցներ նրանք հակված էին դեպի թուրքերը։ Իրենց հերթին վերջիններս քաջատեղյակ լինելով խաշնարած քրդերի ցեղային նկարագրին, դյուրությամբ գրգռում էին նրանց ավարառության ախորժակները, դրանով իսկ խափանում քրդերի հետ մերձենալու հայերի բոլոր փորձերը։

Թուրքական բարբարոսական բռնատիրության տակ հեծող հայության ընդերքից վերջիվերջո ծնունդ առան առաջին գաղտնի ազատագրական-քաղաքական կազմակերպությունները, որոնք իրենց առջև նպատակ դրեցին համախմբել հայ երիտասարդու-

թյանը և պայքար սկսել սեփական հայրենիքը թուրքական տիրապետությունից ազատագրելու համար։

Առաջիններից մեկը «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունն էր, որ հիմնվեց Էրզրումում (Կարին), 1881 թվականին։ «Ազատություն ձեռք բերելու համար,— ասում էր կազմակերպության ղեկավարներից մեկը,— հարկավոր է զենք...։ Տվեք մեր ժողովրդին զենք, վարժեցրեք նրան արյուն թափել, և նա կգտնի իր ճանապարհը»[1]։

1882 թվականի նոյեմբերին թուրքական կառավարությունը հայտնաբերեց Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը և դաժան հաշվեհարդար տեսավ նրա անդամների հետ։ Սակայն կազմակերպությունը խոր հետք թողեց հայ ազատագրական շարժման մեջ։ «Պաշտպան հայրենյացով» այդ շարժումը թեակոխեց կազմակերպված պայքարի ուղին։

Առաջ եկած համազգային ընդհանուր շարժման հողի վրա ձևավորվեցին հայ քաղաքական կուսակցությունները՝ իրենց որոշակի կազմակերպություններով և գործողությունների մշակված պլանով։

1885 թվականի աշնանը Մկրտիչ Ավետիսյանի ղեկավարությամբ Վանում հիմնվեց արմենական կուսակցությունը։ Դա հայ ազգային-ազատագրական շարժման քաղաքական ծրագրով հիմնված առաջին կազմակերպությունն էր և միակը, որ ծնունդ էր առել Հայաստանի հողի վրա։ Շարժման հեղափոխական օրգանը դարձավ «Արմենիա» եռօրյա թերթը, որը սկսեց լույս տեսնել 1885 թվականի օգոստոսի 1-ից Մարսելում (Ֆրանսիա)։ Թերթը հիմնադրեց և խմբագրում էր Մկրտիչ Փորթուգալյանը, որը մինչ այդ Վանում հիմնել էր «Հայոց հայրենասիրական միություն» գաղտնի կազմակերպությունը և հետապնդումներից խուսափելով անցել էր Մարսել։ «Արմենիան» գաղտնի ճանապարհներով թափանցում էր երկիր և կարդացվում մեծ հետաքրքրությամբ։ Թերթը շարունակեց գոյություն ունենալ մինչև 1900 թվականը։ Արմենականները հետապնդում էին հայ ժողովրդի և նրա պատմական հայրենիքի ազատության նպատակը

[1] Ռ. Փ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1964, էջ 303, «Կարնո յիշատակին», Վիեննա, 1896, էջ 79։

և վճռել էին ընդհատակում երիտասարդ սերունդ պատրաստել ինքնապաշտպանության համար։

1887 թվականի օգոստոսին ծնվում ռուս նարոդովոլեցների ազդեցության տակ գտնվող հայ ուսանողների խմբի կողմից կազմակերպվեց հնչակյան կուսակցությունը (պաշտոնական անունը՝ սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն)։ Հիմնադիր խմբի ղեկավարն էր բազմաշնորհ մտավորական Ավետիս Նազարբեկյանը[1]։ Նույն թվականին ծնվում սկսեց հրատարակվել գլխավոր օրգանը՝ «Հնչակ» թերթը[2], որի էջերում այլազան նյութերի հետ միասին տպագրվում էին նաև կիսասոցիալիստական և սոցիալիստական բովանդակությամբ հոդվածներ։

1896 թվականին հնչակյան կուսակցության շարքերում ծնունդ առավ այսպես կոչված վերակազմյալ շարժում, որի մեջ ընդգրկվեցին կուսակցության արևելահայ գործիչներից ոմանք և արևմտահայ հատվածի մեծ մասը։ Շարժման ղեկավարներն էին Միհրան Տամատյանը, Արփիար Արփիարյանը, Միհրան Սվազը և ուրիշներ[3], որոնց ջանքերով նույն տարում Լոնդոնում ստեղծվեց վերակազմյալ հնչակյան կուսակցությունը։ Վերակազմյալները չէին մերժում սոցիալիստական սկզբունքները, բայց գտնում էին, որ սոցիալիզմը Թուրքիայում հեռավոր նպատակ է, ուստի առայժմ պետք է հրաժարվել սոցիալիստական հարցեր արծարծելուց, երկրորդական գծի վրա մղել դասակարգային պայքարի քարոզչությունը, ջանքերն ուղղել ազգային-ազատագրության նպատակին։ Նրանք առաջին և անմիջական նպատակ էին համարում արևմտահայ ժողովրդի արթնացումը և երիտասարդության պատրաստումը գալիք ինքնապաշտպանական կռիվներին[4]։

1890 թվականին Թիֆլիսում ստեղծվեց դաշնակցություն

[1] Տե՛ս Արսեն Կիտուր, Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցութեան, 1887—1962, էջ 29։

[2] «Հնչակ» թերթը մի քանի ընդհատումներով լույս է տեսել մինչև 1930 թվականը։

[3] Տե՛ս Անդրանիկ Անդրեասեան, Մեր գաղափարն ու գործը, Բ. տպագրություն, Պոսթրն, 1979, էջ 10։

[4] Տե՛ս Արտաշես Անդրեասեան, Ուրուագիծ հայոց պատմութեան և հայկական մշակոյթին, 1968, էջ 191։

բուրժուազգայնական կուսակցությունը, որի հիմնադիրներն էին Քրիստափոր Միքայելյանը, Սիմոն Զավարյանը և Ստեփան Զորյանը (Ռոստոմ)։ Կուսակցության օրգանը «Դրոշակ» թերթն էր, որը հրատարակվում էր նախ Թիֆլիսում, ապա Ժնևում։

Հնչակյան և դաշնակցություն կուսակցություններն իրենց մերձավոր խնդիրն էին համարում Թուրքական բռնադատումից արևմտահայության ազատագրությունը, ուստի որպես իրենց գործունեության հիմնական դաշտ ընտրել էին Արևմտյան Հայաստանը՝ այնտեղ ծավալելով նախապատրաստական աշխատանքներ։ Արևմտահայաստանում գիտական սոցիալիզմի գաղափարների պրոպագանդայի և պրոլետարիատի՝ իբրև դասակարգի, բացակայության պայմաններում Հնչակյան և դաշնակցություն մանրբուրժուական կուսակցություններն այդ շրջանում հնարավորություն էին ստացել տիրելու քաղաքական գործունեության ասպարեզին։

Կայսրության մի ծայրից մյուսը բռնկված ոչ թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի նոր բուռն վերելքի պայմաններում, երբ օսմանյան պետության գահավիժման և երկրի տարածքների բաժան-բաժան լինելու վտանգն անորոշ հեռանկարից վերածվում էր կենդանի իրականության, թուրքական բուրժուազիան չէր կարող անտարբեր հայեցողի դերում մնալ, կողքից դիտել, թե ինչպես է կործանվում «հայրենիքը»։ Նա նորից ամբողջ ուժով դրեց կայսրության ամբողջականության, հետևաբար՝ ազգային ընդարձակ շուկայի պահպանման խնդիրը։ Այդ տեսակետից նրա և աբդուլհամիդյան ռեժիմի նպատակները լիովին համընկան։ Ուստի պատահական չէր, որ նա սերտ դաշինք էր փնտրում սուլթանի, նրա արքունիքի, օսմանյան ընտրանիի հետ։ Բայց սուլթանական ռեժիմը միշտ չէ, որ ընդառաջում էր թուրք բուրժուազիային, վստահում նրան։ Աբդուլ Համիդը չէր մոռացել սահմանադրական շարժման օրերը, երբ «նոր օսմանները» փորձում էին սահմանափակել սուլթանի և նրա կառավարության իրավունքները։

Չնայած դրան, չնայած իր հանդեպ սուլթանական կառավարության անվստահությանը, այնուամենայնիվ, թուրք ազգային բուրժուազիան լավ գիտեր, որ սուլթանիզմն իր բնական դաշնակիցն է, ուստի վաղ թե ուշ նրանք միանալու են ընդհանուր թշնամու՝ ապստամբ ժողովուրդների դեմ։

Բալկանյան տիրույթների զգալի մասից կրկվելը և երկիրը կապիտալիստական արտադրության մեջ ներքաշելը կատարվում էր համարյա զուգահեռաբար։ Գնալով սեղմվում էր կողոպուտի ոլորտը։ Իհարկե, սուլթանը և նրան շրջապատող բարձրաստիճան պաշտոնեությունը նույնպես տեսնում էին, որ Թուրքիան ակամայից ներգրավվում է կապիտալիստական հարաբերությունների մեջ։ Նրանք գնալով համոզվում էին, որ երկրի փրկությունը վերջին հաշվով բուրժուական զարգացման ուղին թևակոխելու մեջ է, բայց միաժամանակ երկյուղում, սոսկում էին այդ զարգացման հեռանկարներից։ Նրանք լավ գիտեին, որ արտոնյալ վիճակի բերումով դարերով աշխատանքից խուսափած, զենքի ու ձիու հետ եղբայրացած թուրքերը կապիտալիստական զարգացումից բոլորից քիչ են օգտվելու։ Ճիշտ է, թուրքերի մի զգալի մասը 19—20-րդ դարերի սահմանագծում արդեն ստիպված էր ձիուց իջնել, ավելին, ստիպված էր ձի պայտել սովորել։ Բայց աշխատելու, արժեքներ ստեղծելու ոլորտում թուրքերը առաջվա նման չէին կարողանում մրցել քրիստոնյաների, այդ թվում աշխատասեր ու ճկուն հայ ռայայի հետ։ Այլ խոսքով, թուրքերը դեռ անպատրաստ էին կապիտալիզմին անցնելու։ Կապիտալիզմի հետագա զարգացումից ամենից առաջ օգտվելու էին այլազգիները, որոնք արհեստավորական և մասամբ առևտրաարդյունաբերական գործառնության համար ունեին դարերով կուտակված ունակություններ ու փորձ։ Թե՛ սուլթանը, թե՛ թուրք նորածագ բուրժուազիան երկյուղում էին, որ կապիտալիստական հարաբերությունների զարգացման ընթացքում, ինչպես երբեք, պարզորոշ կուրվագծվի ռայայի դերազանցությունն իշխող թուրքերի նկատմամբ և որպես դրա բնական հետևանք կուժեղանան կայսրության քրիստոնյա ժողովուրդների ապակենտրոն ձգտումները։

Այստեղից էլ «հիվանդ մարդու»՝ Թուրքիայի տևական հիվանդությունը չբուժվելու հիմնավոր պատճառներից մեկը։ Այստեղից էլ ատելության լեռնացումը դեպի ներքին թշնամիները՝ քրիստոնյաները, մասնավորապես հույները և հայերը։ Ստեղծված պայմաններում ի՞նչ ելք էին տեսնում թուրքերը։ Այն է՝ պարբերաբար կազմակերպել ջարդեր, արյունաքամ անել գյավուրներին, որպեսզի նրանք չմտածեն հավասարության կամ ազատության մասին։ Եվ մասսայական խժդժություններից նրանք անցան մասսայական կոտորածների։

Մասսայական կոտորածներին անմիջապես նախորդող տարիներին, այսինքն՝ 80-ական թվականներին, կտրուկ փոխվեց նաև օտարերկրյա կապիտալի, հետևաբար նաև՝ արևմտյան տերությունների վերաբերմունքն Օսմանյան կայսրության քրիստոնյա բուրժուազիայի, առավելապես հույն և հայ բուրժուազիայի նկատմամբ։ Նախկինում հանձինս այլազգի բուրժուազիայի Եվրոպական կապիտալը տեսնում էր կայսրությունից ներս բռնաթափանցելու իր աջակցին։ Քրիստոնյա բուրժուազիային հատկացված էր հումքի նախնական արդյունաբերական մշակումը և կայսրության սահմաններից դրա արտածումը կազմակերպելու գործը։ Բայց այժմ վիճակը փոխվել էր. եվրոպական կապիտալիզմը թևակոխում էր իր զարգացման բարձրագույն՝ իմպերիալիզմի փուլը։ Կապիտալիզմի զարգացման այդ փուլին բնորոշ է նախամոնոպոլիստական կապիտալի ժամանակաշրջանին հատուկ «ազատ նախաձեռնության» և «ազատ» մրցակցության փոխարինումը մոնոպոլիաների բռնատիրությամբ, կապիտալի համապարփակ իշխանության հաստատմամբ, ուրիշ ազգերի և երկրների նկատմամբ թշնամանքի խորացմամբ, միաժամանակ գաղութներում և կիսագաղութային երկրներում հետամնաց հասարակական հարաբերություններն ամեն կերպ կոնսերվացնելու ձգտմամբ։ Այդ տեսակետից Օսմանյան կայսրությունը չէր կարող բացառություն կազմել։ Արևմտյան տերություններն իրենց գաղութատիրական քաղաքականությունն անցկացնելու, նոր շուկաներ ու տարածքներ զավթելու նպատակով հովանավորում էին սուլթանին, ճնշված փոքր ազգերին ու ազգություններին զոհաբերում նրա ջարդարարական քաղաքականությանը։ Հետևապես սուլթանը և թուրքական բուրժուազիան զուր էին կայսրության քրիստոնյա բուրժուազիային սովորույթի ուժով շարունակում համարել եվրոպական կապիտալի հետևողական աջակիցը։ Արևմտյան տերությունները շահագրգռված չէին Օսմանյան կայսրության մեջ բուրժուադեմոկրատական վերափոխումներով, ավելին, ամեն ինչ անում էին նրանում status quo-ն պահպանելու, ավատատիրական հարաբերությունները կոնսերվացնելու, կայսրության ողջ տարածքը իրենց ապրանքների շուկա ծառայեցնելու համար։ Ընդհակառակը, կայսրության ոչ թուրք, հատկապես քրիստոնյա ազգերի բուրժուազիան երազում էր վերափոխումների մասին։ Ահա թե ինչու ի դեմս տեղական

բուրժուազիայի Արևմտյան տերությունները տեսնում էին իրենց մրցակցին, որն ինքն էր ցանկանում գերիշխել իր ազգի վրա, ավելին՝ ստեղծել սեփական ազգային շուկա։ Այստեղից էլ նրանց թշնամանքը կայսրության ոչ թուրք բուրժուազիայի հանդեպ, որն իրերի բերումով փոխվելու էր ընդհանրապես ոչ թուրք ազգերի նկատմամբ թշնամանքով։

Թուրք բնակչության սոցիալական հուզումները, այլազգի, հատկապես քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի ազատագրական շարժումները սուլթանական կառավարությունը ճնշում էր վաղուց փորձված զենքով՝ թշնամանք սերմանելով մահմեդական և քրիստոնյա ժողովուրդների միջև, կայսրության մի ծայրից մյուսը բորբոքելով հետամնաց մուսուլման բնակչության կրոնական մոլեռանդությունը։

Կրոնական թշնամանքը հասավ չտեսնված ծայրահեղ չափերի։ Կառավարման հիմնական մեթոդ դարձնելով երկրի մահմեդական և քրիստոնյա ժողովուրդների միջև ազգային ատելության և կրոնական թշնամանքի հրահրումը, Աբդուլ Համիդը կայսրության պաշտոնական դոկտրինա հռչակեց իսլամիզմը և պանիսլամիզմը (համիսլամականությունը)։

Օսմանիզմի դոկտրինան, որն ինչ-որ տեղ գոնե ձևականորեն հնարավոր էր համարում քրիստոնյաների որոշ իրավունքների ճանաչումը, երկրորդ պլան մղվեց, իսկ սահմանադրական շարժման տարիներին դեռ նոր երևակված և դեռ տարածում չգտած համաթուրքականությունը (պանթուրքիզմը), որի գաղափարական-քաղաքական նպատակի իրականացումը, այնուամենայնիվ, ենթադրում էր այլ երկրների կազմում գտնվող թուրքալեզու ժողովուրդներով բնակեցված տերիտորիաների կցում Օսմանյան կայսրությանը, համարվեց անիրագործելի, նույնիսկ վնասակար գաղափար։ Սուլթանին կասկածելի էր թվում թուրքիզմով ու պանթուրքիզմով արտահայտվող ազգայնականության ամեն մի արտահայտություն՝ իբրև ազատականության ախտանիշ։ Քանի որ պանթուրքիզմը, թեկուզև սաղմնային վիճակում, գալիս էր իրենով փոխարինելու պանիսլամիզմի գաղափարների վրա հիմնված օսմանցիությանը, ուստի նա չէր կարող չհանդիպել կայսրության մեջ դրությունն անփոփոխ թողնելու կողմնակիցների դիմադրությանը։

Գլխավոր խնդիրը շարունակում էր մնալ կայսրության առ-

կա ամբողջական տարածքի պահպանումը։ Քանի որ ազատագրական շարժումը հիմնականում ընդգրկել էր կայսրության քրիստոնյա ժողովուրդներին, իսկ արաբական և քրդական ազատագրական շարժումները դեռ խանձարուրի մեջ էին, ուստի սուլթան-խալիֆի, Թուրք ավագանու մոտ գնալով խորանում էր այն համոզումը, որ երկրի ամբողջականությունը կարելի է պահպանել միայն ու միայն վստահելի մահմեդականության միջոցով։ Քրիստոնյա ժողովուրդների վրա այլևս հույս դնել չէր կարելի։ Նրանց պետք էր կրնկի տակ պահել բոլոր մահմեդականների միացյալ ուժերով։

Եվ ահա Թուրքերի անունով հրապարակ նետվեց «Բոլոր մուսուլմանների հետ՝ ընդդեմ անհավատների» կարգախոսը։ Սուլթանի կառավարությունն իսլամի դրոշով հանդես էր գալիս քրիստոնյա ժողովուրդների ազատագրական շարժումն արյան մեջ խեղդելու վճռականությամբ։ «Իսլամը ազգություն չի ճանաչում»,— ազդարարում էին մուսուլմանական կղերը։

Իսլամը, որպես սոցիալական ինստիտուտ, անցել է բարդ և իրադարձություններով հարուստ ուղի։ Իր գոյության առաջին դարերի ընթացքում այն իրենից ներկայացնում էր նվաճողական արշավանքներ ու պատերազմներ վարող մի շարք հզոր աստվածապետական ֆեոդալական-պետական կազմավորումների կրոնական-գաղափարախոսական ձև։ Նրա առանձին ուղղություններն ու աղանդները միևնույն ժամանակ հասարակության ճնշված դասակարգերի օպոզիցիոն շարժումների արտահայտման ձև էին։ Մուհամմեդի կանաչ դրոշով էին Թուրքական հորդաները նվաճում երկրներ, ժողովուրդներ, իսլամի ոգին էր թևածում կայսրության մի ծայրից մյուսը։

Մահմեդական կրոնապետության սկզբունքով ամբողջ բնակչությունը բաժանվում էր երկու մասի՝ հավատացյալների (մուսուլման) և անհավատների (գյավուր)։ Կայսրության բոլոր մահմեդականները՝ Թուրքերը, արաբները, քրդերն իշխողներ էին, այդ պետության լիիրավ քաղաքացիներ, իսկ քրիստոնյա «գյավուրները»՝ ենթականեր։ Մահմեդական լինելը հպարտության աղբյուր էր, քաղաքակրթության չափանիշ, մի զգացում, որի խորացմանն ամեն կերպ նպաստում էին երկրի կառավարող շրջանները։ Մուսուլմանին ասված էր, որ նա ի վերուստ կոչված է իշխելու «գյավուրներին», այսինքն՝ կայսրության քրիստոնյա իրավազուրկ բնակչությանը։ «Ռայա» արհամարհական անունով էին անխտիր կոչվում բոլոր քրիստոնյաները՝ անկախ Թուրքիայում իրենց ունեցած դիրքից կամ Օսմանյան կայսրությանը մատուցած ծառայություններից։ Քրիստոնյա հպատակների գլխին դամոկլյան սրի պես շարունակ կախված էր կողոպտվելու, անարգվելու և սպանվելու սպառնալիքը[1]։ «Նայած տեղին և հանգամանքին,— գրել է Կ. Մարքսը,— Թուրքը լինում է բանվոր, վարձակալող գյուղացի, մանր հողատեր, վաճառական, ֆեոդալիզմի ամենացածր և բարբարոսական աստիճանի վրա կանգնած ֆեոդալ հողատեր, պաշտոնյա կամ զինվորական։ Բայց սոցիալական ինչ դիրք էլ որ նա գրավի, նա պատկանում է արտոնյալ կրոնին և ազգությանը, միայն նա իրավունք ունի զենք կրելու, և ամենաբարձրաստիճան քրիստոնյան պարտավոր է դեմ առ դեմ գալիս ճանապարհ տալ հասարակության ամենացածր խավին պատկանող մուսուլմանին»[2]։

Մահմեդական երկրների տիրապետող դասակարգերի համար իսլամը ամենահարմար հենարանը եղավ, որին կոթնեցին նրանք, նրա անունով իրենց շուրջը համախմբեցին սեփական շահագործվող ու տգետ մասսաներին, սրանց ներշնչելով այն համոզումը, թե իսլամից դուրս մնացած ամբողջ մարդկությունն առանց բացառության քյաֆիր է, գյավուր և թե իսլամը երբեք չի կարող հաշտվել ու բարեկամանալ նրանց հետ։

Անդրադառնալով այդ իրողությանը, Ի. Գոլոբորոդկոն գրել է. «Օսմանցիների մտքերում կրոնի և ազգության գաղափարը միաձուլվել է, և նրանք շարունակ խառնել են այդ երկու հասկացությունները։ Կրոնը դադարելով ներքին համոզմունք լինելուց, ոմանց համար դարձել է արտոնությունների և առանձնաշնորհումների, իսկ մյուսների համար՝ քաղաքացիական անիրավահավասարության աղբյուր։ Կայսրությունը բաժանվել է երկու անիրավահավասար և միմյանց նկատմամբ թշնամական դասակարգերի՝ մուսուլմանների և քրիստոնյաների»[3]։

«Հունական ապստամբությունը» հոդվածում Կ. Մարքսը նշում է, որ Թուրքական ռազմաֆեոդալական մուսուլմանական թեո-

---

[1] Տե՛ս **Π. Λ. Карасевич**, Мусульманское право и последняя государственная реформа в Турции, М., 1877, էջ 32—35։

[2] **К. Маркс** и **Ф. Энгельс**, Соч., т. 9, с. 6.

[3] Տե՛ս **И. И. Голобородько (И. Южанин)**, Старая и новая Турция, էջ 1։

Կրոնատիկ պետությունն ինքն է մշտապես սերմանում ու խորացնում հակասությունները մուսուլմանների և քրիստոնյաների միջև, քանի որ հավասարության մասին ոչ մահմեդականների պահանջը կնշանակեր եկեղեցու անջատում պետությունից, կրոնի անջատում քաղաքականությունից, մի բան, որ բնավ չէին ցանկանում թուրք կառավարողները[1]։

Թուրքական պետության քաղաքականությունն ի սկզբանե «խարսխված էր կրոնական դոգմաների վրա», որոնք չէին հանդուրժում «մուսուլմանների հետ նույն պայմաններում դնել» ոչ մուսուլման ժողովուրդներին։ Իսկ դա կնշանակեր «իսլամի հավատի սիմվոլի հիմնական կանոնի խախտում»[2]։ Նման խախտումը հավասարազոր էր սուլթանի իրավունքները սահմանափակելուն։ Իսկ սուլթանը մարմնավորում էր երկմիասնական գերագույն իշխանությունը. աշխարհիկ՝ որպես պետության ղեկավար, և հոգևոր՝ որպես բոլոր մուսուլմանների խալիֆ։ Սուլթան-խալիֆը, մուսուլմանների այդ կայսրն ու հոգևոր առաջնորդը համարվում էր աստծու ստվերը երկրի վրա։ Հավատի սիմվոլի խախտում թույլ չտալը գործնականում նշանակում էր, որ սուլթանական կառավարությունը արգելակում է ինչպես քրիստոնյաների, այնպես էլ մուսուլմանների զարգացումը։ Իսլամը հետևողականորեն օգտագործելով իբրև տիրապետության գործիք, թուրքական կառավարությունը հավերժացնում էր հենց իսլամի գոյությունը, որը Կ. Մարքսի արտահայտությամբ «անհավատներին դնում է օրենքից դուրս և անընդհատ թշնամանքի վիճակ է ստեղծում մուսուլմանների և անհավատների միջև»[3]։

Մուսուլմանական անզիջում մոլեռանդությունը հատկապես ուժգին դրսևորումներ ուներ Անատոլիայում և կայսրության արևելյան շրջաններում։ Մերձավոր արևելքի խորքերում, Ռուսաստանի և Եվրոպայի աչքից հեռու գտնվող հայ ժողովուրդը շարունակում էր իր գոյությունը մահմեդականների անպատիժ կամայականությունների պայմաններում։ «Հայերը և թուրքերը,— գրում է Արշակ Ալպոյաճյանը,—իբրև բնակակից ժողովուրդներ կապրեին միասին՝ իբրև տիրապետեալ և տիրապետող։ Հայը համակերպված էր իր վիճակին, վասնզի ոչ մեկ յոյս կամ նեցուկ

[1] Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 10, էջ 130:
[2] М. Макколь, Султан и державы, СПб, 1897, с. 156.
[3] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 10, с. 167.

ուներ իրեն համար, իսկ թուրքը սանձարձակ կը գործեր, վասնզի ոչ ոք իր ձեռքը բռներ, արգիլելու համար, որ իր ուզածը չընե»[1]։

Հայ ժողովրդի կրած տառապանքները, նրա նկատմամբ գործած անիրավությունները սահման չունեին։ Արևմտյան գավառները հեծում էին մտրակի տակ։ Ամենուրեք սպանություն, խժդժություններ, առևանգումներ, բռնաբարություն, ավերում, հրդեհներ, թալան, տանջա՜նք, տանջա՜նք... Հայը զրկված էր մարդկային ամենատարրական իրավունքներից։ Ահա թե իր վիճակն ինչպես էր ներկայացնում Բասենի դաշտի գյուղերից մեկի հայ գյուղացին. «Թուրքը քանի կերթա ավելի զալրմ կը դառնայ. մեր ցանքը, մեր հերկը, մեր խոբն ու արորը նրան կը պատկանին, մենք սեփականություն չունինք։ Կամաց-կամաց այնպես պիտի ըլլա, որ թուրքը պիտի գայ և պիտի ըսե մեզի, որ ամեն ինչ իրենն է և մենք միայն աշխատողները»[2]։

Քանի որ մահմեդական լինելն իր հետ բերում էր արտոնություններ ու առանձնաշնորհումներ, ուստի մուսուլմանները, ելնելով հատկապես տնտեսական արտոնություններից, շահագրգռված չէին կրոնադարձության միջոցով իրենց շարքերը համալրելու քրիստոնյաներով։ Սովետական թուրքագետ Վ. Ա. Գորդլևսկին նկատում է, որ «թուրքերը ձեռնպահ էին մնում մասսայական իսլամ ընդունել տալու քաղաքականությունից, քանի որ այդ քաղաքականությունը նյութական վնաս էր հասցնում պետական գանձարանին. կրոնափոխներն ազատվում էին քրիստոնյաներից գանձվող խարաջից և ջիզեյից, վճարելով միայն համեմատաբար թեթև աշարը»[3]։

Այդ էր պատճառը, որ մինչև 19-րդ դարի 80—90-ական թվականները, այսինքն՝ մինչև Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման նոր հուժկու վերելքը, այստեղ մասսայական կրոնադարձություն չէր նկատվում։

Բայց նոր պայմաններում իսլամիզմը, որ մերժում էր մուսուլման ժողովուրդների ազգային առանձնահատկությունները, սկսեց «տեսականորեն» հիմնավորել բոլոր ոչ մուսուլման

[1] Արշակ Ալպոյաճեան, Պատմություն Մալաթիոյ հայոց, հրատարակություն Մալաթիոյ կրթասիրաց ընկերութեան, Պեյրութ, 1961, էջ 825։
[2] Արսեն Մարմարեան, Զոր. Անդրանիկ և իր պատերազմները, 1920, Պոլիս, էջ 38։
[3] В. А. Гордлевский, Избранные сочинения, т. III, М., с. 41.

ժողովուրդների իսլամացման անհրաժեշտությունը։ Իր հերթին պետությունը բոլոր միջոցներով ձեռնարկեց գլուխ բերել իսլամացումը[1]։

Հարկ է նշել, որ Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներից իսլամիզմի դրոշին ամենահավատարիմը միջնադարյան օրենքներով ապրող քրդերն էին, որոնք մոլեռանդ մահմեդականներ էին։ Մեծ վստահություն տածելով քուրդ ցեղապետերի նկատմամբ, Աբդուլ Համիդը նրանց հետ առանձին հույսեր էր կապում։ Մյուս կողմից առանձնակի ատելություն տածելով հայերի նկատմամբ, նա նրանց դիտում էր իբրև կայսրության միասնության ամենավտանգավոր թշնամի, իբրև «դավաճան ժողովուրդ», հետևաբար՝ իսլամիզմի ճանապարհի բնական գոհ։

Եվ այսպես, կողք կողքի հաղարամյակներ ապրած երկու ժողովուրդները՝ քրդերը և հայերը, պետական պաշտոնական քաղաքականության ուժով կրոնական հողի վրա հայտարարվում էին միմյանց սխերիմ թշնամիներ։ Սուլթանական արքունիքի լիակատար պաշտպանության տակ առնված քրդական ավազակներին մտավ մի անպատվաբեր գների մեջ՝ թուրք կառավարողների հրահրմամբ ալան-թալանի տվեց հայության ունեցվածքը, ապա ձեռքերը թաթախեց նրա արյան մեջ։

Քրդերի հարստահարումները, կողոպուտն ու բռնությունները ահավոր չափեր ընդունեցին 90-ական թվականների սկզբին։ Նրանց է՛լ ավելի ոգեշնչելու և սիրաշահելու համար սուլթան Աբդուլ Համիդը հայաբնակ վեց նահանգներից վաչկատուն ռազմատենչ քուրդ ավատատեր ցեղապետերին հրավիրեց Պոլիս՝ տալով բարձր պատիվներ, շքանշաններ ու նվերներ։ Արյունարբու ցեղապետերի հետ ունեցած հանդիպման ժամանակ սուլթանը նրանց լիազորեց զինել իրենց ցեղերի բոլոր տղամարդկանց, միաժամանակ խոստացավ նրանց համար պետության հաշվին հայթայթել զենք, զինամթերք, համազգեստ, ինչպես նաև տալ ամսավարձ։ Պայմանավորվածության համաձայն հարյուր մարդ տրամադրող ցեղապետին հարյուրապետի, իսկ հազար մարդ տրամադրողին՝ հազարապետի կոչում էր շնորհվելու[1]։

Վերադառնալով իրենց բնակավայրերը, քուրդ ցեղապետերն անմիջապես ձեռնամուխ եղան հայերին կողոպտելու և ոչնչացնելու մասին սուլթանի հրամանի իրագործմանը։ Կառավարության կողմից առատորեն տրված զենքերով նրանք մասսայաբար զինեցին ցեղակից տղամարդկանց։ Զինված խմբերն արդարացնում էին սուլթանի ակնկալությունները։ Աբդուլ Համիդը գոհ էր քուրդ ավազակների անձնական գործողություններից, որը սարսափ էր սփռել ամենուրեք, ահավոր տեսորի ենթարկելով հայաբնակ շրջանները։

Սուլթան Համիդը շուտով նոր քայլի դիմեց. 1892 թվականից սկսած նրա հրամանով կյանքի կոչվեցին մուսուլմանական ոչ կանոնավոր հեծելազորային գնդերը, որոնք կնքվեցին Համիդի անունով՝ («Համիդիե ալայի»—«Համիդյան գնդեր»)։

«Համիդիե» զորքը կազմակերպվում էր ոչ միայն Հայկական բարձրավանդակում, այլև Սիրիայում և արաբաբնակ ուրիշ երկրներում։ Այստեղ ստեղծված «Համիդիեները» կազմված էին արաբ ցեղերից, դրուզներից (դուրզիներից) և տակավին ֆեոդալական զարգացման աստիճանին մնացած այլ լեռնցիներից[2]։ «Համիդիեները», այնուամենայնիվ, հիմնականում հավաքագրվում էին քրդերից՝ քուրդ ցեղապետերի միջոցով, կառավարության անմիջական օժանդակությամբ։ 1899 թվականին «Համիդիե» զորքում հաշվվում էր 63 գունդ, որոնցից 50-ը կազմված էր քրդերից, 9-ը՝ արաբական ծագում ունեցող ցեղերից, 3-ը՝ կարապափախներից, իսկ մեկը՝ թուրքմեններից[3]։ Հայկական

---

[1] Հարկ է նշել, որ Օսմանյան կայսրության բոլոր քրիստոնյաների իսլամացման գաղափարը նոր չէր։ Այդ գաղափարի իրականացման ջերմ կողմնակիցներից մեկը ժամանակին սուլթան Սելիմ I-ն էր (1469—1524)։ «Սուլթան Համիտ ալ,— գրում էր արևմտահայ կրոնական գործիչներից մեկը,— կայսրության բոլոր տարրերուն համաձուլման վրայ կը մտածեր. «Սլավները իսլամացուցած չըլլալուն յանցանքը մեր նախնիքներուն է, թեև դյուրին գործ չէր,— ասում էր նա։— Քյուրտերը պետք է ձուլել և վերածել մեկ ցեղի մը, և յոյներու ու հայերու ձուլումը դժուար չպիտի ըլլայ մեզի համար»։ Սելիմ և Համիտ կը կարծեին, թե իսլամացումով և կրոնական միացմամբ պիտի կրոնային քաղաքական միասնականություն ստեղծել, մինչդեռ խոշընդոտները որչափ ոչ թուրքերուն՝ նոյնչափ իսլամներուն կը բխեն» («Տրապիզոնի թեմին վիճակավոր Յովհաննես արք. Նազլեանի յուշերը Մերձավոր արևելքի 1914—1928 շրջանի քաղաքական-կրոնական դեպքերուն մասին», Ա. հատոր, էջ 92)։

[1] Տե՛ս Սարգիս և Միսակ Բդլեաններ, Հարազատ պատմություն Տարոնոյ, էջ 95։

[1] Տե՛ս И. И. Голобородько (И. Южанин), Старая и новая Турция, էջ 185:

[3] «Համիդիե» զորքի մասին տե՛ս նաև «Вооруженные силы Турции», изд. главного управления Генерального штаба, СПб., 1907, էջ 50—58,

բարձրավանդակում «Համիդիները» կազմվում էին միայն քրդերից։ Կ. Պոլսում բացվեց հատուկ զինվորական վարժարան (Զատակեն զապիթե մեքթեպի), որտեղ մարզվում, ապա զինվորական աստիճաններ էր ստանում «Համիդիե» զորախմբերի հրամանատարական կազմը[1]։

Համիդյան գնդերում ծառայել ցանկացող քրդերը և արաբները պարտավոր էին ներկայանալ սեփական ձիերով, իսկ հրացան տալիս էին իշխանությունները։ Ըստ որում նրանք ազատվում էին ամեն տեսակ հարկերից։ Այդ հեծելազորը իր ռազմական կառուցվածքով տիպիկ ֆեոդալական բանակ էր, որի գեներալական պաշտոնները գրավում էին քուրդ և արաբ առավել խոշոր ֆեոդալներն ու սրանց ազգականները, ավելի նվազ ֆեոդալները գնդապետի աստիճան ունեին, իսկ կրտսեր սպայական աստիճանները գտնվում էին սնանկացած ֆեոդալական ընտանիքների ներկայացուցիչների ձեռքին[2]։

Բոլորը զգում էին, որ մոտ ապագայում հայ ժողովրդի գլխով սև խորշակ է անցնելու։ Ուստի հայերը նախապատրաստվում էին դիմագրավելու գալիքի մեծ փորձությանը։

Հայ ժողովրդի նկատմամբ սուլթանական կառավարության, թուրք ֆեոդալական վերնախավի և նոր ձևավորվող թուրքական բուրժուազիայի անզուսպ թշնամանքը հատկապես իր բարձրակետին հասավ 1894—1896 թվականներին։ Օսմանյան կայսրության մեջ սկսվեցին հայկական ահավոր ջարդերը, որով սկիզբ դրվեց հայերի համատարած կոտորածներին։ Համիդն անցավ «ռուսասեր գյավուրներին» գլխովին ոչնչացնելու, երկիրը «հայազրկելու» կուրսին։

Ջարդերի առիթ դարձավ երկրում ստեղծված ծանր վիճակի դեմ հայերի լուրջ ընդվզումները։ Բազմաչարչար հայ գյուղացիության համբերության բաժակն արդեն լցված էր, երբ սուլթան Համիդը դիմեց մի նոր պրովոկացիայի, նպատակ ունենալով գրգռել հայերին, առիթ փնտրելով նրանց կոտորելու համար։ Ի լրումն իր բազմաթիվ ստոր արարքների, սուլթանը, հայ «ռայային» իսպառ քայքայելու համար քուրդ ցեղապետերին հանձնեց նրանցից հարկ հավաքելու մենաշնորհը, դրանով իսկ շղթայազերծ անելով և հայության դեմ ուղղելով ոչ միայն թուրքերի արյունռուշտ բնազդները, այլև քուրդ ցեղապետերի ընչաքաղցությունը։ Սուլթանի այդ ավազակաբարո գործողություններից զայրացած՝ 1894 թվականի ամռանը ոտքի ելան Սասունի՝ Արևմտահայաստանի լեռնային, լավ պաշտպանված այդ շրջանի հայերը։ Ապստամբները քարոզանդ արեցին նոր կառուցվող թուրքական բերդը։ Ի պատասխան սասունցիների ապստամբության, Համիդը կարգադրեց ամենայն դաժանությամբ արյան մեջ խեղդել այն։ Նա Սասուն ուղարկեց «Համիդիե» հեծելազորը և զինվորական այլ միավորումներ՝ Զեքի փաշայի հրամանատարությամբ։ Բարձրահասակ, մկանուտ լեռնաբնակ սասունցիները խիզախաբար էին կռվում թուրքական մեծաքանակ զորքերի դեմ։ Կանայք ոչ պակաս հերոսություն էին ցուցաբերում։ Երբ թուրքերի ջոկատն անսպասելիորեն հարձակվեց գյուղերից մեկի վրա, որի տղամարդիկ գնացել էին գլխավոր զորքի դեմ կռվելու, կանայք հավաքվելով բարձր ժայռի վրա՝ հերոսաբար ետ էին մղում գրոհը։ Իսկ երբ թուրքերը գրավեցին ժայռադիրքը, նրանք բարձր ժայռից նետվեցին ձորը՝ թշնամու ձեռքը չընկնելու համար։ «Սա Հոմերոսից վերցրած առասպել չէ, այլ իրականություն, որ նկարագրվել է եվրոպական մամուլում»[1],— այսպես էր գրում Լոնդոնում ռուսերեն լույս տեսնող «Жизнь» հանդեսը։

Սասունը, չնայած հերոսական պաշտպանությանը, ընկճվեց։ Ջորքը հեռացավ՝ ճանապարհին ջարդելով հովտի խաղաղ բնակչությանը։ Քրդական ցեղերը դա համարեցին ազդանշան և սկսեցին անպաշտպան բնակչության ընդհանուր կոտորածը։ Արյունալի այդ սպանդի մասին այսպես է գրում սովետական թուրքագետ Ա. Ֆ. Միլլերը. «Սասունում ծայր առավ հայերի մասսայական ջարդը, որը վերածվեց ամենախավար միջնադարի սարսափները։ «Համիդիե» զորախմբերը սպանում էին հայկական գյուղերի ու քաղաքների բնակիչներին՝ չխնայելով ո՛չ երեխաներին, ո՛չ կանանց, ո՛չ ծերերին։ Սասունի կոտորածը տաս-

---

О. Г. Инджикян, Буржуазия Османской империи, էջ 38, **Ա. Համբարձումյան**, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, էջ 32—33։

[1] Տե՛ս Եղիշե Յ. Մելիքեան, Հարք-Խնուս, էջ 299։

[2] Տե՛ս **Аб. Алимов**, Турция (в книге «Очерки по истории Востока в эпоху империализма»), ОГИЗ Соцэкгиз, М.—Л., 1934, էջ 23։

[1] «Жизнь», 1902, № 4, июль, с. 10. (Գրական, գիտական և քաղաքական սոցիալ-դեմոկրատական հանդես։ Մեջբերումը կատարված է հանդեսի «յանց» ստորագրությամբ «Հայկական հարցի շուրջը» հոդվածից։ Բացառված չէ, որ հեղինակը Բոգդան Կնունյանցն է)։

նյակ հազարավոր զոհեր խլեց, իսկ մարշալ Զեքի փաշան այդ ջարդերի համար պարգևատրվեց շքանշանով»[1]։ Սասունից ջարդերը տարածվեցին Արևմտահայաստանի այլ վայրեր։

Պետությունը որևէ արգելք չէր հանդիսանում սպանություններին, առավել ևս ավարառությանը, որովհետև ամեն ինչից զատ դա շահաբեր էր գանձարանին։ Հայերից թալանված արժեքավոր գույքն ուղղակի տրձանագրվում էր թուրքական կառավարության հաշվին, իսկ անարժեք ավարը բաժին էր ընկնում անմիջական շահի ակնկալությունից մոլեգնած քուրդ ելուզակներին։

Հաջորդ՝ 1895 թվականին հայկական կոտորածների ալիքը տարածվեց մյուս բոլոր հայաբնակ վայրերը։ Այդ մասին Ի. Գոլոբորոդկոն գրում է. «Հայկական ջարդերը, սկսվելով Մշո մոտակա Սասունի լեռնային գյուղերում, տարածվեցին Փոքր Ասիայի 10 վիլայեթներում... Էրզրումը, Դիարբեքիրը, Բիթլիսը, Վանը, Սեբաստիան, Տրապիզոնը և մյուս վիլայեթները դարձան արյունալի զաղանությունների ասպարեզ...»[2]

Վերջապես 1896 թվականին ջարդեր սկսվեցին կայսրության մայրաքաղաքում՝ Ստամբուլում։ Եվրոպական կառավարությունների ուշադրությունը հայկական հարցի վրա բևեռելու, մասնավորապես Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու մասին տված խոստումները հիշեցնելու նպատակով դաշնակ երիտասարդներից կազմված մի զինված ջոկատ 1896 թվականի օգոստոսի 14-ին հարձակում գործեց Կ. Պոլսի «Բանկ Օթոման» դրամատան վրա և գրավեց այն։ Թուրքական կառավարությունն առավելագույն չափով օգտագործեց առիթը և համարձակություն ունեցավ այս անգամ հենց մայրաքաղաքում, Եվրոպայի քթի տակ հայերի արյան նոր բաղնիք սարքել։ Մի քանի օրում զազանային հաշվեհարդարին զոհ գնաց 14 հազար պոլսահայ[3]։

Սուլթանը մայրաքաղաքի հայության ջարդին մասնակից դարձրեց ոչ միայն զորքն ու ոստիկանությանը, այլև Կ. Պոլսի ապաղասակարգայնացված խավերին։

---

[1] **А. Ф. Миллер**, Краткая история Турции, с. 107.

[2] *Տե՛ս* **И. И. Голобородько (И. Южанин)**, Старая и новая **Турция**, с. 251.

[3] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 4 դեկտեմբերի 1921 թ.։*

Պետք է ասել, որ ընդհանրապես հայ և կայսրության քրիստոնյա մյուս ժողովուրդների գլխին իսկական դժբախտություն էր թուրքական իրականությունից ծնունդ առած թուրք լյումպենը, կամ Կ. Մարքսի ասած՝ «թուրքական խուժանը»։ Բնութագրելով կիսաքաղաղ ու ապաղասակարգայնացված սոցիալական այդ խավին, Կ. Մարքսը գրել է. «Եվրոպայում Թուրք բնակչության գլխավոր հենարանը... Կ. Պոլսի և մի քանի այլ քաղաքների խուժանն է։ Այդ խուժանը գերազանցապես թուրքական ծագում ունի, և չնայած այն բանին, որ նրան աշխատանք տվողը գլխավորապես քրիստոնյա կապիտալիստներն են, այդ խուժանը, այնուամենայնիվ, մոլեռանդորեն պաշտպանում է իր երևակայական գերազանցությունը և խժդժություններ կատարելու իր իրավական իրավունքը, որը նրան, ի հակակշիռ քրիստոնյաների, տալիս է արտոնյալ կրոնին՝ իսլամին պատկանելը։ Շատ լավ հայտնի է, որ ամեն մի կարևոր coup de'tat-ի (պետական հեղաշրջման։— Հ. Ս.) ժամանակ կաշառելու և շոյելու միջոցով այդ խուժանին անհրաժեշտ է իրենց կողմը գրավել...»[1]

Արևմտյան Հայաստանի վրայով անցած արյունալի խորշակը, մուսուլմանական-թուրքական մոլեռանդությունը նշվում տարվա ընթացքում տարավ այն ամենը, ինչ ձեռք էր բերվել բազմադարյա աշխատանքով։ Ի. Գոլոբորոդկոյի տվյալներով 1894—1896 թվականների հայկական ջարդերի ժամանակ «նշիրվեց ու քարուքանդ արվեց մոտ 50 հազար տուն, ավելի քան 8 հազար գյուղ։ Հոշոտվեց 40 հազար տղամարդ, կին և երեխա, վիրավորվեցին մոտ 100 հազար, անօթևան և առանց գոյության միջոցների մնաց 300 000 հայ բնակիչ»[2]։ Տասնյակ հազարավոր հայեր Թուրքիայից փախչելով ապաստանեցին այլ երկրներում։ Ջարդերի ընթացքում միայն Կովկաս անցան 120 հազար արևմտահայ գաղթականներ։

Անդրադառնալով 1894—1896 թվականների հայկական ջար-

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, с. 6—7.

[2] **И. И. Голобородько (И. Южанин)**, Старая и новая Турция, с. 251.

Իր տվյալները Ի. Գոլոբորոդկոն հավանաբար քաղել է թուրքական աղբյուրներից։ Իրականում, ինչպես հաստատում են հայկական տվյալները և եվրոպացիների ուսումնասիրությունները, միայն սպանված հայերի թիվը հասել էր 300 հազարի։

դերին, սովետական թուրքագետ Բ. Դանցիգը նշում է. «Հայկական բնակչության ջարդերը վրդովմունք առաջ բերեցին ամբողջ աշխարհում։ Թուրքական կառավարության նկատմամբ միայն գերմանական դիվանագիտությունը բռնեց կարեկցական դիրք, իսկ Վիլհելմ II-ը ցուցադրաբար Աբդուլ Համիդ II-ին ուղարկեց իր նկարը՝ բարեկամական մակագրությամբ»[1]։ Ճիշտ է, որ Համիդին բացահայտորեն պաշտպան կանգնեց միայն կայզերական Գերմանիան, բայց ճշմարիտ է նաև այն, որ մեծ տերություններից ոչ մեկը չբռնեց թուրքերի ձեռքը, պաշտպան չկանգնեց սրածվող ժողովրդին։ Սովորություն դարձավ հայկական ամեն կոտորածի նախօրյակին Թուրքիայից պահանջել որևէ բան, կոտորածի ընթացքում նրան սպառնալ «բարենորոգումների» գործադրման պահանջով, կոտորածից հետո ստանալ ուզածը և լռել։ Հենց դրանից էլ առավելագույնս օգտվում էր Թուրքիան, որը դիմահակվելով մեկ այս, մեկ մյուս տերությանը, իր փրկությունը տեսնում էր եվրոպական ուժերի մրցակցային ոգին հրահրելու մեջ։ Սուլթանական կառավարությունը քաղաքական, տնտեսական, երբեմն էլ հողային զիջումներով կաշառում էր եվրոպական տերությունների կառավարություններին, ապա հակաքրիստոնեական ատելության իր ամբողջ թույնը կենտրոնացնելով «անհավատների» վրա, հերթով թափում էր հույների, հայերի, բուլղարների, մարոնիթների, ասորիների, կրկին հույների և կրկին ու կրկին հայերի արյունը։

Այդ տարիներին հայերի համար դժվարին կացություն էր ստեղծվել նաև Օսմանյան կայսրությունից դուրս, մուսուլմանական մի շարք երկրներում, որոնց արևելյան բռնապետները մոլեռանդ հավատարմություն դրսևորելով իսլամի դրոշին, անառարկելիորեն կատարում էին թուրքական սուլթան-խալիֆի հրահանգները։ Այսպես, օրինակ, թուրքական իշխանությունների պատվերով, անձամբ սուլթան Համիդի թելադրանքով 1897 թվականին Աֆղանստանի էմիր Աբդուլ Ռահման խանը ցրեց մայրաքաղաք Քաբուլի նախկինում լավ կազմակերպված, բայց այդ ժամանակ արդեն նվազած ու հոգեվարք ապրող հայկական գաղութը։ Պոլսից եկած հրահանգով հայությունից «մաքրվեց» իսլամի «սուրբ» հողերից մեկը։ Նախ հայերից խլվեց նրանց ունեցվածքը, ապա կարճ ժամկետ տրվեց թողնել երկիրը։

[1] Б. Данциг, Турция, Военное издательство, М., 1949, с. 30.

Հեռանալով Քաբուլից, աֆղանահայերը ցրվեցին Բրիտանական կայսրության տարածքներում, գլխավորապես ապաստան գտնելով Հնդկաստանի Փեշավար քաղաքում[1]։

Մեծ աղետը՝ առաջին զանգվածային կոտորածը[2], ահարկու ցնցում պատճառեց բովանդակ հայությանը։ Հալածական ժողովրդի համար օրերը մռայլ էին, քաղաքական հորիզոնը՝ բոլորովին մթնած։ Ամենուրեք ընդհանուր սարսափ, զարհուրանք, հուսահատություն... Իսկ սուլթան Համիդն իր էլլտրզի քեռշքի մեջ նստած տարված էր ճիվաղային հաղթանակների մեղրալուսնի տոնախմբությամբ։

[1] Քաբուլի հայ գաղութի ճակատագրի մասին տե՛ս Մեսրոպ Թաղիադյան, Պատմություն հին Հնդկաստանի, 1840, էջ 228։ Հարություն Թ. Տեր-Հովհաննիսյան, Պատմություն Նոր Ջուղայու որ յԱսպահան, գիրք Բ., 1881, էջ 111։ «Ազգասեր» հանդես, Դ. հատոր, թիվ 108, 1947, «Արև» (Կահիրե), 22 մայիսի և 8 հունիսի 1957։

[2] Բնականաբար կարող է հարց առաջանալ, թե ինչու մահմեդական թուրքերն իշխող դրության բերումով միջնադարում, այսինքն՝ խավարամտության և կրոնական անհանդուրժողականության դարերում չբնաջնջեցին իրենց քրիստոնյա հպատակներին, այդ թվում հայերին, թե ինչու հայության բնաջնջման գործին նրանք ձեռնամուխ եղան պատմական ոչ հեռավոր անցյալում՝ 1880-ական—1915 թվականներին, քաղաքակիրթ մարդկության անտարբեր աչքերի առջև։ Դրա պատճառներից մեկն այն է, որ թուրքերը, ինչպես վերևում ասվեց, զբաղված լինելով երկրներ նվաճելով և թալանով, խուսափում էին աշխատանքային գործունեությունից։ Բայց քանի որ առանց նյութական արժեքների ընդհանրապես անհնարին է մարդկային կենսագործունեությունը, ուստի նրանք հանդուրժում էին հայերի և մյուս քրիստոնյաների, այսինքն՝ իրենց համար աշխատող ու արտադրող ձեռքերի գոյությունը նույնիսկ իրենց տիրապետության ամենադաժան ժամանակներում (տե՛ս Մ. Սերոբյան, Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, էջ 208—209)։ Հայտնի է, օրինակ, որ էբու Սաիդ-Բահադուր խանը, տեսնելով, որ հայերը բազում տուրքերի անտանելի ծանրությանը չդիմանալով գաղթում են իրենց երկրից, 1239 թվականին Անի քաղաքի մզկիթի վրա մի հրովարտակ փորագրել տվեց, նրանց խոստանալով ամեն դյուրություն, հանգստություն և տուրքերի նվազում, միայն թե հրաժարվեն այլ տեղեր մեկնելուց։ Բայց հրովարտակը ազդեցություն չգործեց Անիի և շրջակա տարածքների հայության վրա, որոնք խորապես համոզվել էին, որ թուրքերի հետ համատեղ կյանքն անհնարին է այլևս։ Եվ նրանք ճանապարհ ընկան հեռավոր ու անծանոթ եզերքներ։ Բայց, ինչպես նշում է հետազոտողներից մեկը, «առանց հայու իրենք ալ չապրեցան հայու արյունով լուացած երկրին մեջ։ Թշուառացած, դժբախտացած անոթի գայլերու պես քաշուեցան ուրիշ տեղեր՝ իրենց շահատակությունները շարունակելու համար, թողնելով երկիրը անտեր ու ամայի» («Անահիտ», 1911, էջ 21)։

Այս պայմաններում արևմտահայ մի շարք գավառներում, այդ թվում Տարոնի գավառում շարժում սկսվեց, որի նպատակը դավանափոխությունն էր[1]։ Հայերի մի մասը «յուսալով ապահովութեան յենակետ մը գտնել», պատրաստ էր զոհաբերել պապենական հավատամքը և ընդունել ռուսական օրթոդոքս եկեղեցու դավանանքը՝ հուսալով ստանալ ռուսական պետության և ռուսական եկեղեցու ավելի ակտիվ բարոյական աջակցությունը՝ գեթ մեղմելու համար հետզհետե բաղմապատկվող զուլումները[2]։

Իրավի, հայ ժողովուրդը երկար ապրեց թուրքական անարգ տիրապետության տակ, կարողացավ դիմագրավել իրեն վիճակված անողոք ճակատագիրը։ Ճիշտ էր ասվում, թե «Թուրքիայում հայ ծնվելը դժբախտություն է, հայ ապրելը՝ հերոսություն»։ Հարյուրամյակներ շարունակ հայ ժողովուրդը իր գոյությունը պահպանում էր տաժանակիր աշխատանքով, տառապանքի, ծով արցունքի գնով, իր վաստակի մեծ մասը տալով թուրք դավթիչներին, լցնում նրանց որկորը, ապրեցնում հարազատ հայրենիքը բռնադատողներին, հարստացնում թուրքական պետության գանձարանը։ Եվ որպես դրա վարձատրություն, այդ պետությունը հայ ժողովրդին թաթախեց արյան լճերի մեջ։

Ծայրահեղ հուսահատության և ընդհանուր լքումի այս անտանելի մթնոլորտում միակ մխիթարությունը հայ կտրիճ ֆիդային էր, խիզախ հայդուկը՝ ինքնամոռաց ու անսակարկ, որը տուն-տեղ թողած, ընկերացած հրացանին, ապավեն ունենալով հարազատ լեռներն ու անտառները, վախ ու դադար չունենալով կռիվ էր տալիս թուրքական բռնակալության դեմ՝ վրեժի անմար կրակը սրտում։

Հայկական կոմիտեներն իրենց ուժերը կենտրոնացրին մի շարք կարևոր վայրերում՝ բնակչությունը պաշտպանելով քրդական ցեղերի ու զորքի գազանություններից։ Կոտորածների խանձարուրից ծնունդ առան հայդուկային նոր ջոկատներ, որոնք շատ տեղերում փայլուն կերպով կատարեցին իրենց խնդիրը։ Պատահական չէ, որ բոլոր այն վայրերում, որտեղ կային անձնազոհ ֆիդայիներ, թուրքերը և հատկապես քուրդ հրոսակները, չկարողացան շատ զոհեր խլել։ Ըստ որում Թուրքիայի ողջ տարածքի վրա միայն Տարոնի աշխարհն էր, որ զերծ մնաց ջարդերից։ Պատճառն այն է, որ այնտեղ էին գործում հայդուկ Անդրանիկ Օզանյանը և նրա նման առյուծասիրտ քաջեր, որոնք փակել էին արյունռուշտ աշիրաթների ջուրդի ու թալանի ախորժակը։ Սասունում նկատելի կորուստներ տալով, ջարդարարները հետագա մի քանի տարիներին նույնպես սիրտ չէին անում կռվի մեջ մտնել Տարոնի դինյալների հետ։

Թուրքական իշխանություններն ու ջարդարարները իրենց արյունոտ արարքները փորձում էին արդարացնել նրանով, թե իրենք ստիպված են եղել «հայերին պատժել» և նրանց «պատժել են» պետության դեմ ապստամբելու համար։

Բայց ինքը՝ թուրքական կառավարությունը, շատ լավ գիտեր, որ հայերը զենքի են դիմում ստիպված, ճարահատյալ, ակամայից, առանց բուռն ցանկության, իբրև ինքնապաշտպանության և փրկության վերջին միջոցի։ Արևմտահայության միակ ձրգտումը բարենորոգումներն էին, այսինքն՝ ապրելու և աշխատելու հնարավորություն ունենալը։ Հայերը թշնամանք չունեին թուրքերի, իբրև ժողովրդի, հանդեպ։ Դեռևս հայ ազատագրական շարժման սկզբնավորման շրջանում իր հերոսներից մեկի բերանով Րաֆֆին ասում էր. «Եթե մեզ հանգիստ թողնեն, եթե մեր ընտանիքը չանպատվեն, եթե մեր վաստակը մեր ձեռքից չխլեն, եթե մեզ հետ մարդու նման վարվեն և անասունի պես չտանջեն, այն ժամանակ մենք գոհ կլինենք։ ... Բռնակալը ինքն էր պատրաստում իր համար թշնամիներ... Եթե թուրքը այսպես չվարվեր մեզ հետ, մենք մինչև անգամ կսիրեինք նրան, թող նա մեր մսից և արյունից չլիներ»[1]։ Ասա՝ ժողովրդի համար զենքեր հայթայթելը «ոչ թե ապստամբության նպատակ ունե, ... այլ՝ անձնապաշտպանության»[2]։ Այո, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման սկզբնավորման, այդ շարժման գաղափարախոսության առաջացման, հայդուկային շարժման ծագման, Սասնո այսպես կոչված «ապստամբությունների» միակ դրդա-

---

[1] Տե՛ս Սարգիս և Միսակ Բդէեաններ, Հարազատ պատմություն Տարոնոյ, էջ 222—223։

[2] Տե՛ս Արսեն Մարմարեան, Ջոր. Անդրանիկ և իր պատերազմները, 1920, Պոլիս, էջ 38։

[1] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. IV, էջ 311—312։

[2] Նույն տեղը, էջ 401։

պատճառը թուրքական պետության անմարդկային և բարբարոսական վերաբերմունքն էր խաղաղասեր և շինարար հայ ժողովրդի հանդեպ։

Ապստամբության միջոցով Օսմանյան կայսրությունից Արևմտյան Հայաստանի անջատման և անկախ պետության ստեղծման հարց չէին դնում նաև հայ քաղաքական կուսակցությունները։

Հայտնի է, որ չնայած հայության անտանելի կացությանը, առաջին քաղաքական հայ կազմակերպությունը, կամ ավելի ճիշտ՝ հոսանքը, հանձինս արմենականների, իր սկզբնավորման հենց սկզբից հանդես էր գալիս ոչ թե Օսմանյան կայսրությունից Հայաստանը անջատելու, ազգային անկախություն ձեռք բերելու պահանջներով, այլ օսմանյան ընդհանուր հայրենիքի բարեկարգության ծրագրով։ Շարժման ղեկավարներից Մ. Փորթուգալյանն իր ծավալած գործունեությունը դիտում էր իբրև «յուր ազգի և օսմանեան տերութեան զոյգ շահերին նուիրուած գործ»։

«Հնչակ» կուսակցությունը նույնպես, դնելով արևմտահայության ազատագրության հարցը, նպատակ չուներ Արևմտյան Հայաստանն անջատել Օսմանյան կայսրությունից և ստեղծել անկախ հայկական պետություն։ Կուսակցությունը մի կողմից ձգտում էր Թուրքիայի կազմում ձեռք բերել հայկական ինքնավարություն՝ հայության վիճակը տանելի դարձնելու համար, մյուս կողմից ցանկանում էր Թուրքիայում հաստատված տեսնել մանրբուրժուական ըմբռնումով սոցիալիստական կարգեր։ 1894—1896 թվականների հայկական ջարդերից և հատկապես Սասունի 1904 թվականի ինքնապաշտպանական կռիվներից հետո միայն «Հնչակը» հակվեց դնելու հայկական անկախ պետություն ստեղծելու հարցը։

Եթե «Հնչակը» հետագայում այնուամենայնիվ դրեց ինքնուրույն հայկական պետություն ստեղծելու հարցը, ապա դաշնակցությունը սկզբից մինչև վերջ հաստատ մնաց Օսմանյան ֆեդերացիայի սկզբունքին։ Նրա ծրագրում խոսք անգամ չկար Թուրքիայից անջատվելու և անկախ Հայաստան ստեղծելու մասին[1]։

[1] Հատկանշական է, որ Հայաստանի անկախության պահանջը դաշնակցությունը առաջին անգամ պաշտոնապես առաջադրել է 1919 թվականին ընդունած իր ծրագրի մեջ, այսինքն՝ այն ժամանակ, երբ արդեն de facto գոյություն ուներ Հայաստանի «անկախ» հանրապետությունը։

Այսպիսով, աբդուլհամիդյան ջարդարարների կողմից հայերին հարուցված մեղադրանքը, թե նրանք Օսմանյան կայսրությունից անջատվելու նպատակ ունեն, բոլորովին չէր համապատասխանում իրականությանը։

Չնայած պարբերաբար սանձազերվող կոտորածներին ու անլուր հարստահարումներին, հայկական հողերի պլանաչափ զավթումներին և չնայած այն բանին, որ այդ բոլորի հետևանքով հարազատ երկրից հայերի մասսայական արտագաղթ էր ծայր առել, այնուամենայնիվ, 19-րդ դարի վերջին հայ ժողովրդի հիմնական մասը շարունակում էր ապրել հայրենի բնաշխարհում, ամուր կառչած հարազատ լեռներին ու դաշտերին՝ միշտ հուսո կայծը սրտում, անսասան պահելով կենսունակության կովանները։

Աբդուլհամիդյան սարսափի ռեժիմն ավելի կամ պակաս ուժգնությամբ շարունակվեց նաև մեծ բռնապետի տիրապետության հետագա բոլոր տարիներին։ Ճիշտ է, այդ ժամանակաշրջանում 1895—96-ի ղանգվածային կոտորածները չկրկնվեցին, սակայն դրանց մղձավանջը շարունակ թառած էր մնում բազմապիսի կեղեքումների և բռնությունների երեսից հյուծվող ու հալվող արևմտահայ ժողովրդի գլխին։

Թուրքական սուլթանը մահմեդականներին հրահրում էր ոչ միայն հայերի, այլև կայսրության մյուս քրիստոնյա ժողովուրդների դեմ։ Այդ տարիներին նրա հրահրմամբ կոտորածներ եղան Մակեդոնիայում, Կրետե կղզում և այլուր։ Իր դաժանություններով Աբդուլ Համիդ II-ը վաստակեց «կարմիր սուլթան», «արյունոտ սուլթան» մականունները։ Վ. Ի. Լենինը նրան անվանել է «թուրքական Նիկոլայ II»։

Կրոնական անհանդուրժողականության մթնոլորտը, սակայն, կարիքից ու թշվառությունից չէր կարող փրկել թուրքերին, արաբներին, քրդերին, կայսրության մյուս մահմեդական ժողովուրդներին։ Ամեն անգամ, երբ մուսուլմանական ֆանատիզմի բորբոքումից հետո վրա էր հասնում հարաբերական խաղաղության մի շրջան, անմիջապես ցցուն երևում էր, որ մահմեդական կրոնն անկարող է մուսուլման ժողովուրդներին զերծ պահել օսմանյան կարգերի բռնադատումից։ Թուրքական մակաբույծ պետությունը

շարունակում էր իսկական չարիք մնալ կայսրության բազմացեղ, բազմալեզու և այլադավան բոլոր ժողովուրդների համար։

Քանի որ Աբդուլ Համիդ II-ը և նրա շրջապատը չէին հրաժարվել Օսմանյան կայսրության տարածքների ընդլայնման գաղափարից, ուստի իսլամիզմը՝ կայսրության գաղափարական-քաղաքական հիմնական «սուրբ» գաղափարախոսությունը, գնալով ձեռք էր բերում ռեակցիոն նոր գծեր, որոնք նրան տանում էին դեպի պանիսլամիզմ (համիսլամականություն)։ Իսլամիզմի մեջ հատկապես ուժեղացան այն տենդենցները, որոնց սնող գաղափարը թելադրում էր, թե թուրքական սուլթանը, իբրև մուսուլմանների խալիֆ, իշխանություն ունի ո՛չ միայն Օսմանյան կայսրության հպատակների, այլև ամբողջ աշխարհի մուսուլմանների վրա։

Խալիֆի գլխավորությամբ համաշխարհային մուսուլմանական պետություն ստեղծելու գաղափարը նոր չէր. այն առաջ էր քաշվել դեռևս իսլամի գոյության առաջին տասնամյակներին։ 7-րդ դարի կեսերից սկսած այն դարձել էր արաբների նվաճողական պատերազմների գաղափարական դրոշ։

«Օմարի ժամանակ էր,— գրում է գաղութահայ մտավորական Լևոն Մարտիրոսյանը,— որ իսլամը դուրս եկավ Արաբիոյ սահմաններեն իբրև զինուած ոյժ և հրով ու սրով իր տիրապետությունը տարածեց Սիրիոյ, Իրանի, Պաղեստինի, Հայաստանի և Եգիպտոսի վրայ։ Այս նուաճումները կատարուեցան անհավատալի արագությամբ։ Ամբարտավան Բյուզանդիոնի ուժը չկրցավ թումբ կանգնեցնել իսլամներու նորելուկ բանակներուն առջև, որոնք ամեն տեղ յաղթանակներ կը տանեին «Ալլա՜հ էքպար» («Ո՛վ մեծն Աստուած») աղաղակներով։ Երեվոյթապես կրոնական մոլեռանդությունն էր մահմեդական ամբոխը հրահրողը, բայց իրապես անոր հիմքը ընչաքաղցությունն էր։ «Անհավատները» հարստացեր էին, հավատացեալները պետք էր տիրանային անոնց հարստություններուն. այդպես էր Ալլահին հրամանը»[1]։

Համաշխարհային մուսուլմանական պետություն ստեղծելու գաղափարը չհաջողվեց իրականացնել միջնադարում, նույնիսկ Արաբական և Օսմանյան կայսրությունների հզորության շրջանում։ Այդ գաղափարը, որ հետագա դարերում խլացվել էր պատմության ռեալ ընթացքով, աբդուլհամիդյան ժամանակաշրջանում նորից կենդանություն առավ։

Նոր ժամանակներում պանիսլամիզմի խոշորագույն քարոզիչներ դարձան Ջեմալ Աֆղանին, Աբդուլ Գուդան և ուրիշներ։ Սուլթան Համիդը մեծ ակնածանք էր տածում հատկապես նորագույն պանիսլամիզմի նշանավոր գաղափարախոս Ջեմալ-ադդին ալ-Աֆղանու (1839—1909) նկատմամբ։ Սա տարիներով «հյուր» լինելով Համիդի պալատում, առատ «նվերներ» էր ստանում սուլթանից պանիսլամական ակտիվ պրոպագանդա կազմակերպելու համար[1]։

Մուսուլմանական «Մանար» հանդեսում պարբերաբար լույս ընծայած հոդվածներում, առանձին գրքերում, մեշիդներում կարդացած քարոզներում Ջեմալ Աֆղանին և մյուսները հիմնավորում էին նորագույն պանիսլամիզմի գաղափարները։

Ելնելով այն գաղափարից, թե իսլամը իր հավատացյալների համար ապահովում է վերազգային և վերդասակարգային ընդհանրություն, նորագույն պանիսլամականները գտնում էին, թե պատմության մեջ եղած բոլոր պետական և քաղաքական միավորումներից ամենակատարյալը մահմեդական կրոնապետության սկզբունքներով ստեղծված օսմանյան պետությունն է՝ սուլթանի գլխավորությամբ։ Հիմք ընդունելով այդ միավորումը, աշխարհի բոլոր ազգերի մուսուլմանները պետք է միավորվեն համաշխարհային իսլամական պետության մեջ՝ այս դեպքում նույնպես գլուխ ունենալով Բարձր Դուռը, սուլթան-խալիֆը, որի անձի մեջ պետք է միաձուլվեին համաշխարհային մուսուլմանական պետության և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր իշխանությունը[2]։ Նոր պետության շրջանակներում պետք է միավորվեին Օսմանյան կայսրությունը, Իրանը, Աֆղանստանը, Հընդկաստանի մուսուլմանական բնակչություն ունեցող մարզերը, ամբողջ Միջին Ասիան, Ինդոնեզիան, Աֆրիկայի մի շարք երկրներ։ Պահպանելով ներքին ինքնուրույնությունը, արևելքի ֆեոդալական այդ պետությունները հոգևոր և գաղափարական տե-

[1] Լևոն Մարտիրոսեան, Դասակարգային կռիվներու գիծը ազգերու պատմութեան մէջ, էջ 94։

[1] Տե՛ս «Панисламизм и пантюркизм», «Мир ислама», т. II, 1913, вып. VII, էջ 559—566։

[2] Տե՛ս «К вопросу о панисламизме», «Мир ислама», т. II, 1913, вып I, էջ 1—12, **А. Аршаруни и Х. Габидуллин.** Очерки панисламизма и пантюркизма в России, М., 1931, էջ 4;

սակետից անառարկելիորեն պետք է ենթարկվեին սուլթան-խալիֆին[1]։

Աբդուլ Համիդը, որ կրում էր խալիֆի տիտղոսը, հույս ուներ, որ առաջինը հենց իրեն կվիճակվի դառնալ ապագա համաշխարհային իսլամական պետության ղեկավար։

Խոսելով նորագույն պանիսլամականության մասին, հարկ է նշել, որ քրիստոնյա և մուսուլման մյուս ժողովուրդների հանդեպ այն ավելի անհանդուրժող, ավելի ագրեսիվ դրսևորումներ ունեցավ, քան միջին դարերի պանիսլամականությունը։

Չնայած դրան, պանիսլամիզմի նորագույն տարբերակը աջակցություն էր գտնում Մեծ Բրիտանիայի կողմից և պատահական չէ, որ այդ պատճառով պանիսլամիզմի հակառակորդները երբեմն այդ գաղափարախոսությունը «անգլիական պանիսլամիզմ» էին անվանում։ Քանի որ Թուրքիան այդ շրջանում Անգլիայի վասալն էր, ուստի նրա տարածքների ընդլայնումը, նրան մեծ թվով երկրների միացումը փաստորեն Բրիտանական կայսրության միջազգային հեղինակության բարձրացում կնշանակեր։

Պանիսլամիզմի գաղափարը, որ տեսականորեն հեշտ ընկալելի էր և թվում էր, թե կյանքում կիրականացվի առանց մեծ դժվարությունների, գործնականում սակայն անհնարին եղավ իրականացնել դասակարգային և ազգային քաղաքական շահերի, մուսուլմանական և քրիստոնեական պետությունների խճճված փոխհարաբերությունների բարդ միահյուսման իրադրության մեջ։

19-րդ դարի վերջին քառորդում մուսուլմանական երկրներն ավելի ու ավելի մեծ չափով էին գաղութային կախման մեջ ընկնում օտարերկրյա կեղեքիչներից։ Այդպիսի պայմաններում իսլամ հոգևորականությունը, ամբողջությամբ վերցրած մահմեդական կրոնը սկսեցին հակասական դեր խաղալ։

Մի կողմից մահմեդականությունն օբյեկտիվորեն խոչընդոտներ էր ստեղծում եվրոպական գաղութարարների համար, որոնք ձգտում էին նվաճել Արևելքը։ Հակագաղութային շարժումների որոշ ձևեր իսլամի գաղափարախոսության մեջ գտնում էին իրենց նկրտումների և լոզունգների կրոնական արտահայտությունը։

[1] Տես M. T. Стеванян. Ислам в философской и общественной мысли зарубежного Востока. Изд-во «Наука», Москва, 1974, էջ 89—95։

Մուսուլմանական հոգևորականությունը, ապա և պանիսլամականության քարոզիչները լոզունգներ էին հռչակում, որոնք ինչոր չափով նպաստում էին օտարերկրյա նվաճողների դեմ արևելյան ժողովուրդների միավորմանը։ Բայց հենց դրանով էլ սպառվում էր իսլամի և պանիսլամիզմի դրական լիցքը։ Այդ լիցքը չնչին էր այն բացասական հետևանքների համեմատ, որ թողնում էր իսլամը մուսուլմանական միլիոնավոր զանգվածների վրա։

Նախ ասենք, որ գաղութային տերությունների նվաճողական քաղաքականությունը լուռ պաշտպանություն էր գտնում ֆեոդալական տներից սերված առավել ռեակցիոն բարձրաստիճան հոգևորականության կողմից։ Օգտվելով մասսաների վրա ունեցած իր ազդեցությունից, այդ հոգևորականությունն ամեն ինչ անում էր, որպեսզի նրանց մեջ պահպանի հնազանդության ոգին, և հենց դրանով էլ օբյեկտիվորեն աջակցում էր գաղութարարներին։

Պանիսլամականները նույնիսկ Արևելքը նվաճող գաղութարարների դեմ պայքարի լոզունգներ հռչակելիս խեղաթյուրում էին ռեալ գոյություն ունեցող դասակարգային ու ազգային հարաբերությունները, իսլամը հակադրում քրիստոնեությանը, Արևելքի կուլտուրան ու քաղաքակրթությունը՝ եվրոպականին։ Հենց այդ պատճառով պանիսլամիզմն օբյեկտիվորեն հարվածում էր մուսուլման ժողովուրդների հակագաղութային ազատագրական շարժմանը։

Ասիայի և Աֆրիկայի մուսուլմանական երկրների շահագործող դասակարգերը, բնականաբար, միատարր չէին. ֆեոդալակղերական վերնախավի կողքին ձևավորվում էր երիտասարդ բուրժուազիան։ Ուստի այս երկու հասարակական խմբերը տարբեր մոտեցում ունեին պանիսլամիզմի հանդեպ, յուրաքանչյուրն այդ գաղափարախոսությանը մոտենում էր՝ ելնելով իր դասակարգային շահերից։

Ֆեոդալները և մուսուլմանական կղերը պանիսլամիզմը օգտագործում էին իբրև դրոշ նոր բարձրացող բուրժուազիայի դեմ մղվող պայքարում։ Նրանք այդ բուրժուազիային ներկայացնում էին որպես մի դասակարգ, որը, պաշտելով փողը, միաժամանակ մերժում է մուսուլմանական քաղաքակրթության արժեքները, խախտում իսլամիզմի դարերով սրբագործված կանոնները, ոտնատակ տալիս շարիաթի սուրբ սկզբունքները։ Նրանք

փորձում էին տգետ ամբոխի կրոնական մոլեռանդությունն ուղղել արդեն իրենց մրցակիցը դարձած բուրժուական խավերի ու դասերի դեմ։ Միաժամանակ կղերաֆեոդալական վերնախավերը շատ հաճախ փորձում էին մուսուլման մասսաներին համոզել, թե նոր բարձրացող բուրժուազիան եվրոպական տերությունների դաշնակիցը, գործակալն է, որն ամեն կերպ աջակցում է մահմեդական աշխարհը նվաճելու համար այդ տերությունների սկսած պայքարին։

Ի տարբերություն մուսուլմանական երկրների ֆեոդալա-կղերական վերնախավերի, որոնք պանիսլամիզմը խորամանկորեն օգտագործում էին իրենց դասակարգային մրցակցի՝ նոր բարձրացող մուսուլմանական բուրժուազիայի դեմ, վերջինս, ընդհակառակը, չկարողացավ պանիսլամիզմն օգտագործել ֆեոդալների դեմ մղվող պայքարում։ Դրա փոխարեն նա պանիսլամիզմը, իբրև զենք, հաջողությամբ օգտագործում էր եվրոպական բուրժուազիայի դեմ մրցակցային պայքարում։

Ինչ վերաբերում է մուսուլմանական երկրների ժողովրդական մասսաներին, ապա նրանք չէին կարող պանիսլամիզմն ծառայեցնել իրենց դասակարգային նպատակներին, այն չէր կարող նրանց համար պայքարի գաղափարախոսություն դառնալ ընդդեմ իսլամի դրոշով հանդես եկող ֆեոդալների, առևտրականների և վաշխառուների։

Իսկ ի՞նչ դիրք բռնեց թուրք ազգային բուրժուազիան սուլթան Համիդի կողմից կայսրության մեջ ֆանատիկ իսլամականության բորբոքման և ռեակցիոն ու ագրեսիվ նորագույն պանիսլամիզմի նկրտումների հանդեպ։

Հենց սկզբից ասենք, որ թուրք բուրժուազիան ողջունեց և՛ մեկը, և՛ մյուսը։

Թուրք բուրժուազիան ձգտում էր իսլամն առավելագույն չափով հարմարեցնել իր դասակարգային շահերին, երկրում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը այնպես, որպեսզի կրոնական դոգմաները նրան չխանգարեն ուժեղացնելու վարձու աշխատանքի շահագործումը, ավելացնելու ապրանքների արտադրությունն ու վաճառքը, մեծացնելու շահույթը։ Նա շահագրգռված էր նաև այն բանում, որպեսզի մահմեդական կրոնը, մուսուլմանական մոլեռանդությունն իրեն չխանգարեն անարգել կերպով ֆինանսական և այլ կարգի գործարքների մեջ մտնելու եվրոպացի «գյավուրների» հետ։

Կայսրության մեջ իսլամի դերի բարձրացումը նա դիտում էր իբրև իր ազգային դիրքերի ամրապնդման հզոր միջոց։ Անդիջում ատելություն տածելով երկրի քրիստոնյա բուրժուազիայի նկատմամբ, նա գտնում էր, որ իսլամն այն ուժն է, որի միջոցով հնարավոր է կրոնական անհանդուրժողականության և ատելության մթնոլորտ ստեղծել իր մրցակցի շուրջը, խարխլել նրա տնտեսական դիրքերը, նրան դուրս մղել գործունության ասպարեզից։

Վերջապես, մուսուլմանական մոլեռանդության բորբոքումը թուրքական բուրժուազիայի համար հատկապես կարևոր նշանակություն էր ստանում Եվրոպայում բանվորական մասսայական շարժման առաջացման ու զարգացման առթիվ։ Չնայած այդ շարժումն իր ծագման հենց սկզբից հանդես էր եկել իբրև գաղութային ու կախյալ երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման բնական դաշնակից, բայց և այնպես երկրի կղերաֆեոդալական վերնախավերի օրինակով թուրքական բարձրացող բուրժուազիան ևս եվրոպական սոցիալիստական շարժումը համարեց «զուտ քրիստոնեական» շարժում և այն, ինչպես եվրոպական հասարակական մտքի և հասարակական գործունեության համարյա մյուս բոլոր դրսևորումները, հայտարարեց թշնամի իսլամին։ Այդ եղանակով թուրք բուրժուազիան փորձում էր պատնեշել դասակարգային պայքարի մասին ուսմունքները, թույլ չտալ օսմանյան մուսուլմանական «միասնական» հասարակության երկփեղկում, խանգարել մուսուլման աշխատավոր մասսաների դասակարգային գիտակցության զարգացմանը։

Ինչ վերաբերում է կայսրությունից դուրս մուսուլմանական երկրների վրա թուրքական սուլթանի իշխանության տարածման գաղափարին, ապա թուրք ազգային բուրժուազիան այդ հեռանկարով ոգեշնչված էր ոչ պակաս, քան թուրքական ֆեոդալական արիստոկրատիան։ Նրա երևակայությունը բորբոքվում էր այն մտքից, որ համաշխարհային մուսուլմանական պետության կազմավորումը գլուխ բերելու դեպքում կստեղծվի անծայրածիր, ընդարձակ ներքին շուկա, որտեղ ինքը կթելադրի իր կամքը՝ իբրև ընտրյալ ազգի բուրժուազիա։

Այնուհետև, թուրք ազգային բուրժուազիան գտնում էր, որ պանիսլամիզմի գաղափարները կարող են մուսուլմանական երկրների ուժերը և մուսուլմանական Արևելքի ողջ հզորությունը

հակադրել եվրոպական տերությունների բռնությանը, եվրոպական կապիտալին, որը հալածում է թուրքական ազգային կապիտալին։ Բայց պանիսլամիզմի գաղափարը նրանց համար ավելի կոնկրետ, ավելի պրակտիկ նպատակ էր հետապնդում. պանիսլամիզմը կայսրության մահմեդական ժողովուրդների՝ լազերի, ալբանացիների, քրդերի և արաբների մեջ ամրապնդում էր այն համոզումը, որ թուրքական սուլթանը ոչ միայն իրենց աշխարհիկ տերն է, այլև բոլոր մուսուլմանների հզոր խալիֆը, որին պետք է ենթարկվել անառարկելիորեն, և անթերի կատարել նրա բարձր կամքը։

Սուլթան Համիդը և նրա համախոհները հետևում էին, որպեսզի պանիսլամիզմի գաղափարախոսները չհետևեն քրիստոնեական եկեղեցու ռեֆորմատորների օրինակին, չխոտորվեն ուղղափառ իսլամի ուսմունքից, նրա դոգմաները վերանայելու փորձ չանեն։

Սակայն, չնայած Համիդի գերագույն զգոնությանը և ձեռնարկած միջոցներին, մահմեդականների մեջ ծայր առավ բարենորոգչական շարժում, որն ըստ էության ձեռնտու էր մուսուլման բուրժուազիային, և այդ իսկ պատճառով նրա առավել առաջադեմ ներկայացուցիչները սատարում էին դրան։

Շարժման գլխավոր նպատակն էր՝ այնպես բարեփոխել իսլամը, որ այն կանխորոշեր մուսուլմանական կրոնի տարբեր ճյուղավորումների և աղանդների վերամիավորումը՝ արդիականացված, «լուսավորյալ», ժամանակակից քաղաքակրթությանը չհակասող դոգմաների հիմքի վրա։

Ինչպես հայտնի է, դավանաբանական-դոգմատիկ տեսակետից իսլամի տարբերիչ գծերից մեկը նրա միաստվածության հատուկ ընդգծվածությունն ու հետևողականությունն է։ «Չկա աստված Ալլահից բացի» բանաձևումն իրոք որ միաստվածության հավատի դավանման չափանիշ է։ Բայց այդ ամենը միայն առաջին հայացքից, միայն արտաքնապես։ Իրականում եթե իր ծագման սկզբում իսլամը միաստվածության հանդեպ ավելի մեծ հետևողականություն էր հանդես բերում, քան մյուս համաշխարհային կրոնները, ապա ժամանակի ընթացքում նա կորցրեց այդ հատկությունը։ Աստծու հակոտնյա սատանայի, հրեշտակների ու դևերի նկատմամբ հավատը, սրբերի պաշտամունքը, այն ամենը, ինչ բնութագրում է բոլոր համաշխարհային կրոնների միաստվածության պայմանականությունն ու ան-

հետևողականությունը, հետագա դարերում իսլամի մեջ ծավալվեց այնքան լայնորեն, որ այդ տեսակետից նա հավասարվեց քրիստոնեությանն ու բուդդայականությանը։

Եվ ահա, 19-րդ դարի վերջին քառորդում, իսլամում սկսվեցին աղանդավորական, բարենորոգչական նոր շարժումներ, որոնց գաղափարախոսները իսլամի «զարթոնքի» մեջ տեսնում էին Արևելքի ժողովուրդների տեխնիկական և կուլտուրական դարավոր հետամնացության վերացման միջոցը։

Բարենորոգչական նոր շարժումն այնքան տպավորիչ էր, որ նրա ոլորտից չկարողացավ դուրս մնալ նույնիսկ նորագույն պանիսլամիզմի հիմնադիր Ջեմալ-ադ-դին ալ-Աֆղանին։

Ծայր առած բարենորոգչական շարժման մեջ հենց սկզբից նշմարվեց երկու ուղղություն՝ պահպանողականների և արմատականների։ Պահպանողականների առավել խոշոր ներկայացուցիչը դարձյալ Ջեմալ Աֆղանին էր։ Սրա ռեֆորմիզմը շատ էր տարբերվում մուսուլմանական ռեֆորմացիայի մյուս գործիչների քարոզած նպատակներից. այն սահմանափակ էր և կոչված էր ծառայելու Օսմանյան կայսրության կղերաֆեոդալական վերնախավերի շահերին։ Ջեմալ Աֆղանին գտնում էր, որ հասարակական վերափոխումների համար սկսած պայքարի կենտրոնը քաղաքական և տնտեսական կյանքի ոլորտներից պետք է փոխադրել կրոնական բարեփոխումների բնագավառ։ Իսկ կրոնական բարենորոգում ասելով նա սահմանափակվում էր միայն իսլամն իր նախնական տեսքին բերելու կոչերով։ Նրա կարծիքով մահմեդական կրոնը պետք է վերադառնար այդ հավատի գոյության առաջին հարյուրամյակների ժամանակներում ստեղծված սկզբունքներին՝ պարզ կենցաղին, պարզ սովորություններին, ասկետիկ կյանքին, վայելքներից հրաժարվելուն, սկզբունքներ, որոնք միանգամայն անընդունելի էին մուսուլմանական բուրժուազիայի համար[1]։

Պայքարը քաղաքական և տնտեսական կյանքի միջավայրից կրոնական ռեֆորմների բնագավառ փոխադրելու պահանջը թելադրված էր մուսուլմանական աշխարհի ներքին «անդորրը» պահպանելու մտահոգությամբ։ Դրանով իսկ նորագույն

[1] Ջեմալ-ադ-դին ալ-Աֆղանու՝ որպես բարենորոգչի հայացքների մասին տե՛ս **М. Т. Степанянц**, Ислам в философской и общественной мысли зарубежного Востока, էջ 89—95:

պանիսլամիզմի գաղափարախոսները ժողովրդական մասսաների ուշադրությունը շեղում էին ռեակցիոն դասակարգերի և նրանց շաղկապից օտարերկրյա իմպերիալիստների դեմ մղվող պայքարից։

Այդ առումով եգիպտական շեյխ Մուհամմեդ Աբդոն (1834—1905) ավելի հեռուն էր գնում։ «Տրակտատ միաստվածության մասին», «Ղուրանի մեկնաբանություններ» աշխատություններում Աբդոն, ի տարբերություն Ջեմալ-ադ-դին ալ-Աֆղանու, պահանջում էր այնպես արդիականացնել իսլամը, որպեսզի այն լիովին տեղավորվի կապիտալիստական հարաբերությունների նոր պայմաններին, որի մեջ լայնորեն ներքաշվել էր Եգիպտոսը։ Նա որում, ինչպես և մյուս բարենորոգիչները, նա նույնպես անում էր բայլափոխի վկայակոչում էր «անսխալական աստվածային գրքի» Ղուրանի հեղինակությունը, այն պաշտպանում մեծ ջերմեռանդությամբ։ Ջեմալ Աֆղանու նման Աբդոն հավատացյալներին կոչ էր անում հետևել «մաքուր» իսլամին՝ նրա վաղնջական ձևով։ Իրականում սակայն Աբդոն և մյուս բարենորոգիչները վերանայում էին «սուրբ գիրքը», փաստորեն իսլամը վերածնում նրա դուրանական ձևով։ Աբդոն ուղղակի պնդում էր, թե անգլիական գաղութարարների դեմ քաղաքական, առավել ևս ռազմական պայքարը միայն վնաս կարող է բերել։ Ավելին, նա գտնում էր, որ իսլամի վերածնունդյան և նորացման գործը հաջողությամբ գլուխ բերելու նպատակով պետք է օգտվել անգլիացիների աջակցությունից և օգնությունից։ Աբդ քաղաքը, բնականաբար, չերմ արձագանք էր գտնում անգլիական իմպերիալիստների կողմից, որոնք ամբողջովին կիսում էին մուսուլմանական մոդերնիստ բարենորոգիչների տեսակետները։ Անգլիացիների օգնությամբ գրաված Եգիպտոսի զբաղավոր մուֆտի, Աբդոն լայն հնարավորություն ստացավ ազդելու երկրի կրոնական-գաղափարախոսական և քաղաքական կյանքի վրա։

Բարենորոգչական շարժման մյուս՝ արմատական ուղղության ներկայացուցիչները, որպես կանոն, շեղվում էին պանիսլամիզմի ավանդական գաղափարներից, իսկ նրա առանձին գործիչներ էլ ըստ էության մերժում էին պանիսլամիզմի ծավալապաշտական կողմերը։ Այդ տեսակետից հատկապես հատկանշական էր Հնդկաստանի մի շարք մուսուլմանական գործիչների վերաբերմունքը պանիսլամիզմի հանդեպ։

Հնդկաստանը 19-րդ դարի երկրորդ կեսին Եգիպտոսից հետո դարձել էր մուսուլմանական ռեֆորմացիայի երկրորդ խոշոր կենտրոնը։ Ի հակակշիռ հնդիկ բուրժուական ազգայնականության, անգլիացիների ակտիվ աջակցությամբ 80-ական թվականների սկզբներից Հնդկաստանում լայն գործունեություն ծավալեցին մուսուլմանական լուսավորական կազմակերպությունները, որոնք էլ հակագաղութային ազգային-ազատագրական շարժման մեջ մտցրին հնդկա-մուսուլմանական թշնամանքը։ Մուսուլմանական լուսավորական շարժման խոշոր պարագլուխը դարձավ նշանավոր կրոնական և քաղաքական գործիչ Սայիդ Ահմադ խանը (1817—1898), որը բազմակողմանիորեն զարգացած մարդ էր, լուսավորյալ մուսուլմանական ֆեոդալների և խոշոր առևտրականների տրամադրությունների և շահերի արտահայտիչը։ Նա մուսուլմանների շրջանում ստեղծեց լուսավորական ընկերություններ, հիմնեց Ալիգարխիայի նշանավոր կոլեջը, որտեղ մուսուլմանական երիտասարդությունից չինովնիկներ էին պատրաստում գաղութային վարչակազմի համար։ Սայիդ Ահմադ խանը հանդես էր գալիս որպես գաղութային ռեժիմի հետևողական պաշտպան[1]։

Հիմնավորելով իսլամի նորացման անհրաժեշտությունը, Սայիդ Ահմադ խանը միաժամանակ իր բազմաթիվ աշխատություններում ցույց էր տալիս դրան հասնելու եղանակները և ուղիները[2]։ Սայիդ Ահմադը, Մուհամմեդ Աբդոյի նման, իսլամի արդիականացման համար ծավալած գործունեությունը փորձում էր հիմնավորել հենց մահմեդական կրոնի դիրքերից։ Բայց այդ բանը միշտ չէ, որ նրան հաջողվում էր։ Նրա մոտ լրիվ ուժի մեջ

Տե՛ս **Ю. В. Ивлоковский.** Начальный этап мусульманской реформации в Египте. «Ученые записки Института востоковедения АН СССР», т. XVII. М., 1959, էջ 114—115. **М. Т. Степанян.** Мусульманские мыслители о философии и политике XIX—XX в., М., 1982, էջ 13—14, 53, 57—72, 115—123։

[1] Տե՛ս **К. А. Антонова, Г. М. Бонгард-Левин, Г. Г. Котовский.** История Индии. Краткий очерк, изд. «Мысль», М., 1973, էջ 342։

[2] Տե՛ս **Л. Р. Гордон-Полонская.** Мусульманские течения в общественной мысли Индии и Пакистана (Критика «Мусульманского национализма»), изд-во Восточной литературы, М., 1963, էջ 114—160։

էր մնում միակ աստծու մասին դավանանքը, միաստված, որը ստեղծել է և՛ բնությունը, և՛ մարդուն, և՛ հասարակությունը։ Բայց աստծու հասկացությունը նրա մոտ այնքան վերացական է, որ մոտենում է նրա պանթեիստական և դեիստական մեկնաբանմանը։ Բնությունը Սայիդ Ահմադ խանի դավանաբանական համակարգում այլ բան չէ, քան աստծու այլագոյություն, իսկ նրա օրենքներն անխախտելի են և հանդիսանում են նրա էության արտահայտությունը։ Այսպիսով, ստվերի տակ է մնում ուսմունքն անձնական աստծու մասին, հրաշքների մասին, աշխարհի գերբնական արարչության մասին։ Կասկածի տակ էին դրվում մուսուլմանական դավանաբանության այնպիսի հիմունքներ, ինչպիսիք են ուսմունքներն աշխարհի վախճանի մասին, անդրշիրիմյան հատուցման, նախասահմանության մասին[1]։

Սայիդ Ահմադ խանի գաղափարների ազդեցությամբ, 19-րդ դարի 80-ական թվականների վերջին, Հնդկաստանում ձևավորվեց և հատկապես Փենջաբում լայն տարածում գտավ մուսուլմանական արմատական ռեֆորմատորական ուղղության մեջ ծագած մի հոսանք, որի գլուխ կանգնեց Միրզա Գուլամ Ահմադ Կադիանին[2]։

Գուլամ Ահմադը, որին «նոր մարգարե» հռչակեցին, այն կարծիքին էր, որ կարելի է վերացնել համաշխարհային կրոնների միջև եղած թշնամանքը, ավելին, մերձեցնել քրիստոնեությունը և մահմեդականությունը։ Քրիստոնյաների և մահմեդականների միջև բարեկամական հարաբերություններ ստեղծելու նպատակով նա այն տեսակետն էր քարոզում, թե Հիսուս Քրիստոսը հարություն առնելուց հետո ոչ թե երկինք է համբարձվել, այլ մնացել է երկրի վրա, ապրել ու մեռել է Հնդկաստանում՝ մշտական շփման մեջ գտնվելով նրա բնակիչների հետ։ Մուսուլմանների հետ հնդուականության հետևորդների մերձեցմանն էր վերաբերում նրա այն տեսակետը, թե ինքը զգում է, որ իր մեջ մարմնավորված է նաև Վիշնու[3] աստվածը։

[1] Տե՛ս **И. А. Крывелев**, История религий, т. II, изд-во «Мысль», М., 1976, էջ 271։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 271—272։

[3] Վիշնու— բրահմայականության և հինդուականության մեջ Բրահմայի և Շիվայի հետ մեկտեղ Վիշնուն բարձրագույն աստվածություն է։ Այն պահապան աստված է, որը մարմնավորում է հավերժ կենդանի բնությունը։ Որպես արևի աստվածություն Վիշնուն հիշատակվում է Ռիգվեդում։ Հնդիկները Վիշ-

Շեյխ Աբդոյի նման Գուլամ Ահմադը նույնպես մերժում էր հակաանգլիական մոլեռանդությունը և հավատացյալներից պահանջում ենթարկվել գաղութային իշխանություններին։ Ավելին, նա մեծ հույսեր էր կապում գաղութային զավթումների միջոցով անգլիական տիրապետության հետագա ընդլայնման հետ, որն իբր հեռանկարներ կբացեր ոչ իսլամ ժողովուրդների մեջ մահմեդականություն տարածելու համար[1]։

Գուլամ Ահմադը հիմնավորեց աստվածաբանական այն թեզը, թե Ալլահը յուրաքանչյուր հարյուրամյակը մեկ մարդկանց ուղարկում է մի նոր մարգարե, և որ 19-րդ դարում (կամ հիջրի 12-րդ դարում) Ալլահի ուղարկած այդ մարգարեն հենց ինքն է։

Կանոնավոր կերպով մեկը մյուսին հաջորդող մարգարեների մասին Ահմադի ուսմունքն ուղղված էր պանիսլամիզմի ծայրահեղությունների, իր տիրապետությունն աշխարհի ողջ մահմեդականության վրա հավերժ հաստատելուն ձգտող, իբրև Մուհամմեդի ժառանգն համարող Թուրքական սուլթանի հիմքից զուրկ պահանջների դեմ[2]։

Ծավալված գաղափարախոսական և քաղաքական պայքարում անգլիական գաղութարարներն ամբողջովին եգիպտացի և հնդիկ մոդեռնիստների կողմն էին։ Իսկ Թուրքական սուլթանն ու նրա շրջապատն այդ բարենորոգիչների նկատմամբ գրավել էին թշնամական դիրք, քանի որ հենց ուղղափառ իսլամն էր նրանց մեծ հնարավորություններ տալիս պանիսլամական և պանթուրքական խարդավանքների համար։

Բարենորոգչական շարժման ազդեցության տակ սկզբնավորվեց նաև մանիֆեստական շարժումը։

Մահդի[3]՝ իբրև մուսուլմանական մեսիայի և փրկարար առաջնորդի (շիաների մոտ՝ «թաքուն» իմամ) մասին վարդապետությունը, որ ծնունդ էր առել դեռևս միջին դարերում, 19-րդ դարի երկրորդ կեսին նորից վերակենդանացավ՝ հրապուրելով մուսուլմանաբնակ գաղութների ճնշված ու շահագործվող մասսա-

նուին երկրպագում են նաև որպես «Ռամայանա» էպոսի հերոս Ռամայի և Կրիշնայի երկրային մարմնավորում։

[1] Culam Ahmad Gadiani, A humble patition to the Government Tlryag-ul-Quloob, Qadian, 1902, pp. 309-310.

[2] Տե՛ս **И. А. Крывелев**, История религий, т. II, էջ 272։

[3] **Մանդի**— արաբերեն՝ ճշմարիտ ուղիով առաջնորդող։

ներին։ Մահդիզմի նոր ժամանակների քարոզիչները հավատացյալներին համոզում էին, թե շուտով, նախքան «աշխարհի վախճանը», հայտնվելու է մահդին, որպեսզի երկրի վրա վերականգնի արդարությունը։ Մահդիզմը լայն տարածում գտավ արաբական արևելքի հակաֆեոդալական և ազգային-ազատագրական շարժումների մասնակիցների շրջանում, հատկապես Եգիպտոսում ու Սուդանում, դառնալով հակագաղութատիրական շարժումների կրոնական արտահայտություններից մեկը[1]։

1881 թվականին Սուդանում ապստամբություն բռնկվեց՝ ուղղված թուրք-եգիպտական իշխանությունների և անգլիական գաղութարարների դեմ։ Ապստամբությունը գլխավորեց նախկինում սամմանիա դերվիշական ուխտի շեյխ, ապա իրեն մահդի հռչակած Մուհամմեդ Ահմեդը։ Մեկը մյուսի ետևից գրավելով մի շարք քաղաքներ, ապստամբները 1883 թվականի նոյեմբերին Կորդոֆան մարզի կենտրոն Ալ-Օբեյդիի մատույցներում գլխովին ջախջախեցին 10 հազարանոց անգլիական ջոկատը։ 1885 թվականի հունվարին նրանք զրոհով վերցրին երկրի վարչական կենտրոն Խարթումը, որտեղ սպանվեց Սուդանի անգլիացի նահանգապետ Չ. Գորդոնը։

Մահդիականների համառ պայքարի շնորհիվ թուրք-եգիպտական և անգլիական զավթիչները վռնդվեցին Սուդանից, երկիրն անկախ հայտարարվեց, ստեղծվեց ֆեոդալական-աստվածապետական պետություն։ Մահդիի մահից հետո երկրի ղեկն անցավ նրա ժառանգորդ Աբդուլլահ իբն ալ-Սաիդ Մուհամմեդի ձեռքը։ Անկախության տարիներին Սուդանում զարգանում էին առևտուրը, արհեստները, կառուցվում էին ճանապարհներ, բացվում էին դպրոցներ։ 1896 թվականին անգլիական գաղութարարները վերսկսեցին կռիվները, իսկ 1898 թվականի սեպտեմբերին Օմդուրմանի ճակատամարտում ջախջախեցին մահդիականներին։ Սուդանում հաստատվեց անգլիական գաղութարարների միահեծան տիրապետությունը։

Մահդիական շարժման հաջողության և Սուդանի կարճատև անկախության նշանակությունը մեծ էր. մուսուլման հավատացյալների մոտ համոզում ստեղծվեց, թե հնարավոր է կրոնական «սրբազան» պատերազմի միջոցով թոթափել գաղութարարների լուծը և տիրանալ անկախության։ Շարժումը մեծ հարված էր նաև մահմեդականների մեջ դարերով արմատացած այն մտայնությանը, թե թուրքական սուլթանը միաժամանակ աշխարհի բոլոր մուսուլմանների հոգևոր առաջնորդն է։ Ապրստամբ մահդիականները զենք էին բարձրացրել ոչ միայն քրիստոնյա անգլիացի գաղութարարների, այլև մահմեդական թուրք զավթիչների դեմ։ Այդպիսով, մահդիական շարժումը դուրս էր եկել ավանդական իսլամիզմի շրջանակներից։

Իսլամի դավանաբանական կողմերի արդիականացման համար բարեռեորգչական շարժումից զերծ չմնաց նաև Ռուսաստանը։

Ինչպես հայտնի է, իսլամը ցարական Ռուսաստանի համար ներքին պրոբլեմ էր դարձել դեռևս 16-րդ դարի երկրորդ կեսից, երբ մեկը մյուսի ետևից ռուսական զորքերը նվաճեցին Թուրքիայի և Ղրիմի խանության վասալ մուսուլմանական տարածքները։

Նույն՝ 16-րդ դարի սկզբներից խիստ աճել էր սուլթանական Թուրքիայի ռազմաքաղաքական հզորությունը։ Ջիբրալթարից մինչև Սև ծովի արևելյան եզերքներն ընկած ողջ տարածքների վրա իրենց տիրապետությունը հաստատած օսմանցիների համար Սև ծովը ներքին ծով էր՝ շրջապատված նրանց կողմից զավթած հողերով։ Թուրքական կառավարողներն անսքող և ակտիվ աջակցում էին Ղրիմի և Կազանի թաթարական խաներին, նրանց ազբեսիայի մղում ռուսական պետության դեմ։ Դեռ 15-րդ դարի վերջին, գրավելով Դոնի գետաբերանը, օսմանյան զավթիչներն այնտեղ կառուցել էին Ազով բերդը, որտեղից Ղրիմի թաթարների և նոգայացիների օգնությամբ հարձակումներ էին գործում նաև հյուսիս-կովկասյան հարթությունների վրա, հրով ու սրով մահմեդականություն տարածում ադիգեյների, կաբարդինցիների, չերքեզների և այդ վայրերի մյուս ժողովուրդների շրջանում։ Անդրկուբանյան հողերի վրա օսմանյան զավթիչների և Ղրիմի նրանց վասալների հարձակումներն ուժեղացան հատկապես 16-րդ դարի կեսերին[2]։ Թուրքերի ու թաթարների կո-

[1] Տե՛ս **М. Т. Степанянц,** Ислам в философской и общественной мысли зарубежного Востока, էջ 20։

[1] Տե՛ս «История СССР с древнейших времен до наших дней», в двенадцати томах, т. II, изд-во «Наука», Москва, 1966, էջ 561—562, т. III, 1967, էջ 646։

[2] Տե՛ս նույն տեղը, հ. II, էջ 562։

ղոպուտի ու բռնության գաղափարական հիմքը «անհավատների» նկատմամբ կրոնական անհանդուրժողականությունն էր։

Արևելքից և հարավից եկող սպառնալիքի վերացումը և թիկունքի ամրապնդումը Ռուսաստանի համար ձեռք էր բերում ռազմաստրատեգիական խոշոր նշանակություն, որպես Բալթիկ ծով դուրս գալու համար պայքարի նախապայման։ Կազանի և Ղրիմի խաների դեմ պատերազմելը դարձել էր ռուսական պետության հրատապ խնդիրը։

Իվան IV ցարի գլխավորած ռուսական զորքերը երկարատև կռիվներից հետո 1552 թվականին ջախջախեցին Կազանի թաթարական խանությունը և այն միացրին Ռուսաստանին[1]։ 1556 թվականին Ռուսաստանին ենթարկվեց Աստրախանի թաթարական խանությունը[2]։ 1557 թվականին պարտություն կրելուց հետո Նողայական մեծ հորդան վերացվեց և նրա տարածքները նույնպես մտցվեցին ռուսական պետության կազմի մեջ[3]։ Նույն տարում ռուսները գրավեցին Բաշկիրիան։ Ապա մեկը մյուսի ետևից Ռուսաստանի տիրապետությանը ենթարկվեցին Միջին Պովոլժիեն, Հարավային Մերձուրալյան շրջանները[4]։ Հաջորդ, 17-րդ դարում, ռուսները գրավեցին Սիբիրի խանությունը, Ենիսեյ և Ամուր գետերի հսկայական տարածքները և շարժվեցին դեպի Խաղաղ օվկիանոս[5]։

Ռուսաստանը շարժվում էր նաև Հարավի ուղղությամբ։ 18-րդ դարում նվաճվեց Ղրիմի խանությունը։ 19-րդ դարի սկզբին Ռուսաստանին միացավ Ադրբեջանը։ Ցարիզմն իր գաղութային քաղաքականությունը ակտիվացնում էր նաև Հյուսիսային Կովկասում։ Այստեղ ամբողջ կովկասյան գծով ընթանում էր ռազմական ամրությունների ինտենսիվ շինարարություն։ Նպաստելով Կովկասում Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը, այդ գիծը միաժամանակ խոչընդոտում էր Թուրքիայի և Իրանի նվաճողական նկրտումների իրականացմանը, որոնց թիկունքին կանգնած էին արևմտյան տերությունները։

Մինչև ռուսական նվաճումը Միջին Ասիայում կար ֆեոդալական երեք խանություն՝ Կոկանդի, Բուխարայի և Խիվայի։

[1] Տե՛ս «История СССР...», т. II, էջ 173։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը, էջ 173։

[4] Նույն տեղը, էջ 174։

[5] Նույն տեղը, էջ 340—345։

1865 թվականին ռուսական գեներալ Մ. Չերնյաևի զորքերը գրավեցին Տաշքենդը։ Գրավված հողերի վրա 1867 թվականին ստեղծվեց Թուրքեստանի գեներալ-նահանգապետությունը։ 1873 թվականին Խիվայի խանության զորքերը առանց դիմադրության ռուսներին հանձնեցին մայրաքաղաքը, և խանությունը դարձավ Ռուսաստանի վասալը։ Շուտով Ռուսաստանի վասալը դարձավ նաև Բուխարայի խանությունը։ 1876 թվականին ռուսական զորքերը գեներալ Մ. Սկոբելևի գլխավորությամբ նվաճեցին Կոկանդի խանությունը և նրա տարածքները միացրին Թուրքեստանի գեներալ-նահանգապետությանը։ 1881 թվականին ցարական զորքերը գրավեցին Աշխաբադը և նրա շրջակա տարածքները նույնպես մտան Ռուսաստանի կազմի մեջ[1]։

Մուսուլմանական այդ երկրների միացումը Ռուսաստանին, չնայած ցարիզմի գաղութային տիրապետությանը, հսկայական առաջադիմական նշանակություն ունեցավ դրանց ժողովուրդների համար, օբյեկտիվորեն շեշտակի շրջադարձ նշանավորեց նրանց պատմական ճակատագրում։ Դրանց մեծ մասի, հատկապես Կովկասի մահմեդական ժողովուրդների վրա մշտապես կախված էր վաղեմի ախոյաններ շահական Պարսկաստանի և սուլթանական Թուրքիայի վտանգը։ Արևելյան այդ հին բռնապետությունները, որոնք գտնվում էին «ֆեոդալիզմի ամենացածր ու բարբարոսական աստիճանի վրա»[2], փորձում էին հրով ու սրով իրենց ենթարկել միմյանցից անջատ խանությունները։ Անկախության համար մղած պայքարում ադրբեջանական, դաղստանյան, հյուսիսկովկասյան, թաթարիայի, Բաշկիրիայի, Ղազախստանի, Միջին Ասիայի ժողովուրդների առաջավոր, հեռատես մարդիկ շարունակ օգնության էին դիմում Ռուսաստանին, հյուսիսային այդ մեծ հարևանի հետ կապելով դարավոր արտաքին թշնամիներից պաշտպանվելու, խաղաղության պայմաններում ապրելու հույսերը։

Ֆ. Էնգելսը, որը ցարիզմի անհաշտ թշնամի էր, այնուամենայնիվ, հաշվի առնելով Ռուսաստանի տնտեսական և կուլտուրական գերազանցությունը, արձանագրում էր, որ «Ռուսաստանը իրոք առաջադիմական դեր է խաղում Արևելքի նկատմամբ... Ռուսաստանի տիրապետությունը քաղաքակրթիչ դեր է կատա-

[1] Տե՛ս «История СССР...», т. V, 1968, էջ 281—286։

[2] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, с. 6.

ռում Սև և Կասպից ծովերի ու Կենտրոնական Ասիայի համար, բաշկիրների և թաթարների համար...»[1]

Ռուսաստանի կազմի մեջ մտնելն այդ երկրները ներքաշեց անհամեմատ ավելի առաջադիմական տնտեսական ու հասարակական-քաղաքական զարգացման հունի մեջ, հնարավորություն տվեց բավական արագ ու նշանակալի չափով առաջ շարժվելու նախկին տնտեսական և կուլտուրական հետամնացության հաղթահարման ուղիով։ Առաջընթաց շարժումը հատկապես արագացավ հնտեֆորմյան ժամանակաշրջանում, երբ, Վ. Ի. Լենինի խոսքերով ասած, «կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում ընթացավ այնպիսի արագությամբ, որ մի քանի տասնամյակներում կատարվեցին այնպիսի փոփոխություններ, որպիսիք Եվրոպական մի քանի հին երկրներում տևել էին ամբողջ հարյուրամյակներ»[2]։

Չնայած դրան, ցարիզմի գաղութային քաղաքականությունը 18-րդ դարի վերջերից սկսած պարբերարար առաջ էր բերում մուսուլման բնակչության ընդվզումներ և ապստամբություններ։

Թաթարիայում, Բաշկիրիայում, Պովոլժիեում, Հյուսիսային Կովկասում, Դաղստանում ցարիզմի ազդեցության ուժեղացումը դժգոհություն առաջ բերեց տեղական ֆեոդալների մի մասի մոտ, քանի որ ղինվորական վարչակազմի հաստատումը թուլացրել էր նրանց տնտեսական և քաղաքական ազդեցությունն իրենց ցեղակիցների վրա։ Օգտագործելով ծանր տնտեսական վիճակից և ցարիզմի գաղութային քաղաքականությունից ժողովրդական մասսաների դժգոհությունը, հետադեմ ֆեոդալական-ազնվականական վերնախավը ձգտում էր գյուղացիական հակաֆեոդալական շարժումն ուղղել հակառուսական հունով, միաժամանակ որոշակի հույսեր կապելով օտարերկրյա, ամենից առաջ Թուրքիայի միջամտության հետ։

Այսպես աստիճանաբար ձևավորվեցին տեղական ֆեոդալների հակառուսական խմբեր, որոնց որոշ ժամանակ հաջողվեց քողարկել իրենց իսկական քաղաքական նպատակները և լայն մասսաներին մղել ինքնակալության դեմ։

Մասնակցելով գյուղացիների ելույթներին, իսկ երբեմն նաև

[1] **К. Маркс и Ф. Энгельс**, Соч., т. 27, с. 241.
[2] **Վ. Ի. Լենին**, *Երկ.*, հ. 20, էջ 213։

գլխավորելով այդ ելույթները, ֆեոդալները բնավ մտահոգված չէին թեթևացնելու ժողովրդական զանգվածների քաղաքական և տնտեսական դրությունը։

Ինչպես նշվեց, տեղական ֆեոդալական արիստոկրատիան գյուղացիներին օգտագործում էր ցարական վարչակազմի դեմ մղվող պայքարում և, հանդես գալով ժողովրդի անունից, փորձում էր սահմանափակել ցարիզմի միջամտությունն իր քաղաքական կյանքին, այն հաշվով, որպեսզի անձեռնմխելի մնան իշխողների նախկին դիրքերը, դրանով իսկ ապահովելով ֆեոդալաճորտատիրական կարգերի անսասանությունը։ Տեղական վերնախավը գյուղացիների շրջանում եռանդագին պրոպագանդում էր հակառուսաստանյան լոզունգներ՝ հագեցված մուսուլմանական աշխարհի ամրության և մուսուլմանների ու գյավուրների հավերժական թշնամության մասին թուրքամետ հեքիաթներով։

Իր կողմից ցարական կառավարությունը ձգտում էր սահմանափակել տեղական ֆեոդալների քաղաքական իրավունքները և տեղական բնակչության վրա հաստատել գաղութային մարմինների անսահմանափակ իշխանությունը։

19-րդ դարի 30-ական թվականներին ցարական գաղութային վարչակազմի դեմ մասսայական տարբերային ելույթներ բռնկվեցին Ադրբեջանում։ Այստեղ հատկապես համառ էին 1831 թվականին Թալիշի, իսկ 1837 թվականին Ղուբայի գավառներում ծագած ապստամբությունները։ 40—60-ական թվականներին ցարական բազմաքանակ զորքերի դեմ համառ կռիվներ էին մղում Արևմտյան Կովկասի լեռնականները՝ ադրբեջանները (չերքեզներ), նրանց ցեղակից ուբիխները, լեռնային աբխազները (սադզիներ)։ 20—30-ական թվականներին ապստամբական շարժումն իր մեջ էր առել Պովոլժիեի և Մերձուրալյան շրջանների հազարավոր մուսուլման գյուղացիների։ 30—40-ական թվականներին հակագաղութային լայն շարժում էր տարածվել Ղազախստանում և Սիբիրում[2]։

Թերևս ցարիզմին ցույց տված համառ ու երկարատև դիմադրության ցցուն օրինակ է կրոնական պատերազմի ձևով ընթացած այն պայքարը, որ Կովկասի լեռնականները

[1] *Տե՛ս* «История СССР...», т. IV, 1967, էջ 428—429։
[2] *Տե՛ս նույն տեղը, էջ 436—443։*

մղում էին 19-րդ դարի 20-ական թվականների կեսերից մինչև 1864 թվականի վերջը։

Դաղստանի և Չեչնիայի տեղական բնակչության շրջանում մոտավորապես 1824 թվականից լայն տարածում էր գտել մյուրիդիզմը՝ մուսուլմանական ուսմունքը կրոնական անձնավորությունների մասին, որն այստեղ ուներ դազավաթին (ջիհադին) առավել անձնազոհ ու ինքնամոռաց մասնակցության իմաստ[1]։ Հոգևոր ինքնակատարելագործում և անմնացորդ նվիրում դազավաթին, այս էր մյուրիդիզմի գլխավոր պահանջը։ Իր կովկասյան տարբերակում մյուրիդիզմը քարոզում էր, որ ամեն մի «ճշմարտություն որոնող», այսինքն՝ մյուրիդ աստծուն կարող է մերձենալ միայն այն դեպքում, եթե հետևողականորեն կենսագործի դազավաթին, այսինքն՝ «անհավատների», ոչ մուսուլմանների դեմ «սրբազան պատերազմի» պատվիրանները[2]։

«Բոլոր մուսուլմանների հավասարության» և «սրբազան պատերազմի» լոզունգները, որ առաջադրում էին մյուրիդիզմի քարոզիչները, գյուղացիական մասսաների կողմից սխալմամբ ընկալվում էին որպես սոցիալական լոզունգներ, ուստի և սկզբնական շրջանում նրանք համակրանք էին տածում մյուրիդիզմի նկատմամբ, կանգնում նրա դրոշի տակ։ Ֆեոդալական ճնշումը և ցարիզմի գաղութային քաղաքականությունը նպաստում էին մյուրիդիզմի կողմնակիցների շարքերի համալրմանը, հեշտացնում աշխատավոր մասսաներին խաբելու գործը։ Թեև մյուրիդիզմը սկզբնական շրջանում նպաստում էր հակագաղութային պայքարում Հյուսիսային Կովկասի լեռնականների միավորմանն ու համախմբմանը, սակայն իր ռեակցիոն բնույթի թելադրանքով այն օբյեկտիվորեն բորբոքում էր կրոնական ֆանատիզմ, առաջ բերում ազգային երկպառակություններ, ատելություն՝ քրիստոնեություն դավանող ժողովուրդների նկատմամբ, հանգեցնում էր լեռնականների մեկուսացմանն ու առանձնացմանը Կովկասի և Ռուսաստանի մյուս ժողովուրդների ազատագրական պայքարից, նրանց ներքաշում օտարերկրյա տերությունների ագրեսիվ քաղաքականության ոլորտը։

Շեյխերի ու մոլլաների առաջնորդությամբ մյուրիդների ջոկատները զինված հարձակումներ էին գործում ռուսական քաղաքացիական հիմնարկների և զորքերի վրա, ինչպես նաև պատժում այն ցեղակիցներին, որոնք առանց մարտի հանձնվում էին ցարական իշխանություններին։ Շուտով շարժումը ծնունդ տվեց քաղաքական կուռ կազմակերպության՝ հիմնվեց ձևով թեոկրատական ֆեոդալական մի պետություն՝ իմամաթ։ 20-ական թվականների վերջերին Դաղստանի և Չեչնիայի իմամ հռչակվեց մոլլա Ղազի Մուհամմեդը։ Սկսվեցին ռազմական գործողություններ Թերեքի ռուսական կայազորների դեմ։ Ընդհարումներից մեկում Ղազի Մուհամմեդը սպանվեց։ 1832 թվականին նրան հաջորդեց ավարացի բեկ Համզաթը, որը, չանցած երկու տարի, զոհ գնաց դավադրության։ 1834 թվականին երրորդ իմամ հռչակվեց Շամիլը։ Լինելով կրակոտ ագիտատոր և քաջ մարտիկ, նա լեռնականների շրջանում ձեռք բերեց հսկայական հեղինակություն։ Հազարավոր լեռնական գյուղացիներ նրա մեջ տեսնում էին իրենց քաջակորով առաջնորդին, հույս ունենալով նրա ղեկավարությամբ ազատագրվել սոցիալական շահագործումից և գաղութային իշխանությունների կամայականություններից։ Երկար ժամանակ Շամիլը ռուսական զորքերի դեմ հաջող կիսապարտիզանական կռիվներ էր մղում, նրանց մատնելով մի քանի լուրջ պարտություններ։ 1845 թվականին նա գլխովին ջախջախեց ռուսական այն զորամասերին, որոնց մարտաերթի էր առաջնորդում ինքը՝ Կովկասի փոխարքա կոմս Մ. Ս. Վորոնցովը։ Միայն այդ կռիվների ժամանակ ռուսական կորուստները կազմեցին ավելի քան 3,5 հազար զինվոր ու սպա[1]։

Թիկունքն ամրապնդելու նպատակով Շամիլը ստեղծեց նայիբների սոցիալական ուժեղ միջնախավ, մի յուրօրինակ արիստոկրատիա, որը կենսականորեն շահագրգռված էր իմամաթի պահպանմամբ։ Իսլամիզմի դրոշի տակ իմամը լայն օգնություն էր ստանում սահմանամերձ պետություններից՝ Թուրքիայից և Իրանից։ Նա բազմիցս իր հավատարմությունն էր հավաստել թուրքական սուլթան Աբդուլ Մեջիդին։ Իսկ Ղրիմի պատերազմի ժամանակ (1853—1856 թթ.) Շամիլը երկու անգամ փորձ արեց ճեղքել ռուսական զորքերի դասավորությունը և ընդառաջ գնալ հարավից Վրաստանի վրա հարձակվող թուրքական զորքերին[2]։

[1] Տե՛ս Н. А. Смирнов, Мюридизм на Кавказе, М., 1953, էջ 140—160։
[2] Տե՛ս «История СССР...», т. IV, էջ 432։

[1] Տե՛ս «История СССР...», т. IV, էջ 433։
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 434։

Դրանից ստացած օգնության շնորհիվ էր, որ Շամիլը կարողանում էր երկար ժամանակ շարունակել դիմադրությունը։

Սակայն կովկասյան լեռնականներն իրենց հիմնական մասով բնավ էլ ոգևշնչված չէին թուրքական սուլթանի տիրապետությանը ենթարկվելու հեռանկարից։ Նրանք չէին բաժանում իմամի և նայիբների թուրքամետ կողմնորոշումը։ Մյուրիդիզմը չէր կարող ապահովել ո՛չ սոցիալական ազատագրություն, ո՛չ էլ ազգային անկախություն։ Կովկասի ժողովուրդների ազատագրության ուղին անցնում էր ռուս ժողովրդի հետ մերձենալու և սոցիալական ու ազգային կեղեքման դեմ մղվող հեղափոխական պայքարին աջակցելու միջոցով։

Իմամաթում ծայր առած ներքին խոր հակասությունները և ռուսական 200 հազարանոց զորքի դնալով ուժեղացող ճնշումը կանխորոշեցին Կովկասի լեռնականների «սրբազան պատերազմի» բախտը։ 1859 թվականին Շամիլը գերի վերցվեց։ Շատ չանցած ամբողջ Կովկասն ընկավ ցարական իշխանությունների ձեռքը[1]։

Կովկասի լեռնականների ապստամբության ճնշումից հետո էլ ռուսական կայսրության մուսուլմանական տարածքներում չէին դադարում հուզումներն ու ապստամբությունները, որոնք հաճախ ընդունում էին կրոնական գունավորում։ Այդ ձևով ընթացան, օրինակ, թաթարների ապստամբությունները Կազանի նահանգում 1878—1879 թթ., ապստամբությունը Բուխարայի խանությունում (1888 թ.), Տաշքենդում (1892 թ.), Անդիջանում (1898 թ.) և այլն[2]։

Իշխանությունների համար պարզ էր դառնում, որ կայսրության Բուրքալեզու ժողովուրդներով բնակեցված վայրերում՝ Ղրիմի թերակղզում, Կազանի և Բաշկիրիայի շրջաններում, Վոլգայի միջին հոսանքներում, Թուրքեստանում, Կիրգիզիայում (Խըրխըզիա), Հյուսիսային Կովկասի առանձին շրջաններում, Կովկասյան Ադրբեջանում պետք է վարել հատուկ քաղաքականություն։ Եվ ահա ցարական իշխանությունները որոշեցին մուսուլմանական կրոնն օգտագործել իրենց քաղաքական շահերին

[1] Տե՛ս «История СССР...», т. IV, էջ 435:

[2] Տե՛ս Б. Гафуров. Об андижанском «восстании» 1898 года.—«Вопросы истории», 1953, № 2 էջ 50—61: «История СССР...», т. V, էջ 426, 431:

և այդ նպատակով դիմեցին փորձված մեթոդի։ Կաշառք և առանձնաշնորհումներ տալու միջոցով նրանք իրենց կողմը քաշեցին մուսուլման հոգևորականությանը, հատկապես նրա վերնախավին։ Այդ հոգևորականությունը հաճույքով գնաց ցարական իշխանություններին ընդառաջ, որպեսզի պահպանի իր հսկայական հարստություններն ու եկամուտները։

Ռուսաստանի մուսուլման հոգևորականությունն ամուր տնտեսական դիրքեր ուներ։ Բավական է նշել, որ 19-րդ դարի վերջերին Բուխարայում մզկիթապատկան (վակուֆային) հողերը կազմում էին 130 հազար դեսյատին, նույն ժամանակ Ղրիմի միայն հինգ գավառներում վակուֆային սեփականություն էր մոտ 88 հազար դեսյատին հողատարածություն, մոտ 500 տուն ու խանութ[1]։ Ցարական իշխանությունները ձեռք չէին տալիս վակուֆներին և մուսուլման հոգևորականության եկամուտների մյուս աղբյուրներին։ Ամբողջովին այդ հոգևորականությանն էր հանձնված նաև մուսուլմանական ժողովուրդների կրթական և մշակութային գործը։ Կրթական մարզում լիովին տնօրինություն էին անում իսլամի անկիրթ սպասավորները։ Աշխարհիկ դպրոց չկար, իսկ եղած դպրոցները չնչին գիտելիքներ էին տալիս սովորողներին։ Ուսուցումը խիստ ցածր մակարդակի վրա էր հատկապես տարրական դպրոցներում (մեքթեբներում), ուր պատանիները սովորում էին երկու-երեք տարի, մեխանիկորեն սերտում Ղուրանի արաբական տեքստերը, միաժամանակ ճիգ թափում վերարտադրելու արաբական գրի տառերը՝ իրենց բարդ գծագրությամբ, որոնք չէին հաղորդում կովկասյան, միջինասիական, թաթար-բաշկիրական լեզուներին հատուկ մի շարք յուրահատուկ հնչյուններ, ուստի և խորթ էին կենդանի ժողովրդական խոսքին։ Այդ պատճառով արաբական գիրը, ինչպես Թուրքիայում, այստեղ նույնպես մնում էր որպես մուսուլման բնակչության սոսկ մի փոքր խավի՝ հոգևորականության սեփականությունը։

Մեքթեբներ ավարտած պատանիների որոշ մասն ուսումը շարունակում էր մեդրեսեներում, որտեղ պատրաստում էին մոլլաներ, հոգևոր դատավորներ (կադիներ), գրագիրներ։ Մեդրեսեներում սովորողները (մութալիմները) նույնպես ժամանակի մեծ մասը վատնում էին կրոնական դոգմաների ուսում-

[1] Տե՛ս Л. П. Климович, Ислам в царской России, էջ 100—102, 110:

նասիրության վրա, իսկ բնական առարկաների իմացությունը խղճուկ էր։

Մուսուլմանական հոգևոր ուսումնական հաստատությունների թիվն առաջին հայացքից զգալի էր։ Բայց եթե նկատի ունենանք, որ յուրաքանչյուր դպրոց ուներ ընդամենը 20—30 սովորող, ապա պարզ կլիներ, որ դրանք ընդգրկում էին դպրոցական տարիքի երեխաների միայն մի փոքր մասին։ Այսպես, Ադրբեջանում 19-րդ դարի կեսերին կար 299 մեքթեբե և մեդրեսե, որոնցում սովորում էր ընդամենը 4700 մարդ[1]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ցարական կառավարությունը մուսուլմանական կղերին լայն իրավունքներ էր տվել ինչպես տնտեսական, այնպես էլ հոգևոր մարզերում։

Իբրև ինքնակալության նկատմամբ երախտագիտական տուրք՝ մուսուլման հոգևորականությունը սկսեց իր հոտին բացատրել, որ ցարական իշխանությունների կողմից ոչ մի սպառնալիք չկա իրենց հավատի նկատմամբ։ Նա ավելի ու ավելի բացահայտ ու հետևողականորեն էր իր նվիրվածությունը հայտնում ցարիզմին։

Օրինակ, 1894 թվականին Օրենբուրգի մուֆթի Մ. Սուլթանովը բոլոր ախունդներին և մզկիթների հոգևորականությանն ուղղված հատուկ շրջաբերականում նշում էր, որ ցարական իշխանությունները որևէ արգելք չեն հարուցում իսլամ հոգևորականության առջև մզկիթներ և այլ կրոնական հաստատություններ կառուցելիս, ուստի Ռուսաստանի բոլոր մուսուլմանները պետք է բարձր գնահատեն այդ վեհանձն վերաբերմունքը և անկեղծ հավատարմությամբ ծառայեն Ռոմանովների գահին[2]։

Ուֆայի մուֆթի Աբու-Սալիմ Աբդուռահիմովը հոգևոր-կրոնական խրատներից մեկում մուսուլմաններին պատվիրում էր հնազանդ ու հավատարիմ լինել ցարին և առաջարկում էր իր կազմած տեքստով երդում տալ նրան։ Երդման տեքստում կային նաև այս բառերը. «Երդվում եմ ամենազոր աստծով և նրա սուրբ ալ-Ղուրանի առջև, որ ցանկանում եմ և պետք է հավատարմորեն ու անկեղծորեն ծառայեմ համայն Ռուսիայի միապետին ու նորին կայսերական մեծության համառուսաստանյան գահի օրինական ժառանգին և ամեն ինչում հպատակվել, չխնայել իմ կյանքը, արյան վերջին կաթիլը...»[1]

Ցարերի թագադրման և այլ առիթներով Ռուսաստանի մուսուլման հոգևորականությունն անհաշիվ թվով ուղերձներ և դիմումներ էր հղում կառավարությանը, նորից ու նորից իր հպատակի հավատարմությունը հավաստում։ Ցարական իշխանությունները հավատում էին մուսուլման հոգևորականության նվիրվածությանը գահին և իսլամը պաշտպանում իրենց տրամադրության տակ եղած միջոցներով[2]։

Պատահական չէ նաև, որ մուսուլման աշխատավորների հակացարական հուզումների և ապստամբությունների ժամանակ մահմեդական հոգևորականությունը կանգնում էր իշխանությունների կողմը և նպաստում «կարգի վերականգնմանը»։ Օրինակ, ցարական կառավարությունը, պատերազմ մղելով Շամիլի դեմ, լայնորեն օգտվում էր մոլլաների ծառայություններից, նրանց ուղարկելով իմամաթի տարածքը ոչ միայն քայքայիչ-ագիտացիոն, այլև լրտեսական ֆունկցիաներ կատարելու համար[3]։ 70-ական թվականների վերջին Կազանի նահանգում տեղի ունեցած ելույթներից մեկից հետո ժանդարմական վարչության պետ, գեներալ-մայոր Ժիտկովը զեկուցում էր Պետերբուրգ. «Մահմեդական հոգևորականությունը խառնված չէ, նա իրեն պահել է նվիրվածաբար և ողջամտորեն, իրենք՝ մոլլաներն էին մատնացույց անում անկարգության սադրողներին»[4]։

Ավելին, շատ տեղերում մահմեդական ավագանուն և հոգևորականությանը վստահված էր հսկողություն հաստատել կայսրության ոչ միայն մուսուլման, այլև քրիստոնյա հպատակների վրա։ Հետագայում մենք կտեսնենք, թե ինչպիսի «սրբազան դաշինք» էր ստեղծվել ցարական կառավարության և մուսուլմանական կղերի, ինչպես նաև բեգերի, խաների, աղալարների ու կայսրության մուսուլմանական հասարակության մյուս պարագիտային խավերի միջև, թե ցարական իշխանություններն

---

[1] Տե՛ս «История СССР...», т. IV, էջ 670։

[2] Տե՛ս «Сборник циркуляров и иных руководящих распоряжений по округу Оренбургского магометанского духовного собрания. 1841—1901 гг.», Уфа, 1902, էջ 72։

[1] **А. И. Крывелев**, История религий, т. II, с. 279.

[2] Տե՛ս **В. В. Бартольд.** История культурной жизни Туркестана. Соч., т. II, М., 1953, էջ 351։

[3] Տե՛ս **И. Дроздов.** Начало деятельности Шамилия (1834—1836 гг.). «Кавказский сборник», т. XX, Тифлис, 1899, էջ 290—292։

[4] **Л. И. Климович.** Ислам в царской России, с. 46.

ինչպես էին ամեն անգամ դիմում մուսուլման հոգևորականության աջակցությանը, լայնորեն օգտագործում մահմեդական բնակչության հետամնացությունն ու ֆանատիզմը Ռուսաստանում ծայր առած բանվորական, հեղափոխական շարժումները ճնշելու համար։

Ահա այսպիսին էր իսլամի բանը Ռուսաստանում մինչև նորագույն պանիսլամիզմի հանդես գալը։

Եթե իսլամիզմը Օսմանյան կայսրությունում ուղղված էր քրիստոնյաների, հատկապես հայերի դեմ, ապա կայսրությունից դուրս այն պանիսլամիզմի տեսքով ուղղվեց Ռուսաստանի դեմ, որի կազմում էին հիմնականում գտնվում Օսմանյան կայսրությունից դուրս բնակվող թուրքալեզու մուսուլման ժողովուրդները։

Դեռ մինչև պանիսլամիզմի գաղափարների երևան գալը Ռուսաստանի մուսուլմանների շրջանում կրոնական և ազգայնական զանազան գաղափարներ ու շարժումներ էին ծագում, բրոնք, իբրև կանոն, լայն տարածում չէին գտնում։

19-րդ դարն այդ տեսակետից խիստ նշանակալից եղավ։ Ռուսաստանի մուսուլմանների շրջանում առաջ եկան գաղափարական լուրջ խմորումներ, ծնունդ առավ և ծավալվեց մտավոր շարժում՝ իր ազատական և հետադեմ ուղղություններով։

Այդ մտավոր շարժման համար նախապայմաններ ստեղծեց հենց ցարիզմը։ Ռուսաստանի ազգային ծայրամասերը արդյունավետությամբ կառավարելու համար իշխանություններին անհրաժեշտ էր ունենալ տեղական ժողովուրդներից սերված, այդ ժողովուրդների կենցաղին, բարքերին, սովորույթներին քաջատեղյակ թարգմանիչներ, աստիճանավորներ և այլն, որոնք պատրաստակամությամբ, հավատարմորեն ու նվիրվածությամբ ծառայեին Ռոմանովների գահին։ Այդ նպատակով ազգային շրջաններում, այդ թվում մուսուլմանական ծայրամասերում բացվում էին աշխարհիկ ռուսական տարրական և միջնակարգ դպրոցներ, որոնք օբյեկտիվորեն մեծ դեր էին խաղում լուսավորության և կրթության տարածման, ազգային տարատոհմիկ մտավորականության ձևավորման գործում։ Դրանից բացի տեղական ազնվականությունից սերված պատանիները, անկախ դավանանքից, ընդունվում էին կայսրության ներքին նահանգներում գտնվող կադետական կորպուսները, գիմնազիաները, համալսարանները։ Հումանիզմի և սոցիալական արդարության գաղափարներով հարուստ ռուսական առաջավոր մշակույթն երոլորտի մեջ էր առնում տարբեր ազգությունների պատանիների, նրանց հաղորդակից դարձնում քաղաքակրթության նվաճումներին, համաշխարհային մշակույթի գանձերին։ Այդ ամենը հիմք հանդիսացավ մտավոր շարժման ծագման ու զարգացման համար։

Ռուսաստանի մուսուլման ժողովուրդների շրջանում ծնունդ առած առավել հզոր շարժումը լուսավորական շարժումն էր։

Այդ ժողովուրդները, մի կողմից, գտնվելով զարգացման տարբեր աստիճանների վրա, ունենալով զանազան առանձնահատկություններ, ապրում էին ֆեոդալական կարգերի քայքայման, բուրժուական հարաբերությունների սաղմնավորման, աշխատավորների ինքնակալական-կապիտալիստական և ազգային-գաղութային ճնշման ուժեղացման պայմաններում։ Մյուս կողմից, իրենց պատմական բախտը վերջնականապես կապելով Ռուսաստանի, ռուս մեծ ժողովրդի հետ, նրանք բոլորն էլ բուռն կերպով ձգտում էին դեպի ռուսական առաջավոր մշակույթը, հաղորդակից դառնում դրան։ Ռուսաստանի կազմում միավորված մուսուլման ժողովուրդներն այդ մշակույթի անմիջական ազդեցությամբ թևակոխեցին կուլտուրական զարթոնքի շրջանը։

Ղրիմի և Կազանի թաթարների, բաշկիրների, կովկասյան թուրքերի (ադրբեջանցիներ), ուզբեկների, թուրքմենների, տաջիկների, կիրգիզների, ղազախների և մուսուլման մյուս ժողովուրդների ծոցից դուրս եկան տաղանդավոր լուսավորիչներ, որոնք իրենց գործունեությամբ մեծ ծառայություն մատուցեցին հարազատ ժողովրդին։ Դրանցից էին ադրբեջանցիներ Միրզա Շաֆի Վազեխը, Միրզա Ֆաթալի Ախունդովը, Աբբաս-Կուլի Բակիխանովը, Հասան բեկ Զարդաբին (Մելիքով), Զադիլ Մամեդ-Կուլի զադեն, Սեիդ Ազիմ Շիրվանին, հեղափոխական-դեմոկրատ Սաբիրը, թաթարներ Կայում Նասիրին, Դաբդուլա Թուքայը, Գալիսկար Քամալը, Մաժիտ Գաֆուրին, բաշկիրներ Ակմուլլան, Մ. Ումիտբահը։ Լուսավորիչ-մտավորականների մի փայլուն համաստեղություն էին կազմում ուզբեկներ Աբուսաթթարխանին, Իսհակ խան Ֆուրքաթը, Զավքին, Համզա Հա-

քիմ զադե Նիյազին, տաջիկներ Ահմադ Դոնիշ Ասիրին, Սադրիդդին Այնին, թուրքմեններ Մոլլանեպեսը, Մամեդ-վելի Կեմինեն, Միսկին-կլըչը, կիրգիզներ Տոկտոգուլ Սատըլգանովը, Տոգոլոկ Մոլդոն, ղազախներ Չոքան Վալիխանովը, Իբրայ Ալթինսարինը, Աբայ Կունանբաևը։ Չերքեզների, կաբարդիների, ադիգեյների, բալկանների, չեչենների, ինգուշների, կարաչաևների, լեզգիների, ավարցիների, օսերի, աբխազների միջավայրից նույնպես դուրս եկան կրթված, առաջադեմ հասարակական-քաղաքական լիբերալ գործիչներ՝ Շորա Նոգմովը, Ադիլ-Գիրեյ Կեշևը, Յակուբ Շարդանովը, Խան-Գիրեյը, Աբդուլլա Օմարովը, Վլադիմիր (Էլբազդուկո) Կուդաշևը, Սուլթան բեկ Աբաևը, Կազի Աթաժուկինը, Նուրի Յագովը, Միսոս Աբաևը, Տխոստովը, Կոստա Խետագուրովը, Դմիտրի Գուլիան և ուրիշներ։ Սրանք բոլորն էլ կրել էին ռուսական հեղափոխական-դեմոկրատական լուսավորականության բարերար ազդեցությունը, տարբեր աստիճանի ու զանազան ձևերով կապված էին ռուս առաջավոր գրողների ու գիտնականների հետ[1]։

Լուսավորիչները պրոպագանդում էին ռուսաց լեզուն, ռուսական մշակույթը, նախաձեռնում և բացում էին աշխարհիկ դպրոցներ, պահանջում էին ռուսական դպրոցական համակարգի օրինակով անցկացնել մուսուլմանական դպրոցների՝ մեդրեսեների ռեֆորմ՝ ձգտելով դրանցում մտցնել ռուսաց լեզվի և աշխարհիկ գիտությունների ուսումնասիրություն։ Ավելին, դեռ այն ժամանակ Թուրքեստանում հրապարակ բերվեց աշխարհիկ առարկաների դասագրքեր կազմելիս արաբական այբուբենը սլավոնականով փոխարինելու առաջարկը։ Նման առաջարկով հանդես էին գալիս նաև լեռնական լուսավորիչները[2], առաջադեմ թաթար գործիչները։

Ղազախ մեծ հումանիստ և դեմոկրատ, ռուս քաղաքական բանտարկյալների բարեկամ Աբայ Կունանբաևը, որն առաջինը ղազախ ժողովրդին ծանոթացրեց Պուշկինի և Լերմոնտովի պոեզիային, ռուսական կուլտուրային, դիմելով իր երիտասարդ ժամանակակցին, գրել է. «Ռուսները տեսնում են աշխարհը։

[1] Տե՛ս «История СССР...», т. IV, 1967, էջ 668—701։

[2] Տե՛ս **А. О. Хоретлев**, Влияние России на просвещение в Адыгее (XIX—начало XX в.), Майкоп, 1957, էջ 25։

Եթե դու իմանաս նրանց լեզուն, աշխարհի վրա կբացվեն նաև քո աչքերը... Սովորիր ռուսների կուլտուրան և արվեստը։ Դա բանալի է դեպի կյանք։ Եթե դու այն ստանաս, քո կյանքը դյուրին կդառնա»[1]։ Որդուն ուղղված բանաստեղծական խոսքում նույն միտքն է արտահայտել ադրբեջանցի լուսավորիչ Սեիդ Ազիմ Շիրվանին[2]։ Իր ազգակիցներին ռուսաց լեզվին և կուլտուրային տիրապետելու կոչ էր անում հյուսիսկովկասյան լուսավորիչ Կազի Աթաժուկինը[3]։ Կաբարդին լուսավորիչ Շորա Նոգմովն իր հայրենակիցներին ցույց էր տալիս, որ թուրքական սուլթանները և նրանց վասալ Ղրիմի խաները շատ տասնամյակների ընթացքում դաժան պատերազմներ են մղել Հյուսիսային Կովկասի ժողովուրդների դեմ, բռնի կերպով նրանց վզին փաթաթել իրենց կրոնը։ Նա նկարագրում էր, թե Ղրիմի խաներ Դեվլեթ-Գիրեյը և Խան-Գիրեյը որպիսի դաժանությամբ էին երկրամասի տարածքի մեծ մասում արմատավորում մահմեդականությունը։ Հյուսիսային Կովկասի լեռնականներն ամեն կերպ ընդդիմանում էին իրենց համար խորթ մահմեդական հավատքին բերելու ճիգերին, արյունահեղ մարտեր մղում օտար զավթիչների դեմ։ Նոգմովը գրում էր, որ իր ժողովուրդը վաղուց է փնտրել մեծ և բարի հարևանի՝ ռուս ժողովրդի աջակցությունը, և այն ստանալով՝ ընդմիշտ ազատվել է թուրք զավթիչների և Ղրիմի թաթարների ասպատակություններից ու բռնություններից։ Նա շեշտում էր, որ կաբարդիների և Հյուսիսային Կովկասի մյուս ժողովուրդների անվտանգությունը երաշխավորված է Ռուսական կայսրության սահմաններում[4]։ Ռուսները և կաբարդիները եղբայրներ են, և այդ եղբայրությունը ոչ ոք չի կարող խախտել, ասում էր նա[5]։

Պրոպագանդելով ռուսական առաջավոր մշակույթը և հանդես գալով որպես ժողովուրդների կրթության և առաջադիմության ջերմ ջատագովներ, լուսավորիչներից ոմանք էլ ավելի հեռուն էին գնում՝ մերկացնում բուրժուական բարոյականությունը, նույնիսկ տիրող կարգերը։ Ուզբեկ լուսավորիչներ

[1] **Абай Кунанбаев**, Избранное, Алма-Ата, 1958, с. 308.

[2] Տե՛ս **С. А. Ширвани**, Избранное, Баку, 1958, էջ 16.

[3] Տե՛ս **Кази Атажукин**, Избранные труды, Нальчик, 1971, էջ 135.

[4] Տե՛ս **Ш. Ногмов**, История адыгейского народа, Нальчик, 1958, էջ 143—144.

[5] Տե՛ս «Правда», 6 июля 1957 г.

Ֆուրքանը, Մուքիմին և Զավքին քննադատում էին առանձին բեյերի, պաշտոնատար անձանց, հոգևորականությանը։ Այդպիսի գործիչներ կային նաև ադրբեջանցի և ղազախ լուսավորիչների շրջանում։

Ռուսաստանի մուսուլման մտավորականության միջավայրում ծագած ռուսասեր լուսավորականության կողքին ծնունդ առավ և ծավալվեց նաև իսլամական կրոնի նորացման համար շարժումը, որի շատ ներկայացուցիչներ բացահայտորեն ռուսատյաց դիրքերում էին։

Ռուսական կայսրության մուսուլման բնակչություն ունեցող տարածքներում բուրժուական հարաբերությունների սաղմնավորումն ու զարգացումը պահանջում էր լուրջ փոփոխությունների ենթարկել իսլամի ֆեոդալական ձևերը՝ դոգմատիկ հավատալիքները, շարիաթի մեջ մարմնավորված կրոնական իրավունքի համակարգը, հասարակության և հասարակական հարաբերությունների նկատմամբ եղած հայացքները՝ այդ ամենը հարմարեցնելով նոր ժամանակի պահանջներին։

Ցարական իշխանությունների առջև իսլամական կրոնի բարձրաբտիճան ծախու սպասավորների բացահայտ քծնանքն ու հաճոյախոսությունը հավատացյալ մասսաների մեջ առաջ էին բերում խիստ դժգոհություն։ Աշխատավոր մուսուլմաններն իրենց կղերին սկսեցին դիտել իբրև կառավարության կողմից կարգված չինովնիկների, ադմինիստրացիայի դրածոների՝ ամենևին վստահություն չտածելով նրանց նկատմամբ։

Իրենց հավատի ծառայողների հանդեպ մուսուլմանական համայնքների ծայրահեղ անբարեհաճության ուղղակի հետևանքը եղավ կրոնապաշտության արտամզկիթային ձևերի զարգացումը և տարբեր աղանդների առաջացումը, որոնք էլ հենց հող նախապատրաստեցին Ռուսաստանում մուսուլմանական կրոնի բարենորոգչական շարժման համար։

Թեև Ռուսաստանում իսլամի մեջ ծագած աղանդավորական և բարենորոգչական շարժումներն այնպիսի լայն զարգացում չստացան, ինչպես Օսմանյան կայսրությունում, Եգիպտոսում և Հնդկաստանում, այնուամենայնիվ դրանք մի կողմից առաջ բերեցին ցարական կառավարության բուռն հակազդեցությունը, իսկ մյուս կողմից՝ իշխանությունների հետ սերտ շփման մեջ գտնվող և նրանց հովանավորությունը վայելող իսլամական

կրոնի սպասավորների լուռ ցուցադրական անբարյացակամությունը։

Աղանդավորական և բարենորոգչական շարժումները ցարական իշխանությունների կողմից խիստ դիմադրության հանդիպեցին ամենից առաջ այն պատճառով, որ դրանք, ի տարբերություն լուսավորական շարժման, առաջադրում էին Ռուսական կայսրության տարածքում ապրող բոլոր մուսուլմաններին նախ մշակութային-լեզվական, ապա նաև քաղաքական հողի վրա միավորվելու պահանջ։ Միավորման միտումներն արտահայտվում էին Ռուսաստանի մուսուլման ժողովուրդների և՛ տնտեսական կյանքում, և՛ դավանաբանական հողի վրա նրանց շփման մեջ։ Թաթարների, ղազախների, ուզբեկների, կիրգիզների, ադրբեջանցիների կրոնական ընդհանրությունը նրանց լեզվական հատկանիշների միասնության հետ մեկտեղ հող էր ստեղծում էթնիկական մերձեցման համար։

Նման հեռանկարը ցարական կառավարությանը ձեռնտու չէր։ Հավասար արդյունավետությամբ առանձին-առանձին իր նպատակներին օգտագործելով իսլամի հիմնական դավանանքները՝ սուննիզմը և շիիզմը, որպես լոկալ միավորներ դիտելով մուսուլմանական համայնքները և հանդուրժելով մուսուլմանական կրոնի ակտիվ գործունեությունն իբրև տեղական երևույթ, ռուսական ինքնակալությունը դրա հետ միասին չէր հանդուրժում մուսուլմանների միավորման բարենորոգչական գաղափարը, ամեն կերպ աշխատում էր պահպանել պառակտումը իսլամում և ընդհանրապես նպաստում էր այն պրոցեսներին, որոնք բաժանում, այլ ոչ թե միավորում էին կայսրության մուսուլման բնակչությանը։ «Տեղական պետական իշխանությունների համար լավ օգնություն է ռուսական մուսուլմանության տարացեղությունը...,— գրում էր ցարական չինովնիկներից մեկը,— ամենամոտ ժամանակ տարացեղ մուսուլմանական խմբերի ամեն մի միավորում մեկ կրոնական-թաթարական համայնքի մեջ մեծագույն անխոհեմության ակտ կլիներ»[1]։

Ինչ վերաբերում է մուսուլման հոգևորականությանը, որ առիթը բաց չէր թողնում ամեն քայլափոխի իր հավատարմությունը հավաստելու իշխանություններին, ապա նա, իրականում երազելով կրոնական հողի վրա Ռուսաստանի բոլոր մուսուլ-

[1] Л. И. Климович, Ислам в царской России, с. 222.

մանների ցեղային միավորում, հանդես էր գալիս, սակայն, այդ միավորման դեմ, հնազանդաբար հավանություն տալիս միավորմանը խոչընդոտող ցարական իշխանությունների գործողություններին։

Դեռ 1860-ական թվականներին Թաթարիայում և Մերձվոլգյան ուրիշ շրջաններում որոշ տարածում ստացավ վահսովականների աղանդը։ Կազանցի վաճառական Բ. Վահսովը առևտրական գործերով Միջին Ասիա կատարած ուղևորությունների ժամանակ ծանոթացել էր սուֆիստական նաքշբենդիե միաբանության գործունեությանը և ուսմունքին։ Այդ ուսմունքի մեջ Վահսովին հատկապես հրապուրել էր այն, որ նրա հետևորդները որպես հոգևոր հեղինակություններ ճանաչում էին ոչ թե պաշտոնական հոգևորականներին, այլ խոջաներին և ուսուցիչներին։ Նաքշբենդիականներն իրենց քարոզներում պահանջում էին վերադառնալ նախնական, «մաքուր» իսլամին։ Վահսովը իրեն հայտարարեց այդ նպատակի անմնացորդ ջատագով, պնդելով, թե իր տոհմածառի արմատները գնում են մինչև «մաքուր» իսլամի ժամանակները։ Նա հավատացյալներին համոզում էր, թե ինքը մի տոհմից է ծագում, որը սերվել է մարգարեի զինակցից և Վոլգյան բուլղարական միջնադարյան խաներից, որոնց շրջանում էր միայն այն ժամանակներում պահպանվում «մաքուր» իսլամը[1]։ 1862 թվականին Վահսովը Կազանում հիմնադրեց այսպես կոչված «Վահսովյան աստվածային գնդի մուսուլմանների հնահավատ ընկերությունը», որի անդամները լայն գործունեություն ծավալեցին «վաղնջական իսլամին վերադառնալու» նշանաբանով։

Որպես սոցիալական և կրոնագաղափարախոսական կարգի երևույթ, վահսովականների շարժումն ուղղված էր գոյություն ունեցող հասարակական-քաղաքական կարգերի դեմ[2]։ Դավանաբանական-դոգմատիկ տեսակետից կրկնելով մուսուլմանական աղանդավորական հոսանքների շրջանում լայնորեն հայտնի «մաքուր» իսլամին վերադառնալու լոզունգը, դրանով իսկ վահսովականներն ակնարկում էին մինչռուսական տիրապետության անցած-գնացած ժամանակները, և ընդհակառակը, ժխտում ինքնակալությունը, նրա չինովնիկական ապարատը, ցարական կարգերն ու հաստատությունները։ Ելնելով դրանից, վահսովականները հրաժարվում էին հարկեր վճարելուց, խուսափում էին ծառայել բանակում, չէին ենթարկվում ցարական դատարանների վճիռներին և այլն։

Չճանաչելով պաշտոնական մուսուլման հոգևորականության հեղինակությունը, վահսովականներն անխնա մերկացնում էին նրա անբարոյականությունն ու ստորաքարշությունը։ Այդ մերկացումները, սակայն, ցարական իշխանությունների համար էական չէին։ Էականն ու անհանդուրժելին այն էր, որ վահսովականներն իսլամ հոգևորականությանը հիմնականում քննադատում էին նրա համար, որ նա մուսուլմանական հավատը վաճառել էր «սլավոնական հրեշին», այնպիսի մի իշխանության, որը, իբր, բնականից իսլամի անհաշտ թշնամին է։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, վահսովականների կողմից ինքնակալության և մուսուլմանական կղերի քննադատությունը ոչ այլ ինչ էր, քան սոցիալական և ազգային ճնշման ենթակա մարդկանց սոցիալ-քաղաքական բողոքի կրոնական արտահայտություն։

Ցարական իշխանությունների հավանությամբ և դրդմամբ Կազանի մուսուլման հոգևորականությունը վահսովական աղանդի դեմ ուղղեց իսլամ ուղղահավատների մոլեռանդությունը։ 1884 թվականին վահսովական աղանդը ջախջախվեց, նրա ղեկավարները դատապարտվեցին բանտարկության և աքսորի։ Ինքը՝ Վահսովը խելագար ճանաչվեց և մի քանի տարի անց մահացավ հոգեբուժական հիվանդանոցում։ Վահսովական աղանդը, որքան էլ սկզբնական շրջանում հրապուրիչ էր, լոկ տեղական նշանակություն ունեցավ և էական ազդեցություն չթողեց Ռուսաստանի մուսուլմանների վրա։ Աղանդը, սակայն, լիովին չվերացավ աւպարեզից, այս կամ այն կերպ շարունակելով իր գոյությունը նաև հետագա երեք տասնամյակներին[1]։

19-րդ դարի 80—90-ական թվականներին Ռուսաստանի մու-

[1] Տե՛ս Е. В. Молостова, Ваисов божий полк. «Мир ислама», т. 1, 1912, № 2, էջ 143—152։

[2] Տե՛ս Н. Ф. Катанов, Новые данные о мусульманской секте ваисовцев. Казань, 1909; С. Ваисов. Воззвание от центральной организации волжских болгарских мусульман, ваисовских божьих воинов. Казань, 1917; М. Сагидуллин. К истории ваисовского движения. Казань, 1930։

[1] Տե՛ս А. И. Крывелев, История религий, том II, էջ 283—284։

սուլմանական ծայրամասերում տարածում գտավ նաև մահդիստական ուսմունքը։

Ինչպես վերևում նշվեց, մահդիստական շարժումը ծնունդ էր առել Սուդանում և տարբեր ձևերով ընթացող հակագաղութային շարժումների նկրտումների ու լոզունգների կրոնական արտահայտությունն էր իսլամի մեջ։ Սուդանում տեղի ունեցած մահդիստական իրադարձությունների արձագանքները, թափանցելով Ռուսաստանի մուսուլմանական տարածքները, ունեցան իրենց անխուսափելի հետևանքները։ Այստեղ ամենուրեք թափառում էին օտարականներ, դերվիշներ, քարոզիչներ, որոնք կանխագուշակում էին վերահաս ահեղ դատաստանի օրը, հայտարարում մահդիի գալստյան մասին։ Բացի այդ, հենց տեղում հայտնվում էին տնաբույծ մահդիներ։ Ուֆայում, օրինակ, որպես մահդի հայտնվեց բաշկիր Ա. Զուվաշևը, իսկ նրա առաքյալ իրեն հայտարարեց նույնպես բաշկիր Ֆ. Աբդալովը։ Նրանք կանխագուշակում էին իսկական մահդիի վերահաս ծնունդը Ռուսաստանում, որին սպասելով՝ մուսուլմանները պետք է արմատապես փոխեին իրենց ամբողջ ապրելակերպը, այսինքն՝ այն ապրելակերպը, որ ստեղծվել էր «անիծյալ ռուսների» կողմից Կազանի, Ղրիմի և մյուս խանությունների նվաճումից հետո[1]։

Ռուսաստանում մահդիզմը հրապուրիչ դարձավ իբրև անկախության գաղափարախոսություն։ Մահդիստներն այստեղ մտածում էին մոտավորապես այսպես. եթե Սուդանի մուսուլմաններին հաջողվել է մահդի Մուհամմեդ Ահմեդի գլխավորությամբ ջախջախել անգլիացի գաղութարարներին և անկախ պետություն ստեղծել, ապա ինչու նույն բանը չեն կարող անել Ռուսաստանի մուսուլմանները՝ ունենալով այնպիսի աջակից, ինչպիսին Թուրքիան է։ Նրանց մոտ այն համոզումն էր ամրապնդվել, որ իրենք է վիճակի են թոթափելու ռուս «անհավատների» իշխանությունը և ստեղծելու սեփական պետություններ՝ «հարազատ» Օսմանյան կայսրության հովանավորության տակ։

Ինչպես վախսովականները, այնպես էլ մահդիականները նկատելի հետք չթողեցին Ռուսաստանում մուսուլմանական կրոնի ներսում սկսված բարենորոգչական ընթացքի վրա։ Բայց դրանք որոշակիորեն նախապատրաստեցին այն շարժումը, որի անվան հետ է կապված Ռուսաստանում պանիսլամիզմի, իսկ հետո նաև՝ պանթուրքիզմի գաղափարների լայն տարածումը։ Խոսքը ջադիդների շարժման մասին է։ Ընդհանուր շատ կողմեր ունենալով մերձավորարևելյան և հնդկական իսլամում տեղի ունեցող բարենորոգչական շարժման հետ, ջադիդիզմը[1] դրսևորեց նաև բազմաթիվ յուրօրինակություններ, մեծ նշանակություն ունենալով Ռուսաստանում իսլամի կրոնագաղափարախոսական մտքի զարգացման և արդիականացման տեսակետից[2]։

Ջադիդները նույնպես լուսավորիչների նման առաջարկում էին արևմտյան մանկավարժության հիմունքներով նոր մեթոդներ մտցնել դպրոցական ուսուցման մեջ, բարեփոխել կրոնական դպրոցները՝ մեդրեսեները և մեքթեբները։ Ըստ որում ռեֆորմը պետք է վերաբերվեր ոչ միայն դասավանդման մեթոդիկային, այլև նրա բովանդակությանը։ Նկատի էր առնվում մտցնել մի շարք աշխարհիկ ուսումնական առարկաներ՝ մաթեմատիկա, բնագիտություն, ռուսաց լեզու, օտար լեզուներ։ Մուսուլմանական դպրոցների ուսուցման մեթոդը, այնտեղ իշխող սխոլաստիկ մթնոլորտը, որտեղ յոթ-ութ տարի շարունակ աշակերտները գետնին նստած իրենց միանգամայն անծանոթ արաբերենով Ղուրան կարդալ էին սովորում, «նոր մեթոդականների» կարծիքով ենթակա էին արմատական փոփոխության։

Ջադիդիզմը սկզբում չուներ հստակորեն արտահայտված քաղաքական գիծ։ Շարժման մեջ մտնում էին տարբեր, երբեմն հակասական, հայացքների տեր մարդիկ՝ «չափավոր» ազատամիտներ, դեմոկրատական հովերով տարված մտավորականներ, որոնց պահանջները սահմանափակվում էին գլխավորապես կրթության կազմակերպման հարցերով։

---

[1] Տե՛ս **А. И. Крывелев.** История религий, том II, էջ 283; «Миссионерский противомусульманский сборник. Труды студентов миссонерского противомусульманского отделения при Казанской духовной академии», вып. XX. Казань, 1894, էջ 159—162:

[1] «Ջադիդիզմ» տերմինն առաջացել է արաբերեն «ուսուլ ի ջեդիդ» արտահայտությունից, որը նշանակում է «նոր մեթոդ»։

[2] Տե՛ս «Два течения». «Мир ислама», т. II, 1913, вып. I, էջ 31—42, **С. Рыбаков.** Новометодисты и старометодисты в религиозном мусульманстве. «Мир ислама», т. II, 1913, вып. XII, էջ 852—871; **А. Аршафуни и Х. Габидуллин.** Очеркии панисламизма и пантюркизма в России, էջ 11—14:

Բայց, ի տարբերություն լուսավորական շարժման, ջադիդական շարժումն ուղղված էր ռուսական կուլտուրայի, ռուսական իշխանությունների դեմ։ Ջադիդները ձգտում էին կրոնական դպրոցների ռեֆորմն իրականացնել, հիմք ընդունելով Պոլսի թուրքերենը։ Նրանք վճռակտնապես հանդես էին գալիս ռուսասեր լուսավորիչների այն տեսակետի դեմ, թե կարելի է փոխել թուրքերենի գրության ձևը և այն հարմարեցնել սլավոնական այբուբենին և այլն։

Հենց այդպիսի գաղափարներ էր պրոպագանդում ջադիդիզմի հիմնադիր, ղրիմցի թաթար հրապարակախոս Իսմայիլ բեյ Գասպրինսկին, որը դարձավ Ռուսաստանում նորագույն իսլամիզմի և թուրքիզմի խոշորագույն տեսաբանն ու քարոզիչը։

Ծնվել է 1851 թվականին Ղրիմում, կրթությունը ստացել Մոսկվայում, ճամփորդել է Ֆրանսիայում և Թուրքիայում, 1875 թ. նշանակվել է դպրոցի տեսուչ, ապա ընտրվել նախկին Ղրիմի խանության մայրաքաղաքի՝ Բախչիսարայի քաղաքապետ։ Ղրիմում նա խոշոր կալվածքներ ուներ։

Դեռևս 1881 թվականին Սիմֆերոպոլում Գասպրինսկին ռուսերեն հրատարակեց «Ռուսական մուսուլմանություն։ Մուսուլմանի մտքերը, նոթերը և դիտարկումները» գիրքը[1], որտեղ շարադրեց Ռուսական կայսրության մահմեդական ժողովուրդների արդիականացման, մասնավորապես մուսուլմանական դպրոցների վերակառուցման մասին իր հիմնական գաղափարները։ Գիրքն ըստ էության նաև գործունեության ծրագիր էր, որը նախատեսում էր մուսուլման կանանց հոգևոր ազատագրում, Պոլսի բարբառի հիման վրա միասնական թուրքերենի մշակում և տարածում, թուրքալեզու մամուլի հիմնադրում, թուրք ազգային մտավորականության ստեղծում և այլն։

Գասպրինսկին գտնում էր, որ առաջավոր ազգերի առաջընթացի ու քաղաքակրթության հիմնական գործոններից մեկը գիտությունների զարգացումն է, ուստի նա մուսուլման գործիչներին կոչ էր անում կողմնորոշվել դեպի ժամանակակից քաղաքակրթությունը, մասնավորապես ճշգրիտ գիտությունները։ Գասպրինսկին նույնպես, Աբդոյի և մյուս բարենորոգիչների

[1] **И. Гаспринский.** Русское мусульманство. Мысли, заметки и наблюдения мусульманина. Симферополь, 1881.

նման, յուրատեսակ էր մեկնաբանում Ղուրանի և Սուննայի այաթները, փորձում էր ապացուցել, որ իսլամական դավանաբանությունը չի հակասում գիտությանը։

Թուրքերենը և իսլամը Գասպրինսկին դիտում էր իբրև հզոր աղդակներ Ռուսաստանի թուրքալեզու ժողովուրդների ազգային ինքնությունը և գիտակցությունը զարգացնելու համար։ Նա հրաչակեց թրքականության (թուրքուլուկ) սկզբունքը։ Նրա կարգախոսներից մեկն էր՝ «Լեզվի, մտածումի և գործի միասնություն» («Դիլդե, ֆիքիրդե, իշդե բիրլիկ»)։

Պոլսի թուրքերենը դիտելով որպես թուրքալեզու բոլոր ժողովուրդների ընդհանուր լեզու և պարտադիր Ռուսաստանի թուրքալեզու ժողովուրդների համար, դրանով իսկ Գասպրինսկին հանդես էր գալիս պանթուրքիզմի դիրքերից և ըստ էության նրա առաջին գաղափարախոսներից մեկն էր[1]։

1883 թվականի ապրիլից Գասպրինսկին Բախչիսարայում սկսեց հրատարակել «Թերջուման» («Թարգման») թերթը՝ երկու լեզվով, որը տարածվում էր Ռուսաստանում և Օսմանյան կայսրությունում։ Թերթի էջերում նույնպես նա սկսեց շատ ակտիվ պրոպագանդել «նոր մեթոդը» և ընդհանրապես իր ազգայնական գաղափարները։

Խոսքից գործի անցնելով և գործնականում իրականացնելով իր մտքերը, Գասպրինսկին, մեծ ջանքեր գործադրելով, Ղրիմում ստեղծեց նոր մեթոդի դպրոցներ, որտեղ Ղուրանի հետ միասին ուսումնասիրում էին մայրենի լեզու, աշխարհագրություն, թվաբանություն և ուրիշ աշխարհիկ առարկաներ։ Շուտով նրա օրինակին հետևեցին Ռուսաստանի մուսուլմանական այլ կենտրոնները։ Գասպրինսկին մեծ թվով համախոհներ ունեցավ ոչ միայն Ղրիմում, կազանի թաթարների մոտ և Ադրբեջանում, այլև Պովոլժիեում, Ուրալում, Միջին Ասիայում։ Ամենուր լույս էին տեսնում մոդեռնիստական ոգով գրված գրքեր, հրապարակ էին գալիս ջադիդական ուղղության թերթեր ու հանդեսներ։

Առաջ քաշելով իսլամի բարելավման, բարեփոխման ծրագիր, Ի. Գասպրինսկին և նրա հետևորդները գտնում էին, որ այդ բարեփոխումը հնարավոր կլինի իրականացնել միայն Ռուսա-

[1] Ի. Գասպրինսկու օրինակն ունենալով, որոշ իմաստով կարելի է նույնիսկ ասել, որ պանթուրքիզմի գաղափարն առաջին անգամ ծագել է Ռուսաստանում ապրող թուրք-թաթարական շրջաններում։

կան կայսրության մուսուլմանական բոլոր տարածքների հավատացյալների միացյալ ջանքերով, նրանց գաղափարական, իսկ ապա նաև՝ քաղաքական միավորման դեպքում։ Այստեղից էլ բխում է ջադիդների բացահայտ պանիսլամիզմը, որն ըստ էության բարենպաստ հող էր ստեղծում պանթուրքիզմի գաղափարների տարածման համար։ Այդ գործում հատկապես լայն գործունեություն ծավալեցին ջադիդական ազգայնական մամուլի օրգանները։

Դեռ 80-ական թվականներից Թաթարիայում սկսեց հրատարակվել «Թուրք Եուրդու» թերթը՝ հենց սկզբից մղելով ակտիվ պանիսլամական պրոպագանդա։ Նման դեր ստանձնեց նաև ավելի ուշ այդտեղ հրապարակ եկած «Էրլտրգ» օրաթերթը՝ Թաթար մտավորական Մաքսուդովի խմբագրությամբ։ Ռուսաստանում պանիսլամիզմի պրոպագանդման ուղղությամբ մեծ ջանքեր էր գործադրում Ադրբեջանում նրա գլխավոր ձայնափողը՝ «Կասպի» թերթը։

Արդեն 90-ական թվականների վերջերին ջադիդական շարժումը մեծ ուժ էր դարձել։ Նրա գործունեությունը դպրոցական ռեֆորմի շրջանակներից աստիճանաբար դուրս գալով, ըստ էության, ստացավ ամբողջ մուսուլմանական կրոնի արդիականացման համար պայքարի բնույթ։

Ինչպես ասվեց, Ռուսաստանի սահմաններից դուրս պանիսլամիզմը որոշ դրական լիցք էր կրում այնքանով, որքանով այն ուղղված էր նաև եվրոպական գաղութարարների դեմ։ Իր հերթին իսլամում ծագած բարենորոգչական շարժումը Եգիպտոսում և Հնդկաստանում ինչ-որ չափով ուղղված էր պանիսլամիզմի դեմ, որովհետև շարժումն արտահայտում էր այդ երկրների բարձրացող ազգային բուրժուազիայի շահերը, որը ձգտում էր անկախ և ինքնուրույն լինել Օսմանյան կայսրությունից, ունենալ սեփական ազգային պետություն և ներքին ազգային շուկա։ Այդ պատճառով եվրոպական գաղութարարները Օսմանյան կայսրության մեջ և մուսուլմանաբնակ իրենց գաղութներում մահմեդական կրոնի բարեփոխման համար ծնունդ առած շարժմանը երբեմն հաշտ աչքով էին նայում, նույնիսկ աջակցում բարենորոգիչներին։

Բարենորոգիչների հանդեպ իշխանությունների վերաբերմունքը միանգամայն այլ էր ցարական Ռուսաստանում։ Ռուսական իշխանությունները դեմ չէին իսլամին և, ինչպես տեսանք,

աջակցում էին նրան։ Ինչ վերաբերում է պանիսլամիզմին և դրա կրողներին, ապա դրանց հանդեպ ցարիզմը հենց սկզբից թշնամական դիրք բռնեց։ Դա պատահական չէ, որովհետև պանիսլամիզմի նպատակը Ռուսաստանի մուսուլմանական և թուրքալեզու տարածքները ռուս «անհավատների լծից ազատագրելն» էր և դրանք ապագա համաշխարհային մուսուլմանական կայսրությանը կցելը։ Ռուսաստանում բարենորոգչական շարժումը հենց սկզբից ընթացավ ոչ միայն պանիսլամիզմի, այլև պանթուրքիզմի դրոշով։ Այստեղ սեփական ազգային պետության և ներքին շուկայի ստեղծումը կապված էր շատ ավելի մեծ դժվարությունների՝ Ռուսական կայսրության քայքայման և մուսուլմանների «ազատագրության» հեռանկարի հետ, որի իրականացումը հնարավոր կլիներ միայն Օսմանյան կայսրության քաղաքական-դիվանագիտական աջակցությամբ և հատկապես ռազմական ակտիվ միջամտությամբ։

Այլ խոսքով, եթե բանը վերաբերում էր Օսմանյան կայսրությանը, ապա այստեղի բարձրացող թուրք բուրժուազիան միշտ չէ, որ նույնացնում էր պանիսլամիզմը և պանթուրքիզմը։ Իսկ եթե խոսքը գնում էր ցարական Ռուսաստանի մասին, ապա այդ նույն բուրժուազիան և Ռուսաստանի նոր ձևավորվող թուրքալեզու բուրժուազիան որևէ հակասություն չէին տեսնում պանթուրքիզմի և պանիսլամիզմի գաղափարների միջև։ Դա այդպես էլ պետք է լիներ, որովհետև եթե Օսմանյան կայսրության մեջ մեծամասնություն էին կազմում ոչ թուրք մուսուլմանները, ապա Ռուսական կայսրության մեջ համարյա բոլոր մուսուլմանները թուրքալեզու էին։

Ջադիդների բարենորոգչական շարժումը հենց սկզբից ուժեղ դիմադրության հանդիպեց կայսրության մուսուլման հոգևորականության հետադեմ մասի, բոլոր ուղղափառ մուսուլմանների, այլ խոսքով՝ բոլոր պահպանողական հավատացյալների կողմից, որոնք իրենց ավանդապաշտության շնորհիվ ստացել էին մադիմականեբ անունը[1]։ Ջադիդների գործունեությունը խիստ հետապնդվում էր հատկապես Բուխարայի և Խիվայի կրոնապետական խանություններում[2]։

---

[1] *Մադիմականներ— «մադիմ», այսինքն՝* անփոփոխ, վաղնջական *բառից։*

[2] *Տե՛ս* «Очерки истории Коммунистической партии Таджикистана». Третье издание, дополненное и переработанное. Том I (1903—1937 гг.). Душанбе, 1980, էջ 27։

Ինչպես տեսանք, 19-րդ դարի վերջին քառորդում մուսուլմանական կրոնը արդիականացման բուռն պրոցես ապրեց։ Մահմեդական խոշոր գործիչներից ոմանք մի կողմից ձգտում էին իսլամականությունը և պանիսլամիզմը հարմարեցնել հակագաղութային պայքարի խնդիրներին, մյուս կողմից՝ բարձրացող մուսուլմանական բուրժուազիայի շահերին։ Իսլամի հիմքի վրա բոլոր մահմեդականներին միավորելու մասին քարոզը, համաշխարհային իսլամական պետություն ստեղծելու գաղափարը դեմ առավ բազմաթիվ արգելքների։ Պանիսլամիզմի քարոզն անխուսափելիորեն հանդիպեց քրիստոնեական երկրների բացահայտ թշնամանքին, ինչպես նաև հակասության մեջ մտավ Արևելքի ձևավորվող ազգերի ներսում սաղմնավորվող բուրժուական նացիոնալիզմի, առանձին ազգային պետությունների ստեղծման գաղափարի հետ։ Ավելին, պանիսլամիզմը ստիպված էր հաղթահարել հենց իսլամի ներսում հանդես եկած հակապանիսլամական հոսանքների դիմադրությունը։

19-րդ դարի վերջերից պանիսլամիզմը աստիճանաբար կորցրեց հակագաղութային ուղղվածությունը։ Սուլթան Աբդուլ Համիդի և մուսուլմանական աշխարհի մյուս կառավարողների, մուսուլմանական վերնախավերի ձեռքին այն արդյունավետ միջոց էր մասսաների գիտակցությունը մթագնելու, նրանց ուշադրությունը սոցիալական հուզող հարցերից շեղելու համար։

Այսպիսով, չնայած իսլամի նորացման համար սկսված շարժման մեջ երբեմն հանդես էին գալիս կիսաառաջադիմական տենդենցներ, բայց և այնպես ամբողջության մեջ այն շարունակում էր ծառայել մուսուլմանական աշխարհի կղերաֆեոդալական վերնախավերի շահերին։ Ազգային գաղութային հարցի վերաբերյալ իր թեզիսներում Վ. Ի. Լենինը վճռականապես դատապարտել է պանիսլամիզմը, որը սոսկ ամրապնդում է «խանների, կալվածատերերի, մոլլաների և նմանների դիրքերը»[1]։ Հասարակական զարգացման ընթացքում «հեղափոխական» շարժումների մուսուլմանական կրոնագաղափարախոսական ձևն անփոփոխ կերպով երևան էր բերում դրանց պատմական սահմանափակությունը։

[1] Վ. Ի. Լենին, հտծ, հ. 41, էջ 199։

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՀԱՆԴԵՍ ԳԱԼԸ։ «ՕՍՄԱՆՅԱՆ ԱԶԳԻ» ԳԱՂԱՓԱՐԸ։ ՊԱՆԻՍԼԱՄԻԶՄԸ ԹՈՒՐՔ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ԶԻՆԱՆՈՑՈՒՄ

Աբդուլ Համիդի կառավարման տարիներին թվում էր, թե ամրապնդվել են Թուրքիայի ֆեոդալական-բռնապետական կարգերը՝ կասեցնելով բուրժուական առաջադիմական զարգացման տենդենցները։ Իրականում, սակայն, թեև շատ դանդաղ, բայց որոշակի սոցիալ-տնտեսական տեղաշարժեր էին կատարվում երկրում։ Օսմանյան կայսրության մեջ անշեղորեն շարունակվում էր կապիտալիստական հարաբերությունների զարգացումը։ Եվ դա ոչ միայն ծովափնյա քաղաքներում, որտեղ այդ զարգացման տոն տվողը նախկինի պես Թուրքիայի այլազգի բուրժուազիան էր, այլև երկրի կենտրոնական շրջաններում։ Ուժեղանում էին ձևավորվող թուրք ազգային բուրժուազիայի դիրքերը տնտեսության զանազան ոլորտներում։

Չնայած այդ ամենին, թուրքական բուրժուազիայի տնտեսական դիրքերը երկրում դեռ երերուն էին, դեռ նա նոր էր ամրապնդվում իբրև դասակարգ։ Նրա զարգացման ճանապարհին առաջվա պես լուրջ խոչընդոտ էր ֆեոդալական-սուլթանական բռնապետական ռեժիմը, որին բացահայտորեն իրենց կամքն էին թելադրում եվրոպական մեծ տերությունները, օտարերկրյա կապիտալը։ Ամեն ինչից երևում էր, որ սուլթանական-բռնապետական կարգերի դեմ ընդդիմությունն առաջիկայում անխուսափելի և լուրջ էր լինելու։

Ընդհատակ անցած «նոր օսմանների» գաղափարները թուրք մտավորականության առանձին խավերի և զինվորականության մեջ տակավին կենսունակ էին։ Արդեն 80-ական թվականների վերջերից թուրքական բուրժուազիայի շահերն արտահայտող իսլամ մտավորականության որոշ ներկայացուցիչներ, աս-

տիճանաբար սթափվելով աբդուլհամիդյան ռեակցիայի ծանր հարվածներից, երազում էին սահմանադրական շարժման տարիների համեմատաբար տանելի քաղաքական ազատությունների մասին։ Գնալով հող էր ստեղծվում օրվա ռեժիմի դեմ գաղափարական-քաղաքական շարժման համար։

19-րդ դարի 60—70-ական թվականներին, այսինքն՝ սահմանադրական շարժման տարիներին ձևավորված թուրք մտավորական ուժերը նոր ժամանակներում՝ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին դառնում էին մի նոր շարժման՝ «երիտասարդ թուրքերի» շարժման սկզբնավորման նախօրինակ։

1889 թվականին Ստամբուլի ռազմաբժշկական ուսումնարանում ձևավորվեց մի գաղտնի քաղաքական կազմակերպություն՝ ծագումով ալբանացի ուսանող Իբրահիմ Թեմոյի գլխավորությամբ։ Որդեգրելով 60—70-ական թվականների սահմանադրականների հիմնական սկզբունքներն ու լոզունգները, կազմակերպությունն իր առջև խնդիր դրեց պայքար սկսել Աբդուլ Համիդի բռնապետական կարգերի դեմ։ Կազմակերպության հիմնադիր կոմիտեում, բացի թուրքերից, կային կայսրության մուսուլմանական տարբեր ազգությունների ներկայացուցիչներ։ Իբրահիմ Թեմոյից բացի նրա մեջ էին մտնում թուրք Շերեֆեդդինը, բոսնիացի Ալի Ռյուշտյուն, քրդեր Իսխակ Սուկուտին, Աբդուլլա Ջեվդեթը և ուրիշներ[1]։ Կազմակերպությունը պաշտոնապես ընդունեց «Միություն և առաջադիմություն» կոմիտե անունը, որը երիտասարդ թուրքերի շարժման սկիզբն ավետող առաջին կազմակերպությունն էր։

Սակայն երիտթուրքական շարժման ձևավորման շրջանում, այսինքն՝ 90-ական թվականներին, այդ շարժման կենտրոնը Փարիզն էր դարձել։ Նույն տարիներին Փարիզում ապրած հընչակյան գործիչ Սապահ-Գյուլյանը հետագայում վերհիշում է. «Պարիզը ուխտատեղի էր, մի տեսակ թուրք Արշակավան։ Ով պաշտոն էր ուզում կամ պաշտոնի բարձրացում և չէր կարողանում իր առաջադրած նպատակին հասնել, վազում գալիս էր Պարիզ և իրեն «երիտասարդ» հայտարարում։ Բավականություն ստացողը խղճի ամենայն հանդարտությամբ վերադառնում էր։ «Երիտասարդ թրքությունը» մի տեսակ միջոց էր դարձել սուլթան Համիդի կառավարությունից պաշտոններ, դրամներ, առավելություններ կորզելու և անձնական վրեժխնդրություններ առաջ մղելու համար։ Բացի շատ սահմանափակ թվով անհատներից, մնացածները հարափոփոխ տարրեր էին, որոնք գաղափարական տեսակետից ոչինչ չէին ներկայացնում և դրա համար էլ իրենց թիվը երբեմն ահագին չափեր էր առնում, երբեմն էլ շատ ոչնչի իջնում»[1]։

[1] Տե՛ս **А. Ф. Миллер.** Краткая история Турции, էջ 116։

Հենց այստեղ էլ՝ Փարիզում, 1894 թվականին թուրք քաղաքական վտարանդիների շրջանում ձևավորվեց մի նոր կազմակերպություն, որտեղ ղեկավար դեր ստանձնեցին մտավորականներ Նազիմը և Ահմեդ Ռիզան։ Այս կազմակերպությունը նույնպես կոչվեց «Միություն և առաջադիմություն» կոմիտե, որը շուտով դարձավ երիտթուրքերի արտասահմանյան կենտրոն։ Ահմեդ Ռիզան կանգնեց այդ կենտրոնի գլուխ՝ դառնալով երիտթուրքական շարժման ղեկավարներից և նշանավոր գաղափարախոսներից մեկը։ Փարիզում սկսելով ֆրանսերեն հրատարակել «Մեշվերեթ» («Քննարկում»), իսկ թուրքերեն «Շուրա-ի ումմետ» թերթերը, նա դրանց էջերում տեսականորեն հիմնավորում էր երիտթուրքերի քաղաքական նպատակները[2]։ Ի տարբերություն երիտթուրքերի Ստամբուլի կազմակերպության, որն արմատականորեն էր տրամադրված սուլթանական ռեժիմի նկատմամբ, Փարիզի կենտրոնը կանգնեց չափավոր դիրքերում։

1895 թվականին Փարիզում հայտնվեց երիտթուրքերի մի կազմակերպություն ևս՝ ձևավորվելով նախկինում Եգիպտոսում լույս տեսած, իսկ այժմ Եվրոպայում վերահրատարակվող «Միզան» («Կշեռք») ռազմաշունչ շաբաթաթերթի շուրջը։ Թերթը վերստեղծել և խմբագրում էր հայտնի պատմաբան Մուրադ բեգը։ Նա ծագումով դաղստանցի էր, որտեղից անցել էր Թուրքիա, գնացել Եգիպտոս, այնտեղից եկել Փարիզ։ Շատ չանցած սա նույնպես դարձավ երիտթուրքերի ղեկավարներից ու գաղափարախոսներից մեկը։ Սուլթանի նկատմամբ Ահմեդ Ռիզայի կազմակերպության չափավոր դիրքի համեմատությամբ նույնիսկ Մուրադ բեյի խումբը կանգնած էր ծայրահեղ աջ դիրքերի վրա։ Բացահայտորեն պաշտպանելով Աբդուլ Համիդի ազգային ջար-

[1] Ս. Սապահ-Գյուլյան, *Պատասխանատուները*, տպ. «Երիտասարդ Հայաստանի», Փրավիտենս, 1916, էջ 137։

[2] Տե՛ս **А. Ф. Миллер.** Краткая история Турции, էջ 117։

դարար քաղաքականությունը, նա հատկապես արդարացի էր համարում սուլթանի հայակուլ գործելակերպը։

Մոտավորապես այդ ժամանակ Ժնևում հիմնվում է երիտթուրքերի մի ուրիշ կազմակերպություն, որը 1897 թվականից սկսում է լույս ընծայել «Օսմանլը» («Օսմանցի») թերթը։ Նույն թվականին Կահիրեում ստեղծվում է «Միություն և առաջադիմություն» կազմակերպության բաժանմունքը, որը Հոջա Դաուրիի խմբագրությամբ սկսում է հրատարակել «Կանուն-ի էսասի» («Սահմանադրություն») և «Բասիրեթ ուշ-շարկ» («Արևելքի իմաստություն»), իսկ Ահմեդ Սանբայի խմբագրությամբ՝ «Սանջակ» թերթերը[1]։ Այս կազմակերպության ղեկավար անդամներից մի քանիսը տարիներ անց՝ 1902 թվականին, հիմնում են մի ուրիշ կազմակերպություն՝ «Օսմանյան համաձայնության ընկերություն» անունով։ 1904 թվականին Ստամբուլում սկսեց գործել երիտթուրքական շարժման ևս մի բջիջ՝ «Հեղափոխական ընկերություն» անունով։ Նույն թվականին Ժնևում հիմնադրվում է «Միության և հեղափոխության օսմանյան ընկերություն» կազմակերպությունը։ Երիտթուրքական կազմակերպություններ էին ստեղծվել նաև Ռումինիայում, Բուլղարիայում, Ալբանիայում և այլուր։

Վերը նշված թերթերից բացի երիտթուրքերն ուրիշ մի շարք երկրներում ևս ունեին տպագիր օրգաններ։ Օրինակ՝ Իտալիայում (Նեապոլում) լույս էին տեսնում «Իստիկբալ» («Ապագա»), Ժնևում՝ «Խիզմեթ» («Դատողություն»), Լոնդոնում՝ «Հյուրիեթ» («Ազատություն») թերթերը։ Բացի այդ, Լոնդոնում և Նյու Յորքում արաբերեն լույս էին տեսնում «Խիլյաֆեթ» («Խալիֆաթ») և «Սուրիե» («Սիրիա»), Բրյուսելում՝ ալբաներեն «Ալբանիա», Կահիրեում՝ քրդերեն «Քուրդիստան» թերթերը[2]։

Երիտասարդ թուրքերի շարժումը խիստ կտրված էր մասսաներից. նրա պարագլուխները խորշում էին ժողովրդական խավերից, մասսայական շարժման փոխարեն գերադասում պրակտիկ գործողությունների դավադրական մեթոդները։

Երիտասարդ թուրքերի բոլոր կազմակերպություններին միավորում էր երեք հիմնական քաղաքական պահանջ՝ պալատական հեղաշրջման միջոցով Աբդուլ Համիդի բռնապետական ռեժիմի տապալում, 1876 թվականի սահմանադրության վերականգնում, պառլամենտի գումարում։ Այս բոլոր հարցերում նրանք համակարծիք ու միակամ էին։

Շարժումը խարսխված էր «նոր օսմանների» գաղափարական-տեսական ժառանգության վրա։ Նրանց բազմաթիվ գաղափարներ ու մտքեր երիտթուրքերն ընդօրինակեցին առանց որևէ փոփոխության։ Որոշ գաղափարներ էլ սրանք կոնկրետացրին 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ստեղծված նոր պայմանների համեմատ, դրանք «զարգացրին» ծայրահեղ աջ դիրքերից, իրենց վերաբերմունքը մշակեցին թուրքական ազգային բուրժուազիային հուզող համարյա բոլոր հարցերում։

Վերաբերմունք երկրի կառավարման համակարգի նկատմամբ։ Երիտթուրքերի կարծիքով սուլթանական-բռնապետական կարգերը պետք է վերացվեին։ Նրանք համոզված էին սակայն, որ կայսրությունը չի կարող յոլա գնալ առանց սուլթանի, միայն թե նա լինի «բարի», «լավ» սուլթան։ Հետևապես պետք է պայքարել սահմանադրական միապետության համար, որի պայմաններում միայն կարելի է ապահովել երկրի տնտեսական և կուլտուրական արագ առաջադիմությունը։ Ինչպես նշում էր Ի. Գոլոբորոդկոն, երիտթուրքերի շարժումը «ապստամբում էր ռեժիմի, բայց ոչ սուլթանի դեմ»[1]։ Իր հրատարակություններից մեկում Փարիզի «Միություն և առաջադիմություն» կոմիտեն ազդարարում էր. «Թո՛ղ բոլորին հայտնի լինի, որ մենք սահմանադրական ռեժիմի պայմաններում էլ չենք կարող մեր գահը պատկերացնել առանց այժմ թագավորող դինաստիայի»[2]։

Վերաբերմունք դեպի մուսուլմանական կրոնը։ Երիտթուրքական բոլոր կազմակերպություններին հուզող մյուս կարևոր խնդիրը կայսրության մեջ տիրող կրոնական գաղափարախոսության՝ իսլամի հանդեպ որոշակի դիրքորոշում մշակելն էր։

Մեծագույն պատկառանք տածելով մահմեդական կրոնի սկզբունքների և նորմերի հանդեպ, երիտթուրքերի գաղափարախոսները փորձում էին հիմնավորել, թե դրանք բնավ չեն հակասում սահմանադրական կարգերին, որոնց իրենք ձգտում են։

---

[1] Տե՛ս Սողոմոն Թեհլիրեան, Վերյիշումներ, Գահիրե, 1953, էջ 28—29։

[2] Տե՛ս Г. З. Алиев. Турция в период правления младотурок, изд-во «Наука», М., 1972, էջ 58։

[1] Տե՛ս И. И. Голобородько (И. Южанин) Старая и новая Турция, էջ 212։

[2] Նույն տեղը։

Ահմեդ Ռիզան և նրա համախոհներն այն տեսակետին էին, թե մահմեդական կրոնը ոչ միայն առաջադիմության արգելք չէ (այդ տարիներին մուսուլմանական կրոնի՝ որպես արգելքի մասին շատ էին գրում հատկապես եվրոպացի հետազոտողները), այլև բարենպաստ հանգամանքների բերումով կարող է առաջադիմության մեծագույն խթան դառնալ։

Մուսուլմանական կրոնի հանդեպ երիտթուրքերի խոր ակնածանքը և իրենց նպատակներին հասնելու համար այն օգտագործելու կարևորությունը նրանց անխուսափելիորեն կանգնեցրեց պանիսլամիզմի գաղափարական դիրքերի վրա։ Նրանք նույնպես թուրքական սուլթանին դիտում էին որպես բոլոր մուսուլմանների խալիֆ և այս հանգամանքը ձգտում էին առավելագույնս ծառայեցնել կայսրության շահերին։

Վերաբերմունք օսմանիզմի գաղափարախոսության նկատմամբ։ Օսմանիզմի հանդեպ վերաբերմունքն ըստ էության դարձել էր կայսրության այլազգի, մասնավորապես քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ վերաբերմունքի հարց և այն սկզբնական շրջանում կենտրոնական տեղ էր գրավում երիտասարդ թուրքերի հայացքների համակարգում։

19-րդ դարի ընթացքում թուրքական սուլթանների տիրապետությունը թոթափել էին Հունաստանը, Բուլղարիան, Սերբիան, Չեռնոգորիան, Ռումինիան, Բոսնիա-Հերցեգովինան, Կրետե և Սամոս կղզիները, այսինքն՝ մոտ մեկուկես միլոն քառակուսի կիլոմետր տարածություն զբաղեցնող 28 միլիոնից ավելի ազգաբնակչություն։

Երիտթուրքական բոլոր կազմակերպությունները միակամ և միակարծիք էին մի հիմնական հարցում, այն է՝ բոլոր միջոցներով պահպանել կայսրության ամբողջականությունը, թույլ չտալ նրա հետագա քայքայումն ու փլուզումը։ Բայց ինչպիսի՞ միջոցներով գլուխ բերել դա, ինչ մեթոդներով խափանել կայսրության ժողովուրդների ազգային անկախության հասնելու ձգտումը։

Եվ ահա օսմանիզմի ըմբռնման հարցում երիտթուրքերի տարբեր հոսանքների միջև առաջ եկան լուրջ տարաձայնություններ։

Երիտթուրքերի մի մասը, որն արտահայտում էր միջազգային առևտրական գործառնության ոլորտում ընդգծված թուրքական բուրժուազիայի շահերը (Շերևֆեդդին և ուրիշներ), հանդես էր գալիս կայսրության թուրք և այլազգի բուրժուազիայի միջև

ամուր դաշինք ստեղծելու պահանջով։ Իսկ ինչպե՞ս հասնել այդ նպատակին։ Իբրև դրան հասնելու միջոց նրանք առաջարկում էին ապակենտրոնացնել կայսրության վարչական կառավարման համակարգը, ինչպես նաև տնտեսական և քաղաքական իրավահավասար համագործակցություն հաստատել եվրոպական տերությունների հետ։ Թե ինչպիսին էր լինելու այդ դաշինքի ներքին բովանդակությունը՝ երիտթուրքերի այդ լիբերալ մասը դեռ որոշակի պատկերացում չուներ։ Բայց նրանց օսմանիզմը չէր բացառում կայսրության մեջ առանձին ազգերի գոյությունը տեսանելի ապագայում։ Ավելին, նրանք առայժմ նույնիսկ ձևականորեն, հանդես էին գալիս գոնե կայսրության ոչ թուրք ազգերի իրավահավասարության օգտին։

Ինչպես վերևում տեսանք, կայսրության մեջ առանձին ազգերի գոյությունը ժամանակին չէր բացառում նաև «նոր օսմանների» ղեկավարներից Ալի Սուավին՝ իր «օսմանյան ազգի» գաղափարով։ Երիտթուրքերի լիբերալ մասը նույնպես, ինչպես Սուավին, գտնում էր, որ կայսրության հպատակ ժողովուրդները երկար ժամանակ ապրելով թուրքերի հետ կողք կողքի, նրանց իշխանության տակ, դեռ շատ վաղուց ամբողջովին կորցրել են ինքնուրույն ապրելու կարողությունը և, բնականաբար, միասնական «օսմանյան ազգ» ստեղծելու համար բացառիկ հարմար տարրեր են։ Այդ նպաստավոր պայմաններում բոլոր ոչ թուրքերը աստիճանաբար կձուլվեն թուրքերի մեջ և տեսանելի ապագայում կստեղծվի միասնական «օսմանյան ազգ»։ Այդ նպատակին հասնելու ճանապարհին նրանք կարևոր էին համարում կայսրության ողջ տարածքում ժողովրդական կրթության միասնական համակարգի ստեղծումը։ Մասնավորապես գտնում էին, որ նախ դպրոցները հիմնականում պետք է կենտրոնացած լինեն պետության ձեռքին, ապա՝ թուրք և ոչ թուրք երեխաների ուսուցումը պետք է ընթանա համատեղ՝ նույն դպրոցներում, որոնցում դասավանդումը տարվելու էր միայն ու միայն թուրքերեն՝ իբրև առաջիկայում ստեղծվելիք «օսմանյան ազգի» միասնական լեզու։

Այսպիսով «օսմանյան ազգը» ըստ էության պետք է լիներ թուրք ազգի և նրա մեջ ձուլված, արդեն լիովին ուծացած ոչ թուրք ազգերի էթնիկական ամբողջություն։

Երիտթուրքերի մյուս մասը, որ արտահայտում էր կայսրության տիրապետող ազգի բարձրացող արդյունաբերական բուր-

ժուազիայի, մասնավորապես Անատոլիայի նոր ձևավորվող թուրք բուրժուազիայի շահերը (Մուրադ բեգ, Ահմեդ Ռիզա և ուրիշներ), վճռականորեն պահանջում էր նախ խափանել երկրի ներքին գործերին օտար պետությունների ամեն մի միջամտություն, հենց սկզբից առաջին պլան մղել Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների ոչ թե համագործակցության, այլ միասնության գաղափարը։ Այդ նպատակին հասնելու միջոցը նրանք համարում էին ոչ թե երկրի կառավարման համակարգի ապակենտրոնացումը, այլ, ընդհակառակը՝ ծայրահեղ կենտրոնացումը։ Նրանք գտնում էին նաև, որ միասնական «օսմանյան ազգի» ստեղծումը չպետք է թողնել անորոշ ապագային, այլ պետք է գլուխ բերել հնարավորին կարճ ժամանակում։

Առաջին հայացքից կարող է թվալ, թե չնայած «օսմանյան ազգի» գաղափարի հանդեպ երիտթուրքերի երկու թևերի միջև եղած զգալի տարբերություններին, այնուամենայնիվ, ամբողջության մեջ օսմանիզմի երիտթուրքական մեկնաբանումն առաջադիմական կողմեր ուներ գոնե այնքանով, որքանով այն առաջադրում էր խաղաղ միջոցներով կայսրության մեջ ազգային-էթնիկական միասնություն ստեղծելու պահանջ։ Բայց իրականում բանն այդպես չէր։ Երիտթուրքերի օսմանիզմի նպատակը, վերջին հաշվով, Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանումը, հետևաբար թուրքական սուլթանի բիրտ տիրապետության հավերժացումն էր ոչ թուրք ժողովուրդների վրա, որոնք պայքարում էին բռնապետությունից ազատագրվելու և ինքնուրույն կյանքով ապրելու բնական իրավունք ձեռք բերելու համար։ Որքան էլ օսմանիզմի քարոզով հանդես եկող երիտթուրքերը ճգնում էին ոչ թուրք ժողովուրդներին համոզել, թե իրենք կայսրության բոլոր ժողովուրդների իրավահավասարության կողմն են, սակայն նրանց մեծապետական շովինիզմն իսկույն մերկանում էր, երբ ոչ թուրք ժողովուրդներին կոչ էին անում հրաժարվել ազգային-ազատագրական շարժումներից, ամեն առիթով ընդգծում թուրքերի «բացառիկ» լինելը, տարփողում նրանց «հերոսական պատմության», նրանց անցած «պանծալի ուղու» մասին և այլն։ Միաժամանակ այլազգիների մեջ ոչ լիարժեքության գիտակցություն պատվաստելու նպատակով երիտթուրքերն ամեն կերպ փորձում էին ապացուցել նրանց հանդեպ թուրքերի անառարկելի գերազանցությունը, նրանց մոտ երախտագիտության զգացում առաջ բերել «օսմանյան մեծ

սուլթանների» հանդեպ, որոնց նրանք իբր պարտական են իրենց գոյության և «առաջադիմության» համար։

Եթե երիտթուրքերի հրապարակ գալու առաջին շրջանում նրանց օսմանիզմը զգալիորեն տարբերվում էր աբդուլհամիդյան օսմանիզմից, ապա հետագայում դրանց միջև տարբերություն համարյա չէր նկատվում։ Սուլթանական օսմանիզմը, իբրև կայսրության ամբողջականության պահպանման գաղափար, թելադրում էր որքան հնարավոր է շատ մարդ ունենալ պետության մեջ՝ կարելվույն չափ շատ հարկ հավաքելու համար։ Երիտթուրքական օսմանիզմը, իբրև կայսրության ամբողջականության պահպանման գաղափար, թուրք ազգային բուրժուազիայի համար պետք է ապահովեր հումքի աղբյուրներ և ապրանքների վաճառքի լայն շուկա։ Այնպես որ երիտթուրքերի հանդես գալուց մեկ տասնամյակ հետո սուլթանական և երիտթուրքական հասկացությունները նույնացան։ Դարեր շարունակ լինելով կայսրության պաշտոնական գաղափարախոսություն, օսմանիզմը դառնում էր նաև ձևավորվող թուրք ազգային բուրժուազիայի շահերի արտահայտիչ երիտթուրքերի գաղափարախոսությունը։

Երիտթուրքական կազմակերպությունները քաղաքական գլխավոր հարցերում միակարծիք լինելով, տարակարծիք էին մի գլխավոր և մի շարք երկրորդական հարցերում։ Գլխավոր հարցը, որի շուրջը ծավալվում էին տարաձայնությունները, այն էր, թե Աբդուլ Համիդի բռնապետական ռեժիմի տապալումից հետո ինչ աստիճանի են սահմանափակվելու սուլթանի իրավունքները։ Կայսրության ապագա պետական կառուցվածքի մասին միասնական տեսակետ չկար նույնիսկ երիտթուրքական շարժման աջ և ձախ թևերի ներսում։ Միմյանց հետ չէին կարողանում լեզու գտնել, օրինակ, Ահմեդ Ռիզան և Մուրադ բեգը, չնայած երկուսն էլ պատկանում էին շարժման աջ թևին։

Երիտթուրքական շարժման մեջ առաջացած տարաձայնությունները պատահական չէին։ Դրանց հիմնական պատճառը շարժման մասնակիցների խայտաբղետ սոցիալական կազմն էր։ Շարժման հիմնական ուժը թուրքական ռազմաշինովնիկական երիտասարդ մտավորականությունն էր, որն արտահայտում էր թուրք ազգային բուրժուազիայի և լիբերալ կալվածատերերի տնտեսական ու քաղաքական շահերը։ Բայց շարժման մեջ ներգրավվել էին նաև ֆեոդալական բյուրոկրատիայի շատ ներկայացուցիչներ, շարժմանը հարել էին նաև պետական-բյուրոկրա-

տական ապարատի բարձրաստիճան չինովնիկներ, նույնիսկ՝ սուլթանական արքունիքի անդամներ։ Այս ամենի հետևանքով շարժումն աստիճանաբար ավելի ու ավելի ռեակցիոն էր դառնում։

Երիտթուրքերի տարբեր խմբերի ու կազմակերպությունների միջև ամուր կապի բացակայությունը և նրանց բաժան-բաժան գործունեությունը լուրջ խոչընդոտ էին ռեժիմի դեմ քաղաքական պայքարի զարգացման համար։ Ահա թե ինչու շարժման շատ ակտիվ մասնակիցներ պահանջում էին շուտափույթ կերպով միավորել բոլոր ուժերը։

Առաջին փորձն արվեց 1899 թվականին, երբ միավորման նախաձեռնությունն իր վրա վերցրեց երիտթուրքերի Կահիրեի բաժանմունքը, որը, սակայն, հաջողությամբ չպսակվեց։ Չնայած դրան, միասնական քաղաքական կազմակերպություն ունենալու գաղափարը գնալով խորանում էր։ Միավորման համար շարժմանը շատ նպաստեց Դամադ Մահմուդ փաշայի ծավալած ակտիվ աշխատանքը։ Սա, որ սուլթան Աբդուլ Համիդի քրոջ ամուսինն էր և թուրքական պետական բյուրոկրատիայի խոշոր ներկայացուցիչներից մեկը, գժտվելով սուլթանի հետ, իր երկու որդիներ՝ Մեհմեդ Սաբահեդդինի և Ահմեդ Լյուտֆուլլահի հետ միասին 1899 թվականի վերջերին անցավ Փարիզ և միացավ Ահմեդ Ռիզային։ Դա ոգևորեց երիտթուրքերին, նրանց մոտ նոր հույսեր արթնացրեց։ Շատ չանցած Մեհմեդ Սաբահեդդինը դարձավ երիտթուրքական էմիգրացիայի խոշոր գործիչներից մեկը և իր հերթին բուռն գործունեություն ծավալեց երիտթուրքական կազմակերպությունների միավորման ուղղությամբ։

Մինչ երիտթուրքերը զբաղված էին իրենց շարքերում համերաշխություն ստեղծելու խնդրով, թուրքական լծից ազատվելու համար շարունակում էին մաքառել մակեդոնացիները, արաբները, հայերը և այլ ժողովուրդներ։

Վայրենի ճնշումը, անսանձ կամայականությունները, անտանելի ծանր հարկերը հայության կյանքը դարձրել էին դժոխք։ Հարկերի հավաքման բարբարոսական եղանակը խարխլում, քայքայում էր հայության տնտեսական կյանքը։ Քուրդ ցեղերի հարձակումներն ու բռնագատումները լրացնում էին մղձավանջը։ Հայ գյուղացին այլևս ի վիճակի չէր քիչ թե շատ կարգին զբաղվելու դաշտերի մշակմամբ, քանի որ բերքից բացի նրանից խլում էին նաև բանող անասունը։

Նոր՝ 20-րդ դարի սկզբին երկու կողմերն էլ՝ մի կողմից

թուրքական բռնակալությունը, մյուս կողմից՝ բազմաչարչար հայերը, վճռել էին ամեհի ընդհարումով վերջացնել խնդիրը։ Հայկական շարժումը պայքարի ցուցադրական-զգայացունց փուլից (Բանկ Օթոման, Խանասոր և այլն) արդեն անցել էր բացահայտ ճակատային կռվի փուլին։

Հայերի նոր ընդվզումները հավասարակշռությունից հանել էին սուլթանին և արքունիքին, որոնք նրանց դեմ մի դավը մյուսի հետևից էին նյութում։ Ոճրագործների ուղեղում գնալով բյուրեղանում էր մի նոր մարդատյաց ծրագիր՝ Կովկաս անցած 40—50 հազար արևմտահայ գաղթականներին ոչ թե թույլատրել վերադառնալու Արևմտահայաստան, այլ բռնի կերպով գաղթեցնել Կրետե կղզի։

Ի պատասխան սուլթանի նոր ստոր դավերի, հայ ահաբեկիչների մի խումբ Կ. Պոլսի պալատական մզկիթի առջև նրա վրա մահափորձ կատարեց, բայց Մեծ Ոճրագործը պատահական դիպվածով կենդանի մնաց։

Հայերը նախապատրաստվում էին դիմագրավելու գալիքի մեծ փորձություններին և ուղիներ էին փնտրում դրանք մեղմելու համար։ Դարձյալ մնում էր Եվրոպայից օգնություն ստանալու հույսը, մի մոլորություն, որ շարունակում էր թանկ նստել հայ ժողովրդի վրա։ Սակայն թուրքական յաթաղանին դիմագրավելու գաղափարը գնալով ավելի ուժգնորեն էր թափանցում ժողովրդական լայն մասսաներից ներս։ Առաջին պլան մղվեցին երկու կարևորագույն խնդիրներ՝ կայսրության այլազգի հակաօսմանյան ուժերի հետ համագործակցություն ստեղծելու և հայ բնակչությանը զինելու խնդիրները։

Եթե 19-րդ դարի երկրորդ կեսին հայերի առջև կանգնած էր քրդերի հետ քաղաքական դաշինք ստեղծելու խնդիրը, ապա այժմ առաջ էր քաշվում սուլթանական բռնակալության դեմ կայսրության բոլոր ժողովուրդների հետ ակտիվորեն համագործակցելու հարցը։

Հայության համար առաջվա նման առավել կարևորը հայ-քրդական հարաբերությունների կարգավորումն էր։ Հայ քաղաքական կուսակցությունների ասպարեզ գալուց հետո հայ-քրդական դաշինքի խնդիրը լուսավորության մարզից արդեն անցել էր քաղաքական գետնի վրա։ Մինչև 90-ական թվականների կեսերն այդ կուսակցությունների ղեկավար շրջաններում այն մտայնությունն էր իշխում, թե

«տաճկական կառավարությունն արդեն փտած է, իսկ քյուրտերը մեր առաջին հաջողություններուն վրայ մեր կողմը պիտի անցնին»[1]։

Բայց 90-ական թվականների երկրորդ կեսը բեկումնային եղավ հայ-քրդական հարաբերությունների և այդ հարաբերությունների հեռանկարը գնահատելու տեսակետից։ Թուրքական կառավարությանը հաջողվել էր քրդական ավագանուն իր կողմը քաշել, նրան մղել 1894—1896 թվականների հայերի մասսայական կոտորածներին և հետագա տարիների խժդժություններին։ Հայ-քրդական դաշինքը, որը հայերի համար առաջվա նման բաղձանք էր մնում, այժմ անհավանական էր թվում։ Նրանք երկրնտրանք չունեին և նրանց մնում էր մի բան՝ գոնե չեզոքացնել քրդական վտանգը, ճիգեր թափել, որպեսզի քրդերը չմասնակցեն թուրքերի կողմից հետայսու կազմակերպվելիք հայերի նոր կոտորածներին։ Քրդերին չեզոքացնելու հարցը ճակատագրական նշանակություն էր ստանում հայության համար։

Քրդերի հետ համաձայնության գալու ջերմ կողմնակիցներ էին արմենական կուսակցության շատ ղեկավարներ ու շարքայիններ։ Առանձին դաշնակցական գործիչներ նույնպես փորձեր էին անում համաձայնության եզրեր գտնելու քուրդ երևելիների հետ։ Բայց կուսակցությունն ամբողջովին վերցրած կրավորական դիրք էր ընդունել այդ կարևոր խնդրի հանդեպ։ Դաշնակցություն կուսակցության հիմնադիրներից Քր. Միքայելյանը, գրում էր, որ թուրքերի դեմ քրդերի հետ համաձայնություն պրակտիկորեն անհնարին է գլուխ բերել, քանի որ հայ և քուրդ ժողովուրդները գտնվում են հասարակական, տնտեսական, կուլտուրական զարգացման տարբեր աստիճանների վրա և ինչին ձգտում է հայը, անըմբռնելի ու խորթ է քրդի համար և ընդհակառակը[2]։ Դրանից բացի, նրա կարծիքով, հայ-քրդական համաձայնության համար մեծագույն խոչընդոտներ էին հայերի դեմ քրդերին գրգռելու թուրքական կառավարության քաղաքականությունը և կրոնական տարբերությունները[3]։ Նա չէր ժխտում, սակայն, որ քրդական առաձին ցեղերի

[1] Համբարձում Երամեան, Յուշամատեան Վան-Վասպուրականի, հ. Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 352։

[2] Տե՛ս Քր. Միքայելյան, Հեղափոխականի մտքերը, Ժընև, 1906, էջ 113—114։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 114--118։

հետ կարելի է հարաբերությունների մեջ մտնել և դրա օգտին վերակոչում էր այն, որ այդ ցեղերի մի մասը հրաժարվել է մասնակցել «համիդիեներին» և տեղ-տեղ պահպանել է իր կիսաանկախ դրությունը։ Բայց նրա կարծիքով առանձին քուրդ ցեղապետերի հետ կարելի է որոշ համաձայնություն կայացնել այն դեպքում միայն, եթե հայերն ապացուցեն, որ իրենք ընդունակ են զենքով պաշտպանվելու։ Լեոյի վկայությամբ Քր. Միքայելյանը բազմիցս շեշտել է, որ հայ-քրդական դաշինքը իրականացվել կարող է միայն այն դեպքում, «երբ հայերը կուժեղացնեն իրենց ռազմական կազմակերպությունները մինչ այն աստիճան, որ նրանցով երկյուղ ներշնչեն քրդերին։ Եվ որովհետև այս անհնարին է, պետք է, ուրեմն, անհնարին համարել և հայ-քրդական միությունը»[1]։

Ի տարբերություն դաշնակցականների, քրդերի հետ գործնական հարաբերությունների մեջ մտնելու ուղղությամբ բավականին աշխատանք թափեցին հնչակյանները։ «Արեցինք այն, ինչ կարող էինք և մեր միջոցները թույլ էին տալիս,— գրում էր հնչակյան Ս. Սապահ-Գյուլյանը։ ...Քրդերին թուրքերից բաժանելը շատ մեծ հեռանկարներ էր բացում մեր առջև,— բայց ցեղայնությունը, դարավոր ոխակալությունները, թշնամությունները, թրքական խարդավանքների ցանցերը, որ այդ ցեղերից շատերի սիրտն արդեն մագիլների մեջն էին առել, մեզ անկարող դարձրին որոշեալ և դրական արդյունքներ ձեռք բերելու»[2]։

Պետք է նշել, որ քրդերը բոլորովին զուրկ չէին այն գիտակցությունից, որ հայերի բնաջնջումից հետո հերթը գալու է իրենց, ուստի նրանց ցեղապետերից և աշիրեթապետներից ոմանք ընդունում էին հայ գործիչների բարեկամական առաջարկները։ Հայ-քրդական մերձեցման օգտին ավելի հաճախ էին ձայներ լսվում նոր-նոր ձևավորվող քուրդ մտավորականության շարքերում։ Այդ տեսակետից հատկապես հետաքրքրական է Բեդրիխան բեգի որդի, «Քուրդիստան» թերթի խմբագիր Աբդուլռահման բեգի կոչը քրդերին[3], ինչպես նաև հայ-քրդական հարաբե-

[1] Լեո, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանությունը, հատոր Բ., Փարիզ, 1935, էջ 45։ Տե՛ս նաև Մ. Սերոբեան, Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, էջ 174—175։

[2] Ս. Սապահ-Գյուլեան, Պատասխանատուները, էջ 252։

[3] Տե՛ս «Դրոշակ», № 4 (115), Հունիս, 1901, էջ 67—68։

ությունների նվիրված նրա մի քանի հոդվածները, որոնցով նա իր ցեղակիցներին կոչ էր անում համերաշխություն ստեղծել հայերի հետ։ Սակայն քրդական իրականության հանգամանքների պատճառով այդպիսի հազվագյուտ քուրդ մտավորականներն ի վիճակի չէին իրենց մտածումները փոխանցելու ժողովրդական լայն մասսաներին։

Ինչևիցե, հայերի կողմից տենդագին քայլեր էին արվում, որոնք առանձին դեպքերում վերջանում էին դրական արդյունքներով։ Դա առաջին հերթին վերաբերում էր քրդական այն ցեղերին ու աշիրեթներին, որոնք զբաղվում էին նաև երկրագործությամբ։ Օրինակ, Միջագետքի և Վանի նահանգի միջև ընկած տարածքում ապրող քրդերի ցեղապետը՝ Մահմեդ աղան, հայերի լավ բարեկամներից էր և նրա զինված ջոկատները մեկ անգամ չէ, որ կռվի էին բռնվել «համիդիե» զորախմբերի հետ, որոնք փորձում էին ջարդել ու թալանել այդ հողերի վրա ապրող հայերին։ Հայերի հետ լավ հարաբերությունների մեջ էին շատախցի խաղաղ ցեղախմբերը։ Որոշ դրական արդյունքներ էին տվել նաև հաբանցիների, գիլանցիների, հայդարանցիների, ջիպրանցիների, զրարքցիների, բակուրցիների, մոտկանցիների, միրանցիների, տուտերցիների, ալանցիների և այլ աշիրեթների պետերի հետ հայ գործիչների հանդիպումները։

Քանի որ քրդական ոչ բոլոր ցեղախմբերն ու աշիրեթներն էին միատեսակ նկարագրով, ուստի նրանց հետ հարաբերությունները տարբեր արդյունքներ էին տալիս։

Շփումը քրդերի հետ Վասպուրականում հիմնականում այն արդյունքն ունեցավ, որ նրանք որոշ ժամանակ դադարեցրին իրենց հարձակումները և նրանց գերիշխանությունը նահանգի հայ գյուղացիության մեծ մասի վրա փաստորեն դադարեց։

Պարսկա-տաճկական սահմանի վրա էին բնակվում հայդարանցի, իսկ ավելի հյուսիսում՝ ջելալցի քուրդ ցեղախմբերը։ Հայդարանցի ցեղապետեր Կոփ Մահմեդը, Մուստաֆա բեգը, Ալի բեգը բարեկամական կապեր էին պահպանում հայ քաղաքական գործիչների հետ և համարյա ազատություն էին տվել իրենց շրջանների հայ գյուղացիներին։

Հայերի հանդեպ նկատելիորեն դեպի լավն էր փոխվել նաև Ատրպատականի քրդերի վերաբերմունքը։ Այստեղ քուրդ ցեղերից շատերը չէին համարձակվում հարձակվել հայ զինակիր խմբերի վրա, իսկ առանձին դեպքերում էլ առանձին քրդեր օգնում էին հայերին զենքի փոխադրման և սուրհանդակային գծերի կանոնավորման գործում։

Քրդերի հետ բարեկամություն ստեղծելու համար պակաս ջանքեր չեն գործադրվել Տարոնում։ Տարոնի Խերզանի քուրդ Շեկոյի տոմն կոչված աշիրեթը դեռ 90-ական թվականների կեսերից շահագրգռություն էր հանդես բերել հայերի հետ մերձենալու համար։ Դրան դրդում էր այն խոր թշնամանքը, որ կար այդ աշիրեթի և քրդական այն ցեղի միջև, որի գլուխն էր կանգնած հետագայում Սերոբ Աղբյուրի նահատակության կազմակերպիչ աշիրեթապետ Պշարե Խալիլը[1]։ 1900-ական թվականների սկզբներին արդեն Հովտի շրջանի և Մշո դաշտի մի մասի քսան քրդական գյուղեր համակիր էին դարձել հայերին։ Այդ շրջանում տարբեր հայ կազմակերպություններ նույնիսկ փորձեցին իրենց ազդեցությունը տարածել քրդերի վրա։ Առանձին քրդեր նույնիսկ կատարում էին այդ կազմակերպությունների ղեկավարների հանձնարարությունները։ Դրանցից էին Ղասըմ բեգը, ջիբրանցի Դավրիշը, ալմանցի Ֆաթին, խոշկանցի Ռըզկոն, բալակցիների և բաթկանցիների բեգերը, խորժմընկցի Զեյնալ բեգը, Տարոնի դաշտից ուրիշ աղաներ, բեգեր, աշիրեթապետներ։

Հայերի բարեկամներից էին Խնուսի գավառի հասանցի քըրդերը, հատկապես Աճմու տան աշիրեթը[2]։

Սակայն բեգերի հետ ստեղծած համագործակցությունը չէր կարող ամուր հիմքերի վրա լինել։ Ամենափոքր իսկ առիթով հանգուցալուծվում էր ժամանակավոր, մեծ ջանքերի գնով ձեռք բերված որևէ համաձայնություն։ Այսպես, Ատրպատականի Հեքքյարի ցեղապետ Շեյխ Մեհմեդը, որը խոստացել էր գործակցել հայերի հետ, մերժեց այդ համագործակցությունը միայն այն պատճառով, որ վերջիններս չկատարեցին նրա պահանջը իր շրջանում փամփուշտի արհեստանոց ստեղծելու մասին։ Մյուս կողմից կայսրության այլազգի ժողովուրդների միջև եղած ցեղային և կրոնական տարբերությունները վարպետորեն շահագործող թուրքական իշխանությունները հատկապես մեծագույն ջանադրությամբ էին գործում հայ-քրդական մարդում, խափանելով այդ ժողովուրդների մերձեցման ամեն մի փորձ։

---

[1] *Տե՛ս* Լևոն Լյուլեեան, *Անդրանիկի բերանով Առաքելոց վանքի կռիվը և Խալիլ պեկի սպանությունը, Պեյրութ, 1966, էջ 147։*

[2] *Տե՛ս* Եղիշե Ց. Մելիքեան, *Հարք-Խնուս, տպ. կաթողիկոսութեան Հայոց Մեծի տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, Լիբանան, էջ 44—45։*

Քրդական ցեղերից մեկը եզիդիների ցեղն էր, որը վաղուց ի վեր ամենասերտ շփումների և բարեկամական կապերի մեջ էր հայության հետ։ Եզիդիները ենթադրաբար հաշվվում էին 50 հազար[1], ապրում էին Տաճկաստանի և Պարսկաստանի սահմանակից հողերի վրա, ինչպես նաև Հայաստանում։

Եզիդիները հակամարտության մեջ էին կուրմանճի քրդերի հետ, որի պատճառը կրոնական և կենցաղային զգալի տարբերություններն էին։ Եզիդիների կրոնը մազդեզական կրոնի հավանական մի շառավիղն է՝ խառնված քրիստոնեական և մահմեդական տարրերով։ Նրանք Քրիստոսին ընդունում և մեծարում են որպես մարդեղեն հրեշտակ, իսկ Մուհամմեդին համարում են մարգարե, գուրգուրանքով պահում արևագալին ու մայրամուտին աղոթելու զրադաշտական սովորությունը[2]։

Հայաստանում ապրող եզիդիների թիվը մեծ չէր։ Նրանց մի աշիրեթ բնակվում էր Վասպուրականում, զբաղեցնելով ընդամենը երկու գյուղ։ Հայերին միշտ բարեկամ եզիդիները շատ պարագաներում էլ սերտորեն գործակցում էին նրանց հետ։ Ավելին, իրենց բախտը կապելով հայերի հետ, նրանք կողք կողքի կռվում էին թուրքական իշխանությունների դեմ։ Սրանց առաջնորդը՝ Ջահանգիր աղան, միշտ մնաց հայերի հետ։ Հետագայում, 1918 թվականին, իր քաջերի հետ միասին նա հերոսաբար կռվեց Սարդարապատի ճակատամարտում։

Եզիդիների համեմատաբար հոծ բնակչություն էր տեղավորված Տիգրանակերտի ու Սինջար լեռան շրջանում։ Սրանք ևս սերտ հարաբերությունների մեջ էին հայերի հետ։ Սինջարի եզիդիները նույնիսկ էջմիածին էին ուղարկել իրենց ղեկավարներից մեկին՝ կաթողիկոսից խնդրելու ուսուցիչներ ուղարկել իրենց գյուղերը՝ երեխաներին հայկական կրթություն տալու և հայությանն ավելի սերտ հարելու համար։ Եզիդիների մի հատված էլ, որ ապրում էր Տարոնում, միշտ սեղմած էր պահում հայերի մեկնած բարեկամական ձեռքը։

Եզիդի ցեղի՝ հայոց նկատմամբ բարեկամական վերաբերմունքի ակնհայտ դրսևորումներից էր այն, որ 1909 թվականին ս. ծննդյան տոնի առթիվ նրա կրոնապետ Միր Իսմայիլը այցելեց էջմիածին և ներկա եղավ սուրբ պա-

[1] Տե՛ս Եղիշե Յ. Մելիքեան, Հարք-Խնուս, էջ 305։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 306։

տարագին[1], ապա հանդիպումներ ու զրույցներ ունեցավ հայ մտավորականների, հասարակական և քաղաքական գործիչների հետ։ Անջնջելի տպավորություններով վերադառնալով իր ցեղի մարդկանց մոտ, նրանց քարոզում էր միշտ հավատարիմ մնալ հայ-քրդական բարեկամությանը։

Հայերը բարեկամական սերտ կապերի մեջ էին ասորիների հետ։

Իրենց պետականությունը կորցնելուց հետո ասորիները հետագա դարերում սփռվել էին Մերձավոր արևելքի երկրներով մեկ՝ Թուրքիա, Իրան, Սիրիա, Լիբանան և այլուր։ Նրանց հոծ խմբեր բնակություն էին հաստատել նաև Արևմտահայաստանում։ Սրանք գլխավորապես ապրում էին Վասպուրականի հարավարևելյան շրջաններում՝ Տիար-Տխուբ և Ջուլամերիկ գավառներում։ Լեռնային այդ գավառներից դուրս ասորիների հոծ բազմություն կար նաև Ուրմիո շրջանում, որոնք կուլտուրապես և տնտեսական տեսակետից ավելի բարվոք վիճակում էին։ Ասորիները Հայաստանում հիմնականում նստակյաց կյանք էին վարում, զբաղվում էին իրենց համար ավանդական դարձած հողագործությամբ և այգեգործությամբ[2], ինչպես նաև առևտրով և արհեստներով, մշտական կապ էին պահպանում Կովկասում հաստատված իրենց ազգակիցների հետ, հաղորդակից դառնում Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխական իրադարձություններին[3]։ Այդ ամենը բարենպաստ հող էր ստեղծում հայ-

[1] Տե՛ս Եղիշե Յ. Մելիքեան, Հարք-Խնուս, էջ 306։

[2] Տե՛ս «Известия штаба Кавказского военного округа», № 3—4, Тифлис, 1904, էջ 55; **А. Д. Ерецкова.** Айсоры и Эриванской губернии. «Известия Кавказского отдела имп. Русского Географического общества», т. VI, № 1—3, Тифлис, 1881, с. 48—49.

[3] Ասորիները բնակվում էին նաև Արևելյան Հայաստանում և սերտ շփման մեջ էին հայերի հետ։ 1826—1828 թվականների ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Իրանի ասորիները ռուսական բանակին ակտիվ աջակցություն էին ցույց տվել՝ մատակարարելով պարենամթերք և ֆուրաժ, ինչպես նաև իրենց լավ ծանոթ տեղանքում հանդես էին եկել որպես հետախույզներ և ուղեցույցներ։ Այդ ծառայությունների համար 1829 թվականին, Թուրքմենչայի պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո, ռուսական իշխանությունների թույլտվությամբ հարյուր ասորի ընտանիք Իրանից տեղափոխվեց Արևելյան Հայաստան (**П. Эйвазов.** Некоторые сведения о селе Койласар и об айсорах. Сборник материалов для описания местностей и пламен Кавказа, вып. IV, отд. I, Тифлис, 1884, с. 286) և բնակություն հաստատեց Ներքին

ասորական միասնական գործակցության համար։ Դրան որոշ չափով նպաստում էր նաև ասորիների, որպես քրիստոնյա փոքրամասնության, նկատմամբ թուրքական իշխանությունների մշտական հալածանքները և քրդերի ճնշումը։ Դեռևս 1843 թվականին Բեդրի խանի ապստամբության ժամանակ քրդերը Հաքյարիի շրջանում ասպատակեցին ասորական գյուղերը, բնաջնջելով հազարավոր խաղաղ բնակիչների[1]։ Հետագա տասնամյակներին ասորիները, ինչպես և հայերը, թուրքական իշխանությունների և քրդական ավազակու մշտական հարստահարումների օբյեկտ էին։

Հայ-ասորական համագործակցության ջատագովները շատ-շատ էին ասորի գործիչների շրջանում։ Դրանցից մեկն ասորի ճանաչված բժիշկ Աբրահամն էր, որը շրջելով ասորական գյուղերը, հայերի հետ համատեղ պայքարի կոչ էր անում։ Նրա ջանքերով մի քանի տասնյակ ասորի երիտասարդներ մտել էին հայ ֆիդայիների շարքերը և մասնակցում էին նրանց ինքնապաշտպանական կռիվներին։

Որոշ աշխատանք տարվեց նաև հույն-մակեդոնական, ալբանական, արաբական հակաօսմանյան ուժերի հետ համագործակցություն ստեղծելու ուղղությամբ։

Հայ քաղաքական ուժերը մեծ ջանքեր էին թափում նաև թուրք «հեղափոխական» գործիչների հետ հարաբերությունները երկրի ներսում բարելավելու համար։ Եվ դա առանձին դեպքերում հաջողվում էր։ Այսպես, 1907 թվականին Վանում հայ և թուրք կազմակերպությունները միասնաբար որոշում կայացրին տեռորի ենթարկել Վասպուրականի նախկին վալի Ալի բեգին։

Փաստերը ցույց են տալիս, որ ոչ միայն թուրք գյուղացիները, այլև առանձին թուրք պաշտոնյաներ ու զինվորականներ երբեմն միանում էին հայերին՝ երկրի ընդհանուր վիճակը նկատի առնելով։ Արտասահմանից ստացված երիտթուրքական «Մեշվերեթ» և ուրիշ թերթեր հայերը տարածում էին թուրքերի մեջ։ Տարոնում հայերը ձեռնարկեցին նույնիսկ թուրքերեն մի ձեռագիր թերթի՝ «Հուրրիեթի» ստեղծումը, որն արտագրվում էր Առինջ գյուղում և ուղարկվում թուրք և քուրդ մտավորականներին ու պաշտոնյաներին։ Հայերը հրատարակում էին հայերեն և թուրքերեն թռուցիկներ և կոչեր, որոնցում միասնականության, իշխանության դեմ պայքարի կոչ էին անում։ Այդ ամենի հետևանքով 1905-1907 թվականներին Վասպուրական-Տարոնից քուրդ և թուրք շոշափելի թվով պաշտոնյաների, զինվորականների, զարգացած անձանց մոտ ստեղծվել էր նոր մտայնություն. նրանք հայերին այլևս չէին դիտում որպես օտարի ձեռքի մի գործիք, ինչպես առաջ, այլ դիտում էին որպես օսմանյան կյանքի հեղաշրջման կարևոր մի գործոն։

Թուրքիայի մեջ արթնացող հեղափոխական տրամադրություններն ու մտածելակերպը, չնայած մակերեսային, բայց և այնպես որոշ չափով մեղմացրին հայ-թուրք թշնամությունը, արթնացրին համերաշխության և համագործակցության ոգի։

Սակայն, չնայած քիչ թե շատ թափած ջանքերին, ինչպես Օսմանյան կայսրության տարբեր ժողովուրդների քաղաքական ուժերին, այնպես էլ հայ հասարակական-քաղաքական կազմակերպություններին ու գործիչներին այդպես էլ չհաջողվեց ստեղծել հակասուլթանական ընդհանուր ճակատ[1]։ Դա պատահական

Ղույլասար (այժմ՝ Դմիտրով), Վերին Դվին, Գյոլ, Արզնի և Փոքր Շահրիար գյուղերում (С. П. Зеленский. Племенной состав, различия и происхождение государственных крестьян. Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, т. II, Тифлис, 1887, с. 16)։ Հայաստանում և Անդրկովկասի այլ շրջաններում բնակություն հաստատած ասորիների համար հանգիստ ապրելու և խաղաղ աշխատանքով զբաղվելու հնարավորություն ստեղծվեց։ Բայց ցարական կարգերի պայմաններում նրանք, ինչպես և մյուս ազգային փոքրամասնությունները, մեծ դժվարություններ էին կրում մայրենի լեզվով կրթություն ստանալու և իրենց ազգային մշակույթը զարգացնելու տեսակետից։ Տասնամյակներ հետո միայն Հայաստանի ասորիների երեխաների համար մեկ երկամյա դպրոց բացվեց՝ Ղույլասար գյուղում։ Չնայած դրան, 20-րդ դարի սկզբներին ասորիների նորանոր հոծ խմբեր Թուրքիայից և Իրանից հեռանալով հանգրվան էին գտնում ռուսական իշխանությունների հովանու տակ։ «Կավկազ» թերթը «Ասորիները» վերտառությամբ հոդվածում գրում էր. «Ամեն տարի հազարավոր ասորիներ Ռուսաստան են գալիս աշխատանք փնտրելու։ Անդրկովկասի զարգացումը և Թիֆլիս, Բաթում ու Բաքու քաղաքների աճը որակյալ և ոչ որակյալ բանվորների պահանջարկ ստեղծեցին և ասորի հյուսները, որմնադիրներն ու օրավարձու բանվորները շահավետ վաստակ գտան (газ. «Кавказ», 1903, № 241).

[1] Տե՛ս К. П. Матвеев (Бар Баттай), И. И. Мар-Юханна, Ассирийский вопрос во время и после первой мировой войны, М., 1968, էջ 22։

[1] Շատ է գրվել այն մասին, որ օսմանյան կարգերի դեմ ընդհանուր ճակատի ստեղծումը հնարավոր է եղել գլուխ բերել և եթե այն գլուխ չի եկել, ապա դրա մեղքը հայ քաղաքական կուսակցություններինն է, որովհետև սրանք

չէր և բացատրել միայն այս կամ այն ժողովրդի քաղաքական ուժերի թերացումով, սխալ կլիներ։ Իրականությունն այն է, որ նույնիսկ 20-րդ դարի սկզբին Թուրքիայում բանվորների թիվը մեծ չէր։ Ճիշտ է, փոքրաթիվ բանվորությունը բազմազգ էր, բայց երկրում բացակայում էր կազմակերպված բանվորական շարժումը։ Ինչպես հայտնի է, միայն այդ շարժման հողի վրա կարող էին ծլարձակել պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարները, միայն այդ գաղափարների ուժով կարելի էր համախմբել տարբեր ժողովուրդների և ազգերի աշխատավորներին, նրանց համատեղ պայքարի հանել սուլթանական բռնակալության դեմ։

Եթե Թուրքիայում կազմակերպված բանվորական շարժում չկար, հետևապես բազմազգ աշխատավորների դասակարգային սերտ դաշինքի մասին խոսք լինել չէր կարող։ Ոչ պրոլետարական քաղաքական ուժերի հակասուլթանական ճակատ ստեղծելու ջանքերը պետք է որ ձախողանքի մատնվեին և մատնվեցին։ Եվ եթե առանձին դեպքերում հաջողվում էր քաղաքական հողի վրա այս կամ այն կոնկրետ հարցի շուրջը համաձայնություն կայացնել, ապա այդ համաձայնությունը լինում էր վերնախավային, հետևապես՝ ոչ տևական։

Գալիք դաժան փորձություններին դիմագրավելու համար հայ քաղաքական ուժերի առջև կանգնած երկու կարևորագույն խնդիրներից մյուսը հայ բնակչությանը զինելն էր։

Չէր իրականանում հակաօսմանյան ուժերի սերտ միասնություն ստեղծելու գաղափարը։ Փրկություն սեփական ուժերով՝ այս էր դառնում օրվա մտայնությունը։ «Միայն զենքով կա հայոց փրկություն»,— ասվում էր այն ժամանակվա երգերից մեկում։ Ազատության բռնկված հավատը ամենուրեք ստեղծել էր քաջությամբ մեռնելու վարակիչ տրամադրություն։

Ամբողջ հասակով մեկ կանգնեց զենք ու զինամթերք ձեռք բերելու պահանջը։ Պետություններից ոչ մեկը տրամադիր չէր հայերին զենք տալու։ Մնում էր այն հայթայթել սեփական միջոցներով։ Տևական վտանգի պայմաններում հայերն Արևմտահայաստանի զանազան վայրերում փոքրիկ զինագործարաններ էին հիմնում և գաղտնի զենք պատրաստում։ Մյուս միջոցը զենքի պատահական գնումներն էին։ Ինչպես քրդերի, այնպես էլ հայերի ձեռքին եղածը հիմնականում մարթինի սիստեմի հրացան էր և մաուզեր։ Դրանք բարոյապես հնացած զենքեր էին։ Այդ ժամանակ ամենակատարելագործված հրացանը պահունակ ունեցող մոսին սիստեմի հրացանն էր, որ հնարել էր հրաձգային զենքի ռուս գյուտարար Սերգեյ Մոսինը 1890 թվականին[1]։ Թուրքերը համեմատաբար հեշտությամբ էին ձեռք բերում այդ նոր հրացանը, իսկ հայերը ձեռք էին բերում մեծագույն դժվարությունների գնով։ Հիմնական պատճառն այն էր, որ հային զենք վաճառելը Թուրքիայում ծանրագույն քրեական հանցանք էր դիտվում և վաճառողը, եթե հայտնաբերվում էր, դատապարտվում էր մահապատժի կամ լավագույն դեպքում՝ 101 տարվա բանտարկության։ Հայերը մոսին հրացանը գնում էին վճարելով ոչ պակաս 100 օսմանյան ոսկի, այն դեպքում, երբ հայ ուսուցչի ամսական աշխատավարձը ընդամենը 2 օսմանյան ոսկի էր[2]։ Չնայած դրան, 90-ական թվականների վերջերից սկսած հայ ֆիդայիների մի մասը զինված էր մոսիններով։

Սակայն թե՛ փոքրիկ զինագործարաններում զենք պատրաստելը և թե՛ զենքի պատահական գնումները բավարար չէին ժողովրդին զինելու համար։ Երկրում նվազագույնը 100 հազար հրացանի պահանջ կար, իսկ հայթայթվել էր, այն էլ հսկայական դժվարություններով և կորուստներով, ընդամենը 2—3 հազարը։

Իրենց արևմտահայ եղբայրներին օգնության էին շտապում Կովկասի հայերը։ Հատուկ կազմակերպված արհեստանոցնե-

---

այդ հարցում հանդես չեն բերել անհրաժեշտ հետևողականություն կամ ընդհանրապես այդ խնդրով չեն զբաղվել։ Երկու կարծիք լինել չի կարող, որ նման ճակատի և հատկապես հայ-քրդական դաշինքի ստեղծումը կողջունեին առանց բացառության հայ հասարակության բոլոր խավերը, քաղաքական բոլոր ուղղությունները։ Դաշինք ստեղծելու ուղղությամբ, ինչպես տեսանք, քայլեր արվել են, բայց դրանք ընդհանուր առմամբ արդյունավետ չեն եղել։ Ինչ վերաբերում է քրդերի և հայերի ընդհանուր ճակատի ստեղծմանը, ապա դա, ինչպես տեսնում ենք, միայն վերջիններիս ցանկությամբ չէր պայմանավորված։

[1] Տե՛ս БСЭ, т. 17, М., 1974, էջ 3։ Մոսին սիստեմի հրացանը եռագծանի էր, այսինքն կրակելիս գնդակը խողովակում երեք անգամ պտույտ էր գալիս և զարգացնելով բարձր արագություն ու հեռահարություն, անցնում մինչև 2700 ոտք տարածություն։ Հրացանի փամփուշտն անծուխ էր, իսկ գնդակի տրամագիծը երկու անգամ փոքր էր մարթինի սիստեմի հրացանի գնդակի տրամագծից, հետևապես՝ երկու անգամ թեթև։ Մոսին հրացանով զինվածը կարող էր իր վրա կրել 250—300 փամփուշտ։

[2] Տե՛ս Անդրանիկ Ջելեպեան, Զորավար Անդրանիկ և հայ յեղափոխական շարժումը, Լոս Անճելըս, 1984, էջ 236։

ռում նրանք զենք էին պատրաստում և մտցնում Երկիր։ Կովկասի շատ հայ գյուղացիներ ու արհեստավորներ իրենց ունեցվածքը, շատ բանվորներ՝ աշխատանքային կոպեկները չէին խնայում իրենց սրտին մոտ գործի համար։ Հավաքված փողերով կոմիտեները զենք էին գնում, տեղափոխում Երկիր, զինում հայդուկների ջոկատները։ Այդպիսի գործունեությունը միաժամանակ արդյունավետ էր անդրադառնում կովկասահայ մասսաների վրա՝ նրանց վարժեցնում էր քաղաքական մտածողության, մղում ընթերցելու հեղափոխական գրականություն, վերին աստիճանի ընկալունակ էր դարձնում յուրացնելու սոցիալիստական գաղափարները։

Կովկասահայ մտավորականների մի մասը Երկիր անցնելով և մտնելով արևմտահայ ժողովրդի մեջ, եռանդուն պրոպագանդա էր մղում։ Կովկասի և Պարսկաստանի կողմերից անընդհատ խուժում էին նորաձևորեն զինված խմբեր։ Ցարական իշխանություններն ամենախիստ միջոցների էին դիմում սահմանն անցնող խմբերի նկատմամբ։ Այն զինված ջոկատները, որոնց հաջողվում էր խորանալ Արևմտյան Հայաստանի սահմանից ներս, հենց սահմանամերձ վայրերում ընդհարվում էին Թուրքական զորքերի հետ։ Դիվերսիոն ճիգերով սահմանն անցածները, կռիվ տալով, ընկնում էին հայրենիքի ազատության համապարհին, իրենց տերթին բազմապատիկ զոհեր խլելով թշնամուց։

Եթե հայ աշխատավոր դասակարգերը ոչինչ չէին խնայում արևմտահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար ապա հայ բուրժուազիան թե՛ Պոլսում և թե՛ Կովկասում շարունակում էր ազգային-ազատագրության գործի հանդեպ։

Պոլսահայ բուրժուազիան, հայ ամբոխության կողմնորոշումը, համենայն դեպս մինչև 1878 թվականը, Թուրքական էր։ Նրանք իրենց վրա չէին կրում քրդերի խժդժությունները, գավառական պաշտոնյաների կամայականությունները։ Պոլսահայ բուրժուազիան հետևողական բուրժուազիան չհագեցված էր համենայն դեպս մասնաբաժնով, որովհետև գաղթականաբար, կենդանիներ իր գործունեության դաշտը։ Ավելին, հայ բուրժուաները թե՛ Պոլսում և թե՛ Անդրկովկասում շտապեցին Թուրքիայում հայերի ջարդի մեղքը բարդել ազատագրական շարժման մասնակիցների վրա և հակահեղափոխական պրոպագանդա սկսեցին։ Սակայն, չնայած դրան, ժողովրդի համակրանքը շարունակում էր մնալ արևմտահայ ազատագրական շարժման կողմը։ Իսկ շարժումը չէր դադարում, շարունակվում էր խմորվել նոր բռնկումների համար։

Դարեր շարունակ հայ ժողովուրդը կառչել է իր ժայռերին և, իբրև ազատության տուրք, առատորեն տվել իր արյունը։ 1904 թվականին նորից ստիպված էին զենքի դիմելու Սասունի հայերը՝ մի նոր փայլուն էջ գրելով հայ ժողովրդի ազատագրական պայքարի ցնցող տարեգրության մեջ։ Այդ տարվա գարնանը, մարտի վերջերին, Թուրքական 15 հազարանոց կանոնավոր բանակը և 40 հազարի հասնող՝ քրդերից ու Թուրքերից բաղկացած անկանոն զորախմբերը տասնյակ թնդանոթներով պաշարեցին Սասունը։ Սասնո ֆիդայական շարժման ղեկավարներ Հրայրը, Վահանը և մյուսները գիտեին, որ Թուրքական կառավարությունն իր վերջին և ուժգին ջանքն է թափում ըմբոստ լեռնավայրը ոչ միայն ընկճելու, այլև իսպառ քարուքանդ անելու համար։ Հայերն ունեին միայն մի քանի հարյուր հրացան և սակավաքանակ ռազմամթերք։ Չնայած դրան, քաջ հայդուկ Անդրանիկ Օզանյանի գլխավորությամբ նրանք կռվի բռնվեցին՝ զարմանալի խիզախությամբ ետ մղելով բազմաքանակ թշնամու գրոհները։ Ռազմամթերքի բացակայության ծանր տագնապը պաշարվածներին հարկադրեց սեղմել դիմադրության ճակատը։ Նրանք այրեցին իրենց գյուղերը և կենտրոնացան անառիկ լեռներում ու կիրճերում, շարունակելով կռիվները։

Պաշտոնական Եվրոպան լուռ էր և կոնկրետ քայլեր չէր անում Թուրքական ոճիրների ճանապարհը փակելու համար։ Աշխարհի հզորները բավարարվեցին միայն նրանով, որ մի քանի հյուպատոսներ ուղարկեցին Մուշ։

Որքան քաջ ու անվեհեր էին փոքրաքանակ հայ մարտիկները, նույնքան բազմաքանակ էր թշնամին։ Կռիվ մղելով Թուրքական կանոնավոր զորքերի և քրդական համիդիեների դեմ, նրանք ստիպված էին նաև կռիվ տալու Սասունում և այլուր հրապարակ եկած Թուրք ավազակախմբերի, այսպես կոչված «ջանբեզարների» («գլխից ձեռք քաշածների») դեմ, որոնք իրենց կյանքի նպատակն էին համարում հայերի արյուն թափելը։ Բազմաքանակ թշնամու ճնշման տակ հայ ֆիդայիները ստիպված էին տեղի տալ և հեռանալ Սասունից[1]։

[1] *Տե՛ս* Արսեն Մարմարեան, *Զոր. Անդրանիկ և իր պատերազմները, Պոլիս, 1920, էջ 85։*

Բայց քաջ Սասունն իր դերը կատարեց։ Հայերի հերոսական դիմադրությունը, Սասնո սարերի և Մշո դաշտի վրա ծավալված անհավասար կռիվները հիացրել էին աշխարհը։ Ամենուրեք հայության հանդեպ համակրանքի ալիքներ բարձրացան։ 90-ական թվականների հայկական կոտորածներից հետո հայասիրական մի լայն շարժում էր սկսվել Եվրոպայում։ Մայրցամաքի տարբեր երկրների զանազան ուղղության թերթեր ու հանդեսներ անդրադառնում էին հայոց մարտիրոսությանը, մարդկային քաղաքակրթությանը մատուցած ծառայությունների համար դրվատում հայ ժողովրդին, ներբողներ հյուսում հայ ազատագրական շարժման հերոսների հասցեին։ Ամենուրեք կազմակերպվում էին հայասերների մասսայական ցույցեր ու ժողովներ, որտեղ զեկուցումներով ու ճառերով հանդես էին գալիս պետական ու հասարակական հայտնի դեմքեր, գիտության ու մշակույթի նշանավոր գործիչներ։

Իտալական ժողովրդի ազգային մեծ հերոս Ջուզեպպե Գարիբալդիի որդին՝ զորավար Ռիչիոտտի Գարիբալդին, դեռ Սասունի կռիվներից առաջ ասում էր, թե իր և իր բարեկամների ամբողջ համակրանքը դժբախտ հայ ժողովրդի կողմն է, ուստի իրենք իրենց լիովին դնում են նրա տրամադրության տակ[1]։

Դեռևս 1902 թվականի հուլիսին Բելգիայում տեղի էր ունեցել Եվրոպայի հայասերների առաջին կոնգրեսը, որին մասնակցել էին 150-ի չափ պատգամավորներ՝ քաղաքական տարբեր հայացքներ ունեցող նշանավոր մտավորականներ՝ գրողներ, գիտնականներ, հասարակական ու նախկին պետական գործիչներ, որոնց թվում՝ ժան Ժորեսը, էլիզե Ռեկլյուն, Ֆրանսիս դը Պրեսանսը, Բեռնար Լուզարը, Պիեռ Քիառը, Լաֆոնտեն և ուրիշներ։ Իրենց կրակոտ ելույթներով և կոնգրեսի ընդունած փաստաթղթերում նրանք անարգանքի սյունին էին գամել թուրքական կառավարությանը և քաղաքակիրթ մարդկությանը կոչ արել ամեն կերպ նպաստել այնքան ողբերգական և այնքան վաղուց լքված հայ դատի լուծմանը։ Այդ կոնգրեսից հետո նոր թափ էր ստացել եվրոպական տարբեր երկրների մտավորականության լավագույն ներկայացուցիչների բողոքը թուրքական ոճրագործ կառավարության դեմ։

Հայ ժողովրդի ազատագրական շարժման կողքին էր Եվրոպայի սոցիալիստական շարժումը։ Այդ շարժման նույնիսկ ամենաաջ գործիչներից շատերը, համակրանք տածելով բազմաչարչար հայ ժողովրդի նկատմամբ, միաժամանակ խոր համոզմունք էին հայտնում, որ այդ ժողովուրդը ոչ մի աջակցություն չի ստանալու այն Եվրոպայից, որը նրան մշտապես խաբել է։ Հայկական ազատագրական շարժումը հաջողություն կարող էր ունենալ միայն Ռուսաստանի աջակցությամբ. այսպիսին էր նրանց համոզմունքը։

Գերմանական և եվրոպական սոցիալ-դեմոկրատական շարժման խոշորագույն պարագլուխ Էդուարդ Բեռնշտայնը «Հայկական տանջանքները և Եվրոպան» գրքույկում, անդրադառնալով հայ ժողովրդի պատմական ճակատագրում Ռուսաստանի դերին, գրում էր. «Հայ ժողովրդի և Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների համար զոնե Ռուսաստանը իսկապես քանի-քանի անգամ պաշտպան է հանդիսացել։ Թե ինչ բանից թելադրված է պաշտպանում, այդ ժողովուրդների համար միևնույն է։ Երբ ժողովուրդները տառապում են, չեն հարցնում, թե ինչու են իրենց օգնության հասնում...»[1]

Այս անգամ էլ հայերի պաշտպանը Ռուսաստանն էր, բայց ոչ պաշտոնական Ռուսաստանը։ Այստեղ հայերի օգտին բողոքի հուժկու ալիք բարձրացավ։ Ռուսական սոցիալ-դեմոկրատիան, առաջադեմ մտավորականությունն անարգանքի սյունին էին գամում թուրքական արյունարբու կառավարությանը, դատապարտում նրա գործած ոճիրները։ Միաժամանակ նրանք մերկացնում էին ժողովրդական ազատության թշնամի, բռնակալ ցարական կառավարությանը, ինքնակալության հակահայ գործողությունները։

Ռուսաստանի իրավ մարքսիստները, նրանց առաջնորդ Վ. Ի. Լենինը հանդես էին գալիս հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պաշտպանությամբ և միանգամայն բնական ու օրինաչափ էին համարում այդ պայքարը։ Արտահայտելով հայ մարքսիստ-լենինյանների վերաբերմունքը արևմտահայության ազատագրական պայքարին, «Պրոլետարիատի կռիվը» թերթը գրում էր. «Ուղարկելով Տաճկահայաստանում կռվող եղբայրներին մեր սոցիալիստական ողջույնը, մենք բա-

[1] Տե՛ս Դրոշակ, № 3 (94), մարտ, 1899 թ.։

[1] Էդուարդ Բեռնշտայն, Հայկական տանջանքները և Եվրոպան, ժընև, 1906, էջ 5։

ցարձակ կերպով հայտարարում ենք մեր համակրությունը բազմաչարչար տանկահայ ժողովրդի ազատարար գործին և մեր անկեղծ ցանկությունն է, որ այդ ազատությունը հասնի որքան կարելի է շուտ»[1]։

Օսմանյան կայսրության ժողովուրդների չդադարող ազգային-ազատագրական պայքարը շարունակում էր տագնապել երիտթուրքերին։ Ուստի նրանք տենդայնորեն հակազդեցության միջոցներ էին փնտրում, որոնցից մեկը երիտթուրքական կազմակերպությունների միավորումն էր և միաձույլ կուսակցության ստեղծումը։ Իսկ դա ամենից առաջ ենթադրում էր հաղթահարել սեփական շարքերում եղած լուրջ տարաձայնությունները։

1902 թվականի փետրվարի 4—9-ը Փարիզում գաղտնի պայմաններում տեղի ունեցավ երիտասարդ թուրքերի առաջին կոնգրեսը, որին մասնակցում էին 60-ից ավելի պատվիրակներ երիտթուրքական կազմակերպություններից, ինչպես նաև ոչ երիտթուրք թուրքեր, հայեր, հույներ, արաբներ, ալբանացիներ, չերքեզներ, քրդեր, հրեաներ։ Երիտթուրքերի շարքերում եղած տարաձայնությունները և հենց կոնգրեսի բազմազգ կազմը կանխորոշեցին, որ նիստերն անցնեն բուռն վիճաբանությունների մթնոլորտում։ Պատվիրակների մի զգալի մասը կոնգրես էր եկել արտահայտելու կայսրության ազատության ձգտող քրիստոնյա բնակչության տրամադրությունները։ Գոյություն ունեցող ռեժիմի տապալման գաղափարում միաբան լինելով հանդերձ, պատվիրակները տարակարծիք էին պայքարի ուղիների և մեթոդների հարցում[2]։ Կոնգրեսը չկարողացավ իրականացնել իր նպատակը, այն է՝ միավորել երիտթուրքերին և ստեղծել միասնական քաղաքական կազմակերպություն։ Կոնգրեսից հետո նկատելի չափով թուլացավ երիտթուրքերի շարժումը, է՛լ ավելի խորացան նրանց միջև եղած տարաձայնությունները։

Այդ ամենով հանդերձ, երիտթուրքական շարժումը տենդայնորեն համախմբման նոր ուղիներ էր որոնում։ Դրան նպաստեցին այն իրադարձությունները, որոնք ծավալվեցին հարևան Ռուսաստանում։ 1905—1907 թթ. ռուսական հեղափոխությունը

[1] «Պրոլետարիատի կոչվը», № 2—3, 1903 թ.։

[2] Տե՛ս Г. З. Алиев, Турция в период правления младотурок, էջ 61—64։

վիթխարի ազդեցություն գործեց աշխարհի շատ երկրների և առաջին հերթին Ռուսաստանին հարևան երկրների վրա։ Թուրքիան ևս բացառություն չկազմեց։ Չնայած սուլթանական կառավարության ձեռնարկած բոլոր արգելքներին, այնուամենայնիվ, ռուսական հեղափոխությունը կենդանի արձագանք գտավ այնտեղ[1]։ Երիտթուրքական շարժումը նույնպես զգալիորեն աշխուժացավ։ Երկրում առաջ եկան երիտթուրքերի արտասահմանյան կենտրոնների նոր բջիջներ։ Շուտով առաջ քաշվեց երիտթուրքերի և Համիդյան ռեժիմի դեմ հանդես եկող մյուս ուժերի միավորման խնդիրը։

Չնայած բաժան-բաժան լինելուն, երիտթուրքական կազմակերպությունները շարունակում էին իրենց գաղափարները տարածել ինչպես բուն կայսրության մեջ, այնպես էլ Եվրոպայում և Ռուսաստանում։

Ռուսական առաջին հեղափոխությունը և դրա շնորհիվ երկրում ստեղծված քաղաքական որոշ ազատությունները նպաստավոր հող էին ստեղծել այնտեղ երիտթուրքերի գործունեության համար։ 1905—1907 թվականների հեղափոխական շարժումը համարելով Ռուսաստանի «փլուզման» նախանշան, նրանք սկսեցին նրա դեմ աշխատանքներ տանել հատկապես պանիսլամիզմի գծով։ Թուրքիայից և Եվրոպայից երիտթուրքերն ակտիվ փորձեր էին անում անմիջական սերտ կապեր ստեղծելու ռուսաստանյան մուսուլմանության բուրժուակալվածատիրական շերտերի և ռեակցիոն կղերականության հետ։ Այդ աշխատանքների հաջողությանը մեծապես նպաստեց քաղաքական սահմանափակ ազատությունների պայմաններում ռուսաստանյան մուսուլմանական կրոնի սպասավորների և մուսուլման բուրժուական մտավորականության քաղաքական ակտիվության խիստ աշխուժացումը։

Այդ ժամանակ արդեն Ռուսաստանի մուսուլմանաբնակ տարածքներում վերջնականապես ձևավորվում էր գաղափարաքաղաքական չորս հոսանք։ Ֆեոդալական-կղերական, որը, ինչպես վերևում ասվեց, ստացել էր քադիմիզմ անունը (հնի կողմնակիցներ), բուրժուազգայնական՝ ջադիդիզմ (նորի կողմնակիցներ), լուսավորական-դեմոկրատական և սոցիալ-դեմոկրատա-

[1] Տե՛ս Г. З. Алиев, Турция..., էջ 77—79։

կան։ Դրան համապատասխան էլ սկսեցին ձևավորվել քաղաքական չորս խմբեր ու կազմակերպություններ[1]։

Նախ ֆեոդալական-կղերական ուղղության մասին։

1905—1907 թվականների հեղափոխության ընթացքում և դրան հաջորդած ռեակցիայի տարիներին Ռուսաստանի մահմեդական կրոնաֆեոդալական վերնախավը, ինչպես և նախկիններում, ցարիզմի հետ էր։ Ինքնակալությանը հավատարմորեն ծառայելու մեջ հատկապես չգերազանցված ստորաքարշություն էին անում կրոնական բարձրաստիճան սպասավորները։

Մուսուլմանական կղերը և ֆեոդալաբայական վերնախավը հիացմունքով ընդունեցին 1905 թվականի հոկտեմբերի 17-ի ցարական մանիֆեստը։ Օրինակ, Օրենբուրգի մուֆթի Մ. Սուլթանովը մանիֆեստը թաթարերեն թարգմանությամբ ուղարկեց իրեն ենթակա թեմի հոգևորականությանը, դրան կցելով մի հրահանգ, որտեղ նա պատվիրում էր նամազից հետո պարտադիր կերպով մզկիթներում կարդալ «արևափայլ տիրոջ աստվածային նվերը», բնակչությանը մանրամասն պարզաբանել նրա բովանդակությունը, շմոռանալով անպայման աղոթել «նորին մեծություն ցարի ու նրա հարգարժան ընտանիքի» առողջության համար[2]։ Հեղափոխության յուրաքանչյուր փուլում իսլամ հոգևորականության ղեկավարները հանդես էին գալիս կոչերով, հորդորներով, սպառնալիքներով, խոստումներով, որոնք ուղղված էին այն նպատակին, որ մուսուլման աշխատավորներին կտրեն հեղափոխական պայքարից և ի սպաս դնեն ռեակցիային։ Նրանք հրապարակայնորեն դատապարտում էին հեղափոխական շարժումը և նրա ղեկավարներին, փորձում վարկաբեկել սոցիալիզմի գաղափարները։ Ահա թե ինչ ենք կարդում 1907 թվականին ներքին գործերի մինիստրին հասցեագրված մուսուլմանական եկեղեցու պետերի ստորագրած մի գրության մեջ. «Մենք, Ռուսաստանի մուսուլմաններս, լինելով ամենահավատարիմը ռուսաստանյան ինքնակալությանը, և վախենալով... պանիսլամիզմի, սոցիալիզմի և անարխիզմի՝ ժողովուրդների կյանքը քայքայող գաղափարների տարածումից և մեր իսլամի

[1] Տե՛ս «Национальный вопрос накануне и в период проведения Великой Октябрьской социалистической революции». Материалы к сессии научного совета. Выпуск I, М., 1964, изд-во «Наука», էջ 50—51։

[2] Տե՛ս Л. И. Климович, Ислам в царской России, էջ 270։

հիմունքներին այդ գաղափարների հակառակ լինելու հետևանքով, որոշել ենք օրինական կարգով պայքարել այդ բաների դեմ։ Մենք, Ռուսաստանի մուսուլմաններս, զերծ ենք ամեն տեսակ նոր գաղափարներից..., որոնք եկել են զանազան այլ պետություններից։ Մենք մեր սպիտակ ցարին ու նրա գահին ծառայելու ենք նույնպիսի հավատարմությամբ, ինչպես նրան ծառայել են մեր պապերը...»[1]

Ինքնակալության նկատմամբ իր հավատարմությունը հաստատելու մուսուլմանական կղերաֆեոդալական վերնախավի ճիգերի արտահայտություններից մեկը հեղափոխական իրադարձությունների թեժ պահին համառուսաստանյան մուսուլմանական երեք համագումար (կոնգրես) անցկացնելն էր։

Առաջին համագումարը հրավիրվեց 1905 թվականի օգոստոսին, Նիժնի Նովգորոդի տոնավաճառի օրերին, մի շոգենավում։ Համագումարին մասնակցող մի քանի հարյուր պատգամավորներ ներկայացնում էին Ռուսաստանի զանազան մասերի՝ Ղրիմի, Կովկասի, Սիբիրի, Թուրքեստանի, Օրենբուրգի, Սիմբիրսկի, Կազանի մահմեդական վերնախավերին։ Համագումարն անցավ թաթարական բուրժուազիայի գաղափարական ազդեցության ներքո։ Հենց համագումարի օրերին թաթար գործիչների նախաձեռնությամբ ստեղծվեց «Իթթիֆակ մուսլիմին» («Մուսուլմանների միություն») կուսակցությունը, որը կանգնեց սկսված ռուսական հեղափոխության թշնամիների կողմը։ Դասակարգային սուր պայքարի պայմաններում, 1905—1907 թթ. «Իթթիֆակ մուսլիմինը» բլոկ կազմելով կադետական կուսակցության հետ, պայքարում էր բոլշևիկների գլխավորած հեղափոխական շարժման դեմ[2]։ Համագումարն առաջադրեց ազգային շրջանների տեղական կառավարման բնագավառում մուսուլմանական բուրժուազիային նախապատվություն տալու, մուսուլմանական կրոնի լիակատար ազատության և այլ պահանջներ[3]։ Ցարական ճնշման դեմ միավորվելու մուսուլմանական դեմոկրատական մտավորականության և ժողովրդական մասսաների տարերային հակումը

[1] Л. И. Климович, Ислам в Царской России, с. 270.

[2] Տե՛ս Г. Ибрагимов, Татары в революции 1905 г., Казань, 1926, էջ 220, Х. Х. Хасанов, Революция 1905—1907 гг. в Татарии, М., 1965, էջ 120—121։

[3] Տե՛ս «История СССР...», т. VI, էջ 182։

մուսուլմանական բուրժուազիան ամեն կերպ ձգտում էր օգտագործել իր քաղաքական նպատակներին։ Համագումարի օրերին նա բացահայտորեն խոսում էր պանիսլամիզմի և պանթուրքիզմի գաղափարախոսությունների՝ իբրև «հարազատ» գաղափարների մասին։ Համագումարին մասնակցում էին նաև «տանգչալարների» (թաթար էսէռների կուսակցության) և մանրբուրժուական նացիոնալիստական մի շարք ուրիշ տատանվող խմբավորումների ներկայացուցիչներ։ Սրանց աչակցությամբ թաթարական, բաշկիրական, ադրբեջանական և ղազախական բուրժուազիայի ներկայացուցիչները համագումարում առաջ քաշեցին Ռուսաստանի մուսուլմաններին միավորելու պահանջը[1], մի բան, որ, բնականաբար, գլուխ չեկավ։

Ռուսաստանի մուսուլմանների առաջին համագումարի ընդունած բանաձևերում աներկմտորեն և բարձրաձայն արտահայտված էր մուսուլմանական կղերի ռեակցիոն դիրքորոշումը բանվորների և գյուղացիների շահերի, աշխատավորների բարձրացող հեղափոխական շարժման հանդեպ։

1906 թվականին Պետերբուրգում հրավիրվեց Ռուսաստանի մուսուլմանների երկրորդ համագումարը։ Համագումարի հրավիրումը թույլ տալու խնդրանքով նախաձեռնողների խումբը գրում էր, որ այդ համաժողովի հրավիրման նպատակը անկարգությունների դեմ թումբ կանգնեցնելու մտադրությունն է։ Ջնայած նամակում սոցիալիզմն ու պանիսլամիզմը դրված էին մի մակարդակի վրա, բայց դա տուրք էր դիվանագիտությանը։ Ճշմարիտ է, որ բուրժուակալվածատիրական կարգերը և ինքնակալության շահերը պաշտպանող իսլամ կղերաֆեոդալական վերնախավը թշնամաբար էր տրամադրված «սոցիալիզմի, անարխիզմի» նկատմամբ և այս հարցում նամակի հեղինակներն անկեղծ էին։ Ինչ վերաբերում է պանիսլամիզմի մասին հիշատակությանը, ապա դրանով մուսուլմանական վերնախավն ուզում էր բաց չէր թողնում նորից մեկ անգամ ցարական կառավարությանը հավաստիացնելու, թե Ռուսաստանի մահմեդականներն անկեղծորեն հավատարիմ են Ռոմանովների գահին և բնավ մտադիր չեն թուրքական սուլթանի տիրապետությունը գերադասելու ռուսական ինքնակալությունից։

[1] Տե՛ս «История СССР...», т. VI, էջ 182.

Որոշ ժամանակ անց Նիժնի Նովգորոդի մոտերքում գումարվեց մահմեդականների համառուսաստանյան երրորդ համագումարը, որին մասնակցում էին 800 պատվիրակներ։ Այս համագումարը նույնպես վերածվեց ռուսական ինքնակալության նկատմամբ երկրի մահմեդական վերնախավի հավատարմության ցույցի։

Ցարական իշխանություններն իսլամ հոգևորականությանը դրդում էին հեղափոխության դեմ օգտագործել մուսուլմանական կրոնի բոլոր հնարավորությունները, մասնավորապես մահմեդականների կրոնական մոլեռանդությունը։ Այդ նպատակով ոչ միայն մուսուլմանական թուրքալեզու, այլև մուսուլմանական ռուսալեզու թերթերի ու հանդեսների էջերում, ինչպես նաև ռուս սևհարյուրակային պարբերականներում և այլ հրատարակություններում հաճախ էին երևում ամենատարբեր բնույթի այնպիսի նյութեր, որոնց գլխավոր միտքն այն էր, թե մուսուլմանական կրոնի դոգմաներն անհամատեղելի են տիրող կարգերի դեմ ուղղված հեղափոխական պայքարի հետ։ «Առաջնորդվեք... ոչ թե Մարքսի «Կապիտալով», այլ ամենից առաջ Ղուրանով և շարիաթով...»,— մուսուլման հավատացյալներին իր հոդվածներից մեկում այսպես էր պատվիրում Պետերբուրգում լույս տեսնող «Վ միրե մուսուլմանստվա» կղերախալամական թերթը[1]։

Ավելին, հեղափոխության ընթացքում և նրան հաջորդած ռեակցիայի տարիներին մուսուլմանական հոգևորականությունը կազմակերպում էր սևհարյուրակային միություններ, ընկերություններ, «եղբայրություններ», զինված դոշիների ջոկատներ, որոնք կրոնական լոզունգներով ոգեշնչված հարձակումներ էին գործում բանվորական միտինգների և ցույցերի վրա, ճնշում գյուղացիական հուզումները։ Այդպիսին էր, օրինակ, «Սիրաթ-ի մուսթաքիմ» («Ճշմարիտ ուղի») կուսակցությունը, որ ստեղծել ու ղեկավարում էր պետերբուրգցի մոլլա Ս. Բայազիտովը։ Բացառված չէր, որ այդ կուսակցության աշխատանքը ֆինանսավորվում էր ցարական իշխանությունների կողմից։

Ի պատասխան ռուսական արքունիքին և տիրող կարգերին մուսուլմանական բարձրաստիճան կղերի և ֆեոդալական-բայական վերնախավերի կողմից ցույց տված գովելի հավատարմության, ցարական իշխանություններն իրենց հերթին ամեն

[1] «В мире мусульманства», 11/24 ноября 1911 г.

տեսակ աջակցություն էին ցույց տալիս նրանց հեղափոխական շարժման դեմ մղվող պայքարում։ Ինքնակալությունը մուսուլման հոգևորականությանը շատ հեշտությամբ էր օգտագործում հատկապես հեղափոխությունը ճնշելու նպատակով ազգային թշնամություն բորբոքելու իր պրակտիկայում։

Հեղափոխության հենց սկզբին Կովկասում իշխանություններն արյունալի ընդհարումներ առաջ բերեցին քրիստոնյա հայերի և մահմեդական ադրբեջանցիների միջև։ 1905 թվականի փետրվարի 6-ից 10-ը Բաքվում սկսած կոտորածից հետո աղետն ընդգրկեց ողջ Անդրկովկասը՝ Նախիջևան, Երևան, Շուշի, Գանձակ, Թիֆլիս, տևելով ամբողջ մեկ ու կես տարի։ Խաղաղ բնակչությունը երկու կողմից հազարավոր անմեղ զոհեր տվեց։

Կոտորածների ընթացքում ադրբեջանական ազգայնամոլ-պանիսլամականներն օգնություն էին ստանում Թուրքիայից[1]։ Պոլսում հաստատված ադրբեջանցի պանիսլամական գործիչները պաշտոնական շրջանների գիտությամբ և ակտիվ աջակցությամբ կարողացան մեծ քանակությամբ զենք ու դրամ հայթայթել և հասցնել Կովկաս։ Ադրբեջանական մարտնչող ազգայնականության մյուս պարագլուխները՝ Հյուսեին-զադե Ալի բեգը, որը նոր էր Պոլսից Կովկաս վերադարձել, Ահմեդ Աղաևը և Ալի Մերդան Թոփչիբաշևը իրենց շտաբը հաստատել էին Բաքվում և ադրբեջանցի նավթատերերի օգնությամբ զինում էին ղոչիների ջոկատները։

Ընդհարումների ընթացքում հայ ազգայնականները, հատկապես դաշնակցականները, կազմակերպում էին պատասխան «արշավանքներ» ադրբեջանական գյուղերի վրա, պատճառ դառնում նոր զոհերի, նոր արյունահեղությունների դուռ բացում։ Նրանք վարում էին հայ աշխատավորության ազգային մեկուսացման քաղաքականություն, ձգտելով նրանց կտրել համառուսական հեղափոխական շարժումից, շեղել դասակարգային պայքարի ուղուց։

Հարկ է նշել, որ հեղափոխական տրամադրությունների աճի ազդեցության տակ հնչակյան կուսակցության Անդրկովկասի կազմակերպությունների անդամներից շատերը աստիճանաբար հրաժարվում էին նարոդովոլեցների տեռորիստական տակտի-

[1] Տե՛ս **В. А. Старосельский**, Кавказская драма. Книгоиздательство «Амиранъ», Петербург, 1906, էջ 20:

կայից և էվոլյուցիա կատարում դեպի սոցիալ-դեմոկրատիա։ Կուսակցության ձախ թևն արդեն 1905 թվականից ձգտեց միասնական գործողությունների ՌՍԴԲԿ-ի հետ։ Ձախ հնչակյաններից շատերը մտան ՌՍԴԲԿ շարքերը։ Դրանց թիվը շատ էր հատկապես Բաքվում։ Միաժամանակ կուսակցության մեջ կենդանի էին մնում հայ աշխատավորության ուշադրությունը միայն զուտ «հայկական» հարցերի լուծման վրա կենտրոնացնելու միտումները։ Այդ իսկ պատճառով բոլշևիկները առաջվա պես պայքարում էին հնչակյան սոցիալիզմի դեմ, քննադատում կուսակցության աջ թևի գործիչներին, որոնք իրենց մանրբուրժուական-ազգայնական պրոպագանդայով շարունակում էին պառակտում առաջ բերել երկրամասի բազմազգ աշխատավորության շրջանում։

Իսկ կողոպուտը, հրդեհումները, ոճիրները անարգել շարունակվում էին. ցարական կառավարությունը գոհ էր, որ դարերով կողք կողքի ապրած երկու հարևան ժողովուրդները միմյանց հետ կռվի են բռնվել։ Ցարական սատրապները և մահմեդական հոգևորականությունը գործում էին համատեղ ջանքերով։ Բոլշևիկ հրապարակախոս Վ. Վ. Վորովսկին նշում էր, որ կոտորածների ժամանակ «ոստիկանական պրովոկատորի տեղը գրավեց սրբազան կանաչ չալմայով մուսուլմանական ագիտատորը»[1]։ Ցարիզմը հույս ուներ, որ այդպիսով Կովկասը դուրս կմնա սկսված հեղափոխության փոթորիկներից։ Կառավարությունը կատարեց ոչ միայն հանդիսատեսի, այլև ակտիվ հրահրողի դեր, իսկ ապա իր և պանիսլամականների սարքած ոճիրը պսակեց «պատժիչ արշավախմբերով»։

Հեղափոխական ընդվզումները ճնշելու համար կառավարությունը մուսուլմանական բնակչությունից զինվորական ծառայության կանչված երիտասարդությանն ընդգրկում էր հատուկ ազգային զորամասերի մեջ և դրանք տեղաբաշխում քրիստոնեաբնակ «անհանգիստ» վայրերում։ Օրինակ, մուսուլման կաբարդիներից կազմված ազգային զորամասեր էին տեղաբաշխված Կարսում և Ալեքսանդրապոլում։

Սակայն ցարական իշխանություններին ոչ միշտ էր հաջողվում մուսուլմանական զորամիավորումներն օգտագործել հեղափոխական շարժումները ճնշելու համար։ Բոլշևիկները բա-

[1] **В. В. Воровский**, Соч., т. III, М., 1933, с. 107.

ցատրական լայն աշխատանք էին տանում այդ զորամասերի զինվորների շրջանում, նրանց քաշում հեղափոխության կողմը։ Այսպես. 1905 թվականի սեպտեմբերին ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի զինվորական կազմակերպության գաղտնի տպարանում տպագրվեց և քաղաքում տեղաբաշխված Կաբարդինյան հետևակային գնդում տարածվեց «Եղբայր կաբարդիննե՛ր» պրոկլամացիան, որով մերկացվում էր ցարական կառավարության հակաժողովրդական մեծապետական քաղաքականությունը, զինվորներին կոչ էր արվում չկրակել հեղափոխական բանվորների և գյուղացիների վրա, զենքն ուղղել ցարի և նրա կամակատարների դեմ։ Սոցիալ-դեմոկրատների տարած եռանդուն աշխատանքի հետևանքով գնդի զինվորները հայտարարում էին. «Մենք այլևս զենք չենք ուղղի մեր հարազատների և եղբայրների դեմ»[1]։

Ռուս ժողովրդի ամենալայն զանգվածները, ռուսական մտավորականության լավագույն ներկայացուցիչները հրապարակայնորեն դատապարտում էին հայ-ադրբեջանական ընդհարումները, դրանց կազմակերպողներին, անարգանքի սյունին գամում ցարական իշխանություններին։

Բոլշևիկները բուռն զայրույթով դատապարտեցին կոտորածները։ Բոլշևիկյան մամուլի օրգանները ցույց էին տալիս ջարդերի իսկական մեղավորներին, մերկացնում կառավարության հերթական ոճիրը։

Ինչ վերաբերում է ռուսական կայսրությունում ձևավորվող մուսուլմանական բուրժուազիային և նրա շահերի արտահայտիչ ջադիդներին, ապա հենց սկզբից նկատենք, որ նրանց գաղափարախոսությունն ու պրակտիկան զգալիորեն տարբերվում էին քադիմականների, իսլամ կղերաֆեոդալական վերնախավերի մտածելակերպից ու գործունեությունից։

19-րդ դարում, այսինքն՝ իր ծագման սկզբնական շրջանում, Թաթարիայում, Ղրիմում, Պովոլժիեի թաթարաբնակ շրջաններում տարածված ջադիդիզմը, ինչպես տեսանք, դեռ չուներ հրստակորեն արտահայտված քաղաքական գիծ, իսկ Միջին Ասիայում, Ղազախստանում, Ադրբեջանում, Կովկասի լեռնականների մոտ այն դեռ սաղմնային վիճակում էր։ Բայց նոր՝ 20-րդ դարի սահմանագլխին վիճակը փոխվում էր։

[1] «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 94։

Ինչպես խորությամբ, այնպես էլ լայնությամբ Ռուսաստանում զարգացող կապիտալիզմն իր ոլորտի մեջ էր առնում ազգային ծայրամասերը, դրանք ընդգրկելով համառուսաստանյան հասարակական բաժանման և համառուսական շուկայի մեջ, ծայրամասերի տնտեսությունն ավելի ու ավելի ինտենսիվ կերպով դարձնելով Ռուսաստանի տնտեսության անբաժանելի մասը։

Հումքի նկատմամբ ռուսական արդյունաբերության աճած պահանջարկի ազդեցության տակ Ադրբեջանի և Միջին Ասիայի գյուղատնտեսության մեջ արագորեն զարգանում էին ապրանքային ճյուղերը՝ բամբակագործությունը, մետաքսագործությունը, ծխախոտագործությունը, խաղողագործությունն ու գինեգործությունը։ Հատկապես բամբակագործության մեջ ուժգնորեն ներթափանցում էր ռուսական առևտրաարդյունաբերական կապիտալը։ Դանդաղ, բայց անշեղորեն առաջադիմական փոփոխություններ էին տեղի ունենում գյուղատնտեսական գործիքների գործածության, հողօգտագործման և ջրօգտագործման մեթոդների մեջ։ Գյուղատնտեսության մի քանի ճյուղերում արդեն կիրառվում էր բատրակների վարձու աշխատանքը։

Հողագործության զարգացման հետ միասին աճում էին գյուղատնտեսության ապրանքային արտադրանքների նախնական մշակման ձեռնարկությունները՝ բուժոժից թել քաշելու և մետաքսամանման արհեստանոցներն ու ֆաբրիկաները, բամբակազտիչ գործարանները, գինեգործական և գինեթորման հաստատությունները, ծխախոտի ֆաբրիկաները։ Դրանց մեջ գերակշռում էին տնայնագործական տիպի ձեռնարկությունները։ Երևան էին գալիս նաև կապիտալիստական բնույթի ձեռնարկություններ՝ մեքենայական սարքավորումներով և տասնյակ վարձու բանվորներով։

Ռուսական կապիտալի հետ միասին Ադրբեջան և Միջին Ասիա էր թափանցում նաև օտարերկրյա կապիտալը, որը նույնպես արագացնում էր կապիտալիստական հարաբերությունների սաղմնավորումը և խորացումը։

Այդ ամենին մեծապես նպաստում էր տրանսպորտի միջոցների զարգացումը։ Մասնավորապես Ադրբեջանի և Թուրքեստանի սոցիալ-տնտեսական զարգացման գործում լուրջ դեր խաղացին Կասպից ծովի առևտրական նավագնացության, իսկ Թաթարիայում և Բաշկիրիայում՝ գետային նավագնացության

աճը և տեխնիկական առաջընթացը։ 1883 թվականին Անդրկովկասյան երկաթուղու Բաքու—Թիֆլիս և 1900 թ. Դերբենտի հատվածների շահագործման հանձնումը թույլ տվեց Բաքուն կապել Ելիզավետպոլին, իսկ Անդրկովկասը՝ Դոնի Ռոստովի վրայով՝ Ռուսաստանին։ Երկաթուղային լայն շինարարություն էր սկսվել նաև Միջին Ասիայում և Ղազախստանում։

Երկաթուղիները շատ կարևոր դեր խաղացին նախկին տընտեսական ներփակվածությունը հաղթահարելու գործում, հեռավոր շրջաններին հարմար ելքեր տվեցին դեպի Կասպից և Սև ծովերի նավահանգիստները, դեպի Կենտրոնական Ռուսաստան, հեշտացրին ու կայունացրին կապերն ընդհանուր ռուսաստանյան և արտասահմանյան շուկաների հետ, իսկ դա, իր հերթին, խթանեց գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերի ձեռնարկատիրական, առևտրական զարգացումը, նպաստեց արտադրողական ուժերի հետագա աճին, կայսրության մուսուլմանական շրջանների արդյունաբերության կապիտալիստական զարգացմանը։ Դառնալով կովկասյան, թուրքեստանյան և մուսուլմանական այլ երկրամասերի ու շրջանների էկոնոմիկայի ներվը, երկաթուղիները հաղորդակցության ժամանակակից միջոցներով իրար հետ կապեցին գյուղական վայրերը և քաղաքները, որոնց մեջ աչքի էին ընկնում և զարգանում պրոլետարական Բաքուն, Տաշքենդը, Կազանը և այլ քաղաքներ, որոնք դառնում էին նաև հասարակական-քաղաքական կյանքի կենտրոններ։

Սակայն, եթե չհաշվենք Բաքուն և Կազանը, մուսուլմանաբնակ բոլոր վայրերի մյուս քաղաքներում կապիտալիստական գործարանների, ֆաբրիկաների, երկաթուղային ցանցի, բանկերի ու բորսաների զարգացումը տեղի էր ունենում աուլների և կիշլակների համեմատաբար կայուն ֆեոդալական հարաբերությունների պայմաններում։ Դրանց երևան գալը ֆեոդալական հարաբերությունների քայքայման հետևանք չէր, այլ գլխավորապես դրսի՝ ռուսական և օտարերկրյա կապիտալի ներթափանցման հետևանք։

Ահա տնտեսական այդ հողի վրա էլ ձևավորվում էր կայսրության մուսուլմանական բուրժուազիան, իր շահերի գաղափարական արտահայտիչ ունենալով ջադիդիզմը։

Մինչև 1905—1907 թթ. հեղափոխությունը հարյուրավոր ու հազարավոր երիտասարդներ՝ մեդրեսեների աշակերտներ, գյուղացիների, արհեստավորների, մանր առևտրականների զավակներ, արդեն ներգրավվել էին կուլտուրական կյանքի ոլորտը, սովորում էին նոր մեթոդներով գործող դպրոցներում, ինչպես նաև ռուս տեղական դպրոցներում, ռուսաց լեզվի զանազան դասընթացներում, ներգրավված էին ինքնագործ զանազան խմբակների մեջ և այլն։ Դրանց շրջանից դուրս էին գալիս նորամեթոդ դպրոցների ուսուցիչներ, խմբակների կազմակերպիչներ, աշխարհիկ գիտելիքների պրոպագանդիստներ, կենցաղի և ընտանեկան հարաբերությունների ռեֆորմների և կանանց դրության բարելավման կողմնակիցներ, առաջադիմական գաղափարների կրողներ։ Ահա կուլտուրական այդ ընդհանուր վերելքի պայմաններում մուսուլմանական ազգային բուրժուազիան աշխատում էր ժողովրդի կուլտուրական զարթոնքն օգտագործել իր սեփական շահերի և քաղաքական նպատակների համար։ Փորձելով գրավել մասսաների վրա գաղափարական ներգործության բոլոր լծակները, նրանք ստեղծում էին գաղափարախոսական պայքարի և ժողովրդական զանգվածների հոգևոր ստրկացման իրենց ապարատները։

Հանդես գալով որպես գաղութային Կովկասի, Միջին Ասիայի, Ղազախստանի, Թաթարիայի, Բաշկիրիայի մուսուլման բուրժուազիայի ազգայնական գաղափարախոսություն, ջադիդիզմը ձևավորվում ու զարգանում էր հեղափոխական բանվորական շարժման, ինչպես նաև մասսայական ազգային-ազատագրական շարժման աճման ժամանակաշրջանում, այսինքն այն ժամանակ, երբ մուսուլման բուրժուազիան, կտրված իսլամ ժողովրդական զանգվածների հոգսերից ու կարիքներից, նրանց շահագործման գործում հանդես էր գալիս իբրև ցարիզմի և ռուս բուրժուազիայի դաշնակից։

Նման պայմաններում ջադիդական շարժումը, որի մասնակիցների կազմը շատ խայտաբղետ էր, տվեց աջ և ձախ ճյուղավորումներ։ Արդեն 1905—1907 թվականներին ջադիդիզմը ձեռք էր բերել քիչ թե շատ հստակ քաղաքական գունավորում։ Նրա առավել առաջադեմ ներկայացուցիչները, թողնելով քաղաքական գործունեության դաշտը, իրենց նվիրում էին ժողովրդի լուսավորության և կրթության գործին, մերձենում կամ ձուլվում լուսավորիչ գործիչների հոսանքին։

Սակայն ամբողջությամբ վերցրած ջադիդիզմը, որպես բուրժուական քաղաքական, ազգային-կրոնական հոսանք, խիստ տարբերվում էր լուսավորության, կուլտուրայի և կենցաղի բնագավառում նորամուծությունների ժողովրդական առաջադի-

մական միտումից, որը, ինչպես տեսանք, սկսել էր նշմարվել դեռ 19-րդ դարի 80—90-ական թվականներին։ Այժմ ջադիդները աշխատում էին այդ միտումն առավելագույնս օգտագործել տեղական ազգային բուրժուազիայի կարիքներին։ Նրանց բացարձակ մեծամասնությունը խորշում էր ժողովրդական մասսաներից, հեռու էր կանգնում նրա հոգսերից ու ցավերից։ Ճիշտ է, ջադիդները հանդես էին գալիս էմիրների, խանների, բեգերի, բայերի ֆեոդալական կամայականությունները սահմանափակելու, տեղական բուրժուազիային իրավունքներ տալու օգտին։ Բայց նրանք դրանից հեռու չգնացին. նրանց սահմանափակ բարեռոբոգչական պահանջները չէին արտահայտում ֆեոդալական-բռնապետական ճնշման դեմ պայքարող մուսուլման աշխատավորների իսկական ձգտումները։ Ջադիդական հանդեսներում և թերթերում ոչինչ չէր ասվում ժողովրդի ծանր դրության մասին, աշխատավոր գյուղացիների ու արհեստավորների աղքատացման ու քայքայման մասին, բայերի, վաշխառուների, գործարանատերերի կողմից նրանց կողոպտման, գաղութային իշխանությունների անօրինականությունների մասին, հարցեր, որոնք ամենից շատ էին հուզում ժողովրդին։ Դա էր պատճառը, որ ջադիդյան գաղափարախոսներն ազդեցություն չունեին աշխատավոր ժողովրդի շրջանում։

1905—1907 թվականների հեղափոխության և դրան հաջորդած ռեակցիայի շրջանում ջադիդները բաժանում էին «սահմանադրական» միապետության պաշտպանությամբ հանդես եկող կադետների և օկտյաբրիստների հայացքները։ Նրանք տնտեսական և քաղաքական հողի վրա փաստորեն հանդես էին գալիս որպես ռուսական բուրժուազիայի գործակալներ, չնայած իբրև մուսուլմանական բուրժուազիայի շահերի արտահայտիչներ, այդ նույն հարցերում նաև հակադրվում էին այդ բուրժուազիային։ Դա պատահական չէր, քանի որ ջադիդների մյուս աչքը հառած էր Ստամբուլին՝ սուլթան-խալիֆի նստավայրին։

Այդ տարիներին Ռուսաստանի մուսուլմանական բուրժուազիան դեռ չուներ իր քաղաքական կուսակցությունները։ Ադրբեջանում որոշ փորձեր եղան այդպիսիք ստեղծելու համար, բայց դրանք վերջացան անհաջողությամբ։ Ջադիդիզմի գաղափարախոսները Միջին Ասիայում փորձեցին կազմակերպչորեն ձևակերպել և ստեղծել մուսուլմանների համախմբված, քաղաքական, ազգային-կրոնական կուսակցություն, բայց նրանց էլ այդ բանն

այն ժամանակ չհաջողվեց։ Ջադիդները, պանիսլամականները համախմբված էին քաղաքական ուղղություն ունեցող թերթերի և այլ պարբերականների շուրջը, որոնց էջերից լայնորեն քարոզում էին իրենց հայացքները։ Այսպես, ադրբեջանական տեղական բուրժուական պանիսլամական գործիչներն իրենց գաղափարախոսներ Ահմեդ բեգ Աղաևի և Ալի Մերդան բեգ Թոփչիբաշևի գլխավորությամբ խմբավորվել էին «Կասպի» թերթի շուրջը, որ ձեռք էր բերել միլիոնատեր Թաղիևը։

Հեղափոխության տարիներին իսլամական բուրժուական գործիչները պրակտիկ լայն աշխատանքներ տարան իրենց թերթերի թիվն ավելացնելու, ազգային գրահրատարակչական գործը ծավալելու ուղղությամբ։ Այսպես, 1905 թվականի հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հրապարակումից հետո ուղբեկական ջադիդների պարագլուխները համառորեն ձգտում էին թույլտվություն ստանալ գոնե մի թերթ հրատարակելու համար։ Բայց մեկի փոխարեն 1906—1909 թվականներին նրանք հրատարակեցին մի քանիսը՝ «Թերաքքի», «Հուրշեդ», «Շուհրատ», «Ասիյո» և այլն[1]։

1905—1907 թվականներին մուսուլմանական բուրժուական գործիչները մեծ ուշադրություն էին դարձնում նաև ինքնագործունեության խմբակների, բարեգործական ընկերությունների, գրադարանների և այլնի կազմակերպման վրա, այդ կուլտուրալուսավորական հիմնարկների միջոցով փորձում էին ներգործել ժողովրդի գիտակցության վրա և այն մշակելով, ծառայեցնել իրենց շահերին։

Ի տարբերություն Ասիայի և Աֆրիկայի մուսուլմանական երկրների բուրժուազիայի ազգայնական գաղափարախոսության, որը ձևավորվում էր թույլ զարգացած բանվորական շարժման պայմաններում, Ռուսաստանի գաղութային մուսուլմանական ծայրամասերում, մասնավորապես Ադրբեջանում, Թաթարիայում, Միջին Ասիայի մի շարք շրջաններում բուրժուական գաղափարախոսությունը ձևավորվում էր այնպիսի պայմաններում, երբ բուրժուազիայի դեմ հանդես էր գալիս հզոր սոցիալիստական մի ուժ, որն ի վիճակի էր տիրող կարգերի փլատակների տակ թաղելու ազգային ճնշումը։ Դա ռուս հեղափոխական պրոլետարիատն էր, Ռուսաստանի բանվոր դասակարգը։

[1] Տե՛ս «Национальный вопрос накануне и в период проведения Великой Октябрьской социалистической революции», էջ 53։

Կովկասում, Թուրքեստանում, Ղազախստանում և այլուր ինքնակալության դեմ կազմվեց բոլոր ազգությունների ճնշված դասակարգերի միասնական դեմոկրատական ճակատ։ Ժողովրդական լայն մասսաներն ավելի ու ավելի էին համոզվում, որ ցարիզմն անողոք է կայսրության բոլոր ազգությունների և կրոնների աշխատավորների նկատմամբ։ Աշխատավոր մուսուլման մասսաները սկսել էին ավելի հստակորեն տարբերել կալվածատերերի ու կապիտալիստների ցարական Ռուսաստանը բազմաշարչար աշխատավորական Ռուսաստանից։ Նրանք ավելի ու ավելի էին համոզվում, որ իրենց իսկական եղբայրները ռուս բանվորներն ու գյուղացիներն են, Ռուսաստանի բոլոր աշխատավորները։

Այդ բուռն ժամանակներում, օրինակ, Թուրքեստանի ռուս վերաբնակները տեղի մուսուլման աշխատավորական մասսաների կողմն էին։ Ցարական վերաքննիչ կոմս Կ. Պալենը գրում էր. «Հեռավոր ծայրամասում ռուսական պետականության հենարանը հանդիսանալու փոխարեն հին գյուղերի գյուղացիները պատրաստ են իշխանության համար ստեղծված դժվարին դրությունն օգտագործել իրենց նպատակների համար։ Ֆերգանայի մարզում որոշ գյուղեր (ռուսական։— Հ. Ս.)... մշտական սպառնալիք են հասարակական հանգստության համար»[1]։

Ընդհանուր գծերով ահա այդպիսին էր Ռուսաստանի մուսուլմանական բնակչություն ունեցող տարածքների սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը ռուսական առաջին հեղափոխության տարիներին։ Այսպիսին էր այն զանգվածը, որի հետ գործ ունեին թուրքական ազգային բուրժուազիան և նրա գաղափարական-քաղաքական շահերի արտահայտիչ երիտասարդ թուրքերը՝ իրենց պանիսլամական գաղափարներով ու պլաններով։

Ռուսաստանի մահմեդականության բոլոր խավերի ու հասարակական-քաղաքական ուղղությունների թվում ազգային-բուրժուական, ջադիդական հոսանքը առավել ընկալունակ եղավ պանիսլամական պրոպագանդայի հանդեպ։ Դա պատահական չէր։ Իսլամ կղերաֆեոդալական վերնախավը հավատարիմ էր ցարին (համենայն դեպս ամեն կերպ ճգնում էր ցույց տալ, թե հավատարիմ է)։ Այս հոսանքի դիրքորոշումն ինչ-որ տեղ նույնիսկ դուր էր գալիս թուրքական սուլթանին, նաև ձեռնտու էր նրան, քանի որ բռնակալ Աբդուլ Համիդը, կամ Վ. Ի. Լենինի խոսքերով ասած՝ «թուրքական Նիկոլայ II-ը», բնավ չէր ցանկանա խարխլված տեսնել հարևան երկրի՝ իր նման բռնապետի՝ Նիկոլայ II-ի, կամ ռուսական Աբդուլ Համիդի, գահը։ Թուրքական սուլթանը երկյուղ ուներ, որ տեղի ունեցող հակացարական հեղափոխական շարժումը կարող է շղթայական ձևով տարածվել Օսմանյան կայսրության վրա և սպառնալ Բարձր Դռանը։ Պատահական չէ, որ Կովկասում տեղի ունեցող հեղափոխական դեպքերի ժամանակ հայերի ընդվզումների առիթով թուրքական արքունիքից Նիկոլայ II-ը կշտամբանքներ էր ստացել ժողովրդական ելույթները ժամանակին չխեղդելու համար[1]։ Ինչպես միշտ, դասակարգային բնազդը համերաշխության էր մղում նույնիսկ ավանդաբար հակամարտող երկրների տիրողներին՝ հանուն իրենց արքունական շահերի։

Ինչ վերաբերում է Ռուսաստանի մահմեդականության դեմոկրատական-լուսավորական շերտերին, առավել ևս մուսուլման բանվորներին ու գյուղացիներին, ապա նրանց համար խորթ էին պանիսլամիզմի ռեակցիոն գաղափարները։

Երիտթուրքերի համար գործունեության դաշտ մնում էր ուրեմն Ռուսաստանի մուսուլման բուրժուազիան և նրա շահերի արտահայտիչ ջադիդական շարժումը։ Հանձինս նրանց երիտթուրքերը տեսան սոցիալական առումով իրենց համար հարազատ ու գաղափարակից մի միջավայր։ Չէ՞ որ, ինչպես ասում են, ձկնորսը ձկնորսին հեռվից է տեսնում։

Երիտթուրքերը, որպես Օսմանյան կայսրության թուրք մուսուլման բուրժուազիայի շահերի արտահայտիչներ, հանդես էին գալիս թուրքական սուլթանի դեմ, բայց ոչ Թուրքիայում շահագործողական կարգերի վերացման համար։ Իրենց հերթին ջադիդները Ռուսաստանում հանդես էին գալիս ինքնակալության հետ դաշինքի մեջ մտած իսլամ կղերաֆեոդալական վերնախավի և նրա շահերի գաղափարական արտահայտիչների՝ քադիմականների դեմ, որը սակայն ուղղված չէր Ռուսաստանում շահագործողական կարգերի վերացմանը։

Ինչևիցե, իսլամական բուրժուազիան և ջադիդները դարձան

---

[1] К. К. Пален, Переселенческое дело в Туркестане. СПб, 1910, с. 330.

[1] Տե՛ս Նիկոլայ II ցարի՝ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին ուղղված նամակի վերջին հատվածը («Հերոսական պայքարի վավերագրեր», էջ 333)։

երիտթուրքերի քաղաքական հնարքների գլխավոր հենարանը Ռուսաստանում։

Երիտթուրքերն այդ գործի մեջ ամենից առաջ ներգրավեցին Ռուսաստանի իսլամական տարածքներից արտասահման անցած և երիտթուրքերին միացած գործիչներին, որոնք մշտական խորհուրդներ էին տալիս պանիսլամական պրոպագանդան այնտեղ առավել արդյունավետությամբ կազմակերպելու համար։ Իսկ կովկասյան գործերի գլխավոր գիտակ համարվող երիտթուրքերի պարագլուխներից Մուրադ բեգի խորհուրդները նրանց համար ուղեցույց էին երկրամասում քայքայիչ աշխատանքներ տանելու համար։

Ստանալով բանիմաց խորհուրդներ, երիտթուրքերի գաղտնի գործակալները թափանցում էին Ռուսաստան, ամուր կապեր հաստատում այնտեղի մուսուլմանական կազմակերպությունների հետ, ցուցումներ տալիս վերջիններիս, թե ինչպես լայն պրոպագանդա մղել Ռուսաստանի բոլոր մահմեդականներին Թուրքիայի գլխավորությամբ մեկ միասնական մուսուլմանական պետության մեջ միավորելու վերաբերյալ։ Նրանք իդեալականացնում էին ֆեոդալական անցյալը, հին ժամանակներն ու նահապետական կյանքը, կոչ էին անում վերադառնալ մուսուլմանների երբեմնի «միասնությանը», իսլամը փառաբանում էին որպես «մուսուլման ժողովրդի վերածննդի ու նորացման» գլխավոր միջոցի։ Քողարկվելով անկախ սոցիալական դրությունից բոլոր մուսուլմանների «համազգային խնդիրների», նրանց «շահերի ընդհանրության և միասնության» գաղափարներով, երիտթուրքական պանիսլամականները սքողում էին դասակարգային հակասություններն աշխատավորների և նրանց շահագործողների ու կեղեքիչների միջև, ժխտում մուսուլման ժողովուրդների դասակարգային պայքարը և դրա փոխարեն առաջին գծի վրա քաշում տարբեր դավանանք ունեցող ազգերի միջև մղվող պայքարը։ Արմատավորելով ազգային բացառիկության զգացում և թշնամանք, նրանք ճգնում էին խարխլել աշխատավորների ինտերնացիոնալ միասնությունը և մուսուլման աշխատավորներին շեղել հեղափոխական շարժումից։

Երիտթուրքերի այս բոլոր գաղափարներն ու գործելակերպը ակտիվ արձագանք էին գտնում Ադրբեջանի բուրժուական ազգայնականների, Թուրքեստանի և կայսրության այլ վայրերի ջադիդների շրջանում[1]։ Ջադիդական տպագիր օրգանները, ի հակակշիռ մուսուլման ժողովուրդների՝ իրենց դրությունը թեթևացնելու ձգտումներին, իրենց հերթին լայնորեն պրոպագանդում էին պանիսլամական գաղափարները, ժողովրդին կոչ անում համախմբվել Մուհամմեդի դրոշի ներքո, իրենց ազդեցիկ անձանց՝ բեգերի, բայերի, մանապների շուրջը, հավատացյալներին նախազգուշացնում ռուս և այլազգի բանվորների հետ սերտ շփման «վտանգից»։

Ռուսաստանում պանիսլամական պրոպագանդայի կազմակերպման գործում հենց սկզբից մեծ ակտիվություն էր դրսևորում Ահմեդ Ռիզայի գլխավորած Փարիզի «Միություն և առաջադիմություն» կազմակերպությունը։ Այդ աշխատանքները գլխավորելու գործը դրված էր նրա ղեկավարներից Բեհաեդդին Շաքիրի և Նազիմի վրա։

1906 թվականի նոյեմբերի 23-ին Բեհաեդդին Շաքիրը մի նամակ ուղերձով դիմեց Կովկասի պանիսլամ պարագլուխներին՝ առաջարկելով միավորման գործը գլուխ բերել ոչ միայն Կովկասի, այլև ողջ Ռուսաստանի մասշտաբով։ Ահա նամակի տեքստը.

«Կովկասի մեր իսլամ եղբայրներին։

Թանկագին եղբայրնե՛ր, ստացանք ձեր նամակը, որ կարդացինք մեր «ճեմիյեթի» (կազմակերպության։— Հ. Ս.) ժողովում։ Միաձայնությամբ ողջունում ենք իսլամական և ազգային իրավունքների պաշտպանության համար ձեր կողմից Կովկասի բոլոր վայրերում գիտական ու քաղաքական ընկերությունների ստեղծումը, դպրոցներում և հրատարակություններում օսմանյան թուրքերեն գործածելը, մեզ հետ հարաբերությունները սերտացնելու համար Եվրոպա ներկայացուցիչներ ուղարկելու ձեր մտադրությունները։

1. Առաջին խնդիրը Կովկասի և նույնիսկ ամբողջ Ռուսաստանի մուսուլմաններին միավորելն է։ Ձեր դրացիները՝ դաղըստանցիները, չերքեզները պատերազմիկ, քաջ մարդիկ են, լավ գիտեն զենք գործածել։ «Հավատացյալների մեջ եղբայրություն»

[1] Տե՛ս **М. А. Игамбердиев**, Панисламизм, пантюркизм—орудие империалистической агрессии. «Труды ТУИ им. С. Айни», вып. 2, Самарканд, 1954, էջ 43—68։

Մարգարեի խոսքերի համաձայն ձեզ եղբայրական օգնության ձեռք կմեկնենք։ Այդ մասին բնավ կասկած մի ունեցեք։

2. Լեհերը ռուսական լծից ազատվելու համար մեկ-երկու տարուց ի վեր աշխատում են շատ մեծ հայրենասիրական վճռականությամբ։ Բոլորս լսել ենք այդ մասին։ Կովկասում գտնվող իսլամները այդ զոհաբերող ազգից եթե ոչ նյութական, գոնե բարոյական ծառայություն են սպասում։ Թե՛ նրանց, թե՛ Օդեսայի հեղափոխական հրեաների հետ բարեկամական կապեր ունենալը օգտակար կլինի մի շարք տեսակետներով։

3. Ջանացեք ամեն քաղաքում գաղտնի կազմակերպություններ ստեղծել։

4. Բոլորին հայտնի է այն պարագան, որ առանց դրամի աշխարհում որևէ բան անել անհնար է։ Ամենից առաջ ձեր կազմակերպությունը իր ուշադրությունը այս կետի վրա պետք է կենտրոնացնի։ Մեր պարտականությունն ենք համարում այս մասին հիշեցնել ձեզ։

5. Գաղտնի պահեցեք ձեր «Ճևմիյեթի» կենտրոնի անդամների անունները։

6. Առայժմ զգույշ եղեք ռուսական կառավարության դեմ հրապարակավ ապստամբություն կատարելու փորձերից։

7. Մեր թշնամին հանդիսացող և ձեզ ռուսների լծից ազատելու դեմ ամենամեծ արգելքներից մեկը հայերն են։ Մշակեցեք մի կանոնավոր ծրագիր նրանց չլատելու համար (ընդգծումը մերն է։— Հ. Ս.)։

Բժ. Բեհաեդդին Շաքիր»[1]։

Եվ այսպես, դեռ այն ժամանակ երիտթուրքերի համար պարզից պարզ էր, որ ռուսական պետության անդամահատման գլխավոր արգելքներից մեկը հայ ժողովուրդն է, Ռուսահայաստանը, ուստի նախ և առաջ պետք է հարվածել հայերին։

Բայց հայությունը միայնակ չէր։ Հայ աշխատավորների հետ էին ռուսական դեմոկրատիան, բոլշևիկյան կուսակցությունը։ Հայ աշխատավորների հետ էին նաև Անդրկովկասի մուսուլման աշխատավորները, որոնք մերժում էին պանիսլամիզմի և պանթուրքիզմի ռեակցիոն գաղափարախոսությունները, ռուս, հայ, վրացի և այլազգի բանվորների ու գյուղացիների հետ ուս ուսի

[1] Հայկազն Գ. Ղազարեան, Յեղասպան Թուրքը, Պեյրութ, 1968, էջ 153—154։

կանգնում ինտերնացիոնալիզմի դրոշի տակ, գնում բոլշևիկների ետևից։

Ցարական ինքնակալության տապալման համար մղվող պայքարին գնալով ավելի ու ավելի ակտիվորեն էին ներգրավվում ադրբեջանցի պրոլետարները։ «Նրանց մեջ,— նշում էր բոլշևիկյան նշանավոր գործիչ Ս. Մ. Էֆենդիևը,— ուժեղ էր ձգտումը դեպի գիտելիքները, դեպի իրենց շահերի պաշտպանությունը, որի հետևանքով նրանք սիրով էին լսում մեր կուսակցության ագիտատորների կենդանի խոսքը»[1]։

Բաքվի բոլշևիկներն ադրբեջանցի աշխատավորների շրջանում կազմակերպչական և ագիտացիոն-պրոպագանդիստական լայն աշխատանքներ էին տանում, նրանց ներգրավում հեղափոխական շարժման մեջ։ Նրանք որոնում ու գտնում էին մուսուլման աշխատավորների շրջանում ծավալվելիք գործունեության առավել արդյունավետ ձևեր ու մեթոդներ։ Ստեղծագործական մոտեցում դրսևորելով տեղական կոնկրետ պայմաններին, ադրբեջանցի աշխատավորների կուլտուր-կենցաղային առանձնահատկություններին (լեզու, կենցաղ, բարքեր, սովորություններ, ավանդույթներ և այլն), բոլշևիկներն ի վերջո գտան նրանց մեջ տարվող կուսակցական-քաղաքական աշխատանքի անհրաժեշտ կազմակերպական ձևը։ 1904 թվականի վերջին Պ. Ս. Ջափարիձեի, Ս. Մ. Ստոպանիի, Գ. Վ. Ֆոնշտեյնի, Ս. Մ. Էֆենդիևի ակտիվ մասնակցությամբ Բաքվում ստեղծվեց սոցիալ-դեմոկրատական «Հումմեթ» («Էներգիա») խումբը՝ ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեին կից։ Հետագայում «Հումմեթի» գործունեության մեջ ղեկավար դեր խաղացին Մ. Ա. Ազիզբեկովը, Ն. Ն. Նարիմանովը, Ս. Գ. Շահումյանը և ուրիշներ։

Լինելով Բաքվի կուսակցական կազմակերպության անբաժանելի մասը, «Հումմեթը» գործում էր քաղաքի բոլշևիկյան կոմիտեի՝ մուսուլման պրոլետարների շրջանում տարվող աշխատանքի բաժնի իրավունքներով։ Այդ խումբը հեղափոխական աշխատանք էր տանում նաև դաղստանցի և թաթար բանվորների շրջանում։

Կարճ ժամանակում «Հումմեթ» խումբը ճանաչվեց և հեղինակություն նվաճեց, դարձավ Բաքվի բոլշևիկների առաջավոր պոստը ադրբեջանցի բանվորների շրջանում։ Հումմեթականները

[1] С. М. Эфендиев, Из истории революционного движения азербайджанского пролетариата, Баку, 1957, с. 15.

սկսեցին լույս ընծայել «Հումմեթ» անլեգալ թերթը, թռուցիկներ տպագրել ադրբեջաներեն, որոնք այնուհետև տարածվում էին ոչ միայն Բաքվում, այլև Ադրբեջանի գավառներում։

Հումմեթականների հրատարակած թերթը և թռուցիկները պարզաբանում և պրոպագանդում էին հեղափոխական գաղափարներ, բանվորներին դաստիարակում պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով, մերկացնում բուրժուական նացիոնալիզմը, պանիսլամիզմը և պանթուրքիզմը, աշխատավորներին պայքարի կոչում ինքնակալության, կապիտալիստների և կալվածատերերի դեմ, հանդես գալիս կրոնական մոլեռանդության և խավարամոլության դեմ, կանանց ազատագրության և իրավահավասարության կոչով։

«Հումմեթի» ղեկավարները, ինչպես իր հուշերում գրում էր 1906 թվականին Բաքվում աշխատած, ՌՍԴԲԿ աշքի ընկնող գործիչ Վ. Պ. Նոգինը, «շատ ընդունակ մարդիկ էին»[1], ինտերնացիոնալիստներ, ժողովուրդների բարեկամության պրոպագանդիստներ, հայ-ադրբեջանական բարեկամության ջատագովներ։ Խմբի ղեկավար կորիզի շուրջը համախմբվել էին այնպիսի փորձված ընդհատակյիններ ու կոնսպիրատորներ, հմուտ կազմակերպիչներ ու ագիտատորներ, ինչպես Բահրամ Աղաևը, Կավի-Մուհամմեդ Աղասիևը, Ասադուլլա Ախունդովը, Մուխթադիր Այդինբեկովը, Սուլթան Էֆենդիևը, Մուխթար Հաջիևը, Բալա Ամի Դադաշևը, Մամեդ Մամեդյարովը, Նարիման Նարիմանովը, Բունիյաթ Սարդարովը, Խանլար Սաֆարալիևը, Սեյիդ Յակուբովը և ուրիշներ։

Բոլշևիկ հումմեթականների եռանդուն աշխատանքը նպաստում էր ադրբեջանցի բանվորների քաղաքական ակտիվության աճին, Բաքվի պրոլետարիատի ինտերնացիոնալ համախմբվածության, Անդրկովկասի բազմազգ աշխատավորների շրջանում դասակարգային համերաշխության հետագա ամրապնդմանը։

ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեին կից գործում էին նաև «Ֆարուկ» («Արդարության ջատագովներ») և «Բերլեկ» («Միասնություն») խմբերը, որոնք հեղափոխական-պրոպագանդիստական լայն աշխատանք էին տանում համապատասխանաբար լեռնական ժողովուրդների և Բաքվի թաթար բանվորների շրջանում։

[1] **В. Ногин.** 1906 год в Баку. В кн. «Двадцать пять лет Бакинской организации большевиков», с. 20.

Նորից վերադառնանք Թուրքիայի գործերին։ 1907 թվականի դեկտեմբերի 27-ից 29-ը Փարիզում հրավիրվեց երիտթուրքերի հերթական՝ երկրորդ կոնգրեսը, որին մասնակցում էին նաև հայկական և հրեական կազմակերպությունների ներկայացուցիչներ։ Կոնգրեսը պահանջեց. ա) սուլթան Համիդի գահընկեցություն, բ) գոյություն ունեցող ռեժիմի արմատական փոփոխություն, գ) խորհրդարանի գումարում։ Կոնգրեսը դիմում ընդունեց, որտեղ առաջ էր քաշվում Համիդյան բռնապետության դեմ համատեղ պայքարն ուժեղացնելու խնդիրը։ Երիտթուրքերի պարագլուխների հետ միասին դիմումը ստորագրեց նաև դաշնակցություն կուսակցությունը։

Այն ժամանակ, երբ երիտթուրքերի և դաշնակների պարագլուխները համատեղ ժողովներ էին գումարում, որպեսզի միավորեն իրենց ջանքերը, այդ նույն ժամանակ դաշնակ ղեկավարությունը հրաժարվում էր ընդունել սուլթանական կարգերի դեմ միասնաբար գործելու հայ մյուս քաղաքական կազմակերպությունների առաջարկները։ Այսպես, դաշնակցությունն իր 4-րդ ընդհանուր ժողովում (Վիեննա, 1907 թ.) կտրականապես մերժեց հայ երեք ազգային կուսակցությունների համաժողով հրավիրելու և նրանց ջանքերը համատեղելու մասին հնչակյան կենտրոնի առաջարկը։

Ինչ վերաբերում է արմենական և վերակազմյալ հնչակյան կուսակցություններին, ապա սրանք բռնել էին այն ուղեգիծը, որ Թուրքիան, ինչ նոր վարչակարգ էլ որդեգրի, պիտի մնա հայոց և նրանց հայրենիքի ազատության անողոք թշնամի, որ նույն վայրագ հալածանքներով ու ջարդերով պիտի փորձի ոչնչացնել հայությանը և զավթել նրա հայրենիքը։ Ուստի նրանք գտնում էին, որ ժողովրդի միակ փրկությունը ազգային-ազատագրական կռիվն է ինքնապաշտպանության համար։

Այդ տարիներին հնչակյան կուսակցությունն արդեն իր ծրագրում ուներ Օսմանյան կայսրությունից Հայաստանի անջատման և պետական անկախություն ձեռք բերելու պահանջը։ Չնայած նման արմատական, հստակ ծրագրային ձևակերպմանը, պետք է ասել, սակայն, որ հետագա տարիներին նույնպես հնչակները գործնականում, պրակտիկ պայքարի ընթացքում չէին դնում անկախ Հայաստանի ստեղծման խնդիրը։ Միևնույն ժամանակ նրանց ղեկավարությունը, ի տարբերություն դաշնակ ղեկավարության, վճռականապես հրաժարվում էր համագործակ-

ցել երիտթուրքերի հետ, գտնելով, որ սրանք, դեպքերի բարեհաջող ընթացքի դեպքում ավելի մեծ աղետներ են բերելու հայ ժողովրդին։

Մոտավորապես պայքարի նման ուղեգիծ որդեգրեց 1908 թվականին Կահիրեում հիմնադրված սահմանադիր ռամկավարական կուսակցությունը, որին ձուլվեց արմենական կուսակցությունը։ Ռամկավարները նույնպես համոզված էին, որ ինչպիսի վարչակարգ էլ ստեղծվի Թուրքիայում, նրա կառավարող շրջանների անփոփոխ նպատակը պիտի մնա թաքուն կամ բացահայտ հալածանքներով, բռնագաղթով կամ կոտորածներով քայքայել ու ոչնչացնել հայ ժողովրդին, ամայացնել Հայաստանը և այն ընդմիշտ կցել Թուրքիային։ Նրանք գտնում էին, որ հայ քաղաքական կազմակերպությունների և հոսանքների առաջադրանքը պիտի լինի՝ հայության համար իր պատմական հայրենիքում ապահովել տանելի գոյավիճակ՝ որպես ազգային վերապրումի նախապայման։ Ամեն մի մասնակի բարեկարգում նրանք դիտում էին իբրև մի քայլ օսմանյան դարավոր լծից վերջնականապես ազատագրվելու ճանապարհին։

Այսպիսով, բոլորովին իրականությանը չի համապատասխանում այն միտումը, թե հայ քաղաքական կուսակցությունները ձգտում էին Արևմտյան Հայաստանն անհապաղ անջատել Օսմանյան կայսրությունից։ Առավել ևս իրականությանը չի համապատասխանում հետագա տարիներին հրապարակ բերված այն տեսակետը, թե այդ կուսակցությունները նպատակ ունեին ստեղծելու «ծովից-ծով» Հայաստան[1]։ Հայաստանի անկախության գաղափարը որպես գործնական խնդիր ծնունդ էր առնելու միայն առաջին համաշխարհային պատերազմի վերջին տարում։ Անկախության հարցը խաղաղության բանակցությունների ժամանակ և դիվանագիտական սեղանների վրա արծարծվել սկսեց այն ժամանակ միայն, երբ արդեն Արևմտյան Հայաստանում հայ ժողովուրդը բնաջնջված էր։

Երիտթուրքերի 1907 թվականի Փարիզի կոնգրեսից հետո

[1] Հավանաբար այդպես մտածողների համար առիթ էր դարձել հայ ժողովրդական կուսակցության ծրագրի հետևյալ ձևակերպումը. «Հայ ժողովրդական կուսակցության նպատակն է Հայաստանի անջատված մասերից ստեղծել միացյալ և անկախ Հայաստան իր սեփական ծովային ելքով» (տե՛ս «Ծրագիր հայ ժողովրդական կուսակցության, ընդունված Բ. համագումարում 1917 թվի 7—15 սեպտեմբերի», Երևան, տպ. «Լույս», 1919, էջ 3)։

նրանց կազմակերպություններն ավելի ուժեղացրին իրենց գործունեությունն ինչպես արտասահմանում, այնպես էլ երկրի ներսում։

Իրենց գաղափարները լայնորեն պրոպագանդելով, երիտթուրքերը միաժամանակ քաջ գիտակցում էին, որ դրանց կենսագործումն անհնարին է այնքան ժամանակ, քանի դեռ իրենք չեն վերցրել իշխանությունը և չեն հաստատել սահմանադրական, «ազատական» կարգեր։ Ուստի նրանց հիմնական մտահոգությունն առաջվա նման մնում էր աբդուլհամիդյան ռեժիմի տապալումը։

Դեռ 1905 թվականի վերջերից երիտթուրքերն իրենց հակակառավարական գաղտնի աշխատանքների կենտրոնների մի մասն արտասահմանից տեղափոխեցին Մակեդոնիա և Ալբանիա, սերտ կապեր հաստատելով բալկանյան ժողովուրդների ազատագրական շարժումների ղեկավարների հետ։ 1906 թվականին «Միություն և առաջադիմություն» կոմիտեն իր նստավայրը արտասահմանից փոխադրեց Սալոնիկ և ձեռնամուխ եղավ ընդհատակյա բջիջների ստեղծմանը։ Երիտթուրքերը բուռն գործունեություն ծավալեցին հատկապես այստեղ տեղաբաշխված բանակային զորամիավորումների շրջանում։ Շատ չանցած նրանց ազդեցության տակ ընկավ սպայական կազմի մեծ մասը։

1908 թվականի հուլիսի 3-ին Մակեդոնիայի Ռեսնե քաղաքի թուրքական կայազորի պետ, լեյտենանտ Նիյազի բեյն իր միավորման հետ միասին խռովություն բարձրացրեց և գրավեց Մակեդոնիայի արևմտյան մի շարք շրջաններ։ Նրա օրինակին հետևեցին նաև ուրիշ թուրք սպաներ, որոնց թվում և Էնվեր բեյը (հետագայում՝ Էնվեր փաշա)։ Կառավարությունը փորձեց ճնշել սկսված ապստամբությունը, բայց հաջողություն չունեցավ։ Հուլիսի 22-ին ապստամբները գրավեցին Մոնաստիր (Բիտոլ) քաղաքը և ազատեցին բանտարկյալներին։ Հուլիսի 23-ին Երիտթուրքերի կոմիտեի գլխավորությամբ Սալոնիկում մասսայական ցույցեր սկսվեցին։ Ցուցարարները այստեղ նույնպես բանտերից ազատեցին բանտարկյալներին[1]։

Սուլթան Աբդուլ Համիդը, տեսնելով, որ երիտթուրքերի հիմնական պահանջի՝ 1876 թվականի սահմանադրության վերա-

[1] Տե՛ս «История македонского народа», Скопле, изд-во «Посветно дело», 1975, էջ 204:

կանգնման հետագա ձգձգումը կարող է ճակատագրական լինել ոչ միայն իր գահի, այլև կյանքի համար, մասսայական շարժման ճնշման տակ տեղի տվեց։

1908 թվականի հուլիսի 24-ին Ստամբուլի թերթերը հրատարակեցին սուլթանական իրադե՝ սահմանադրությունը վերականգնելու և դեպուտատների պալատի առաջիկա գումարման մասին։ Այսպես, համարյա խաղաղ, տեղի ունեցավ երիտթուրքական հեղափոխությունը։

Երիտթուրքերը դարձան դրության տերը։ Հեղաշրջումը նրանց ձեռքը տվեց ռեալ իշխանությունը երկրում։ Բայց նրանք սուլթանին գահընկեց չարեցին. դա չէր մտնում նրանց ծրագրի մեջ։

Սուլթանի և կառավարության կապիտուլյացիայից հետո ողջ Մակեդոնիայում, Ստամբուլում և Օսմանյան կայսրության շատ քաղաքներում մի քանի շաբաթ շարունակ ցույցեր ու միտինգներ էին տեղի ունենում։ Ամենուրեք ցնծություն էր. ցուցարարները փողոց էին դուրս գալիս կայսրության դրոշներով, լոզունգներով, նվագախմբերով։ Անվերջ ճառեր էին ասվում։ Հռետորներն արտահայտում էին իրենց ուրախությունը կատարվածի առթիվ, պատիվ էին մատուցում հերոս երիտթուրքերին, կեցցեներ էին հնչակում նրանց հասցեին, ցուցարարներին խանդավառում էին Օսմանյան կայսրության պայծառ ապագայի հեռանկարով[1]։

Իսկապես որ որոշ բաներ փոխվում էին դեպի լավը։ Բացի հրապարակային ցույցերից, միտինգներից, դասախոսություններից գումարվում էին քաղաքական տարբեր գունավորում ունեցող հավաքույթներ, կարգի էին բերվում հին դպրոցները և բացվում էին նորերը նույնիսկ երկրի ամենահետամնաց գյուղերում։ Վերացվել էր կաշկանդիչ գրաքննությունը, և ամեն ոք կարող էր անարգել թերթ ու գիրք հրատարակել, իր ուզած գործը ձեռնարկել, տեղափոխվել ուր կամենար և այլն։ Հայերը նույնիսկ սկսեցին խոսել Համիդյան սարսափների տարիներին քրդերի և թուրքերի կողմից բռնագրավված իրենց հողերը հետ ստանալու մասին, իսկ երիտթուրքերը թղթի վրա ճանաչեցին հայերի «օրինական իրավունքը»։

Տեղի ունեցող քաղաքական ցույցերի, միտինգների ու ժողովների ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկն այն էր, որ մասսայաբար եղբայրանում էին բոլորն իրար հետ. թուրքերը՝ ոչ թուրքերի, մուսուլմանները՝ ոչ մուսուլմանների։ Երիտթուրքերը հատկապես արաբներին ու հայերին հայտարարելով թուրքերի եղբայրներ, հույս ունեին, որ այդ ժողովուրդները կբավարարվեն հնչակած «սահմանադրական» կարգերով և կդադարեցնեն ազգային-ազատագրական պայքարը։ Օրերի ականատեսը գրում է, որ «ամեն օր հրապարակային ցույցեր տեղի կունենային, թուրք և հայ ճառախոսները կը ջատագովեին երկու ազգերու համերաշխությունը և հավասարությունը»[1]։ Մասսայական միտինգների ու ժողովների ժամանակ թուրքերը և հայերը գրկախառնվում էին, համբույրներ էին փոխանակում հայ տերտերներն ու թուրք մոլլաները։ «Բազմաշարչար հայերը, մոռացության տալով իրենց բոլոր կրածները, անկեղծորեն նվիրվեցին Փոքր Ասիայում սահմանադրականության ամրապնդմանը»[2],— դեպքերի թարմ հետքերով գրում էր երիտթուրքերի հեղափոխության պատմության ռուս հետազոտողներից մեկը։ Հեղափոխությամբ խանդավառված, հայերը ակնկալում էին ստանալ իրենց արդար բաժինը նրա բարիքներից։ Վերհիշելով այդ օրերի հայոց խանդավառությունը, ականատեսը նշում է. «...Սկզբի օրերն այնքան վառ ու խոստումնալից եղան, հնչակուած սահմանադրութենեն ակնկալութիւններն այնքան մեծ, որ հայերս հավատացինք, թե այլևս վերջ գտած են մեր դարավոր տառապանքները, այսինքն թե՝ ո՛չ թուրքը և ո՛չ ալ մանավանդ քյուրդ ավազակը ա՛լ պիտ չհալածեն ու չկոտորեն մեզի»[3]։

Այդ ընդհանուր խանդավառությունից թերևս դուրս էր մնացել միայն Քուրդիստանը։ Ծայրահեղ հետամնացության մեջ գտնվող քուրդ ժողովրդական մասսաների համար անըմբռնելի էին երիտթուրքական հեղափոխությունը, նրա հնչակած սահմանադրական կարգը։ Ինչ վերաբերում է քուրդ աղաներին ու ցեղապետերին, որոնք տարիներ շարունակ սուլթան Աբդուլ Համիդի

---

[1] Տե՛ս Г. З. Алиев, Турция в период правления младотурок, էջ 109—113:

[1] Սարգիս և Միսակ Բդլեաններ, Հարազատ պատմություն Տարոնոյ, էջ 261։

[2] «Турецкий сборник» (К событиям на Ближнем Востоке). Под редакцией **И. М. Бикермана**, С. Петербург, типография «Север». 1909, с. 224.

[3] «Պատմություն Պաղնատան», էջ 133։

բռնապետական ռեժիմի ջերմ պաշտպաններն էին և նրա հենարանը, հեղափոխության հաղթանակի լուրն ընդունեցին բացահայտ թշնամանքով։ Այդ ֆեոդալները տագնապ էին ապրում, թե նոր իշխանությունները կարող են երկրում օրինական կարգ հաստատել, որի պայմաններում անհնարին կլինի ցանկացած ձևով հարստահարել քուրդ աշխատավորներին և շարունակել անլուր բռնությունները անպաշտպան հայերի նկատմամբ[1]։ Քուրդ աղաների և բեգերի մի մասը, վախենալով հեղափոխությունից, փախավ Պարսկաստան[2]։ Քրդական հետամնաց մասսաների մեջ հայերի դեմ կրքեր բորբոքելու նպատակով շեյխերն ու ավագանին նրանց համոզում էին, թե սահմանադրությունը մեծ դժբախտություններ է բերում քրդերին և որ դրա պատճառը «գյավուր» հայերն են՝ սահմանադրության հեղինակները, որոնք ցանկանում են ոտնատակ տալ շարիաթը և մահմեդականների հետ հավասար իրավունքներից օգտվել[3]։

Ինչևիցե, երկիրը հիմնավորապես «սահմանադրական գարուն» էր ապրում։ Սակայն, այն ինչ չէին տեսնում և չէին կարող տեսնել հեղափոխությունից խանդավառված մասսաները, պարտավոր էին տեսնել, վերլուծել, կանխատեսել ազգի քաղաքական ուժերը. բայց ավաղ, հայ քաղաքական գործիչներից շատերն ընդունակ չեղան այդ բանն անելու։ Ընդհանուր խանդավառության մթնոլորտում ազգային-ազատագրական շարժման մի շարք կազմակերպություններ (հատկապես արաբական և հայկական) շարեշար խաբվեցին՝ հավատալով երիտթուրքերի կեղծ խոստումներին։ Նրանք շլացել էին հռչակված «սահմանադրական» կարգերից։ Աննրելի, ճակատագրական անհեռատեսություն հանդես բերեց հատկապես դաշնակցությունը։

Հեղափոխության հաղթանակից մի շաբաթ հետո, 1908 թվականի հուլիսի 30-ին, դաշնակցություն կուսակցության Պոլսի պատասխանատու մարմինը շրջաբերական-թռուցիկ հրատարակեց ու տարածեց, որտեղ մասնավորապես ասված էր. «Օսմանյան կայսրության մի ծայրից մյուսը հնչում է ազատության, հավասարության, եղբայրության կոչը։ Երեկեան հանրաբանտը վերածուած է ազատաշունչ երկրի։ Մռայլ, երկչոտ դեմքերի տեղ երևում են բերկրալից աչքեր. լռության փոխարեն թագավորում է շարժում. ատելության և քենի ավերակների վրա փչում է սիրոյ շունչը։ Եվ ժողովրդական ամենադժբախտ խավերն անգամ, սովոր ստրկի համակերպության, անտեղեակ ազատության վայելքին, շարժվում, ծփում են ինչպես փոթորկուած ալիքներ, նախանշանը քաղաքական ավելի երջանիկ օրերի։

Հանրային կեանքը կերպարանափոխուած է. փողոցներում այլևս չկայ երեկեան բռնապետության սոսկաբեր գործակալը՝ գաղտնի լրտեսությունը։ Բանտերը դատարկուած են։ Ազատության մարտիկները, ենթակա քաղաքական բանտարկության դժոխային ռեժիմի, ազատ օդումն են՝ գրկախառնուած ժողովրդի հետ, որին նրանք այնքան անձնուիրաբար ծառայեցին։

«Դեպի՜ բանտ» գոչողները իրենք են գնում բանտերը։ Արտասուք տարածողները իրենք են ողբում։ Շքազարդ փաշաներն ու մինիստրները, երեկեան ամենակարող տերերը արքունիքի, կառավարության և երկրի, սողում են յեղափոխության ոտքերի տակ, փախուստ տալիս ժողովրդական ցասման ճանկերից։ Դերերը փոխուած են և սկսուած է մի ավերմունք այն բոլորի, ինչ... շնորհիվ բռնապետական ռեժիմի, նկատվում էր անսասան, անփոփոխ, յավիտենական իսկ»[1]։

Այդ օրերին դաշնակցության պաշտոնական պատմաբան Միքայել Վարանդյանը գրում էր. «1908 թվականը ոսկե տառերով կ՚արձանագրուի համաշխարհային պատմության էջերում։ Նոր հորիզոններ բացվեցան Ազատության գաղափարի առջև, մարդկային նոր զանգուածներ վեր բարձրացան մրափի ու անեության անդունդներից և գրկեցին համամարդկային քաղաքակրթության դրոշը։ ...«Իթթիհադը» չի բավականանում Ֆրանսիական մեծ յեղափոխության երրորդության նշանաբանով. «Ազատություն», «Հավասարություն» և «Եղբայրություն» շարանին նա ավելացնում է «Արդարություն»»[2]։

[1] Տե՛ս Г. З. Алиев, Турция в период правления младотурок (1908—1918 гг.), էջ 113—114։

[2] Տե՛ս Ա. Ա. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, էջ 238։

[3] Տե՛ս Ա. Ա. Համբարյան, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908—1914), Երևան, 1979, էջ 17։

[1] «Նյութեր Հ. Յ. Դաշնակցության պատմության համար», Ա. հատոր, Բեյրութ, էջ 175։

[2] Միքայել Վարանդեան, Վերածնուող հայրենիքը և մեր դերը, Ժընև, 1910, էջ 91—92, 94։

Դաշնակցությունը պաշտոնապես հանդես եկավ երիտթուրքերի հետ անվերապահ «եղբայրանալու» և ազգային-ազատագրական շարժումից հրաժարվելու պահանջով՝ պարզ ու որոշակի հայտարարելով, թե Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրության անբաժանելի տարածքն է։

1908 թվականի սեպտեմբերի 1-ին այսպես կոչված «Հ. Յ. Դ. ներկայացուցիչներու խորհուրդը» մի փաստաթուղթ ներկայացրեց երիտթուրքական կառավարությանը, որը կրում էր «Հայ. Յեղ. Դաշնակցութեան պահանջները» խորագիրը։ Այդ փաստաթղթում, որը լույս տեսավ «Դրոշակի» նույն թվականի սեպտեմբեր-հոկտեմբերի միացյալ թվով (9—10), շեշտվում էր, որ «Թուրքաց Հայաստանը կը կազմէ կայսրութեան անբաժան մասը...»[1]

Իր չորրորդ համագումարում դաշնակցությունը նախատեսեց աներկբա պաշտպանել օսմանյան պետության ֆեդերատիվ սկզբունքը։ Ի լուր ամենքի համագումարը հայտարարեց, որ դաշնակցությունը Թուրքիայում երբեք չի ունեցել և չունի անջատողական որևէ ձգտում, որ նա մերժում է Արևմտյան Հայաստանի անկախության գաղափարը[2]։ Համագումարում ընդունած դաշնակցության նոր ծրագրում ասված էր. «Թուրքահայաստանը կը կազմէ օսմանան սահմանադրական պետութեան անբաժան մասը, հիմնուած տեղական լայն ինքնավարութեան վրա»[3]։ Միքայել Վարանդյանը գրում էր, որ այդ ծրագիրն ընդունվեց՝ վերջ տալու համար թուրքերի մեջ տարածված այն «անհիմն թյուրիմացություններին», թե դաշնակցականները պայքարում են Հայաստանի ինքնուրույնության համար[4]։

Դաշնակցության ղեկավարներն ու մտավորականները համառորեն պնդում էին, թե «մենք բոլորս օսմանցի ենք», ուստի պետք է պայքարենք «հանուն հասարակաց հայրենիքի» ամբողջականության պահպանման ու ամրապնդման։ Էդուարդ Ակնունին (Խաչատուր Մալումյան), Ատոմը (Հարություն Շահրիկյան), Կոմսը (Վահան Փափազյան), Գարեգին Խաժակը (Գարեգին Չաքալյան), Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաջյան), Վարդգեսը (Սերենկյուլյան) և ուրիշներ ամենուրեք հորդորում էին հայությանը՝ այլևս որևէ հիշատակություն չանել Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի մասին, դադարեցնել հակաթուրքական պրոպագանդան, թուրքերի հետ միասնաբար լծվել ողջ կայսրության վերելքի գործին։ Նրանք իրենց խանդավառությամբ թմրեցնում էին արևմտահայության զգոնությունը, սառը ջուր լցնում իր հայրենիքը զենքով փրկելու նրա ձգտումների վրա։

Պահանջելով ֆեդերատիվ սկզբունքի վրա կառուցված պետական կարգ, դաշնակցական պարագլուխները միաժամանակ հրաժարվեցին խզել կապերն իթթիհադի հետ, որը վճռականորեն հանդես էր գալիս այդ ֆեդերացիայի դեմ, ձգտում ստեղծել կառավարման այնպիսի ռեժիմ, որն ապահովեր պետության առավելագույն կենտրոնացում։ Ավելին, նրանք իսկական սիրախաղ սկսեցին այդ ոճրագործ կուսակցության հետ՝ իրենց հռչակելով նրա անկեղծ բարեկամը։

Իթթիհադականների հետ մի բլոկ կազմած՝ դաշնակները գնացին դեպի օսմանյան խորհրդարանի (պառլամենտի) ընտրությունները, խիստ կարևորելով դրանց։ Նախընտրական կամպանիայի օրերին փոխադարձ գովեստներն անպակաս էին։ Խորհրդարանի կազմում հայերից ընտրվեցին դաշնակցականներ, հնչակյան հայտնի գործիչ Մուրատը (Համբարձում Պոյաճյան), «անկախներ»[1]։ 1908 թվականի դեկտեմբերի 17-ին բացված խորհրդարանի առաջին նիստով սկսվեց Օսմանյան կայսրության «ժողովրդավարական» կյանքը։ Խորհրդարանի 266 երեսփոխաններից 20-ը հույներ էին, 12-ը՝ հայեր, 5-ը՝ հրեաներ, 4-ը՝ բուլղարներ, 3-ը՝ սերբեր, մեկական երեսփոխան ունեին ուլահները, դրուզները և մարոնիթները։ Մնացած 219 երեսփոխանները թուրքեր և մահմեդականներ էին[1]։

Սահմանադրության համաձայն խորհրդարանից բացի ստեղծվեց նաև Ծերակույտ (Սենատ)։ Բայց հակառակ սահմանադրությանը, նրա անդամները ոչ թե ընտրվում, այլ նշանակվում էին, այն էլ՝ սուլթանի կողմից։ Ոմանք առարկեցին այդ կարգի դեմ,

---

[1] «Նյութեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմության համար», Ա. հատոր, էջ 176։

[2] Տե՛ս «Դրոշակ», № 5 (183), մայիս, 1907, էջ 72։

[3] «Ծրագիր Հ. Յ. Դաշնակցութեան», Ժընև, 1911, էջ 15—16։

[4] Տե՛ս Մ. Վարանդեան, Հ. Յ. Դ. պատմություն, Բ. հատոր, 1950, էջ 2—3։

[1] Տե՛ս Արսեն Մարմարեան, Զոր. Անդրանիկ և իր պատերազմները, էջ 186։ Ավելորդ չէ նշել, որ Անդրանիկ Օզանյանի ընկերները նրան առաջարկել էին թեկնածությունը դնել պառլամենտում ընտրվելու համար, բայց նա կտրականապես մերժել էր այդ առաջարկը, ասելով, թե այդ պառլամենտ կոչվածը մի նոր ծուղակ է, որ հայության համար սարքել են երիտթուրքերը (տե՛ս նույն տեղը)։

[2] Տե՛ս «Մարմարա», 26 հոկտեմբերի 1965 թ.։

բայց Աբդուլ Համիդը, Սենատի անդամներ ընտրելու իրավունքն ու առանձնաշնորհումը վերջնականապես իրեն վերապահած համարելով, նրանց պատասխանեց. «Ներկայացը ազգի և սահմանադրության վերաքննիչ ուժն է, և նրա անդամների բացահայտ ճնշող մեծամասնությունն անպայման և անպայման պետք է լինեն թուրքեր ու մահմեդականներ»[1]։

Դաշնակցականները դժգոհ չէին. նրանք իրենց լիովին բավարարված էին համարում խորհրդարանում մի քանի տեղ ստանալով և երախտապարտ էին «եղբայր» երիտթուրքերին։

Դաշնակցության պարագլուխները «սահմանադրության վեց տարիներու ընթացքին, ըլլայ ժողովներու մեջ, ըլլայ անհատապես, բոլորին կը քարոզեին, թե այլևս սահմանադրություն է, հավասարություն է, այլևս զենքի ուժով չէ, որ մենք ձեռք պիտի բերենք մեր ինքնուրույնությունը, այլ ժողովրդեան բոլոր խավերուն մեջ՝ նոյն իսկ քյուրդերուն մեջ ուսմունք տարածելով է, որ մենք կը հասնինք մեր բուն նպատակին»[2]։ Եվ երբ ժողովների ընթացքում դաշնակցական ղեկավարներին հարց էին ուղղում, թե հարկ եղած դեպքում ինչպես պետք է ինքնապաշտպանություն կազմակերպել, նրանք, առանց հապաղելու, անպատասխանատու կերպով հայտարարում էին. «Սուրի դարը անցա՞վ, աշխատեցեք կրթություն տալ ժողովրդին»[3]։

Հատկանշական է, որ երբ այդ օրերին դաշնակցականներն անվերապահորեն հավատ էին ընծայում երիտթուրքերի կեղծապատիր խոստումների հանդեպ և անզուսպ խանդավառության մեջ էին, թուրքերից շատերը զարմանք էին հայտնում, թե որքան միամիտ են նրանք։ Թուրք պաշտոնյաներից մեկն իր ծանոթ հայերին ասում էր. «Պետք չկա անտեղի և ավելորդ ցույցերի և ուրախություններ։ Մենք ձեզնից լավ ենք ճանաչում մեր սուլթանին. նա ֆերմաներ է հրատարակում ձեզ ուրախացնելու համար, և հետո ֆերմանը չի գործադրում մեզ ուրախացնելու համար։ Եվ դուք գիտեք, թե որի ուրախությունն է տևական՝ մե՞ր, թե ձերը»[4]։

[1] «Մարմարա», 26 հոկտեմբերի 1965 թ.։

[2] Սարգիս և Միսակ Բդլեանեներ, Հարազատ պատմություն Տարոնոյ, էջ 263։

[3] Նույն տեղը, էջ 294։

[4] Վեր. Յակոբ Կյուրլեքեան, Հայուն հրաշալի գոյատևումը և յառաջադիմությունը անցեալի և ներկայի ապագա հեռատեսիլով, Շիքակո, Իլլինոյ, 1970, էջ 19։

Չնայած դաշնակցական գործիչների անվերապահ խանդավառությանը և իրենց տրամադրությամբ հայությանը վարակելու նրանց բոլոր ջանքերին, այնուամենայնիվ քիչ չէր նաև զգաստ մտածող հայերի թիվը։ Օսմանյան սահմանադրության մռայլ խոստումներին, «հուրիեթ» կոչվածին հատկապես չէին հավատում հայ ազգային-ազատագրական շարժման ակտիվ մասնակիցները, մարտիկ-ֆիդայիները, որոնք անցել էին ավելի քան երկու տասնամյակների պայքարի ու տառապանքների բովով։ «Սահմանադրությունն ետք,— գրում էր նրանցից մեկը,— մենք՝ մեր անցեալ քսան տարիներու դառն փորձութեան տուած դասերով, բնավ երբեք հավատք չունեինք թուրք կառավարութեան անկեղծութեան վրա, կը փափակեինք, որ մեր կազմակերպութեան բոլոր գաղտնիքները չհաղորդուեին երիտասարդ թուրքերուն. ընդհակառակն, մենք ավելի պետք է հետամուտ ըլլայինք իմանալու անոնց գաղտնիքները։ Մենք պետք է մտահոգուեինք մեր ինքնապաշտպանութեան խնդրով, անոր համար միջոցներ խորհեինք և զենք ու ռազմանյութ ձեռք բերելու մասին լրջորեն խորհրդակցեինք»[1]։

Դեռ «մեղրամիսը» չլրացած, պարզ դարձավ, որ երիտթուրքերի 1908 թվականի հուլիսյան քաղաքական կատակերգությունը շատ հեռու է հեղափոխություն կոչվածից։ Երիտթուրքական շարժումը, իբրև բողոք ֆեոդալական ինքնակալական ռեժիմի դեմ, ավարտվեց հուլիսյան իրադարձություններով։ Երիտթուրքերը լսել անգամ չէին ուզում ինքնակալության տապալման մասին։ Նրանք թուրքական բուրժուազիայի և լիբերալ կալվածատերերի շահերի հարազատ արտահայտիչներն էին, չափավոր բուրժուական բարենորոգիչներ, ուստի լիովին բավարարված էին, որ սուլթանը իրենց թույլ է տվել մասնակցելու երկրի քաղաքական կյանքի ղեկավարմանը։

Ահա թե ինչու 1908 թվականի հուլիսի 24-ից հետո երիտթուրքերը շեշտակի շրջադարձ կատարեցին իրենց բարձրագոչ հեղափոխական լոզունգներից, ամեն կերպ սկսեցին կծկել հեղափոխությունը, սանձել մասսաների հեղափոխական պաթոսը։

Երիտթուրքերի ղեկավարներից բժ. Նազիմը այդ օրերին ասում էր. «Երբ բորբոքվեց հեղափոխությունը և հռչակվեց սահմանադրությունը, կոմիտեն հասկացավ, որ իր հեղափոխական

[1] Սարգիս և Միսակ Բդլեանեներ, Հարազատ պատմություն Տարոնոյ, էջ 263։

դերը վերջացած է, և որ այսուհետև իր գործունեության մեջ պետք է հետևի էվոլյուցիոն և խաղաղ մեթոդին»[1]։

Ահմեդ Ռիզան ուղղակի դավաճանություն էր համարում սուլթանական կարգերի նպատակահարմարությունը կասկածի տակ դնելը՝ գտնելով, որ ինքնակալը պետք է ամուր նստած մնա գահի վրա։ «Իմ սերը հայրենիքի հանդեպ ինձ ստիպում է չկասկածել սուլթանի բարեխղճության վրա»[2],— գրում էր նա այդ օրերին։ Հեղափոխությունը, ասում էր նա, լիակատար հաղթանակ է տարել, ամբողջովին կատարել իր խնդիրը՝ կորզել է սուլթանական իրադե սահմանադրության վերականգնման և դեպուտատների պալատի առաջիկա ընտրությունների մասին։ Հետևապես հեղափոխությունը խորացնելու ոչ մի հարկ չկա, և, ընդհակառակը, պետք է բավարարվել ձեռք բերածով։ Հեղափոխության հետագա խորացումից, ասում էր Ահմեդ Ռիզան, կօգտվեն միայն օտարերկրյա տերությունները և ներքին անջատողական ուժերը, որոնք երազում են քայքայել կայսրությունը։

Եվ այսպես, իրենց սուլթանի թշնամի հռչակած երիտթուրքերը սկսեցին նախ երկչոտաբար, իսկ որոշ ժամանակ հետո՝ նաև բացահայտ գովաբանել Աբդուլ Համիդին այն բանի համար, որ ժողովրդին «պարգևել է» սահմանադրություն։ Շատ չանցած նրանք հայտարարեցին, որ պատրաստվում են լայնորեն համագործակցել ֆեոդալական-ինքնակալական վարչության և սուլթանի արքունիքի հետ։ Երիտթուրքերը վարելու էին այնպիսի քաղաքականություն, որն ուղղված էր լինելու միայն ու միայն թուրք բուրժուազիայի դասակարգային շահերի պաշտպանությանը և թուրքական էթնոսի դոմինացիային։

Ինչպես տեսնում ենք, 1908 թվականի հունիս-հուլիս ամիսներին հեղափոխությանը մասնակցած երիտթուրքական ուժերը նախապես հետապնդում էին տարբեր ծրագրեր, տարբեր կերպ էին պատկերացնում հեղաշրջման նպատակներն ու խնդիրները։ Հեղափոխության հաղթանակից հետո ավելի պարզ ու որոշակի դրսևորվեցին այդ ուժերի միջև եղած խոր հակասությունները,

[1] **А. А. Алимов,** Революция 1908 г. в Турции (в сб. «Пробуждение Азии». М., 1935, с. 44).

[2] **Г. З. Алиев,** Турция в период правления младотурок (1908—1918 гг.), с. 116.

որոնք գլխավորապես արտահայտվում էին սուլթանի և սուլթանական կարգերի պահպանման կամ վերացման հարցերի շուրջը։

Երիտթուրքերի հակահեղափոխական տրամադրությունները հատկապես ցայտուն դրսևորվեցին ազգային հարցի նկատմամբ նրանց վերաբերմունքի մեջ։

Հենց «եղբայրացման» առաջին իսկ օրերին երիտթուրքերի պարագլուխներն ազգային-ազատագրական շարժման կազմակերպություններից ու կոմիտեներից պահանջեցին իրենց մոտ եղած զենքերը հանձնել նոր իշխանություններին։

Հետևելով «եղբայր» երիտթուրքերի հորդորներին, ազգային-ազատագրական շարժման շատ կազմակերպություններ կատարեցին այդ պահանջը։ Մի շարք տեղերում այդպես վարվեցին նաև հայերը։ Դաշնակ գործիչների քարոզների հետևանքով նրանցից շատերի մոտ այն համոզումն էր ստեղծվել, թե սահմանադրական երկրում ավելորդ է անձնական զենք պահելը։ Այդ էր պատճառը, որ, ինչպես վերհիշում է դեպքերի ականատեսը, «հին գործիչ ընկերներեն շատերը՝ իրենց արյան գնով ձեռք բերած զենքերը այլևս անպետք նկատելով, սկսան աժան գնով զանոնք ծախել թուրքերուն և քյուրդերուն և անոնց փոխարեն՝ իրենց ունեցած գոմեշներուն, եզներուն, ոչխարներուն վրայ նորեր ավելացնել, և այդ կողմեն մրցիլ իրարու հետ»[1]։ Այդ բոլորի համար նրանք հետագայում պետք է շատ զղջային։

Օգտագործելով դաշնակցության քաղաքական կուրությունը, թթիհադականները այնքան «մոտեցան» նրան, որ լիովին իմացան նրա ծրագրերն ու նպատակները, տեղեկացան նրա կառուցվածքին, ղեկավար կենտրոններին, զենքի կուտակման վայրերին, նույնիսկ՝ արխիվներին, իրենց ձեռքը գցեցին կուսակցության տեղական կազմակերպությունների ցուցակները, ճանաչեցին համարյա բոլոր ղեկավարներին։ Դաշնակցականներ Զավեն և Վարդուհի Նալբանդյանները խոստովանում էին, որ իրենց կուսակցության նման ընթացքը «կաշկանդեց հայ ինքնապաշտպանության թևերը» և անպատրաստ ժողովուրդը մատնեց նոր արհավիրքների[2]։

[1] Սարգիս և Միսակ Բդլեաններ, *Հարազատ պատմություն Տարոնոյ*, էջ 294—295։

[2] Տե՛ս Զարեվանդ, *Ինչ կծրագրեն թուրքերը՝ միացեալ անկախ Թուրանիա։ Բոստոն, 1926*, էջ 140։

Ինչ վերաբերում է քրդերին, ալբանացիներին և մանավանդ մակեդոնացիներին, ապա սրանց մտքով նույնիսկ չէր անցնում, թե կարելի է զենքերը հանձնել կառավարությանը կամ վաճառել։

Սահմանադրության հռչակումից հետո երիտթուրքերը ձեռնամուխ եղան «համիդիե» զորքի լուծարքին։ Շուտով հրաման եղավ «համիդիները» Սիրիայում և կայսրության արաբաբնակ մյուս վայրերում վերացնելու մասին։ Բայց նոր իշխանությունները բնավ ձեռք չտվեցին քրդերից կազմված «համիդիներին»։ Հայկական լեռնաշխարհը ասպատակող քրդական հեծելազորային գնդերը ոչ միայն չէին զինաթափվում, այլև գաղտնի կամ բացահայտ զենք ու զինամթերք էին ստանում իշխանություններից։ Բանը վերջացավ միայն նրանով, որ «համիդիե» գնդերը, որոնց թիվն այդ ժամանակ հասել էր 65-ի և որոնցում հավաքագրված էր 30 հազար հոգի, վերանվանվեցին «իթթիհադ» զորամիավորումների։ Հեղափոխությունից վախեցած և Պարսկաստան փախած քուրդ աղաները և բեգերը երիտթուրքերի առաջարկով վերադարձան իրենց տեղերը։

Զենքերը իշխանություններին հանձնելու կարգադրությունները բացահայտ թշնամանքով դիմավորեցին հատկապես մակեդոնացիները։ Երիտթուրքերի համառ պահանջներին հակառակ, մակեդոնական ապստամբ չետնիկական ջոկատները զենքերը հանձնեցին ոչ թե թուրքական իշխանություններին, այլ իրենց ազգային կոմիտեներին։

Ինչպես հետագա իրադարձությունները ցույց տվեցին, մակեդոնացիների այդ զգուշավորությունը մի կողմից թելադրված էր անցյալի պատմական փորձով, մյուս կողմից իրենց ղեկավարների քաղաքական հեռատեսության և հաշվենկատության արդյունք էր։

Ոչ թուրք ժողովուրդների ազատագրական շարժման այն ղեկավարները, որոնք մեծ զգուշություն էին հանդես բերում, համոզված էին, որ երիտթուրքերը անպայման կխախտեն կայսրության քրիստոնյա ժողովուրդների համար իրավահավասարություն ստեղծելու մասին տված խոստումները։

Զենքերը նոր իշխանություններին հանձնելու մասին երիտթուրքերի պահանջը շատ բան էր ասում։ Արդեն նույն՝ 1908 թվականի ամռան վերջերից սկսած ոչ թուրք ժողովուրդների ազգային-քաղաքական շրջաններում կասկածներ էին հայտնվում հնարավոր վերափոխումների հարցերի շուրջը։ Այդ շրջանները

շահագրգռված էին հեղափոխությունն ուղղել ինքնակալության դեմ։ Այլ խոսքով, նրանք այն կարծիքին էին, որ սահմանադրության վերականգնումով չի վերջացել պայքարը, որ այն դեռ առջևում է։

Խոսքով հռչակելով կայսրության բոլոր ժողովուրդների իրավահավասարությունը, երկրի բոլոր քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների միանմանությունն օրենքի առջև, երիտթուրքերը դրանով իսկ փորձում էին ոչ թուրք ժողովուրդներին համոզել, թե Օսմանյան կայսրության մեջ այլևս ազգային հարց չկա, թե այդ հարցը մեկ հարվածով լուծել է հեղափոխությունը։ Իրականում երիտթուրքերի հեղափոխությունը չէր լուծել ու չէր կարող լուծել ազգային կնճռոտ հարցը։ Նոր կառավարողների կիսատ-պռատ խոստումներն այդպես էլ մնում էին խոստումներ։ Կայսրության ողջ տարածքը ծվատվում էր ազգային հակասություններից։ Ոչ թուրք ժողովուրդները մերժում էին ձևական իրավահավասարությունը՝ ձգտելով անկախության, ինքնուրույն պետականության հաստատման։ «Օսմանիզմի» դոկտրինայից բխող ազգային քաղաքականությունը չէր կարող գոհացնել անկախ կյանք երազող քրիստոնյա և մահմեդական ոչ թուրք ժողովուրդներին։

Լիովին բավարարվելով հեղափոխության կիսահաղթությամբ, երիտթուրքերը գործի դրեցին բանակն ու ժանդարմերիան՝ խեղդելու համար այս կամ այն վայրում տակավին շարունակվող կամ նոր ծագող ապստամբական հուզումները։ 1908 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին երիտթուրքերը դաժանորեն ճնշեցին Թուրքիայի բանվոր դասակարգի առաջին հեղափոխական ելույթները[1]։ Նույն տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին նրանց կողմից վերահսկվող սուլթանական կառավարությունն ընդունեց գործադուլներն արգելող մի շարք օրենքներ, դրանց թվում՝ «Գործադուլների մասին» դրակոնյան օրենքը[2]։ Առավել անհանդուրժողականությամբ ու դաժանորեն ճնշվում էին ոչ թուրք ժողովուրդների սոցիալական շարժման ամենափոքր իսկ դրսևորումները։ Ոչ ոք այլևս իրավունք չուներ դուրս գալու «օրինական» «սահմանադրական» շրջանակներից։

Եվ այսպես, պարզ էր դառնում, որ երիտթուրքերի կատա-

[1] Տե՛ս **Ю. А. Петросян**, Младотурецкое движение, էջ 308։

[2] Տե՛ս **Г. З. Алиев**, Турция в период правления младотурок, էջ 169—170։

ված հեղափոխությունը իր զարգացման մեջ բացահայտորեն աջ է գնացել՝ նպատակ ունենալով անշարժ թողնել Օսմանյան կայսրության ֆեոդալական կարգերի հիմքերը։ Երիտթուրքական հեղափոխությանն ամենաճիշտ բնութագրումներ տվեցին Վ. Ի. Լենինը և նրա զինակիցները։ Հեղափոխության հաղթանակից ընդամենը մի քանի օր հետո Վ. Ի. Լենինը «Պրոլետարի» թերթի 1908 թվականի № 33-ում զետեղված «Դյուրավառ նյութ համաշխարհային քաղաքականության մեջ» հոդվածում գրեց. «Թուրքիայում հաղթանակեց երիտթուրքերի ղեկավարած հեղափոխական շարժումը զորքերի մեջ... Այդ հաղթանակը կես հաղթություն կամ նույնիսկ հաղթության մի փոքր մասն է, որովհետև թուրքական Նիկոլայ երկրորդը առայժմ գլուխն ազատել է թուրքական հուշակավոր սահմանադրությունը վերականգնելու խոստումով»[1]։

Երկու ամիս հետո Վ. Ի. Լենինը վերստին անդրադառնում է երիտթուրքական հեղափոխությանը։ Ճշգրտորեն բնութագրելով իշխանության գլուխ անցած թուրքական բուրժուազիայի և լիբերալ կալվածատիրության շահերն արտահայտող երիտթուրքերի քաղաքականությունը և դրա հանդեպ եվրոպական պետությունների համակրանքը, Վ. Ի. Լենինը նույն թվականի հոկտեմբերին «Պրոլետարի» թերթի № 37-ում գրում էր. «Երիտթուրքերին գովում են չափավորության և զսպվածության համար, այսինքն՝ թուրքական հեղափոխությունը գովում են այն բանի համար, որ նա թույլ է, այն բանի համար, որ նա չի արթնացնում ժողովրդի ստորին խավերին, չի հարուցում մասսաների իսկական ինքնուրույնությունը, այն բանի համար, որ այդ հեղափոխությունը թշնամի է Օսմանյան կայսրության մեջ սկսվող պրոլետարական պայքարին...»[2]

Տարիներ հետո Վ. Ի. Լենինը, կրկին անդրադառնալով երիտթուրքերի հեղափոխությանը, «Պետություն և հեղափոխություն» աշխատության մեջ գրել է. «Եթե օրինակի համար վերցնենք XX դարի հեղափոխությունները, ապա հարկ կլինի, իհարկե, պորտուգալական ու թուրքական հեղափոխություններն էլ բուրժուական համարել։ Բայց նրանցից ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը «ժողովրդական» չեն, որովհետև ժողովրդի մասսան, նրա վիթխարի

[1] Վ. Ի. Լենին, *Երկ*, հ. 17, էջ 211։

[2] Նույն տեղը, էջ 268։

մեծամասնությունը ակտիվ, ինքնուրույն, իր սեփական տնտեսական ու քաղաքական պահանջներով նկատելիորեն հանդես չի գալիս այդ հեղափոխություններից և ոչ մեկի մեջ»[1]։

1909 թվականի մայիսին, «Թուրքիայի իրադարձությունների շուրջը» հոդվածում բոլշևիկյան կուսակցության ականավոր գործիչ, Վ. Ի. Լենինի զինակից Բոգդան Կնունյանցը նշում էր, որ Ռուսաստանի բուրժուական գործիչները հիացած են երիտթուրքերի կիսամիջոցներով ու զգուշավորությամբ, անարյուն հեղափոխությամբ, որի դերակատարները, նրանց խոսքերով ասած, «հանճարեղ կերպով տարան ազգային գործը» և առանց որևէ «դասակարգային պայքարի ու պրոլետարական պահանջների» «նվաճեցին ազատություն»[2]։ *Իսկ ինչո՞ւ ռուս բուրժուաներն ու լիբերալները կեղծավորաբար այդպիսի գովեստներ են շռայլում երիտթուրքերի հասցեին։ Իհարկե, ասում էր Կնունյանցը, ոչ թե թուրքական հեղափոխության և նրա գործիչների նկատմամբ տածած համակրանքից («ըստ էության նրանցից շատերը թքել են երիտասարդ թուրքերի վրա»), այլ «ռուսական հեղափոխությունն ու հատկապես նրա կրողին՝ բանվոր դասակարգին վարկաբեկելու թաքուն նպատակով»։ Նրանք բոլոր կտուրներից նշավակում են «հայրենի հեղափոխականներին», որոնք, իբր, նրանց խոսքերով ասած, «ոչինչ անել չկարողացան, այլ միայն Ռուսաստանը դարձրին պատժիչ ջոկատների և ռազմաղաշտային արդարադատության երկիր»*[3]։

Կնունյանցը այնուհետև նշում է, որ չնայած ռուսական հեղափոխության պարտությանը և երիտթուրքական հեղափոխության հաղթանակին, հասարակական զարգացման վրա ռուսական հեղափոխության ազդեցությունն անչափելի է, այն ունի պատմական վիթխարի նշանակություն։ «Ռուսական հեղափոխությունը,— գրում էր Կնունյանցը,— չնայած իր պարտությանը, հսկայական գործ կատարեց։ Նա ալեկոծեց ռուսական կյանքն ամբողջ խորությամբ։ Նա նպաստեց բազմամիլիոնանոց գյուղացիության արթնացմանը, տեղից շարժեց պրոլետարիատին և դասակարգային պայքարի առաջին լուրջ դասերը տվեց նրան, բուրժուազիային մղեց քաղաքական կազմակերպման ուղին, խո-

[1] Վ. Ի. Լենին, *Երկ*, հ. 33, էջ 49—50։

[2] Բոգդան Կնունյանց, *Ընտիր երկեր*, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1978, էջ 540։

[3] Նույն տեղը, էջ 540—541։

շոր հողատերերին ստիպեց մոբիլիզացնել իրենց ուժերը և կանգնել իրենց արտոնությունները պաշտպանելու ուղու վրա։ Այդ ամենը մեծ պլյուս է մասսաների քաղաքական դաստիարակության համար։ Դեռևս չհասնելով իր անմիջական նպատակին՝ քաղաքական այնպիսի կարգի նվաճմանը, որը համապատասխանում է զարգացող բուրժուական հասարակարգի շահերին, ռուսական հեղափոխությունը, այնուամենայնիվ, վիթխարի զարկ տվեց Ռուսաստանի առաջխաղացմանը՝ նրա քաղաքական ու սոցիալական հարաբերությունների եվրոպականացման ճանապարհին»[1]։

Իսկ ի՞նչ տվեց հաղթանակած թուրքական հեղափոխությունը, որին անզուսպ գովեստներ էին շռայլում ռուսական հեղափոխության հակառակորդները։ «Այն ժամանակ, երբ ռուսական հեղափոխության գործող ուժը բնակչության բազմապիսի դասակարգերն էին»[2], որոնք իրենց առջև մեծ ու բազմազան խնդիրներ էին դրել, թուրքական հեղափոխությունը, ընդհակառակն, շատ սահմանափակ ու նեղ խնդիրներ էր դրել իր առջև։ Մյուս կողմից այն ընթանում էր սոցիալական ավելի պարզ իրադրության մեջ։ Բացի այդ, թուրքական հասարակությունը դասակարգային տեսակետից դեռևս խիստ շերտավորված չէր, նրանում Բ. Կնունյանցի արտահայտությամբ, կապիտալիզմը դեռ նոր էր բացում իր առաջին արահետները, բնակչության վիթխարի մեծամասնությունը ապրում էր բնատնտեսության պայմաններում, ամբողջ շրջաններ բնակեցված էին քոչվորներով։ Պետական կարգը տիպիկ ասիական բռնապետություն էր, որտեղ սուլթանը, նույն ինքը՝ խալիֆը, իր հպատակների կյանքի և ունեցվածքի լիիրավ տերն էր[3]։

Ի տարբերություն Ռուսաստանի, գրում էր Բ. Կնունյանցը, Թուրքիայի հասարակական կյանքում ամենալուրջ հակասություններն առաջանում էին ազգային հողի վրա, որի խորացմանը նպաստում էր սուլթանական ռեժիմը, մշտապես ատելություն և թշնամանք բորբոքելով կայսրության ազգերի միջև։ Դա թուլացնում էր պետությունը, նրան դեպի կործանում էր տանում, որի հետ հաշտվել չէին ուզում թուրք ազգի առավել կուլտուրական մասի տրամադրություններն արտահայտող և երիտթուրքերի

[1] Բոգդան Կնունյանց, Ընտիր երկեր, էջ 543—544։
[2] Նույն տեղը, էջ 541։
[3] Նույն տեղը, էջ 542։

գաղափարական ազդեցության տակ գտնվող բարձրագույն չինովնիկությունն ու սպայությունը։ Սրանք էին, որ կանգնած լինելով «ազգի միակ կազմակերպված ուժի՝ զորքի գլուխ,.. դարձան հեղաշրջման ակտիվ ուժ»։ Հեղաշրջում կատարելով, նրանք նպատակ ունեին «Թուրքիան ասիական բռնապետությունից վերածել եվրոպական քաղաքական ռեժիմ ունեցող երկրի, սահմանադրական երկրի, ուր զուտ քաղաքական բնույթի ռեֆորմները հեղաշրջման գլխավոր խնդիրն էին»։ Երիտթուրքական հեղափոխությունը «երկիրը հասցրեց զորքի գերիշխանությանը, քաղաքական այնպիսի կարգի, երբ ազգը ենթարկվում է զինվորի հրամանին։ Բնակչության լայն խավերը, գյուղացիները և քաղաքային մանր արհեստավորներն առայժմ բոլորովին մի կողմ են քաշված հեղաշրջումից և իրենց պահանջներով հանդես չեն գալիս»[1]։ Ժողովրդական մասսաներին ոչ ոք հաշվի չէր առնում, որովհետև հեղաշրջումը ոչ թե մասսան, այլ մի խումբ հեղափոխականներ էին կատարել։

Ի մի բերելով թուրքական հեղաշրջման մասին իր մտքերը, Բ. Կնունյանցը եզրակացնում էր. «Երիտասարդ թուրքերի հեղափոխությունը զարկ կտա օսմանյան ազգի զարթոնքին. սա է նրա պատմական հսկայական նշանակությունը, բայց այդ հեղափոխությունն ինքնին դեռ բնավ չի նշանակում անցում արևվելյան բռնապետությունից դեպի եվրոպական պառլամենտարիզմ»[2]։

Երիտթուրքերի հեղափոխությանը նման գնահատական էր տալիս նաև ապագա անձնազոհ բոլշևիկ Արսեն Ամիրյանը։ Իր հոդվածներից մեկում, որն անտիպ է և պահպանվում է արխիվում, նա գրում էր, որ հակահեղափոխական բոլոր ուժերը ողջունում են այդ հեղափոխությունը, քանի որ «Թուրք բուրժուազիան ոչ մի վախ չունի պրոլետարիատից, որը ներկայացնում է, գոնե առայժմ, մի արհամարհելի ուժ։ Ինչ վերաբերում է գյուղացիությանը, նա թեև բազմամիլիոն, բայց գտնվում է այնպիսի անպատշաճ պայմանների մեջ, որ անկարող է ինքնուրույն դեր կատարելու»[3]։ Ա. Ամիրյանը հիմնականում թուրք գյուղացիության դիրքորոշմամբ էր բնութագրում երիտթուրքական հեղափոխու-

[1] Բոգդան Կնունյանց, Ընտիր երկեր, էջ 542։
[2] Նույն տեղը, էջ 544։
[3] ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4021, ց. 1, գ. 18, թթ. 2—3։

թյունը։ «Իսկ այն նահապետական դժբախտ սոցիալ-տնտեսական պայմանները,— գրում էր նա,— որոնց մեջ գտնվում է թուրք գյուղացին, դարձնում է նրան մի անօգնական խեղճ արարած, զուրկ միանգամայն փոքր ի շատե գիտակցական կռիվ մղելու ընդունակությունից։ Ճիշտ է, հարստահարությունը և հալածանքը տիրող դասակարգի կողմից համբերատար թուրք գյուղացիությանը երբեմն հասցնում են վրդովմունքի աստիճանի, բայց այդ վրդովմունքը նա միշտ մղել է ամենաթույլ դիմադրության ուղղությամբ։ Անկարող լինելով գիտակցել իր դժբախտության իսկական պատճառները կամ ուժ չունենալով դիմադրել ուժեղ թշնամուն՝ տիրող դասակարգին, թուրք գյուղացիությունն իր կատաղությունը միշտ թափել է ստրուկ քրիստոնյա ազգերի վրա, որոնց վերաբերմամբ նա վայելել է տիրող ազգության արտոնությունները։ Այսպիսով, թուրք գյուղացիությունը ոչ միայն ոչ մի հեղափոխական դեր չկատարեց, այլև գործիք հանդիսացավ կուլտուրապես ավելի բարձր ազգերին սուլթանական բռնապետության ձեռքին պահելու համար»[1]։

Օգտվելով նոր ռեժիմի անկայունությունից և անհետևողականությունից, սուլթանական ռեակցիան մոբիլիզացրեց իր ուժերը և 1909 թվականի ապրիլի 13-ին հակահարված տվեց երիտթուրքերին՝ նրանց քշելով պառլամենտից և կառավարությունից։ Եվ ահա երկրորդ անգամ երիտթուրքերը ստիպված էին պայքարել իշխանության համար։ Աբդուլ Համիդի դեմ այս անգամ դարձյալ հանդես եկավ Եվրոպական Թուրքիան՝ Սալոնիկ կենտրոնով։ Երիտթուրքերին միացան մակեդոնական ազգային-ազատագրական ջոկատները[2]։ Նոր ոյա համառ կռիվներից հետո, 1909 թվականի ապրիլի 24-ին, սուլթանը նորից պարտություն կրեց և ապրիլի 27-ին գահընկեց արվեց։ Այս անգամ էլ երիտթուրքերը վերջ չտվին նրա կյանքին և բավարարվեցին նրանով, որ նրան մայրաքաղաքից հեռացրին Սալոնիկ[3]։ Նորից վերականգնվեց երիտթուրքերի տիրապետությունը։ Նոր սուլթան հռչակվեց արդեն ծեր, թուլակազմ ու անգործունյա գահաժառանգ Ռեշադը՝ Աբդուլ Համիդի եղբայրը՝ Մեհմեդ V անվամբ։

[1] ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4021, ց. 1, գ. 18, թթ. 5—6։

[2] Տե՛ս «История македонского народа», էջ 205:

[3] Բալկանյան պատերազմի ժամանակ, 1912 թ., երիտթուրքերը Համիդին բերեցին Պոլիս, որտեղ և արյունարբու սուլթանը մահացավ բնական մահով, 1918 թվականին։

Սուլթան Համիդի գահընկեցությունից անմիջապես հետո, օսմանյան խորհրդարանի նախագահ ընտրված իթթիհադի պարագլուխ Ահմեդ Ռիզան շտապեց հայտարարել, թե «մենք արյան մեջ կխեղդենք անջատողական ամեն մի շարժում»։ Թուրք պաշտոնեությունը ապասում էր հարմար առիթի։

1909 թվականի ապրիլյան քաղաքական իրադարձությունները զուգորդվեցին հայ ժողովրդի համար մի նոր ծանր աղետի հետ։ Երիտթուրքերը և սուլթանի կողմնակիցները, որոնք ատամները կրճտացնում էին հայերի վրա, նրանց «մի լավ դաս տալու» հարցում տարաձայնություն չունեին։ Այդ նպատակով մշակված ծրագրի համաձայն նրանք հերթական նախճիրը գործեցին։ Այս անգամ նոր խժդժությունների ասպարեզ դարձան Կիլիկիայի Ադանա քաղաքը և շրջակա հայկական գյուղերը։ Թուրք կանոնավոր զորքը և շովինիստական մոլուցքից կուրացած ապադասակարգայնացված խուժանը 1909 թվականի ապրիլին այս վայրերում կոտորեցին 30 հազար հայի։ Միաժամանակ հրոճարակ դարձավ 300 ագարակ, հափշտակվեց ավելի քան 10 հազար գլուխ անասուն։ Նյութական ընդհանուր վնասը կազմեց ավելի քան 80 միլիոն դոլար[1]։ Այդ ամենի համար ոչ մի թուրք պաշտոնյա պատասխանատվության չկանչվեց։ Իբրև ջարդի մեղավորներ երիտթուրքերը մատնացույց էին անում համիդականներին, բայց իրականում իրենք էին ջարդը կազմակերպել և մասնակցել հայերի նոր կոտորածին։ Երիտթուրքական կառավարությունը հարցը փակեց, մեղքը բարդելով Աբդուլ Համիդի վրա։ Ավելին, շատ չանցած ջարդարարների հասցեին անսքող կերպով գովեստի խոսքեր ասվեցին, իսկ Ադանայի նահանգապետը կառավարական պարգև ստացավ։

Ադանայի արյունոտ ջարդը ցույց տվեց, որ ազգային հարցում երիտթուրքական կառավարությունը լիովին համախոհ է համիդյան ռեժիմին, և ըստ էության ոչինչ չի փոխվել, որ երիտթուրքերը անուղղելի ազգայնամոլներ են, հայատյաց և դավադիր, գառան մորթով հին գայլեր։ Այդ կոտորածների ժամանակ և հետո օսմանյան սահմանադրությունը մնաց օդից կախված։ «Օսմանիզմը» վերջնականապես վերածվեց թունոտ շովինիզմի։ Պարզ դարձավ, որ երիտթուրքերի ռեժիմն ավելի մեծ աղետներ է բերելու հայ ժողովրդի գլխին։

[1] Տե՛ս Հայկազն Գ. Ղազարեան, Ցեղասպան թուրքը, էջ 173։

Երկրում շովինիզմի լայն տարածումը, հատկապես հայկական ջարդերի նոր ալիքի բարձրացումը, հետևանք էր նաև այն բանի, որ վերահաս համաշխարհային պատերազմին նախորդող տարիներին շովինիստական մոլուցքը լիովին սանձազերծվել էր Անգլիայում, Գերմանիայում, ցարական Ռուսաստանում և կապիտալիստական մյուս երկրներում։ Թուրք օսմանների արյունոտ պատմության օրինաչափ շարունակությունը պետք է լիներ շովինիստական այդ մոլուցքի պայմաններում անլուր խժդժությունների նոր ալիքի բարձրացումը, որն իր հետ բերելու էր նոր ողբերգություններ։

Թվում էր, թե գոնե Ադանայի դեպքերից հետո դաշնակցություն կուսակցությունը վերջապես կսթափվի, ուշքի կգա և լիովին իր կապերը կխզի երիտթուրքերից։ Դժբախտաբար այդ բանը տեղի չունեցավ, չնայած շարքային շատ դաշնակցականներ իրենց ղեկավարների առջև համառորեն դնում էին իթթիհադական կառավարող կուսակցության հետ կապերը խզելու պահանջը։ Ջունկնդրելով սթափ ձայներին, դաշնակցության պարագլուխները շարունակում էին բարեկամություն անել երիտթուրքերի հետ։

1909 թվականի սեպտեմբերին դաշնակցություն կուսակցության 5-րդ համագումարը որոշում ընդունեց շարունակել սերտ հակագործակցությունը իթթիհադի հետ։ Համագումարից շատ չանցած իթթիհադի և դաշնակցության ղեկավարները մի փաստաթուղթ ստորագրեցին, որը լույս տեսավ «Դրոշակ» թերթում՝ «Համերաշխություն իթթիհատի և դաշնակցութեան միջև» խորագրով։ Այդ փաստաթղթի 3-րդ կետում հանդիսավորապես ասված էր. «Օսմանեան նվիրական հայրենիքը անջատումն և բաժանումն զերծ պահելը՝ երկու կազմակերպութեանց միացած գործունեութեան նպատակակետը ըլլալով, անոնք (իթթիհադը և դաշնակցությունը։— Հ. Ս.) պիտի աշխատին գործնականապես ցրել հանրային կարծիքին մեջ բռնակալ ռեժիմեն ժառանգ մնացած այն սուտ զրույցները, թե հայերը անկախութեան կը ձգտին»[1]։

Դաշնակցությունը սերտորեն գործակցում էր իթթիհադի հետ, նրա պատգամավորները թուրքական պառլամենտում պաշտպանում էին կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը։

Դաշնակցական մամուլը, մտավորական ուժերը, գործիչները լայնորեն պրոպագանդում և լուսաբանում էին իրենց կուսակցության V համագումարի որոշումները, իթթիհադի հետ համագործակցության մասին դաշնակ ղեկավարության ստորագրած փաստաթուղթը։ Ահա մի բնորոշ ու արտառոց օրինակ։

1910 թվականին Պոլսում լույս տեսավ դաշնակցական հայտնի գործիչներից մեկի՝ Ատոմի «Մեր հավատամքը» գրքույկը, որտեղ նա հայ ընթերցողներին հրամցնում էր հետևյալ «գոհարները»։ «Այսօր,— գրում էր նա,— Թուրքիոյ մեջ օսմանեան սահմանադրությունը կը պահպանուի բանակին ուժով. վաղը անպայման պիտի պահպանուի օսմանեան միությունը կազմող աշխատավոր, սահմանադրական ժողովուրդներու կազմակերպուած ուժով»[1]։ «Ազգերու համագործակցութեան ստանձնելիք դերն է, որ պիտի փրկե ընդհանուր հայրենիքը, պիտի հաստատե ու ամրապնդե ռամկավար սահմանադրությունը»[2]։

Եվ այս ամենը դաշնակ գործիչը գրում էր Կիլիկիայի աղետից շատ չանցած։ Ավելին, հեղինակը նախատում էր այն հայ սթափ գործիչներին, որոնք Ադանայի կոտորածներից հետո հայությանը զգուշացնում էին, թե իթթիհադականները նոր աղետներ են նախապատրաստում հայ ժողովրդի համար։ Այդպիսիներին նա մեղադրում էր... «ազգադավության» մեջ։ «Թերահավատները», գրում էր նա, «Կիլիկեան աղետը և անոր հետևանք միջադեպերը շահագործեցին սրտացավութեան, ազգասիրութեան դիմակի տակ, ամենաճարպիկ ազգադավութեամբ»[3]։ «Հակահարված տալով» այն «հոռետեսներին», որոնք ասում էին, թե ուր որ է հայ ժողովրդի գլխով մի նոր սև խորշակ է անցնելու, Ատոմը գրում էր. «Կարող ենք ապահով ըլլալ, որ այլևս ամենածայրահեղ դժբախտութեան պարագային, գեթ միայնակ կոտորուելու չենք։ Կոտորելու եկող հորդաներուն դեմ թուրք և հայ, իթթիհադական ու դաշնակցական միասին կանգնած միասին պիտի դիմագրավեն վտանգը»[4]։

Այսպես էր դաշնակցությունը օրոր ասում ժողովրդին՝ երիտթուրքական գազանի բացված երախի առջև։

---

[1] «Դրոշակ», 10—11 (հոկտեմբեր-նոյեմբեր), 1909, էջ 152։

[1] Ատոմ, Մեր հավատամքը, Պոլիս, 1910, էջ 16։
[2] Նույն տեղը, էջ 88։
[3] Նույն տեղը, էջ 16։
[4] Նույն տեղը, էջ 106։

ԹՈՒՐՔԻԶՄ

Դեպքերը զարգանում էին արագ։ Գնալով ակնհայտ էր դառնում, որ «օսմանյան ազգի» գաղափարն անիրագործելի է։ Երիտասարդ թուրքերի կիսատ-պռատ հեղափոխությունից հետո բոլորի համար պարզ դարձավ, որ կայսրության այլացեղ ու այլադավան ժողովուրդներին միավորելու նպատակին ուղղված երիտթուրքերի ձգտումն անիրագործելի է։

Չնայած մինչև 1908 թվականի հեղափոխությունը և դրան հաջորդած մեկ-երկու տարիներին էլ օսմանիզմը դեռևս շարունակում էր մնալ երիտթուրքերի հիմնական գաղափարական կոնցեպցիան, սակայն փոփոխված նոր պայմաններում այն այլևս անկարող էր բավարարություն տալու թուրքական բուրժուազիայի քաղաքական ձգտումներին։ Օսմանիզմի քարոզն այլևս չէր կարող հրապուրել կայսրության ոչ թուրք ժողովուրդներին, որոնք շարունակում էին պայքարը թուրքական բռնապետությունից ազատագրվելու և անկախ ազգային պետություններ ստեղծելու համար։

Երիտթուրքերի գաղափարական-տեսական զինանոցում, ինչպես մենք տեսանք, տեղ էին գտել ոչ միայն օսմանիզմի գաղափարները, այլև պանիսլամիզմի և այլ գաղափարատեսական կոնցեպցիաներ, որոնք հիմնականում ժառանգել էին թուրքական սահմանադրականների առաջին սերնդից։

Բայց երիտթուրքերը չբավարարվեցին միայն օսմանների գաղափարների վերակենդանացմամբ և դրանք իրենց քաղաքական պահանջներին հարմարեցնելով։ Ավելի առաջ գնալով, նրանք հանդես եկան սեփական գաղափարներով, որոնք մինչ այդ, իբրև մշակված տեսական կոնցեպցիաներ, բացակայում էին թուրք

ազգային բուրժուազիայի տեսական զինանոցում։ Դրանք թուրքիզմի և պանթուրքիզմի գաղափարական կոնցեպցիաներն էին՝ երիտթուրքերի սեփական տեսական ստեղծագործությունները։

Հարկ է նշել, որ «օսմանյան ազգի» գաղափարի ճշմարտացիությունը կասկածի տակ էր առնվել դեռ երիտթուրքերի հեղափոխությունից մի քանի տարի առաջ։ Արդեն դարասկզբին նրանց շրջանում ձայներ էին լսվում, թե օսմանիզմի գաղափարը հնացել է և այն չի կարող նպաստել կայսրության միասնության պահպանմանը։ Միաժամանակ երիտթուրքերը սկսեցին փնտրել կայսրության միասնության պահպանման ուրիշ ուղիներ։ Դրանցից մեկը թուրքիզմի (թուրքճյուլյուք) ուղին էր՝ Օսմանյան կայսրությունը ազգային տեսակետից «միատարր» դարձնելու յուրօրինակ ցեղապաշտական մի գաղափար։

Թուրքիզմի ծագման հենց սկզբից նրա նկատմամբ երիտթուրքերի շարքերում բուռն հետաքրքրություն առաջացավ։ Շատ չանցած այդ գաղափարը դարձավ թուրք բուրժուազիայի սաղմնավորվող ազգայնամոլության հիմնական տեսական արտահայտությունը։

Թուրքիզմի ձևավորման գլխավոր կենտրոնը Սալոնիկը դարձավ։ Արդեն 1909 թվականի կեսերից այստեղ այդ գաղափարը վերածվեց քաղաքական շարժման, որի գլուխ կանգնեցին զբաղավորապես մակեդոնական թուրքերը։

Սալոնիկում էր հիմնավորվել նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավար մարմնի գործուն անդամ, բանաստեղծ Մեհմետ Զիա բեյը, նույն ինքը՝ թուրքացած քուրդ[1] Զիա Գեոք Ալփը (Գեոքալփ)։ Նա այստեղ սկսեց խմբագրել «Գենճ կալեմլեր» («Genc Kalemler»— «Երիտասարդ գրիչներ») թերթը, որը շատ շուտով թուրքիզմի գլխավոր ձայնափողը դարձավ։ Ինքը՝ Գեոքալփը դարձավ թուրքիզմի ամենախոշոր գաղափարախոսը Օսմանյան կայսրությունում։

Սալոնիկից հետո թուրքիզմի երկրորդ գլխավոր կենտրոնը Պոլիսն էր։ Այստեղ թուրքիզմի առավել ակտիվ գործիչները հիմնականում Ռուսաստանից Թուրքիա եկած թաթար մտավորականներն էին[2], որոնց մեջ ամենահայտնի դեմքը Յուսուֆ Աքչուրա օղլին էր՝ Կազանից։

[1] Որոշ աղբյուրներում նշված է, թե Գեոքալփը թուրքացած հրեա էր։

[2] Տե՛ս **В. В. Готлиб,** Тайная дипломатия во время первой мировой войны, изд-во Социально-экономической литературы, М., 1960, էջ 40։

Այսպիսով, կայսրության երկու քաղաքներում՝ Սալոնիկում և Պոլսում էին հավաքվում բոլոր նրանք, ովքեր Թուրքերի ապագան տեսնում էին Թուրքիզմի հաղթանակի մեջ։ Այնպես ստացվեց, որ Թուրքիզմի երկու խոշորագույն գաղափարախոսներն ազգությամբ Թուրք չէին։

1909 թվականի վերջերին ԻԹԹիհադի կենտրոնական մարմինը Սալոնիկից փոխադրվեց և վերջնականապես հաստատվեց Պոլսում, ուր տեղափոխվեց նաև Զիա Գեոքալփը։ Բալկանյան պատերազմի նախօրյակին նա այստեղ սկսեց սերտորեն համագործակցել Յուսուֆ Աքչուրայի հետ։ Նրանք կայսրության ողջ տարածքում տենդագին քարոզչություն ծավալեցին Թուրքիզմի գաղափարների վերջնական հաստատման նպատակով։

Թուրքիզմի հողի վրա կյանքի կոչվեցին բազմաթիվ պարբերականներ, որոնք գլխավորապես լույս էին տեսնում Սալոնիկում, Պոլսում, Իզմիրում։ Թուրքիզմի գաղափարները Սալոնիկում ակտիվորեն պրոպագանդում էին վերևում նշված «Դենճ կալեմլեր» թերթը, Պոլսում՝ «Թյուրք յուրտու» կիսամյա հանդեսը, «Թյուրք տերնեկի» պարբերաթերթը, «Պիլկի» և «Սիլահ» պարբերականները, «Յենի մեճմուասը» և «Թյուրք գատընը» շաբաթաթերթերը, Իզմիրում՝ «Քեոյլճու» թերթը, Կոնիայում՝ «Պապալըգ» և «Թյուրք սեոզյու» օրաթերթերը։ Այդ պարբերականները վաճառվում էին շատ էժան գներով, իսկ դրանցում տպագրված հոդվածներն ունեին պարզ ոճ ու հասարակ լեզու, որպեսզի մատչելի լինեին Թուրք հասարակության ամենալայն խավերին։ Հիշյալ թերթերին ու հանդեսներին մեծ ակտիվությամբ աշխատակցում էին Խալիտ Զիան, Աքա Գյունդյուզը, Ջելալ Սահիրը, Իսմայիլ Հոգը, Համդուլլահ Սուբհին, Ահմետ Ռեֆիքը, կին գրող Խալիդե Էդիպը և ուրիշներ։

Իսկ ո՞րն է Թուրքիզմի գլխավոր միտքը, ի՞նչ էին քարոզում Զիան, Աքչուրան և մյուսները։

Թուրքիզմի գաղափարների ելակետը դարձյալ Թուրքական կայսրության պահպանման մտահոգությունն էր։ Թուրքականներն այսպես էին խորհում. ավանդական օսմանիզմի և նոր օսմանիզմի տեսակետով կայսրության ամբողջականության պահպանումը, անկախ ազգությունից ու կրոնից, բոլոր օսմանցիների պարտքը և գործն էր։ Բայց բոլոր օսմանցիների համար չէ, որ հարազատ եղավ օսմանիզմի գաղափարը։ Այն խորթ էր և այժմ էլ խորթ է ամենից առաջ քրիստոնյաներին, որոնք երազում էին և երազում են փլուզված տեսնել կայսրությունը և անկախություն ստանալ։ Քրիստոնյաների մի մասը, ինչպես օրինակ, բուլղարները, կարողացան իրականացնել իրենց երազը։ Դրանից հետո էր, որ հրապարակ եկավ իսլամիզմի աբդուլհամիդյան տարբերակը, որը կայսրության սահմանների անձեռնմխելիության պահպանման երաշխիքը տեսավ միայն ու միայն երկրի բոլոր մուսուլմանների միասնության մեջ՝ ընդդեմ քրիստոնյաների։ Բայց դա էլ չփոխեց իրերի դրությունը, հնարավոր չեղավ ստեղծել մուսուլմանների միասնություն։ Կայսրության Եվրոպական մասում ըմբոստանում էին մուսուլման ալբանացիները, արևելքում՝ դարձյալ մուսուլման արաբները, որոնք ձգտում էին անջատվել պետությունից։ Մյուս կողմից մեծ տերությունները ճնշում էին գործադրում Թուրքերին Եվրոպայից վերջնականապես դուրս քշելու համար, իսկ գնալով ուժեղացող այդ ճնշմանը դիմադրավելն ուժից վեր բան էր։

Եվ եթե ներկայումս կայսրությունը գահավեժ անկում է ապրում, եթե այն կանգնած է կորստյան և կործանման եզրին, խորհում էին Թուրքականները, ապա դա, որքան էլ ծանր է ասել, միանգամայն օրինաչափ է և բնական։ Այլացեղ ժողովուրդների կամ «օսմանյան եղբայրների» համերաշխության գաղափարն անբնական է, ուստի և՝ սնանկ։ Կրոնական համերաշխության քարոզն էլ սպասված արդյունքը չէր տալիս։ Ո՛չ օսմանիզմը, ո՛չ իսլամականությունն ընդունակ չէին պահպանելու կայսրության ամբողջականությունը։ Միմյանցից խիստ տարբեր հոգեբանություն և մշակույթ ունեցող այլացեղ ժողովուրդներով բնակեցված հսկա տարածքները կայսրության մեջ պահելը այլևս անհնարին էր, ավելին՝ անբնական։

Այդ ամենից հետևում է, ասում էին Թուրքականները, որ Թուրքերը մենակ են մնացել կայսրության մեջ և միայնակ կանգնած են գալիք փոթորիկներին դեմ հանդիման։ «Ի՞նչ պետք է անել, ուրեմն»,— այս էր օրվա հարցը, որն անհետաձգելիորեն պատասխան էր պահանջում։

Եվ Զիա Գեոքալփը, Յուսուֆ Աքչուրան, Թուրքիզմի մյուս գաղափարախոսները տվեցին հարցի պատասխանը։ Փրկության միայն մի հույս կա, ասում էին նրանք, դա Թրքությունն է։ Նախ՝ կառավարությունը պետք է հենվի բացառապես Թուրք տարրի վրա, երկրորդ, չպետք է ափսոսալ Եվրոպայի ըմբոստ տարածքների կորստյան համար, այլ պետք է ետ քաշվել ու հզորանալ

բնական սահմաններում, երրորդ, թուրքերի քաղաքական իղձերն իրականացնելու համար անհրաժեշտ է ամենից առաջ թուրքացնել Թուրքիան, և, վերջապես, չորրորդ, մերժելով «օսմանյան եղբայրների» անբնական միասնությունը, ստեղծել էթնիկական-ազգային միատարրություն և միասնություն բուն Թուրքիայում։ Դա նշանակում է, որ «բուն Թուրքիայի» բոլոր ժողովուրդները պետք է ամենաարագ կերպով ուծացվեն, կորցնեն լեզուն և ազգային բոլոր մյուս հատկանիշները, ձուլվեն թուրքերին, այսինքն՝ թուրքացվեն։ Դա, բնականաբար, նշանակում էր նաև, որ «բուն Թուրքիայում» իսլամից բացի այլ կրոնի համար տեղ չի լինելու։ Օրվա կարգախոս էր դառնալու «Եկեղեցիների զանգերի ատելի ղողանջը պետք է իսպառ վերացնել այս երկրից» պահանջը։

Թուրքիզմի քարոզիչներն իրենց ուսուցիչներից մեկն էին համարում այս աշխատության նախորդ գլուխներում արդեն հիշատակված մեծ վեզիր Ֆուադ փաշային, որը 1869 թվականին գրած և թուրք հետագա սերունդներին թողած իր կտակում առաջարկում էր՝ կայսրության այլազգիների կենտրոնախույս ձգտումները մարելու, ոչ թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները բացառելու նպատակով արմատականորեն լուծել ազգային հարցը, այսինքն՝ բոլոր այլազգիներին ձուլել թուրք ազգի մեջ և նրանց թուրքացնելու միջոցով կայսրության ներսում ստեղծել էթնիկական-կենսաբանական միատարրություն։ «Ներքին գործերի մարզում մեր բոլոր ջանքերը,—գրում էր նա,— պետք է ձգտեն դեպի մի նպատակ միայն, այն է՝ մեր ցեղերի համաձուլումը։ Առանց այս համաձուլման մեր կայսրության միությունը ինձ անկարելի է թվում»[1]։

Կայսրության ոչ թուրք ժողովուրդների բռնի ձուլման և թուրքացման միջոցով ամրացնել թուրքական պետությունը. այս էր Ֆուադ փաշայի պահանջը[2]։ Նրա այս տողերը բազմաթիվ անգամներ վերատպվում էին երիտթուրքական թերթերի էջերում։ Ֆուադ փաշայի կտակի և սուլթան Համիդի մեծ վեզիր Քյամիլ փաշայի՝ հայության մասին մարդատյաց խորհրդածությունների

[1] «Արօր», Ա. տարի, № 6, 1910, էջ 185։

[2] Տե՛ս О. Г. Инджикян, Буржуазия Османской империи, изд-во АН Арм. ССР, Ереван, 1977, էջ 43։

շուրջը հրապարակային դասախոսություններ ու զեկուցումներ էին կարդում թուրքիզմին համակրող պատմաբանները։

«Բուն Թուրքիայի» միջուկը թուրքականները համարում էին Անատոլիան, որին երկրի թուրքացման խնդրի առնչությամբ առանձնահատուկ դեր էր հատկացվում։ Անատոլիայի նկատմամբ թուրք բուրժուական ազգայնականների բուռն հետաքրքրությունը պատահական չէր։ Նրանք շեշտում էին, որ Թուրքիան բռնել է գերազանցապես ասիական պետություն դառնալու ճանապարհը, հետևապես գնալով բարձրանում է Անատոլիայի և արևելյան մյուս տիրույթների արժեքը։ Նրանք ականատես էին կայսրության գահավեժ անկմանը, ուստի նրանց գլուխներում ժամանակ առ ժամանակ առկայծում էր մոտակա գալիքի մռայլ պատկերը։ Հեռանկարում Եվրոպայից դուրս մղվելու նրանց մտահոգությունն ավելորդ չէր։ Անհրաժեշտ էր մտածել ազգային միատարր կազմով «վաթանի» և նրա «ազգային սահմանների» մասին։ Թուրքականները Անատոլիան հռչակեցին թուրքերի «սուրբ հայրենիք», որի հետ էլ կապեցին ապագայի ողջ հույսերը։ Զիա Գեոքալփը խոր համոզմունքով գրում էր, թե Անատոլիայի «կոշտ» գյուղացու «բնական և բնազդական թուրքության վրա» իրենք պատվաստելու են «գիտակից թուրքություն», այսինքն՝ լուծելու են արդի խնդիրների խնդիրը։

Անատոլիայի թեման սկզբնապես լայնորեն քննարկվում էր Կահիրեում լույս տեսնող «Անադոլու» և «Թուրք» թերթերի էջերում, իսկ հետո նաև՝ երիտթուրքական մամուլի մյուս օրգաններում։

«Անատոլիա» հասկացության մեջ թուրքականները մտցրին ոչ միայն Անատոլիայի աշխարհագրական տարածքը, այլև ողջ Արևմտյան Հայաստանը, այն անվանելով արևելյան Անատոլիա։ Դա նշանակում էր, որ այդ տարածքում ապրելու իրավունք էին ունենալու միայն ու միայն նրանք, ովքեր խոսելու էին թուրքերեն և դավանելու էին իսլամը։

Հարկ է հիշեցնել, որ աբդուլհամիդյան մղձավանջի տարիներին հռչակված նորագույն իսլամականությունը կայսրության ամբողջ տարածքի վրա որևէ ժողովրդի համար այնպիսի դժոխային հետևանքներ չունեցավ, ինչպիսին արևմտահայության համար, հասցնելով 90-ական թվականների զանգվածային արյունալի ջարդերին։ Այժմ էլ հրապարակ էր գալիս թուրք ազգային բուրժուազիայի ցեղապաշտական ուսմունքը՝ թուրքիզմը, որը

կայսրության ժողովուրդների թվում ամենամեծ արհավիրքները բերելու էր դարձյալ հայության գլխին։ Իր երկրի աշխարհագրական դիրքի պատճառով և պատմական բախտի բերումով հայությունը, շրջապատված մուսուլմանական ծովով, կանգնում էր մերկացված սրի առջև։

Զիա Գեոքալփը, Յուսուֆ Աքչուրան և նրանց շուրջը համախմբված «Թուրքճիությունն» քարոզող մտավորականությունը «բուն Թուրքիայում» նպատակ ունեին լուծելու երկու հիմնական, արմատական խնդիր։ Առաջին՝ թուրք ժողովրդի կյանքը ազատագրել «օտարամուտ և սպանիչ տարրերից», այն մաքրել այլազան ազդեցություններից, ազգային դարձնել թուրքական լեզուն, գրականությունը, կրոնը, վերակենդանացնել թուրքական հին մշակույթն ու ավանդույթները, ժողովրդականացնել նախաօսմանյան թուրք պատմությունը։ Երկրորդ, թուրք ազգաբնակչության ցեղային բնազդները լիովին «ազատագրելու», այսինքն՝ սանձազերծելու, թուրք ժողովրդի ազգային ինքնագիտակցությունն արթնացնելու միջոցներով նրա մեջ խորացնել ազգային հպարտության և բացառիկության զգացումը։ Իր հերթին դա հետապնդում էր գլխավոր նպատակ՝ ազգային-էթնիկական, լեզվական-կուլտուրական առումով թրքությունը դարձնել կուռ ամբողջություն, այնպիսին, որն ի վիճակի լիներ իր մեջ ձուլելու այլ մշակույթներ և լեզուներ։

Թուրքականները գտնում էին, որ անհնարին է պատկերացնել միասնական թուրք ազգ առանց միասնական թուրքական լեզվի։ Ուստի, ասում էր Գեոքալփը, անհրաժեշտ է օսմաններենը վերջնականապես ձուլել թուրքերենին, միաժամանակ վերջինիս վերադարձնել իր պարզությունը՝ այն հետ տանելով մինչև թուրանական թափառական ցեղերի բարբառները։ Թուրքիզմ քարոզողները «նոր օսմանների» օրինակով լայն ճակատով պայքար ծավալեցին թուրք գրական լեզուն ժողովրդական լեզվին մոտեցնելու, լուսավորության միջոցով թուրքերի ազգային ինքնագիտակցությունը զարգացնելու համար։

Պատմագրությունը և գրականությունը երեսով շուռ եկան դեպի թուրքերի անցյալը։ Հատկապես թուրքական պոեզիայում կենտրոնական տեղ գրավեցին պատերազմների, «անհավատների» դեմ կռիվների, ավազակային խմբերի «քաջագործությունների», երկրից երկիր թափառող թուրք ասպետների «խիզախությունների» մասին ասքերն ու լեգենդները։

Թուրքիզմ քարոզողները լայնորեն օգտագործում էին նաև ժողովրդական մասսաների վրա ներգործելու ուրիշ միջոցներ։ Կարևոր նշանակություն էր տրվում մասսայական թատրոններին, որոնց ներկայացումները ձրի հաճախում էին թուրք հասարակության բոլոր խավերը։ Ամենուրեք լայն մասսայականություն էր վայելում օսմանյան ժողովրդական «կարա-գյոզ» թատրոնը, որի խաղացանկը ուղղված էր թուրքերի անցյալի փառաբանմանը[1]։

Այս ամենի առնչությամբ անհրաժեշտ էր դառնում ձևակերպել «ազգ» հասկացությունը, բնորոշել ազգը։ Յուսուֆ Աքչուրան և Զիա Գեոքալփը թուրքականության ըմբռնումով տվեցին ընդհանրապես ազգության գաղափարի, մասնավորապես թուրք ազգի սահմանումը։ Նշելով, թե ազգային գաղափարը զգացմունք է, Գեոքալփը ազգը դիտում էր իբրև անհատների խումբ, որն ունի ընդհանուր լեզու, կրոն, բարոյականություն, գեղագիտություն։ Նա կայսրության ոչ թուրք ժողովուրդներին և էթնիկական խմբերին ուրույն ազգեր չէր համարում, գտնելով, որ, չունենալով ազգային և կրոնական իրավունքներ, թուրքանալու ճանապարհով նրանք պետք է ասպարեզից վերանան։ Օսմանյան հայրենիքի իսկական քաղաքացիներ էին հռչակվում միայն թուրքերը, ինչպես նաև այն այլազգիները, որոնք հրաժարվում էին իրենց կրոնից, մշակույթից, ազգությունից ու լեզվից, ձուլվում թուրքերին, դառնում թուրք։ Թուրքճիության այս գաղափարի հիման վրա էլ առաջ քաշվեց ու գործողության մեջ դրվեց «Թուրքիան՝ թուրքերի համար» մարդատյաց շովինիստական գաղափարը։ Մեկնակետը և սկզբունքը պարզ էր. ով մեզ հետ չէ, մեր դեմ է, մեր թշնամին։ Իռացիոնալիզմի և միստիցիզմի անթափանց խավարով էր պարուրված «Թուրքճյուլյուքի» գեոքալփական կոնցեպցիան։

1909—1910 թվականներն այն տարիներն էին, երբ թուրքիզմը լայնորեն թափանցեց իթթիհադից ներս։ Աստիճանաբար լքելով օսմանիզմը, երիտթուրքերը իբրև հավատո հանգանակ էին որդեգրում թուրքճիությունը՝ թուրքիզմը։

Ազգայնականության թանձր մթնոլորտում թուրքականների ցանած սերմերն առատ պտուղներ էին տալիս. ամենուրեք օսման-

[1] Տե՛ս И. И. Голобородько (И. Южанин), Старая и новая Турция, էջ 111։

ցիությունը լքում և մեկը մյուսի հետևից դեպի թուրքիզմ էին գալիս թուրք մտավորականության նորանոր ներկայացուցիչներ, քաղաքական ու պետական գործիչներ։ Օսմանցիության գաղափարն արագորեն թուրքության գաղափարի էր փոխակերպվում ո՛չ միայն թուրք վերնախավի, այլև հասարակ ժողովրդի առանձին շերտերում, իսկ կրոնական մոլեռանդությունը տեղի էր տալիս ցեղային մոլեռանդության։ «Ես թուրք եմ» գիտակցությունն իբրև հպարտության կոչ էր հնչում բնակչության բոլոր խավերի համար։ Թուրքականությունը դառնում էր նաև ամբոխի սեփականություն։

Նորից այլազգիների նկատմամբ ատելության կենտրոնում հայերն էին։

1910 թվականի հոկտեմբերի 13-ին Սալոնիկում իր աշխատանքները սկսած «ԻԹԹիհադ վե թերաքգ» կուսակցության համագումարը, որը տևեց 13 օր, քննարկելով կայսրության նախ ազգային հարցը, այնուհետև առանձին՝ հայկական հարցը, պաշտոնապես ընդունեց հայերին ազգովին ջարդելու մասին որոշում, այն ձևակերպելով այսպես. «Պատեհ առիթով արմատապես բնաջնջել հայկական բարձրավանդակի հայությանը»[1]։

Հայկական հարցի քննարկման ժամանակ համագումարում հանդես եկավ ԻԹԹիհադի ղեկավարներից բժ. Նազիմը, որը տեսականորեն հիմնավորեց հայ ժողովրդի ոչնչացման անխուսափելիությունը։ Նշելով, որ կայսրության «անկումն այնքան է առաջացել», որ «մեր նախկին հպատակ բոլոր քրիստոնյա ողորմելի ժողովուրդները՝ ռումինները, սերբերը, հույները, բուլղարները, արդեն անջատված են» և որ «մեր սահմանները ցամաքամասի վրա վերստին ընդարձակելու հույսերը ամբողջապես չքացել են», Նազիմը ասել է. «Պիտի հաշտվենք, ուզենք թե չուզենք, այդ կացութեան հետ, ընդունելով, որ դրանից հետո մեր հայրենիքը միայն ու միայն կարող է լինել Անադոլուն...»[2] Տալով հայությունը ոչնչացնելու տեսական հիմնավորումը, Նազիմը այնուհետև նշել է. «Այս պահին կարևորը մեզ համար գաղափարի ոչ թե տեսական վերլուծումները և հիմնավորումներն են կազմում, այլ նրա իրականացման գործնական միջոցների ճշտումը»[3]։

1911 թվականի հոկտեմբերին Սալոնիկում տեղի ունեցավ

[1] Ա. Ամուրեան, Հայ դատ, 1977, էջ 23։

[2] Նույն տեղը, էջ 24։

[3] Նույն տեղը, էջ 25։

ԻԹԹիհադ կուսակցության հերթական համագումարը։ Երիտթուրքերի այդ նշանավոր համաժողովը մշակեց ու վերջնական տեսքի բերեց թուրքիզմի «գործնական» հետևողական գիծը. կայսրության բոլոր հպատակների իսլամացումն ու թուրքացումը պաշտոնապես հռչակվեց իբրև պետական քաղաքականություն։

Այս տեսանկյունով էլ համագումարը մի շարք որոշումներ ընդունեց, այն է՝ երկրում արգելել ազատամիտ գաղափարների տարածումը. պետական բոլոր կարևոր պաշտոնները պետք է վարեն միայն թուրքերը. Թուրքիայում պետք է միայն թուրքերեն խոսեն. Թուրքիան պետք է ունենա լիակատար մահմեդական նկարագիր. մյուս բոլոր լեզուներն ու կրոնները պետք է ասպարեզից անհապաղ վերանան։

Թուրք ազգային բուրժուազիայի կողմից երկրի ներսում թուրքականության դրոշի բարձրացումը նրա քաղաքական գործունեության յուրատեսակ դրսևորումներից մեկն էր։ Իհարկե, վերջին հաշվով դա թելադրված էր թուրք ազգի ձևավորման բնապատմական օրինաչափ ընթացքով, որը, ինչպես հայտնի է, ընդհանրական է։ Ազգայնականության դրոշով հանդես եկող բոլոր երկրների բուրժուազիային հատուկ է ազգի ձևավորման ընթացքի արագացման, իր «ազգային» տերիտորիայի վրա միասնական ազգային պետություն ստեղծելու գաղափարը էթնիկական միատարրություն ստեղծելու գաղափարի հետ սերտորեն շաղկապելու, այդ երկու գաղափարների իրականացումը միմյանցով պայմանավորելու բուռն ձգտումը։ Մինչ այն ժամանակ, երբ բուրժուազիան փորձում է այդ խնդիրը լուծել խաղաղ միջոցներով, կապիտալիստական հարաբերություններին հատուկ տնտեսական-հասարակական կյանքի ինտերնացիոնալացման օրինաչափ ընթացքով ստեղծված նպաստավոր իրավիճակն օգտագործելու ճանապարհով, մինչ այդ ժամանակ բուրժուական նացիոնալիզմն իր վրա դրական լիցքեր է կրում։ Բայց երբ տիրող ազգի բուրժուազիային չի հաջողվում իր ազգի ձևավորման ընթացքին զուգահեռ, բաղմազգ երկրի սահմաններում հասնել էթնիկական միատարրության, ապա առանց վարանելու նա դեն է նետում լիբերալ գործողությունների զսպանակը և այլազգիների հանդեպ որդեգրում ձուլման դաժան քաղաքականություն, որը տարբեր երկրներում տարբեր ծավալներ և ձևեր է ընդունում։ Անկախ դրանից, ազգայնականությունը միշտ մնում է իբրև տիրող ազգային բուրժուազիայի հիմնական գաղափարախոսություն՝

շովինիզմի վայրենի, բարբարոսական դրսևորումներով հանդերձ, որը թուրքական ռազմաֆեոդալական և ասիական տիպի բուրժուական հարաբերությունների պայմաններում պետք է հանգեցներ արյունալի հաշվեհարդարների։

Թուրքիզմը՝ թուրքական բուրժուազիայի գաղափարաբանությունը, կոչված էր շեղելու թուրք աշխատավոր զանգվածների ուշադրությունը դասակարգային պայքարից և այն բևեռելու հպատակ քրիստոնյա ժողովուրդների դեմ մղվող պայքարի, նրանց նկատմամբ ազգային թշնամություն տածելու վրա։

Այլազգիների նկատմամբ որդեգրելով դաժան ասիմիլյացիայի քաղաքականություն, երիտթուրքերը շուտով ազգային հարցում գերազանցեցին սուլթան Համիդին։

Թուրքերենի տարածումը և այլազգիներին թուրքացնելու գործը հեշտացնելու նպատակով վայրագ հալածանք սկսվեց կայսրության մյուս ժողովուրդների լեզուների դեմ։ Առևտրական գրասենյակների, խանութների, հյուրանոցների և հասարակական այլ հաստատությունների վրայից հանվում էին այլ լեզուներով գրված ցուցանակները։ Քաղաքային իշխանությունները մեկ-երկու օրում ջարդեցին Ստամբուլի փողոցների ֆրանսերեն ցուցանակները և դրանք փոխարինեցին թուրքերեն ցուցանակներով։ Ամենուրեք լսվում էր «Թուրքե՛ եազմալը»՝ «Թուրքերեն պետք է գրվի» սպառնալից պահանջը։ Ստամբուլի, Իզմիրի և այլ վայրերի հայ առևտրականները, ահաբեկված այդ սպառնալիքներից, իրենց խանութների ճակատներից հանեցին բոլոր հայատառ ցուցանակները։

Կայսրության մեջ ամենուրեք սարսափի մթնոլորտ էր տիրում։ Քրիստոնյաները, արաբները և հրեաները ամենօրյա սպառնալիքների տարափի տակ, նվաստացած ու ահաբեկված սպասում էին թուրքերի մասսայական նոր խժդժություններին։

Եվ չնայած այդ ամենին, նրանք, ամենից առաջ հայերն ու հույները, շարունակում էին իրենց ամենօրյա զբաղմունքները, դժոխային կացության պայմաններում ստեղծում և ստեղծագործում, գերմարդկային ճիգեր թափում սեփական ազգային կյանքով ապրելու և տոկալու համար։

Թուրքականների համար շուտով պարզ դարձավ, որ թուրքական էթնոսը չի կարող խաղաղ, կուլտուրական ձուլման ճանապարհով ձուլել մահմեդական այլազգի արաբներին, առավել ևս հպատակ քրիստոնյաներին, այդ թվում հայերին։ «Գերազանցվելով զարգացման համեմատաբար շատ ցածր աստիճանի վրա,— գրում է սովետական թուրքագետ Ա. Դ. Նովիչևը,— թուրքերն ի վիճակի չէին ձուլելու բազմաթիվ ժողովուրդների, որոնց իրենք հպատակեցրել էին սրով»[1]։ Ակնհայտ էր դառնում նաև, որ այդ նպատակին իրենք չեն կարողանալու հասնել նույնիսկ ամենադաժան, բայց մասնակի հաշվեհարդարներով[2]։ Այդ մասին դեռ անցյալ դարի կեսերին գրել է նաև ֆրանսիացի փիլիսոփա Պիեռ Ժոզեֆ Պրուդոնը[3]։

Երիտթուրքերի թուրքիզմը, որը ենթադրում էր թուրքերի մեջ ձուլել այլ ժողովուրդների, իրականանալ չէր կարող նաև այն պատճառով, որ կայսրության մեջ թուրքերը մեծամասնություն չէին կազմում։ Թուրքիայում ապրող բոլոր ժողովուրդները և ցեղերը, սկսած թուրքերից, փոքրամասնություններ էին։ Արևմտյան շրջաններում մեծամասնություն էին կազմում թուրքերը, փոքրամասնություն՝ հայերը, հույները, քրդերը և այլն, արևելյան շրջաններում մեծամասնություն էին կազմում հայերը, փոքրամասնություն՝ թուրքերը, քրդերը և այլ ժողովուրդներ, հարավարևելյան շրջաններում մեծամասնություն էին կազմում քրդերը, փոքրամասնություն՝ թուրքերը, հայերը և ասորիները։ Հիրավի, «Օսմանյան կայսրությունը չի ունեցել տնտեսական և էթնիկական միասնություն,— կարդում ենք սովետական հեղինակավոր մի հրատարակության մեջ։— Թուրք ազգությունն ուրիշ ազգությունների համեմատ կազմավորվում էր շատ ավելի դանդաղ և կայսրության մեջ փոքրամասնություն էր կազմում։ Չնայած թուրք ֆեոդալների ձուլման դաժան քաղաքականությանը, թուրք բնակչության քիչ թե շատ հոծ խմբեր գոյացան միայն Անատոլիայում և Արևելյան Թրակիայի Ստամբուլին հարող մասում։ Մնացած շրջաններում թուրքերն այնպես էլ չկարողացան ձուլել արմատական բնակչության հիմնական զանգվածները և իրենք էլ չձուլվեցին, մնալով ըստ էության ռազմական օկուպանտներ

---

[1] **А. Д. Новичев,** Очерки экономики Турции до мировой войны. М.—Л., 1937, с. 11.

[2] *Տե՛ս* **В. А. Гурко-Кряжин,** История революции в Турции, М., 1923, էջ 46։

[3] *Տե՛ս* **Прудон Пьер Жозеф,** Война и мир, Исследование о принципе и содержании международного права, Москва, изд. Черенца и К. 1864, т. 1, էջ 1^4։

(ընդգծումն իմն է։— Հ. Ս.)»[1]։ Նույնը հաստատում էր սովետական թուրքագետ պրոֆ. Գուրկո-Կրյաժինը, գրելով, թե «Թուրքիայում ազգային փոխհարաբերությունների առավել բնորոշ գիծն այն է, որ, բացառությամբ Անատոլիայի, տիրապետող ազգությունը, այսինքն՝ թուրք օսմանլիները ոչ մի տեղ բնակչության գերակշռող մասը չէին կազմում։ Թե՛ Արաբիայում և Միջագետքում, թե՛ Քուրդիստանում և Հայաստանում թուրքերը ներկայացված էին սոսկ պաշտոնյաների և զինվորների խմբով, որոնք միանգամայն խորթ և օտար էին այդ երկրների արմատական բնակչության»[2]։

Գալով Ասիայի հեռուներից, նվաճելով Բյուզանդական կայսրությունը և այլ առաջավոր երկրներ, թուրքերը, սակայն, դարերի ընթացքում ի վիճակի չեղան յուրացնելու այն վիթխարի կուլտուրական ժառանգությունը, որ ստացել էին։ Իրենց հերթին նվաճված ժողովուրդները միշտ ընդդիմադիր ու անհաշտ եղան նվաճողներին։ Կապիտալիստական հարաբերությունների սաղմնավորմանն ու զարգացմանը զուգընթաց գնալով է՛լ ավելի խորացավ իշխողների և նվաճողների միջև եղած անջրպետը կրոնական, մշակութային և տնտեսական հարցերում, ազգային հարաբերություններում։

Կառավարող իթթիհադական կուսակցության ներքին և արտաքին ռեակցիոն քաղաքականությունը երկրում առաջ բերեց դժգոհության լայն ալիք։ Դժգոհությունները խորացան կայսրության արաբաբնակ տարածքներում, որտեղ տևական կռիվ էր մղվում օսմանյան տիրապետության դեմ։ Ապստամբեցին ալբանացիները։ Երիտթուրքերից դժգոհ էին ոչ միայն կայսրության տարածքում ապրող այլազգիները, այլև թուրք հասարակության զանազան խավերը, այդ թվում նաև թուրքական առևտրական և արդյունաբերական բուրժուազիայի որոշ շրջաններ։ Աստիճանաբար ձևավորվում էր հակաիթթիհադական քաղաքական օպոզիցիան։ 1909 թվականին կազմակերպվեց «Լիբերալների» («Ահրար»), 1910-ին՝ «Ժողովրդական» («Ահրար ֆրոկասի») կուսակցությունները։ Ասպարեզ եկան նաև քաղաքական ուրիշ կազմակերպություններ։ Այդ բոլոր օպոզիցիոն ուժերը 1911 թվա-

[1] БСЭ, т. 43, с. 495.

[2] **В. А. Гурко-Кряжин,** История революции в Турции, с. 46.

կանին միավորվեցին և ստեղծեցին «Ազատություն և համաձայնություն» («Հյուրիեթ վե իթթիլաֆ») կուսակցությունը։ Այն հրաչակեց մի շարք բուրժուազեմոկրատական սկզբունքներ, այդ թվում նաև կայսրության ոչ թուրք ժողովուրդներին որոշ ինքնուրույնություն տալու սկզբունքը[1]։ Իթթիլաֆը բուռն գործունեություն ծավալեց իշխանությունը գրավելու համար։

Դրան նպաստեցին մի շարք հանգամանքներ և առաջին հերթին՝ իտալա-թուրքական պատերազմը։

1911 թվականի սեպտեմբերի 29-ին Իտալիան ռազմական գործողություններ սկսեց Թուրքիայի դեմ։ Տրիպոլիտանյան անունով այդ պատերազմը, որը տևեց մեկ տարուց ավելի (վերջացավ 1912 թվականի հոկտեմբերի 15-ին), թանկ նստեց Թուրքիային։ Իտալիան գրավեց Թուրքիայի աֆրիկյան վերջին տիրույթները՝ Եգիպտոսից դեպի արևմուտք, մինչև Թունիս ընկած տարածությունները, այսպես կոչված Կիրենայիկան[2]։

Անդրադառնալով Թուրքիայի ներքաղաքական վիճակին, բոլշևիկյան «Պրավդա» թերթը «Թուրքական իրադարձություններ» վերնագրով հոդվածում, 1912 թվականի հուլիսին, նշում էր. «Իտալական պատերազմը է՛լ ավելի բարդացրեց գործը։ Այժմ մենք լանգնած ենք հենց անմիջականորեն Օսմանյան կայսրության գոյության հարցի առջև»[3]։ Թերթը գրում էր, որ Թուրքիայի պարտությունը պատահական չէր. իրենց վարած շովինիստական քաղաքականության հետևանքով երիտասարդ թուրքերը չկարողացան նվաճել մասսաների վստահությունը, նրանց տանել իրենց հետևից։ Դրա փոխարեն, սակայն, «երիտթուրքերն իրենց առաջին իսկ քայլերով ասես դիտմամբ, սկսեցին իրենց|ց վանել Օսմանյան կայսրության ժողովուրդներին։ Նրանք ի հայտ բերեցին լիբերալ բուրժուազիայի բոլոր արատները և թուլությունները, իսկ մյուս կողմից՝ իշխանության գլուխ անցած զինվորական-

[1] *Տե՛ս* **Ա. Ս. Համբարյան,** *Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908—1914), էջ 17։*

[2] *Տե՛ս* **В. И. Киселева,** Дипломатическая подготовка Уши-Лозанского мира 1912 г., Труды Московского гос. историко-архивного института, 1958, т. 12.

[3] «Правда», 27 июля 1912 г.

սպայական կաստայի ամբողջ դեսպոտիզմը։ Խոսքով լիբերալություն անելով, ցույց տալով, թե այրվում են ժողովրդի համար, իրականում սարսափում էին նրանից, ատում նրան։ Բնակչության լայն խավերի ամեն մի ինքնագործունեություն նրանց կողմից հանդիպում էր անվստահության ու խոչընդոտների։ Խոստացած ռեֆորմները, որոնք գոնե ինչ-որ չափով պետք է թեթևացնեին աղքատացած բնակչության դրությունը, չկատարվեցին, իսկ նոր մարդիկ, կանգնելով կառավարման գլուխ, պատվախնդրության խաղ էին անում և զբաղվում մութ գործերով, որով վերջնականապես իրենց վարկաբեկեցին ժողովրդական մասսաների մոտ»[1]։ Թերթը հատկապես շեշտում էր կայսրության ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ երիտթուրքերի անհանդուրժող շովինիստական քաղաքականությունը, նշելով, որ նրանց «ձգտումը՝ թուրքացնել Օսմանյան կայսրությունում բնակվող սլավոններին, հայերին, հրեաներին, հույներին և այլն, ընդունեց ավելի կոպիտ և բռնի բնույթ, քան Աբդուլ Համիդի ժամանակ»[2]։

Օգտվելով Տրիպոլիտանյան պատերազմում իթթիհադական կառավարության կրած անհաջողությունից, իթթիլաֆ օպոզիցիոն կուսակցությունը 1912 թվականի հուլիսին կարողացավ վերցնել իշխանությունը։ Այդ օրերին հատկապես ակտիվ էին գործում իթթիլաֆականների շարքերում գտնվող ահրարականները, որոնք հակահեղափոխական շարժման նախօրյակին նույնիսկ գաղտնի գործարքի մեջ էին մտել Աբդուլ Համիդի հետ։

Իթթիլաֆականների օրոք, սակայն, երկրի ներքին դրությունը ոչնչով չփոխվեց։ Գնալով վատթարանում էր աշխատավոր մասսաների վիճակը, շարունակվում էին հալածանքներն ու բռնությունները կայսրության ոչ թուրք ժողովուրդների, հատկապես հայերի նկատմամբ։ Թուրքիզմի պրոպագանդան առաջվա պես մղվում էր ուժգին թափով։ Ինչպես գրում է Ա. Ալպոյաճյանը, այդ տարիներին «Հայաստանի մեջ համիտական շրջանի յատուկ կեղեքումները, հարստահարությունները և ջարդի սպառնալիքները շարունակուեցան թերևս ավելի յավելեալ և ճոխացեալ, հայերը որոշ տեսան, թե խաբեություն մը և կեղծիք մըն էին... երկրին մեջ արդարություն և ապահովություն հաստատելու խոստումները, որոնք թուրքերը կ'ընեին»[1]։

Իտալա-թուրքական բանակցությունները դեռ չավարտված, փոքրիկ Զեռնոգորիան 1912 թվականի հոկտեմբերի 8-ին պատերազմ հայտարարեց Թուրքիային, իսկ 10 օր հետո, 1912 թվականի հոկտեմբերի 18-ին, սրտառուչ նվիրումով Զեռնոգորիային միացան Հունաստանը, Սերբիան և Բուլղարիան՝ Թուրքիայի երբեմնի հպատակները։ Բալկանյան փոքր երկրների զինված ուժերը կարճ ժամանակում ջախջախեցին թուրքական բանակները։ Բուլղարական բանակը հասավ Չաթալճա և սպառնաց Կ. Պոլսին։ Օսմանյան կայսրությունը ծանր պարտություն կրեց բալկանյան քրիստոնյա ժողովուրդների՝ երեկվա ռայայի հարվածներից։ Խանդավառ էին նաև հայերը, որոնք կամավորների փոքրիկ մի ջոկատով կռվում էին բուլղարական բանակի շարքերում։ Թուրքիայից անջատվեցին եվրոպական բոլոր վիլայեթները՝ Սալոնիկը, Արևելյան Ռումելիան, Էդիրնեն, Մոնաստիրը, Շքորթան, Յանյան։ Եվրոպական տիրույթներից Թուրքիային մնաց միայն Ստամբուլը և Արևելյան Թրակիայի մի մասը[2]։

Գնահատելով Թուրքիայի դեմ 1912 թվականին մղված Բալկանյան պատերազմի արդյունքները, Վ. Ի. Լենինը գրել է. «Զնայած Բալկաններում կազմակերպված է միապետությունների դաշինք և ոչ թե հանրապետությունների դաշինք, չնայած դաշինքը գոյացել է պատերազմի շնորհիվ և ոչ թե հեղափոխության, չնայած դրան, խոշոր առաջընթաց քայլ է արված ամբողջ Արևելյան Եվրոպայում միջնադարի մնացորդները կործանելու համար»[3]։

Բայց մեծ պետությունների հակամարտությունները Բալկաններում հրահրեցին ուխտադավության ոգին։ Ավարի բաժանման խնդրում հաղթողների միջև ծագեց անհամաձայնություն։

---

[1] «Правда», 27 июля 1912 г.

[2] Նույն տեղը։

---

[1] Արշակ Ալպոյաճեան, *Պատմություն Մալաթիոյ հայոց*, էջ 879։

[2] *Տես* **А. А. Могилевич, М. Э. Айрапетян,** На путях к мировой войне 1914—1917 гг., Ленинград, 1940; **П. Помилов,** Введение в историю первой Балканской войны 1912—1913 гг., Петроград, 1917; **А. А. Рябинин,** Балканская война, СПб, 1913, **Արամ Անտոնեան,** *Ընդարձակ պատմություն Բալկանեան պատերազմի, հ. 1, 2, Բեյրութ, 1940։*

[3] **Վ. Ի. Լենին,** *Երկ, հ. 22, էջ 189։*

Նախկին գինակիցներից երեքը միացան Ռումինիային՝ իրենց զենքը դարձնելով Բուլղարիայի դեմ։ Սկսվեց Բալկանյան երկրորդ պատերազմը (1913 թ. հունիսի 19-ից 1913 թ. օգոստոսի 10-ը), որի ընթացքում Բուլղարիան պարտվեց։ Այդ դժվարին կացությունից կրկին օգտվեց Թուրքիան։ Առանց լուրջ դիմադրության հանդիպելու, էնվերը մտավ Ադրիանապոլիս (Էդիրնե) և շահեց ձրի հաղթանակի պսակը։ Թուրքերը գրավեցին նաև Մալկարան[1]։

Ֆրանսիացի պատմաբան Ժ. Կայզերը, անդրադառնալով Տրիպոլիտանյան և Բալկանյան պատերազմներին, գրում է. «1911 թ. սեպտեմբերին կար երեք Թուրքիա. Եվրոպական, Ասիական և Աֆրիկյան։ 1912 թ. սեպտեմբերին Աֆրիկյան Թուրքիան վերացավ և մնացին միայն երկուսը. 1913 թ. սեպտեմբերին մնաց միայն մեկ, Ասիական Թուրքիան»[2]։

Իտալա-թուրքական և հատկապես բալկանյան պատերազմների օրերին ու դրանից հետո ընդհանուր դժգոհության և հուսախաբության ալիքն ալեկոծեց ամբողջ Թուրքիան։ Լիովին հեղինակազրկվեց իշխանության գլուխ կանգնած իթթիլաֆ կուսակցությունը։ Նախկին սուլթանական կարգերի վերականգնումը նրազող ուժերը շարախնդում էին, խոսում այն մասին, որ կայսրության կործանման պատճառը 1908 թվականի հեղափոխությունն է, որ երիտթուրքերը, ապա նաև իթթիլաֆականները չկարողացան պահպանել այն հզոր կայսրության ամբողջականությունը, որի սահմաններն անխախտ էին մնացել Աբդուլ Համիդի Երեսնամյա կառավարման տարիներին։

Իրենց հերթին երիտթուրքերը, օգտվելով ստեղծված իրադրությունից, ուժեղացրին հարձակումները իթթիլաֆական կառավարության դեմ, նրա վրա բարդելով բալկանյան պատերազմում թուրքերի կրած պարտության մեղքը։ 1913 թվականի հունվարին իթթիհադականները պետական հեղաշրջում կատարեցին, տապալեցին իթթիլաֆականներին և վերահաստատեցին իրենց կառավարությունը[3]։

---

[1] Տե՛ս **Ю. В. Ключников, А. Сабанин.** Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. 1, М., 1925.

[2] **Ж. Кайзер**, Европа и новая Турция, Госиздат, М., 1925, с. 6.

[3] Տե՛ս **Ա. Ս. Համբարյան**, *Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908—1914)*, էջ 17։

Նորից իշխանության գլուխ անցած երիտթուրքերը դաժան ռեպրեսիաների դիմեցին իրենց քաղաքական հակառակորդների նկատմամբ, է՛լ ավելի ուժեղացրին մասսաների սոցիալական ճնշումը և կայսրության ոչ թուրք ժողովուրդների հարստահարումը։ Միաժամանակ ստեղծված իրավիճակը նրանք օգտագործեցին նաև թուրքիզմը կայսրության պետական գաղափարախոսություն հռչակելու համար։

Թուրքական ողջ հետադիմությունը ոտքի վրա էր։ Բալկաններում կրած ծանր պարտությունը թուրքերի կողմից ընկալվել էր իբրև ազգային խոր վիրավորանք, իբրև ազգային խայտառակություն։ Ոչ միայն թուրք վերնախավերում, այլև ցածր շերտերում աստիճանաբար տիրապետող էր դառնում այն տեսակետը, որ եթե ժամանակին իրենց նախորդները թուրքացրած կամ կոտորած լինեին Բուլղարիայի, Ռումինիայի, Սերբիայի, Ջեռնոգորիայի, Ալբանիայի, Մակեդոնիայի և գրաված մյուս երկրների բնակիչներին, ապա այդ տարածքներն այժմ ոչ թե Թուրքիայից անկախ կլինեին, այլ կգտնվեին օսմանյան պետության կազմի մեջ։ «Այս գաղափարով գինովցած, թուրքերը սկսան ամբաստանել սուլթան-խալիֆները, իրենց կայսրության հիմնադիրները, որ ատենին ամենակատարեալ կերպով որդեգրած չէին այս լուծումը, զոր մասնակի կերպով միայն գործադրած էին»[1]։ Թուրքերը սկսեցին նաև խիստ դատապարտել արյունարբու սուլթան Համիդին այն բանի համար, որ աններելի կերպով չէր կարողացել վերջ դնել կայսրության այլազգիների գոյությանը։

Երիտթուրքերի պարագլուխներից և թուրքիզմի հայտնի գաղափարախոսներից Ջելալ Նուրին 1912 թվականին հրատարակած «Օսմանյան անկման պատմությունը» գրքում նշելով, որ թուրքերի միակ փրկությունը անցյալում այլազգիներին ձուլելու մեջ կարող էր լինել, միաժամանակ նաև խոստովանելով, որ ավելի քան կես հազարամյակի ընթացքում թուրքերին չի հաջողվել ձուլման միջոցով կայսրության ներսում ազգային միատարրություն ստեղծել, նա գտնում էր, որ ընդհանրապես ձուլման քաղաքականությունը չի կարող ազգային-էթնիկական միատարրության հասնելու միջոց լինել։ Նման միջոց չէին կարող

---

[1] «Տրապիզոնի թեմին վիճակավոր Յովհաննես արք. Նազլեանի յուշերը», **Ա.** հատոր, էջ 5։

լինել նույնիսկ ամենամասսայական հաշվեհարդարները, ինչպես օրինակ՝ 90-ական թվականների հայկական կոտորածը։ Հետևապես մի ճանապարհ կա միայն՝ «բուն Թուրքիայում» դիմել այլազգիների արմատական բնաջնջման։

Երիտթուրք թուրքականներն իրենց համար առավելագույն արդյունավետությամբ օգտագործեցին թուրք բնակչության հոգեկան ալեկոծումները։ Քաղաքական հերթական դեմագոգիայի դիմելով, նրանք հրապարակայնորեն հառաչում էին եվրոպական վիլայեթների կորստյան առթիվ։ Բայց իրականում ներքնապես բնավ ցավ չէին զգում, որ իտալա-թուրքական և բալկանյան պատերազմների հետևանքով անդամահատվել է կայսրությունը։ Իրականանում էր Գեոքալփի, Աքչուրայի և մյուս թուրքականների գուշակությունը օսմանիզմի լիակատար կրախի մասին։ Կայսրության հատկապես եվրոպական մասի հողերի կորուստը նրանք դիտում էին իբրև անհրաժեշտ անդամահատություն, մարմնից անպետք մասերի հեռացում, մի բան, որ ավելի է ուժեղացնում և կենսունակ դարձնում օրգանիզմը, փրկում «հիվանդ մարդուն»։

Միաժամանակ թուրք բնակչության մեջ հրահրելով ամենավայրենի շովինիզմ և մարդատյացություն, թուրքճիները նրան արագ սթափվելու կոչ էին անում։ Ասելով, թե «դեռ որոշ բան կարելի է փրկել փլատակներից», նրանք թուրքերին հուշում էին, որ դեռ «կա փրկության մի խարիսխ»՝ «մեր ապագայի հույսը»՝ Անատոլիան, որի կազմում, ինչպես ասացինք, նրանք մտցրել էին նաև Արևմտյան Հայաստանը՝ «Արևելյան Անատոլիա» անվամբ։ Թուրքականները ազգակիցներին կոչ էին անում ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել հենց այդ տարածքի վրա։ Ստեղծվում էր մի մտայնություն, որ եթե թրքությունը ուզում է փրկվել վերահաս կործանումից և գոյատևել, ապա միայն մի ելք ունի՝ «Արևելյան Անատոլիայի» լիակատար թրքացումը։ Թուրքական բռնապետության փրկության հույսը կապելով հայ ժողովրդի արևմտյան հատվածի ազգային-ֆիզիկական ոչնչացման հետ, նրանք խանդավառ էին, որ ճակատագրական այդ քայլերով Օսմանյան կայսրության աճյուններից կյանք կառնի, կվերածնվի մանուկ նոր Թուրքիան՝ հարազատ թուրք բնակչությամբ։

Իսկ այդ «նոր Թուրքիայի» ստեղծումը թուրքերի համար այլևս հապաղում չհանդուրժող հրամայական անհրաժեշտություն էր։ Պետք էր ստեղծել ազգային-էթնիկական միատարրություն ամեն գնով։ Եվ հրապարակ նետվեց «Ով չի թրքանում, պետք է սրի քաշվի» մարդատյաց սպառնալիք-կարգախոսը, որը թուրք ազգային բուրժուազիայի գաղափարական ժառանգության և թուրքական բռնակալության դարավոր պատմության արյունոտ արարի համառոտ բանաձևումն էր։

ՊԱՆԹՈՒՐՔԻԶՄ

Թուրքիզմի գաղափարախոսության սաղմնավորման, զարգացման և Թուրքիայում այն տիրապետող գաղափարախոսություն դառնալուն զուգընթաց թուրք ազգային բուրժուազիայի ծոցում ջերմանում, ձևավորվում և վերջնական տեսք էր ստանում նաև պանթուրքիզմը։

Եթե պանիսլամիզմը թուրքական սուլթան-խալիֆի գլխավորությամբ բոլոր մուսուլմաններին մի միասնական պետության մեջ միավորելուն ուղղված հետադեմ գաղափար է, ապա պանթուրքիզմը Թուրքիայի հովանու ներքո բոլոր թուրքալեզու ժողովուրդների միավորմանը ձգտող առավել հետադեմ ցեղապաշտական ուսմունք է։ Ի տարբերություն պանիսլամիզմի, որն իր մի ծայրով է միայն ուղղված Ռուսաստանի դեմ, պանթուրքիզմը, կարելի է ասել՝ ամբողջովին ուղղված է Ռուսաստանի դեմ, նրան է համարում իր գլխավոր թշնամին։ Դա այդպես է, որովհետև հիմնականում Ռուսաստանի կազմում են գտնվում թուրքալեզու ժողովուրդները, որոնց հետ են պանթուրքականները կապում թուրքական պետությունը մեծ ծավալներով ընդարձակելու պլանները։

Պանթուրքիզմը, որպես գաղափարախոսություն, իր սաղմնավորման շրջանից (19-րդ դարի 60-ական թվականներ) մինչև վերջնական ձևավորումը երկար ճանապարհ է անցել։ Այդ սաղմերն առաջին անգամ մենք տեսնում ենք «նոր օսմանների» գրական-տեսական ստեղծագործություններում։ Նրանք էին, որ Օսմանյան կայսրության մեջ և նրանից դուրս ցանեցին պանթուրքիզմի առաջին սերմերը։

Պանիսլամիզմին ապավինած պանթուրքիզմի տակավին աղոտ

գաղափարները թուրք սահմանադրականների առաջին սերնդի ուժգին պրոպագանդայի հետևանքով արդեն 19-րդ դարի 70-ական թվականների կեսերին թափանցեցին Ռուսաստանի թուրքալեզու տարածքները։

Հենց սկզբից կրելով ազգային-ցեղապաշտական ուժգին լիցք, այն չափազանց հրապուրիչ եղավ Ռուսաստանի թուրքալեզու տիրապետող դասակարգերի ու առանձին շերտերի համար։

Ռուսաստանում պանթուրքիզմի սաղմնավորման և գաղափարական ձևավորման առաջին կենտրոնը Թաթարիան էր։ Դեռ անցյալ դարի 80-ական թվականներին Հյուսիսային Թաթարիայում հրատարակվող «Թյուրք Յուրդու» թերթն այդ գաղափարի անդրանիկ ձայնափողը եղավ։ Ավելի ուշ այստեղ սկսում է լույս տեսնել Վոլգայի շրջանի իսլամական շարժման առաջնորդներից մեկի՝ Մաքսուդովի (Սադրի Նիզամօղլու) խմբագրած «Յըլդրդ» օրաթերթը, որի շուրջն էին համախմբվել թաթար մտավորականության մի շարք ճանաչված դեմքեր։ Պանթուրքական և պանիսլամական ուղղության այս առաջին երկու թերթերին միացավ Կազանում հրատարակվող «Քազան մուխբիրին»։

Թաթարիայում ձևավորվող պանթուրքիզմը հենց սկզբից ընդունեց բացահայտ հակառուսական ուղղություն։ Վերոհիշյալ թերթերը պրոպագանդում էին Ռուսաստանի լծից «ճնշված արյունակից ժողովուրդների ազատագրության», նրանց «փառավոր անցյալի» վերականգնման և «անխախտ միության» ստեղծման գաղափարները։ Թաթարիայի համիսլամական մտավորականությունը միաժամանակ հայացքն ուղղեց Թուրքիային, նրա մայրաքաղաք Կ. Պոլսին, թուրքական սուլթանին՝ նրա մեջ տեսնելով «բնական» առաջնորդին։

«Յըլդրդ» թերթում Մաքսուդովը գրում էր, թե թուրք-թաթարական ժողովուրդների մեջ արթնացած ազգային գիտակցությունը զորացնելու, նրանց միջև եղբայրական միություն ստեղծելու և «գյավուրներից» ազատվելու ունակություն ձեռք բերելու փափագին կարող է հագուրդ տալ միայն այդ ժողովուրդների միակ անկախ ու զորավոր պետությունը՝ Թուրքիան, Ռուսաստանի անհաշտ թշնամին։

Արդեն նույն 80-ական թվականներին ազգայնականության գաղափարները Վոլգայի թաթարաբնակ շրջաններից թափանցեցին Ղրիմի թաթարների միջավայրը։ Ղրիմը դարձավ պանթուրքիզմի ձևավորման երկրորդ կենտրոնը Ռուսաստանում։ Այստեղ

պանիսլամական պրոպագանդայի հետ միասին պանթուրքական լայն պրոպագանդա սկսեց արդեն մեզ ծանոթ թաթար հրապարակախոս Իսմայիլ Գասպրինսկին՝ իր «Թերճյուման» թերթի էջերում։ Նա ասում էր, որ ճակատագիրը Օսմանյան կայսրության ամենավստահելի տարրին՝ թուրքին է հանձնել Ռուսաստանից ազատագրվելու համար պայքարի ելած «կրտսեր եղբայրներին» աջակցելու և ղեկավարելու, նրանց զբաղեցրած տարածքներից մի ընդհանուր թուրքալեզու կայսրություն ստեղծելու պատմական միսիան։ Ռուսական կայսրությունը թեև մեծ է, գրում էր նա, բայց անհաղթ չէ։ Ելնելով Ռուսաստանի հետ ունեցած իրենց հարաբերություններից, եվրոպական երկրները ոչ միայն արգելք չեն լինի պանթուրքիզմի գաղափարի հաղթանակին, այլև կնպաստեն դրան։

19-րդ դարի վերջերին, երբ կազմավորված ռուսական բուրժուազիայի կողքին նոր-նոր սաղմնավորվում էր նաև կայսրության թուրքալեզու բուրժուազիան, պանթուրքիզմը պանիսլամիզմի աջակցությամբ միացավ հակառուսական նացիոնալիզմին։

Ռուսաստանի թուրքալեզու բուրժուազիայի կողմից պանթուրքիզմի գաղափարախոսության որդեգրումը պայմանավորված էր տնտեսական, սոցիալական և քաղաքական մի շարք հանգամանքներով ու պատճառներով։ Դրանցից առաջնակարգը կայսրության թուրքալեզու ճնշված ազգերի բուրժուազիայի՝ «սեփական» ազգային պետություն ստեղծելու և «սեփական» աշխատավորներին միահեծան շահագործելու բուռն ձգտումն էր։

Թաթարիայի, Բաշկիրիայի, Ղազախստանի, Միջին Ասիայի, Ադրբեջանի նոր ձևավորվող թուրքալեզու բուրժուազիան, փայփայելով ազգային շուկա և ազգային պետություն ստեղծելու գաղափարը, ըմբռնում էր, որ դրա իրականացումը հնարավոր է միայն Ռուսաստանի կազմից դուրս գալու միջոցով։ Բայց ինչպե՞ս դուրս գալ Ռուսաստանի կազմից, չէ՞ որ դա չէր կարող հանդուրժել ռուսական բուրժուազիան։ Այդ բանը շատ լավ էր ըմբռնում թուրքալեզու բուրժուազիան, ուստի միակ ելքը նա տեսնում էր Ռուսաստանի դեմ բռնի գործողությունների մեջ։ Հանդես գալով ազգային-ազատագրության դրոշով, նա կոչ էր անում սրբազան կռիվ սկսել Ռուսաստանի դեմ։ Այդ պայքարում սեփական ուժերով հաջողության հասնելու երաշխիք չունենալով, թուրքալեզու բուրժուազիան հայացքը հառեց Ռուսաստանի դաշնակ թշնամուն՝ Օսմանյան կայսրությանը, իր «ավագ եղբորը»՝ նրանից աջակցություն ստանալու և նրա օգնությամբ ռուսների «լծից» ազատագրվելու հույսով։

Ռուսաստանում մուսուլմանական ազգայնականության ձևավորման գլխավոր կենտրոնն այդ ժամանակ դարձել էր Բաքուն։ Այստեղ պանթուրքական գաղափարներ էր պրոպագանդում վերևում արդեն հիշատակված «Կասպին»։ Ռուսաստանում ոչ միայն պանիսլամիզմի, այլև պանթուրքիզմի տարածման գործում մեծ դեր խաղացին ադրբեջանական բուրժուական նացիոնալիզմի ճանաչված դեմքեր Ալի Հուսեին զադեն, Ահմեդ Աղաօղլուն (Աղաև), Ալի Մերդան Թոփչիբաշևը։ Սրանցից Ահմեդ Աղաևը այն կարծիքին էր, որ Թուրքիան կարող է և պետք է թուրքալեզու ժողովուրդների անկախության ու միավորման գաղափարը վերածի անհաղթահարելի ու անդիմադրելի կամքի, որ այդ ժողովուրդների համար նա պետք է այն դերը խաղա, ինչ դեր խաղաց Պրուսիան գերմանական կայսրության ստեղծման գործում։ Ուստի յուրաքանչյուր իսկական մուսուլմանի պարտքն է՝ ամեն կերպ նպաստել Թուրքիայի և նրա ամենաարժեքավոր տարրի՝ թրքության հզորացմանը։ Ադրբեջանցի պանթուրքականները մոլեռանդ կրքոտությամբ հանդես էին գալիս Ռուսաստանի մյուս թուրքալեզու ցեղակից ժողովուրդների հետ սերտ միություն ունենալու, միասնաբար «ազատագրական կռվի» ելնելու, թուրք-թաթարական միատարր կայսրություն ստեղծելու ծրագրով։

Ռուսաստանում պանթուրքական նացիոնալիզմը գործելու լայն հնարավորություններ ստացավ ռուսական առաջին հեղափոխության և նրան հաջորդած ժամանակաշրջանում։ Օգտվելով հեղափոխության ընձեռած քաղաքական որոշ ազատություններից, Ռուսաստանի մուսուլման ազգայնական գործիչներն իրենց գաղափարները տարածելու համար առավելագույն չափով օգտագործում էին գրականությունը, ժողովների ու միտինգների հրավիրման լեգալ հնարավորությունները, Պետական դուման, առանձնապես մամուլը։ Մեկը մյուսի հետևից լույս տեսան ազգայնական ուղղության նոր թերթեր ու հանդեսներ, որոնց թիվն անցավ հիսունից։ Դրանց մեծ մասը հրատարակվում էր Բաքվում և Կազանում։ Բաքվում լույս տեսնող մամուլի օրգաններից հատկապես ակտիվ պանթուրքական պրոպագանդա էին մղում «Հայաթ» (խմբագիրներ՝ Ահմեդ Աղաև և Ալի Հուսեին զադե), «Թազե» և «Սևադա» (խմբագիր՝ Հաշիմ բեգ), «Իրշադ» և «Թերաքքը» (խմբ-

բագիր՝ Ահմեդ Աղաև), «Հաքիքաթ» և «Իքբալ» (խմբագիր՝ Օրուջով), «Ֆեվյուզաթ» (խմբագիր՝ Ալի Հուսեին զադե) պարբերականները, որոնք շարունակում էին ֆինանսավորվել ադրբեջանցի միլիոնատերերի կողմից։ Թունդ ազգայնականություն էին քարոզում նաև Աթթար Օսմանովի խմբագրությամբ լույս տեսնող «Դանկ», «Դանկ Յըլդըզը», «Բեյան յուք Հարքք» պարբերականները։

Պանթուրքական ուղղության թերթերի էջերում քննարկվող հիմնական թեման «թուրքական ցեղի» տարբեր ճյուղերի միջև համերաշխություն և միություն, թուրք-թաթարական միասնություն ստեղծելու խնդիրն էր։ Այդ առնչությամբ քննարկվում էր նաև այն հարցը, թե թուրք-թաթարական լեզուներից որի՞ն պետք է առաջնություն տալ, այսինքն՝ ո՞րը պետք է լինի գալիք պանթուրքական կայսրության ընդհանուր լեզուն՝ թաթարերե՞նը, կիրգիզերե՞նը թե թուրքերենը։ Հիմնական կարծիքն այն էր, որ պետք է իբրև ազգային լեզու ընդունել թուրքերենը, ինչպես նաև Ռուսաստանի բոլոր «թուրք համայնքների» համար որդեգրել Օսմանյան կայսրության մեջ գործող կրթական սիստեմը։ Առաջարկվում էր Պոլսի թուրքերենով թերթեր հրատարակել Թիֆլիսում, Ղրիմում, Պետերբուրգում և այլուր, տարածել թուրք գրականություն, մեծացնել Թուրքիայի ազդեցությունը Ռուսաստանի թուրքալեզու ժողովուրդների վրա։ Այդ ամենը նպաստում էր նրան, որ այդ ժողովուրդների վերին խավերում ուժեղանում էին կայսրությունից անջատվելու տրամադրությունները, առաջ էր գալիս համաթուրքական ազգայնականություն և Թուրքիայի հետ միավորվելու բուռն ձգտում։

Ռուսաստանյան պանթուրքականներն իրենց հայացքներն ուժգնորեն պրոպագանդելով ոչ միայն Ռուսաստանում, մեծ դեր էին խաղում նաև պանթուրքիզմն Օսմանյան կայսրության մեջ տարածելու գործում։ Հենց այստեղ ասենք, որ թուրքական սուլթանը, նրա արքունիքը երկար տարիներ խեթ աչքով էին նայում պանթուրքականների գործողություններին, բազում արգելքներ հարուցում կայսրությունից ներս նրանց գաղափարների տարածման առջև։ Առաջին հայացքից դա կարող է անբնական թվալ, բայց իրականում այդպես էր։ Եվ դա այն պատճառով, որ, ինչպես տեսանք, «նոր օսմանների» շարժման ճնշումից հետո Օսմանյան կայսրության հիմնական պաշտոնական գաղափարախոսությունը դարձել էր իսլամականությունը, աբդուլհամիդյան

պանիսլամիզմը, որոնք ելնում էին բոլոր մուսուլմաններին միավորելու գաղափարից։ Պանթուրքիզմը գալիս էր ճեղք բացելու պանիսլամականության մեջ, քանի որ քարոզում էր ոչ թե բոլոր մուսուլմաններին, այլ միայն դրանց մի մասին՝ թուրքերին միավորելու գաղափարը, դրանով իսկ սպառնում էր Օսմանյան կայսրության գաղափարական հիմքերին, նրա ամբողջականությանը։

Ինչևիցե, դեռևս անցյալ դարի 90-ական թվականներից սերտ կապեր հաստատվեցին ռուսաստանյան թուրքալեզու ազգայնականների և Թուրքիայի քաղաքական-հասարակական շրջանների միջև։ Կ. Պոլիսը իսկական սրբավայր դարձավ ազգայնականների համար։ Գալով Թուրքիա, նրանցից շատերն այլևս չէին վերադառնում Ռուսաստան և համիսլամական ու համաթուրքական բուռն գործունեություն էին ծավալում Պոլսում, Իզմիրում, Սալոնիկում, կայսրության ուրիշ վայրերում։

Այսպես, օրինակ, Կազանից Կ. Պոլիս գնաց «Յըլդըզ» թերթի ակտիվ աշխատակից Յուսուֆ Աքչուրան, որը որոշ ժամանակ հետո այնտեղից անցավ Եգիպտոս և Կահիրեում թուրքերեն լույս տեսնող «Իթթիհադ» թերթում հրապարակեց «Ուչ թարգը սիասեթ» («Երեք տեսակի քաղաքականություն») խորագրով հոդվածաշարը, որը քաղաքական ծրագրի նշանակություն ունեցավ պանթուրքական շարժման համար, իսկ հոդվածի հեղինակը որոշ ժամանակ անց ճանաչվեց իբրև պանթուրքիզմի խոշոր տեսաբան։

Ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին Յուսուֆ Աքչուրայի հետքերով Ղրիմից Պոլիս անցավ Իսմայիլ Գասպրինսկին, իսկ հեղափոխության ժամանակ և նրանից հետո այնտեղ հաստատվեցին ադրբեջանցի պանթուրքականներ Ահմեդ Աղաևը և Ալի Հուսեին զադեն։ Հեղափոխության ժամանակ Պոլիս անցավ նաև ծննդով Պենզայի նահանգից Մուսա էֆենդին։ Ավարտելով ռուսական գիմնազիան, նա Պոլսում դասավանդում էր ռուսաց լեզու, իսկ 1907 թվականից սկսած միաժամանակ այստեղ թաթարերեն լույս էր ընծայում և խմբագրում «Մաթեն» թերթը։ Ի. Գոլոբորոդկոն գրում էր. «Այդպիսի ռուսականացված մուսուլմաններ կամ, ավելի ճիշտ, թուրքացած ռուսաստանցիներ բավական շատ են Օսմանյան կայսրության մեջ։ Աշխատելով գրական, ռազմական կամ ուսումնական ասպարեզներում, նրանք

մեծապես նպաստում են թուրքական մուսուլմանների մոտ հասարակական կիտակցության արթնացմանը»[1]։

Պոլսում և այլուր բնակություն հաստատած, ծագումով Ռուսաստանից թուրք-թաթարական գործիչներից շատերը կարճ ժամանակում դարձան Թուրքիայի քաղաքական կյանքի աչքի ընկնող դեմքեր։ Իրենց հիմնած թերթերի էջերից նրանք մղում էին կատաղի պանթուրքական պրոպագանդա, բորբոքում հակառուսական և հակաքրիստոնեական տրամադրություններ, իրականացնում կապը երիտթուրքական կազմակերպությունների և Ռուսաստանի թուրք-թաթարական ազգայնական կենտրոնների միջև, այդ կենտրոններին պատվիրում էին, թե ինչպես պետք է գործել, նրանց փոխանցում էին երիտթուրքական պարագլուխների ցուցումները։ Այսպես, օրինակ՝ 1906-ի սեպտեմբերի 22-ին թվագրած մի նամակ-ուղերձում, որ երիտթուրքերը ադրբեջանական պանթուրքականների հետ Կովկաս էին ուղարկել, առաջ էր քաշվում Ադրիատիկի ափերից մինչև Չինաստան ընկած տարածքի վրա օսմանյան թուրքերի գլխավորությամբ թուրքալեզու բոլոր ժողովուրդներին միավորելու խնդիրը։ Միայն այդ կերպ, միայն Օսմանյան կայսրության ամրապնդման և ընդարձակման միջոցով բոլոր թուրքալեզու ժողովուրդները կփրկվեն կործանումից, ասված էր նամակ-ուղերձի մեջ։

Պանթուրքիզմի գաղափարը երիտթուրքերի համար հենց սկզբից հարգատ դարձավ։ Դեռ իր սկզբնավորման շրջանում երիտթուրքական թուրքիզմի մեջ արդեն պարզորոշ դրսևորվում էին պանթուրքական երանգներ, որոնք գնալով ավելի ու ավելի ցայտուն դարձան և սկսեցին զրաղեցնել թուրքական նացիոնալիզմի գաղափարախոսներից շատերին։ 1908 թվականին անցնելով իշխանության գլուխ, երիտթուրքերն իրենց գաղափարախոսական զինանոցը հենեցին երկու սյուների՝ թուրքիզմի և պանթուրքիզմի վրա։ Եթե թուրքիզմը իթթիհադ կուսակցության, հետևապես նաև թուրքական կառավարության պաշտոնական գաղափարախոսություն դարձավ երիտթուրքական հեղափոխությունից մեկուկես-երկու տարի անց, ապա պանթուրքիզմը այդպիսին դարձավ ավելի ուշ՝ իթթիլաֆի կառավարությունը 1913

[1] **И. И. Голобородько (И. Южанин)**, Старая и новая Турция, с. 111.

թվականի սկզբին տապալելուց հետո, այսինքն՝ երբ երիտթուրքերը երկրորդ անգամ անցան իշխանության գլուխ։

Թուրքիզմի բոլոր նշանավոր գաղափարախոսները տրամաբանության բերումով դարձան նաև պանթուրքական գործիչներ։ Դա այդպես էլ պետք է լիներ, քանի որ թուրքիզմը, կազմելով պանթուրքիզմի միջուկը, վերջին հաշվով սրա հետ մի ամբողջություն է կազմում։ Պանթուրքիզմը բարձրանում է թուրքիզմի ուսերին կամ, կարելի է ասել՝ վերջինս վերածվում է պանթուրքիզմի։ Եթե թուրքիզմն Օսմանյան կայսրությունը, հատկապես «բուն Թուրքիան» ազգային տեսակետից «միատարր» դարձնելու ծրագիր էր, ապա պանթուրքիզմը գերաճում է թուրքիզմից, ընդլայնում գործունեության դաշտը, տարածվում Թուրքիայի սահմաններից դուրս՝ իր ոլորտի մեջ առնելով ուրիշ երկրներ ու ժողովուրդներ։

Երիտթուրքական պարագլուխներից բժ. Նազիմը իր գործակիցների հետ այդ առթիվ մտքեր փոխանակելիս ասել է. «Ասիական հողամասի վրա դեպի Արևելք անսահման կարելիություններ են գտնվում մեր զարգացման և ընդարձակման համար։ Մի մոռացեք, որ մեր նախահայրերը Թուրանից են եկել ու այսօր Անդրկովկասի, ինչպես նաև Կասպից ծովից դեպի արևելք տարածվող ընդարձակ հողամասերի վրա թուրք ցեղերն են ապրում, գրեթե միատարր, ավա՜ղ, մեր դարավոր թշնամի Ռուսաստանի լծի տակ»[1]։ Այսպիսով, շեշտել է Նազիմը, «մեր քաղաքական հորիզոնը միայն այդ ուղղությամբ է բաց մնում», հետևապես «մեր սրբազան պարտքն է՝ իրականացնել թուրք ցեղի միությունը Միջերկրականից մինչև Արալ ծովը»[2]։ Այդ պարտքի կատարումը մեծագույն իդեալի իրականացում է։ Նազիմը գտնում էր, որ «իրենց ծագմանն ու պատմական կոչմանը գիտակից թուրք մտավորական և քաղաքական գործիչները միայն այս հեռանկարով կարող են առաջնորդվել և նրանով խանդավառել նաև ժողովուրդին և երիտասարդությանը, որոնք իրար հաջորդող պարտություններից և ձախորդություններից կարծես մատնված են հուսալքման։ Իր ներքին կենսունակությունը և հմայքը խորացնող պանիսլամության գաղափարի փոխարեն մեր քաղաքականությեան հիմնաքարը պետք է դառնա պանթուրանականությունը՝

[1] Ա. Ամուրյան, Հայ դատ, էջ 24։
[2] Նույն տեղը։

իբրև ոգի և ձգտում»[1]։ Նա հիշեցնում էր, որ «մի քանի տարիներ ի վեր այս գաղափարն արդեն շատ մտքերի մեջ տեղ է գրավել ու մեր ղեկավարության մեջ այսօր նրա դեմ արտահայտվող չկա։ Ավելորդ եմ գտնում, հետևաբար, իբրև քաղաքական տեսություն բացատրել նրա արժեքը և կարևորությունը մեզ համար, երևան հանել այն պատմական, զինվորական, քաղաքական և տնտեսական տվյալները, որոնք բոլորը ներդաշնակվում են առաջ մղելու համաթուրանական գաղափարը»[2]։

Թուրքական-պանթուրքականները մի կողմից Օսմանյան կայսրության թուրք բնակչության մեջ ազգային հպարտության խոր զգացում էին առաջ բերում, մյուս կողմից՝ պրոպագանդում էին, թե թուրանական ժողովուրդները ցեղաբանական և կուլտուրական տեսակետից էթնիկական մի ամբողջություն են կազմում, ուստի ամեն կերպ նրանց մեջ պետք է զարգացնել միասնական ժողովրդի զգացումը, նրանց համախմբել մի գաղափարի՝ պանթուրքիզմի շուրջը։

Ինչպես արդեն ասվեց, թուրքիզմի ծավալման առնչությամբ, Զիա Գեոքալփը, հենվելով Յուսուֆ Աքչուրայի «Երեք տեսակի քաղաքականություն» հոդվածում արտահայտած մտքերի վրա, տվել էր ազգի, մասնավորապես թուրք ազգի բնորոշումը։ Ըստ Գեոքալփի, թուրք ազգն անհատների ընդհանրությունն է՝ ընդհանուր լեզվով, կրոնով, բարոյականությամբ, գեղագիտությամբ։ Այդ բնորոշումը, սակայն, վերաբերում էր միայն Օսմանյան կայսրության, ավելի ճիշտ՝ Անատոլիայի թուրքերին։ Բայց եթե պանթուրքիզմի գաղափարի իրականացման դեպքում մի պետության մեջ միավորվեին թուրքալեզու, բայց տարբեր բարոյական սկզբունքներ ու սովորություններ, տարբեր կենցաղ ու մշակույթ ունեցող բազմաթիվ ժողովուրդներ, այն դեպքում արդյոք թուրքիզմի դիրքերից տված ազգի սահմանումը պիտանի կլինե՞ր նաև այդ պետության ողջ թուրքալեզու «ազգը» բնորոշելու համար։ Ինչ խոսք, նման պայմաններում թուրքիզմի դիրքերից թուրք ազգին տված ալփական բնորոշումը խիստ թերի էր դառնում և այն չէր կարող տարածվել ապագա կայսրության թուրքալեզու «ազգ» համարվող ժողովուրդների վրա։ Ահա թե ինչու առաջ եկավ «թուրք ազգին» պանթուրքական բնորոշում տալու պահանջը։ Եվ Գեոքալփը, «հենված» ցեղաբանական, ընկերաբանական, պատմական, հոգեբանական և այլ տվյալների վրա, տվեց այդ բնորոշումը, որն արդեն զգալի չափով տարբերվում էր ազգի՝ թուրքիզմի դիրքերից ձևակերպված սահմանումից։ Գեոքալփը այս անգամ պանթուրքական «ազգը» դիտում էր որպես անհատների ընդհանրություն, որն ունի ընդհանուր լեզու, ընդհանուր կրոն և ընդհանուր տերիտորիա («թուրքերի ապրած տեղեր»)։ Ինչպես տեսնում ենք, թուրք ազգի ալփական-թուրքճիական սահմանումից դուրս էին թողնվել «բարոյականություն» և «գեղագիտություն» բառերը և ավելացվել էր «տերիտորիա» բառը։

Պանթուրքականները վճռականապես մերժեցին նաև պանիսլամականների կողմից «մահմեդական ազգին» տված բնորոշումը, ըստ որի այդ «ազգը» բոլոր կրոնական համայնքների՝ մյուսլիմների գումար է։ Նշելով, որ իսլամ ազգ չկա, պանթուրքականներն անհանդուրժելի էին համարում մահմեդականին թուրքի հետ շփոթելը։

Ծաղրելով օսմանիզմի՝ «օսմանյան եղբայրներ» արտահայտությունը, Զիա Գեոքալփը նաև մերժում էր իսլամի այն պատգամը, թե բոլոր մահմեդականները եղբայրներ են։ Դա կեղծ է, անիրական, դա երեսպաշտություն է, որ պետք է մի կողմ նետել, ասում էր նա։ Անատոլիայի թուրքը չի կարող եղբայր լինել նրա հետ, ով մահմեդական է, բայց թուրք չէ, ասենք՝ չի կարող եղբայր լինել սեմական արաբի կամ մարական պարսիկի հետ։ Բայց նույն անատոլիացի թուրքը եղբայր է շամանիզմ դավանող տունգուսի կամ յակուտի հետ, որոնք մահմեդական չեն, բայց թուրքալեզու են։ Պատահական չէ, որ Գեոքալփը և մյուս նշանավոր պանթուրքականները բուռն հարձակումներ էին կատարում մահմեդականության շիա թևի վրա, որին պատկանում են պարսիկները և մի քանի ուրիշ ժողովուրդներ։ Իսկ ինչպե՞ս վարվել այն ժողովուրդների, ասենք՝ կովկասյան թուրքերի (ադրբեջանցիների) հետ, որոնք թուրքալեզու լինելով դավանում են շիիզմ։ Գեոքալփը, որ կրոնի համեմատությամբ առաջնայինը միշտ ազգայինն էր համարում, պարզապես խնամքով շրջանցում էր այդ հարցը։ Իսկ մի շարք ալփական-պանթուրքականներ, անդրադառնալով նման «բացառություններին», գտնում էին, որ այդ խնդիրը հրատապ չէ, նրանով առայժմ զբաղվելու հարկ չկա, իսկ հետագայում, ապագա պանթուրքական կայսրությու-

[1] Ա. Ամուրյան, Հայ դատ, էջ 24։

[2] Նույն տեղը, էջ 25։

նում այն անպայման կլուծվի (իհարկե, նկատի ունեին, որ գալիքում բոլոր թուրքերը դավանելու են սունիզմ)։

Բոլոր թուրքական ժողովուրդների եղբայրությունն ու միությունը համարելով աստվածային նախախնամության պատգամ, պանթուրքականները զգացական-պաթետիկ ոճով սկսեցին երգել վերացական հայրենիքը՝ Թուրանը[1]։ «Գենճ կալեմլերում» հրատարակած «Թուրան» բանաստեղծության մեջ ընթերցողի երևակայությունը բորբոքելով վերածնված հզոր Թուրանի վերացական պատկերով, Զիա Գեոքալփը գրում էր, որ իր սիրտը ներշնչում է թուրքերի նախահայր Օղուզ խանը։ Թուրքերի բնօրրան հայրենիքը Թուրքիան չէ, ասում էր նա, նույնիսկ Թուրքեստանը չէ, այլ հեռու մեծ երկիրը՝ Թուրանը։ «Մի մոռացեք, Օղուզի որդիներ, այն երկրի մասին, որը կոչվում է Թուրան։ Ո՞ւր է Ղրիմը, ի՞նչ է եղել Կովկասի հետ։ Կազանից մինչև Տիբեթ ընկած հողերը գրավված են ռուսների կողմից», դրանք պետք է ետ գրավել արյան գնով։ Այսպես էր Գեոքալփը թուրանիզմի շովինիստական մոլուցքով գրգռում ամբոխին։

Գեոքալփը և ալփականներն ասում էին, թե Թուրան անծայրածիր հայրենիքում ապրող թուրքալեզու բոլոր ժողովուրդները ցեղակից են, նույն ընտանիքից սերված եղբայրներ և նույն արյունն է հոսում նրանց երակներում։ Ապացո՞ւյց։ Թեկուզ թամբիր մի ձի, ճամփա ելիր Դարդանելի ափերից, Անատոլիայով անցիր Թուրքեստան, այնտեղից կտրիր վիթխարի մի ճանապարհ դեպի Ալթայներ ու Հյուսիսային Չինաստան, ապա թեքվիր հյուսիս, կտրիր ողջ Սիբիրը, վերադարձիր Վոլգայի ափերը, այնտեղից անցիր Ղրիմ. այս ողջ տարածքի վրա դու կխոսես մի լեզվով՝ թուրքերեն, և ամենուրեք քեզ կհասկանան քո եղբայրները։ Այդ բոլոր թուրքալեզու ժողովուրդները, աննշան բացառություններով, մահմեդականներ են և խոսում են թուրքերենի զանազան բարբառներով։ Չնայած թուրք էթնիկական խմբերը տերիտորիալ տեսակետից միմյանցից կտրված են, գրում էին ալփականները, սակայն դրանք բոլորն էլ պատկանում են նույն ռասային, թուրանական միասնական ազգին։ Թուրանական բոլոր ժողովուրդները միևնույն ցեղի զանազան աշիրեթներն են, որոնք անցյալում միանում և կազմում էին Ոսկե հորդայի, չինգիզների մեծ կայսրության նման հսկա պետական-քաղաքական միավորումներ։ Եթե անցյալում թուրքական ժողովուրդներն ունակ էին ստեղծելու նման ընդհանուր պետական միավորումներ ու միություններ, ապա այժմ նույնպես նրանք կարող են հզոր կայսրություն ստեղծել, այս անգամ թուրք միակ անկախ պետության՝ Թուրքիայի գլխավորությամբ։ Դա անխուսափելի է, որովհետև թուրքալեզու բոլոր ժողովուրդները, որոնք ունեն նույն հոգեբանությունը, սկսել են գիտակցել, որ իրենք թուրք են, մեկ ազգի զավակներ։ Պատմությունը կրկնվում է, պատմությունը պետք է կրկնվի. այս է նախախնամության պատվիրանը։ Եվ պետք է փառաբանել այդ կրկնվող պատմությունը, անցյալի մեծ դեմքերին, ուժի աստվածներին՝ Աթիլլային, Արփ Արսլանին, Տուղրիլին, Թեմուրլենկին, անողոք Չինգիզ խանին։

Պանթուրքականների մոտ անզուսպ հիացմունք էին առաջ բերում «թուրանական մեծ ցեղի» երևակայական բարեմասնությունները՝ ֆիզիկական քաջությունը, ամուր ջղերը, տոկունությունը, հերոսությունը, վճռականությունն ու խիզախությունը, զինվորական տաղանդը, սակավապետությունը, բնազդական համերաշխության և կարգապահության ոգին, այլ խոսքով՝ զինվորներ ժողովելու, բանակներ կազմելու, երկրներ նվաճելու և բռնակալելու, շահագործելու ու քանդելու անզիջում մոլուցքը։ Երկինք բարձրացնելով այս հատկությունները, պանթուրքականները, իհարկե, ամեն կերպ ժխտում էին իրենց վաշկատուն ու արկածախնդիր նախահայրերին վերագրած բարբարոսությունները, նրանց ավարառություններն ու ավերները, սպանություններն ու կոտորածները։ Թուրքը ոճիր չի գործել, ասում էին նրանք, թուրքերն ուղղակի տիրապետող և հրամայող ցեղ են, նրանք աշխարհ են եկել իշխելու համար։ Թուրքն ունի նյարդային և մկանային անսպառ ուժ. հենց այդ առանձնաշնորհով էլ

[1] Թուրանը ծագումնաբանությամբ պարսկերեն բառ է, որն առաջին անգամ հիշատակվել է հին պարսկական զորոաստրիզմ կրոնի սուրբ գրքերի ժողովածու «Ավեստայի» մեջ Թուրա կամ Թուրիա ձևով։ Ըստ «Ավեստայի» Թուրանը մեկն էր այն երեք եղբայրներից, որոնցից սերվել են մարդկային ցեղերը։ Մյուս երկու եղբայրներն էին Արիան, որ տիրացավ Իրանին, և Սայրիման, որին բաժին ընկան արևմտյան երկրները։ Պատմաբանների վկայությամբ, «Թուրան» ասելով առաջներում նկատի են ունեցել նախկին Թուրքեստանը, առանձնապես Իսսե-կուլ տարածքը և Ալթայի լեռները շրջապատող վայրերը։ Այդ վայրերում ապրած, իսկ հետագայում Ասիայի ու Եվրոպայի այլ տարածքներում բնակություն հաստատած ժողովուրդները, հնում ստանալով «Թուրանի ժողովուրդներ» և «Թուրանի ցեղեր» անունը, հետագայում էլ պահպանեցին այդ անվանումը։

նա բարձր է դասված մյուս բոլոր ազգերից ու ռասաներից։ Ավելին, պանթուրքական փիլիսոփայության մեջ զարգացվում էր նաև այն տեսակետը, թե վրա է հասել թուրանների համաշխարհային տիրապետություն հաստատելու ժամանակը, թե բոլոր ազգերն անցնում են ծննդի, զարգացման, հզորացման ու վայրէջքի փուլերը։ Հետևապես իրենց դարն ապրել ու պատմության ետնախորշերն են մտել Հարավային Ասիայի և Աֆրիկայի ցեղերն ու ժողովուրդները, պարսիկները, եգիպտացիները, որոնք այլևս ասելիք ու անելիք չունեն։ Իրենց փառքի ու հզորացման բարձրակետին հասած եվրոպական ժողովուրդները նույնպես աստիճանաբար վայրէջք են ապրում, նրանք ևս գտնվում են անկման փուլի եզրին և մի քանի տասնամյակ հետո կիջնեն պարսիկների, եգիպտացիների և անհուսորեն այլասերման դատապարտված այլ ժողովուրդների մակարդակին։ Աստվածային նախասահմանմամբ եկել է Կենտրոնական Ասիայի ժողովուրդների ժամը։ Ապագան նրանցն է։ Առնական, առողջ, հնարամիտ ու տաղանդավոր թուրք ազգին՝ բոլոր ազգերից լավագույնին է վիճակված տիրող լինելու։ Նրա դրոշն է հաղթական։ Նա է ի վիճակի կենարար թուրանական թարմ արյունը ներարկելու զառամած աշխարհի թոշնած երակներին, կյանքի կոչելու նրան։ Նա անպայման վերականգնելու է ցեղի անցյալ մեծությունը, հեռավոր հայրենիքը, հեռավոր փառքը[1]։

Իսկ ո՞րն էր «թուրք աշխարհը» կամ «Թուրան» կոչվածը, որո՞նք էին պանթուրանականների կոնկրետ տերիտորիալ հավակնությունները։

Այս հարցում պանթուրքականները հենց սկզբից տարակարծիք եղան, «թուրք աշխարհի» սահմանները գծելիս հանդես չբերեցին միաբանություն։

Առավել ծայրահեղ պանթուրքականները առաջ էին քաշում առավելագույն ծրագիր, այն է՝ ստեղծել «Մեծ Թուրան», որի սահմանները պետք է տարածվեին Ճապոնական ջրերից մինչև Սկանդինավյան լեռները և բևեռային օվկիանոսից մինչև Տիբեթի բարձրավանդակը[2]։ Դրանց մի մասը «Մեծ Թուրանի» մեջ մտցնում էր այն բոլոր տարածքները, ուր թուրքը երբևիցե (լինի միջնադարում, թե դրանից առաջ) ոտք էր դրել։ Նրանք պահանջում էին նոր ստեղծվելիք կայսրության սահմանների մեջ ներառել նաև մահմեդական շատ երկրներ, որոնց ժողովուրդները թեպետ թուրքալեզու չեն, բայց նրանց իշխող արքայական տները երբեմն ունեցել են թուրանական ծագում։ Մասնավորապես նրանք նկատի ունեին Հնդկաստանի մեծ մասը, Աֆղանստանը, Պարսկաստանը, արաբական երկրները, որոնք պետք է վասալական սկզբունքներով մտնեին «Մեծ Թուրանի» մեջ։ Այլ խոսքով, ծայրահեղ հիվանդ երևակայության տեր պանթուրանականների համար «Մեծ Թուրանը» Մարոկկոյից ձգվում է մինչև Կորեա։ «Մերն է այն երկիրն ընդարձակ, որ երեք աշխարհներ է ընդգրկում»,— գրում էր թուրք ազգային բանաստեղծ Մեհմեդ Էմինը։ Ավելին, Նրանցից ոմանք «արյունակից» ժողովուրդներ համարեցին բուլղարներին, հնագույն ֆիննո-ուգրերին, հետևապես՝ ֆիններին, էստոնացիներին, հունգարներին և այլն[2]։ «Չկա ավելի դժվար գործ, քան որոշել աներևակայելի չափերով ընդարձակ և հպարտ թուրքական աշխարհի իսկական սահմանները»,— ասում էր Ահմեդ Աղաևը։

Պանթուրանականների մյուս, այսպես կոչված «իրատես» մասը քննադատաբար էր մոտենում ծայրահեղ թուրանականների պահանջներին, աշխատում էր ներկայանալ «գիտականության» թիկնոցով։ «Իրատես» պանթուրանականները հանդես էին գալիս «Փոքր կամ նոր Թուրան» ստեղծելու պահանջով, «մեծահոգաբար» թուրանյան կամ Ուրալ-Ալթայան «մեծ ընտանիքը» սահմանափակելով զուտ թուրքալեզու ժողովուրդներով բնակեցված տարածքներով՝, այսինքն՝ 4 միլիոն քառ. կիլոմետր տարածությամբ։

---

[1] Թուրքական առասպելներից մեկի համաձայն մի ժամանակ թուրքերը պարտություն կրելով, թաքնվել են էրգենեկոնի լեռներում և այնտեղ, առանց դուրս գալու, մնացել 400 տարի։ Վերջապես աստված գթացել է և նրանց օգնության է ուղարկել «գորշ գայլին» (բոզքուրթ) և ուղեկցող Բերտելինին։ Դրանց աջակցությամբ թուրքերը ջախջախել են իրենց թշնամիներին և դուրս եկել էրգենեկոնից։ Ինչպես պնդում էին պանթուրքականները, այդ ժամանակից էլ սկսվում է թուրք ազգի հզորության ծաղկումը (տե՛ս ж. «Большевик», № 10—11, май-июнь, 1944, էջ 82)։

[1] Տե՛ս Ա. Ս. Համբարյան, Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ագատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908—1914), էջ 19։

[2] Հնագույն ֆիննո-ուգրերը եղել են ֆիններ, էստոնացիներ, մարիներ, կոմիներ, խանտերի, մանսիներ, հունգարացիներ և այլ ժողովուրդների ընդհանուր նախնիները։

[3] Տե՛ս Ս. Սապահ-Գյուլան, Պատասխանատուները, էջ 136։

«Փոքր Թուրանի» սահմանները «իրատես» պանթուրանականները տարածում էին Կ. Պոլսից մինչև Բայկալ լիճ և Մոնղոլիայից մինչև Կազան։ Այս սահմանների մեջ նրանք ներառում էին Բալկանները, Փոքր Ասիան, Ղրիմը, Կովկասը, Աստրախանը, Վոլգայի ափերը, Սարատովը, Սամարան, Կազանը, Ուֆան, Օրենբուրգը, Սիբիրը, Միջին Ասիան, Կասպիականի բոլոր եզերքները, Հյուսիսային և Հարավային Ադրբեջանները։

«Իրատես» պանթուրանականներն առաջ էին քաշում «թուրք մեծ ընտանիքի» էթնիկական կազմի վերլուծության երկու տարբերակ։ Առաջին տարբերակով նրանք այդ «ընտանիքի» մեջ էին ներառում հետևյալ «արյունակից» ժողովուրդներին. սիբիրյան թուրքեր (կիրգիզներ, ղազախներ, ուզբեկներ, կարակալպակներ, թուրքմեններ), պովոլժյան թուրքեր (Կազանի թուրքեր, բաշկիրներ, չուվաշներ), տրուխմենյան թուրքեր (կարաիմներ, նոգայացիներ, կումիկներ, կարաչաևցիներ), արևմտյան թուրքեր (իրաքյան, սիրիական, անատոլիական, բուլղարական թուրքեր, գագաուզներ, Հունաստանի, Մակեդոնիայի, Ռումինիայի և Կիպրոսի թուրքեր), ազերի թուրքեր (ադրբեջանցիներ և իրանական թուրքեր)։ «Թուրք մեծ ընտանիքի» երկրորդ տարբերակով Ուրալ-Ալթայան «մեծ ընտանիքը» նրանք սահմանափակում էին հետևյալ հինգ ստորաբաժանումների մեջ. ուգրոֆիննական, սամոյեդական, տունգուսական, մոնղոլական և թուրքական։ Վերջին՝ «թուրք» ստորաբաժանման մեջ մտցնում էին. սիբիրյան (յակուտներ), կենտրոնական Ասիայի (Չինական Թուրքեստանի, Կիրգիզիայի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Թուրքմենիայի և այլն), Վոլգայի ղփչաղներ, թաթարներ, բաշկիրներ և այլն), Սև ծովի (Ղրիմի թաթարներ, կովկասյան թուրքեր, ադրբեջանցիներ), արևմտյան (Իրանական Ադրբեջանի և Թուրքիայի) թուրքերին։

Այսպիսով, Թուրանի մեջ էին մտցվում ժողովուրդներ, որոնք ցրված են վիթխարի տարածքի վրա, էթնիկական տեսակետից իրարից անջատ են, այլազավան, խոսում են տարբեր լեզուներով ու բարբառներով, անցել են պատմական տարբեր ճանապարհներ, ենթարկվել զանազան քաղաքակրթությունների։

«Իրատես» պանթուրանականների մի մասը, ճշտելով թուրքականության և թուրանականության փոխհարաբերությունը, «զտարյուն թուրք» հասկացությունը տարածում էր ավելի սահմանափակ աշխարհագրական տարածքի վրա։ Նրանք որդեգրել էին «թուրք» հասկացության մասին Զիա Գեոքալփի «Թուրքճյուլյուն էսասլարը» («Թուրքիզմի հիմունքները») գրքի գաղափարը։ Գեոքալփը և ալփականները գտնում էին, որ «թուրանյան մեծ ընտանիքի» ամենաարժեքավոր անդամը Օղուզիստանի թուրքերն են։ Օղուզները, ըստ ալփականների, Անատոլիայի, Կովկասի և Հյուսիսային Իրանի թուրքերն են, ադրբեջանցիները և թուրքմենները։ Սրանք բոլորը, որ սերվել են Օղուզ խանից և հանդիսանում են նրա թոռները, մի քանի դար առաջ ապրում էին միասին, համերաշխ, իբրև մի ընտանիքի զավակներ։ Օղուզներն ունեն ընդհանուր լեզու, գրականություն, մշակույթ, բարքեր, սովորույթներ։ Օղուզիստանը մոտավոր ապագայի «Մեծ Թուրքիան» է, որի մասերն էին կազմելու Անատոլիան, Ադրբեջանը, պարսկական Ատրպատականը, Թուրքմենստանը։

Եվ այսպես, պանթուրքիզմը մարմին առավ թուրքճիություն-օղուզճիություն-թուրանճիություն եռահյուսվածքից։ Թուրքճիությունն իդեալի և ռասայի մաքրության հիմքը, ցեղի ոգու պահեստարանն է։ Օղուզճիությունը գերագույն նպատակին հասնելու միջանկյալ օղակ է։ Թուրանճիությունը վերջնական նպատակն է, երրորդության պսակը, գերագույն իդեալը։

Իսկ ինչպիսի՞ն պետք է լիներ ապագա թուրանական կայսրության պետական կառուցվածքը, պանթուրքական քաղաքական միության ձևը։ Այս հարցում պանթուրքիզմի տեսաբաններն առաջ քաշեցին երկու տեսակետ։ Նրանց մի մասը՝ հատկապես երիտթուրքական պանթուրքականները, իսկ հետո նաև՝ մուսավաթական պանթուրքականները հանդես եկան թուրանական երկրներն անվերապահորեն Թուրքիային կցելու օգտին։ Դրանք կենտրոնացված միության (Մերքեզի վահդեթճի) կողմնակիցներն էին, որոնք գտնում էին, որ թուրանիզմի առաջապահները Թուրքիան և Ադրբեջանն են, իսկ մյուս թուրանական երկրները կանգնած են երկրորդ և երրորդ գծերի վրա։ Մյուս մասը, առավելապես Թուրքիայից դուրս բնակվող պանթուրքականները հանդես էին գալիս «մայր երկրին»՝ Թուրքիային դաշնակցային սկզբունքով կապվելու օգտին։ Սրանք ապակենտրոն միության (Ադեմ ի մերքեզի վահդեթճի) կողմնակիցներն էին։

Ահա պսակը գաղափարական այն ժառանգության, որ 19-րդ դարի 60-ական թվականներից մինչև առաջին համաշխարհային

պատերազմի նախօրյակը, այսինքն՝ շուրջ կեսդարյա ժամանակաշրջանում հրապարակ էր բերել թուրք ազգային բուրժուազիան։

Արդեն Բալկանյան պատերազմների ընթացքում և դրանցից կարճ ժամանակ անց Թուրքիայի մտավորականության և պետական պաշտոնյաների բացարձակ մեծամասնությունը պանթուրանականներն էին։ Նրանք խանդավառ էին, որ, կորցնելով «եվրոպական մի քանի նահանգներ», դրա փոխարեն Թուրքիան շահել է շատ ավելի մեծ բան՝ «իդեալ հայրենիքը», ասիական բնաշխարհը, որից նա պետք է ծծի իր կենսունակության ավիշը։

Լենկթեմուրի և թուրանական մյուս նվաճողների հմայքը նոր ուժով վերակենդանացավ։ Մասսայական ժողովներում և դասախոսական ամբիոններից բողոքի բուռն ու ցասկոտ խոսքեր էին ասվում նրանց հասցեին, ովքեր դեռ հավատում էին օսմանիզմի գաղափարներին։ Օսմանը, ասում էին պանթուրանականները, ալթայան մի թուրք էր միայն, որն իր բանակով նվաճեց այս երկիրը և իր անունը փոխանցեց երկրին ու ժողովրդին։ Ուրեմն իսկական թուրքի համար պատվաբեր է կոչվել ոչ թե թուրքերից մեկի՝ Օսմանի անունով, այսինքն՝ կոչվել «օսմանյան թուրք», այլ ավելի պատվաբեր է կոչվել այն ժողովրդի անունով, որին պատկանում էր նաև ինքը՝ Օսմանը, այսինքն՝ պարզապես կոչվել թուրք։

Պանթուրքիզմի գաղափարախոսությունը թուրքալեզու բոլոր ժողովուրդների սեփականությունը դարձնելու համար թուրք ազգային բուրժուազիան գործի դրեց եղած բոլոր միջոցներն ու հնարավորությունները։ Իթթիհադի հովանու ներքո պանթուրքիզմի լայն տարածմանը լծվեցին գրականությունն ու պատմագրությունը, արվեստն ու փիլիսոփայությունը։

Քանի որ ապագա թուրանական կայսրության մեջ «թուրք ազգի» բոլոր հատվածները միավորող և այնտեղ թուրքական գերիշխանություն հաստատելու հիմնական միջոցը միասնական լեզուն էր լինելու, ուստի պանթուրանականները արտակարգ կարևորություն տվեցին թուրքերենի ռեֆորմին, այսինքն՝ նոր թուրքերենի ստեղծմանը։ Իթթիհադականները թուրք մտավորականությանը կոչ էին անում՝ գրել շատ պարզ, թուրք հասարակ ժողովրդին և բոլոր թուրքալեզու ժողովուրդներին հասկանալի լեզվով։ Նոր թուրքերենի համար բառերի անսպառ գանձարան

դարձավ Հնդկաստանի Մեծ Մողոլ կայսրության հիմնադիր, Թեմուրի հետնորդ Զահիրեդդին Մուհամմեդ Բաբուրի հռչակավոր հիշատակարանը՝ «Քուդաքթուբիլիքը»։ Պանթուրքականները համոզված էին, որ թուրքալեզու մյուս ժողովուրդների առաջադիմությունը հնարավոր է միայն այն դեպքում, եթե նրանք յուրացնեն անատոլիական թուրքերի կուլտուրան, սովորությունները, թուրքերենի ստամբուլյան բարբառը։

Ստեղծվեցին պանթուրքիզմի գաղափարախոսությունը մեկնաբանող մի ամբողջ շարք գրքույկներ, որոնք գրեթե ձրի տարածվում էին բնակչության բոլոր խավերի մեջ։ Դպրոցներում ուսումնական ծրագրերից հանվեցին եղած դասագրքերը և մտցվեցին նորերը, որոնք գրված էին թունդ ազգայնականության ոգով, ներծծված համաթուրանականության մոլի ռասիզմի գաղափարներով։

Պանթուրքիզմի դիրքերից «մաքրվում» էին կրոնական «սուրբ գրքերը»։ Առաջին անգամ թուրքերեն թարգմանվեց և «Իսլամ մեճմուասը» հանդեսում լույս տեսավ մուսուլմանների սուրբ գիրքը՝ Ղուրանը։ Մինչ այդ մեծ մեղք էր համարվում սուրբ գրքի թարգմանությունը. մահմեդականության գոյության ամբողջ ժամանակաշրջանում մուսուլմանական ոչ մի ժողովրդի լեզվով այն դեռ չէր թարգմանվել ու հրատարակվել։ Ղուրանը մեչիդներում կարդացվում էր միայն արաբերեն[1]։

Փոփոխություններ էին կատարվում նաև դարերով սրբագործված կրոնական ծեսերի մեջ, դրանք հարմարեցնելով պանթուրքիզմի պահանջներին։ Այսպես, օրինակ, ավանդույթի ուժով Թուրք մուսուլմանն աղոթելիս երեսը դարձնում էր հարավ՝ Արաբիա, մահմեդականության օրրանը։ Այժմ նույն թուրքի մեջ արմատավորվում էր աղոթելիս երեսը դեպի արևելք՝ Թուրանիա դարձնելու սովորությունը[2]։

Պանթուրքիզմի հողի վրա արագորեն կյանքի էին կոչվում ծայրահեղ արմատական-շովինիստական բազմաթիվ խմբեր ու կազմակերպություններ, մեկը մյուսի հետևից հրապարակ էին գալիս ակումբներ, գրական, մարզական, սկաուտական, ուսա-

---

[1] Տե՛ս Ջ. Ս. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914—1916 թթ., Երևան, Հայաստան, 1965, էջ 74։

[2] Տե՛ս նույն տեղը։

նողական միություններ և ընկերություններ։ Դրանց թվում իրենց թունոտ շովինիզմով հատկապես աչքի էին ընկնում «Նոր կյանք» («Yeni hayat») խումբը, Զիա Գեոքալփի հիմնած «Թուրք Եորդու» («Թուրք երկիր») ակումբը և այլն։

1912 թվականին, երբ դեռ շարունակվում էր բալկանյան առաջին պատերազմը, Կոստանդնուպոլսում հիմնադրվեց թուրքական ուսանողական «Թուրք օճաղը» («Թուրքական ընտանիք») ընկերությունը։ Սկզբնական շրջանում դրանում համախմբված մտավորականները նպատակ էին դրել «օճաղն» օգտագործել թուրքական լեզուն մշակելու, թուրքական գրականությունն ու արվեստը զարգացնելու համար, մի խոսքով՝ նպաստելու թուրք ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացմանը։ Կարճ ժամանակում ընկերությունը մոտ 60 մասնաճյուղեր՝ ազգային ակումբներ բացեց Անատոլիայի զանազան վայրերում, ինչպես նաև թափանցեց Ռուսաստանից ներս, բաժանմունքներ ստեղծելով Կովկասում և Ռուսաստանի թուրքալեզու այլ տարածքներում։ Շատ չանցած այդ լայն ցանցն իր ազդեցության տակ առավ իթթիհադը։ «Օճաղները» դարձան պանթուրքական ոգով բնակչությանը դաստիարակելու արդյունավետ միջոցներ։ Դրանց դռներն ամուր փակվեցին ոչ թուրք տարրերի առջև՝ լինեին դրանք մահմեդական թե քրիստոնյա։ Ակումբներում անդամագրվում էին միայն թուրքերը՝ կառավարական ամենաբարձր պաշտոնյայից մինչև աղքատը։ Այստեղ կազմակերպվում էին երեկոյան դասընթացներ, գրական-գեղարվեստական երեկույթներ, ձրի բաժանվում էին պարբերականներ, գրքեր ու պլակատներ։ «Թուրք օճաղներում» կազմակերպվում էին հրապարակային դասախոսություններ, զրույցներ թուրքերի «փառավոր» անցյալի, թուրքական «հանճարների» և «հերոսների», թուրք ցեղերի կյանքի ու սովորությունների մասին։ Այլ խոսքով՝ դրանց գործունեության հիմնական բովանդակությունը թուրք ազգի բացառիկության, այլ ժողովուրդների վրա նրա տիրապետության հաստատման ռասայական քարոզն էր[2]։

Անդրադառնալով «Թուրք օճաղների» գործունեությանը, սո-

[1] Տե՛ս Ջ. Ս. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914—1916 թթ., էջ 77։

[2] Տե՛ս նույն տեղը։

վետական թուրքագետ Ա. Ֆ. Միլլերը նշում է, որ «ազգային գաղափարը նենգափոխելով ռասայականով և արտահայտելով թուրքական բուրժուազիայի և կալվածատերերի զավթողական ձգտումները», երիտթուրքերն այդ ակումբները «վերածեցին իրենց քաղաքականության» պարզ գործիքի[1], դրանք «ուղղեցին պանթուրքիզմի, այսինքն՝ շովինիզմի ուղիով»[2]։ Նրանք «թուրք օճաղները» սկսեցին լայնորեն օգտագործել «Բոսֆորից մինչև Ալթայ բոլոր «թուրքերի» միավորման» (այսինքն՝ թուրքական սուլթանին ենթարկելու) անհրաժեշտությունը ապացուցելու համար[3]։

Ռասայական շովինիստական նման գործունեություն էին ծավալել նաև պանթուրքական-իթթիհադական այլ կազմակերպություններ ու խմբեր, որոնցից հատկապես առանձնանում էր 1914 թվականի հունվարին էրզրումում հիմնված տեռորիստական, ջարդարարական «Թուրքերի ուժը» («Թուրք գյուչի») կազմակերպությունը, որի գլուխն էր կանգնել հայակեր թուրք փաշաներից մեկը՝ Համիդը[4]։ Կազմակերպության նշանը էգ գորշ գայլն էր, որը խորհրդանշում է թուրքերի նախամորը։ Գորշ էգ գայլի պատկերները միջնադարում իրենց ռազմական դրոշների վրա կրում էին հեթանոսական օղուզները, ինչպես նաև թուրքական գնդերը՝ վերահաս համաշխարհային պատերազմի տարիներին։

Օսմանյան կայսրության մեջ ծայր առած թուրքական վայրագ շովինիզմը լայն արձագանք էր գտնում Ռուսաստանի թուրքալեզու բուրժուական ազգայնականների գործունեության մեջ։

Ռուսաստանի թուրքական գործակալներին, էմիսարներին և ագիտատորներին ակտիվորեն աջակցում էին Թուրքիայում հիմնավորված ռուսաստանյան պանթուրքական և պանիսլամական գործիչները, որոնք գլխավորապես առևտրականների անվան տակ անցնում էին Ռուսաստան և կազմակերպչական գաղտնի աշխատանքներ տանում մուսուլման բնակչության շրջանում։ Թուրքական էմիսարները սերտ կապեր էին

[1] Տե՛ս Ա. Ֆ. Миллер, Краткая история Турции, էջ 137։

[2] А. Ф. Миллер, Очерки новейшей истории Турции, с. 21.

[3] Տե՛ս А. Ф. Миллер, Краткая история Турции, էջ 137։

[3] Տե՛ս Ա. Ս. Համբարյան, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908—1914), էջ 40։

հաստատում տեղական մուսուլման «երևելիների» հետ, նրանց աջակցությամբ հրավիրում հավաքներ ու ժողովներ, ծավալում բանավոր և գրավոր ագիտացիա[1]։

Պանթուրքականների ուշադրության կենտրոնում ամենից առաջ Կովկասն էր։ Տեղի պանթուրքականները և պանիսլամականները խանդավառ ու անմնացորդ նվիրումով փարվելով թուրքական բուրժուազիայի ցնորական երազին, շրջագայում էին Ռուսաստանում, այցելում մուսուլմանական շրջաններ, հրահրում շովինիստական կրքեր, տենչում օր առաջ տեսնել ռուսական կայսրության կործանումը և Թուրքիայի հաղթանակը[2]։ 1913 թվականի մայիսի 15-ին Թիֆլիսի ժանդարմական վարչության պետը հայտնում էր, որ պարբերաբար հայտնաբերվում են արկղեր, որոնք պարունակում են մեծ թվով պանիսլամական բովանդակությամբ թռուցիկներ[3]։

Երիտթուրքերի տեսակետները լիովին բաժանում և նրա պրակտիկ քաղաքականությունն իրականացնելու համար Անդրկովկասում մեծ ջանքեր էին գործադրում հատկապես ադրբեջանական բուրժուական ազգայնականները, պանթուրքականներն ու պանիսլամականները։

1911 թվականին ստեղծվեց ադրբեջանական ազգային բուրժուազիայի մարտնչող քաղաքական կազմակերպությունը՝ «Մուսավաթ» («Հավասարություն») կուսակցությունը[4], որը հենց սկզբից շեշտակի կերպով թեքվեց դեպի պանիսլամիզմ և պանթուրքիզմ[5]։ Արդեն հաջորդ՝ 1912 թվականին մուսավաթականները պանիսլամիզմը և պանթուրքիզմը համարելով ղեկավար գաղափարախոսություններ, դրանք լայնորեն պրոպագանդում

[1] Տե՛ս Մ. Արզումանյան, *Հայաստան 1914—1917*, Երևան, Հայաստան, 1969, էջ 138։

[2] Տե՛ս նույն տեղը։

[3] Տե՛ս **А. О. Арутюнян**, Кавказский фронт 1914—1917. Ереван, Айастан, 1971, էջ 45։

[4] Ա. Գյուլխանդանյանը գրում է. «Մեր շարժումները դերազանց ազդեցություն են ունեցել Անդրկովկասի մեր հարևան թաթարների վրա, որոնց «Մուսավաթ» կուսակցության կազմողները, իրենց իսկ վկայությամբ, Հ. Յ. Դաշնակցության ակներևներն էին և ամեն կերպ աշխատում էին «Մուսավաթի» ծրագիր-կանոնագիրը նմանեցնել դաշնակցության» (տե՛ս Ա. Գյուլխանդանեան, Ազգային շարժումների դրդապատճառները ԺԹ դարում, Փարիզ, 1939, «Նոր մասնաչար», թիվ 1, էջ 26)։

[5] Տե՛ս «История СССР...», т. VI, էջ 456։

էին մամուլի իրենց պաշտոնական օրգանների՝ «Յէնի հագիգաթ» («Նոր ճշմարտություն») և «Սեդա» («Ձայն») թերթերի, «Շելալե» («Ջրվեժ»), «Յէնի ֆեյուզաթ» («Նոր բարիք»), «Շեհարի սահիբ» հանդեսների էջերում։

Մուսավաթականների նախաձեռնությամբ Անդրկովկասում լայն շարժում ծավալվեց մուսուլմանական դպրոցները պանթուրքիզմի և պանիսլամիզմի ոգով ռեֆորմի ենթարկելու համար։ Այդ տեսակետից լայն աշխատանք էր տանում «Մուսավաթի» հովանավորությամբ գործող «Նիջադ» ընկերությունը։ 1912 թվականից սկսած Բաքվի, Ելիզավետպոլի, Շուշիի, Շամախիի, Աղդաշի, Գեոկչայի, Պետրովսկու, Երևանի և երկրամասի այլ վայրերի մուսուլմանական դպրոցներում դասավանդումը տարվում էր նոր, փոփոխված ծրագրերով։

Քարոզելով դասակարգային համերաշխություն ադրբեջանական ազգի ներսում, ասված է Ադրբեջանի կոմկուսի պատմության ուրվագծերում, «մուսավաթականները ձգտում էին նացիոնալիզմի թույնով թունավորել ադրբեջանական բանվորների ու գյուղացիների դիտակցությունը և նրանց շեղել հեղափոխական պայքարից։ Պանիսլամիզմը և պանթուրքիզմը, սակայն, մուսավաթականներին չէր խանգարում օգտագործելու հնարավոր ամեն բան, որպեսզի ընդդեն ցարական կառավարության նկատմամբ հավատարիմ հպատակի իրենց զգացմունքները»[1]։ Ադրբեջանական բուրժուական նացիոնալիզմի պարագլուխներ Ահմեդ Աղաևը, Մուհամմեդ Շահթախթինսկին, Ալի Մերդան Թոփչիբաշևը, Աբդուրրաշիդ Իբրահիմովը, Ֆարիխ Քյարիմովը և շատ ուրիշներ ոչ միայն Ադրբեջանում, այլև ողջ Կովկասում դարձան պանթուրքական նացիոնալիզմի դրոշակակիրներ։ Պանթուրքիզմի և պանիսլամիզմի գաղափարների իրականացմանը մոլեռանդորեն էր լծված հատկապես «Մուսավաթի» պարագլուխ Մ. Է. Ռասուլզադեն[2]։

Հարկ է նշել, որ «Մուսավաթ» կուսակցության ղեկավարները պանթուրքիզմի հողի վրա շատ դեպքերում իրենց ավելի սանձարձակ էին պահում, քան նույնիսկ իթթիհադի պարագլուխները։ Մուսավաթականներն իրենց իբրև կատաղի շովի-

[1] «Очерки истории Коммунистической партии Азербайджана». Аз. гос. издательство, 1973, с. 171.

[2] Այդ մասին տե՛ս «История Азербайджана», т. 2, էջ 718։

նիստներ դրսևորեցին մասնավորապես 1913 թվականին Բայազետում էնվեր փաշայի ղեկավարությամբ կայացած պանթուրքականների խորհրդաժողովում։ Այստեղ տոն տվողները հենց «Մուսավաթի» պարագլուխներն էին՝ Աղաևը, Ռասուլզադեն, Թոփչիբաշևը։ Երբ քննարկվեց այն հարցը, թե Ռուսաստանի հետ Թուրքիայի առաջիկա սպասվելիք ռազմական ընդհարման ժամանակ կովկասյան թուրքերը ինչպես պետք է համաձայնեցնեն իրենց գործողությունները թուրքական զորքերի հետ, Ահմեդ Աղաևը կտրուկ պահանջ առաջադրեց պատերազմի հենց առաջին օրը Ադրբեջանը և Հյուսիսային Կովկասը հայտարարել Թուրքիայի անբաժանելի մաս։

Պանթուրքիզմի վերջնական ձևավորումից հետո այն բազմաթիվ հետևորդներ ունեցավ նաև Հյուսիսային Կովկասում, Ղրիմում, Թաթարիայում ու Բաշկիրիայում։ Աճեց պրոթուրքական համակրանքը «Մուսուլմանական միության» մեջ, որը միջոցներ էր ձեռնարկում Պովոլժիեի և Ղրիմի թաթարների միջև կապերը ամրապնդելու ուղղությամբ[1]։ Համերկրացի թաթար ազգայնական գործիչներին իր հոդվածներով և հրահանգներով Թուրքիայից ոգեշնչում էր Յուսուֆ Աքչուրան։

Պետք է ասել, սակայն, որ համաշխարհային պատերազմին նախորդած 3—4 տարիներին Թաթարիայում զգալի չափով թուլացել էր պանթուրքականների և պանիսլամականների պրոպագանդան։ Դա բացատրվում էր նրանով, որ այդ ժամանակ Ռուսաստանում պանթուրքական շարժման գլխավոր կենտրոնը դարձել էր Ադրբեջանը, որտեղ բուրժուական նացիոնալիստների հետ միասին պանթուրքական-պանիսլամական գործունեություն էին ծավալել զգալի թվով թաթար հասարակական գործիչներ, գրողներ, հրապարակախոսներ։

Թաթարիայում տեղի ազգայնական գործիչները երիտթուրքական պանթուրքականների օրինակով ձգտում էին հնարավորին չափ արմատական ռեֆորմի ենթարկել մուսուլմանական դպրոցները, դրանք հարմարեցնել բարձրացող թաթար բուրժուազիայի շահերին։ Բայց նրանք առավել մեծ ակտիվություն հանդես բերեցին իսլամը բարեփոխելու գործում։ Նորից այդ հարցի շուրջը պայքարը թեժացավ բարեփոխման կողմնակիցների՝ ջադիդների և դրանց հակառակորդների՝ քադիմականների միջև։

[1] Տե՛ս «История СССР...», т. VI, էջ 456։

Այդ տարիներին Կազանում հատկապես լայն գործունեություն էր ծավալել մոլլա Մուսա Բիգիևը, որի քարոզներն այն ժամանակ բավական մեծ աղմուկ հանեցին՝ հետաքրքրություն առաջ բերելով նրա նկատմամբ։ Վեճերի տեղիք տվեցին Բիգիևի չորս գրքերը, որոնք մեկը մյուսի հետևից թաթարերեն լույս տեսան Կազանում[1]։

Իբրև կանոն, Բիգիևի գրքերից յուրաքանչյուրը նվիրված էր իսլամական կրոնի մի որևէ մասնակի հարցի։ Բայց դուրս գալով քննարկվող տվյալ հարցի շրջանակներից, հեղինակը շոշափում էր իսլամի հետ առնչվող բազմաթիվ ուրիշ հարցեր, քննադատաբար վերլուծում դրանք։ Ըստ որում նա իր իսկ առաջադրած հարցերին այնպիսի պատասխաններ էր տալիս, որ ընթերցողի մոտ անմիջապես կասկածներ էին ծագում ավանդական իսլամի շատ դրույթների ճշմարտացիության նկատմամբ։ Այդ տեսակետից Բիգիևի գրքերն իրենց հարցադրումներով ավանդական իսլամի համար շատ ավելի վտանգավոր էին, քան, ասենք, Իսմայիլ Գասպրինսկու և մյուս ջադիդների աշխատությունները։

Մ. Բիգիևի և նորագույն ջադիդների դեմ անզիջում պայքար էին մղում թաթար քադիմականները։ Դրանց մեջ հատկապես մեծ հեղինակություն ուներ Վյատկայի նահանգի Մալմիժե գավառի ավագ մոլլա Իշմուհամեդ Դին Մուհամմեդովը, որն իր քարոզներով, մամուլում ունեցած ելույթներով և տպագրված գրքույկներով բուռն գրոհներ էր կատարում նոր մեթոդականների վրա, մերկացնում «սրբապիղծ հերետիկոսների» նորամուծությունները, պնդում, որ իսլամում անթույլատրելի է որևէ փոփոխություն։ Նրա մոտ ամենախիստ առարկություններ էր առաջ բերում նաև դպրոցներում ուսուցման նոր մեթոդների կիրառումը՝ նստարաններին նստելը, ուսուցումը թաթարերեն և ոչ թե արաբերեն տանելը՝ այն էլ զեմստվոյի վարչությունից ստացված դասագրքերով և այլն[2]։

[1] Մ. Բիգիևի հայացքների շուրջը ծավալված բանավեճերի մասին տե՛ս «Мир ислама», т. II, 1913, вып. IV, էջ 225—240։ Նրա «Պաս երկար գիշերներին», «Մի քանի հարց հասարակայնությանը», «Մուսուլմանության ապագան» գրքերի համառոտ շարադրանքին կարելի է ծանոթանալ նույն տեղում, вып. III և V։

[2] Տե՛ս «Мир ислама», т. II, 1913, вып. XII, էջ 866—869, **А. Аршаруни** и **Х. Габидуллин**, Очерки панисламизма и пантюркизма в России, էջ 17—20։

Ռուսաստանից Թուրքիա գնացող ուխտավորներին քաղիմականները պատվիրում էին օսմանյան իշխանություններին և շեյխ-ուլ-իսլամին հաղորդել բարեպաշտ և ուղղափառ մուսուլմանների իրենց զայրույթը ջադիդների սրբապիղծ գործունեության հանդեպ, իհարկե, բնավ խոսք չասելով այն մասին, որ այդ նույն ջադիդները շատ ակտիվորեն պրոպագանդում են պանիսլամիզմ և պանթուրքիզմ, որոնք արդեն գրված էին թուրքական պետության դրոշին[1]։

Երիտթուրքերի և թաթար բուրժուական նացիոնալիստների ուժգին պրոպագանդայի հետևանքով պանթուրքիզմը թափանցեց նաև Միջին Ասիա և Ղազախստան։

Ռուսական առաջին հեղափոխության պարտությունից հետո բարձրացավ տեղական ազգայնականության ալիքը։ Այդ հողի վրա լայն տարածում գտավ ջադիդիզմը՝ նախ պանիսլամական, ապա և պանթուրքական գաղափարական դրոշով։ Թուրքեստանում ջադիդիզմի առաջին քարոզիչները թաթար նացիոնալիստներն էին, որոնք իրենց գործունեությունն այստեղ սկսել էին արդեն 1907—1908 թվականներին։ Իմպերիալիզմի վերաբերյալ իր «Տետրերում» նշելով, որ ամուր կապ է ստեղծված թաթար մուսուլմանական գործիչների և Թուրքեստանի նրանց հավատակիցների միջև, Վ. Ի. Լենինը գրում էր, որ «հյուսիսից արդեն նրանց շրջանն է ներմուծվում պանիսլամական խառնակչություն։ Ռուսական կառավարությունը վախենում է իսլամի թաթար հետևորդների այդ թափանցումից և ըստ հնարավորին արգելում է նրանց մուտքը Թուրքեստան»[2]։ Թաթար նացիոնալիստները բուռն գործունեություն էին ծավալել հատկապես Ուզբեկստանում։ Համակրանքը թուրքերի հանդեպ Միջին Ասիայում ուժեղացավ 1908 թվականի թուրքական հեղափոխությունից հետո։ Քաղաքներում ստեղծվում էին պանիսլամական խմբակներ և կոմիտեներ։ Դեռ այն ժամանակ ջադիդների աջ թևը բուրժուական լիբերալիզմից շրջվեց դեպի պանթուրքիզմ[3]։ Ավելի ուշ, 1909—1912 թվականներին պանիսլամական և պանթուրքական խմբակներ սկսեցին ստեղծել Միջին Ասիայում հաստատված ադրբեջանցի առևտրականները։ Նրանք, օրինակ, 1913 թվականին պանիսլամական

[1] Տե՛ս **Α. Ի. Крывелев,** История религии, т. II, էջ 283։

[2] **Վ. Ի. Լենին, Երկ, հ. 28, էջ 641։**

[3] Տե՛ս «История СССР...», т. VI, էջ 456։

խմբակներ ստեղծեցին Թուրքմենստանում, Մերվում, որոնք բաղկացած էին թուրքմեն խաներից և բայերից[1]։ Մոտավորապես նույն ժամանակ, կամ քիչ ավելի ուշ, պանիսլամական, ապա և պանթուրքական խմբակներ են ստեղծվում Տաջիկստանում, Կիրգիզիայում, Ղազախստանում։

Իր արմատներով Թուրքիայի հետ սերտորեն կապված էր Ֆերգանայի հովտի, հատկապես Կոկանդի և նրան հարող շրջանների տեղական մուսուլմանական բուրժուազիան։ 1912 թվականին Կոկանդում ստեղծվեց ջադիդների տեղական կուսակցությունը, որը 1914 թվականից սկսեց հրատարակել իր օրգանը՝ «Սադաի Ֆերգանա» թերթը։ Կուսակցությունը և նրա օրգանը Թուրքիայի ջերմ պաշտպաններ լինելով, միաժամանակ արտահայտում էին բայերի, տեղական շովինիստական բուրժուազիայի և ռեակցիոն մուսուլմանական հոգևորականության շահերը[2]։

Թուրքեստանում և Ղազախստանում նույնպես ուժգին պայքար ծավալվեց իսլամի մեջ։ Տիրող հետադիմական ֆեոդալական-կղերական գաղափարախոսության դեմ սուր էին ճոճում ջադիդները։ Այսպես, Կիրգիզիայում հետադիմականների գլուխ կանգնած Արսլանբեկը, Կալբգուլը, Մոլդո Կըլըչը, չհանդուրժելով իսլամի մեջ որևէ նորամուծություն կատարելը, բուռն հարձակումներ էին գործում շատ թույլ, նոր միայն ձևավորվող ազգային բուրժուազիայի ներկայացուցիչների վրա, որոնց շրջանում արդեն սերմեր էր նետել պանթուրքիզմը։

Այս շրջանում նույնպես ցարական կառավարությունը առաջվա պես անզիջում էր պանիսլամիզմի և պանթուրքիզմի հանդեպ։ Բայց միաժամանակ իշխանությունները չէին արգելում իսլամի պրոպագանդան, և դա այն պատճառով, որ մահմեդական կրոնի սպասավորները հանդես էին գալիս ազգային համերաշխության քարոզով, քննադատում, նզովում էին դասակարգային պայքարի մասին ուսմունքը, հավատացյալ մուսուլմաններին կոչ անում ուժգին պայքար մղել հեղափոխականների դեմ։ Մուսուլմանների դասակարգային համերաշխության քարոզը ցարիզմին օգ-

[1] Տե՛ս «Очерки истории Коммунистической партии Туркменистана», издание II, Ашхабад, 1965, էջ 50—51։

[2] Տե՛ս «Труды Узбекского государственного университета им. А. Навои». Новая серия. Выписка 61. Исторический факультет. Изд-во Узб. Госунта, Самарканд, 1956, էջ 210։

նում էր թումբ կանգնեցնելու սոցիալական այն հուզումների առջև, որոնք հեղափոխական նոր վերելքի շրջանում ծավալվում էին նաև երկրի մահմեդական բնակչության շրջանում։ 1912 թվականին տեղի ունեցավ Խիվայի թուրքմենների ապստամբությունը, 1913 թվականին հուզումներ եղան Անդրկասպյան մարզում։ Այդ նույն տարիներին խոշոր ելույթներ սկսվեցին Սեմիրեչիեի դազախների և կիրգիզների շրջանում, իսկ 1914 թվականին հուզումներն ընդգրկեցին Պիշպեկի գավառի կիրգիզներին[1]։

Դասակարգային համերաշխության գաղափարների պրոպագանդման տեսակետից շատ տիպիկ էր Պետերբուրգում ռուսերեն հրատարակվող «Վ միրե մուսուլմանստվա» թերթը և հատկապես 1908 թվականի հուլիսից Փարիզում դարձյալ ռուսերեն լույս տեսնող «Մուսուլմանին» հանդեսը։ Երկու պարբերականների շուրջը համախմբված էին իսլամ նորակիրթ մտավորականության ներկայացուցիչներ, խմբագրություններն իրենց թղթակիցներն ունեին արաբական երկրների մայրաքաղաքներում և Ռուսաստանի մուսուլմանական մի քանի մարզերում։

«Մուսուլմանին» հանդեսի գլխավոր խմբագիր-հրատարակիչն էր շերքեղ Մահմեդ բեգ Խաջեթլաշեն։ Հանդեսի խմբագրությունն իր առջև խնդիր էր դրել՝ նվիրվել Ռուսաստանի մուսուլմանների, մասնավորապես կովկասցի լեռնականների կուլտուրական զարգացման գործին, «դավանակիցներին միավորել առաջադիմության, սիրո և աշխատանքի հողի վրա», նրանց «հաղորդակցել քաղաքակիրթ ժողովուրդներին», խաղաղ և կուլտուրական աշխատանքի՝ «ի բարօրություն և երջանկություն խավար ժողովրդի և պաշտելի Ռուսաստանի»։

Քողարկվելով անկուսակցականության մասին ֆրազներով, «Մուսուլմանինը» և «Վ միրե մուսուլմանստվա» թերթը ակտիվորեն տարածում էին մուսուլմանների դասակարգային դաշինքի գաղափարները և դրանով իսկ ակնհայտորեն հետապնդում որոշակի քաղաքական նպատակներ՝ Ռուսաստանի մուսուլմանական բնակչությանը ամեն կերպ շեղել հեղափոխական շարժումից, բոլոր ջանքերը նպատակամղել լուսավորության և կուլտուրական զարգացման «փոքր գործերի» լուծմանը՝ պնդելով, որ հենց դրանց իրականացման հետ է կապված ժողովրդի կյանքի

[1] Տե՛ս «История СССР...», т. VI, էջ 455։

բարելավումը։ Միայն դրանով կարելի է բացատրել այդ պարբերականների խմբագրությունների անհանդուրժողական վերաբերմունքը մատերիալիզմի, Մարքսի ուսմունքի նկատմամբ, նրանց վախը հեղափոխական նոր գաղափարներից, նրանց հաճախակի և թախանձագին կոչերը Ռուսաստանի, ինչպես նրանց էր թվում, փիլիսոփայական մոդայիկ հոսանքներով վարակված մուսուլմանական մտավորականությանը՝ չսխալվել և որքան հնարավոր է շուտ հեռանալ այդ հոսանքներից։ Ձևակերպելով այդ ծրագիրը, Մ. Խաջեթլաշեի զինակիցներից Ա. Դատիևը «Երկու հոսանք մուսուլմանական մտավորականության մեջ» իր հոդվածում գրել է. «Սիրո և եղբայրության քարոզը կարող է որպես արգելք ըմբռնվել սոսկ նրա կողմից, ով աստծու մեծ, անծայրածիր աշխարհը փոքրացրել է մինչև այն ասպարեզը, որտեղ իրականում չկա ուրիշ ոչինչ, բացի դասակարգային հակասություններից ու դասակարգային պայքարից, ով իջել է այն աստիճան, որ ժողովուրդների համաշխարհային կյանքն ըմբռնում է ոչ այլ կերպ, քան որպես փոքր մի հավանոց, որտեղ խորամանկ աղվեսի դերում անպատիժ տիրապետում է ամեն ինչ լափող կապիտալը... դեն նետեք այդ փարաջան և միայն այդ ժամանակ գնացեք աղոթող մուսուլմանական աշխարհը՝ նրա վեհ իղձերին ընդառաջ։ Գնացեք, բայց ոչ Մարքսի «Կապիտալով», այլ ամենից առաջ Ղուրանով և շարիաթով, ոչ թե կուսակցական լոզունգներով, այլ համամարդկային գաղափարներով»[1]։ 1910 թվականին Մահմեդ բեգ Խաջեթլաշեն հրապարակեց «Շարիաթը և առաջադիմությունը» հոդվածը, որտեղ փորձում էր ընթերցողներին համոզել, թե «շարիաթը երբեք խոչընդոտ չի եղել առաջադիմությանը և երբեք չի միջամտել քաղաքական գործերին, երբ ընկել է խելամիտ մարդու ձեռքը...»[2]

Ռուսաստանյան մուսուլմանական «լիբերալ» գործիչները չէին սահմանափակվում մուսուլմանների վրա ռուսական հեղափոխական շարժման ազդեցության փաստի սովորական արձանագրումով, այլ բազմիցս փորձում էին ապացուցել, որ Ռուսաստանի մուսուլմանները չեն հասունացել պրոլետարիատի հեղափոխական գաղափարները ըմբռնելու համար, որ նրանք չա-

[1] «В мире мусульманства», 1911, № 30.
[2] «Мусульманин», 1910, № 22, с. 481.

փազանց հետամնաց են, որ նրանք «սեփական», «զուտ տնային» շատ գործեր ունեն, ուստի գործ չունեն գոյություն ունեցող կարգերի դեմ ուղղված ելույթների հետ։

«Փոքր գործերի», «դավանակիցների համընդհանուր եղբայրության և սիրո» տեսակետները, որ համառորեն քարոզում էին և՛ «Մուսուլմանին» հանդեսը, և՛ «Վ միրե մուսուլմանստվա» լրագիրը, յուրօրինակ, ռեակցիոն, նրբասքող քաղաքականություն էր, որը նախատեսում էր արգելակել Ռուսաստանի բազմաքանակ մուսուլմանական բնակչության քաղաքական ինքնագիտակցության աճը, նրան շեղել սոցիալական պայքարից, ազգային առաջադեմ երիտասարդությունն անջատել ռուսական պրոլետարիատի հեղափոխական պայքարից։

Առարկելով հանդեսի խմբագրության անդամներից մեկին՝ Եսիևին, հանդեսի ակտիվ գործիչներից Ահմեդ բեգ Ալլաևը գրում էր. «Սոցիալիզմի տեսությունը և մուսուլմանները՝ միևնույն է, ինչ կատաղած ձին ու ծծկեր երեխան։ Հարկավոր է մոտիկից ծանոթանալ սոցիալիզմի պարագլուխների հետ, որպեսզի մեկընդմիշտ գլխից դուրս նետել մարդկային համընդհանուր երջանկության գաղափարը»[1]։

Հարձակումներ գործելով դասակարգային պայքարի մասին ուսմունքի վրա, «Մուսուլմանինի» և «Վ միրե մուսուլմանստվայի» աշխատակիցները միաժամանակ գովերգում էին մահմեդականությունը, նրա ավանդույթները, փորձում ապացուցել նրա առաջադեմ լինելը։

«Մուսուլմանինը» և «Վ միրե մուսուլմանստվան» չարամիտ պրոպագանդայով ամեն կերպ ձգտում էին լեռնականներին և Ռուսաստանի մյուս մուսուլմաններին վերածել ուղղափառ-ֆանատիկոսների, նրանց վրա տարածել իրենց ազդեցությունը, նրանց շրջանում բարձրացնել իրենց հեղինակությունը։

Այսքանից հետո պարզ է, թե ցարական իշխանություններն ինչու էին անսքող համակրանք տածում մուսուլմանական այդ պարբերականների գործունեության հանդեպ, ավելին, ակտիվորեն աջակցում էին դրանց (բացառված չէ նաև, որ նշված պարբերականները ֆինանսավորվում էին իշխանությունների կողմից)։

[1] «Мусульманин», 1910, № 24, с. 515.

«Մուսուլմանինը» և «Վ միրե մուսուլմանստվան» իրենց էջերում մշտապես արծարծում և լուսաբանում էին նաև երկու կարևոր թեմա. խոսքը վերաբերում է ուխտագնացության (հաջ) և մուհաջիրության պրոբլեմներին, որոնց լուսաբանումը դրական նշանակություն ուներ և օբյեկտիվորեն ուղղված էր Ռուսաստանի մուսուլմանների վրա թուրքական ազդեցության ուժեղացման դեմ։

20-րդ դարի սկզբից Ռուսաստանի մուսուլմանների շրջանում լայնորեն տարածվեց այսպես կոչված ուխտագնացությունը Մեքքա, որը խորացրեց չքավորության առանց այդ էլ տնտեսական ծանր դրությունը և նոր անհաշիվ դժբախտություններ բերեց բազմաթիվ դյուրահավատների։ «Մուսուլմանինի» և «Վ միրե մուսուլմանստվայի» աշխատակիցներն իրենց հոդվածներում ջանում էին հայրենակիցներին հետ պահել այդ չմտածված և բնավ ոչ սրբազան քայլից։

Այդ երկու պարբերականների աշխատակիցների կողմից Ռուսաստանի մուսուլմանների շրջանում տարվող միասնական հայրենիքի պրոպագանդան, հայրենասիրական զգացմունքների դաստիարակումն ուղեկցվում էին մուհաջիրության քննադատությամբ և այսպես կոչված թուրքական դրախտի պսակազերծումով։ Թուրքական իրականության այն ժամանակվա խոշոր գիտակներից մեկը, «Մուսուլմանինում» բազմաթիվ հոդվածներ լույս ընծայած Դավլեթ-Գիրեյ Խատակոկորը «Մուհաջիրները» հոդվածում գրում էր. «Գուցե իմ նախկին և մինչև այժմ անսահման սիրելի հայրենիքում էլ որոշ հայրենակիցներ վատ են ապրում, գուցե նրանք տառապում են ինչ-որ այլ պատճառներից... սակայն որքան էլ կյանքը վատ լինի այնտեղ, այնուամենայնիվ, ավելի լավ է, քան Թուրքիայում... Ռուսաստանը հսկայական քայլերով ընթանում է մեծագույն մշակույթի ճանապարհով և, ինչպես ամեն մի մեծություն, կկարողանա վերացնել բոլոր անհարթությունները, և այն ժամանակ, եթե բոլորն աշխատեն միասին, մեր եղբայրների համար նույնպես լավ կլինի։ Ամուր բռնեք ձեր հայրենիքից և երբեք մի լքեք այն։ Նա, ով փախչում է իր մորից, արժանի չէ նրա զավակը կոչվելու»[1]։

Ամեն անգամ, անդրադառնալով այդ հարցին, և մեծ մասամբ՝ ընթերցողների խնդրանքով, «Վ միրե մուսուլմանստվա»

[1] «Мусульманин», 1910, № 2, с. 145.

թերթի և «Մուսուլմանին» հանդեսի աշխատակիցները ցույց էին տալիս Թուրքիայում ապրող լեռնական-մուհաջիրների ողբերգությունը, բացահայտում բռնակալ սուլթանների դաժան վարչակարգի քայքայիչ ազդեցությունը լեռնականների, Ա. Ս. Պուշկինի խոսքերով ասած՝ «հրաշալի ժողովրդի» բարոյական հատկանիշների վրա։ Աղքատություն, անարգանք, իրավազրկություն, սովամահություն, մարդկային արժանապատվության սիստեմատիկ և պլանաչափ ոտնահարում՝ ահա թե ինչ է սպասում լեռնական-մուհաջիրին թուրքական «ավետյաց երկրում»։

«Չերքեզների վիճակը Թուրքիայում» հոդվածում խատակոկորը գրել է. «Դժվար է նույնիսկ պատկերացնել ավելի մռայլ բան, քան թուրքական գյուղը, սակայն այն գյուղը, որտեղ ապրում են չերքեզները, անկարելի է նկարագրել։ Ճշմարիտն ասած, դա աղքատ և սովալլուկ թափառաշրջիկների ամբոխ է... Մուսուլմանական ավան մտնելուն պես համակվում ես թախիծով և այնտեղից հնարավորին չափ շուտ դուրս պրծնելու ցանկությամբ։ Շուրջդ ամեն ինչ մռայլ է ու ամայի։ Առաջին հայացքից թվում է, թե բնակիչները մեռել են, և գյուղում ոչ մի կենդանի շունչ չկա»[1]։

Սուլթանի տապալումը և Թուրքիայում այդ տարիներին տեղի ունեցած քաղաքական մյուս փոփոխությունները չբարելավեցին մուհաջիրների տնտեսական դրությունը։ Իրենց պաշտոններում մնացել էին նույն աստիճանավորները, որոնք մտածում էին լոկ իրենց մասին, զբաղվում դրամաշորթությամբ ու կողոպուտով։ Երիտթուրքերի ստեղծած «նոր կյանքը,— «Մուհաջիրները» հոդվածում մատնանշում էր խատակոկորը,— ոչ մի առնչություն չունի գաղթականների հետ։ Գողությունը, կաշառակերությունը, կողոպուտը և սպանությունները ծաղկում են, ինչպես և առաջներում։ Բռնություններն ու հանցագործությունները կատարվում են առանց աննշան փոփոխության, և դժբախտ են նրանք, ովքեր կարծում են, թե նոր երկրում ճշմարտություն կգտնեն»[2]։ Նա շեշտում էր, որ երիտթուրքական հեղաշրջումից հետո էլ շարունակվում են բռնությունները կովկասցիների դեմ։

Դ.-Գ. խատակոկորի և մյուս հեղինակների հոդվածները «Մուսուլմանին» հանդեսում և «Վ միրե մուսուլմանստվա» թերթում բացում էին լեռնականների և ընդհանրապես Ռուսաստանի մուսուլմանների աչքերը շատ երևույթների հանդեպ, նպաստում էին որոշ չափով կանգնեցնելու մուհաջիրությունը, արդեն Թուրքիայում գտնվող գաղթականների մեջ արթնացնում էին սիրո անկեղծ զգացմունքներ իրենց լքված հայրենիքի հանդեպ։

Ինչպես տեսնում ենք, իսլամական-«թուրքական» աշխարհը միասնական չէր։ Մասնավորապես իսլամի ներսում տեղ գտած տարաձայնություններն ու պայքարը ակնհայտորեն ցույց էին տալիս, որ անհնարին է ընդհանուր ճակատ կազմել «անհավատների» դեմ։

Ռուսաստանում պանիսլամիզմի և պանթուրքիզմի ճանապարհի ամենամեծ խոչընդոտը բարձրացող բանվորական շարժումն էր, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի գործունեությունը։ Ադրբեջանի աշխատավոր մասսաներն իրենց շարքերից արդեն առաջ էին քաշել բոլշևիկյան կուսակցության գաղափարներին նվիրված տասնյակ ու հարյուրավոր անձնազոհ մարտիկներ, որոնք աներեր կանգնելով պրոլետարական համերաշխության դրոշի ներքո, հետևողական պայքար էին մղում բուրժուական-մուսավաթական նացիոնալիզմի դեմ, մերկացնում պանիսլամական-պանթուրքական մեքենայությունները՝ հանուն երկրամասի բազմազգ աշխատավորների ինտերնացիոնալ համախմբման, հանուն նրանց սոցիալական և ազգային ազատագրության։

Բոլշևիկյան կուսակցության ինտերնացիոնալ դրոշի տակ էին համախմբվել Թաթարիայի, Բաշկիրիայի, Պովոլժիեի և այլ վայրերի մուսուլման աշխատավորները։ Մարքսիստական-լենինյան գաղափարները լայնորեն թափանցում էին Ղազախստանի և Թուրքեստանի աշխատավոր մասսաների մեջ։ Բոլոր ազգերի, ռասաների և կրոնների աշխատավորների միասնության ու եղբայրության, ցարիզմի ու բուրժուազիայի դեմ նրանց համատեղ պայքարի բոլշևիկյան լոզունգներն անհաղթահարելի թույլ էին բուրժուանացիոնալիստական, պանիսլամական և պանթուրքական գաղափարների տարածման ու իրականացման ճանապարհին։

---

[1] «Мусульманин», 1908, № 1, с. 3—4.

[2] «Мусульманин», 1910, № 9, с. 45.

* * *

Այսպիսով, առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին վերջնականապես ձևավորվեց և ավարտուն տեսքի եկավ թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը։ Այն, ինչպես տեսանք, ծագեց ու զարգացավ զուտ թուրքական հողի վրա և տարածվելով թափանցեց նաև ուրիշ երկրների թուրքալեզու տարածքները։

Այժմ, բնականաբար, հարց է ծագում. թուրքական արյունոտ պատմության ավանդույթներից և թուրքական դաժան իրականությունից բացի արդյոք եղե՞լ են այլ ազդակներ, որոնք ներգործել են թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանության, մասնավորապես երիտթուրքերի հայացքների ձևավորման վրա։

Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանության, առաջին հերթին երիտթուրքերի գաղափարների ուսումնասիրությունը և վերլուծությունը ցույց են տալիս, որ դրանք ձևավորվել են Արևմուտքի իդեալիստական զանազան դպրոցների և ուսմունքների, ժամանակաշրջանի փիլիսոփայական և սոցիոլոգիական սուբյեկտիվ-իդեալիստական տեսությունների ուժեղ ազդեցության ներքո։

Տարիներ շարունակ տարագրության մեջ գտնվելով Եվրոպական կենտրոններում, մասնավորապես Փարիզում, նրանք ծանոթանում էին տեղի հասարակական-քաղաքական կյանքին, հաղորդակից դառնում քաղաքական զանազան ուղղությունների, ուսումնասիրում բուրժուական փիլիսոփայական, սոցիոլոգիական, պատմագիտական տարբեր ուսմունքներ։ Նրանց հայացքների ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել Շոպենհաուերի և Նիցշեի սուբյեկտիվ-իդեալիստական ուսմունքները, բայց վճռական ազդեցություն գործել են ֆրանսիացի ռեակցիոն փիլիսոփա, պոզիտիվիզմի հիմնադիր Օգյուստ Կոնտի (1798—1857) տեսությունը, նրա արտահայտած մտքերն ու գաղափարները։ Օ. Կոնտի ուսմունքը, նրա պոզիտիվիզմի տեսությունը կոնկրետ գործողությունների փիլիսոփայություն է, որը մերժում է բազմակողմանի փաստարկված խորհրդածությունները և սուբյեկտիվ-իդեալիստական, իրեն ձեռնտու դիրքերից է մեկնաբանում հասարակական երևույթները, հաշվի չնստելով ռացիոնալ մտածողության, տրամաբանության հետ։

Օ. Կոնտի պոզիտիվիզմի ազդեցությունը հատկապես ուժեղ

էր երիտթուրքերի Փարիզի «Միության և առաջադիմության» կազմակերպության ղեկավարների աշխարհայացքի ձևավորման վրա։

Երիտթուրքական գաղափարներին և գործելակերպին քաջ ծանոթ հայ կաթոլիկ բարձրաստիճան եկեղեցական Հովհաննես Նազլյանը վկայում է, որ «երիտասարդ թուրքերը իրենք զիրենք կնոչակեին իբրև Օկյուստ Կոնտի դպրոցին սկզբունքներովը կաղապարուածներ, որ Արևմուտքի մեջ նյութապաշտ դրական իմաստասիրության հիմնադիրն էր (1798—1857)»[1]։ Երիտթուրքական պարագլուխները զանազան առիթներով շեշտում էին, որ Կոնտն իրենց ուսուցիչն է, իսկ նրա ուսմունքը՝ ոգեշնչման աղբյուր։

Ահմեդ Ռիզայի հետ անձնապես լավ ծանոթ Սապահ-Գյուլյանը վերհիշում է, որ Փարիզում եղած ժամանակ Ռիզան ամբողջովին տարվել էր Կոնտի փիլիսոփայությամբ։ Հետևելով «Կոլեժ դը ֆրանսի» ազատ դասընթացներին, նա լսում էր կոնտյան փիլիսոփայության երկրպագու, պոզիտիվիստ, անուղղելի թըրքամոլ Պիեռ Լաֆիտի դասախոսությունները։ Նշելով, որ Ռիզան «շատ կղզիացած, շատ սահմանափակ մտավոր կեանք ուներ», Սապահ-Գյուլյանն այնուհետև գրում էր. «Բացի Օգյուստ Կոնտից՝ ուրիշ ոչ մի փիլիսոփայով, ոչ մի գիտութեամբ [նա] չէր հետաքրքրվում»[2]։ Եվ դա այն դեպքում, երբ նույն հայտնի հաստատության մեջ դասախոսում էին Կոնտի պոզիտիվիզմը մերժող, բայց իրենց տաղանդով հռչակված փիլիսոփաներ Նուրրիսոնը, Պոլ Ժանեն, Էմիլ Բուտրոն, Վատտինգտոնը և այլոք, հռչակավոր հոգեբան Թեոդոր Ռիբոն, տնտեսագետներ Լրոուա Բոլիոն, Լրվասեորին, Կաուեսին, Բորգարին։ Չջանալով ստանալ բազմակողմանի զարգացում և կրթություն, երիտթուրքերի գլխավոր տեսաբանը ավելորդ մտավոր հոգնություն չէր պատճառում իրեն, չէր խորանում ուրիշ գիտությունների մեջ։ Եվ պատահական չէ, որ նույնիսկ Կոնտի հիմնական գաղափարները «իրեն շատ էլ մարսելի չէին եղած և արդեն իր ձեռք բերած պաշարը հատ ու կենտ տեղեկություններից անդին չէին անցած.— հիմնականը, ներհունությունը կատարելապես պակասում էին»[3]։

---

[1] «Տրապիզոնի թեմին վիճակավոր Յովհաննես արք. Նազլեանի յուշերը...», էջ 10—11։

[2] Ս. Սապահ-Գյուլեան. Պատասխանատուները, էջ 129։

[3] Տե՛ս նույն տեղը։

Բայց եթե Ռիզան և երիտթուրքական մյուս պարագլուխները բավարար գիտելիքներ չէին ձեռք բերել նույնիսկ իրենց նախընտրած փիլիսոփայական ուղղություններից՝ պոզիտիվիզմից, ապա դրան հակառակ նրանք Կոնտից ու նրա հետևորդներից, ռեակցիոն փիլիսոփայական ու սոցիոլոգիական այլ դրոշակների ներկայացուցիչներից վերցրել էին այն ազգայնամոլական և ռասայական գաղափարները, որոնք ուղղված էին ճնշված ժողովուրդների և ազգերի ազատագրության դեմ։

Ստեփան Սապահ-Գյուլյանը հիշում է, որ Պիեռ Լաֆիտը իր մի դասախոսության ընթացքում անդրադառնալով Օգյուստ Կոնտի հասարակական հայացքներին և դրանք կապելով օսմանյան իրականության հետ, ասել էր, թե Թուրքիայի գոյությունը բոլորովին օրինական լինելով, նաև ապահովված է, ուստի բոլորովին զուր են և իրավունքի սկզբունքներին հակառակ են նրա դեմ ծագած և ծագող ապստամբական շարժումները։ «Եվրոպան միջամտելու իրավունք չունի,— ասել է նա,— պետք է թողնել, որ Թուրք պետությունը խաղաղ, հանդարտ կերպով, աստիճանաբար զարգանա և իր ներքին խնդիրները վճռի։ Հեղափոխական արարքները հակագիտական են և պախարակելի՝ իրականության և հետևանքի տեսակետից»[1]։ Դասախոսությունից հետո Պիեռ Լաֆիտի «միակ Թուրք աշակերտը», դրապաշտ Ահմեդ Ռիզան մոտենալով իր ուսուցչին, ասել էր, թե Օսմանյան կայսրության մեջ մասնավորապես չկա հայկական շարժում, որ Թուրքիայի հայերի հուզումների պատճառը «Կովկասից Թուրքիա անցած մի քանի ռուսահայեր են, որոնք ուզում են խռովություններ անել՝ հօգուտ ռուս կառավարության»[2]։

Քանի որ երիտթուրքերի գաղափարաբանությունը խարսխված է Օգյուստ Կոնտի ուսմունքի վրա, ուստի, հավանաբար, նպատակահարմար է գոնե թռուցիկ մի ակնարկ նետել այդ ուսմունքի վրա, ցույց տալու համար նրա էությունը, որպեսզի պարզ լինի, թե այն իր որ կողմերով է նպաստել Թուրք ազգայնականների աշխարհայացքի ձևավորմանը։

Օ. Կոնտի ուսմունքն առաջ եկավ և ձևավորվեց նապոլեոնյան պատերազմներից հետո, Ֆրանսիայում Բուրբոնների միապետական-ֆեոդալական կարգերի վերականգնման պայմաններում։ Այն

[1] Ս. Սապահ-Գյուլեան, Պատասխանատուները, էջ 131։
[2] Նույն տեղը, էջ 132։

յուրատեսակ ռեակցիա էր վերականգնված միապետության ժամանակաշրջանի սպիրիտուալիստների բացահայտ խավարամոլական ուսմունքներին։

1830 թվականի հեղափոխական իրադարձությունները Ֆրանսիայում ցույց տվեցին, որ արդեն իր ուժերն է հավաքում և ամրանում ֆրանսիական պրոլետարիատը՝ բարձրացող կապիտալիստական դասակարգի նոր, վտանգավոր հակառակորդը։ Այդ վտանգի դեմ պայքարելու նպատակով սկսեց ձևավորվել բարձրացող բուրժուազիայի և ասպարեզից հեռացող ազնվականության մնացուկների հակաժողովրդական դաշինքը, որը ծնունդ տվեց Օգյուստ Կոնտի ուսմունքին՝ պոզիտիվիզմին։ Ֆրանսիայում ստեղծված այդ դաշինքն իր սոցիալական էությամբ նման էր դասակարգային այն բլոկին, որն Անգլիայում ծնունդ էր տվել Դավիդ Հյումի (1711—1776) ագնոստիցիզմին։ Զուր չէ, որ «պոզիտիվիզմը» որպես պատմափիլիսոփայական հասկացություն սերտորեն առնչվում է այնպիսի հասկացությունների հետ, ինչպես «սկեպտիցիզմը» և «ագնոստիցիզմը»։

Կոնտը ենթարկվել է Թյուրգոյի և Սեն-Սիմոնի գաղափարական ազդեցությանը, սակայն հետագայում շատ է հեռացել նրանցից և աստիճանաբար աջ գնալով դարձել է սուբյեկտիվ-իդեալիստ՝ ծայրահեղ հետադեմ հայացքներով։

Իր «պոզիտիվ» («դրական») գաղափարները Կոնտը հիմնականում շարադրել է վեցհատորյա «Պոզիտիվ փիլիսոփայության դասընթաց» (1830—1842) և «Պոզիտիվ փիլիսոփայության ոգին» (1844) աշխատությունների մեջ։

Ո՞րն է Օգյուստ Կոնտի ուսմունքի էությունը։

Կոնտը հայտարարում էր, թե պոզիտիվիզմի իր տեսության նպատակը գիտությունները դոգմատիկական բնափիլիսոփայությունից և Հեգելյան սպեկուլյացիաներից ազատելն է։ Իրեն ներկայացնելով որպես կյանքի բոլոր մարզերում գիտության հաղթանակի համար պայքարող մարտիկ, նա փորձում էր հանդես գալ «դրականի» («պոզիտիվի»), այսինքն՝ որևէ «հորինվածքից» զերծ գիտելիքի պաշտպանի դերում։ Եթե մի կողմ դնենք սպեկուլյատիվ տերմինաբանությունը, դա ըստ էության նշանակում էր հրաժարում հոգևոր մշակույթի, հատկապես փիլիսոփայության բնագավառում արդեն ձեռք բերած այն մեծ նվաճումներից, որոնք պայմանավորված էին դիալեկտիկական մտածողությամբ։ Այլ խոսքով՝ պոզիտիվիզմն իր ելակետային սկզբ-

բունքներից մեկը հռչակեց փիլիսոփայության թշնամությունն իսկապես փիլիսոփայական պրոբլեմատիկայի նկատմամբ։ Դա նշանակում էր, որ հանձին պոզիտիվիզմի, փիլիսոփայության մեջ հանդես էր եկել «հակափիլիսոփայական» ուղղություն։ Բնորոշ է, որ ագնոստիցիզմից բացի պոզիտիվիզմը ժխտում էր ասեն մի այլ փիլիսոփայություն, այդ թվում, իհարկե, ինչպես ասվեց, առաջին հերթին հեգելյան դիալեկտիկան։

Թվում է, թե Կոնտը, մերժելով հեգելյան իդեալիստական բնափիլիսոփայությունը, նրա դիալեկտիկան, բնականաբար կանգնում է մատերիալիզմի, թեկուզև մետաֆիզիկական մատերիալիզմի, դիրքերի վրա։ Բայց իրականում պոզիտիվիզմն իր պայքարի հիմնական զենքն ուղղում էր հենց մատերիալիզմի, առաջին հերթին՝ դիալեկտիկական մատերիալիզմի դեմ։

Պոզիտիվիստները հրաժարվում էին փիլիսոփայության հիմնական հարցին որոշակի պատասխան տալուց։ Նրանք գրում էին, թե ընդունում են արտաքին աշխարհի գոյությունը, իրերի իմացությունը, բայց իրականում այդ իմացությունը սահմանափակում էին իրենց զգայարանների ունակությունների և հնարավորությունների շրջանակներով։ Արտաքին աշխարհի գոյության ընդունումը նրանց մոտ երևութական էր։ Իրականում Կոնտի ամբողջ փիլիսոփայությունը «հեռանում էր» արտաքին աշխարհից, իմացությունը սահմանափակում ընկալումների ոլորտով։ Ժխտելով օբյեկտիվ ճշմարտությունը, Կոնտը նյութական աշխարհն անվանում էր «մարմնացյալ աբստրակցիա»։ Օբյեկտիվ ռեալության գոյությունն ու ճանաչողությունն ընդունող յուրաքանչյուր տեսություն Կոնտը հայտարարում էր «մետաֆիզիկա»։

Հենց դրանից ելնելով Կոնտն առաջ էր քաշում այն ելակետային դրույթը, որ գիտությունը պետք է հրաժարվի իրերի էության մեջ թափանցելուց և սահմանափակվի երևույթների լոկ արտաքին պատկերի նկարագրությամբ։ Նա բազմիցս հայտարարել է, թե ընդունում է միայն «արտաքին» երևույթների գոյությունը[1]։

Գիտությունը, ըստ Կոնտի, պետք է պատասխան տա ոչ թե այն հարցին, թե ինչ գոյություն ունի, այլ բացառապես այն հարցին, թե ինչպես են ընթանում երևույթները։ Նա պետք է ոչ թե ընդհանրացումներ կատարի երևույթները բացատրելու նպատակով, այլ սոսկ նկարագրի փորձի տվյալները։ Գիտության խնդիրն է՝ նկարագրվող երևույթները հանգեցնել արտաքին կապերի նվազագույն թվին՝ ըստ դրանց նմանության և հաջորդականության։

Քանի որ Կոնտն ընդունում էր միայն «արտաքին» երևույթների գոյությունը, նա վերացրեց հոգեբանությունն իբրև «ներքին» երևույթ և, հիմք ընդունելով բովանդակությունը, այն բաշխեց կենսաբանության և սոցիոլոգիայի միջև։

Այդ գաղափարները Օ. Կոնտին հանգեցրին խիստ մեխանիկական մի շարք հետևությունների, որոնք անհնարին էին դարձնում իրականության տարբեր բնագավառներում տեղի ունեցող զարգացման պրոցեսների օրինաչափությունների, դրանց յուրօրինակությունների ըմբռնումը։

Իր աշխատությունների մեջ Կոնտը հետևողականորեն պաշտպանում էր շարժման մետաֆիզիկական կոնցեպցիայի տարատեսակություններից մեկը՝ «հավասարակշռության տեսությունը», որի ջերմեռանդ պրոպագանդիստներն էին նաև Սպենսերը և Դյուրինգը։ Այս տեսությունը մեխանիկայում եղած հավասարակշռության օրենքը փորձեց տարածել բնության ու հասարակության բոլոր երևույթների վրա։ Կոնտը «նորմալ» էր համարում հանգիստ վիճակը, հավասարակշռությունը, իսկ շարժումը դիտում էր որպես ժամանակավոր և անցողիկ, որպես արտաքին հակադիր ուժերի պայքարի արդյունք։ «Հավասարակշռության» տեսությունը վուլգար էվոլյուցիոն տեսության տարատեսակություններից մեկն է, որը չի ընդունում թռիչքներ բնության մեջ։

Բնության մասին իր տեսակետները Օգյուստ Կոնտը տարածեց նաև մարդկային հասարակության վրա։ Նա զարգացրեց մարդկության «ինտելեկտուալ էվոլյուցիայի» երեք փուլերի մասին գաղափարը։

Ըստ Կոնտի «ինտելեկտուալ էվոլյուցիայի» առաջին փուլը ռազմական փուլն է, որը համապատասխանում է մտքի զարգացման աստվածաբանական փուլին, երբ բոլոր երևույթները բացատրվում են կրոնական պատկերացումների հիման վրա։ Երկրորդ փուլն անցման փուլն է, որը համապատասխանում է մետաֆիզիկական (բառիս նախահեգելյան իմաստով՝ որպես ուսմունք գերզգայականի մասին) փուլին, երբ բոլոր երևույթները բացատրվում են գերբնական «վերջնական» պատճառներով և

[1] Տե՛ս **О. Конт**, Дух позытивной философии, СПб, 1910, էջ 46։

գերզգայական էություններով։ Երրորդ փուլը գիտաարդյունաբերական փուլն է, որը համապատասխանում է պոզիտիվ (դրական) փուլին, երբ բոլոր երևույթները նկարագրվում են բնական օրենքներին համապատասխան։ Հասարակական էվոլյուցիայի այս վերջին փուլում իբր ձեռք է բերվում հասարակության իդեալական, «ստատիկ» վիճակը։ Ըստ Կոնտի, այդ «արդյունաբերական փուլը», այսինքն՝ կապիտալիզմը, հասարակական ամբողջ զարգացումն ավարտող և իրենով եզրափակող փուլն է[1]։ Սոցիալական պատճառականության և սոցիալական փոփոխությունների կարևոր բնագավառում Կոնտը մատնանշեց այնպիսի գլխավոր գործոններ, ինչպես ռասա, կլիմա և քաղաքական գործողություն (անուղղակիորեն սոցիալական պրոցեսներ)[2]։

Կոնտը գտնում էր, որ պոզիտիվ փիլիսոփայության կառուցումն ավարտելու համար անհրաժեշտ է ստեղծել նաև գիտական սոցիոլոգիա, այսինքն՝ պոզիտիվ գիտություն հասարակական երևույթների մասին[3]։ Ընդ որում, նրա համար գիտականության նմուշ է ծառայում բնագիտությունը։ Դրա հետևանքով Կոնտի սոցիոլոգիայում հասարակության իդեալիստական ըմբռնումը սերտորեն զուգակցվում է նատուրալիզմի հետ։ Նա պոզիտիվ սոցիոլոգիան ընկալում է որպես բնագիտության անմիջական շարունակություն՝ որպես «սոցիալական ֆիզիկա»[4]։ Այլ խոսքով այդ սոցիոլոգիային բնորոշ է բիոլոգիական նատուրալիզմի միահյուսումը ծայրահեղ պատմական իդեալիզմի հետ։

Իր հերթին սոցիոլոգիան Կոնտը բաժանում է երկու մասի՝ *ա)* սոցիալական ստատիկայի, *որը գործ ունի յուրաքանչյուր հասարակարգի գոյության կայուն («բնական») պայմանների հետ և բ)* սոցիալական դինամիկայի, *որն ուսումնասիրում է հասարակական զարգացման բնական օրենքները*[5]։

Հասարակությունն ուսումնասիրելով և հասարակական երևույթները նկարագրելով «բնական օրենքներին համապատասխան», Կոնտը մի կողմից անխուսափելիորեն հանգում էր սոցիալական երևույթների մասին վուլգար մեխանիկական պատկերացումների, մյուս կողմից այդ երևույթների մեկնաբանությունը կատարում էր սուբյեկտիվ իդեալիստական դիրքերից։

Այժմ տեսնենք, թե պոզիտիվիզմի դիրքերից Կոնտն ինչպես էր բնության երևույթները տարածում հասարակության վրա և թե երիտթուրքական գաղափարախոսներն ինչպես էին ընդօրինակում կոնտյան գաղափարները և ինչպես էին դրանք օգտագործում իրենց տեսական եզրակացությունները և կոնկրետ գործողությունները հիմնավորելու համար։

1) Վերևում ասվեց, որ, պաշտպանելով «հավասարակշռության» մետաֆիզիկական տեսությունը, Կոնտը բնական էր համարում հանգիստ վիճակը, շարժումը դիտում էր ոչ թե որպես նյութի գոյության հատկանիշ, այլ որպես արտաքին հակադիր ուժերի պայքարի արդյունք։

Եթե բնության մեջ ներքին հակասություններով պայմանավորված թռիչքներ չկան, ասում էր Կոնտը, հետևաբար ներքին հակասություններով պայմանավորված թռիչքներ չկան նաև հասարակության մեջ։ Նրա կարծիքով հակասություն գոյություն ունի միայն դրանց միջև՝ որպես միմյանց դեմ ուղղված հակադիր ուժերի։ Հասարակության զարգացման աղբյուրը համարելով այդ հակասությունը, Կոնտը զարգացումը բացառապես կախման մեջ էր դնում արտաքին աշխարհագրական, կլիմայական և այլ պայմաններից։ Բայց Կոնտը գտնում էր, որ այդ անտագոնիզմը, որպես կանոն, չի բացահայտվում, որովհետև նշված ուժերի միջև հաստատված է հավասարակշռություն։ Նրա կարծիքով հավասարակշռությունը բացարձակ է, իսկ պայքարը՝ մասնակի մոմենտ, որն առաջ է գալիս այն ժամանակ, երբ խախտվում է հավասարակշռությունը։

Երիտթուրքական գաղափարախոսներին հրապուրել էր «հավասարակշռության տեսության» հենց այն հաստատումը, թե բնական վիճակը հանգիստ վիճակն է, իսկ պայքարը մասնակի մոմենտ է, որը հետևանք է արտաքին պատճառների։ Այստեղից նրանք եզրակացություն էին անում, որ Օսմանյան կայսրության բնական վիճակը նույնպես հանգիստ վիճակն է, այսինքն՝ երբ այլազգի հպատակները լուռ ու մունջ են, բողոքի ձայն չեն բարձրացնում։ Նրանք միաժամանակ պնդում էին, թե այլազգիների ապստամբական շարժումներն անբնական են, դրանք ար-

---

[1] *Տե՛ս* «Антология мировой философии», т. 3, изд. «Мысль», Москва, 1971, *էջ* 553—555։

[2] *Տե՛ս* **Г. Беккер и А. Босков,** Современная социалистическая теория, изд-во Иностр. литературы, М., 1961, *էջ* 21—22։

[3] *Բուրժուական պատմագրության մեջ ընդունված է Օգյուստ Կոնտին ներկայացնել որպես ժամանակակից գիտական սոցիոլոգիայի հիմնադիր։*

[4] *Տե՛ս* «Антология мировой философии, т. 3, *էջ* 563.

[5] *Տե՛ս* «БЭС», III изд., т. 13, *էջ* 59։

հեստականորեն հրահրվում են դրսից՝ այլ երկրներից ու կառավարություններից (Ռուսաստան, Եվրոպա)։

2) Կոնտը պոզիտիվիզմի կարևոր առավելություններից մեկը տեսնում էր այն բանում, որ նրանում համերաշխություն է հաստատված կարգի (հավասարակշռության) և առաջադիմության միջև։ Հատկանշական է, որ այստեղ Կոնտն առաջնությունը տալիս էր «կարգին». կարգը առաջադիմության ցուցանիշ է[1]։ Հասարակական երևույթների գնահատման բարձրագույն չափանիշը համարելով «սերը որպես սկզբունք, կարգը որպես հիմք և առաջադիմությունը որպես նպատակ»[2], նա հասարակության «բնականոն կյանքը» մեկնաբանում էր որպես հասարակության «խաղաղ», «օրգանական» զարգացում։

Երիտթուրքերի համար այստեղ հատկապես արժեքավորն այն էր, որ Կոնտը հասարակության առաջադիմության գործում առաջնությունը տալիս էր «կարգին»։ Ամուր կարգ և երկաթյա բռունցք։ Բռունցք բոլոր նրանց դեմ, ովքեր Օսմանյան կայսրության մեջ վիճարկում են թուրքական էթնոսի գերիշխանության ճշմարտացիությունը։ Առանց օսմանյան «կարգի» հետագա ամրապնդման, առանց ուժեղ բռունցքի կայսրության անկումն անխուսափելի է. այս էր կոնտյան «Կարգը որպես հիմք» բանաձևումից երիտթուրքական գաղափարախոսների արած տեսական եզրակացությունը։

3) Հրաժարվելով փիլիսոփայության հիմնական հարցին պատասխան տալուց, դրանով իսկ պոզիտիվիստները լայն հնարավորություն էին ստեղծում կրոնական հայեցողությունների արդարացման համար։ Կոնտը եռանդուն կերպով քննադատում էր աշխարհի վերաբերյալ աստվածաբանական հայացքները որպես արխայիկ, հնացած հայացքներ, բայց միաժամանակ նա կրոնը հրամցնում էր իբրև գիտական իմացության առաջին աստիճան, որը ոչ միայն պատմականորեն նախորդում է մյուս աստիճաններին, այլև նախապատրաստում է դրանք։

Գիտության «պաշտպանի» դերում հանդես եկող Կոնտը, բնականաբար, պետք է քննադատական վերաբերմունք ունենար կրոնի հանդեպ։ Բայց կրոնի նրա քննադատությունը դրա մերկացումը չէր։ Ընդհակառակը, կրոնի պոզիտիվիստական «քննադատության» մեջ պարզորոշ երևում է նրա նկատմամբ Կոնտի անսքող համակրանքը։

Երիտթուրքերին հարազատ եղավ կրոնի նկատմամբ պոզիտիվիստների վերաբերմունքը։ Ինչպես տեսանք, երիտթուրքերը խանդաղատանքով և ջերմեռանդ ակնածանքով էին վերաբերվում մահմեդական կրոնին, բարձր էին գնահատում նրա ավանդույթները, գտնում էին, որ այն ոչ միայն չի հակասում ժամանակակից գիտությանն ու տեխնիկային, ոչ միայն չի խոչընդոտում Օսմանյան կայսրության առաջընթացը, այլև առաջադիմության մեծագույն աղդակ է։ Ելնելով դրանից, երիտթուրքերը պայքարում էին այն բանի համար, որպեսզի ամբողջություն կազմեն օսմանյան սահմանադրական միապետությունը և մահմեդական կրոնը, թուրքական պետությունը և իսլամական կարգ ու սարքը։

4) Կոնտն իրեն համարում էր Սեն-Սիմոնի աշակերտը։ Ինչպես հայտնի է, վերջինս գտնում էր, որ մարդկության զարգացումը տեղի է ունենում պատմական պրոցեսի օրինաչափություններին համապատասխան, հետևապես չի կարելի նիհիլիստաբար ջնջել մարդկության պատմության անցած դարաշրջանները, ինչպես անում էին իր ժամանակի փիլիսոփաներից շատերը։ Խեղաթյուրելով իր «ուսուցչին», Կոնտը նրա այս մտքերից վերցրեց միայն այն դրույթները, որոնք նրան կարող էին օգնել արդարացնելու միջնադարի քաղաքական և հոգևոր կյանքը։ Նա հիացմունքով էր արտահայտվում միջնադարյան քաղաքական կարգերի, միջնադարում երկրներ ասպատակած զորավարների և թագավորների մասին, վարդագույն երանգներով նկարագրում այդ ժամանակվա սոցիալական հիերարխիան, փորձում արդարացնել աստվածապետությունը, կաթոլիկական միստիցիզմը, ինկվիզիցիայի գործունեությունը։ Թոմաս Աքվինացուն նա հայտարարեց բոլոր ժամանակների մեծագույն փիլիսոփա։

Կոնտի մտքերը յուրացրած երիտթուրքական պարագլուխներն իրենց հերթին իդեալականացնում էին միջնադարյան թուրքական հասարակությունը, գովերգում նախորդ դարերի թուրքերի բարքերն ու սովորությունները, դրվատում նրանց «քաջագործությունները», այսինքն՝ ասպատակություններն ու գործած ավերները, անցյալի թուրքերի օրինակով դաստիարակում էին իրենց ժամանակի թուրք երիտասարդ սերնդին։

5) Սեն-Սիմոնը գտնում էր, որ մարդկանց երջանկություն

---

[1] Տե՛ս «Антология мировой философии», т. 3, էջ 584։

[2] Տե՛ս **О. Конт**, Общий обзор позитивизма. Родоначальники позитивизма, вып. V, СПб, 1913, էջ 143։

կարող են բերել ոչ թե քաղաքական հեղաշրջումները որպես այդպիսիք, այլ այնպիսի հեղաշրջումները, որոնք արմատապես կփոխեն նրանց կյանքի սոցիալական պայմանները։ Կոնտն այստեղից կամայական եզրակացություն արեց, թե ընդհանրապես քաղաքական հեղաշրջումները ոչ միայն չեն բարելավում մարդկանց տնտեսական, սոցիալական դրությունը, այլև նոր աղետներ ու դժբախտություններ են բերում նրանց։ Ելնելով դրանից, Կոնտը և նրա կողմնակիցները կանգնեցին բուրժուական նեղ ռեֆորմիզմի հողի վրա և, պոզիտիվիզմը հակահեղափոխական գործունեության դրոշ դարձնելով, պահանջեցին փիլիսոփայությունից ընդմիշտ վտարել «հեղափոխական ոգին»։

Երիտթուրքերը նույնպես թշնամաբար էին տրամադրված քաղաքական և հատկապես արմատական սոցիալական հեղաշրջման նկատմամբ։ Կանգնած լինելով բուրժուական նեղ ռեֆորմիզմի հողի վրա, նրանք 1908 թվականի կիսատ-պռատ հեղափոխությունը կծկեցին իրենց ձեռնտու սահմանների մեջ, ամեն ինչ արեցին, որպեսզի այն չդնա սոցիալական հեղաշրջման ու արմատական վերափոխումների ճանապարհով։

6) Սեն-Սիմոնը համոզված էր, որ բուրժուական հասարակական հարաբերությունները չեն կարող մարդկանց ազատություն բերել, որ այդ ազատությունը նրանց կարող են բերել միայն նոր, սոցիալիստական հարաբերությունները (թեպետև մարդկանց կյանքում սոցիալիզմ հաստատելու անհրաժեշտությունը նա, իբրև ուտոպիստ, ըմբռնում էր հակապատմականորեն)։ Կոնտը, ընդհակառակը, հանդես եկավ իբրև ձևավորվող բուրժուական հարաբերությունների, կապիտալիստների բարձրացող դասակարգի ջերմ պաշտպան։ Ճիշտ է, նա նույնպես հոչակեց հասարակության նոր, դրական (պոզիտիվ) կազմակերպվածքի անհրաժեշտությունը, բայց նա նկատի ուներ այնպիսի մի կազմակերպվածք, որը փոխարիներ «սոցիալական անարխիային»։ Այդ նոր կառուցվածքը ոչ մի ընդհանուր բան չուներ սոցիալիզմի հետ, այլ ազդարարում էր սոսկ հիերարխիական կապիտալիստական հասարակարգի անհրաժեշտությունը։

Երիտթուրքերը նույնպես բուրժուազիայի ջերմ պաշտպաններն էին, նրա շահերի արտահայտիչը։ Բայց ի տարբերություն Կոնտի և պոզիտիվիստների, որոնք կանգնած էին ֆրանսիական բանկիրների և կապիտալիստների կողմում՝ անկախ նրանց ազգային պատկանելիությունից, երիտթուրքերը կանգնած էին թուրք ազգային բուրժուազիայի կողմում և միայն նրա շահերի արտահայտիչներն էին՝ ընդդեմ Օսմանյան կայսրության այլազգի բուրժուազիայի։ Նրանք ամեն կերպ ձգտում էին այն բանին, որպեսզի կայսրության մեջ քաղաքական իշխանությունն անցնի թուրք բանկիրներին ու կապիտալիստներին և ամուր մնա նրանց ձեռքում։

7) Կոնտը և պոզիտիվիստները բացահայտ թշնամանքով էին լցված կապիտալիստական կարգերի գերեզմանափորի՝ պրոլետարիատի նկատմամբ։ 1848—1849 թվականների բուրժուադեմոկրատական հեղափոխության ժամանակ բացահայտորեն հանդես գալով ռեակցիայի կողմում, նա ապարդյուն դիմում էր ֆրանսիական պրոլետարիատին՝ նրան հորդորելով վար դնել պայքարի դրոշը և հնազանդվել։ Հեղափոխության պարտությունից հետո նա պոզիտիվիստ փիլիսոփաներին կոչ էր անում ձեռնարկել հակահեղափոխական ոգով պրոլետարիատի «հոգևոր վերադաստիարակության» գործը։ Կոնտի սոցիալական իդեալը կապիտալիստների և բանվորների փոխհարաբերությունների «ներդաշնակությունն էր»։ Մի կողմից նա պահանջում էր բանվորներին հեռու պահել նրանց համար «վտանգավոր» աթեիզմի, մատերիալիզմի և հեղափոխության գաղափարներից (որոնք Կոնտի մոտ հանդես են գալիս որպես նույնական հասկացություններ[1]), իսկ մյուս կողմից առաջարկում էր նրանց ներշնչել «համեստության և հնազանդության» ոգի, կապիտալիստական կարգերի հեղափոխական տապալման գաղափարի փոխարեն նրանց մոտ պատվաստել ու խորացնել խաղաղ ճանապարհով առաջադիմության հասնելու հավատը։

Երիտթուրքերը նույնպես անսքող ատելություն էին տածում բանվոր դասակարգի նկատմամբ, խորշում աշխատավոր մասսաներից, այդ թվում՝ թուրք աշխատավորներից։ «Իր «հակահեղափոխական», «խաղաղ առաջադիմական», «կարգապահական» աշխարհայացքը բխեցնելով դրապաշտ (պոզիտիվիստ) փիլիսոփայության հիմունքներից»[2], Ահմեդ Ռիզան «իր աչքի առջև գլորվող բանվորական խնդիրների հանդեպ մնաց անզգա, անտարբեր։ Համաեվրոպական ընկերային շարժումները, սոցիա-

[1] Տե՛ս «Родоначальники позитивизма», Сборник, вып. IV, СПб, 1912, էջ 82, 83, 85, вып. V, 1913, էջ 8, 33։

[2] Ս. Սապաճ-Կյուլեան, Պատասխանատուները, էջ 129։

լիզմը նրա ուղեղին միշտ էլ եղան անմատչելի»[1]։ Ինչպես վերևում տեսանք, երիտթուրքերը 1908 թվականի հեղափոխությունից հետո անցնելով իշխանության գլուխ, ճնշեցին թուրքական փոքրաթիվ բանվորության դասակարգային ելույթները, մի շարք դրակոնյան օրենքներ ընդունեցին նրա դեմ։

8) Ելնելով բնության մասին մեխանիկական պատկերացումներից, Կոնտը, ինչպես ասվեց, գտնում էր, որ նրանում հակասություններ չկան։ Բայց նա բացառություն էր անում կենդանի բնության նկատմամբ և գտնում էր, որ նրանում, կամ իր խոսքերով ասած՝ ֆիզիկայում («ֆիզիկա» տերմինի տակ նա նկատի ուներ բիոլոգիան), կան ոչ միայն հակասություններ, այլև հակամարտություններ։ Սա շատ կարևոր հանգամանք է կոնտյան պոզիտիվիզմի մեխանիկական մետաֆիզիկայի և «ֆիզիկայի» (բիոլոգիայի) փոխհարաբերությունները բացահայտելու տեսակետից։ Կոնտը կենդանի բնությունը (կենդանական և բուսական աշխարհ) դիտում էր իբրև գոյության պայքարի աշխարհ։

Կենդանի բնության և մարդկային հասարակության միջև անցկացրած զուգահեռների միջոցով Կոնտը կենդանի բնության հատկությունները, մասնավորապես այնտեղ նրան հատուկ գոյության պայքարը փոխադրեց հասարակության ոլորտը, այն դիտելով որպես կենդանի օրգանիզմի մի տարատեսակ։

Այլ խոսքով, համընդհանրացման մեթոդով կենդանական և բուսական աշխարհում եղած գոյության պայքարի օրինաչափությունները տարածելով մարդկային հասարակության վրա, նա մեկի գոյությունը պայմանավորեց մյուսի կործանմամբ։

Այդպես էին կարծում և այդպես էին վարվում նաև երիտթուրքերը։ Նրանք նույնպես կենդանի բնության օրենքները տարածում էին մարդկային հասարակության վրա, գտնելով, որ բույսերի ու կենդանիների տեսակների ներսում չկա հակամարտություն, իսկ դրա փոխարեն հակամարտությունն օրինաչափություն է տեսակների միջև։ Վերհիշենք երիտթուրքերի 1910, 1911 թվականների համագումարների որոշումները հայության ոչնչացման անհրաժեշտության մասին և այդ առթիվ նրանց պարագլուխների կենսաբանական-ռասիստական ոգով ունեցած ելույթները։ Քիչ հետո կտեսնենք, թե երիտթուրքական դահիճներից Նազիմը նույն ոգով ինչպես էր հայությանը ոչնչացնելու կոչանում 1915 թվականի սկզբներին։ Իր գաղանային մտքերն ու առաջարկություններն արդարացնելու համար նա ասում էր, թե բոլոր կենդանիները և բույսերը իրար ուտում են, իրենց կյանքը երկարացնում են իրար բնաջնջելով, հետևաբար դա բնության ընդհանուր օրենք է։ Այստեղից նա հետևություն էր անում, որ եթե թուրքերն ուզում են ապրել, ապա հայերը պետք է բնաջնջվեն։

9) Մարդկության ամեն մի առաջադիմության հիմքը Կոնտը համարում էր «բարոյական վերածնունդը» և դրան ավելի կարևոր նշանակություն էր տալիս, քան տնտեսական ու քաղաքական զարգացմանը։ Դրանով իսկ Կոնտը «սոցիալական դինամիկայի» գաղափարը վերջին հաշվով հանգեցնում էր մարդկային բարոյական ձգտումների պաշտամունքի քարոզին։

Երիտթուրքերն էլ առանձնապես հրապուրված չէին Օսմանյան կայսրության տնտեսական զարգացման խնդիրներով։ Նրանց հիմնական մտահոգությունը կայսրության պահպանումն էր։ Նրանք գտնում էին, որ դա հնարավոր է միայն թուրք ազգի «բարոյական վերածննդի» պայմաններում, այսինքն՝ օսմանյան ազգի թուրքացման դեպքում, որի մասին մանրամասն խոսվեց վերևում։

10) «Բարոյական վերածննդի» գաղափարից Կոնտը բխեցնում էր «մեծ էակի» պաշտամունքի անհրաժեշտությունը, այդ պաշտամունքը տարածելով անցյալում ապրած, ներկայումս ու գալիքում ապրող բոլոր «մեծերի» վրա։

«Բարոյական վերածննդի» և «մեծ էակի» կոնտյան պոզիտիվիստական գաղափարները իրենց հետագա զարգացումը և լիակատար մարմնավորումը գտան գերմանական փիլիսոփաներ, սուբյեկտիվ-իդեալիստ Արթուր Շոպենհաուերի (1788—1860) անհատի կամքի ամբողջական տեսության[1] և վոլյունտարիզմի ու իռացիոնալիզմի քարոզիչ Ֆրիդրիխ Նիցշեի «Իշխանության կամքի»[2], «Մաքուր ռասայի»[3], «Գերմարդու»[4] (Übermensch) «Սու-

[1] Ս. Սապահ-Գյուլեան, *Պատասխանատուները*, էջ 130։

[1] Տե՛ս **Артур Шопенгауер**, Мир как воля и представление. Перевод А. Фета, СПб., типография М. М. Стесюлевича, 1881 г.:

[2] Տե՛ս **Фридрих Ницше**, Так говорил Заратустра (Also sprach Sarathustra). Символическая поэма. Перевод с немецкого, издания редакции журнала «Читатель», М., 1899, էջ 42.

[3] Տե՛ս **Фридрих Ницше**, Утренняя заря. Размышления о нравственных понятиях. Перевод с немецкого Е. Г. Склад. издание Д. П. Ефимова, М., էջ 235:

[4] Տե՛ս **Фридрих Ницше**, Воля к власти. Опыт переоценки всех цен-

պերմենի»[1] տեսություններում, որոնցից նույնպես շատ բան էին քաղել երիտթուրքերը։ Նիցշեն գովերգում էր Գերմարդու պատերազմելու անսահման կիրքը։ «Ես հաստատում եմ,— գրում էր նա,— որ այն ժամանակներում, երբ մարդկությունը դեռևս ամոթ չէր զգում իր դաժանության համար, կյանքը երկրի վրա ավելի ուրախ էր, քան այժմ, երբ գոյություն ունեն հոռետեսները»[2]։ «Այսպես խոսեց Զրադաշտը» սիմվոլիկ պոեմի մեջ, գովերգելով պատերազմներն ու արյունահեղությունները, Նիցշեն գրում էր. «Եղբայր իմ, արդյոք չարի՞ք են պատերազմը և ջարդը։ Բայց անհրաժեշտ է այդ չարիքը»[3]։ «Իմաստությունը մեզ ուզում է տեսնել համարձակ, անհոգ, կենսուրախ և ուժեղ»[4]։ «Դուք հավատացնում եք, թե բարի նպատակը իմաստավորում է նույնիսկ պատերազմը։ Իսկ ես ասում եմ՝ միայն պատերազմի շնորհն է լուսավորում նպատակը»[5]։ «Տղամարդը պետք է վարժեցվի պատերազմի համար, իսկ կինը՝ պատերազմի ոգի ներշնչելու համար։ Մնացածը հիմարություն է»[6]։

Աստվածացնելով սպանություն, հրկիզում ու բռնություն իրականացնող մարդու վարքը[7], գտնելով, որ «բանականությունը նույնիսկ ամենաիմաստուն մարդու համար բացառություն է... իսկ քաոսը... կանոն»[8], «Եվրոպական կուլտուրայի արժեքը» գրքում Նիցշեն ասում էր, թե ավերումը վերածնության սկիզբ է։ «Այսպես խոսեց Զրադաշտը» գրքում Գերմարդու մասին Զարատուստրայի բերանով Նիցշեն ասում է. «Տեսեք, ես ձեզ հետ խոսում եմ Գերմարդու մասին։ Նա ինքը կայծակն է, նա ինքը հանդրգնությունն է։ Հողագունդը երբևէ կպատկանի Գերմարդուն»[9]։ Նիցշեն ավերածությունը համարում էր «ստորին ռասաներից»

ностей (1884—1888). Под редакцией Г. Рачинского и Я. Бермана (Полн. собр. соч., т. IX, 1910, «Московское книгоиздательство»), էջ 17։

[1] Տե՛ս **Фридрих Ницше**, Антихрист. Перевод Полилова, книгоиздательство «Прометей», СПб, 1907, էջ 7, 13։

[2] **Фридрих Ницше**, Генеология морали, с. 31.

[3] **Фридрих Ницше**, Так говорил Заратустра, с. 38.

[4] Նույն տեղը, էջ 42։

[5] Նույն տեղը, էջ 50։

[6] Նույն տեղը, էջ 71։

[7] Տե՛ս **Фридрих Ницше**, Генеология морали, էջ 17։

[8] **Фридрих Ницше**, Полн. собр, соч., т. IX, М., 1910, с. 7.

[9] **Фридрих Ницше**, Так говорил Заратустра, с. 10.

մարդկության մաքրման, «մաքուր ռասայի» պահպանման միջոց։ Իսկ ո՞ւմ է բաժին ընկած «մաքուր ռասայի» պահպանման և «ամուր կարգ» ստեղծելու միսիան։ Նորից Գերմարդուն, Սուպերմենին, «բարձրագույն տեսակի» մարդուն։

Ինչպես տեսնում ենք, Նիցշեի մոտ չկան դասակարգեր, չկա դասակարգային պայքար։ Ստրկատերն ու ստրուկը, ֆեոդալն ու ճորտը, բուրժուան և պրոլետարը միևնույն օրգանիզմի մասերն են, բոլորն էլ ատելի են ու խղճուկ, բոլորն էլ քաղաքակրթության այլանդակ զոհեր են։ Մարդկային հասարակության զարգացումն առաջ մղող դրդապատճառը Գերմարդ անհատն է։ Ատելություն տածելով ժողովրդական մասսաների նկատմամբ, Նիցշեն նրանց արհամարհանքով անվանում էր հասարակ («schlicht»)[1], «հոտ»[2], «վախկոտ» («malus»)[3] համարում «ստրուկների անդեմ զանգված», կամք կրողի քաղաքական կոմբինացիաների պասսիվ օբյեկտ։

Դժվար չէ նկատել, թե երիտթուրքերի պարագլուխների վրա որպիսի խոր ազդեցություն էին թողել կոնտյան «Մեծ էակի» պաշտամունքը և նիցշեական «Գերմարդու» գովերգը։ «Թուրքական ռասան» մաքրելը գլխավոր նպատակներից մեկը համարելով, երիտթուրքերը դրան հասնելու միջոցներ էին առաջադրում պատերազմներն ու ջարդերը, Օսմանյան կայսրության այլազգի արհամարհելի ռայայի թրքացումը կամ նրա գլխովին ոչնչացումը։ Այդ «գերագույն խնդրի» իրականացումը նրանք համարում էին «մեծ անհատների» գործ։ Պատահական չէ, որ երիտթուրքական պարագլուխներից ամեն մեկն առանձին-առանձին այն խոր համոզումն ուներ, թե նախախնամությունը հենց իրեն է վստահել թուրք ազգի «վերածնության» մեծ առաքելությունը։ Այդ տեսակետից հատկապես աչքի էր ընկնում Էնվեր փաշան, որն իր մասին ունեցած գերաճած պատկերացումներով առանձնանում էր նույնիսկ իր ոճրագործ շրջապատի մյուս «գերմարդկանցից»։ Բանն այնտեղ էր հասել, որ Էնվերը ոչ ավել, ոչ

---

[1] **Фридрих Ницше**, Воля к власти. Опыт переоценки всех ценностей (1884—1888), с. 26.

[2] Տե՛ս **Фридрих Ницше**, Генеология морали, էջ 10—11։

[3] Տե՛ս **Фридрих Ницше**, Воля к власти, էջ 17։

[4] Տե՛ս **Фридрих Ницше**, Генеология морали, էջ 11։

պակաս իրեն համեմատում էր Նապոլեոն Բոնապարտի հետ և գտնում, որ ալլահի կամքով ինքն է լինելու համաշխարհային թուրքական պետության ստեղծողը։

Ահա այսպես էին երիտթուրքական պարագլուխները յուրացրել եվրոպական ռեակցիոն սուբյեկտիվ-իդեալիստական տեսությունները, մասնավորապես Օգյուստ Կոնտի պոզիտիվիստական ուսմունքը, որոնք հստակորեն արտացոլված էին նրանց մարդատյաց շովինիստական գաղափարախոսության մեջ։

Մարքսիզմ-լենինիզմի դասականները տվել են երիտթուրքերի գաղափարախոսության հիմքում ընկած Օ. Կոնտի պոզիտիվիզմի ջախջախիչ քննադատությունը։ Մանոթանալով պոզիտիվիզմին, Կ. Մարքսը 1866 թվականին Ֆ. Էնգելսին գրած նամակում հետևյալ բնութագիրն է տվել այդ ուսմունքին. «Ես այժմ ի միջի այլոց ուսումնասիրում եմ Կոնտին, քանի որ անգլիացիներն ու ֆրանսիացիները շատ են աղմուկ հանում նրա մասին։ Սրանց գրավողը Կոնտի հանրագիտակությունն է, սինթեզը։ Սակայն Հեգելի համեմատությամբ դա ողորմելիություն է (թեպետև Կոնտը որպես մաթեմատիկոս և ֆիզիկոս գերազանցում է նրան, այն է՝ գերազանցում է մանրամասնություններում, իսկ ամբողջությամբ վերցրած Հեգելն այստեղ էլ անսահման մեծ է նրանից)։ Եվ այդ անպետք պոզիտիվիզմը երևան է եկել 1832 թվականին»[1]։ Մի այլ առիթով Կ. Մարքսը գրել է. «Կոնտը Փարիզի բանվորներին հայտնի է քաղաքականության ասպարեզում որպես կայսրության (անձնական դիկտատուրայի), քաղաքատնտեսության մեջ որպես կապիտալիստական տիրապետության, մարդկային գործունեության բոլոր ոլորտներում, նույնիսկ գիտության բնագավառում որպես հիերարխիայի մարգարե և որպես հեղինակ նոր կատեխիզիսի՝ նոր պապով և նոր սրբերով հանդերձ՝ հների փոխարեն»[2]։

Նշելով, որ «...Կոնտը իր բոլոր ...գաղափարները փոխ է առել Սեն-Սիմոնից», Ֆ. Էնգելսը շեշտել է, որ սակայն այդ գաղափարները «խմբավորելիս և իր ձևով ուղղելիս նա այլանդակել է դրանք։ Պատռելով դրանց հատուկ միստիցիզմը, միևնույն ժամանակ նա գռեհկացրել է դրանք, վերամշակել իր սեփական ֆիլիստերական ձևով»[1]։

Իր հերթին Վ. Ի. Լենինը սպանիչ բնութագիր է տվել պոզիտիվիզմին և Օ. Կոնտին։ Պոզիտիվիզմը, այդ «ողորմելի շիլափլավը, այդ արգահատելի միջին կուսակցությունը փիլիսոփայության մեջ»[2], փորձում էր «դուրս ցատկել» մատերիալիզմից և իդեալիզմից, «հաշտեցնել», «համադրել» այդ հակադիր ուղղությունները։ Իրականում մատերիալիզմ կամ իդեալիզմ երկընտրանքից դուրս պրծնելու Կոնտի և նրա հետևորդների փորձերը, ինչպես արդարացի մատնանշել է Վ. Ի. Լենինը, հանգեցնում են «հաշտվողական շառլատանության»[3]։

---

[1] **К. Маркс** и **Ф. Энгельс,** Избр. письма, Госполитиздат, М., 1953, с. 180.

[2] Архив Маркса и Ф. Энгельса, т. III (VIII). Партиздат, М., 1934, с. 347.

[1] **К. Маркс** и **Ф. Энгельс,** Избр. письма, с. 479—480.

[2] Վ. Ի. Լենին, *նշված, հ. 18, էջ 448։*

[3] *Նույն տեղը։*

ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՍԱՐՍԱՓԻ ՏԱՐԻՆԵՐԸ

Այսպիսով, արդեն առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրության կառավարողներն իրենց տրամադրության տակ ունեին մարդատյաց գաղափարների մի հզոր զինանոց։ Այդ զինանոցի բոլոր զենքերը, առավել ևս իսլամիզմն ու պանիսլամիզմը, թուրքիզմն ու պանթուրքիզմը դժբախտ ճակատագրի բերումով ամենից առաջ ուղղվել էին հայ ժողովրդի դեմ։

Արդ, իսլամիզմն ուղղված էր Օսմանյան կայսրության բոլոր քրիստոնյա ժողովուրդների դեմ։ Բայց կայսրության եվրոպական նահանգների քրիստոնյա ժողովուրդների վիճակն անհամեմատ գերադասելի էր հայերի վիճակից։ Նրանց մեծ մասը սլավոններ էին, որոնք իրենց թիկունքում մշտապես զգում էին Ռուսաստանի հզոր շունչը։ Նրանք ունեին թուրք գավթիչներին դիմադրավելու այլ միջոցներ և առավելություններ։ Նշենք թեկուզ այն, որ եվրոպական նահանգներում սլավոնները բացարձակ մեծամասնություն էին կազմում, այնտեղ քրիստոնյա ժողովուրդներն ապրում էին համահավաք և բացի զինված թուրքերից, ուրիշ թշնամի չունեին։ Այնուհետև, պակաս կարևոր չէր այն, որ Բալկանները, Եվրոպայի մի մասը կազմելով, իր կողմն ուներ եվրոպական դեմոկրատիայի համակրանքն ու աջակցությունը։

Միանգամայն այլ էր հայության վիճակը։ Կայսրության քրիստոնյա ժողովուրդներից ամենաանպաշտպանը հայ ժողովուրդն էր՝ հեռու «Եվրոպայի աչքից», Փոքր Ասիայի խորքում մուսուլմանական ծովով շրջափակված։ Նրա դիմաց կանգնած էր ոչ միայն ոխերիմ թշնամի կառավարությունը իր զինվորականությամբ, այլև զինված քուրդն ու չերքեզը՝ իրենց ընչաքաղց ասպատակություններով, չդադարող բռնություններով և սպանություններով։

Պանիսլամիզմից կայսրության եվրոպական մասի քրիստոնյաները վտանգ չէին տեսնում։ Նպատակ ունենալով մի պետության մեջ համախմբել Ասիայի, Աֆրիկայի և Ռուսաստանի մահմեդականներին, պանիսլամիզմը դրան համապատասխան պայքարի երկու ճակատ բացեց՝ եվրոպական գաղութարարների և Ռուսաստանի դեմ։ Ըստ որում վերջինիս դեմ պայքարին առաջնություն էր տրված, քանի որ այնտեղ պանիսլամիզմի հաղթանակը պայմանավորված էր ռուս և մյուս քրիստոնյաների պարտությամբ։ Այդ «մյուս» քրիստոնյաների թվում թուրքական կառավարությունը վտանգավոր էր համարում հատկապես կովկասահայությանը։ Այսպիսով, պանիսլամիզմն իր սուր ծայրով ուղղված էր ցարական կայսրության ռուսների և հայերի դեմ։

Թուրքիզմն ուղղված չէր ո՛չ Եվրոպայի և ո՛չ էլ Ռուսաստանի դեմ։ Այդ գաղափարը նույնիսկ ձեռնտու էր Օսմանյան կայսրության եվրոպական նահանգների համար, քանի որ թուրքիզմի համաձայն թուրքերի համար գերադասելի էր ձգել Բալկանները և ամրանալ բուն Թուրքիայում։ Թուրքիզմը մահացու էր միայն քրիստոնյա հայության համար, քանզի թուրքիզմի իդեալը լիակատար թուրքացումն էր Անատոլիայի, որի մեջ «Արևելյան Անատոլիա» անվան տակ մտցված էր նաև Արևմտյան Հայաստանը։

Պանթուրքիզմը երկու սուր ծայր ուներ։ Դրանցից առաջինն ուղղված էր Ռուսաստանի դեմ, որի կազմում էր թուրքալեզու ժողովուրդների բացարձակ մեծամասնությունը։ Մյուս սուր ծայրով այն ուղղվեց թուրանական «միասնական ժողովրդի» մեջ ընկած հայ ժողովրդի՝ իբրև խոչընդոտի դեմ՝ ինչպես բուն Թուրքիայում, այնպես էլ Կովկասում։

Եվ այսպես, պատմական ճակատագրի բերումով հայ ժողովուրդը գահավեժ գնում էր դեպի արյունոտ 1915 թվականը։

Բալկաններն անվերադարձ կորցնելուց հետո թուրք բուրժուազիայի, թուրքական շովինիզմի առջև դեմ հանդիման մնացել էին միայն հայ բուրժուազիան և հայ ժողովուրդը։ Ֆիզիկապես ընաջնչելով հայ բուրժուազիային, թուրք ազգային բուրժուազիան իր ճանապարհից ընդմիշտ կվերացներ մրցակից-հակառակորդին։ Թուրքահայ բուրժուազիան Օսմանյան կայսրության բուրժուազիայի բաղկացուցիչ մասը լինելով հանդերձ, շարունակում էր թուրքական բուրժուազիայի համար մնալ իբրև

շուկայի վտանգավոր մրցակից, որին անէացնելով միայն, ըստ երիտթուրքերի, թուրք բուրժուազիան կարող էր, վերջապես, «հանգիստ շունչ քաշել»։

Կարող է տարօրինակ թվալ, թե հայ ժողովրդի համար այդ դաժան, դառնաղետ ժամանակներում ինչ խոսք կարող էր լինել հայ բուրժուազիայի՝ իբրև շուկայում թուրք ազգային բուրժուազիայի «վտանգավոր մրցակցի» մասին։

Բանն այն է, որ չնայած իր համար ստեղծված դժվարագույն պայմաններին, հայ բուրժուազիան դեռ շարունակում էր տնտեսական կարևոր դիրքեր պահպանել կայսրության տարածքում։ Կայսրության առևտրի և արդյունաբերության մեջ հայ բուրժուաներին էր պատկանում կապիտալների քառորդ մասը, այն դեպքում, երբ թուրք բուրժուաները վերահսկում էին առևտրական գործառնությունների միայն 15 տոկոսին և արտադրության 12 տոկոսին։

Տնտեսության մեջ դեռ ամուր դիրքեր էին պահպանում ոչ միայն հայ դրամատերերը։ Օգտվելով կոտորածների միջև ընկած կարճատև դադարներից, հայ ժողովուրդը իրեն հատուկ ջանադրությամբ շարունակում էր ստեղծագործ աշխատանքը հայրենի լեռներում ու դաշտերում, միաժամանակ մտորում ապագայի նոր ծրագրեր, հույս ունենալով, թե միգուցե օրերից մի օր իր համար էլ ապրելու մի դուռ կբացվի՝ առանց սարսափի ու կոտորածների։ «Հայերն իրենց տերիտորիայում ապրում են ավելի քան երեք հազար տարի,— ասված էր Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության զեկուցագրերից մեկում։— Նրանց մոտ 80 տոկոսն այնտեղ զբաղվում է հողագործությամբ, իսկ մնացածներն ապրում են քաղաքներում, զբաղվելով առևտրով ու արհեստներով։ Ինչ վերաբերում է Փոքր Ասիայի արևմտյան մասում օսմանյան թուրքերի շրջանում ապրող հայերին, ապա սրանք գերազանցապես բնակվում են քաղաքներում և իրենց ձեռքում են կենտրոնացրել Ասիական Թուրքիայի ամբողջ առևտուրն ու բոլոր արհեստները...» Չնայած բոլոր արհավիրքներին, այնուհետև ասված է այդ փաստաթղթում, հայերին հաջողվել է պահպանել «իրենց ամբողջ ազգային կարգ ու սարքը և բուն իսկ տերիտորիան»[1]։

[1] Б. А. Борьян, Армения, международная дипломатия и СССР, Часть II, Госиздат, М.—Л., 1929, с. 418.

1909 թվականի մասսայական ջարդերից հետո հայերը հատկապես մեծ նվիրումով էին փարվել իրենց ազգային մշակույթին։ Հաղթահարելով անասելի դժվարություններ, նրանք վառ էին պահում լուսավորության ջահը։ Օգտաշատ գործերով ծանրաբեռ հարյուրավոր ու հազարավոր նվիրյալ մտավորականները՝ գրողներ, ուսուցիչներ, հոգևորականներ, բժիշկներ, փաստաբաններ, ազգային արժեքների նախանձախնդիր ավանդապահներ էին, որոնք ոչ միայն խանդաղատանքով պահում-պահպանում էին հայ ժողովրդի հոգևոր ժառանգությունը, այլև փոխանցում նոր սերնդին։ Նրանց ջանքերով էր մասնավորապես կանգուն մնում հարևանների նախանձը շարժող հայոց ազգային կրթական համակարգը։ Բավական է ասել, որ եթե կայսրության ողջ տարածքի վրա պետական դպրոցների երկսեռ աշակերտների թիվը չէր անցնում 242 հազարից[1], ապա հանգանակություններով և նվիրատվություններով պահպանվող հայկական ավելի քան 1000 դպրոցներում[2] 1912 թվականին կրթություն էր ստանում 120 հազար աշակերտ[3]։ Այդ թվի մեջ չէին մտնում Կ. Պոլսի հայկական դպրոցներում, մայրաքաղաքում և գավառներում գործող ֆրանսիական և ամերիկյան դպրոցներում, ինչպես նաև օտար որբանոցներում ընդգրկված հայ աշակերտները[4]։ Մի այլ աղբյուրի համաձայն 1914 թվականին ամբողջ Թուրքիայում կար տարբեր հարանվանությունների պատկանող ավելի քան 2000 հայկական դպրոց[5]։ Հայաստանում և Անատոլիայում դպրոցական ցանցի ընդլայնման ուղղությամբ մեծ ջանքեր էին թափում «Հայոց միացյալ ընկերությունը» և կրթական այլ մարմիններ։

1912 թվականին թե՛ Կովկասում և թե՛ Թուրքիայում մեծ շուքով նշվեց հայոց գրերի գյուտի 1500-ամյակը։ Համազգային խանդավառության մթնոլորտում առաջ քաշվեց հայկական համալսարան ունենալու գաղափարը, և այդ նպատակով կատարվեցին դրամական մեծ նվիրատվություններ։ Համալսարանը նա-

[1] Տե՛ս «Տրապիզոնի թեմի վիճակավոր Յովհաննես արք. Նազլեանի յուշերը...», Ա. հատոր, էջ 667։

[2] Տե՛ս Հայկազն Գ. Ղազարեան, Յեղասպան Թուրքը, Պեյրութ, 1968, էջ 223։

[3] Տե՛ս «Տրապիզոնի թեմի վիճակավոր Յովհաննես արք. Նազլեանի յուշերը...», էջ 667։

[4] Տե՛ս Հայկազն Գ. Ղազարեան, Յեղասպան Թուրքը, էջ 223։

[5] Տե՛ս «Հայաստանի կոչնակ», № 31, 20 ապրիլի 1931, Նյու Յորք, էջ 810։

խատեսվում էր հիմնել հենց թուրքերի ձեռքին պատկանող Արևմտահայաստանում՝ հայոց հայրենիքի պատմական կենտրոնում՝ հայության համար նվիրական Տարոն գավառում։

Զգալիորեն բարձրացել էր նաև հայերի քաղաքական կշիռը և՛ գավառում, և՛ հատկապես կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսում։ Օսմանյան պետության մի քանի նախարարներ, հաճախ նույնիսկ արտաքին գործոց նախարարը, հայեր էին։ Քրիստոնյաներին զինվորագրելու հետևանքով հայ տարրը սկսել էր դիրքեր գրավել նաև թուրքական բանակում։

Սակայն թուրքական բուրժուազիան, թուրքական ռեակցիան շիլ աչքով, ներքին զայրույթով ու նախանձով էին նայում այդ ամենին։ «Աշխատելով իրենց այլազգի գործակիցներին դուրս մղել նրանց գրաված շահավետ դիրքերից,— գրում է սովետական թուրքագետ Դ. Երեմեևը,— թուրքական բուրժուազիան ավելի ու ավելի հաճախ է դիմում «անթույլատրելի գործելաձևերի»։ Ջարդերն ու կոտորածները մրցապայքարում դառնում են թուրք խանութպանների, անասնավաճառների և կուլակների հիմնական միջոցը։ Անատոլիացի բուրժուաների դաժանությունը ամենևին նրանց ուժից չէր, այլ, ընդհակառակը, անզորությունից, թերզարգացությունից, անլիարժեքության զգացումից։ Հաջողության մեջ ապրող հարևան քրիստոնյայի նկատմամբ անողոք նախանձը, որը տարիներով քրքրել էր բուրժուականացած քաղքենու հոգին, պոռթկում է ջարդարարի պաթոլոգիական մոլեռանդության ձևով։ Մրցակիցների նկատմամբ տածած իր ատելությունը թուրքական բուրժուազիան փոխադրում էր «այլազգիների ու այլադավանների» ամբողջ մասսայի վրա, իր ժողովրդին գրգռելով հայերի, հույների և մյուս ազգային փոքրամասնությունների դեմ»[1]։

Հայ ժողովրդի բնաջնջումով թուրք ազգային բուրժուազիան պետք է լուծեր նաև թուրք վերնախավերին, բոլոր թուրանականներին մտահոգող խնդիրը, այն է՝ արևմուտքից արևելք նահանջող թուրքերի համար հարթել դեպի հին հայրենիք տանող տերիտորիալ ուղիները։

Ինչպես նշված էր Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության՝ կառավարությանը ներկայացրած վերոհիշյալ զեկուցագրում, ամբողջ Փոքր Ասիան, Մարմարա և Էգեյան ծովերից մինչև Կասպից ծովի կովկասյան ափերը, 24-րդ միջօրեականից մինչև 46-ը, այսինքն՝ մոտ 2 հազար վերստ տարածության վրա բնակվում են մուսուլմանություն դավանող թուրքալեզու ժողովուրդներ՝ արևմուտքում սյունիները, արևելքում՝ շիաները։ «Հենց այս հսկայական տերիտորիայում, 34 և 42-րդ միջօրեականների միջև, այսինքն՝ մոտ 600 վերստ տարածության վրա է գտնվում Հայաստան անունը կրող մի ճեղքվածք...»[1]

Երիտթուրքերի, բոլոր թուրանականների ուղեղում այն միտքն էր պտտվում, թե իրենց պանթուրքական նկրտումների գլխավոր արգելքը հենց այդ «ճեղքվածքն» է, այդ «սեպը», այսինքն՝ Հայաստանը և հայ ժողովուրդը, որը մասնավորապես Էրզրումի և Կարսի սարահարթերում, Բաղեշի և Վանի շրջաններում ունենալով գերակշիռ դիրք, անցանկալի պատվար էր իրենց համար։ Հայկական շարժումը դիտվում էր իբրև հիմնական խոչընդոտ համաթուրանական պլանների իրականացման ճանապարհին։

Վերևում արդեն հիշատակվեց, որ իթթիհադ կուսակցության հերթական համագումարը, որ կայացավ 1910 թվականին Սալոնիկում[2], ճակատագրական որոշում ընդունեց Օսմանյան կայսրության հայության մասին։ Ժամանակագրական տեսակետից համաժողովի թվականը պատմության համար շատ կարևոր է հետագա դեպքերի լուսաբանման տեսակետից։

Իթթիհադի այս ժողովին մասնակցում էին Ահմեդ Աղաևը, բժ. Բուսուխին, բժ. Նազիմը, Զիա Գեոքալփը, բժ. Բեհաեդդին Շաքիրը, Ջահիդը, Թալեաթը, Հաջի Ադիլը և ուրիշներ[3]։

---

[1] Д. Е. Еремеев, На стыке Азии и Европы, с. 124.

[1] Մեջբերված է ըստ Б. А. Борьян, Армения, международная дипломатия и СССР, часть II, с. 418.

[2] Սովորաբար իթթիհադի համագումարները (կոնգրեսները) տեղի էին ունենում օգոստոսից մինչև հոկտեմբեր, այսինքն՝ երեք ամիս տևողությամբ։ Կուսակցության առաջին չորս համագումարները հաջորդաբար կայացվել են Սալոնիկում՝ 1908, 1909, 1910 և 1911 թվականներին։ Բալկանյան պատերազմի ընթացքում, իթթիհադի կենտրոնը վերջնականապես Կ. Պոլիս փոխադրվելուց հետո, կուսակցության հետագա բոլոր համագումարները տեղի ունեցան մայրաքաղաքում՝ 1912, 1913, 1916, 1917 և 1918 թվականներին։ Ինչպես տեսնում ենք, հայոց բնաջնջման տարիներին՝ 1914 և 1915 թվականներին իթթիհադի համագումարներ տեղի չեն ունեցել, բայց տենդայնորեն գործել է կուսակցության շարաշուք գաղտնի կենտրոնը, որը ղեկավարել է ցեղասպանության «գործը» (տե՛ս Հայկազն Գ. Ղազարեան, Ցեղասպան Թուրքը, էջ 358)։

[3] Տե՛ս Հայկազն Գ. Ղազարեան. Ցեղասպան Թուրքը, էջ 17։

Հայկական հարցի քննարկման ժամանակ բժ. Նազըմը տեսականորեն «հիմնավորեց» «հայկական սեպի» ոչնչացման անխուսափելիությունը։ «Այս պահին մեզ համար կարևորը գաղափարի (պանթուրքիզմի։— Հ. Ս.) ոչ թե տեսական վերլուծումներն ու հիմնավորումներն են,— ասում էր նա,— այլ նրա իրականացման գործնական միջոցների ճշտումը»։ Ապա դիմելով համագումարի մասնակիցներին, նա այսպես է «ճշտում» այդ «գործնական միջոցները». «Հավատում եմ,— շարունակել է նա,— որ բոլորդ համաձայն կլինեք, եթե հայտարարեմ, որ այդ քաղաքական ծրագրի իրականացման նախապայմանը հայկական հարցի արմատական լուծումն է։ Իբրև քրիստոնյա ժողովուրդ, մեր կայսրության մեջ մեզ իբրև հպատակ ապրում են միայն հայերը։ Պատմության բնական ընթացքն անխուսափելի պիտի դարձնի նրանց անջատումը կայսրությունից, ինչպես բալկանյան ժողովուրդներինը։ Մենք հաշտվեցինք, թեև ակամա, այս վերջիններիս անջատման հետ։ Մեր կայսրության ամբողջականության պահպանման մասին շռայլված խոստումներին հակառակ Եվրոպան մեզ պարտադրեց, որ լքենք ամբողջ Բալկանները»։ Բայց առավել սարսափելին առջևում է, այնուհետև ասում է նա։ Բալկաններում և Աֆրիկայում կրած պարտությունից հետո անկախ Հայաստանի հեռանկարը հավասարակշռությունից հանում էր իթթիհադականներին, մուսավաթականներին, բոլոր պանթուրքականներին։ Եվ Նազըմը շարունակում է. «Հայերի անջատման ընթացքի մեջ ենք գտնվում այս պահին։ Տեսնեիք, թե ինչպես ներկայացան նրանք դեսպանախորհրդի առջև և բարենորոգումների առաջարկի տակ կես-ինքնավարության պահանջ դրեցին, հակառակ մեր թելադրանքներին և պնդումներին, որպեսզի հրաժարվեն եվրոպացիներից և մենք առանձին կարգադրենք իրենց խնդիրը՝ իբրև կայսրության ներքին խնդիր»։ Ապա, պատկերացնելով ոչ հեռավոր ապագան, նա ասում է. «Մի պահ երևակայեցեք արևվելյան նահանգների (Օսմանյան կայսրության։— Հ. Ս.) վրա մի հայ պետության կազմությունը։ Նման պետությունը թուրանական ծրագրի տապանաքարը կլինի։ Ոչ միայն պարտավոր պիտի լինենք ամբողջապես հրաժարվել թուրք ցեղի միացման ծրագրից, այլև պատրաստ պիտի լինենք սեղմվելու Անատոլիայի մեջ միայն, Կոնիայի նախկին սելջուկյան սուլթանների նեղ հողամասերի վրա։ Այն ժամանակ դա կնշանակի մահացում։ Անմիջապես կցանկանան նաև օգտվել հույները՝ իրենց դարավոր իդեալն իրականացնելու ցանկությամբ։ Որևէ թուրքի համար անհնար է հաշտվել նման իրականության հետ»։

Վերջապես Նազըմը բանաձևում է իր հիմնական միտքը։ «Իբրև վտանգավոր և անընդունելի՝ վանելուց հետո այս միջոցները,— ասում է նա,— մնում է միակ և մի վերջին կարելիություն, որի հետ կամա թե ակամա պարտավոր ենք հաշտվել՝ ընդունելով թուրքական շահերին համապատասխանող միակ ելքը՝ պետք է բնաջնջել հայերին մեր կայսրության մեջ»։ Նազըմը մի պահ ընդմիջում է, ապա շարունակում. «Այս առաջարկը կարող է թվալ անխիղճ, անմարդկային, դժվարին, բայց հարցը խղճի խնդիր չէ, ոչ էլ մարդկային զգացումների խնդիր։ Կա՛մ կհամաձայնենք հայերի ամբողջական և արմատական բնաջնջման ծրագրին, ապահովելով մեր ներկան ու ապագան, պատրաստելով մեր զարգացման ու զորացման ուղին, և կա՛մ, մերժելով այս ծրագիրը, կշարունակենք մնալ արդի կացության մեջ, մեր ոտքի տակի հողը փորելով մեր երկրի մեջ իսկ, բռնելով քայքայման ու անհետացման ճամփան։ Ուրիշ ելք գոյություն չունի մեզ համար։ Այսօր իսկ, մինչև հիմա մեր կատարած երկար խորհրդակցություններից հետո, պարտավոր ենք կատարել ընտրությունը։ Այո կամ ոչ ասել՝ հստակ և վճռական կերպով, բոլոր տեսակի վարանումները մի կողմ ձգելով, և կազմել համապատասխան մի ծրագիր, նկատի առնելով ամենափոքր մանրամասնություններն իսկ, որպեսզի ամբողջական լինի նրա իրականացումը»։

Այնուհետև Նազըմը համագումարի մասնակիցներին նախազգուշացնում է, որ ծրագրվելիք նախճիրի գլուխ բերելը դժվարին գործ է լինելու։ «Բոլորս էլ հասկանում ենք, որ շատ բարդ ու դժվար է ձեռնարկը,— ասում է նա։— Հարցը մեկ շրջանի, Արևվելյան Անատոլիայի մեջ բնակվող հայության բնաջնջման ձևով չի ներկայանում միայն, այլ ամբողջ կայսրության մեջ տարածվող այդ նենգամիտ, ճարտար և ճկուն էրմենի կոչված մի ցեղի, որի եռանդին և աշխատանքին գոհացում չի կարող տալ նեղ ու փոքր սեփական մի հայրենիքն իսկ, որն ընդարձակ կայսրության պահանջ է զգում իբրև գործունեության դաշտ, Պոլսից մինչև Բաղդադ, Բայազետից մինչև Ադանա, Իսկենդերուն։ Պետք է արմատից բնաջնջել այդ ցեղը, որը որդի պես փարված է մեր մարմնին ու կրծում է մեզ»։

Հենց այստեղ էլ, համագումարում, Նազիմը մարդատյաց ծրագիրն իրականացնելու համար գործնական առաջարկ է անում. «...մեր ամենից վստահելի, գաղտնապահ և կարող զինվորականներից, քաղաքային բարձր պաշտոնեությունից և մեր կենտրոնական վարչությունից կազմել մի մասնավոր հանձնախումբ՝ այս առաջարկի իրականացման ամբողջական և մանրակրկիտ մի ծրագիր կազմելու համար։

Դյուրացնելու համար մեր որոշումը, մի քանի բառով պարզեմ նաև հետևանքները, նպաստավոր, թե աննպաստ, այս ծրագրի։ Եթե հաջողությամբ ավարտենք այդ ծրագիրը.

ա. Լուծված կլինի միանգամ ընդմիշտ «հայկական խնդիր» կոչվածը՝ նրա նյութը կազմող տարրի անհետացումով։

բ. Մեր պետությունը ձերբազատված կլինի թե՛ միջազգային և թե՛ ներքին քաղաքականության տեսակետով այդ հարցի ստեղծած տաղտուկներից, նեղություններից ու տագնապներից։

գ. Երկիրը ազատած լինելով հայ տարրից, ընդարձակ դաշտ կբացվի մեր ժողովրդի գործունեության համար, հատկապես տնտեսական գետնի վրա, որի տերը դարձել են հայերը։

դ. Նրանց հարուստության տեր կդառնան մեր ժողովուրդը և մեր պետությունը։

ե. Ամբողջ Անատոլիան Թուրքերով բնակված միատարր երկրի կվերածվի։

զ. Այդ ամենից հետո՝ ամենամեծ խոչընդոտի անհետացումով կհարթվի ճամփան այն մեծ իդեալի՝ համաթուրանականության գաղափարի իրականացման համար, որին կառչած ենք մեր ամբողջ էությամբ»։

Դնելով, որ հայության ոչնչացման ծրագիրը ոչ միայն դժվար է իրականացնել գործնականորեն, այլև անհնարին է զետեղել մարդկային բարոյական նորմերի շրջանակներում, Նազիմը այնուհետև ասել է. «Անշուշտ, բողոքի, զայրույթի ալիքը պիտի տարածվի ամեն տեղ։ Ահագին անկում պիտի կրի մեր բարոյական վարկը, և նրա հետևանքով նաև մեր տնտեսական վարկը։ Պետք չէ մոռանալ սակայն, որ այդ վիճակը պիտի լինի ժամանակավոր, կարճ կամ երկար, որոշ ժամանակի համար միայն ու նրանից հետո ամեն ինչ մոռացության պիտի տրվի, ու մենք պիտի կարողանանք վերադառնալ միջազգային կյանքի մեջ նախկինից ավելի մի փայլուն դիրքի, որովհետև բազմապատկված

պիտի լինի մեր ուժը։ Այդ ուժն է միակ հաշվի առնելիքը կյանքի մեջ»[1]։

«Ամեն ինչ մոռացության պիտի տրվի...» Երկրորդ համաշխարհային պատերազմը սկսելիս նույն միտքը բառացիորեն կրկնել է Հիտլերը։

Հայությանը ոչնչացնելու այս դժվարին որոշումը վերարծարծվեց ու ամրապնդվեց 1911 թվականին տեղի ունեցած իթթիհադի հաջորդ համագումարում։

Ինչպես տեսնում ենք, պանթուրքականները քաջ գիտակցում էին, որ կայսրության ներսում այլազգի ժողովուրդներին որոշ չափով ներքին ինքնավարություն տալը կարևոր կովան է դառնալու լիակատար պետական անկախության նպատակով նրանց կողմից մղվող պայքարի համար։ Ուստի թուրք շովինիստներն այդ մասին լսել անգամ չէին ուզում։ Բայց հենց դա էր նման իրադրությունից դուրս գալու բնական ելքը։ Ինչպես նկատում էր բոլշևիկյան «Պրավդա» թերթը, Օսմանյան կայսրության մեջ ազգային հարցի լավագույն լուծումը կլիներ «պետության կազմավորումը ավտոնոմ սկզբունքներով, այսինքն՝ ամեն մի առանձին ազգությանն ինքնավարության լայն իրավունքների տրամադրումը»[2]։

Հենց այդ ժամանակ, 1912 թվականից, նորից հրապարակ եկավ հայկական բարենորոգումների հարցը, որն առաջ քաշեցին Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան։ Այդ խնդրում հատկապես մեծ շահագրգռություն էր հանդես բերում Ռուսաստանը։ Անշուշտ, Կ. Պոլսի ռուսական դեսպան Մ. Գիրսի միջոցով Պետերբուրգի ձեռք առած եռանդուն քայլերը ամենակարևոր դերը պիտի խաղային Հայաստանի բարենորոգումների խնդրի դրական լուծման գործում[3]։ Եռյակ տերությունները բարենորոգումների հարցը գլխավորապես բարձրացրին՝ հարվածելու համար և՛ Թուրքիային, և՛ նրա դաշնակից Գերմանիային։ Հարցի բարեհաջող

---

[1] Մեվլան զադե Ռիֆաթ, Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը։ Բեյրութ, 1938, էջ 160, 165, 166, 186, 187, 191, 192, 193։

[2] «Правда», 27 июля 1912 г.

[3] Տե՛ս «Հայկական հարցը և Պողոս Նուբար փաշան», Վաղարշապատ, 1914, էջ 3։

լուծումը պետք է սկիզբ դներ Թուրքիայից հայկական վիլայեթների անջատմանը։

Թուրքիան տագնապահար էր. եվրոպականը կորցնելուց հետո հերթի էին դրվում ասիական վիլայեթները։ «Հիվանդ մարդը կարծես մեռնում էր»[1],— գրում էր Ժ. Կայզերը։

Անդրադառնալով Արևմտյան Հայաստանում բարենորոգումների խնդրին և դրա նկատմամբ թուրքական կառավարության ու շովինիստական վերնախավերի վերաբերմունքին, Պետերբուրգում լույս տեսնող «Նովոյե վրեմյա» թերթը 1913 թվականի մայիսի 28-ին գրում էր. «Հայ ժողովրդի վերածնունդը վնասակար է թուրքական պետության շահերի համար։ Բարենորոգումները հայկական նահանգներում խանգարում են պանթուրքիզմի ոգով թուրքական Փոքր Ասիայի դարգացմանը»։

Եվ ահա ամենակատաղի կամպանիա ծավալվեց Արևմտյան Հայաստանում հավանական ռեֆորմների, արևմտյան տերությունների միջամտության դեմ։ Այդ կամպանիան իր սուր ծայրով ամենից առաջ ուղղվեց հայերի, ապա նաև՝ նրանց հովանավոր Ռուսաստանի դեմ։

1913—1914 թվականներին Թուրքիայում հակառուսական տրամադրությունները մեծ չափերի հասան։ Թուրք կառավարողները, ազգայնական-պանթուրքական մամուլն Օսմանյան կայսրության բոլոր դժբախտությունների գլխավոր պատճառը Ռուսաստանն էին համարում։

Ա. Ֆ. Միլլերը գրում է, որ այդ շրջանում պանթուրքիզմը «թուրքական ներքին քաղաքականության տեսանկյունով հակաազգային և ռեակցիոն հոսանք էր» արտաքին քաղաքականության մեջ, որն ուղղված լինելով Ռուսաստանի դեմ, կտրուկ վատթարացրեց առանց այն էլ լարված ռուս-թուրքական հարաբերությունները»[2]։

Իթթիհադական պանթուրքականները չէին կարող չտեսնել հայերի բուռն համակրանքը Ռուսաստանի հանդեպ։ Նրանք քաջ գիտեին, որ հայ ժողովուրդը, թե՛ արևելյան և թե՛ արևմտյան հատվածներով, ռուսասեր է, Ռուսաստանի հաջողությունների և հաղթանակների ջատագով, նրա թշնամիների հակառակորդ։

[1] **Ж. Кайзер**, Европа и Новая Турция, Госиздат, Москва, 1925, с. 7.
[2] **А. Ф. Миллер**, Краткая история Турции, с. 137.

Դեռևս 1912 թվականի նոյեմբերի 16-ին Մ. Գիրսը արտաքին գործերի մինիստրին գրած զեկուցագրում շեշտում էր Թուրքիայում «հայկական մասսաների հետզհետե աճող ձգտումը դեպի Ռուսաստան», միաժամանակ նշում, որ այդ ձգտումը բնական է ու անկեղծ։ «Համակրանքը դեպի Ռուսաստան,—ասված էր զեկուցագրում,—թափանցել է նաև հայ բուրժուազիայի և մտավորականության մեջ...։ Իմ հարցապնդումներին Վանի, Բայազետի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի մեր հյուպատոսները միաձայն վկայում են, որ ներկայումս բոլոր հայերը, առանց կուսակցական խտրության, համակրում են Ռուսաստանին. օրինակ, Վանի փոխհյուպատոսը... հեռագրում է, որ բոլոր հայերը կողմնակից են Ռուսաստանին և անկեղծորեն ցանկանում են ռուսական զորքի գալուստը կամ բարենորոգումները Ռուսաստանի վերահսկողության տակ։ Բայազետի փոխհյուպատոսը... հաղորդում է. «Բոլոր հայերը... ներկայումս... սաստիկ ցանկանում են Ռուսաստանի հովանավորությունն ու Հայաստանի գրավումը»[1]։

«Բիրժեվիե վեդոմոստի» թերթի թղթակից Տ. Օլգինը 1913 թվականի մարտին հրատարակած իր հոդվածում, անդրադառնալով Ռուսաստանի նկատմամբ արևմտահայության վերաբերմունքին, գրում էր. «Դեպի Ռուսաստան հայ գյուղացիների միամիտ ու հուզիչ մտերմության օրինակներ ինձ պատմեց Ս. Օլֆերովը (Վանի փոխհյուպատոս։— Հ. Ս.)»։ Անցնելով Վանի վիլայեթի գյուղերով, նա իջևանում է Կղզի գյուղում։ Այստեղ նրան ցույց են տալիս մի ծերացած, հոգեպես հիվանդ հայի, որ 40 տարի շարունակ ամեն օր դուրս էր գալիս գյուղից ու նայում դեպի հյուսիս և, ապա դառնալով տուն, հոգոց քաշելով ասում. «Չէ՛, դեռ չեն գալիս քեռիները (ռուսները։— Հ. Ս.)»։ Ապա Հայկանետ գյուղում եղած ժամանակ նրան մոտեցել է մի ծայրահեղ չքավոր հայ գյուղացի և, մեկնելով մի հին ռուսական ռուբլիանոց, ասել է. «Ես չունեմ ոչինչ ավելի լավ բան սրանից, տալիս եմ, ինչ որ ունեմ, վերցրու այս ռուբլին և սրա համար միջնորդիր ցարի առջև, որ ռուսները շուտով գան այստեղ»[2]։

Չնայած Ռուսաստանի և ռուս ժողովրդի հանդեպ ունեցած

[1] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923)», էջ 152։
[2] «Հորիզոն», 4 ապրիլի 1914, № 74։

ներքին խոր համակրանքին, Թուրքիայի հայերը, սակայն, իրենց քաղաքացիական պարտքը կատարում էին բարեխղճորեն, հարգում երկրի օրենքները, համբերությամբ տանում ամեն տեսակ զոհողություն ու վիրավորանք, միայն թե խուսափեն նոր ջարդերից։

Թուրք շովինիստները, սակայն, հաշվի չէին առնում այս վերջին հանգամանքը։ Նրանք ամենուրեք մեղադրանքներ էին տեղում հայ քաղաքական կուսակցությունների, այդ թվում դաշնակցության վրա, որն իբր հանդես էր գալիս Արևմտյան Հայաստանը Թուրքիայից անջատելու պահանջով, մի բան, որ իրականությանը չէր համապատասխանում։ Նրանք շատ լավ գիտեին, որ նման ծրագիր չունի դաշնակցությունը, որ այդ կուսակցությունը հանդես է գալիս «Օսմանյան միասնական հայրենիքիչ պահանջով։

1911 թվականին Տրիպոլիի վրա Իտալիայի հարձակման սկզբին դաշնակցությունը հայտարարում էր, թե «ընդհանուր հայրենիքին սպառնացող վտանգին առջև մենք կը դադարեցնենք մեր բողոքներն այն մեծ վստահությամբ, թե հեռու չէ վերջապես ողջամտութեան և արդարութեան յաղթանակը հին ռեժիմին ավանդութիւններուն վրա»[1]։

Հայերի օրինապահությունը, սակայն, նրանց չփրկեց սպասվելիք աղետներից։ Դա այդպես էլ պետք է լիներ, քանի որ հայերը իրենց ինչպես էլ պահեին, միևնույն է, իթթիհադականներն արդեն վերջնական որոշում էին կայացրել նրանց իսպառ բնաջնջելու մասին։

Պոլսի հայ գործիչներին ուղղած նամակներից մեկում Թուրքերը պահանջում էին այլևս ակնարկ անգամ չանել հայկական նահանգներում բարենորոգումներ անցկացնելու մասին, այլապես բոլոր հայերին՝ ծեր թե մանուկ, սպառնում էին «փորոտիքը թափել ուղղակի փողոցների մեջ»։ «Ազգ» թերթը բացեիբաց գրում էր, որ «շատ չանցած հայությունը, հայ ցեղը կկործանվի մեծ շառաչումով»[2]։

[1] Մեջբերված է՝ Արշակ Ալպայաճեան, Պատմություն Մալաթիոյ հայոց, էջ 919։

[2] Մեջբերված է՝ Հրանդ Գանգրունու «Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դեմ (1890—1910)» գրքից, Պեյրութ-Լիբանան, 1973, էջ 323։

Այդ սպառնալիքներին հետևում էին հայության դեմ ուղղված կոնկրետ գործողությունները՝ առևանգումներ, սպանություններ, կողոպուտներ։ Լ. Օշերովսկին նկատում էր, որ Թուրքիայի տերիտորիայի վրա բնակվող բոլոր ժողովուրդներից բռնությունների ու ջարդերի ամենից շատ ենթակա էին հայերը[1]։ Նման կարծիքի էին նաև եվրոպական բազմաթիվ ճանապարհորդներ և մտավորականներ։

Թուրքական իշխանությունները գաղտնի ու բացահայտ զինում էին հայությանը պատուհասող թուրք և քուրդ հարստահարիչներին։ Թե՛ Թուրքիայում և թե՛ Կովկասում լույս տեսնող հայկական թերթերը խոր տագնապ էին արտահայտում այդ առթիվ՝ նշելով դրա հնարավոր ողբերգական հետևանքները։ «Կը լսվի,— գրում էր «Հորիզոնը»,— թե Արտամետի Ֆեյզո անունով Թուրք մը Ոստանեն 8 ձիաբեռ զենք բերած ցրած է Արտամետ գյուղի Թուրքերուն։ Կը լսվի նույնպես՝ Ոստանի գայմագամ մեծ թվով զենք սկսած է բաժանել շրջակա քյուրդերուն»[2]։

Անասելի չափեր ընդունեցին հայերի ունեցվածքի թալանը, նրանց հողերի բռնագրավումները։ Իշխանությունները ոչ միայն չէին պայքարում բացահայտ անօրինականությունների, բռնությունների ու կամայականությունների դեմ, այլև ամեն կերպ հրահրում, տոն էին տալիս դրանց կազմակերպիչներին։ «Ընդհանուր կոտորածի ուրվականը ամեն տեղ է,— գրում էր հընչակյան գործիչներից մեկը,— որը դամոկլյան սրի պես կախված է հայի գլխին։ Եվ տիրող կառավարությունը ոչ միայն չի աշխատում ջարդի երկյուղը ցրել, այլև ընդհակառակը, է՛լ ավելի է սաստկացնում այդ երկյուղը և ինքն է այդ նպատակով բացորոշ պատրաստության մեջ մտնում»[3]։

Հայությանն անհրաժեշտ էր զրկել տնտեսական բոլոր դիրքերից, գոյության բոլոր միջոցներից։ Այդ խնդրի իրականացման համար իթթիհադական կառավարողները նոր ուժով հովանավորեցին և ոգեշնչեցին քրդական ավազակներին, «հույս ունենալով նրանց ողջ ջարդարարական ջանքերն ուղղել հայերի դեմ»[4]։ Օս-

[1] Տե՛ս Л. Ошеровский, Трагедия армян-беженцев, СПб, 1916, էջ 21։

[2] «Հորիզոն», 30 մարտի 1913 թ.։

[3] Ս. Սապահ-Գյուլեան, Պատասխանատուները, էջ 320։

[4] И. И. Голобородько (И. Южанин), Старая и новая Турция, с. 227.

մանյան սահմանադրությունը ֆիկցիա դառնալուց հետո քուրդ շեյխերն ու բեգերը է՛լ ավելի սանձարձակ էին դարձել։ Այդ մասին Թուրքիայում ռուսական դեսպան Մ. Գիրսը գրում էր. «Մեր հյուպատոսները միահամուռ կերպով վկայում են քրդերի անընդհատ կողոպուտների և հափշտակությունների մասին, հայերի սպանության և հայ կանանց բռնի կերպով մահմեդականացման մասին, իսկ անկարգությունների հերոսները համարյա թե երբեք պատասխանատվության չեն ենթարկվում»[1]։ Կառավարության հովանավորությամբ և դրդմամբ քուրդ շեյխերն ու բեգերն իրենց գինված ջոկատներով հարձակումներ էին գործում հայկական գյուղերի վրա, ավեր ու մահ սփռում ամենուր, կողոպտում բնակչությանը, նրանից խլում հողերն ու արոտավայրերը։ Քրդական ավազակներին արդեն բացեիբաց սպառնում էր «բնաջնջել հայությանը»[2]։ Վերադառնալով հայերի հողերի մասսայական բռնագրավումներին, Մ. Գիրսը նշում էր. «Հողային հարցն օրըստորե սուր կերպարանք է ստանում. հողերի մեծամասնությունը գրավել և գրավում են քրդերը, իսկ կառավարությունը ո՛չ միայն չի արգելում, այլև նույնիսկ հովանավորում և աջակցում է այդ գրավումներին»[3]։ Միայն 1913 թվականին, ոչ լրիվ տվյալներով, Թուրք կալվածատերերը և քուրդ բեգերը հայերից խլել են 30 հազար գյուղացիական հողամաս[4]։

Բալկանյան պատերազմներից հետո բալկանյան երկրներում բնակվող Թուրքերի համար աննպաստ իրավիճակ էր ստեղծվել։ Նոր իրադրության ալյամաններում տեղի Թուրք բնակչությունը զրկվում էր առանձնաշնորհումներից ու արտոնություններից, որոնցից նա օգտվել էր դարեր շարունակ։ Եվ ահա բալկանյան Թուրքերի մեջ սկսվեց Թուրքիա տեղափոխվելու մասսայական շարժում։ Բալկաններում պարտություն կրած Թուրքական զորամասերը վերադառնում էին՝ իրենց հետևից բերելով տեղահանված մահմեդական գաղթականության ունեզրկված ու քաղցած

[1] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», էջ 152։

[2] Տե՛ս «Геноцид армян в Османской империи», էջ 255:

[3] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», էջ 152։

[4] Տե՛ս Ջ. Ս. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914—1916 թթ., էջ 30։

զանգվածին, որն ապրելու տեղ էր որոնում[1]։ Մուհաջիրների այդ հսկա զանգվածը (200 հազար մարդ) կառավարությունն ուղղեց Արևմտյան Հայաստան։ Տեղավորվելով հայկական նահանգներում, Թուրք գաղթականներն իշխանությունների աջակցությամբ հայերից խլում էին անշարժ գույքը, հողերը, այգիները, ողջ ունեցվածքը։ «... Ի՞նչ է կատարվում, դեռ ինչե՞ր են կատարվում Տաճկահայաստան կոչված այդ սև ու մութ աշխարհամասում,— պատմում էր ականատեսը։— Օ՜, ծանր է, խիստ ծանր մտաբերել անգամ այդ արյունով շաղախված դժոխքը։ Այնտեղ մահվան սարսուռն է տիրապետում, այնտեղ գիշեր ու զոր մահվան ուրվականն է անընդհատ քարշ գալիս մեն մի թշվառ հայ գյուղացու, մեն մի տարաբախտ հայ մսրդու ետևից... ու այդ անիծյալ ուրվականը մինչև ե՞րբ պիտի թափառի հայ անդաստանում...»[2]

1913 թվականի մարտին «Խարկովսկոյե ուտրո» թերթում պրոֆ. Պոգոդինը Թուրքահայերի թշվառ ու անպաշտպան դրության մասին գրում էր. «Այժմ ավելի, քան երբևիցե, հայերը թողնված են իրենց ճակատագրին, և այդ ճակատագիրը սարսափելի է։ Անհավանական է, որ քսաներորդ դարում քաղաքակիրթ մարդկությունը կարող է հանդուրժել այնպիսի սարսափներ, որոնք տեղի էին ունենում 16-րդ դարում և որ ժամանակակից քաղաքակրթությունը այնպիսի ուժեղ նյարդեր ունի, որ ողբերը, հառաչանքներն ու արյան հեղեղը նրան չեն ազդում։ Հայերի ոչնչացումը կատարվում է Եվրոպայի բարեհաճ թույլտվությամբ։ Երբ Ռուսաստանի կողմից որոշ ազդեցություն ու սպառնալիք գործադրվեց՝ այս բանը Գերմանիան ընդունեց իբրև casus belli, իբրև կռվապատճառ։ Եվ այսպես, Ռուսաստանի առջև երկու ճանապարհ կա՝ կա՛մ թույլ տալ քրդերի և Թուրքերի գազանությունները Հայաստանում, կա՛մ Ասիայի քրիստոնյաների ու մարդասիրության անունով պատերազմ սկսել «աստվածավախ» երկրի՝ քրիստոնեա և քաղաքակիրթ Գերմանիայի հետ, որի կայսրը բարեկամ ու հովանավոր է հավատացյալ իշխողին»[3]։

Ինչպես քրդերի գործողությունները, այնպես էլ մուհաջիր-

[1] Տե՛ս **Բ. Մինահորյան**, Трагедия Турции, Баку, 1919, էջ 16:

[2] «Հորիզոն», 29 մարտի 1913։

[3] «Հորիզոն», 24 մարտի 1913։

ների մասսայական բնակեցումը Արևմտյան Հայաստանում վերջին հաշվով հետապնդում էր մի հիմնական նպատակ՝ խախտել հայերի միատարր բնակվածությունը, նրանց խառնել թուրք և քուրդ բնակչության հետ, բնակչության ընդհանուր զանգվածում իջեցնել նրանց տոկոսը, դրանով իսկ մի կողմից վերջ դնել եվրոպական երկրների և ցարական Ռուսաստանի միջամտության պատրվակներին, մյուս կողմից՝ վերացնել քրիստոնեական բնակչություն ունեցող այն շերտը, որը սեպի պես խրված էր Անատոլիայի և Թուրանի միջև։

Հայ ժողովրդի համար մի անելանելի կացություն էր ստեղծվել։ Հայ քաղաքական կուսակցությունների ղեկավարներից ոմանք նոր փորձերի դիմեցին հայ ազատագրական շարժումը քրդական ապստամբական առկայծումների հետ միավորելու, թուրք բռնադատիչների դեմ ուղղված հայ-քրդական դաշինք ստեղծելու համար։ Բայց այդ բոլոր փորձերը, ինչպես նախկինում, անհաջողության մատնվեցին։

Փորձեր եղան նաև դաշինքի մեջ մտնելու թուրքական տիրապետությանն ընդդիմադիր ազգային ուժերի հետ։ Մասնավորապես հնչակյանները, ղեկավարվելով 1913 թվականի սեպտեմբերին Քեոստենջեյում (Բուլղարիա) տեղի ունեցած իրենց կուսակցության 7-րդ համագումարի որոշումներով, նույն թվականի աշնանը Պոլսում գաղտնի հարաբերությունների մեջ մտան հակաթթիհադական դիրքերի վրա կանգնած ալբան քաղաքական ուժերի հետ, որոնց գլուխն էր կանգնել երիտթուրքական շարժման սկզբնավորողներից մեկը, ծագումով ալբանացի, բժիշկ Իբրահիմ Թեմոն, որը 1908 թվականի հեղափոխությունից հետո վճռականապես կապերը խզել էր իթթիհադականներից, դարձել Ալբանիայում ապստամբական շարժման ոգեշնչողներից մեկը։ Ալբանացիների հետ հնչակյան կենտրոնի հարաբերությունները հանգեցրին նրան, որ երկու կողմերը համաձայնության եկան համագործակցելու իթթիհադի դեմ ընդհանուր պայքարում։

[1] Հետագայում, երբ հայությունը Թուրքիայում ոչնչացվել էր արդեն և երբ քրդերը նույնպես մեր դարի 20—30-ական թվականներին թուրքերի կողմից ենթարկվում էին մասսայական ջարդերի, նորից բարձրացավ հայ-քրդական դաշինքի հարցը։ Բայց դրանք ժամանակավրեպ քայլեր էին և, հասկանալի պատճառներով, այլևս արդյունք չէին կարող տալ։

Սակայն վերահաս իրադարձությունները խափանեցին այդ համագործակցության իրականացումը։

Մոռանում էր արյունալի 1914 թվականը։ Իմպերիալիստական տերությունները վերջին պատրաստություններն էին տեսնում. միմյանց հանդեպ ճշտում էին իրենց դիրքերը, տենդայնորեն նախապատրաստվում ահեղ գոտեմարտի։

Պատերազմ նյութող կառավարությունների գլխավոր մտահոգություններից մեկը շարունակում էր մնալ Թուրքիան, որը դեռ վերջնականապես չէր ճշտել իր դիրքն առաջիկա մեծ պատերազմում։ Ուստի Թուրքիային սիրաշահելը և նրան իրենց կողմը գրավելը կարևորագույն խնդիր էին համարում վերահաս արյունահեղ պատերազմի բոլոր հեղինակները։

Արդեն պատերազմի նախօրյակին Թուրքիայում իր դիրքերն ամրապնդել էր գերմանական իմպերիալիզմը։ Գերմանիան, որն Անտանտի տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և հատկապես Ռուսաստանի գլխավոր հակառակորդն էր, Թուրքիային հոշակել էր իր «բնական դաշնակից»[1]։ Երկու երկրներին հատկապես հարազատեցնում էր Ռուսաստանի հանդեպ տածած խոր ատելությունը։ Ռուսաստանն այն հզոր պատվարն էր, որ կանգնած էր ինչպես դեպի Արևելք ձգտող գերմանական գիշատիչ իմպերիալիզմի, այնպես էլ իրենց հայացքը դեպի Թուրան հառած թուրքական զավթիչների ճանապարհին։ Սովետական թուրքագետ Ա. Ֆ. Միլլերը գրում է, որ գերմանացիներն ամեն կերպ խրախուսում, տոն էին տալիս երիտթուրքերի ռեակցիոն պանթուրքական և պանիսլամական ձգտումներին[2], հատկապես պան-

[1] Գերմանիան Թուրքիային «բնական դաշնակից» և «հավերժ բարեկամ» էր հռչակել դեռևս անցյալ դարի 90-ական թվականներին։ Գերմանական կայսր Վիլհելմ II-ը 1898 թվականի հոկտեմբերին Թուրքիա կատարած իր երկրորդ ուղևորության ժամանակ (առաջին անգամ Թուրքիա էր այցելել 1889 թվականին) սուլթան Աբդուլ Համիդ II-ին հավաստիացնում էր, որ ինքը ջերմ զգացմունքներ է տածում Օսմանյան կայսրության և նրա արևափայլ սուլթան-խալիֆի հանդեպ։ «Թող նորին մեծություն սուլթանը և 300 միլիոն մահմեդականները... հավատացած լինեն, որ հանձին գերմանական կայսրի նրանք ձեռք կբերեն հավերժ բարեկամ» (մեջբերումը կատարված է Ст. Степанян. Армения в политике империалистической Германии (конец XIX — начало XX века), изд-во «Айастан», Ереван, 1975, с. 17).

[2] Տե՛ս **А. Ф. Миллер**, Турция и Германия в годы первой мировой войны, 1944, էջ 5։

թուրքիզմին, որն իր սուր ծայրով ուղղված էր Ռուսաստանի և առաջին հերթին Անդրկովկասում նրա տիրապետության դեմ[1]։

Գերմանական իմպերիալիստներն ամեն կերպ ոգեշնչում, խրախուսում էին պանթուրքականների գործունեությունը, իսկ գերմանական իմպերիալիզմի գաղափարախոսները և քաղաքագետները՝ հանձինս ֆոն դեր Հոլցի, ֆոն Սանդերսի, Ռոհրբախի, Նաումանի և այլոց, փորձում էին հիմնավորել ոչ միայն գերմանացիների, այլև թուրքերի տերիտորիալ հավակնությունները Ռուսաստանի նկատմամբ։

Գերմանիայի համար չափազանց կարևոր էր դեպի հարավ, դեպի Օսմանյան կայսրության տերիտորիաները Ռուսաստանի առաջխաղացման կասեցումը։ Այդ առաջխաղացումը հակասում էր Թուրքիայում Գերմանիայի տնտեսական և ռազմաքաղաքական շահերին։ Գերմանիան ինքն էր հիմնավորվում այդ տերիտորիաներում, ուստի նրա շահերը պահանջում էին ամրացնել Ռուսաստանի հետ Թուրքիայի սահմանները և Անդրկովկասից մինչև Միջերկրական ծովն ընկած շրջանը դարձնել ամուր մի պատնեշ ռուսական ներթափանցման դեմ։

Բայց աշխարհագրական այդ նույն շրջանում էր գտնվում Արևմտյան Հայաստանը, հայ ժողովրդի հիմնական հատվածը, որն ուներ բացահայտ ռուսական կողմնորոշում։ Հակառակ գերմանացի միսիոներների, հասարակական և քաղաքական գործիչների երկար տարիների համառ ջանքերին, որոնք ուղղված էին այն բանին, որպեսզի շահեն արևմտահայության համակրանքը և նրան խորթացնեն Ռուսաստանից, հայությունը բնավ չփոխեց իր կողմնորոշումը, չաջակցեց գերմանական ներթափանցմանը Թուրքիա։

Հենց սա է այն իրողության բացահայտման ելակետը, թե ինչու Գերմանիան այդպիսի մոլեռանդությամբ սատարեց պանթուրքիզմին։

Ինչպես վերը նշվեց, դեպի Թուրան թուրք զավթիչների ճանապարհի հիմնական խոչընդոտը Հայաստանը, հայ ժողովուրդն էր։ Ահա թե ինչու գերմանական իմպերիալիզմն անվարան ու աներկմիտ իր համաձայնությունը տվեց իրենց ճանապարհից հայությանը վերացնելու երիտթուրքերի պլաններին։ Դա կամրապնդեր Թուրքիայի ռուսական սահմանը, պանթուրքականների համար ճանապարհ կհարթեր դեպի Ռուսական կայսրության խորքերը։ Պանթուրքականների զավթողական ծրագրերը լիովին համընկնում էին գերմանական իմպերիալիստների նվաճողական պլաններին։

Թուրքական և գերմանական քաղաքական գործիչների հայացքները լիակատար միասնական էին այն բանում, որ Թուրքիայի կովկասյան սահմանները լիովին պետք է մաքրել թուրքերի և գերմանացիների համար անհարազատ հայ բնակչությունից՝ այնտեղ բնակեցնելով թուրքերին։

1913 թվականի ապրիլի սկզբին գերմանական պառլամենտում արտաքին գործերի մինիստրության նախահաշիվը քննարկելիս պետական քարտուղար Յագովը, անդրադառնալով պետությունների և միջազգային խնդիրների նկատմամբ Գերմանիայի վերաբերմունքի հարցերին, Թուրքիայի մասին հայտարարել է. «Տաճկաստանը, թեև ծանրապես վիրավոր՝ պատվով դուրս կգա կռվից (բալկանյան պատերազմից։— Հ. Ս.) ու, թեկուզև պարփակված իր ասիական կալվածքներում՝ լայնարձակ դաշտ կը գտնե իր ուժերի նոր գործադրության համար։ Մենք հույս ունենք, որ առաջիկա բանակցությունների ժամանակ առիթ կունենանք նպաստելու, որ Թուրքիան դժվարության չհանդիպի այդ խնդիրն լուծելիս»[1]։

Այս հակիրճ ճառում կար մի ամբողջ ծրագիր. Գերմանիան սրանով Թուրքիայի համար անդարձ կորած էր համարում նրա եվրոպական նահանգները, հետևապես նրան մղում էր ամրանալու ասիական մասում, այսինքն՝ Հայաստանում։ Նա նաև բացեիբաց հայտարարում էր, որ այդ գործում պաշտպանելու է Թուրքիայի շահերը՝ ընդդիմանալով Հայաստանի ինքնավարության խնդրին։

Յագովի հայտարարությունը հավանության արժանանալով պառլամենտում, դարձավ քննության առարկա։ Ելույթ ունեցած պատգամավորներից ոմանք «շոշափեցին նաև Հայաստանի հարցը և ցավակցություն հայտնեցին հայերին հասած ճնշումների համար, գտնելով, սակայն, որ վայրկյանը նպաստավոր չէ հա-

[1] Տե՛ս Е. Саркисян, Пантуркистская и панисламская агентура Османской империи в Закавказье, «Известия», АН Арм. ССР, № 7, 1962, էջ 12։

[1] «Հորիզոն», 3 ապրիլի 1913 թ.։

յոց հարցը հարուցանելու համար, որովհետև այդ դեպքում Ռուսաստանը հնարավորություն կստանա գրավելու Հայաստանը»[1]։ Այս կեղծ փարիսեցիության փեշերի տակ ծնունդ առած մարդատյաց ծրագիրը զանազան կողմերից մշակում ու փորձում էին «գիտականորեն» հիմնավորել գերմանական իմպերիալիզմի գաղափարախոսները, քաղաքական և ռազմական գործիչները։

Այսպես, բալկանյան առաջին պատերազմից անմիջապես հետո, ֆոն դեր Հոլցը, որը շուրջ 15 տարի ծառայում էր Թուրքիայում և մարզում էր թուրքական բանակը, գրեց «Երիտասարդ Թուրքիայի կործանումը և նրա հավանական վերածնունդը» հոդվածաշարը, որտեղ պատասխան էր տալիս այն հարցին, թե Եվրոպայից քշվելուց հետո Թուրքիան ինչպես է դառնալու ասիական պետություն։ Թուրքիան ասիական պետություն դառնալու ճանապարհին, գրում էր նա, պետք է կուլ գնա Հայաստանը[2]։

Հայ ժողովրդի նկատմամբ նման հրեշավոր ծրագիր էր առաջադրում նաև գերմանական գեոպոլիտիկական դպրոցի հիմնադիրներից մեկը, հայտնի քաղաքագետ, պանգերմանիզմի նշանավոր գաղափարախոս Պաուլ Ռոհրբախը[3]։

1913 թվականի հունիսի 8-ին «Ֆրանկֆուրտեր ցայտունգ» թերթում լույս տեսավ նրա «Հայաստան» վերտառությամբ հոդվածը, որտեղ նա Թուրքիայի կառավարողներին հուշում էր՝ մտքով անգամ չանցկացնել, թե երբևէ հնարավոր է Արևմտյան Հայաստանը Թուրքիայից անջատ տեսնել։

Իր մեկ ուրիշ աշխատությունում՝ «Պատերազմը և գերմանական քաղաքականությունը» գրքում, որ սկսել էր շարադրել համաշխարհային պատերազմը սկսելուց մի քանի ամիս առաջ և որը լույս տեսավ պատերազմի ընթացքում՝ 1915 թվականին, Պաուլ Ռոհրբախը գրում էր, թե ով տիրում է Հայաստանին, բնականաբար նա իր ազդեցության տակ է գցում նաև Փոքր Ասիայի արևելյան մասը և Միջագետքը[4]։ Ռուսաստանը նպատակ

---

[1] «Հորիզոն», 3 ապրիլի 1913։

[2] Տե՛ս «Հորիզոն», 24 մարտի 1913։

[3] Պ. Ռոհրբախի գրչին է պատկանում «Deutschland unter den Veltvölken» հայտնի աշխատությունը, մի շարք գրքեր նվիրված Մերձավոր արևելքի քաղաքական պրոբլեմներին և աշխարհի այդ մասում Գերմանիայի շահերին։ Այս վերջին հարցը նա մանրամասն վերլուծել է դեռևս 1902 թվականին լույս տեսած «Die Wertschaftliche Bewegung Westasien» գրքում։

[4] Տե՛ս **П. Рорбах**, Война и германская политика. С предисловием

ունի գրավել Հայաստանը, ապա «Հայաստանի վրայով ուղիղ իջնել Միջերկրական ծով», դեպի «Ալեքսանդրեթի ծոցը»։ Հայաստանի անցնելը ռուսների ձեռքը կնշանակեր ոչ այլ ինչ, քան Թուրքիայի, որպես «ինքնուրույն պետության, գոյության վախճան»[2]։

Անդրադառնալով Հայաստանի աշխարհագրական դիրքին ու քաղաքական և ստրատեգիական կարևորագույն նշանակությանը, Ռոհրբախը նշում էր, որ երբեք չպետք է թույլ տալ, որ այն ընկնի թշնամի Ռուսաստանի ազդեցության տակ։ «Չի կարելի պատկերացնել ուրիշ որևէ դիրք, որն ավելի ահեղ լինի ողջ արևմտյան Ասիայի նկատմամբ, քան Հայաստանի, Անդրկովկասի և Հյուսիսային Պարսկաստանի միավորումը Ռուսաստանի ձեռքում»[3]։ Գերմանիան երբեք չի հաշտվի նման վիճակի հետ, գրում էր Ռոհրբախը։ «Մենք ներկայումս այնքան ենք շահագրգռված այն բանում, որպեսզի թուրքական պետությունը կարողանա պահպանել իր ինքնուրույնությունը, որ գերմանական կառավարությունը ստիպված է Ռուսաստանին հայտարարել. Հայաստանի վրայով թուրքական սահմանից ռուսական զորքերի անցումը վտանգի տակ կդնի եվրոպական խաղաղությունը»[4]։ Արտահայտելով գերմանական ռազմամոլների պրակտիկ քաղաքականությունը, Ռոհրբախը եզրակացնում էր, որ «եթե պետք է պահպանել Թուրքիան, ապա Հայաստանն էլ պետք է մնա թուրքական...»[5]

Գերմանական իմպերիալիզմի գաղափարախոսները թուրքական շովինիստական կառավարությանը հուշում էին Արևմտյան Հայաստանը դատարկել հայերից՝ դրանով իսկ Ռուսաստանին զրկել պոտենցիալ դաշնակցից։ Բայց դա դեռ բոլորը չէր։ Հաղորդ տալով հակառուսական տրամադրություններ ունեցող պանթուրքականների ցնորական տենչերին, Ռոհրբախը գրում էր. «170 միլիոն մարդկանցով ռուսական հսկան պետք է, համենայն դեպս, կրճատվի և Միջին Եվրոպայի վրա հարձակվելու նրա ըն-

---

проф. С. А. Котляровского, изд-во Г. А. Лемана и С. И. Сахарова, Москва, 1915, էջ 62։

[1] Նույն տեղը, էջ 59։

[2] Նույն տեղը, էջ 11։

[3] Նույն տեղը, էջ 63։

[4] Նույն տեղը, էջ 11։

[5] Նույն տեղը, էջ 63—64։

դունակությունը սահմանափակվի։ Դա ներքին դժվարություն չի ներկայացնում, քանի որ ժամանակակից Ռուսաստանի ինչպես արևմուտքում, այնպես էլ հարավում բնակվում են ոչ ռուս ժողովուրդներ, որոնք միայն գոհ կլինեն, եթե անջատվեն կայսրությունից»[1]։

Համաշխարհային պատերազմին նախորդող ժամանակաշրջանում գերմանական հետադիմական մամուլի զանազան օրգաններ պարբերաբար անդրադառնում էին հայկական հարցին՝ թուրքական հարստահարիչներին թելադրելով հայերի համար ստեղծել այնպիսի դժոխային պայմաններ, որպեսզի նրանք հարկադրված հեռանան իրենց երկրից, դիմեն մասսայական արտագաղթի՝ թուրքերին թողնելով իրենց հողերը և ունեցվածքը։ Այդ ճանապարհով Օսմանյան կայսրությունն այլացեղ և այլադավան տարերի փոխարեն իր թիկունքը կամրապնդի միատարր ու վստահելի թուրք բնակչությամբ։ Արևելյան Անատոլիան և Արևմտյան Հայաստանը թուրքացնելով, գրում էին գերմանական թերթերը, թուրքերը ուղղակի կմիանան Ռուսաստանի կազմում գտնվող իրենց արյունակից եղբայրներին։

Հայության բնաջնջման, պանթուրքիզմի ոգեշնչման ու խթանման գերմանական քաղաքականությունը թելադրված էր ոչ միայն ռազմաքաղաքական և ստրատեգիական նկատառումներով, այլև տնտեսական այլազան հանգամանքներով, այն շահերով, որ գերմանական մոնոպոլիաներն ունեին Մերձավոր արևելքում ընդհանրապես, Թուրքիայի արևելյան նահանգներում՝ մասնավորապես։

Տնտեսական առումով գերմանական մոնոպոլիաների շահերը հայերի հետ առնչվում էին երկու հիմնական կետերում, որոնցից առաջինը կապված էր Բաղդադի երկաթուղու կառուցման հետ։ Վիթխարի, կարելի է ասել՝ ճակատագրական նշանակություն տալով Բաղդադի երկաթուղու կառուցմանը, գերմանական իմպերիալիստները, դեռ առաջին համաշխարհային պատերազմից շատ առաջ, մտադիր էին հենվել հայերի վրա, նրանց լայնորեն ներգրավել երկաթուղու շինարարության մեջ, իսկ երկաթգիծը կառուցելուց հետո դրա ողջ երկայնքով բնակեցնել հայերին, նրանց աշխատասիրությունը, գիտելիքներն ու հնարամտությունն օգտագործել երկաթգծի երկու կողմերում ընկած անապատային տարածությունները յուրացնելու նպատակով։

Ինչպես հայտնի է, գերմանական մոնոպոլիստների այդ ծրագրի կենսագործման ուղղությամբ հայերը որևէ շահագրգռություն հանդես չբերեցին։ Նրանք մտադիր չէին հոժար կամքով թողնել իրենց հարազատ վայրերը և մեկնել կիզիչ անապատներ։ Հենց դա էր պատճառը, որ գերմանական քաղաքագետներն ու գաղափարախոսներն առաջինը հրապարակ բերեցին և հիմնավորեցին հայերին իրենց դարավոր պապենական հողերից բռնի ուժով տեղահանելու և անապատային վայրեր քշելու մարդատյաց գաղափարը։

Գերմանական մոնոպոլիաների հետ հայության առնչման մյուս պատճառն արևմտահայ առևտրական բուրժուազիայի մրցակցությունն էր։ Գերմանական իմպերիալիստները մտադիր էին այնտեղից դուրս վանել անգլիական և ֆրանսիական կապիտալը, մրցակցային պայքարում խեղդել 1894—1896 և 1909 թվականների հայկական ջարդերից հետո արդեն ուշքի եկող հայ առևտրական բուրժուազիային, այնտեղ հաստատել գերմանական մոնոպոլիստական կապիտալի միահեծան տիրապետություն։ Արևմտյան Հայաստանի գերմանացման այս պլանների իրականացման ճանապարհին, որպես խոչընդոտ, կանգնած էր անգլիական, ֆրանսիական և ռուսական առևտրավաշխառուական բուրժուազիայի հետ սերտորեն կապված հայ առևտրական բուրժուազիան։ Անդրադառնալով այդ հարցին, Հերբերտ Ադամս Գիբսոնը նշում էր. «Հանդիսանալով միակ առևտրական և երկրագործական տարրը Փոքր Ասիայի ներքին նահանգներում, հետևաբար և միակ տարրը, որ կարող էր հակադրվել եվրոպական գաղութացմանը, հայերը համառորեն խանգարում էին Անատոլիայի գերմանիզացիայի պլաններին»[1]։ Ահա թե ինչու գերմանական իմպերիալիստները ոչ միայն հավանություն տվեցին թուրքական կառավարող շրջանների կողմից արևմտահայության դեմ ձեռնարկվող միջոցառումներին, նրա տեղահանությանն ու ջարդերին, այլև առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ամենաակտիվ կերպով աջակցեցին, խրախուսեցին հայ ժողովրդի նկատմամբ նրանց արյունալի ոճրագործությունը։

---

[1] П. Рорбах, Война и германская политика, с. 106.

[1] Հ. Ս. Կիրակոսյան, *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914—1916 թթ.*, էջ 364։

Գերմանական իմպերիալիստների կողմից պանթուրքիզմի գաղափարների բացահայտ պաշտպանությունն է՛լ ավելի էր ոգեշնչում ու թև տալիս Թուրքիայի կառավարող շովինիստական վերնախավերին։ Կուրորեն հավատալով կայզերական Գերմանիայի հզորությանը և անպարտելիությանը, որի մասին օրեցրուն տարփողում էին գերմանական միլիտարիզմի գաղափարախոսները, երիտթուրքական պարագլուխները համոզված էին, որ Գերմանիայի օգնությամբ թուրքերը կարող են, վերջապես, իրականացնել իրենց ամենաագրեսիվ պանթուրքական նկրտումները[1]։

Գերմանական իմպերիալիստները և նրանց գաղափարախոսներն ամեն կերպ աջակցում էին նաև պանիսլամիզմի ծավալմանը։

Ինչպես ասվեց, պանթուրքիզմի կողքին երիտթուրքերն իրենց քաղաքական զինանոցում պահպանում էին նաև աբդուլհամիդյան պանիսլամիզմը։ Եթե պանթուրքիզմն իր սուր ծայրով ուղղված էր Գերմանիայի արևելյան հակառակորդի՝ Ռուսաստանի դեմ, ապա պանիսլամիզմի պրոպագանդան մղվում էր երեք գլխավոր նպատակներով։ Առաջին, այն գերազանցապես կոչված էր նպաստելու արաբների վրա թուրքերի տիրապետության պահպանմանը։ Երկրորդ, այն նպատակ ուներ Ռուսաստանի ոչ միայն թուրքալեզու, այլև ոչ թուրք մուսուլմանական բնակչությանը ոտքի հանել «անհավատ ռուսների տիրապետության» դեմ։ Երրորդ, այն ուղղված էր նաև Անգլիայի և Ֆրանսիայի դեմ, որոնք միաժամանակ Գերմանիայի հակառակորդներն էին և որոնց գաղութային կայսրությունների փլուզման դեպքում Թուրքիան, ինչպես և Գերմանիան հույս ունեին տեր դառնալու մահմեդականություն դավանող ընդարձակածավալ երկրների։

Ահա թե ինչու, գրում է Ա. Ֆ. Միլլերը, «պանիսլամիզմը, ինչպես պանթուրքիզմը, ձեռնտու էր Գերմանիային, որն օգտագործում էր այդ զույգ «դոկտրինները» եռյակ համաձայնության տերությունների դեմ իր պայքարում։ Գործնականում և՛ պանթուրքականները, և՛ պանիսլամականներն իրենցից ներկայացնում էին գերմանական իմպերիալիստների գործակալներ»[2]։

Նկատենք, որ պանթուրքիզմի գաղափարախոսության ծավալմանը քողարկված ձևով նպաստում էր նաև Անգլիան։ Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական նույն խմբավորման մեջ գտնվելը Անգլիային բնավ չէր խանգարում, որ նա պաշտպաներ իր դաշնակցի դեմ ուղղված գաղափարախոսությունը։ Դաշնակիցը դաշնակից, իսկ շահը՝ շահ։ Անգլիան Ռուսաստանին դիտում էր իբրև ժամանակավոր դաշնակցի։ Իսկ շահը ժամանակավոր լինել չէր կարող։ Պանթուրքիզմը հենց այն ուժերից էր, որ հետագայում դառնալու էր անգլիական իմպերիալիզմի մշտական պոտենցիալ դաշնակիցը Ռուսաստանի ազդեցության տարածման դեմ մղվող պայքարում։ Անգլիան ամենուր դաշինք էր փնտրում այն ուժերի հետ, որոնք թեկուզև փոքր չափով խափանում էին Ռուսաստանի ձգտումը՝ տարածվելու դեպի հարավ, դեպի Միջերկրականի տաք ջրերը, տիրելու Հնդկաստան տանող ուղիներին։ Հենց այդ պատճառով Ռուսաստանի հետ Թուրքիայի կովկասյան սահմանների ամրապնդման ուղղությամբ նախատեսվելիք ծրագրերը ոչ միայն դեմ չէին անգլիական իմպերիալիզմի այդ ժամանակաշրջանի քաղաքականությանը, այլև նպաստում էին դրան։ Այդ սահմանները պետք է անձեռնմխելի մնային և պատնեշ դառնային Ռուսաստանի ճանապարհին։ Պատահական չէ, որ անգլիական կառավարությունը, փարիսեցիաբար իրեն ներկայացնելով իբրև հայության բարեկամ, միաժամանակ չէր հակառակվում հայկական նահանգներում թուրք բնակչության թիվն ավելացնելու քաղաքականությանը։ Դեռ ավելին, ընդգծված կարեկցանքով երիտթուրքերին խորհուրդ էր տալիս Բալկաններից տեղափոխված թուրքերի համար արևելյան վիլայեթներում վերաբնակվելու նպաստավոր պայմաններ ստեղծել։

Պետք է նկատել, որ պանթուրքիզմին ուղղակիորեն աջակցելուց բացի անգլիացիներն այդ գաղափարախոսության հաջողությանը նպաստում էին նաև անուղղակի ձևերով։ Այս հանգամանքը նշելիս մենք ամենից առաջ նկատի ունենք նախապատերազմյան ժամանակաշրջանում և պատերազմի ընթացքում նրանց գործադրած այն ջանքերը, որոնք ուղղված էին մահմեդականության դիրքերի ամրապնդմանն իրենց այն գաղութներում, որտեղ կողք կողքի գոյակցում էին տարբեր կրոններ և տարբեր կրոնական համայնքներ։ Խոսքն ամենից առաջ վերաբերվում է Հնդկաստանին՝ իր հարյուր միլիոնավոր բազմացեղ և բազմակրոն բնակչությամբ։ Իրենց դեմ բարձրացող ազգային-ազատագրական շարժումը մարելու նպատակով անգ-

[1] Տե՛ս Б. Данциг, Турция, Военное издательство, М., 1949, էջ 45:
[2] А. Ф. Миллер, Краткая история Турции, с. 137.

լիական գաղութարարներն ամեն ինչ անում էին, որպեսզի սրեն հակասությունները Հնդկաստանի երկու խոշոր կրոնների՝ ինդուիզմի և մահմեդականության միջև։ Քանի որ Հնդկաստանում հակաանգլիական ազատագրական շարժման ղեկավար ուժը դարձել էր հնդկական ազգային կոնգրես կուսակցությունը, ուստի անգլիական իմպերիալիստները հենց նրա դեմ էին ուղղել իրենց պայքարի սուր սլաքները։ Առաջնորդվելով «բաժանիր, որ տիրես» սկզբունքով, նրանց աջակցությամբ 1906 թվականի դեկտեմբերին Դակկարում, ի հակադրություն 1885 թվականին ստեղծված հնդկական կոնգրեսի, ստեղծվեց այսպես կոչված մուսուլմանական լիգա։ Անմիջապես հակադրվելով կոնգրեսին, լիգան իր առջև նաև խնդիր դրեց՝ «նպաստել այն բանին, որպեսզի Հնդկաստանի մուսուլմանների մոտ լոյալության զգացում զարգանա անգլիական իշխանությունների հանդեպ»[1]։ 1915 թվականին մուսուլմանական լիգայի նախագահ ընտրվեց Մ. Ա. Ջիններ[2], որը մեծ ջանքեր գործադրեց Հնդկաստանի ազատագրական շարժումը պառակտելու, երկիրը բաժան-բաժան անելու ուղղությամբ, և վերջ ի վերջո հասավ իր նպատակին։

Պանթուրքիզմի գաղափարախոսության ձևավորմանն ու տարածմանը նպաստում էր նաև Ֆրանսիան, որը նույնպես էխստշահագրգռված էր այն բանում, որպեսզի Ռուսաստանը Հայաստանի և Քուրդիստանի վրայով չիջնի Միջերկրականի ավազանը և սպառնալիքներ չստեղծի իր տնտեսական և ստրատեգիական շահերին։

Այդպիսով, այդ շրջանում մուսուլմանական ֆանատիզմի բորբոքմանն աջակցելը նշանակում էր նաև պանթուրքիզմին աջակցելու համար նպաստավոր պայմանների ստեղծում Մերձավոր և Միջին արևելքում։ Այսպիսով, և՛ Գերմանիան, և՛ Անգլիան, և՛ Ֆրանսիան մտահոգված էին Թուրքիայի կովկասյան սահմանների ամրապնդման խնդրով, ցանկանալով այնտեղ Ռուսաստանի համար անհաղթահարելի պատնեշ ստեղծել թուրք-մահմեդական բնակչությունից։

Ի՞նչ անել ուրեմն։ Այդ հարցի պատասխանը որոնում էին հայ իրականության մեջ գործող քաղաքական բոլոր ուժերը։ Հայ բոլշևիկները արևմտահայ ժողովրդի ազատագրությունը կապում էին Թուրքիայի պետական-քաղաքական կարգերի արմատական փոփոխության հետ։ Բայց նրանք չէին ժխտում նաև Ռուսաստանի ակտիվ միջամտությամբ Արևմտյան Հայաստանի ճակատագրի փոփոխման հնարավորությունը։

Այդ տարիներին Հայաստանի, հայ ժողովրդի ճակատագրի հարցը զբաղեցնում էր Վ. Ի. Լենինին։ Գտնվելով վտարանդիության մեջ՝ Շվեյցարիայում, նա բազմիցս իր հայ զինակիցներին՝ Ստեփան Շահումյանին, Վլադիսլավ Կասպարովին, Ալեքսանդր Բեկզադյանին պատվիրել է իրեն զանազան նյութեր ու տեղեկություններ տրամադրել հայ ժողովրդի կացության մասին։

Վ. Ի. Լենինի առաջարկով Ալ. Բեկզադյանը բոլշևիկյան պատվիրակության կազմում մասնակցում է II Ինտերնացիոնալի Բազելի կոնգրեսին (1912 թ. նոյեմբեր)։ Մեկնելուց առաջ Լենինը նրան պատվիրում է նյութեր հավաքել մասնավորապես դաշնակցություն կուսակցության գործունեության, կոնգրես եկած նրա պատվիրակների դիրքորոշման վերաբերյալ, իրեն հաղորդել, թե Թուրքիայի դեմ բալկանյան ժողովուրդների ազատագրական պատերազմի նկատմամբ ինչպիսի դիրք է բռնել արևմտահայությունը։ Վերադառնալով կոնգրեսից, Ալ. Բեկզադյանը նամակով Լենինին շարադրում է իր տեսակետը թուրքական բռնապետության տակ հեծող հայության վիճակի, նրա կողմնորոշման, ոգորումների մասին։ Նա նշում էր, որ արևմտյան հայերը «այժմ ամենուրեք ձգտում են դեպի Ռուսաստան, ճիշտ և ճիշտ այնպես, ինչպես Կովկասի նվաճման ժամանակ» (խոսքը 1826—1828 և 1828—1829 թվականների ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների մասին է, երբ հայերը հակված էին դեպի Ռուսաստանը և պատերազմական գործողությունների ժամանակ ակտիվորեն օժանդակում էին ռուսական զորքերին՝ հայկական տերիտորիաները պարսկական և թուրքական լծից ազատագրելու, Ռուսաստանին միավորելու համար։— Հ. Ս.)։ Այնուհետև Ալ. Բեկզադյանը Լենինին գրում էր, որ Գիրսը հայերին արդեն խոստացել է «նորին մեծությանը» (ցար Նիկոլայ II-ին։ — Հ. Ս.) հասցնել նրանց ցանկություններն ու հույսերը։ «Ռուսահայերն արձագանքում են տաճկահայերին ի տես հայերի նկատմամբ գործադրվող այն նոր գազանությունների, որոնք տեղի են ունենում Վանում, Մուշում, Կարինում։ Նույնիսկ դաշնակցականները բարյացակամ են նրանց նկատմամբ, ովքեր ցանկանում են միանալ Ռուսաստանին։ Թուրքիան սահմանը թողել

[1] К. А. Антонова, Г. М. Бонгард-Левин, Г. Г. Котовский, История Индии, Краткий очерк, с. 357.

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 342։

է գրեթե առանց պաշտպանության, քանի որ նրան զորքերը պետք եղան գործող բանակը համալրելու համար։ Այժմ Ռուսաստանի համար դժվար չէր լինի գրավել ամբողջ «Մեծ Հայաստանը», ընդհուպ մինչև Տրապիզոն, բայց նա «Հուդայի սարսափից» (այսինքն՝ Եվրոպայի մեծ տերությունների նկատմամբ ունեցած վախից։— Հ. Ս.) հազիվ թե այսպես հեշտությամբ սիրտ անի այդ քայլն անելու»[1]։

Անդրադառնալով արևմտահայ ժողովրդի անլուր հարստահարումներին, 1913 թվականի ամռանը «Պրավդա» թերթը գրում էր, որ Թուրքիայում հայությունը կանգնած է կործանման եզրին, և որ նրա փրկության ելքը երիտթուրքական ռեժիմին «հակահարված տալն է», նրա տապալումը[2]։ Նույն հարցադրումով ու նույն պատասխանով էր հանդես գալիս նաև բոլշևիկյան «Պուտ պրավդի» թերթը, որը 1914 թվականի սկզբներին գրում էր. «Պրոլետարիատը բազմիցս իր բողոքն արտահայտել է Թուրքիայում կատարվող գազանությունների դեմ։ Առաջավոր բանվորները գիտակցում են, որ անհրաժեշտ է փոխել թուրքահայերի դրությունը՝ լիակատար վերափոխելով Թուրքիայում տիրող հին կարգը»[3]։

Անշուշտ, բոլշևիկյան «Պրավդան» միանգամայն ճիշտ էր իր հարցադրման մեջ. ազգային հարցի վերջնական լուծման, ազգային ճնշման բոլոր ձևերի վերացման և ազգերի ազատագրության միակ ուղին բուրժուական հասարակական-պետական կարգի տապալումն էր, որը կարող է իրականացվել բանվոր դասակարգի, աշխատավոր մասսաների հեղափոխական պայքարի միջոցով։ Տվյալ դեպքում երիտթուրքական ուժերի տապալումը հնարավոր էր իրականացնել Թուրքիայի բազմազգ աշխատավորության զինված հեղափոխական պայքարի ճանապարհով։ Բայց այդ ժամանակ Թուրքիայում բանվոր դասակարգը փոքրաքանակ էր և անկազմակերպ, աշխատավոր մասսաների զինված ապստամբության և սոցիալիստական հեղափոխության իրականացման համար երկրում չկային հասունացած պայմաններ։ Ո՞րն էր, ուրեմն, ելքը։

---

[1] Ալ. Ռեկզաղյան, Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, Երևան, Հայաստան, 1981, էջ 15։

[2] Տե՛ս «Правда», 7 июля 1913 г.

[3] «Путь правды», 1 февраля 1914 г., № 10.

Որպեսզի կարողանար դիմագրավել վերահաս ահեղ վտանգին, բոլորից լքված և երիտթուրքական գազանի բացված երախի առջև կանգնած հայ ժողովուրդը փրկության միայն մի ելք կարող էր ունենալ՝ զինվել։ Նրա գլխին կախված դամոկլյան սրին պետք է հակադրվեր սուրը, բռնությանը՝ բռնությունը, որքան էլ դա հղի լիներ վտանգներով, որքան էլ մեծ զոհեր պահանջվեր։ «Լինել և չլինելու» ճակատագրական պահի խորհուրդն ու հրամայական պահանջն էր դա։ Ժողովրդի փրկությունն իր բազուկներում էր։ Երիցս իրավացի էր իտալացի Ամիլկար Չիպրանոն, որն իր «Հայերը» վերտառությամբ հոդվածում, անդրադառնալով 1894—1896 թվականների հայկական ջարդերին և հայերին կոչ անելով՝ դասեր առնել տեղի ունեցածից, գրում էր. «Լիովին բնաջնջման դատապարտված ժողովուրդն իր հույսը միայն պետք է դնի իր հուսահատ դյուցազնության վրա։ Մի սպասեք ուրեմն, որ այս կեղտոտ ոճիրը, որ սկսած է արդեն, աղջամուղջի մեջ կատարվի։ Եթե դուք մի մեծ պատերազմի, մի մեծ հեղափոխության մեջ գոհեիք ձեր 300 000 խողխողված եղբայրները, դուք ազատ կլինեիք։ Որևէ ժողովրդի անպատիժ չեն սպանում, բացի այն պարագայից, երբ այդ ժողովուրդը ինքն է դահճին մեկնում իր վիզը»[1]։ Այո՛, հույսը միայն իրենց վրա դրած՝ հայերն ազգովին պետք է ոտքի ելնեին, կազմակերպված մտնեին իրենց լեռնաշխարհի անանցանելի կիրճերը և թավուտ անտառները, բարձրանային լեռներն ի վեր՝ միշտ հրացանից անբաժան, այն գիտակցությամբ, որ ինքնապաշտպանությունը սրբազան իրավունք ու վեհագույն պարտք է։ Այո, ոխերիմ թշնամուց միակ փրկությունը կարող էր միայն համազգային ապստամբությունը լինել, եթե ընդհանրապես փրկություն կար։ Գոնե այդ բանն էին թելադրում հայ ազատագրական շարժման պանծալի հերոսների՝ Անդրանիկի և Սմբատի, Հրայրի և Մուրատի, Աղբյուր Սերոբի և Գևորգ Չաուշի, տասնյակ և հարյուրավոր քաջ ֆիդայիների շատ դեպքերում հաջող կռիվները թուրքական բազմաքանակ կազմակերպված զորքի և քրդական ոչ կանոնավոր ուժերի դեմ։ Այո, այդ դեպքում միայն հայությունը գուցե խուսափեր ազգովին կոտորվելու խայտառակությունից։ Վկա՝ Զեյթունն ու Սասունը, իսկ Մեծ եղեռնի օրերին՝ Վանն ու Մուսա լեռը, Շապին-Գարահիսարն ու

---

[1] «Դրոշակ», № 9 (120), դեկտեմբեր, 1901, էջ 149։

Աղ-դաղը, ավելի ուշ՝ Սարդարապատն ու Բաշ-Ապարանը, Զանգեզուրի անզուգական հերոսամարտը թուրք-մուսավաթական միացյալ ուժերի դեմ։ Վերջապես կայսրության մեջ ընդամենը 8 միլիոնի հասնող թուրքը, որը հայկական լեռնաշխարհում խոր արմատներ չուներ և այդպես էլ մնացել էր որպես «ռազմական օկուպանտ», նույնիսկ իր թիկունքում ունենալով քուրդ ու չերքեզ հրոսախմբերին, չէր կարողանա արյան մեջ թաթախել նույն կայսրության շուրջ 3 միլիոնի հասնող մի ուրիշ ժողովրդի, որը միայն զենք վերցնելու ունակ ավելի քան 300 հազար երիտասարդ ուներ։

Ուրեմն օրվա կարգախոսը պետք է լիներ. «Ըմբոստացի՛ր, դիմադրի՛ր, զե՛նք վերցրու, հայ ժողովուրդ, քեզ փրկողը ինքդ ես»։

Իսկ ի՞նչ էին անում ժողովրդի բախտը տնօրինելու պատասխանատվությունը ստանձնած հայ ազգային քաղաքական կուսակցությունները։ Շարունակելով փայփայել եվրոպական իմպերիալիստական տերությունների միջամտությամբ հայ ժողովրդի կացությունը բարելավելու ախտավոր հույսերը, նրանք, հատկապես դաշնակցությունը, փաստորեն թևատեցին ժողովրդին, նրան դատապարտեցին կրավորական սպասողականության։ Մինչդեռ երիտթուրքերի հայաջինջ ծրագիրը, որն արդեն բարձրացվել էր պետական քաղաքականության աստիճանի, ամեն րոպե պատրաստ էր բուն գործողությունների վերածելու։ Դաժան հաշվեհարդար սկսելու համար միայն պատեհ առիթ էր պետք։

Նույնիսկ այդ օրերին, երբ արևմտահայությունը գտնվում էր երիտթուրքական հրեշի մահարեր շնչի տակ, դաշնակցությունը և ազգային մյուս քաղաքական ուժերը տարված էին ներկուսակցական և միջկուսակցական պայքարի խնդիրներով, հայ մամուլի օրգաններում քննարկվում էին համաշխարհային պրոբլեմներ, դրանց էջերը լեցուն էին փիլիսոփայական վերացական դատողություններով։ Տպագրվում էին հոդվածներ ու նյութեր եվրոպական գրականության և արվեստի, լայնածավալ հայտարարություններ՝ ապրանքների գների ու դրամի կուրսի մասին։ Այս ամենը արևմտահայության մոտ կեղծ պատրանքներ էր ծնում իրական վիճակի մասին։

Պակասը լրացնում էին հայ ունևոր դասակարգերը։ Կովկասահայ բուրժուազիան, որի հիմնական մտահոգությունն իր հարստությունները բաղմապատկելն էր, նախկինի պես խուլ ու անտարբեր էր արևմտահայության ազատագրական գործի նկատմամբ։ Իր հերթին վայելք ու հանգստություն ըմբոշխնող, պերճանքն ու ճոխությունը բարձր նրբության հասցրած Պոլսի հայ ամիրայությունը, նրբակիրթ էֆենդիները, մայրաքաղաքի, Իզմիրի և այլ վայրերի հայ վաճառականներն իրենց փողի քսակները պինդ փակել էին թուրքերին ընդդիմադիր ուժերի առջև, ամեն գնով խափանում էին զենք ձեռք բերելու հայ կազմակերպությունների ճիգերը։ Մյուս կողմից, ընդհակառակը, ուժ էին տալիս իթթիհադին։ «Երկրի ամենահեռավոր անկյուններում անգամ իթթիհադը իր «կլյուբները» տարածում, այդ թույնի որջերը պահում էր գլխավորապես տեղական հայ վաճառականների ոսկիներով,— գրում էր Ս. Սապահ-Գյուլյանը։— Բալքանեան պատերազմի ատեն մի քանի ժամվա մեջ հայ վաճառականները 30 հազար ոսկիով պատասխանեցին իթթիհադի բացած «Ազգային հանգանակությանը»։ Հայտնի վաճառական Ի-ը 10 հազար ոսկի թափեց սեղանի վրա հայ և թուրք ժողովականների առջև, օսմանյան համալսարանի մեջ»[1]։

Անհանգստության, իրարանցման ու անապահովության պայմաններում կասկածի, քենի ու ատելության թանձր մթնոլորտում հայ ունևոր դասակարգերը ամեն կողմ ցանում էին վառ տենչանքների ու սին պատրանքների փուչ սերմեր, չգիտակցելով, որ մոտեցող արհավիրքը բոլորի բաժինն է լինելու։

1913 թվականի հուլիսին երիտթուրքերը հայերի հերթական կոտորած կազմակերպեցին։ Բալկանյան երկրորդ պատերազմի ժամանակ թուրքական բանակի զորավար Սամի բեյը ջարդեց բուլղարների թողած Ռոդոսթո, Մալգարա և Միրիոֆիտո քաղաքների հայերին և քրիստոնյա մյուս բնակիչներին։ Դա ուժգին հարված հասցրեց երիտթուրքերի հետ համագործակցելու դաշնակցականների տակտիկային։ Նույն թվականի նոյեմբերին դաշնակցությունը ստիպված եղավ ձևականորեն կապերը խզել իթթիհադի կոմիտեի հետ։ Բայց այդ խզումն, ավաղ, շատ էր ուշացել։ Դաշնակցություն կուսակցության, նրա տեղական կազմակերպությունների, զենքի պահեստարանների, գործունեության ծրագրերի և պլանների մասին երիտթուրքերի իմացությունը կատարյալ էր։ Սրանք վաղուց իրենց հաշիվներից լիովին դուրս էին

[1] Ս. Սապահ-Գյուլեան, Պատասխանատուները, էջ 20—21։

նետել իթթիհադ-դաշնակ համագործակցությունը, որը նրանց այլևս պետք չէր։

1914 թվականի սկզբից թուրքական հակառուսական պրոպագանդան մեծ ծավալներ ընդունեց։ Նրա մեջ առաջվա պես գերիշխում էր պանիսլամիզմը և պանթուրքիզմը։ Հատկապես կարևոր նշանակություն էր տրվում Երևանի նահանգին, որտեղ լայն աշխատանք էր ծավալվել տեղի մահմեդական բնակչության շրջանում։ Թուրքական էմիսարները և ագիտատորները այստեղ մահմեդականներին կոչ էին անում ռուս-թուրքական հնարավոր պատերազմի ժամանակ բոլոր միջոցներով պաշտպանել թուրքիային, նրանց ապստամբության էին մղում կառավարության դեմ։ Անդրկովկասում հակառուսական տրամադրություններ բորբոքելու, ռուսական բանակի թիկունքում զինված ելույթներ կազմակերպելու խնդրին մեծ կարևորություն էին տալիս նաև թուրքերի գերմանացի բարեկամները։ Թուրքերը և գերմանացիներն իրենց հույսը հատկապես դրել էին ադրբեջանական, աջարական, աբխազական, ինչպես նաև վրացական հետադիմական, հակառուսական տրամադրություններ ունեցող խավերի վրա[1]։

Ռուսական իշխանություններն ուշադիր հետևում էին Անդրկովկասում պանթուրքականների և պանիսլամականների հակառուսական գործունեությանը, միջոցներ ձեռնարկում այն խափանելու համար։

Այսպես, 1914 թվականի հունվարին ցարական գաղտնի գործակալությունը հետևյալ զեկուցագիրն էր ներկայացրել ներքին գործերի մինիստրությանը.

«Ներքին գործերի մինիստրություն, ոստիկանական բաժին.

23 հունվարի, 1914 թ., № 16609

Ներքին գործերի մինիստրության կողմից արտասահման առաքվածին[2] հարաբերելու համար տեղական իշխանություն-

[1] Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության նշանավոր գործիչներից Պարվուսը իթթիհադականների խնդրանքով իր մասնավոր հովանավորության տակ առնելով Պոլսում ապաստանած մի քանի հակառուս վրացի «սոցիալիստների», նրանց ուղարկել էր Աջարիա՝ ռուսական պետության դեմ մուսուլման աջարացիների խռովություններ հրահրելու համար, որը և կատարվեց (տե՛ս Ս. Սապան-Գյալեան, Պատասխանատուները, էջ 270)։

[2] Այս «արտասահմանյան առաքվածը» գաղտնի գործակալության Փարիզի բաժանմունքի վարիչ Կրասիլնիկովն էր (տե՛ս «Ալիք», 26 հունիսի 1974 թ.)։

ների և ռուսական դեսպանատների ու հյուպատոսարանների հետ։

Պոլսի «Նուրի օսման» ակումբում նորից պանիսլամականների ժողով է տեղի ունեցել՝ իթթիհադի և հրեաների մասնակցությամբ։ Ժողովին մասնակցել է մոտ 700 մարդ՝ ականավոր իթթիհադականներից և հրեաներից։ Ներկա է եղել նախարար Թալեաթ բեյը, Բեդրի բեյը, Սեիդ բեյը, Բեքիր բեյը, Ջավիդ բեյը։ Հրեաներ՝ «Ապահովության բաժնի» պետ Սամվել էֆենդի և ոստիկանապետի օգնական Ավրամ բեյ։ Ռուսաստանի «Պանիսլամականների կոմիտեից» ժողովում եղել են Ահմեդ Աղաևը, Ջալալ Կորխմազովը, Մահմեդ Թաղիևը, Ջիա բեյը և նրա եղբայր Ասլանը։

Ժողովում ճառեր են արտասանվել Ռուսաստանի և քրիստոնյաների դեմ և իբրև արդյունք՝ հայտարարվել է բոյկոտ հայերի և հույների առևտրի դեմ։ Բոյկոտի մասին բաժանվել են կոչեր։

Ժողովի վերջում Թալեաթ բեյը հայտարարեց, որ Թուրքիան չի թույլատրի Անատոլիայում ոչ մի եվրոպական հակակշիռ։ Իսկ եթե Եվրոպան կհրաժարվի հակակշռից, ապա տակավ առ տակավ այնտեղ ռեֆորմներ կանցկացվեն։ Առայժմ դեռ ուժեղ բանակ է պատրաստվում Կովկասի ճակատի համար։ Տեղեկություններ կան, որ դեպի էրզրում անընդհատ ուղարկվում են զորք ու պաշար և ձեռնարկված է բերդերի, հատկապես Բոսֆորի շրջանի բերդերի վերազինում և ամրացում։

Նույն տեղեկությունների համաձայն 1913 թվականի դեկտեմբերին Կովկասից Պոլսում հայտնվել է պանիսլամական Գիրեյ Թաղիևը, որ միլիոնատեր Թաղիևի «կոմիվոյաժորն» է Թուրքեստանի շրջանում և Բաքվում։ Չնայած Թաղիևը պնդում է, թե եկած է առևտրական գործով, սակայն նման գործեր նա չի կատարում և հարաբերությունների մեջ է պանիսլամականների հետ։

Այս բոլորի մասին «Ոստիկանական բաժինը» հաղորդում է Զերդ Գերազանցությանը ի տեղեկություն։

Վարիչի փոխարեն՝ Վասիլև

«Հատուկ բաժնի» վարիչի փոխարեն՝

(ստորագրությունն անընթեռնելի է)»։

1914 թվականի օգոստոսի 2-ին թուրքական կառավարությունը Գերմանիայի հետ ստորագրեց գաղտնի դաշնակցային

[1] «Ալիք», 26 հունիսի 1974 թ.։

պայմանագիր, որի համաձայն Թուրքիան պարտավորվում էր Ռուսաստանի դեմ պատերազմում անհետաքաղ հանդես գալ Գերմանիայի կողմում։ Դրանից ընդամենը մի քանի օր հետո, 1914 թվականի օգոստոսի 6-ին, Թուրքիայում Գերմանիայի դեսպան բարոն ֆոն Վանգենհեյմը մեծ վեզիր Մեհմեդ Սաիդ Հալիմ փաշային ուղարկած նամակում գերմանական կառավարության անունից Թուրքիային երաշխիքներ էր տալիս պատերազմի հաղթական ավարտի դեպքում նրան հնարավորություն տալ իրականացնելու իր պանթուրանական նպատակները[1]։ Շուտով այդ փաստաթուղթը վերածվեց լրացուցիչ նոր համաձայնագրի, որտեղ Թուրքերը իրենց համար ձեռնտու նոր կետեր ավելացրին։ Համաձայնագրի 5-րդ կետում մասնավորապես ասված էր. «Գերմանիան պարտավորվում է Թուրքիային ապահովել իր արևելյան սահմանների այնպիսի ճշգրտում, որը նրան հնարավորություն կտա անմիջական շփում հաստատելու Ռուսաստանի մուսուլմանական տարրերի հետ»[2]։ Գերմանիան դրանով իսկ ոչ միայն ճանաչում էր Օսմանյան կայսրության կառավարող շրջանների պանիսլամական-պանթուրքական պլանները, այլև պարտավորվում էր աջակցել դրանց իրականացմանը։

1914 թվականի ամռանը, Էրզրումում (Կարին) դաշնակցություն կուսակցության 8-րդ համագումարի օրերին, երիտթուրքերը բանակցություններ սկսեցին դաշնակցական ղեկավարների հետ՝ նպատակ ունենալով վերջնականապես պարզել նրանց դիրքը Ռուսաստանի և Թուրքիայի ռազմական ընդհարման դեպքում։ Թուրքերը հայերին շարադրեցին իրենց պլանները պատերազմի ընթացքում և հաղթական ավարտի դեպքում։ Երիտթուրքերն առաջարկեցին Ռուսաստանի դեմ մղվելիք առաջիկա պատերազմում ակտիվ գործակցել իրենց հետ։ Նրանք պահանջում էին, որ հայ ժողովուրդը գլխովին, թե՛ Թուրքիայում և թե՛ Կովկասում իր նյութական ողջ միջոցներով ու մարդկային ռեսուրսներով լծվի Թուրքիայի պատերազմական կառքին և զենքն ուղղի դարավոր բարեկամի՝ Ռուսաստանի դեմ։ Նրանք ասում էին, որ Կովկասից ռուսներին դուրս մղելուց հետո Թուրքիան այնտեղ կստեղծի Վրաստանի ավտոնոմիա, որի մեջ կմտնեն Քութայիսի, Թիֆլիսի, Բաթումի նահանգները և Տրապիզոնի նահանգի մի մասը։ Կովկասի հյուսիս-արևելյան մասում, ըստ նրանց, ստեղծվելու էր մուսուլմանական մարզ, որի մեջ մտնելու էին Դաղստանը, Բաքվի նահանգը և Ելիզավետպոլի նահանգի մի մասը։ Եվ, վերջապես, նրանք խոստանում էին կենտրոնական մասում ստեղծել Հայաստանի ավտոնոմիա, որի մեջ պետք է մտնեին Երևանի, Կարսի նահանգները, Ելիզավետպոլի նահանգի արևմտյան մասը, ապա նաև այդ ավտոնոմիային սահմանակից Էրզրումի, Վանի և Բիթլիսի շրջանները։

Թուրքերի կողմից նախկինում արված բազմաթիվ խոստումներից հուսախաբ հայերը մերժեցին երիտթուրքերի առաջարկը։ Նրանք հայտարարեցին, որ ռուս-թուրքական պատերազմի դեպքում Թուրքիայի հայերը քաղաքական նպատակներ չեն հետապնդի, չեն աջակցի երկու կողմերից ոչ մեկին, լոյալ դիրք կգրավեն Թուրքական կառավարության հանդեպ։ Ինչ վերաբերում է Անդրկովկասի հայությանը, ապա հայ պատվիրակները երիտթուրքերին պարզ հասկացրին, որ նա հանդես չի գա Ռուսաստանի դեմ, նրան չի հարվածի թիկունքից, ինչպես պահանջում էին Թուրքերը։ Ռուսաստանին պատերազմ հայտարարելու մտադրությունը հայերը համարեցին Թուրքիայի բուն գոյությանը սպառնացող արկածախնդրություն։ Օսմանյան կայսրության փրկությունը նրանք տեսնում էին խիստ չեզոքություն պահպանելու մեջ։ Հայերի նման հայտարարությունը երիտթուրքերը գնահատեցին որպես դավաճանություն Թուրքական կայսրության շահերին և իդեալներին։

Ստանալով հայերի մերժումը, Թուրքերն է՛լ ավելի մեծ նշանակություն տվեցին Անդրկովկասում հակառուսական և հակահայկական տրամադրություններ բորբոքելու խնդրին։

Ահա այսպիսի պայմաններում՝ թուրքական ոճրագործ իշխանությունների կողմից նյութվող մեծ դավի, պանթուրքական գաղափարախոսության ծավալման, գերմանական իմպերիալիստ-

---

[1] Տե՛ս Е. Ф. Лудшувейт, Турция в годы первой мировой войны 1914—1918 гг. Военно-политический очерк, изд-во Московского университета, 1966, էջ 33։

[2] Ю. В. Ключников и А. Сабанин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. II, М., 1926, № 10.

[1] Տե՛ս Զարեվանդ. Ի՞նչ կծրագրեն Թուրքերը՝ միացեալ անկախ Թուրանիա, էջ 139։

ների բացահայտ թշնամական քաղաքականության իրականացման, հայ ժողովրդի պատմական բախտի նկատմամբ արևմուտքի մեծ տերությունների հանցագործ անտարբերության պայմաններում էր արևմտահայ ժողովուրդն անցկացնում սարսափներով լի նախապատերազմյան տարիները։ Ամենուրեք լրջվում էին հայերին կոտորելու, նրանց «անէացնելու» սպառնալիքներ։

Հայերը կյանքի ու մահվան կամարի վրա էին։ Վրա էին հասնում նոր ողբերգական ժամանակներ։

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԶՈՀ

1914 թվականի հուլիսի 19-ին (օգոստոսի 1-ին) Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, երկու օր հետո՝ Ֆրանսիային, իսկ հաջորդ օրը Անգլիան՝ Գերմանիային։ Սկսվեց առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը, որը աշխարհի վերաբաժանման, ուրիշ ժողովուրդների հարստահարման ու կողոպուտի նպատակով տերությունների երկու խմբավորումների միջև պայքարի օրգանական շարունակությունն էր, մահացու գոտեմարտ։ Խմբավորումներից մեկի՝ Քառյակ միության մեջ էին Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Թուրքիան և Բուլղարիան, որոնց գլուխ էր կանգնած գերմանական իմպերիալիզմը։ Մյուս խմբավորման՝ Անտանտի մեջ էին մտնում Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, որոնց պատերազմի ընթացքում միացան նաև Ճապոնիան, Իտալիան, ԱՄՆ-ը և մի շարք այլ երկրներ։ Այս խմբավորումը գլխավորում էին անգլիական և ֆրանսիական իմպերիալիստները։ Անարդարացի, թալանչիական պատերազմն իր մասշտաբներով ու գործած ավերներով հավասարը չուներ մարդկության նախորդ ողջ պատմության մեջ։

Առաջին համաշխարհային պատերազմին (1914—1918 թթ.) մասնակցեց 38 պետություն՝ ավելի քան 1,5 միլիարդ բնակչությամբ, որն այն ժամանակ կազմում էր երկրագնդի բնակչության 75 տոկոսը։ Ավելի քան 75 միլիոն մարդ զենքի տակ դրվեց։

Սկսված պատերազմը երիտթուրքերի համար բարենպաստ առիթ էր գործնականում ստուգելու պանթուրքական գաղափարների կենսունակությունը, իրականացնելու իրենց նվաճողական ցնորական պլանները, որոնք սակայն խիստ հրապուրիչ էին ռազմաֆեոդալական, բուրժուակադետական, իթթիհադական-շո-

վինիստական վերնախավերի համար[1]։ Նրանց կարծիքով պատերազմին մասնակցելը խիստ կբարձրացներ Թուրքիայի վարկը, որը մեծապես նվազել էր, հագուրդ կտար թուրքերի ինքնասիրությանը և արժանապատվությանը[2]։ Թուրքական կառավարությունը կանգնեց Գերմանիայի կողմը, որը, ինչպես վերևում ասվեց, ոչ միայն խոստացել էր անձեռնմխելի պահել կայսրության տերիտորիալ ամբողջականությունը, այլև իթթիհադականների առջև գծել էր նոր տերիտորիաներ գավթելու, անծայրածիր Թուրանին տիրելու հեռանկարը։ Գերմանացիներն ամեն կերպ բորբոքում էին թուրքերի կրոնական մոլեռանդությունը անգլիացիների, ֆրանսիացիների, ռուսների դեմ[3]։

Ճիշտ չէր լինի կարծել, թե երիտթուրքերը հլու հնազանդ էին իրենց գերմանացի բարեկամներին և կատարում էին այն, ինչ ցանկանում էր Գերմանիան։ Երբ ասում ենք, թե պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունը վերածվել էր արևմտյան տերությունների գաղութային շահագործման օբյեկտի, որ օտարերկրյա կապիտալի համար այն դարձել էր կիսագաղութ, դա բնավ չի նշանակում, թե Թուրքիան պարզապես խաղալիք էր Գերմանիայի և մյուս մեծ տերությունների ձեռքին։ Թուրքիան ինքը, ինչպես հայտնի է, գաղութային տերություն էր, որը Հյուսիսային Աֆրիկան և Բալկանները կորցնելուց հետո էլ դեռ իր կրնկի տակ էր պահում շատ ժողովուրդների, նրանց ենթարկում դաժան շահագործման ու հարստահարման, ամեն ինչ անում մեծ տերությունների կախվածությունից ազատվելու համար[4]։

Թուրքերը դեպի պատերազմ գնացին ոչ թե պաշտպանողական պլաններով, ոչ միայն եղածը պահպանելու մտահոգությամբ, այլև կայսրությանը նոր տերիտորիաներ միացնելու ձգտումներով։ Գերմանական իմպերիալիստների օգնությամբ նրանք ծրագրում էին գրավել Արևելյան Հայաստանը և ամբողջ Անդրկովկասը, մասնավորապես տիրել Բաքվին և նրա նավթային հարստություններին։

Թուրքական կիսաֆեոդալական իմպերիալիզմը, որը թույլ էր տնտեսապես, այնուամենայնիվ, ռազմական տեսակետից մեծ ուժ էր ներկայացնում։ Այդ բանի գիտակցությամբ է, որ իթթիհադական կառավարողները մտան պատերազմի մեջ։

«Իթթիհադ վե թերաքը» ոճրագործ կուսակցությունը խանդավառված էր պատերազմի ստեղծած պատեհ առիթով։ Երիտթուրքերի պարագլուխների համար պատերազմն ասես մի մանանա էր՝ իջած երկնքից։ Եկել էր «մեկ տարրից կազմված ու բաղկացած ազգ» ստեղծելու ժամանակը։

1914 թվականի սեպտեմբերին երիտթուրքական իշխանությունն ամբողջովին կենտրոնացավ բանակի գլխավոր շտաբի պետ Էնվեր փաշայի, իթթիհադ կուսակցության կենտրոնական կոմիտեի նախագահ Թալեաթ փաշայի և Ստամբուլի ռազմական նահանգապետ Ջեմալ փաշայի ձեռքում, կազմվեց նրանց տրիումվիրատը (եռապետությունը)։ Էնվերը գրավեց ռազմական մինիստրի, Թալեաթը՝ ներքին, իսկ Ջեմալը՝ ծովային մինիստրի պաշտոնը։ Օսմանյան պառլամենտի գոյությունը ձևական դարձավ, իսկ կամազուրկ 70-ամյա սուլթան Մեհմեդ V-ը լոկ խաղալիք էր դիկտատորների ձեռքին։

Ռազմական մինիստր ու շտաբի պետ Էնվեր փաշայի գլխավորությամբ և գերմանացի ռազմագետների աջակցությամբ թուրքական բանակի գլխավոր շտաբը տենդագին մշակում էր պատերազմի ստրատեգիական պլանը, որի մեջ մարմնավորվում էր և՛ Աբդուլ Համիդի պանիսլամիզմը, և՛ երիտթուրքերի պանթուրքիզմը[1]։

Թուրքական բանակի ստրատեգիական պլանի հիմքում դրվել էր և այն սխալ հաշվարկը, ըստ որի Մեծ Բրիտանիայի և նրա դաշնակից տերությունների գաղութային տիրապետություններում գտնվող թուրքալեզու և ոչ թուրք մահմեդական ժողովուրդներն առաջին իսկ առիթի դեպքում «սրբազան պատերազմի» դրոշով ապստամբելու էին, աջակցելու էին Թուրքիային և Գերմանիային՝ իրականացնելու իրենց նվաճողական պլանները։ «Սրբազան պատերազմի» միջոցով Թուրքիան և Գերմանիան

---

[1] Տե՛ս Emin, Tyrkey in the World War, Yale Oxford, 1930, pp 3, 195.

[2] Տե՛ս Akaby Nessibian, Britania and the Armenian Question 1915—1923, London, 1984, p 32.

[3] Տե՛ս «Белая книга. Война с Турцией. Дипломатическая переписка Англии, предшествовшая войне с Турцией (с 22 июля по 22 октября 1914 г.), СПб, 1914, էջ 140—141:

[4] Տե՛ս «Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и Временного правительства», серия III, 1914—1917 гг., том I, Соцэкгиз, Москва, 1935, էջ 213:

[1] Տե՛ս Е. Ф. Лудшувейт, Турция в годы первой мировой войны 1914—1918 гг., էջ 25:

նպատակ ունեին Անտանտի երկրների դեմ հանել վիթխարի մասսա՝ 72 միլիոն մարդ բրիտանական, 35 միլիոն՝ ֆրանսիական գաղութներում և 18 միլիոն մարդ՝Ռուսաստանում[1]։

Ելնելով այդ ոչ ռեալ հեռանկարից, թուրքական բանակի հարձակողական գործողությունների պլանը նախատեսում էր երկու հիմնական օպերատիվ ուղղություն՝ եգիպտական և կովկասյան։ Եգիպտոսի ուղղությամբ ռազմական գործողությունները սկսվելու էին նրանով, որ թուրքական զորքերն անցնելու էին Սուեզի ջրանցքը և անմիջական շփման մեջ էին մտնելու Աֆրիկայի մուսուլման բնակչության հետ[2]։ Այդ բնակչության հետ սերտ փոխգործողություններով թուրքերը պետք է ոչնչացնեին Անտանտի երկրների տիրապետությունը Հյուսիսային Աֆրիկայում և Ջիբրալթարից մինչև Սուեզ ընկած ողջ տարածությունը միացնեին Օսմանյան կայսրությանը։ Եգիպտոսի և Հյուսիսային Աֆրիկայի երկրների նվաճումը հիմնականում նպաստելու էր երիտթուրքական կառավարողների պանիսլամական նպատակների իրագործմանը[3]։ Այնուհետև, թուրքերին միացած սենուսիտները[4] և սուդանցիները պատերազմը պետք է տարածեին Անտանտի աֆրիկյան մյուս գաղութներում[5]։

Թուրքական իմպերիալիստներն իրենց ռազմական պլաններում հատկապես կարևոր տեղ էին տալիս Անդրկովկասը Ռուսաստանից արագորեն անջատելու խնդրին։ Այդ պատճառով առավել արկածախնդրական էր Կովկասի ուղղությամբ նախատեսված նվաճումների պլանը։ Կովկասը գրավելիս Արարատի ուղղությամբ հարվածը թուրքերը համարում էին որոշիչ։ Նրանք Կովկասն անվանում էին «Թուրանի ճանապարհ» և դրա համեմատ մյուս ռազմաճակատներին երկրորդական նշանակություն էին տալիս։ Էնվերը համոզված էր, որ երեք հարյուր հազարանոց բանակով պատերազմի հենց առաջին ամիսներին ռուսներին դուրս կմղի Կովկասից, որից հետո հեշտ կլինի «օգնության ձեռք» մեկնել ռուսական «անօրեն լծի տակ հեծող» «կրոնակից եղբայրներին»։

[1] Տե՛ս Е. Ф. Лудшувейт, Турция в годы первой мировой войны 1914—1918 гг. էջ 307։

[2] Տե՛ս А. Ф. Миллер, Краткая история Турции, էջ 157։

[3] Տե՛ս Ա. Զոպանեան, Հայաստանը թուրք լուծի տակ, Պոսթոն, 1918, էջ 36։

[4] Սենուսի— մուսուլմանական աղանդ։

[5] Տե՛ս А. Ф. Миллер, Краткая история Турции, էջ 157։

Ինչ խոսք, կովկասյան ուղղությամբ նախատեսված պանթուրքական պլանների իրականացումը մահացու վտանգ էր սպառնում առաջին հերթին հայ ժողովրդին, որը դիտվում էր իբրև ամենալուրջ խոչընդոտ։

Այժմ արդեն ապացուցված է, որ պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու գլխավոր պատճառներից մեկը, եթե ոչ ամենագլխավոր պատճառը հայկական հարցի «լուծումն» էր։ Ներկայացել էր, վերջապես, երկար սպասված բարեպատեհ առիթը՝ սրով ու հրով բնաջնջելու «ահավոր հայ ցեղը»։ Գրեթե բոլոր երկրները կռվի էին բռնված իրար հետ, և հայության հարցով ոչ ոք զբաղվելու ո՛չ ժամանակ և ո՛չ էլ ցանկություն ուներ։ Այս հանգամանքը բազմիցս ընդգծել են ինչպես հայ, այնպես էլ օտար հեղինակները։ Հիրավի, պատերազմի նախօրյակին և ընթացքում Թուրքիայում հավատարմագրված շատ օտարերկրացիներ վկայել են, որ երիտթուրքական կառավարությունը պատերազմի մեջ է մտել՝ իր «ծրագրում առաջին կետ» ունենալով «հայոց փչացումը»[1]։ Հայ ժողովրդի ոչնչացումից հետո հերթը պետք է հասներ ուրիշ ազգերի, մինչև որ թուրքական պետությունը վերակազմվեր «միայն զուտ մահմեդական, համաթուրքական հիման վրա, ամեն ոչ մահմեդական և ոչ թուրք բնակիչները բռնի պետք է մահմեդականացվեն և թուրքացվեն և որ ասի կարելի չէ՝ ջնջվեն»[2]։

Կովկասի ուղղությամբ թուրքերը հետապնդում էին ոչ միայն համիսլամական, այլև գերազանցապես պանթուրքական նպատակներ։ Ուժգին մի քանի հարվածներով Անդրկովկասը և ողջ Կովկասը գրավելուց հետո «հաղթական» թուրքական բանակը պետք է բաժանվեր երկու մասի. մի մասն անցնելու էր Իրանական Ադրբեջան, գրավելու էր Իրանը, Կասպից ծովի հարավային և արևելյան եզերքները, մյուս մասն առաջ շարժվելով Հյուսիսային Կովկասի ուղղությամբ, պետք է նվաճեր Ղրիմը, Պովոլժիեն, թաթարական բնակչությամբ Վոլգյան-Ուրալյան շրջանները։ Կովկասի ուղղությամբ գործող բանակի այդ երկու մասերը միանալով իրար, արշավելու էին Միջին Ասիա և Աֆղանստան։ Այնուհետև թուրք մուսուլմանական զորքերը խմբավորվելով Աֆղանստանում, այդ երկրի լեռնանցքներով թափան-

[1] Հ. Տաշեան, Հայ ազգի տարագրությունը գերմանական վավերագիրներու համեմատ, մ. Ա., Վիեննա, 1921, էջ 52։

[2] Նույն տեղը։

ցելու էին Հնդկաստանի հյուսիս-արևմուտք և Թուրքիային էին միացնելու հնդկական մուսուլմաններին։ Ապա ուղղություն վերցնելով դեպի Չինաստան, պետք է տիրանային ույգուրներով բնակեցված Սինցզյանի շրջաններին։ «Այս գործը մենք պիտի գլուխ հանենք Ալլահի ողորմությամբ և մեր Մարգարեի օգնությամբ և այն միության շնորհիվ, որ մեզ պարտադրում է մեր կրոնը»[1],— խոր համոզմունքով գրում էր Պոլսում լույս տեսնող «Թանֆիրի էֆքյար» թերթը։

Այսպիսով, եգիպտական և կովկասյան ուղղություններով ծավալվելիք ռազմական գործողությունները պետք է հանգեցնեին վիթխարի մի կայսրության՝ «Մեծ Թուրքիայի» ստեղծմանը, որի սահմաններն Աֆրիկայի և Ասիայի վրայով տարածվելու էին Ջիբրալթարից մինչև Չինաստան։ «Այսպիսին էր այն պլանը,— գրում էր Ա. Միլլերը,— որն իր վրա կրում էր գերմանական զինվորականության և էնվերական-պանթուրքականների անզուսպ ավանտյուրիզմի բացահայտ կնիքը»[2]։ Գերմանական գլխավոր շտաբի ծառայողները մշակել էին պլանի բոլոր մանրամասները՝ զորքերի դասավորումը, հարվածների ուղղությունները, գործողությունների ժամկետները։

Շուտով զորակոչի հրաման եղավ։ Զորակոչը և մոտալուտ պատերազմի վառոդի հոտն առաջ բերեցին «հայրենասիրության» թանձր մի շմոլք, որի մեջ մխրճվում էին թուրքական հասարակության նորանոր շերտեր։ Ամենուրեք տեղի էին ունենում մասսայական ցույցեր և հրապարակային ժողովներ, որոնք անցնում էին «Կորչեն ռուսները», «Եկել է վրեժի ժամը», «Մեզ ճանապարհ տվեք դեպի Թուրան» և այլ լոզունգներով, կոչերով ու սպառնալիքներով։ Այդ ցույցերն ու ժողովները սովորաբար վերջանում էին իթթիհադական քայլերգով, որի տեքստի քառյակներից մեկում ասված է.

«Աղլամա սեն, զարիպ Թուրան.
Պիզ կելիրիզ սանա, ինան»[3]։

Զիա Գեոքալփը ոչ առանց հիմքի գրում էր. «Հարյուր միլիոն (Sic։— Հ. Ս.) թուրքերի միավորումը մեկ ազգի մեջ թուրքական ազգայնականների համար հանդիսանում է խանդավառության առավել հզոր աղբյուրներից մեկը։ Եթե գոյություն չունենար թուրանական իդեալը, թուրքական նացիոնալիզմը չէր կարող այդպես արագ զարգանալ»[1]։ Զիա Գեոքալփի նման ազգայնամոլ ղեկավարների համար պատերազմը պանթուրքական երազների իրականացման միջոց էր[2]։

Շովինիստական շմոլքի պայմաններում հայ ազգային մարմինները հայտարարեցին, որ արևմտահայությունը թուրքական պետության հանդեպ հավատարմությամբ է կատարելու իր քաղաքացիական բոլոր պարտականությունները։ Եկեղեցիներում մաղթանքներ եղան, հայ կանայք զինվորական հագուստներ էին պատրաստում և նվիրում թուրքական բանակին։ Հայ վաճառականները և երկրագործները տալիս էին պահանջվող ապրանքներ՝ պարեն, գրաստներ, հայ երիտասարդները օրինավորապես զինվորագրվեցին, և զորակոչից խուսափելու դեպքեր համարյա չեղան։ Հայերը մտածում և գործում էին այսպես. «Ոչ մի դեպքում առիթ չտալ ու չգրգռել գազանին»[3]։

1914 թվականի նոյեմբերի 11-ին սուլթանի հատուկ իրադեով Թուրքիան իրեն Ռուսաստանի դեմ պաշտոնապես պատերազմի մեջ հայտարարեց։ Նոյեմբերի 11-ի սուլթանական իրադեն գալիս էր միայն ետին թվով հաստատելու պատերազմի սկսվելը։ Փաստորեն մինչ այդ նրանց միջև պատերազմն արդեն սկսված էր։ Դեռևս հոկտեմբերի 27-ին և 29-ին գերմանա-թուրքական միացյալ նավատորմը Սև ծովում հարձակվել էր ռուսական նավերի, ինչպես նաև Օդեսա, Սևաստոպոլ, Թեոդոսիա և Նովոռոսիյսկ նավահանգիստների վրա։ Նույն օրը միաժամանակ հրատարակվեց սուլթանի դիմումը բանակին և նավատորմին։ Նրան հետևեց իրեն փոխգեներալիսիմուսի կոչումը շնորհած էնվեր փաշայի՝ նույնպես բանակին ու նավատորմին ուղղված դիմումը։

Նոյեմբերի 11-ին սուլթան-խալիֆը միաժամանակ մահմեդա-

---

[1] Ա. Զոպանեան, *Հայաստանը թուրք լուծի տակ*, էջ 36։

[2] **А. Ф. Миллер,** Краткая история Турции, с. 157.

[3] «Լաց մի լինի զարիբ Թուրան,
Մենք գալիս ենք դեպի քեզ»։
(Աբշակ Ալպոյաճեան, *Պատմություն Մալաթիոյ հայոց*, էջ 935)։

[1] *Մեջբերված է* **Е. Ф. Лудшувейт,** Турция в годы первой мировой войны 1914—1918 гг., с. 308.

[2] *Տե՛ս* Hayd, Foundations of Tyrkish Nationalism, London, 1950 p. 170.

[3] Բյուզանդ Եղիայան, *Արևմտահայ դատը անջատողական չէր՝ բարեկարգչական էր (տե՛ս «Հայրենիք», 18 հոկտեմբերի 1980 թ.)*։

կան ողջ աշխարհին ջիհադի՝ կրոնական «սրբազան պատերազմի» կոչ արեց։ Այդ օրը Ստամբուլի Սուլթան Մեհմեդ Ֆաթիհ մեչեթում շեյխ-ուլ-իսլամ Հայրի էֆենդին կարդաց հինգ հրովարտակ Անտանտի տերությունների դեմ «սրբազան պատերազմ» սկսելու մասին։

Ջիհադի հրովարտակներից մեկում մասնավորապես ասված էր. «Երբ բազմաթիվ թշնամիներ միացել են Իսլամի դեմ, երբ իսլամ երկրները կողոպտվում են, իսլամ ժողովուրդը հարստահարվում է և բռնադատվում, երբ այս պայմաններում իսլամների խալիֆան, Ղուրանի սուրբ պատվիրների համաձայն, սուրբ պատերազմ է հռչակել, պատերազմելը բոլոր իսլամների պարտականությունը չէ՞, երիտասարդ կամ ծեր, հետևազորք կամ հեծյալ, և բոլոր իսլամները պարտական չե՞ն խանդավառվելու հավատքի համար կռիվ մղելու փափագով։ Պատասխան՝ այո՛։ Ռուսիայի, Ֆրանսիայի, Անգլիայի և դրանց օգնող երկրների հպատակ իսլամները ևս պարտավոր չե՞ն սուրբ պատերազմ մղելու իրենց պատկանած կառավարությունների դեմ։ Պատասխան՝ այո՛»[1]։

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն բոլոր նախորդ «սրբազան պատերազմների», որոնք ուղղված էին ընդհանրապես բոլոր ոչ մուսուլմանների, «անհավատների», բոլոր քրիստոնյաների դեմ, այս ջիհադը ուղղվում էր քրիստոնեական երկրների միայն մի խմբի՝ Անտանտի տերությունների դեմ։ Հրովարտակներից մեկում հենց այդպես էլ ասվում էր. «... Բոլոր մուսուլմանները, որոնք ապրում են Անտանտի երկրների (գաղութների։— Հ. Ս.) տարածքներում, պետք է հանդես գան իրենց կառավարությունների դեմ»[2]։

Որպեսզի մուսուլմաններին բացատրվեր այս ջիհադի հատուկ բնույթը, հրովարտակներից մի ուրիշի մեջ պարզաբանվում էր, որ անհավատները միայն ռուսները, անգլիացիները և ֆրանսիացիներն են։ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան այս անգամ ոչ միայն չէին դասվում «անհավատ» երկրների թվին, այլև հռչակվում էին իսլամի հենարան ու պաշտպաններ։ Առավել մոլեռանդ մուսուլմանների շրջանում նույնիսկ համառորեն լուրեր էին պտտվում, թե գերմանացիները և ավստրո-հունգարացիները մտադիր են հրաժարվել քրիստոնեական կրոնից և ընդունել մահմեդականություն։ Այդ առթիվ օրերի հայ ականատեսը վերհիշում է. «Բոլոր երիտասարդ թուրքերը ոտքի վրայ էին, գիշեր-ցերեկ կաշխատեին քրտական ցեղապետերը, շեյխերը քաղաք (Մուշ։— Հ. Ս.) հրավիրելու և համոզելու, որ մեր խալիֆան ճիհատ (սուրբ պատերազմ) հռչակած է բոլոր կեռավուրներուն դեմ, բայց քանի որ Գերմանիոյ թագավորը խոստացած է մեր սուլթանին, որ հաղթութենեն ետք իր ամբողջ ազգով և դաշնակիցներով պիտի ընդունի հագ տինը (ճշմարիտ կրոնքը), այդ պատճառով ալ՝ մեր դաշնակիցներեն զատ մյուս բոլոր կեռավուր ազգերը պիտի ջնջենք աշխարհի երեսեն և կամ մեր Ղուրանը ընդունիլ պիտի տանք անոնց»[1]։

Ինչպես քրիստոնեական, այնպես էլ մահմեդական աշխարհը միասնական չէր կրոնական հավատի տեսակետից։ Մահմեդականության երկու գլխավոր՝ սյունի և շիա ուղղություններին հետևողները նախկիններում հռչակված «սրբազան պատերազմների» ժամանակ միատեսակ պատրաստակամություն չէին հանդես բերում կռվելու «անհավատների» դեմ։ Դրա հիմնական պատճառն այն էր, որ սուլթան-խալիֆի կրոնական հեղինակությունը չէր տարածվում շիիթների վրա։

Հաշվի առնելով այդ հանգամանքը, թուրքերը գործի դրեցին նաև շիիթների հոգևոր մեծերին։ 1914 թվականի նոյեմբերի 13-ին հրատարակվեց շիիթներին «սրբազան պատերազմի» կոչող հատուկ հրովարտակ, որը ստորագրել էին կայսրության շիա աղանդի բարձրագույն կրոնական հեղինակությունները։

«Սրբազան պատերազմի» մասին հրովարտակները գրվել էին գերմանական գլխավոր շտաբի գիտությամբ։ Ուստի պատահական չէր, որ ջիհադ հռչակելու հաջորդ օրն իսկ գերմանական մամուլը լայնորեն անդրադարձավ դրան ու ողջունեց այն։ Գերմանիան, ինչպես ասվեց, մեծ հույսեր էր կապում թուրքական սուլթան-խալիֆի կրոնական հեղինակության հետ։ Նա հույս ուներ, որ հետևելով ջիհադի կոչերին, աֆրիկյան և ասիական բազմաթիվ երկրների տասնյակ միլիոնավոր մուսուլմաններ ոտքի կելնեն Անտանտի երկրների դեմ, նրանց դուրս կքշեն իրենց գաղութային տիրապետություններից։ Այդ դեպքում Գերմանիային միայն կմնար զբաղեցնել նրանց տեղը։ Գերմանական քաղա-

[1] «Տրապիզոնի թեմին վիճակավոր Յովհաննես արք. Նազլեանի յուշերը», էջ 13—14։ Տե՛ս նաև՝ **А. Ф. Миллер**, Краткая история Турции, էջ 138։

[2] **А. Ф. Миллер**, Краткая история Турции, с. 158.

[1] Սարգիս և Միսակ Բալլեաններ. Հարագատ պատմություն Տարոնոյ, էջ 305։

քաղաքներից առավել տաքգլուխները, գերագնահատելով խալիֆաթի նշանակությունը, միանգամայն լրջորեն կարծում էին, թե միգուցե հնարավոր լինի «սրբազան պատերազմի» միջոցով բոլոր գաղութներում հաստատել Գերմանիայի հեգեմոնիան։

«Գերման դիվանագետները,— գրում է ամերիկահայ պրոֆեսոր Տ. Լյուլեճյանը,— հաճույքով պիտի ըմբոշխնեին իսլամական շարժումը, հաղարավոր անմեղ, քրիստոնեայ կիներու, երեխաներու խողխողումը, ներոնական սառնութեամբ պիտի դիտեին արեան ճապաղիքները, որ ափրիկեան ափերին պիտի սկսեր ու մինչև Խաղաղականը պիտի ծավալվեր։ Անգլիա, Ֆրանսիա, Ռուսիա ներքին հեղափոխություններով պիտի բռնեին ու ինքն իր յաղթական բանակով Փարիզ ու Փեթրոկրատ հասնելե ետք Լոնտոն պիտի արշավեր ու աշխարհը իր սուրին տակ պիտի խոնարհեցներ»[1]։

Ահա թե ինչու գերմանացիները հնարավոր բոլոր միջոցներով օգնում էին Թուրքիային, որպեսզի հաջողությամբ պսակվի ջիհադը։ Մ. Ս. Լազարևի տվյալներով առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Գերմանիան պանիսլամական պրոպագանդայի համար Թուրքերին տրամադրել է 17,5 միլիոն լիրա՝ ոսկով[2]։

1914 թվականի նոյեմբերի 12-ին, Թուրքիան պաշտոնապես պատերազմի մեջ մտնելուց մի օր հետո, «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարությունը մի հատուկ նամակ-շրջաբերականով դիմեց իր տեղական կազմակերպություններին, որի մեջ պարզորոշ նշվում էին պատերազմի պանիսլամական նպատակները։ Նամակում նշված էր, որ Թուրքիայի մասնակցությունը համաշխարհային պատերազմին արդարացվում է «ազգային իդեալով»։ «Մեր ժողովրդի և մեր երկրի ազգային իդեալը,— այնուհետև բացատրվում էր նամակի մեջ,— մեզնից պահանջում է մոսկովյան թշնամու ոչնչացում, որպեսզի դրանով իսկ հաստատենք մեր կայսրության բնական պետական սահմանները, որոնք իրենց մեջ կառնեն և կմիավորեն մեր ցեղի բոլոր մասերը. մեր կրոնական զգացմունքը մեզ մղում է իսլամի աշխարհը ազատագրելու անհավատների տիրապետությունից»[1]։ Ինչպես պարզ երևում է, Թուրքական իմպերիալիստական բուրժուազիան ձգտում էր պանիսլամիզմն առավելագույնս ծառայեցնել պանթուրքիզմի նպատակներին։

Այդ նույն նամակում իթթիհադի կենտրոնական մարմինն իր տեղական կոմիտեներին ցուցում էր տալիս՝ «Թուրք ցեղի բոլոր ճյուղերը միավորելու համար», որպես առաջին անհրաժեշտություն, բնաջնջել հայ ցեղը։ «Հայերը... միակ արգելքն են մեր քաղաքականության հաջողության, քաղաքականություն, որ պետք է բանա Հնդկաստան տանող ճանապարհը։ Անհրաժեշտ է ոչնչացնել հայերին և նրանց դիակների վրայից քայլելով հասնել մեր նպատակին, հետևաբար մի խնայեք ոչ ոքի և ճշմարտությամբ արեք այն, ինչ որ ձեզ հրամայված է խստորեն»[2]։

Պատերազմի հենց սկզբից ձախողվեց Թուրքական բանակի գլխավոր ստրատեգիական պլանը, որն, ինչպես տեսանք, մշակվել էր գլխավոր շտաբի պետ Էնվեր փաշայի ղեկավարությամբ և հավանության արժանացել գերմանական գլխավոր շտաբի կողմից։

Թուրքիայից դուրս իբրև պանիսլամիզմի ջատագովներ հանդես եկան միայն մուսուլմանական բարձր հոգևորականությունը, որոշ չափով միջին հոգևորականությունը, կալվածատեր, բուրժուա և ազգայնական մտավորականության մի մասը, որոնք հիմնականում Թուրքական գործակալներ էին։

Նրանց ջանքերով Արևելքի մի շարք երկրներում եղան թուրքամետ խմորումներ, որոնց հետ հաշվի չնստել չէր կարելի։ Դեռ 1914 թվականի սեպտեմբերի 5-ին (24-ին) Պոլսից Լոնդոն էին հաղորդել, որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի Պոլսի հրահանգիչը սեպտեմբերի 1-ին (օգոստոսի 19-ին) Էրզրումի վրայով անցել է Պարսկաստան, նպատակ ունենալով այնտեղից անցնել Աֆղանստանի և Հնդկաստանի մուսուլմանների մոտ։ Հայտնվում էր նաև, որ այդ հրահանգիչը արդեն հասցրել է հակակառավարական խռովություններ առաջացնել Պարսկական Ադրբեջանում[3]։

---

[1] «Հասկաքաղ։ Բրոֆ. Տ. Կ. Լյուլեճյանի գրական վաստակը և 1915-ի բանտի հուշերը», Ֆրեզնո, 1955 թ., էջ 409։

[2] Տե՛ս Մ. Ազգումանյան. Հայաստան 1914—1917, էջ 161։

[1] **Е. Ф. Лудшувейт,** Турция в годы первой мировой войны, с. 61.

[2] **Միսակ Թորլաքեան,** *Օրերուս հետ, Լոս Անճելոս, 1953, էջ 470։*

[3] *Տե՛ս* «Белая книга. Война с Турцией. Дипломатическая переписка Англии, предшествовавшая войне с Турцией (с 22 июля по 22 октября 1914 г.)», էջ 34։

Հետագայում Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջը և գերմանական զինվորականության սյուներից Լյուդենդորֆը գրտնում էին, որ համաշխարհային պատերազմը երկու տարով ձգձգվեց այն պատճառով, որ դրան մասնակցում էր Թուրքիան՝ իր «սրբազան պատերազմի» կոչերով[1]: Անգլիան և Ֆրանսիան ստիպված էին մեծ թվով զինված ուժեր պահել մուսուլմանական իրենց գաղութներում, որպեսզի խափանեն «սրբազան պատերազմի» ամեն մի փորձ: Անտանտի տերությունները ստիպված էին նաև մեծ միջոցներ ծախսել հակապրոպագանդա կազմակերպելու վրա՝ պանիսլամական և պանթուրքական պրոպագանդայի ազդեցությունը չեզոքացնելու համար:

Սակայն ընդհանուր առմամբ ջիհադի արդյունքները չնչին էին: Այդ հնացած կոչը միայն աննշան արձագանք գտավ մահմեդական բնակչություն ունեցող երկրներում: Թուրք և գերմանացի քաղաքագետների սպասածին հակառակ, մահմեդականությունն անտարբերությամբ ընդունեց «սրբազան պատերազմի» կոչերը: Դեռ պատերազմից առաջ ռուս թուրքագետ Ի. Ի. Գոլոբորոդկոն նկատում էր, որ նախկիններում սրբազան պատերազմի կոչով սուլթան-խալիֆները կարողանում էին հավատացյալներին ոտքի հանել, որովհետև դա թելադրված էր «գյավուրների» դեմ անպայման հաղթանակ տանելու ակնկալությամբ: Բայց անցյալ դարից դրությունը փոխվել էր: Նոր պայմաններում նրանք մտադրություն չունեին կռվելու եվրոպացիների լավ մարզված ու զինված բազմաքանակ բանակների դեմ, որովհետև համոզված չէին, թե կարելի է «սրբազան պատերազմի» դիմել և անպատիժ մնալ[2]: Բացի այդ, խալիֆների անմիջական հետնորդների մեջ չկար բավականաչափ հեղինակավոր մի առաջնորդ, որ կարողանար ջիհադի դրոշի տակ համախմբել բոլոր մուսուլմաններին:

Պատերազմի սկզբին Իրան և Աֆղանստան մեկնած գերմանացի և թուրք էմիսարները, որոնք ձգտում էին մուսուլմաններին հանել Անտանտի տերությունների դեմ, անհրաժեշտ աջակցություն չգտնելով, ստիպված էին շտապ հեռանալ այդ երկրներից:

---

[1] Տե՛ս **А. Штиль,** Против «Гёбена» и «Бреслау». Кто должник?. Сборник документальных статей, М., 1925, էջ 151:

[2] Տե՛ս **И. И. Голобородько (И. Южанин),** Старая и новая Турция, էջ 82:

Օգտագործելով թուրքական ռազմամոլների զավթողական մտադրությունները, ճիշտ ըմբռնելով մուսուլմանական երկրների ժողովրդական մասսաների տրամադրությունները, Անտանտի տերությունները Քառյակ միության երկրների դեմ ուղղեցին իրենց գաղութների մարդկային և նյութական ռեսուրսները: Նրանք իրենց բանակներ զորակոչեցին հարյուր հազարավոր մուսուլմանների: Այդ բանակների կազմում գործում էին զուտ մուսուլմաններից կազմված ամբողջ զորամիավորումներ[1]: Այսպես, պատերազմի տարիներին բրիտանական զինված ուժերի կազմում միայն Հնդկաստանից կար 1,5 միլիոն զինվոր[2]: Դրանց զգալի մասը դավանում էր իսլամ, բայց դա չէր խանգարում, որ նրանք, հատկապես Միջագետքում և Սիրիա-Պաղեստինյան ռազմաճակատներում կռվեն Թուրքիայի, թուրքական զինվորական համազգեստ կրող մուսուլմանների դեմ: Ֆրանսիացիներն Աֆրիկայի և Ասիայի իրենց գաղութներից զինվորական ծառայության էին կանչել 800 հազար զինվոր[3]: Սրանց գերակշռող մասը նույնպես մուսուլմաններ էին, որոնք ոչ պակաս քաջությամբ, քան քրիստոնյա ֆրանսիացիները, կռվում էին թուրքական զորքերի դեմ:

Բացի այդ, Անտանտի տերությունների կառավարությունները Արևելքի երկրների տասնյակ հազարավոր բնակիչների մոբիլիզացրել և օգտագործում էին թիկունքային աշխատանքներում: Այսպես, օրինակ, մոբիլիզացված մեծ թվով եգիպտացիներ, որոնք ընդգրկված էին հատուկ բանվորական գումարտակներում, ռազմական ամրություններ էին կառուցում ոչ միայն արևմտյան (եվրոպական) ճակատում, այլև անմիջականորեն Թուրքիայի դեմ բացված ճակատներում՝ Դարդանելում, Միջագետքում, Պաղեստինում[4]:

Ինչպես և պետք էր սպասել, ջիհադը հաջողություն չունեցավ նաև Ռուսաստանում: Այստեղ մուսուլմանական բնակչությունը լիակատար անտարբերությամբ ընդունեց երիտթուրքերի կոչերը: Ռուսաստանի արևելյան և հարավային ծայրամասերի մուսուլմանական ժողովուրդները քաջ գիտակցում էին, որ պանիսլա-

---

[1] Տե՛ս **Е. Ф. Лудшувейт,** Турция в годы первой мировой войны 1914—1918 гг., էջ 310:

[2] Տե՛ս նույն տեղը:

[3] Տե՛ս նույն տեղը:

[4] Տե՛ս նույն տեղը:

մական և պանթուրքական մեքենայությունների հաջողության դեպքում իրենք կկտրվեն եղբայրական ռուս ժողովրդից, որի հետ նրանք վաղուց կապված էին պատմական անցյալով, տնտեսական շահերով և մշակութային շատ գծերի ընդհանրությամբ։ Անշուշտ, Ռուսաստանից անջատվելը նրանց համար պատմական մեծագույն դժբախտություն կլիներ։ Ռուսական բանակի շարքերում ծառայում էին հարյուր հազարավոր մուսուլմաններ, որոնցից հազարավորները կռվում էին կովկասյան ճակատում։

«Սրբազան պատերազմի» կոչը լայն արձագանք չգտավ ոչ միայն Ասիայի, Աֆրիկայի, Ռուսաստանի մահմեդական գաղութների, այլև հենց Օսմանյան կայսրության ոչ թուրք մահմեդական հպատակների և առաջին հերթին արաբների շրջանում։ Դեռևս նախքան պատերազմը կայսրության արաբական տերիտորիաներում սկսվել էր ազգային-ազատագրական շարժում՝ թուրքերի տիրապետությունից ազատագրվելու համար։ Պանիսլամական պրոպագանդան անկարող էր հաղթահարելու և ցանկացած հունով ուղղելու այդ շարժումը։ Այժմ, երբ հռչակվել էր ջիհադը, Սիրիայի, Պաղեստինի, Հեջազի արաբները որևէ շահագրգռություն հանդես չբերեցին Օսմանյան կայսրության շահերի, թուրքական տիրապետության ամրապնդման և ընդլայնման համար մղվող պայքարի մեջ մտնելու գործում։ Ավելին, որոշ ժամանակ անց, 1916 թվականի ամռանը, Հեջազի արաբներն անգլիացիների աջակցությամբ ապստամբության դրոշ պարզեցին թուրքական տիրապետության դեմ, Մեքքայի տիրակալ Հուսեին իբն Ալին իրեն հռչակեց արաբների թագավոր, ջիհադ հայտարարեց թուրքական սուլթան-խալիֆին, հավատացյալ մուսուլմաններին համոզեց, որ անհավատները գերմանացիները և նրանց երիտթուրքական դաշնակիցներն են, իսկ Անգլիան և Անտանտի մյուս երկրներն իսլամի իսկական հենարանը և գաղափարների պաշտպաններն են։

«Սրբազան պատերազմի» ձախողումը ըստ էության լինելով պանիսլամիզմի և թուրք-գերմանական բլոկի ռազմաստրատեգիական պլանի մի մասի ձախողում, մյուս կողմից, սակայն, պատճառ հանդիսացավ էլ ավելի խթանելու պանթուրքիզմի գաղափարախոսությունն ու պրակտիկան։ Երիտթուրքերի համար ներկայացել էր հարմար առիթ նոր ուժով պրոպագանդելու բոլոր թուրանականների համար արդեն այբբենական ճշմարտություն դարձած այն տեսակետը, թե Թուրքիայի փրկության գլխավոր հույսը ոչ թե իսլամությունն է, այլ թրքությունը, թուրքալեզու ժողովուրդների միավորումը։

Թուրքական կառավարությունը պանթուրքականներից կազմված պատվիրակություններ էր ուղարկում դաշնակից երկրներ, որոնք հանդիպումներ էին ունենում կառավարական շրջաններում, մեկնաբանում Ռուսաստանի նկատմամբ Թուրքիայի պահանջները, իրենց դաշնակիցներից պահանջում էին նախապես, նախքան Ռուսաստանի պարտությունը, իրենց տերիտորիալ հավակնություններն ընդունել իրավաբանորեն և պաշտոնապես։

Այսպես, ցարական գաղտնի գործակալության մի փաստաթղթից իմանում ենք, որ 1914 թվականի դեկտեմբերին Յուսուֆ Աքչուրայի գլխավորությամբ պանթուրքականներից կազմված մի պատվիրակություն է մեկնել Թուրքիայի դաշնակից Ավստրո-Հունգարիա, Վիեննայում ներկայացել արտաքին գործերի միանիստրին, ապա բանակցություններ վարել կառավարական այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ։ Վստահ լինելով ավստրո-գերմանական բլոկի հաղթանակի նկատմամբ, պատվիրակությունն ավստրո-հունգարական կառավարությանն էր ներկայացրել պանթուրքական կայսրություն ստեղծելու և այն Ավստրո-Հունգարիայի կողմից պաշտոնապես ճանաչելու պահանջը։ Ահա այս փաստաթուղթը.

«Ոստիկանական բաժնից ստացած տեղեկությունների համաձայն ռուսահպատակ «Մահմեդական կոմիտեն», իր կազմի մեջ ունենալով թուրքական «Յուրդու» թերթի հրատարակիչ Յուսուֆ օղլու Աքչուրային, համալսարանի պրոֆեսոր, «Ֆուիզա» թերթի խմբագիր Ալի Հուսեին զադեին, աստվածաբանության պրոֆեսոր Մուհամմեդ Էսսադ Էսելիբիզադեին և Մյուքիմէդդին Բեյդշաուին, սույն դեկտեմբերի առաջին օրերին Վիեննա ժամանեց, ուր շարունակական ունկնդրության ընդունվեցին նախարար-նախագահ Շտուրգկի և արտաքին գործոց նախարարի փոխանորդ կոմս Ֆորգաչի կողմից։ Կոմիտեն այդ անձանց, ինչպես և շատ ուրիշների, ներկայացրեց հուշագիր, որի մեջ պահանջվում է. 1) ռուսական տիրապետությունից ազատել Խիվան և Բուխարան և դրանց միացնել Թուրքեստանը, 2) կիրգիզների (խըրխըզ) վարչաքաղաքական անկախություն, 3) վերականգնում Կազանի թագավորության և Ղրիմի խանության, վերջինս սուլթանի հովանավորության տակ, և վերջապես 4) ճանաչել Վոլգա գետի և

Կասպից ծովի թուրքական լինելը։ Նախարար-նախագահ Շտուրգկը սիրով ընդունեց ռուսական մահմեդականների պատվիրակությանը և վստահեցրեց, որ մեծագույն հետաքրքրությամբ ավելի մանրամասն պիտի ծանոթանա նրանց պատմական հուշագրին։

Հաղորդելով վերոհիշյալի մասին, ոստիկանական բաժինս խնդրում է Ձերդ Գերազանցությունից, որ եթե հնարավոր է, պարզել կազմը, գործունեությունը և հարաբերություններն ըստ երևույթին Պոլսում կազմված ռուս-մահմեդական կոմիտեի, ինչպես նաև նրա հետևանքների, նույնպես և վերոհիշյալ անձերի հպատակության մասին տեղեկագրել Ոստիկանական բաժնիս։

Ի տեղի փոխ-վարիչի՝ Իս. Սմիռնով

Գործավարի փոխարեն՝ (ստորագրությունն անընթեռնելի է)»[1]։

Ջիհաթի ձախողման հետ միասին ձախողվեց նաև թուրքական բանակի գլխավոր օպերատիվ ստրատեգիական պլանը։ Արդեն առաջին երկու ամիսների պատերազմական գործողությունների ընթացքը ցույց տվեց, որ հոգս են ցնդում ռուսական և անգլիական զորքերի դեմ արագ հաղթանակ տանելու հույսերը։

Համառ կռիվներ էին տեղի ունենում Սուեզի ջրանցքի շրջանում։ Եգիպտոսը անգլիացիներից հետ գրավելու խնդիրը դրված էր Սիրիայում տեղաբաշխված օսմանյան բանակի վրա, որի հրամանատար նշանակվեց երիտթուրքական եռյակի պարագլուխներից մեկը՝ Ջեմալ փաշան։ Անգլիական զորքերի դեմ այս ճակատում ծավալված արյունալի մարտերում թուրքական զորքերը ոչ մի հաջողություն չունեցան, չկարողացան կատարել Սուեզի ջրանցքն անցնելու, Եգիպտոս ներխուժելու խնդիրը և ստիպված անցան խոր պաշտպանության։

Կովկասյան ճակատում Ռուսաստանի դեմ ռազմական գործողությունների ղեկավարումն իր վրա վերցրեց երիտթուրքական մյուս պարագլուխը՝ Էնվեր փաշան։ Կովկասյան ճակատում կռվող թուրքական 3-րդ բանակի նախկին հրամանատար Հասան Իզզեթ փաշան խիստ հոռետեսորեն էր տրամադրված իթթիհադականների պանթուրքական պլանների նկատմամբ։ Հենց դա էր պատճառներից մեկը, որ Էնվերը նրանից վերցրեց բանակի հրամանատարությունը և անմիջապես ձեռնամուխ եղավ իր պանթուրքական պլանների իրականացմանը, այն է՝ արագ հարվածներով տիրել Անդրկովկասին և Իրանին, ապա անցնել Անդրկասպյան տարածությունները, Պովոլժիե և Միջին Ասիա, ռուսական կայսրության մահմեդական ժողովուրդներին ապստամբության հանել և նրանց օգնությամբ հաղթական երթով շարժվել Աֆղանստանի և Հնդկաստանի վրա։

1914 թվականի վերջին Էնվեր փաշայի գլխավորած թուրքական 3-րդ բանակը հարձակման անցավ, նպատակ ունենալով ռուսական ճակատը ճեղքել Արդահան—Սարիղամիշ—Ուրմիա գծով։ Դեռ նոր էին սկսվել ռազմական գործողությունները, բայց թուրքական պրոպագանդան կանխակալորեն ավելում էր ռուսների մոտալուտ լիակատար ջախջախումը։ Կովկասյան ռազմաճակատից ստացվող լուրերն օսմանյան «պանծալի բանակի հաղթանակների» մասին էին միայն։ Դրա պատճառն այն է, որ հարձակման սկզբնական փուլում, 1914 թվականի վերջերին և 1915 թվականի առաջին օրերին, թուրքական զորքերը որոշ հաջողությունների էին հասել՝ առաջանալով ռազմաճակատի առանձին տեղամասերում։

Ռուսական զորքերի ժամանակավոր անհաջողությունները խոր վիշտ էին պատճառել արևմտահայությանը, որն օր առաջ տենչում էր իր հողի վրա տեսնել ռուս զինվորին։ «Իսկ մենք՝ հայերս, ներքնապես ինչքան կը մտատանջուեինք, այդ յայտնի էր, միայն կը ջանայինք մեր ներքին վիշտը ծածկել, մեր զգացումները քողարկել և մենք մեզ ուրախակից ցոյց տալ թուրքերուն, բայց ասիկա անկարելի կը լլար. մեր երեսի գունատ երեվոյթը կը մատներ մեր հոգեկան ողբերգությունը»[1]։

Ընդհակառակը, ռուսների հաղթանակի դեպքում հայերը չպիտի կարողանային թաքցնել իրենց ուրախությունը։ Դա պատահական չէր։ Հայ ժողովուրդը պատերազմի հենց սկզբից էր դրսևորել իր անսքող համակրանքը Ռուսաստանի նկատմամբ, իր բախտը կապել ռուսական զենքի հաղթանակի հետ։ Թվում էր, թե արևմտահայ ժողովրդի Մեծ երազի իրականացման ճամփին ավելի նպաստավոր առիթ չէր կարող ներկայանալ, քան ռուսական բանակների առաջխաղացումը նրա հինավուրց հայրենիքի տարածքներով։ Արևմտահայությունը տեղյակ էր հայ ժողովրդի օգտին ռուսական պետական ու քաղաքական գործիչների, ռուսական մամուլի բազմաթիվ հայտարարություններին,

[1] «Ալիք», 27 հունիսի 1974 թ.։

[1] Սարգիս և Միսակ Թղլեանեներ. Հարագատ պատմություն Տարոնոյ, էջ 318։

մտավորականության մի մասի հայանպաստ գործունեությանը, ռուսական կառավարության կողմից հայ կամավորական գնդերի ստեղծմանը և այլն։ Ռուսահայությունն արդեն հարյուր հազարավոր զինվորներ էր տվել ռուսական բանակին*։

Դեռ 1914 թվականի օգոստոսին, այսինքն՝ մինչև Թուրքիայի կռվի մեջ մտնելը, Բուլղարիայից Թիֆլիս էր եկել Անդրանիկը։ Կովկասում արդեն կամավորական շարժում էր սկսվել զուտ հայերից կազմված զորամիավորումներ ստեղծելու և ռուսական բանակի կազմում Թուրքերի դեմ ծավալվելիք կռիվներին մասնակցելու, սպասվելիք է՛լ ավելի մեծ չարդերից արևմտահայությանը փրկելու համար։ Հազար-հազարները ցանկանում էին մասնակից դառնալ ազգային ազատագրության գործին։ Կազմվեցին հայկական կամավորական հինգ ջոկատներ, որոնցից յուրաքանչյուրում կար 1000 զինվոր։ Ժողովրդի առատաձեռն նվիրատվությունների շնորհիվ կամավորները պատշաճորեն զգեստավորվեցին, ձեռք բերեցին անհրաժեշտ ռազմամթերք և ձիեր։ Կամավորական առաջին ջոկատի հրամանատարությունը ստանձնեց Անդրանիկը։ Կովկասյան ճակատում ռազմական գործողությունները սկսվելուց հետո ջոկատները մեկնեցին ռազմաճակատ[1]։

* Ռուսական բանակի կազմում հայերի թվաքանակի մասին ուսումնասիրողների մոտ կան տարբեր տվյալներ։ Պրոֆ. Վ. Ա. Պարսամյանը գտնում է, որ հայ զինվորների թիվը ռուսական բանակներում կազմում էր 200 հազար (Վ. Ա. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1967, էջ 443)։ Ամերիկահայ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը հայ զինվորականների թիվը 150 հազար է համարում (Richard G. Hovannisian. Armenia on the Road to Independence, 1918, Barkeley and Los Angeles, 1969, p. 44) Ռուբեն Տեր-Մինասյանը առաջին համաշխարհային պատերազմում ցարական բանակներում ծառայող հայ զինվորների թիվը ճշտելիս համադրում է գանազան տվյալներ։ Նա ելնում է այն բանից, որ 1897 թվականին Անդրկովկասն ուներ 1,8 միլիոն հայություն։ 1914 թվականին «ամեն մեկ դաս (տարիք) տալիս էր 10.800 զինվոր, 19—43 տարեկանները, այսինքն՝ 24 դասը պիտի տար 10.800×24, որը հավասար է 259.200 զինվորի» (Ռուբեն, Հայ-Թրքական կնճիռը, Գահիրե, 1924, էջ 63)։ Լևոն Զորմիսյանը ռուսական բանակների հայ զինվորների թիվը հասցնում է 300 հազարի (Լ. Զորմիսեան, Համապատկեր արևելահայերու ժամանակակից պատմութեան, Բ. հատոր, 1878—1909, Պեյրութ, 1974, էջ 139)։

[1] Բոլոր հայերը չէին, որ խանդավառված էին հայ կամավորական շարժումով։ Շարժման հիմնական կազմակերպիչը Թիֆլիսի հայ ազգային բյուրոն էր, որտեղ մեծամասնություն էին կազմում դաշնակցականները։ Շարժմանը

Ինչպես նշեցինք, պատերազմն իր բնույթով իմպերիալիստական էր։ Եթե դրա հեղինակներից մեկը՝ հետամնաց Թուրքիան, նպատակ ուներ զավթել Ռուսաստանի մուսուլմանաբնակ տարածքները և այդ ընթացքում անէացնել հայ ժողովրդին, ապա պատերազմի հեղինակներից մյուսը՝ ցարիզմը, նպատակ ուներ պարտության մատնել Թուրքիային, նրանից խլել նեղուցները, զավթել նրա արևելյան նահանգները, առաջին հերթին՝ Արևմտահայաստանը։ Երկու կողմերի համար լինելով իմպերիալիստական, պատերազմը, սակայն, էական առանձնահատկություններ էր դրսևորում հայկական հարցի նկատմամբ։ Եթե պատերազմում Ռուսաստանի դեմ Թուրքիայի հաջողությունը մահաբեր էր հայության համար, ապա Թուրքիայի դեմ ռուսական բանակի հաղթանակը, ընդհակառակը, հայ ժողովրդի հաղթանակն էր, քանի որ այդ բանակը, թեկուզ ցարական, նրան ազատագրություն էր բերելու օսմանյան դարավոր բռնակալությունից, և նա ժամ առաջ էր փափագում տեսնել այդ ազատությունը։

Իհարկե, այդ ամենը չէր կարող վրիպել Թուրքերի աչքից, որոնց ատելությունը հայերի հանդեպ գնալով լեռնանում էր։ Այն օրերին, երբ Թուրքերը հեռագրական լուրեր չէին ստանում ռազմաճակատի կացության մասին, միմյանց ասում էին. «Հայերի երեսին նայենք. նրանք ամեն օր անթել հեռագիր են ստանում իրենց կամավորներից։ Երբ երեսները տրտում է լինում, պետք է հասկանանք, որ մենք հաջող ենք, իսկ եթե, ընդհակառակը, ուրախ լինեն, պետք է եզրակացնենք, որ մենք անհաջող ենք։ Ի՞նչ կարիք կա, այլևս, սպասել սուտ ու մուտ հեռագրերի գալուն»[1]։

Կովկասյան ճակատում Թուրքական զորքերի հարձակումը

նեցուկ էին և գործուն մասնակցություն էին բերում վերակացվյալ հնչակյանները։ Սահմանադրական ռամկավարները, որոնք ընդհանրապես դեմ էին Թուրքական կառավարության դեմ ուղղված մարտական կամ քաղաքական այն բոլոր ձեռնարկներին, որոնք «գազանի պոչին կոխելու պես բան մրն» էին (Պապը Ալի, Գում Գափու, Բանկ Օթոման, Խանասոր և այլն) և որոնք չէին կարող հաջողություն բերել համահայկական մասշտաբով, բնականաբար դեմ էին նաև կամավորական շարժմանը։ Բայց այն բանից հետո, երբ շարժումն իրական փաստ դարձավ, ռամկավարներն իրենց մասնակցությունը բերեցին դրան (տե՛ս «Պայքար», 25 դեկտեմբերի 1982 թ.)։

[1] Սարգիս և Միսակ Բդլեաններ, Հարազատ պատմություն Տարոնոյ, էջ 319։

նրանց համար վերջացավ խայտառակ պարտությամբ։ Հզոր հարվածներով ռուսական բանակն այդ զորքերին հետ շպրտեց Սարիղամիշից և լիովին ջախջախեց նրանց։ Թուրքական 90 հազարանոց կովկասյան 3-րդ բանակից 70 հազարը շարքից դուրս եկավ[1]։

Իթթիհադական իշխանությունները նախ փորձեցին Սարիղամիշում թուրքական զորքերի խայտառակ պարտության փաստը թաքցնել «այլազգի անհարազատ տարրերից», հատկապես հայերից։ «Քանի մը օր ետք,— վերհիշում է ականատեսը,— երբ դեռ թուրքերը անհամբեր կը սպասեին լսելու Կարսի և Պաթումի գրավման լուրերը, կը տեսնենք, որ այս անգամ թուրք ժողովուրդը և պաշտոնեությունը գլխիկոր, մռայլ ու տրտում կ՚երևվեին. հայերուն բան մը չէին յայտներ։ Մենք ալ կը ջանայինք մեզի ծանոթ թուրքերեն հասկնալ բաներ մը, բայց անկարելի կ՚ըլլար»[2]։

Իրողությունը, սակայն, երկար ժամանակ թաքցնել անկարելի էր. շուտով պաշտոնական հաղորդումներ եղան, որ էնվեր փաշայի առաջնորդած թուրքական բանակը Օլթիի, Սողանլուի և Սարիղամիշի շրջաններում ջարդուփշուր է եղել և նահանջում է դեպի Կարին։ Հայությունը ցնծության մեջ էր։ «Բոլորիս ուրախությունը չափ ու սահման չուներ,— գրում է օրերի ականատեսը,— այն հոյսն ունեինք, որ ռուս բանակը շուտով պիտի պաշարե Կարին և յառաջանալով Խնուսի կողմեն, պիտի իջներ Մշո դաշտը և այսպիսով վերջ պիտի տրուեր մեր դարավոր գերութեան և ներկայ գեհենական վիճակին։ Բայց իզուր էր մեր լավատեսությունը, հայուն աստուածը դեռ կը քնանար և մեզի համար ավելի կսկծալի օրեր կային վերապահուած դեռ»[3]։

Այո՛, հայության համար առավել սոսկալի օրերը դեռ նոր էին սկսվում։ Թուրան արշավող թուրքական զորքերի խայտառակ պարտությունը կատաղեցրել, հավասարակշռությունից հանել էր բոլոր պանթուրքականներին։ Եթե «սրբազան պատերազմի» կոչերն արձագանք չէին գտել դրսում և սպասած արդյունքը չէին տվել կայսրության մահմեդական արաբների շրջանում, ապա բուն Անատոլիայի թուրք բնակչության մեջ դրանք պարարտ հող

[1] Տե՛ս Н. Г. Корсун, Сарикамышская операция, Госвоениздат. М., 1937; А. О. Арутюнян, Кавказский фронт 1914—1917 гг., էջ 133—134։

[2] Սարգիս և Միսակ Բդէեաններ, Հարազատ պատմություն Տարոնի, էջ 318։

[3] Նույն տեղը, էջ 319։

գտան։ Թուրքական վերնախավերը «սրբազան պատերազմի» լոզունգն օգտագործեցին երկրի ներսի քրիստոնյա փոքրամասնությունների՝ հայերի, հույների, ասորիների նկատմամբ գազանություններն արդարացնելու համար։ Իթթիհադական հանցագործ կառավարությունը ռազմաճակատում թուրքերի անհաջողության հիմնական պատասխանատու համարեց հայությանը[1]։ Թուրքական հետադիմության ողջ կատաղությունը թափվեց անզեն ու անպաշտպան հայ ժողովրդի գլխին։ Պահը հարմար էր գործողության մեջ դնելու ցեղասպանության վաղուց մշակված ծրագիրը, որին պատերազմից դեռ շատ առաջ իր լիակատար համաձայնությունն էր տվել դաշնակից կայզերական Գերմանիան։

Պատերազմի առաջին օրերին Գերմանիան մի քանի փորձ ևս արեց Ռուսաստանի դեմ մղվող կռվում հայերի համակրանքը շահելու, ինչպես Թուրքիայում, այնպես էլ Անդրկովկասում նրանց վրա հենվելու համար։ Իրենց ազատագրությունը ռուսական զենքի հաղթանակի հետ կապող հայերի անսասան դիրքը, ռուսների նկատմամբ նրանց անկեղծ հավատարմությունը ի դերև հանեցին գերմանացիների հույսերը։ Նրանք պարզ տեսնում էին, որ հայերը թե՛ Ռուսաստանում և թե՛ Թուրքիայում տենչում են ռուսական զենքի հաղթանակը։ Ուստի անհրաժեշտ էր առանց երկմտելու Ռուսաստանին զրկել հայերից, նրանց համակրանքից ու աջակցությունից։

Վ. Ի. Լենինը նշում էր, որ համաշխարհային պատերազմը «անզեն ժողովուրդների ամենագազանային բնաջնջման, ոչնչացման» պատերազմ է[2]։ Հիրավի, այդ պատերազմը բառիս բուն իմաստով բնաջնջում բերեց արևմտահայությանը։

Իմպերիալիզմի պատմական դարաշրջանին էր գուգադիպել հայ և թուրք դարավոր կնճռի ծայրահեղ սրումը։ Մեծ տերությունների միջև ծուլացած քաղաքական հակամարտության պայմաններում հայ ժողովուրդը շուտով դառնալու էր իմպերիալիզմի դարաշրջանի առաջին մեծ զոհը։

Պատերազմի հենց առաջին օրից ռազմական թատերաբեմ էր դարձել Արևմտյան Հայաստանը։ Օգտագործելով պատերազմա-

[1] Տե՛ս В. В. Готлиб, Тайная дипломатия во время первой мировой войны, էջ 153—154։

[2] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 32, էջ 102։

կան իրադրությունը, երիտթուրքերի կառավարությունը գերմանական իմպերիալիստների հովանավորությամբ իրականացրեց թուրքական ռեակցիոն վերնախավերի վաղեմի մտադրությունը։ Աբդուլ Համիդի կազմակերպած հայերի մասսայական կոտորածներից իթթիհադն անցավ հայերի համատարած բնաջնջման քաղաքականության պրակտիկ իրականացմանը։ Թուրք ջարդարարները ոճիրը նախապատրաստեցին դիվային նենգությամբ՝ զգուշորեն, բայց դաժան հետևողականությամբ։

Ինչպես վերևում տեսանք, նախկինում թուրքական կառավարությունը ինքնապաշտպանության դիմած հայերի հետ վարվում էր արևելյան բռնապետության և օսմանների կրոնական մոլեռանդության կանոններով։ 1915 թվականին հայերի հետ վերաբերվելու այդ սկզբունքներն ու կանոնները վերածվեցին «թշնամիներին» գլխովին բնաջնջելու իրավունքի։

Թուրքական պետական պաշտոնյաները բացեիբաց հայտարարում էին, թե շուտով, շատ շուտով հայերի գլխին այնպիսի կրակ են թափելու, որ նրանք այլևս չեն մտածելու և չեն խոսելու հայկական խնդիրների մասին։

Արդեն 1915 թվականի սկզբներից այս կամ այն գավառից լուրեր էին ստացվում հայերի ջարդերի մասին։ Նույն թվականի փետրվարի կեսերին տեղի ունեցավ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի գաղտնի նիստը՝ Թալեաթի նախագահությամբ։ Ժողովին ներկա էին Էնվերը, Զիա Գեոքալփը, Միդհաթ Շուքրին, Բեհաեդդին Շաքիրը, Նազիմը, Հուսեին Ջահիդը, Կարա Քեմալը, Խալիլը, Հասան Ֆեհմին, Ահմեդ Ադա օղլուն, Ջավիդը, Մեվլան գաղե Ռիֆաթը, այսինքն՝ երիտթուրքերի բոլոր աչքի ընկնող գործիչները, բացառությամբ Ջեմալ փաշայի, որը գտնվում էր եգիպտական ճակատում։ Բացակայում էր նաև կոմիտեի միակ հայ անդամը՝ Պետրոս Հալաջյանը։

Իթթիհադական կենտկոմի այս գաղտնի նիստում քննարկվեց հայերի տեղահանման և նրանց ֆիզիկական ոչնչացման հարցը։ Զեկուցումով հանդես եկավ կենտկոմի քարտուղար Նազիմը։ Միաձայն որոշում ընդունվեց գործողության մեջ դնել հայերի բնաջնջման ծրագիրը։

Նիստի մասնակիցներից մեկը՝ իթթիհադի կենտկոմի անդամ քուրդ Մեվլան գաղե Ռիֆաթը, հետագայում դուրս գալով «Միություն և առաջադիմություն» կուսակցության շարքերից, գրեց

«Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը» խորագրով գիրքը, որը հայերեն թարգմանությամբ լույս տեսավ Բեյրութում, 1938 թվականին։ Գրքի հեղինակն արժեքավոր մի շարք մանրամասնություններ հաղորդեց այն մասին, թե երիտթուրքերի ոճրագործ ոհմակն ինչպես էր ձեռնամուխ լինում հոշոտելու իր անզեն զոհին։ Ահա մեկ-երկու քաղվածք հայ ժողովրդի սպանդի գլխավոր պատասխանատուներից մեկի՝ բժ. Նազիմի՝ կոմիտեի նիստերից մեկում արտասանած ճառից, որն իր գրքում մեջ է բերել Մեվլան գաղե Ռիֆաթը։ «Այս ժողովներում բազմաթիվ անգամ ես խոսել եմ։ Դարձյալ կրկնում եմ. եթե այս մաքրագործումը (հայերի գլխովին ոչնչացումը։— Հ. Ս.) ընդհանուր և վերջնական չի լինելու, ապա օգուտի փոխարեն [մեզ] վնաս կգա։ Պետք է արմատից պոկել հայությանը։ Մեր երկրում մի հայ անգամ չպետք է թողնել, պետք է մեռցնել հայ անունը։ Պատերազմի մեջ ենք, և սրանից ավելի լավ պատեհություն չի կարող լինել։ Մեծ պետությունների միջամտություն չի կարող տեղի ունենալ և աշխարհի մամուլի հարայ-հրոցը նույնպես չի լսվի։ Եթե նույնիսկ լսվի էլ, գործը արդեն կատարված ու վերջացած կլինի։ Ահա թե ինչու այս անգամ ես առաջարկում եմ վճռականորեն օրակարգի մեջ դնել [հայերի] բնաջնջման գործողությունը։ Ոչ մի հայի կենդանի չթողնելու պայմանով միայն պետք է դիմել նրանց ոչնչացմանը»։

Ապա, որպեսզի նիստի մասնակիցներից որևէ մեկի մոտ կասկած չմնա իր իրավացիության նկատմամբ, հայակեր այդ հրեշը, կոմիտեի անդամներին դիմելով, շարունակել է. «Ձեզանից ոմանք թերևս ասեն, թե այս աստիճանի վայրագություն թույլատրելի՞ է կամ ինչ վնաս կարող է գալ երեխաներից, մանուկներից, ծերերից, հիվանդներից, որ նրանց բոլորին սպանելու պատրաստություն է տեսնվում։ Պիտի ասեք, թե նա միայն պետք է պատժվի, ով հանցավոր է և ոճրագործ։ Իր տան կամ տնակի մեջ նստած անօգնական ժողովրդին, ծծկեր-մանուկներին հարձակման ենթարկելը վայրենություն է, հակառակ է քաղաքակրթությանն ու մարդկայնությանը։ Կասեք, թե բժ. Նազիմն էլ ծայրահեղ է, տրամաբանությամբ չի մտածում։ Խնդրում եմ, էֆենդիներ, թուլությանը և սրտի փափկությանը այդ աստիճան զոհ չգնալ։ Դա վատ հիվանդություն է։ Ահա ձեզ պատերազմական վիճակ։ Ձեզ բոլորիդ հարցնում եմ. ի՞նչ է պատերազմը։ Վայրենություն չէ՞։ Երկրագործին իր գյուղից քշելը և պատե-

բազմի ճակատ տանելը նրան մեռցնել չի՞ նշանակում։ Արհեստավորին խանութից վերցնելով և շրապնելի հարվածների տակ զոհաբերելը ի՞նչ է։ Ի՞նչ է նա արել։ Ի՞նչ հանցանք է գործել, որ այդպիսի աղետալի մահվան է դատապարտվում։ Վայրենությունը բխում է բնության օրենքներից։

Այս մտքերի ընդունելը կամ չընդունելը ըմբռնման հարց է։ Բոլոր կենդանիները, նույնիսկ բույսերը իրար ուտում են, իրենց կյանքը երկարացնում են միմյանց բնաջնջելով։ Այնպես չէ՞։ Կարո՞ղ ենք նրանց ասել, թե իրար միս մի կերեք, խուսափեք միմյանց բնաջնջելուց, քանի որ դա վայրենություն է։ Կարո՞ղ ենք ասել»։

Այս տողերը կարդալիս անմիջապես մտաբերում ենք քառորդ դար հետո Ադոլֆ Հիտլերի և նացիստական մյուս պարագլուխների, ֆաշիստական ռասիստ տեսաբանների մարդատյաց մտքերը, որոնք կարծես թե տառացիորեն իթթիհադականների մտքերի կրկնությունն են։

Բայց խոսքը դարձյալ տանք Նազիմին. «Լավ մտածենք։ Այս հեղափոխությունը մենք ինչո՞ւ արեցինք։ Ի՞նչն էր մեր նպատակը։ Սուլթան Համիդի պետական ծառայողներին թիկնաթոռներից գցելը և նրանց տեղը նստե՞լն էր։ Ես չեմ կարծում, թե դրա համար [ենք արել]։

Թրքությունը վերակենդանացնելու համար է, որ ես ձեզ ընկեր, եղբայր և ուղեկից եղա։ Ես ուզում եմ, որ միայն Թուրքն ապրի։ Այո, ես ուզում եմ, որ այս հողերի վրա միայն նա անկախ ապրի։ Թուրքից բացի մնացածները, ինչ կրոնի և հավատքի էլ պատկանում են, թող բնաջնջվեն։ Եվ օտար տարրերից երկիրը հենց Թուրքը պետք է մաքրի։ Ինձ համար կրոնը արժեք չունի։ Իմ կրոնը Թուրանն է»[1]։

Երիտթուրքերի այս վայրագ տեսաբանի հարցադրումը պարզորոշ ցույց է տալիս, որ թուրքական բուրժուազիան հայ ժողովրդի ոչնչացումն իր համար դարձրել էր բացարձակ գաղափար։ Որոշվել էր կտրել այն կոպորը, որը բողոքում էր։

Հաշվեհարդարը եղավ արագ և արյունալի։ Օսմանյան պետությունն օրենքից դուրս հայտարարեց կայսրության մեջ ապրող ամբողջ հայությանը։ Ներքին գործերի մինիստր, ապա վարչապետ, պատմության մեծագույն ոճրագործներից մեկը՝ Թալեաթը, հայերի մասսայական բնաջնջումը պետական առաջնահերթ խնդիր համարելով, համապատասխան մարմիններին սառնասրտորեն հրահանգեց՝ անխնա ոչնչացնել բոլորին, մինչև իսկ օրորոցի մանուկներին։ Գործի դրվեցին պետական ապարատը, բանակը և ոստիկանությունը, «համիդիեները» և չերքեզական ավազակախմբերը։

Թուրքական խորհրդարանի անդամ Վարդգեսը (Սերենկյուլյան), որ Թալեաթի անձնական բարեկամներից էր, հայության նկատմամբ համատարած հալածանքները և սպանությունները սկսելուց հետո գնում է մեծ ոճրագործի մոտ, որպեսզի իմանա պատճառը։ Թալեաթը վրդովված նրա երեսին շպրտում է. «Մեր ծանր օրերին մեր կոկորդին կպաք և հայկական բարենորոգման հարցը դրեցիք։ Հիմա մենք պետք է օգտվենք մեր նպաստավոր դրությունից և ձեր ազգը այնպես ցիրուցան անենք, որ 50 տարի ձեր մտքից հանեք բարենորոգումների գաղափարը»։ Վարդգեսի այն հարցին, թե «ուրեմն ուզում եք շարունակե՞լ Աբդուլ Համիդի գործը», Թալեաթը անմիջապես պատասխանում է՝ այո՛։

Հայ ժողովրդի ընդհանուր ցեղասպանության քաղաքականության մեջ մենք տեսնում ենք ոչ թե կառավարության գլուխ կանգնած գործիչների պետական իմաստություն, այլ ցինիկ-բարբարոսական վերաբերմունք անպաշտպան բնակչության նկատմամբ։ Հայերի բնաջնջումը դարձավ Օսմանյան կայսրության կառավարման սիստեմի առաջնահերթ խնդիրը. հրով ու սրով թուրք ռեակցիոն վերնախավերը սկսեցին հայերից մաքրել «իրենց» տերիտորիաները։

1915 թվականի ապրիլի 24-ին Կ. Պոլսի հայ մտավորականության փայլուն համաստեղության սպանդով սկսվեց արևմտահայության ընդհանուր, մասսայական ցեղասպանությունը։ Իթթիհադ կոչված բազմագլուխ հիդրան առաջինը շամփրեց հայ միտքը, հայ ազգի ոգին։ Ազգային մշակույթի լուսատու ջահերը հոյլերով վար թափվեցին։ Քանի՞-քանի լուսավոր ուղեղներ փըշրեցին մարդակերները. Գրիգոր Զոհրապ, Ռուբեն Սևակ, Դանիել Վարուժան... Նրանցից ոչ մեկը շիրիմ չունեցավ։ Հանճարեղ Վա-

---

[1] *Մեջբերված է՝ Հայկազն Գ. Ղազարեան, Ցեղասպան Թուրքը, էջ 343—344։*

[1] Յոհաննես Լեփսիուս, *Հայաստանի չարդերը*, Կ. Պոլիս, 1919, էջ 107։ *Տե՛ս* նաև Սողոմոն Թեհլիրեան, *Վերլուծումներ*, էջ 374։

բուժանին դաշունահարելուց հետո դահիճները հանեցին նրա աչքերը, իսկ անտիպ բանաստեղծական գոհարների վեց տետրերը անշնչացած բանաստեղծի գրպանից հանեց դահիճներից մեկը, որ նպարավաճառ էր, և օգտագործեց ձիթապտուղ ու պանիր փաթեթավորելու համար...

Թուրքերն այնուհետև տենդագին շտապողականությամբ ոչնչացրին զինվորական ծառայության կանչված 300 հազար հայ երիտասարդների՝ հայության ծաղիկ սերունդը։ Չնայած այն հանգամանքին, որ թուրքական բանակի հայ զինվորները և սպաները ռազմի դաշտում ապացուցեցին իրենց օրինապահ հպատակությունը, այնուհանդերձ թուրքական զինվորական իշխանությունները նախ նրանց զինաթափեցին ու բանակից հեռացրին՝ օգտագործելով միայն թիկունքային աշխատանքներում՝ որպես «ամուլե թափուրու», իսկ հետո էլ համարյա բոլորին կոտորեցին զորանոցներում կամ ձորերում ու անտառներում։ Հազարավոր հայ տղաների էլ հանում էին խրամատներից և հենց տեղում գնդակահարում[1]։

Ապա բանակը, ոստիկանությունը, քրդական ու չերքեզական ավազակախմբերը թափվեցին Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի բոլոր վայրերի անպաշտպան հայկական գյուղերի ու քաղաքների վրա։ Ոսոխը անհուն վայրագությամբ սկսեց բզկտել անպաշտպան արևմտահայ ժողովրդի մարմինը։

Տեսարաններն ամենուրեք սահմռկեցուցիչ էին։ «Ահավոր բան մը այնտեղ կկատարուի մութին մեջ» (Վ. Թեքեյան)։ Նախապես տղամարդկանց բաժանեցին կանանցից և երեխաներից, ապա սրերի, դանակների հարվածներով, հրացանի սվիններով, անգթության հազար մեթոդներով սպանեցին նրանց։

Հայկական գյուղերի եկեղեցիներն ու մարագները, լցված երեխաներով, ծերերով, կանանցով ու աղջիկներով, հրդեհի բոցերով բռնկված ծխում էին։ Ճենճահոտ թանձր մուխը մառախուղի նման պատել էր բնակավայրերը։ Մանուկները մորթոտվում էին օրորոցում, պատանյակները և պարմանուհիները զարհուրանքից խոշորացած աչքերով երկար կականներ էին արձակում, արյունլվիկ մատներով կանայք ճանկռում էին հողն ու քարերը, բազուկները երկինք պարզած ողբով ու ծղրտոցով աղերսում էին,

[1] Այդ մասին տե՛ս Գ. Սյուրմելեան, Տաճկահայ զինվոր և զինվորականություն նախ տաճկական, ապա հայկական բանակներուն մէջ, Բեյրութ, 1967։

նվաղում։ Ճիչն ու արցունքը խառնվել էին իրար, սոսկումի աղաղակները լցվել էին դաշտերը։ Երկինքն անգամ չէր կարողանում հանգիստ նայել բզկտվող ժողովրդին։

Ամեն տեղ կոտորա՜ծ, բռնաբարո՜ւմ, թալան։ Ամեն տեղ անմեղ ու դժբախտ զոհերի սրտաճմլիկ ու աղեկեղ ճիչեր, անզոր անեծքներ, որ նրանք երկինք էին բարբառում։ «Ինչո՞ւ, ինչու» աղերսախառն հառաչանքն էր սառած հազարավոր ու հազարավոր մայրերի ու մամիկների աչքերում, որոնք դահիճների առջև չոքած գթություն էին աղերսում իրենց փեշերից պինդ բռնած, աշնան տերևի նման ահից դողացող ու սվսվացող մանկիկների համար։ Բայց ավա՜ղ։ Քինոտ դաշույնն, արդեն քանի՜-քանի սրտեր պատռած, էլի մորթում էր անխնա...

Գյուղերից ու քաղաքներից ծայր առած մարդկային սոսկահար ու շփոթ քարավանները ոչնչացվում էին լերկ անապատների մուժում, ձորերում ու կիրճերում, խեղդամահ արվում հորդառատ գետերում։ Ամենուրեք առ ու փախ, ալան-թալան։ Թալանչիները դեռ մութուլուսին գործի վրա էին[1]։ Սրանցից էլ հաճախ ավարը խլում էին ճամփաների դարանակալ ավազակները...

Ահա հազարավոր հայ գյուղերից մեկի՝ Խարբերդի վիլայեթի Բալու գավառակի Պաղնատան (Պաղին) գյուղի ողբերգությունը։ Գյուղում կային հարյուրավոր քարաշեն տներ, 1000-ից ավելի բնակիչ, գործում էր Արամյան վարժարանը, որտեղ դասավանդում էին Պոլսում և Եվրոպայում կրթություն ստացած մանկավարժներ։ Եկեղեցուն կից կար մի այլ դպրոց ևս, Լուսոյ էր գյուղի ակումբում։ Պաղինի բնակիչները զբաղվում էին հողագործությամբ, զանազան արհեստներով և առևտրով։ 1915 թվականի մայիսի սկզբներին դադարեց գյուղի գոյությունը։ Ականատեսը պատմում է. «Մայիսի 5-ի առավոտյան կը հավաքեն բոլոր տղամարդերը, մինչև անգամ 10—12 տարեկան տղաքը և 80—90 տարեկան ծերունիները։ Ամենն ալ իրարու կը կապեն պարաններով. ապա օր մը վերջ, այն է՝ մայիսի 6-ին, խումբ առ խումբ կը հանեն գյուղեն դուրս ձոր մը, զոր տեղացիները կը կոչեին Պողոյի ձոր։ Եվ հոն կը կատարուի ամենեն զարհուրելին։ Բոլորն ալ կը կոտորուին կացիններով, սուիններով ու սուրերով։

[1] Հայերին թալանող թուրքերը ծաղրելով և խնդալով նրանց ասում էին. «Հայրենակից, ներողամիտ եղիր, երբ վերադառնաս, ունեցվածքդ անպատճառ էտ կտանաս» (տե՛ս Կարապետ Գալֆասան (Հովիվ Եղեմի), Գիրք Լիցք հայոց, Պեյրութ, 1955, էջ 312)։

Ջարդարարները խոշոր-խոշոր քարեր իսկ կը գործածեն զոհերուն գլուխները ջախջախելու համար, բայց գնդակ մը անգամ չեն արձակեր իրենց հրազեններէ։ Արյունարբու ոճրագործները անպատկառ հեգնանքով մը կըսեին. «Գնդակնիս մեղք է, որ ձեզի համար գործածենք»[1]։ Այնուհետև «քյուրտ խուժանը, որ կը սպասեր շրջակա լեռները, իսկոյն լեցուելով գյուղ՝ կը սկսի թալան ու բռնաբարում։ Կիները խելագարի պես կը վազեն հոս ու հոն, ազատուելու համար խուժանի ձեռքեն»[2]։ Բայց զուր։

Պատվախնդիր կույս աղջիկները և մանկամարդ կանայք ամենախայտառակ խենեշությամբ պղծվեցին։ «Երիտասարդ աղջիկներն ալ առհանգուեցան. մնացած կիներեն ալ մաս մը տարին ձոր մը և բռնաբարելե ետք, շատերուն որովայնները փողոտեցին սուիններով։ ... Ձոր ու լեռներ բռնուեր էին զոհերուն ճիչ ու հոնդյունով։ Դիակներ կը դիզուեին իրարու վրա...»[3]

Պաղինը պատուհասած ջարդը ողջ արևմտահայության ողբերգության սոսկ մի մանրանկար էր։ Պաղինում կատարվեց այն, ինչ կատարվել էր, կատարվում էր կամ պիտ կատարվեր բոլոր հայաբնակ վայրերում։

«Այդ օրերուն,— պատմում է կոտորածներից հրաշքով փրկված ականատեսներից մեկը,— ճամբաներու երկայնքը, փողոցներուն մեջ լքուած անտեր հայ մանուկներ տեսնելը սովորական բաներ էին։ Եվ որպեսզի այս որբերը ճամբորդներու ուշադրությունը չգրավեն, Խարբերդի դաշտին ամենեն արյունարբու մյուտյուրը, Գեղվանքի կառավարիչ Շիլ Հասանը որբանոց դնելու պատրուակով զանոնք խլել էր իրենց մայրերեն ու լեցուցեր ընդարձակ ցանկապատի մը մեջ։ Բայց քանի մը օրուան ընթացքին, անոթութենեն հալած՝ այս չորս հազար կոկոնները կը դառնան մեյ մեկ ստուերներ։ Հաց ու ջուր կաղաղակեն, կու լան ու «մայրի՜կ» կը կանչեն։ Վերջապես կառավարիչը կընտրե մանուկներու բնաջնջման ամենեն զարհուրելի ձևը։ Ցրուել զանոնք շրջակա գյուղերուն մեջ, յանձնելու համար դահիճներու տապարին։ ... Արյունռուշտ դահիճները այդ գիշեր անոնց աղվորիկ գլուխները քարերուն վրայ ջարդեցին։ Իսկ մնացեալները, որոնց ազեկտուր ձայները սիրտ կը բգկտեին, տեղվոյն հրեշ կառավարիչ (կամակատարը Պեհլէտտին Շաքիրի) զանոնք Քյուրտեմլիկի ձորը ղրկելով՝ իր ներկայությեան, ողջ-ողջ թաղել տուավ»[1]։

Ահա թե ինչ էր կատարվում Բաղեշից Մուշ տանող ճանապարհին։ Պատմում է թուրք ականատեսը.

«2300-ի չափ կիներ ու երեխաներ... կը քշեին մտրակներու տակ։ Անոնք, որ ոտքի վրայ չէին կրնար կենալ, տեղն ու տեղը կը սպաննուեին։ Շատ մը կիներ, չկրնալով հետերնին տանիլ իրենց զավակները, զանոնք լքեցին ճամբուն եղերքը, անանկ որ հազիվ քիչ մը հեռացած, 400—500 փոքր երեխաներ լքուած մնացին ճամբուն վրայ, մեկեն մինչև 4—5 տարեկան։ Կարավանը դեռ Երզշտեր չհասած, Սլեման Օնպաշին, ձերբակալուած 4—5 հայերու կոնակը մեյ մեկ թիթեղ քարյուղ բեռցնելով, զինուորի մը հսկողության տակ, ղրկեց Երզշտեր։ Յետոյ, ժանտարմներեն իմացայ, որ այդ ամբողջ բազմությունը՝ այնտեղի մարագներու մեջ լեցնելով՝ վառած են»։

Իսկ ի՞նչ եղան ճամփի վրա լքած երեխաները։ «Սլեման Օնպաշին հրամայեց 15-ի չափ քոլոսիկցի քյուրտերու և մեկ քանի տղոց, որ ճամբուն վրայ լքուած երեխաներուն համար մեծկակ հոր մը փորեն և այդ փոքրիկները հավաքելով մեջը լեցնեն և հողով ծածկեն։ Ձիս ալ ղրկեց անոնց հետ։ Ամբողջ պզտիկները տեղ մը հավաքեցինք, բավական խորունկ փոս մը փորեցինք։ Քոլոսիկցի Պատոն սկսավ մանկիկները շարել այդ փոսին մեջ և իր իսկ ձեռքով կոշտ-կոշտ հողեր խոթել այդ մանկիկներու բերանին մեջ և ոտքով ալ կոխել անոնց բերաններուն մեջ, որպեսզի շունչ չկրնային առնել ու խեղդամահ ըլլային։ Այդպիսով, այդ անմեղ երեխաները բոլորն ալ խեղդամահ եղան։ Իսկ անոնք, որ հինգ տարեկան էին և դժուարավ կը խեղդուեին, կամ բերաններին չէին բանար, քարով կը կոտրեր անոնց ատամները և հող լեցնելով՝ բռնամահ կ'ըներ։ Վերջեն ալ, հողով ծածկեցինք այդ փոսը...

Երբ գյուղ վերադարձանք, տեսանք որ Երզշտեր գյուղի վրայ (Խասգյուղեն հինգ քիլոմեթր հեռու) թանձր մուխ մը կը բարձրանար։ Մեկ-երկու ժամ յետոյ հայ կիներն ու երեխաները տա-

---

[1] «Պատմություն Պաղնատան», Պոսթըն, 1966, էջ 140։

[2] Նույն տեղը, էջ 143—144։

[3] Նույն տեղը, էջ 150։

[1] Սարգիս Կ. Խաչիկեան, Ազգային ապրումներ, տպ. Տոնիկեան, Պեյրութ, 1967, էջ 162—164։

նող ժանտարմները ետ դարձան»[1]։ Դժբախտ զոհերի դիակները դեռ մխում էին...

Հայության սպանդն իրականացվում էր ամենահրեշավոր մեթոդներով։ Դժբախտ զոհերին վիճակված էր կրելու իրենց ազգային պատվի անարգումը՝ ամենասպանիչ վիրավորանքներով և նողկալի պղծագործություններով։

Ահա դահիճների նախընտրած «զբաղմունքներից» մեկը։ Ջոկում էին հղի հարսներին, շարք կանգնեցնում, ապա գրազ բռնում՝ պարզելու համար, թե դժբախտ հայուհու արգանդում հասունացող զավակը արո՞ւ է, թե էգ։ Այնուհետև հետևում էր չլսված բարբարոսական արարքը. արյունարբուները դաշույնով պատռում էին զոհերի որովայնը և պտուղը դուրս թափում։ Փույթ չէր, եթե այս անգամ գրազը տանուլ էր տրվում։ Չէ որ հերթի էին տասնյակ ուրիշ հղի կանայք։ Արյունոտ դաշույնը խոստանում էր անպայման հաջողություն բերել։

Ծովամերձ վայրերում հայերին տասնյակ հազարներով ոչնչացնելու տարածված ու «հարմար» ձևերից մեկը նրանց ծովամոյն անելն էր՝ պարանոցներին ծանր քարեր կապելով։ Տրապիզոնի կուսակալ Ջեմալ Ազմին հետևյալն է պատմել մի առիթով. «Տրապիզոնի հայերուն երկսեռ առողջ ու սիրուն մանուկները զատեցի, մեկ քանին, 10—13 տարեկան, նուեր տուի տղուս, իսկ մյուսներն ալ կողովներու և սնտուկներու մեջ տեղավորել տալով ծովը թափել տուի։

«Պու սենէ խամսի չողալսըն» (Այս տարի խամսի ձուկը թող շատանա),— ավելացրել էր ճիվաղը ծիծաղելով...[2]։

Հ. Մորգենթաուն, որ այդ օրերին Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանն էր, հետագայում վերապատմել է Պոլսի ոստիկանապետ Պետրի բեյի հետ ունեցած իր մի զրույցը։ Ոստիկանապետը դեսպանին մեծ կրքով նկարագրել է, թե թուրքերը շարշարանքի ինչպիսի մեթոդներ են գործադրում հայերի նկատմամբ, որ ինքը խանդավառված է ատելի հայ ցեղը բնաջնջելու հաջող ընթացքով։ Նա դեսպանին ասել է, որ հայերին շարշարելու և սպանելու նոր մեթոդներ կիրառելու հարցերը պարբերաբար քննարկվել են «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի գիշերային նիստերում և հատուկ խորհրդակցություններում։ Քանի որ շարշարանքի յուրաքանչյուր նոր մեթոդ ողջունվում էր իբրև մի գյուտ, ապա այդ նիստերի և խորհրդակցությունների մասնակիցներն իրենց միտքը մշտապես մարզում էին մարդկանց խեղդելու և սպանելու նոր միջոցներ ու մեթոդներ հնարելու ճիգ ու ջանքով։ Ջարդերի կազմակերպիչներն ամենայն ուշադրությամբ ուսումնասիրել էին միջին դարերի իսպանական ճիզվիտների, ինկվիզիցիայի վարպետների, ինչպես նաև մարդկանց ոչնչացման բոլոր այն մեթոդները, որոնք արձանագրված են պատմական հիշատակարաններում։

Ահասարսուռ դեպքերին ականատես ազնվահոգի դանիացի օրիորդ Մարիա Յակոբսոնը, որն անպարփակ նվիրումով ճիգ էր գործադրում ինչ-որ բանով օգտակար լինել դժբախտ հայերին, իր օրագրում գրել է. «Թուրքերի փափագը հայերի մահը դժվարացնելն է։ Եվ այդ այնքան՝ որքան կարելի է։ Բնաջնջել հայ ազգը շատ ծանր շարշարանքներով։ Տարաբախտ մարդիկ. ի՞նչ տառապանքների միջով են անցնում, մինչև որ մահ են գտնում։ Նրանք մեռնում են ամեն օր, ամեն ժամ, մինչև որ կնքում են իրենց մահկանացուն»։

Երիտթուրքական մարդասպանները միմյանց հետ մրցում էին հայերի ոչնչացման նողկալի մրցանակ շահելու համար։ Շահողները շատ-շատ էին։ Բայց, ինչպես վկայում են ականատեսները, բովանդակ Հայաստանում վատահամբավության հռչակ էր վաստակել Վանի կուսակալ Ջևդեթ բեյը։ Մարդկային սպանդի և դժոխքի այս քրմապետը հնարել էր այն, ինչ որ թերևս բոլոր շարշարանքների գլուխգործոցն էր. իր հայ զոհերի ոտքերին նա պայտեր էր գամում...[1]

Կրոնական պետերը թուրք, քուրդ և չերքեզ հավատացյալներին հորդորում էին, որ ամեն մեկը գոնե մեկ գյավուր պետք է սպանի զազի դառնալու համար։ Սրանք, կրոնական նախանձախնդրությունից քաջալերված, կույր մոլեռանդությամբ իրենց զավակներին պատվիրում էին կատարել այդ «սուրբ» պատվիրանը։

Կրոնական մոլեռանդությունը, խառնված զինվորական անգթության հետ, անցնում էր բարբարոսության ամեն չափ ու

---

[1] Սարգիս և Միսակ Բդէեաններ. *Հարազատ պատմություն Տարոնոյ*, էջ 569։

[2] «Թէհլիրեան արդարադատությունը», Պեյրութ, 1981, էջ 52։

[1] Տե՛ս «Յուշամատեան Մեծ եղեռնի. 1915—1965», Պեյրութ, 1965, էջ 1057։

սահման։ Հրդեհներում հրկիզվող, ջրերում խեղդամահ արվող հազարավոր երեխաների սարսափահար ճիչերը, ծնկաչոք մամիկների լալահառաչ աղոթքները, կանանց աղերսանք-պաղատանքները և սրտակոտոր կանչերը, ծերունիների հորդորները և խրնդրանքները մաղաչափ անգամ չէին շարժում մարդակերպ բորենիների գութն ու խղճմտանքը։ Իսկ օսլայած օձիքով գերմանացի սպաները անտարբեր դիտում էին, թե մարդկության ընտանիքի մի անդամն ինչպես է ոչնչացնում նույն ընտանիքի մյուս անդամին։ Տեղի էր ունենում մարդկային պատմության ամենաահռելի ու ամենաքստմնելի ոճրագործություններից մեկը, արհավիրքներից ամենադարհուրելին[1]։ Բանն այնտեղ հասավ, որ Թուրքիայի այն օրերի հայ պատրիարքը սարսափահար գրեց. «Պատմությունը երբեք չի տեսած, չի պատմած այնպիսի նախճիր մը, որուն համար հիմա սկսած ենք սուլթան Համիդի ժամանակները մեր երջանիկ ժամանակները համարել»[2]։ Հրդեհվել էր հայոց ճակատագիրը։

Իսկ ի՞նչ էր անում դաշնակցությունը, որն իրեն վերագրել էր ժողովրդի բախտի տնօրենի դերը։ Կուսակցությունը շանթահար վիճակում էր, իսկ նրա ապիկար պարագլուխները, որոնք տարիներ շարունակ «եղբայր» երիտթուրքերի գովքն էին հյուսում, այժմ միանգամայն անզոր էին որևէ ձևով հակազդելու նրանց գործողություններին։ Ավելին, այդ պարագլուխներից շատերը կարծանարար մտայնության զոհ լինելով, չէին սթափվում, չէին հասկանում, թե ինչ է կատարվում իրենց շուրջը։ Այսպես, օրինակ, Ակնունին (Խաչատուր Մալումյան), գտնվելով Զանգրրը բանտում, սպանվելուց առաջ միամտաբար ասել է. «Ո՞նց կը լինի, որ ընկեր Թալեաթը մեզ այստեղ է ուղարկել։ Գուցե [ուղարկել է] մեր կյանքի ապահովության համա՞ր...»[3]

[1] Հայոց Մեծ եղեռնի մասին հսկայածավալ գրականություն է ստեղծվել։ Արժեքավոր են հատկապես փաստաթղթերի, վավերագրերի այն ժողովածուները, որոնք լույս են տեսել ինչպես արտասահմանում (օրինակ՝ գերմանական արխիվներից Հ. Տաշյանի քաղած և հրատարակած վավերագրերը), այնպես էլ մեզնում (տե՛ս «Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под ред. проф. М. Г. Персисяна, изд-во АН Арм. ССР, Ереван, 1965)։

[2] Զավեն արք. Տեր-Եղիշեան, Պատրիարքական հուշերս, Գահիրե, 1947, էջ 140։

[3] Գերսամ Անառոնեան, Խոհեր հիսնամեակի ավարտին, 1915—1965, Պեյրութ, 1966 էջ 133։

Աշխարհացրիվ տարագիր հազարավոր հայ ընտանիքներում կոտորածներից վերապրածները տասնյակ տարիներ պատմել և այժմ էլ ահավոր սարսափի սարսուռներով պատմում են վայրագ ու ոճրապարտ թշնամու՝ թուրք ցեղասպան կառավարության կողմից գործադրված սոսկալի չարչարանքների, խժդժությունների և զանգվածային սպանության բազմատեսակ ձևերի մասին դրվագներ ու դեպքեր, որոնք մարդկային մտքին խորթ ու անհավատալի են։ Ո՛չ ստեղծված մեծաթիվ պատմագիտական երկերը, ո՛չ էլ ականատեսների հուշերը չեն կարող տալ ողբերգության ու մաքառումների, մղձավանջի ու սոսկալի ոճրի իրական, ամբողջական պատկերը[1]։

Այդ արյունալի օրերին իրենց կյանքը վտանգելու գնով հայերին ձեռք էին մեկնում արաբ, հույն, քուրդ, թուրք աշխատավոր մարդիկ։

Աքսորված հայերին օգնություն էին ցույց տալիս արաբները։ Հայ ժողովրդի գիտակցության մեջ, նրա հոգու խորքում ընդ-

[1] Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայության սպանդի և բռնադատի, Արևմտահայաստանի ամայացման ու բռնագրավման պատմությանը նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունների և հուշերի գրքերից են Ս. Զարևանդի «Անցորդի տպավորություններ» (Նյու Յորք, 1924), Կ. Գարիկյանի «Եղեռնապատում» (Սոֆիա, 1936), Թեոդիկի «Հուշարձան 1915 ապրիլի 24-ի» (Ալեքսանդրիա, 1939), Հ. Թուրաբյանի «Դրուագներ հայկական եղեռնեն» (Վենետիկ, 1949), Լ. Մեսրոպի «1915 աղետ և վերածնունդ» (Փարիզ, 1952), Ս. Թաշչյանի «Սև հուշեր մղձավանջային յոթ տարիներում 1915—1922» (Բեյրութ, 1952), Մ. Էմերյանի «Աքսորի և պատերազմի կրակներուն մեջեն» (Բոստոն, 1952), Ե. Պերպերյանի «Խաչին ճամփան» (Փարիզ, 1953), Լ. Մեսրոպի «Տեր Զոր» (Փարիզ, 1955), Ե. Սիմոնյանի «Իմ Գողգոթան» (Անթիլիաս, 1960), Ա. Միրաքյանի «Վերքեր և ցավեր» (Անթիլիաս, 1960), Ա. Տեր-Գուրգենյանի «Կեանքիս սև էջը (Անթիլիաս, 1960), Օ. Հեքիմյանի «Սասունի հայութենան տխուր բաժինը» (Փարիզ, 1961), Գ. Թագվորյանի «Հույսերի և տառապանքների տարիներ 1908—1915» (Կահիրե, 1961), Մ. Սեակի «Հայկական Մեծ եղեռնը և մենք» (Նյու Յորք, 1964), Մ. Տեոդմաճյանի «Արեան հետքերով» (Նյու Յորք, 1964), Մ. Շատտանչյանի «Հայ մտքին հարկը եղեռնին» (Անթիլիաս, 1965), Հ. Արծրունու «Մահուան ձորին մեջ» (Բեյրութ, 1965), Ս. Մեսրոբյանի «Ես Տեր Զորի դժոխքեն փախած եմ» (Փարիզ, 1966) և այլն։ Հոգու տառապանքով գրված այդ ողբերգության մատյաններից ամեն մեկը կսկիծներից հյուսված և սև ժապավեններով երիզված լուսաշող պսակ է անմեղ ու անթաղ զոհերի հիշատակին։ Բայց դրանք իրենց նկարագրություններով տառապանքի անեզր ծովի չնչին վկայություններ են միայն։ Իսկ եթե միլիոնավոր զոհերից յուրաքանչյուրը մի հրաչքով ինքը պատմեր իր ողբերգության և կործանման մասի՞ն...

միշտ դրոշմվել է արաբ ազնվահոգի ժողովրդի կերպարը։ Դարեր են անցնելու, բայց մեր ժողովուրդը չի մոռանալու, որ իր պատմության ամենաճակատագրական, ամենադժնդակ, ամենասև օրերին արաբ ժողովուրդը օգտակար եղավ իրեն։ Անապատի բեդվինները, արաբ ուղտապանները, աղքատ գյուղացիները հավաքում, ի մի էին բերում իրենց բնօրրանից պոկված, հյուծված, հիվանդ ու հալածված, անապատի ավազուտներում դեգերող դժբախտ կանանց ու որբուկներին, նրանց օթևան տալիս, խնամում, կիսում հացի պատառը։ Սովետական Հայաստանի թանգարաններում և արխիվներում պահպանվում են փաստաթղթեր ու վավերագրեր, որոնք պատմում են արաբ ժողովրդի այս սրտառուչ վերաբերմունքի բազում դրսևորումների մասին։

Հայերին օգնում էին կայսրության քաղաքաբնակ հույները։ Իրենց հայ բարեկամներին մարդասպաններից թաքցնելու համար շատ հույներ իշխանությունների կողմից ենթարկվեցին ամենախիստ պատիժների։

Քուրդ աշխատավորներից շատերը նույնպես ապաստան էին տալիս իրենց բարեկամ հայերին, նրանց փրկում ստույգ մահից։ Այսպես, Տարոնի Խերզանի Շեկոյի տան քրդերն իրենց մոտ թաքցրին Մշո դաշտի մի քանի հարյուր հայերի[1]։ Հաղարածվոր հայերի փրկեցին Դերսիմի քրդերը[2]։ Հայության ջարդերին մասնակից քրդերից շատերը հետագայում խորապես զղջում էին իրենց արարքների համար և մեռնելիս մեղքերի թողություն էին խնդրում։

Կիսաթուրքացած քուրդ մտավորական, օսմանյան ազդեցիկ պետական գործիչներից Շերիֆ փաշան դատապարտում էր թուրքերին, որ օգտվելով իր ցեղակիցների քաղաքական տգիտությունից, նրանց մղել են մասնակից դառնալու հայ ժողովրդի կործանմանը։ Եղեռնի օրերին նույն Շերիֆ փաշան «Ժուռնալ դը Ժնեի» 1915 թվականի սեպտեմբերի 18-ի համարում բողոքի մի գրություն հրատարակեց, ուր գրում էր. «Ամենաանզգա մարդու սիրտն իսկ այժմ արյունոտվում է, երբ մտածում է, որ ամենաբարձր ձիրքերով օժտված այս ժողովուրդը... գտնվում է պատ-

[1] Տե՛ս Անդրանիկ Զելեպեան, Զորավար Անդրանիկ և հայ յեղափոխական շարժումը, Լոս Անճելըս, 1984, էջ 147։

[2] Տե՛ս С. М. Акопян, Западная Армения в планах империалистических держав, изд-во АН Арм. ССР, Ереван, 1967, էջ 23։

մությունից անհետանալու վերջին կետի վրա։ ...Ես իմ ցասումն եմ հայտնում զոհված և մեռնող այս ազգի դահիճներին»։ Այնուհետև նա ափսոսանքով ու ցավով շեշտում էր, որ հակառակ «հաճախակի իր զգուշացումներին, ... դաշնակցություն կուսակցությունը սահմանադրության շրջանում խաբվեց, գործակցեց և պաշտպանեց երիտասարդ թուրքերին»։

Ողջ մնացած հայերի մի մասը, որ ապաստանել էր Սիրիայի հյուսիսային անապատային շրջանում՝ Տեր Զորից մինչև Ղամբշլի (Տեր-էլ-Զոր, Տարաս, Հասիչե, Ռաս-էլ-Այն, Տերպեսիե, Ամուդա, Թել-Քոչակ, Ղամբշլի և այլն), լավ վերաբերմունք գտավ տեղի քրդերի կողմից և այնուհետև տասնյակ տարիներ նրանք միասին ապրեցին բարեկամական սերտ փոխհարաբերությունների մեջ։

Դեռ հայերի հետ հաշիվները լիովին չմաքրած, իթթիհադական կառավարությունը հալածանքներ սկսեց քրդական մի շարք անհնազանդ ցեղերի դեմ, որոնք, ինչպես նշում է Ա. Ալպոյաճյանը, «դեմ էին թուրքերուն և հայկական տարագրություններուն ատեն օգնեցին հայերուն որքան որ կրնային, պատսպարան ընծայելով անոնց և պահելով»[1]։ Օրինակ, այդպես վարվեց Մալաթիայի շրջանի ղզլբաշ քրդերի մի մասը, որը պալյանցի Պոզոյի գլխավորությամբ ապստամբեց կառավարության դեմ։ Այդ խիզախ քուրդը «օր ցերեկով մտավ Մալաթիոյ Ջըրմխտի արուարձանը, սպանեց տեղվոյն ոստիկանապետը և ահագին վնասներ պատճառելեն ետք հեռացավ, իր խումբը հետզհետե ստուարացավ և կանոնավոր կռիվներ մղեց կառավարական ոյժերու դեմ և անոնց պատճառեց ավելի քան 2000 կորուստ։ Բայց ի վերջոյ ընկճուեցավ»[2]։

Երիտթուրքական դահիճների դեմ հանդես եկան նաև առանձին թուրք մարդիկ, որոնց դժգոհությունը հիմնականում արտահայտվում էր նրանում, որ հրաժարվում էին մասնակցել անզեն ու անպաշտպան մարդկանց կոտորածներին։ Եղել են դեպքեր, երբ ոստիկանական ուժեղացված որոնումների պայմաններում նրանք թաքցրել են իրենց հայ հարևաններին։ Մի տեղեկագրում կարդում ենք, որ շատ տեղերում «թուրք ժողովուրդը, որ խաղաղ կապրեր հայոց հետ, յաճախ չհավանելով իր քաղաքակիցներուն

[1] Արշակ Ալպոյաճեան, Պատմություն Մալաթիոյ հայոց, էջ 955։

[2] Նույն տեղը, էջ 956։

տարագուելուն, իշխանութեանց մոտ բողոքի ձայն բարձրացուց՝ անոնց բնաջնջման դեմ։ Կարինի թուրք ժողովուրդը աղերսագիր մ՚ուղղեց կենդրոնական կառավարութեան։ Ալաշկերտի թուրքերը հեռագրեցին Կ. Պոլիս, բողոքելու համար հայերու սահմանուած յոտի վարմունքին դեմ։ Վանի թուրքերը իմացուցին իրենց հայ քաղաքակիցներուն, թե բոնութեան տակ է, որ կը կռուին իրենց դեմ. կուսակալին կողմե հրահրուած այս քաղաքային պատերազմին դեմ բազմաթիվ երևելի թուրքեր բողոք բարձրացուցին, որ մնաց ապարդյուն։ Նիկոմիդիոյ շրջանակին շատ մը տեղերուն մեջ ժողովուրդը փորձեց արգելել հայերու մեկնումը։ Ատաբազարի մեջ քաղաքին իսլամները կայանը հավաքուեցան, արգելք ըլլալու համար տարագրութեան։ Նոյն բանը տեղի ունեցավ Մուտանիոյ մեջ, այնպես որ հրամանը նախ ետ առնուեցավ։ Կեսարիոյ մոտ գյուղի մը մեջ թուրքերը, որ իրենց քրիստոնեայ դրացիներուն հետ լավագույն յարաբերութեան մեջ կապրեին, չթողուցին, որ հայերը մեկնեին և յայտարարեցին քաղաքապետին, թե եթե տարագրութեան հրամանը գործադրութեան դներ, իրենք ալ պիտի մեկնին»[1]։

Հայերի նկատմամբ երիտթուրքական իշխանությունների գործողություններն այնքան գաղանային էին, որ դրանց դեմ հանդես էին գալիս նույնիսկ թուրքական բանակի, հոգևորականության առանձին ներկայացուցիչներ և կառավարական պաշտոնյաներ, ինչպես օրինակ՝ Հալեպի կուսակալ Ջելալ բեյը, նույն վիլայեթի տարագրական վարչության գլխավոր քարտուղար Նայիմ բեյը, Մալաթիայի կառավարիչներ Նաբի բեյն ու Ռեշիդ փաշան և ուրիշներ[2]։

Պետք է նշել, սակայն, որ հայ ժողովրդի ոչնչացման դեմ այդ բողոքները, տարաբախտաբար, մնացին որպես առանձին դրվագներ։ Թուրքիայում չստեղծվեց ընդհանուր հասարակական կարծիք, առավել ևս չստեղծվեց հասարակական շարժում, որը հակադրվեր իթթիհադի ոճրագործ քաղաքականությանը։ Եվ թողտվության այդ պայմաններում թուրքական պետությունը գեհենային վայրագությամբ ամբողջովին բնաջնջեց իրեն հպատակ

[1] Տե՛ս «Տրապիզոնի թեմին վիճակավոր Յոհաննես արք. Նալչեանի յուշերը», Ա. հատոր, էջ 658, Յոհաննես Լեփսիուս. Հայաստանի ջարդերը, էջ 166—167։

[2] Տե՛ս Սողոմոն Թեհլիրեան. Վերյիշումներ, էջ 370։

մի ժողովրդի, նրան զոհեց համաթուրանականության քաղաքական ցնորքին, մորթեց նրան իր սեփական հայրենիքում՝ օրորոցի մանուկից մինչև զառամյալ ծերունին։

Արևմտահայ ժողովրդի ընդհանուր կոտորածի և տեղահանության ամիսներին մի քանի քաղաքներում և վայրերում թուրքերը հերոսական դիմադրության հանդիպեցին, չնայած թուրքական բանակ կանչված հարյուր հազարավոր հայ երիտասարդ մարդկանց կոտորածից հետո գյուղերում և քաղաքներում մնացել էին միայն կանայք, երեխաներ, ծերունիներ։ Արտաքին աշխարհից բոլորովին կտրված, փրկության որևէ հույս ու ապավեն չունենալով, իմանալով, որ թուրքերին հանձնվելով ստույգ մահվան են

[1] Երիտթուրքական ոճրագործները համարյա նույնպիսի դաժանությամբ կոտորում էին քրիստոնյա ասորիներին (տե՛ս «Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и Временного правительства 1878—1917 гг., Серия III, 1914—1917 гг.», т. VIII, ч. I, 1935, Соцэкгиз, М.—Л., էջ 428—430)։ Ասորական զրուժինաներն ակտիվորեն մասնակցել էին ռուսական բանակի՝ Քյոփրիքեյի (1914 թ. դեկտեմբերի 3) և Սարիղամիշի (1914 թ. դեկտեմբերի 4— 1915 թ. հունվարի 18) ռազմական գործողություններին, կատարել միլիցիայի ծառայություն, մասնակցել թշնամու թիկունքում կազմակերպված մարտարշավներին, հետախուզական գործողություններին, պարենի և ֆուրաժի մատակարարման աշխատանքներին։ 1915 թվականի գարնանը Հաքյարիի օկրուգի ասորիները ապստամբություն բարձրացրին, որոնց միացան այլ վայրերի իրենց ազգակիցները։ Նրանք կատաղի դիմադրություն ցույց տվեցին թուրքական զորքերին։ Բայց ուժերն անհավասար էին։ Օսմանյան կայսրության և Իրանի 940 հազար ասորիներից մարտերում և ջարդերից զոհվեց 500 հազար մարդ (տե՛ս Ж. «Народы Азии и Африки», 1972, № 6, էջ 145)։ Վերջնական բնաջնջումից փրկվելու համար ասորիների մի մասը 1914—1915 թթ. ձմռանը փախավ Ռուսաստան (տե՛ս Ж. «Просвещение национальностей», 1931, № 1, էջ 66)։ Ձմեռը շատ դաժան էր, և վատ հագնված փախստականները (հիմնականում ծերունիներ, կանայք և երեխաներ) սոսկալի զրկանքներ ու չարչարանքներ կրեցին։ Տասնյակ հազարավոր ասորիներ ցրտից ու սովից մահացան ճանապարհին։ Հետագայում փախստականների մի մասը հետ վերադարձավ Իրան, իսկ շուրջ 25 հազարն անցավ ռուսական սահմանը և տեղավորվեց Անդրկովկասի, Ուկրաինայի, Ռուսաստանի տարբեր բնակավայրերում։ Թիֆլիսում, Երևանում, Բաքվում և այլ քաղաքներում կազմակերպվեցին ասորի փախստականներին օգնող հանձնաժողովներ (տե՛ս գազ. «Тифлисский листок», 25 января 1915)։ Շատ ասորիներ բնակություն հաստատեցին Հայաստանում, հիմնականում Արարատյան դաշտի գյուղերում։ Հայ բնակչությունը բատ ամենայնի նյութական օգնություն էր ցույց տալիս գաղթականներին, նրանց հետ եղբայրաբար կիսում հացի վերջին պատառը։

ենթարկվելու չարչարանքներով, թուրք ջարդարար զինվորներից ու թալանող խուժանից իրենք իրենց պաշտպանելու համար նրանք կռվեցին մինչև վերջին փամփուշտն ու շունչը։ Հուսահատ, բայց դյուցազնական կռիվներ եղան Սասունում, Ուրֆայում, Շատախում, Շապին-Գարահիսարում, Եդեսիայում, Ամանոսում, Ֆընտըճագում, Ֆոնուզում և այլ վայրերում։ Բայց անհավասար այդ կռիվները չէին կարող երկար տևել։ Սակավաթիվ էին հրազեն գործածել իմացող տղամարդիկ, մանավանդ շատ սահմանափակ էին զենքի ու փամփուշտի պաշարները, սննդեղեն։ Դիմադրության օջախները սեղմվելով աստիճանաբար մարեցին[1]։ «Հաղթական» թուրք ոճրագործներին մնում էր միայն մորթել վիրավոր մահապարտներին...

Երկու բացառություններ եղան՝ Վանը և Մուսա լեռը։ Այստեղ հայերը հերոսամարտերով կարողացան կասեցնել թուրքական յաթաղանը, մինչև որ հասավ արտաքին փրկարար օգնությունը։ Վանի բնակչությունը փրկվեց ռուսական բանակի զորամասերի օգնությամբ։ Մուսալեռցիներին փրկեցին ֆրանսիական ռազմանավերից մեկի նավաստիները[2]։ Վանի և Մուսա լեռան հերոսամարտերը նորից ապացույց եղան այն բանի, թե ինչպես բոլոր կողմերից շրջապատված կարելի է անհավասար, բայց հաղթական կռիվներ մղել անարգ թշնամու դեմ։

Հայ ժողովրդի ցեղասպանության հրամանը տարածվեց և ի կատար ածվեց մի վիթխարի տարածքի՝ 800 հազար քառակուսի կիլոմետրի վրա, որն ընդգրկում էր ողջ Արևմտահայաստանը, Քուրդիստանը, Փոքր Ասիան, Սիրիան և Միջագետքի հյուսիսային մասը, այսինքն՝ մի տարածք, որ միասին վերցրած հավասար է Գերմանիայի, Ավստրիայի և Շվեյցարիայի ընդհանուր տարածությանը։ Ոչնչացավ 500 հազար հայ ընտանիք։ Շուրջ երեք միլիոն արևմտահայությունից ջարդվեց ավելի քան

[1] Տե՛ս Արտաշես Անդրեասեան, *Ուրուագիծ հայոց պատմութեան և հայկական մշակոյթին*, «Պայքար» տպարան, 1968, էջ 209։

[2] Մուսա լեռան հայերի արդարացի դյուցազնական հերոսամարտը ոգեշնչման աղբյուր եղավ ավստրիացի տաղանդաշատ հրեա գրող Ֆրանց Վերֆելի համար, որը մեծ ոգեշնչվածությամբ գրեց «Մուսա լեռան 40 օրը» վեպը։ Այդ նշանավոր երկասիրությունը մինչև օրս չգերազանցված է մնացել եղեռնին նվիրված գեղարվեստական ստեղծագործությունների թվում։

1.5 միլիոնը[1], առևանգվեց և թուրքացվեց 200 հազար հայ պատանի ու աղջիկ։

Բայց ոչ միայն այդքանը։ Ջարդարարները ավերակների վերածեցին անհամար շեն բնակավայրեր, ամայացրին հայ բարեշեն ոստանները, հրդեհեցին ու հիմնահատակ քանդեցին հազարավոր ճարտարապետական կոթողներ, յուրացրին հայերի թողած անհաշիվ նյութական հարստությունները[2]։ Արևմտյան Հա-

[1] Պրոֆ. Ա. Համբարյանը, հիմք ընդունելով 1845 թվականի տվյալները, հաշվել է, որ 1914 թվականին արևմտահայերի թիվը պետք է կազմեր մոտ 3 միլիոն 883,7 հազար մարդ։ Սակայն 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո մինչև առաջին համաշխարհային պատերազմը կայսրության մեջ կոտորվել, արտաքսվել և ձուլվել է մոտ մեկ միլիոն հայ։ Իսկ եթե հաշվենք նաև սպասվելիք բնական անը, ապա այդ թիվը բարձրանում է 1 300 000-ի։ Այս երկու հիմնական տվյալներից ելնելով, հեղինակը գտնում է, որ Թուրքիայում 1914 թվականին հայերի թիվը եղել է 2,583,007 մարդ (տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 2, էջ 110—111)։ Առանձին հետազոտողներ գտնում են, որ 1,5 միլիոնը նվազեցված թիվ է։ Միայն 1915 թվականի գարնան և ամռան ամիսներին սպանվեց 1,6 միլիոն հայ։ Համաշխարհային պատերազմի մնացած տարիներին՝ 1916—1918 թվականներին զոհ է գնացել ևս 300 հազար հայ, իսկ 200 հազարը թուրքացվել են։ Այլ խոսքով, 1915—1918 թվականներին հայ ժողովրդի զոհերի թիվը կազմել է շուրջ 1,9 միլիոն մարդ (տե՛ս Ե. Խաչանասեան, Հայոց թիվը, էջ 21)։ 1984 թվականին Մոսկվայում լույս տեսած մի հրատարակության մեջ այդ նույն ժամանակ հայերի կորուստները հաշվված է 1 850 հազար սպանված (տե՛ս Критика фальсификации национальных отношений в СССР, изд-во Политической литературы, 1984, էջ 282)։

Հարկ է նշել, որ հայերի կորուստները հաշվելիս հետազոտողները գերազանցապես նկատի են ունենում հայ լուսավորչականներին, աչքաթող անելով, որ Մեծ եղեռնի նախօրյակին Օսմանյան կայսրության մեջ ապրում էին նաև կես միլիոնի չափ հայ կաթոլիկներ և հայ բողոքականներ, որոնց նույնպես թուրքերը բնաջնջեցին։

[2] Հ. Ադամը իր «Հայաստանը համաշխարհային պատերազմում» գրքում գրում է, որ այդ տարիներին հայերի նյութական կորուստը կազմել է հայ ազգի մոտավոր հարստության երեք քառորդ մասը (տե՛ս «Ալիք», 22 մայիսի 1985 թ.։ Տե՛ս նաև «Հուշամատեան Մեծ եղեռնի», էջ 1028)։ Թուրքական եղեռնագործները դեռ բավարարված չէին արևմտահայության ողջ հարստության կողոպուտով։ Երիտթուրքական կառավարողներին հանգիստ չէր տալիս այն միտքը, թե ինչպես անեն, որ ձեռք գցեն նաև հայերի կողմից արտասահմանյան տարբեր երկրներում ժամանակին պահ տված դրամագլուխները։ Ամերիկյան դեսպան Մորգենթաուի հետ ունեցած զրույցի ընթացքում Թալեաթը ցինիկաբար նրանից պահանջել է, որ սա ազգի ամերիկյան ապահովագրական ընկերությունների վրա, որտեղ շատ հայեր ապահովագրել էին իրենց կյանքը։ «Քանի որ այժմ համարյա բոլոր հայերը մահացել են, չթողնելով ժառանգներ,—

յաստանում ոսոխը ոչնչացրեց կամ բռնագրավեց 66 քաղաք, 2500-ից ավելի գյուղ, 83 առաջնորդարան, մոտ 2050 հնավանդ եկեղեցի, շուրջ 300 վանք[1]։

Թուրք բարբարոսները հրո ճարակի տվեցին, մոխրացրին արևմտահայության անզուգական դարավոր մշակույթը, համակ խավար դարձրին հայոց աշխարհը։ Քանդվեցին հայ մտքի կանթեղ հազարավոր դպրոցներ, մարեց թատերական կյանքը, իսպառ անհետացան գեղարվեստի անկրկնելի բյուրավոր արժեքներ, հրդեհվեցին վանքերի հարուստ մատենադարանները, որոնցում խնամքով պահպանվում էին դարեր շարունակ փայփայած ու պաշտած հնագույն ձեռագրերը։ Հայ մշակույթի համար անչափելի կորուստ էր արհեստավոր վարպետների ստեղծած անհաշվելի գանձն ու վաստակը։ Ափսոսանք և սրտի ցավ է առաջ բերում այն, որ բազմազան սպասքներն ու զարդերը, հնագույն գրքերի զմայլելի կազմերն ու կողերը, անհամար ոսկյա և արծաթե անոթները, եկեղեցական իրերը՝ կանթեղներն ու աշտանակները, սկիհներն ու ճաճանչները, իրենց վրա կրում էին թանկագին հիշատակություններ ու վկայություններ, ուստի անփոխարինելի ատաղձներ էին հայ պատմագրության և արվեստաբանության համար, ինչպես ասենք, հրդեհներից փրկված ձեռագրերը կամ տապանաքարերի արձանագրությունները։ Ջարդուփշուր եղան նրբագեղ քարեղեն ժանյակներից հյուսված զարմանակերտ ու զմայլելի անթիվ-անհամար խաչքարերը, որոնք շքահանդեսի կանգնած ներբող էին արարիչ ժողովրդի հանճարին։

Այսպիսով, թուրք զավթիչները հայ ժողովրդից խլեցին ու յուրացրին տներն ու այգիները, լեռները և դաշտերը, դպրոցներն ու վանքերը, գյուղերն ու քաղաքները, հափշտակեցին նրա հայրենի երկիրը՝ հազարամյակների մայր հայրենիք Հայաստանը։

ասել է նա,— ուստի, հետևաբար, նրանց փողերը պետք է ստանա թուրքական կառավարությունը և օգտագործի։ Դուք կարո՞ղ եք այդ ծառայությունը մատուցել ինձ» («Me'moires de L'ambassadeur Morgentau», Paris, 1919, էջ 292)։

[1] Տե՛ս Արիս Գալֆայեան, Ջոմախլու, Նյու Յորք, 1930, էջ 5, Հ. Գ. Ղազարեան, Ցեղասպան թուրքը, էջ 420, «Հուշամատեան Մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 1025, «Ալիք», 17 հունվարի 1966։

Նորագույն ժամանակների առաջին զարհուրելի եղեռնագործության՝ հնագույն ժողովուրդներից մեկի ոչնչացման մասին դրսի աշխարհն իմացավ ուշացումով։ Բայց երբ մարդիկ տեղեկացան իրողությանը, զարհուրանքից ցնցվեցին։ Արյունը սառել էր շատերի երակներում։ Ամենուրեք զայրույթ և նախճիրի ցասումնալից դատապարտում։ Իր ձայնը բարձրացրեց ժամանակի առաջավոր հասարակայնությունը։

1915 թվականի սեպտեմբերի 5—8-ը Ցիմմերվալդում (Շվեյցարիա) տեղի ունեցավ իմպերիալիստական պատերազմի դեմ հանդես եկող սոցիալիստների առաջին կոնֆերանսը, որին մասնակցում էր 38 պատգամավոր եվրոպական 11 երկրներից։ Կոնֆերանսն ընդունեց նաև պատերազմի զոհերի և հալածանքի ենթարկվողների նկատմամբ համակրանքի բանաձև, որի նախագիծը առաջարկել էր ֆրանսիական պատվիրակությունը։ Այդ բանաձևով ձախ սոցիալիստները կարեկցանք հայտնեցին նաև պատերազմից տառապող հայերի հանդեպ։ Այնտեղ ասված էր.

«Ցիմմերվալդի միջազգային կոնֆերանսը ամենախորին կարեկցանք է հայտնում պատերազմի բազմաթիվ զոհերին, լեհ և բելգիական ժողովուրդներին, հրեա և հայ ազգերին, այն բոլոր միլիոնավոր մարդկային զոհերին, որոնք տառապում են անհաշիվ աղետների ճնշման տակ և ստիպված են անլուր սարսափներ կրել»[1]։

Այնուհետև ցիմմերվալդյան կոնֆերանսը մանիֆեստ ընդունեց, որտեղ մասնավորապես ազդարարեց. «Ամբողջական ժողովուրդների և երկրների, ինչպիսիք են՝ Բելգիան, Լեհաստանը, Բալկանյան պետությունները, Հայաստանը, սպառնում է կոմպենսացիաների խաղում առուծախի առարկա դառնալու և ամբողջությամբ կամ կտորներով անեքսիայի ենթարկվելու ճակատագիրը»[2]։

Մանիֆեստը ստորագրել էին. գերմանական պատվիրակության կողմից՝ Գ. Լեդեբուրը և Ա. Հոֆմանը, ֆրանսիականի՝ Ա. Բուրդերոնը և Ա. Մերգեյմը, իտալականի՝ Գ. Մոդիլյանին և

---

[1] «Первая Циммервальдская конференция (официальные документы)». Изд-во «Книга», Петроград, библиотека журнала «Интернационал», с. 30.

[2] Նույն տեղը, էջ 30։

Կ. Լացարին, ռուսական պատգամավորության կողմից՝ Ն. Լենինը, Պ. Աքսելրոդը և Մ. Բոբրովը, լեհականի՝ Ս. Լապինսկին, Ա. Վարսկին, Զ. Գանեցկին, ռումինականի՝ Խ. Ռակովսկին, բուլղարականի՝ Վ. Կոլարովը, շվեդական և նորվեգական պատվիրակության կողմից՝ Զ. Հեգլունդը և Տ. Ներմանը, հոլանդականի՝ Գ. Ռոնալդ-Հոլստը, շվեյցարականի կողմից՝ Ռ. Գրիմը և Շ. Նենը[1]։

Ցիմմերվալդյան կոնֆերանսից անմիջապես հետո գերմաներեն լույս ընծայվեց «Internationale Flugblätter» («Ինտերնացիոնալ թռուցիկներ») սերիայի № 1 բրոշյուրը, որը պրոպագանդում էր կոնֆերանսում ձախերի առաջարկած փաստաթղթերը, այդ թվում վերևում հիշատակված երկու փաստաթուղթը, որոնցում խոսք էր գնացել հայության մասին։ Բրոշյուրը թարգմանվեց ուրիշ լեզուներով։ 1916 թվականի հունվարին ցիմմերվալդյան ձախերը սկսեցին հրատարակել իրենց «Vorbote» («Նախագուշակ») տեսական հանդեսը, որի էջերում նույնպես զետեղվեցին այդ փաստաթղթերը՝ մանրամասն մեկնաբանություններով։

Բոլշևիկյան կուսակցության ականավոր շատ գործիչներ հրապարակային ժողովներում և մամուլի էջերում դատապարտելով թուրք բռնադատիչներին, հասարակայնությանը կոչ էին անում օգնության ձեռք մեկնել ջարդերից փրկված և Ռուսաստանում ապաստանած հարյուր հազարավոր հայ գաղթականներին։

Այսպես, Հյուսիսային Կովկասի բոլշևիկների ղեկավար Ս. Մ. Կիրովը, հանդիպելով տեղահանված հայերին, լսելով նրանց պատմությունները և համակվելով նրանց տառապանքներով ու ցավերով, Վլադիկավկազի «Թերեք» թերթի 1916 թվականի փետրվարի 14-ի համարում լույս ընծայեց «Տառապյալ ժողովուրդ» հոդվածը, որտեղ, դիմելով մարդասեր ռուս ժողովրդին, կոչ էր անում օգնել ընչազուրկ փախստականներին, սպեղանի դնել նրանց վերքերին։ «Թուրքերը Թուրքիայի ամբողջ հայ բնակչությունը բնաջնջելու հրեշավոր երազանքն են փայփայում,— գրում էր նա։— Օրեցօր Թուրքահայաստանից ստացվում են նույն մղձավանջային լուրերը։ Թե ինչ էին անում այնտեղ թուրքերը, այդ մասին չեն պատմի հայ կանանց և երեխաների արցունքները, իսկ անասելի սարսափ և տառապանքներ ապրող խաղաղ հայ բնակչության բարբարոսաբար թափված արյունը միայն որոշ, խիստ հեռավոր պատկերացում է տալիս հայ ժողովրդի գողգոթայի մասին։

Թերևս, միայն հետո, երբ կանգ կառնեն մարդկային արյան գետերը, նոր Դանթեն կտա միլիոնավոր մարդկանց սոսկալի տանջանքների պատկերը։

Եվ այդ պատկերը կմտնի մեծ պատերազմի պատմության մեջ, և ամեն ոք չէ, որ իր մեջ ուժ կգտնի ուշադրությունը կենտրոնացնելու այդ պատկերի վրա, քանի որ այն ամբողջությամբ կատարյալ մղձավանջ կլինի։

Եվ այդ մասին մշտապես պետք է հիշենք մենք՝ այստեղ, Թիկունքում նստածներս։

Չէ որ մենք առաջինը պետք է օգնության ձեռք մեկնենք կենդանի մնացած, իրենց հայրենի օջախը լքած հայ փախստականներին։

Նրանք շատ են, և դա ավելի է վատթարացնում նրանց վիճակը։

Անարգված, անպատված, աղքատության դուռը հասցված, նրանք թափառում են մեր երկրամասում՝ ապաստան փնտրելով։ Եվ, իհարկե, միշտ չէ, որ գտնում են այն։ Որովհետև նրանք շատ-շատ են։

Շատ ենք նաև մենք, սակայն փախստականները հաճախ չեն ունենում ամենից անհրաժեշտը՝ հաց և ապաստան։

Այնտեղ՝ հայրենիքում նրանք կորցրեցին ամեն ինչ, կարողացան փրկել միայն իրենց կյանքը, և այստեղ, մեզ մոտ նրանք պետք է գտնեն մնացածը։

Չէ որ նրանք մեզ մոտ են գալիս այն վայրերից, որտեղ նրանց կամենում են բնաջնջել, և մենք պետք է նրանց ընդունենք և ջերմացնենք»[1]։

Թուրք հանցագործներին անարգանքի սյունին էին գամում բազմաթիվ ռուս մտավորականներ ու հասարակական գործիչներ՝ Մաքսիմ Գորկին, Վալերի Բրյուսովը, Յուրի Վեսելովսկին և ուրիշներ։

---

[1] ՏԼՏ «Первая Циммервальдская...», էջ 23։

[1] «Терек», 14 февраля 1916 г.

Ցեղասպաններին դայրույթով դատապարտում և հայ ժողովրդի նկատմամբ իրենց ջերմ համակրանքն էին արտահայտում ժամանակի առաջադեմ շատ գործիչներ աշխարհի տարբեր երկրներում՝ Անատոլ Ֆրանսը և Ռոմեն Ռոլանը՝ Ֆրանսիայում, Ֆրիտյոֆ Նանսենը՝ Նորվեգիայում, Կարլ Լիբկնեխտը, Իոգեֆ Մարկվարտը, Արմին Վեգները՝ Գերմանիայում, Ջեյմս Բրայսը և Առնոլդ Թոյնբին՝ Անգլիայում, Վասիլ Կոլարովը՝ Բուլղարիայում։ «Եվրոպայի մեղքերի ամոթից այլևս հնարավոր չէ նայել ետ՝ նրին»,— ցավով նշում էր Մարկվարտը։ Ամենուրեք տեղի էին ունենում բողոքի հավաքներ, ընդունվում էին մեծ ոճրագործությունը դատապարտող փաստաթղթեր։ Բոլորին պարզ էր, որ եթե չլիներ Եվրոպայի դիրքը, թուրք ոճրագործները չէին հանդգնի գանդերի ոսկրաղեղերով ծածկել մի ամբողջ հայրենիք։

1915 թվականին հայ ժողովրդի նկատմամբ իրականացված հաշվեհարդարը, ազգասպան ահռելի սպանդն իր հրեշային վայրագությամբ, հետևողական սադիզմով ու սառնասրտությամբ, զարհուրելի նախճիրների բովանդակ ահագնությամբ ու դաժանությամբ աննախադեպ երևույթ էր ոչ միայն թուրքական բրոնակալության դարհուրանքներով լի պատմության, այլև ընդհանրապես մարդկության պատմության մեջ։ Ակադեմիկոս Ե. Վ. Տարլեն, անդրադառնալով հայության սպանդին, նշել է. «Այն, ինչ տեղի ունեցավ Թուրքիայում, միանգամայն բացառիկ բան է (իր ծավալներով) համաշխարհային պատմության մեջ, սկսած Չինգիզ խանի ժամանակներից»[1]։ Ինչպես գրում էր անգլիացի առաջադեմ պատմաբան Վ. Վ. Գոտլիբը, արևմտահայության ողբերգությունն առաջին համաշխարհային պատերազմի՝ «խելագարություններով լի պատմության ամենամռայլ գլուխներից մեկն էր»[2]։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին բանակ կանչված ավելի քան 75 միլիոն մարդուց համարյա 10 միլիոնը զոհվել է, իսկ 20 միլիոնը՝ վիրավորվել ու խեղանդամ արվել։ Պատերազմող երկրներից ամենաշատ զոհեր տվեց Ռուսաստանը՝ 2,3 միլիոն մարդ, Գերմանիայի մարդկային կորուստները՝ 2 միլիոն, Ավստրո-Հունգարիայինը՝ 1,4, Ֆրանսիայինը՝ շուրջ 1,5 միլիոն, իսկ Թուրքիայինը՝ ընդամենը 250 հազար մարդ։ Մարտական գործողությունների ընթացքում մարդկանց մասսայական բնաջնջման համար գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումներն այնպիսի լայն ծավալներով էին կիրառվում, որ պատերազմի չորս տարիների ընթացքում ոչնչացվեց մոտավորապես այնքան մարդ, որքան նախորդ 200 տարիներին Եվրոպայում մղված բոլոր պատերազմների ընթացքում։

Համաշխարհային պատերազմը, ֆիզիկապես ոչնչացնելով և խեղանդամ անելով տասնյակ միլիոնավոր առավել աշխատունակ պրոլետարների, գյուղացիների, աշխատավորական այլ շերտերի, դրանով իսկ վիթխարի վնաս հասցրեց հասարակության հիմնական արտադրողական ուժին։ Պատերազմը կլանեց շատ սերունդների համառ աշխատանքով ստեղծված նյութական և կուլտուրական հսկայական արժեքներ, որոնք հաշվվում են 338 միլիարդ դոլար։ Միայն ուղղակի ռազմական ծախսերը պատերազմի տարիներին այն ժամանակվա համեմատական գներով կազմեց 208 միլիարդ դոլար[1]։ Մարտական գործողությունների վայրերում հողի երեսից ջնջվեցին շատ քաղաքներ ու գյուղեր, բարբարոսաբար ոչնչացվեցին հազարավոր բնակելի և արտադրական շենքեր, անապատի վերածվեցին բերքառատ դաշտերի ու անտառների հսկայական տարածություններ։ Պատերազմն անհաշիվ վնասներ պատճառեց բազմաթիվ երկրների տնտեսությանը՝ այն հասցնելով քաոսի ու ավերման, խախտեց աշխատանքի միջազգային բաժանումը, խզեց վաղուց հաստատված արտաքին առևտրական կապերը, քայքայեց տրանսպորտը, անկման հասցրեց տնտեսության բազմաթիվ խաղաղ ճյուղեր։

Առաջին համաշխարհային պատերազմին նվիրված ուսումնասիրությունների հեղինակների մեծ մասը պատերազմում

---

[1] **Е. В. Тарле**, Европа в эпоху империализма 1871—1919 гг. Госиздат, М.—Л., 1928, с. 387.

[2] **В. В. Готлиб**, Тайная дипломатия во время первой мировой войны, с. 154.

[1] Տե՛ս «Мировая война в цифрах», М.—Л., 1934, էջ 52—58, «Современный империализм и революционная борьба», Прага, 1971, էջ 197:

մարդկային կորուստների և նյութական վնասների հաշվարկները կատարելիս սովորաբար շրջանցում է ոչնչացված հայերի թիվը և Թուրքերի կողմից նրանցից խլված նյութական արժեքները։ Մինչդեռ պատերազմում համեմատական կարգով բոլոր ժողովուրդներից ամենից շատ տուժեց պատերազմին պաշտոնապես չմասնակցած և դրանից ամեն կերպ խուսափած սակավաթիվ հայ ժողովուրդը։ Իր կորուստների բացարձակ թվով հայությունը երրորդ տեղն էր զբաղեցնում Ռուսաստանից և Գերմանիայից հետո։ Այնպես որ պատերազմի տարիներին հայերի կրած մարդկային կորուստները բացարձակ թվերով 6—7 անգամ գերազանցում էին Թուրքիայի մարդկային կորուստները։

Ջարդերից հրաշքով փրկված հայերը ցրվեցին Ռուսաստանում, Մերձավոր ու Միջին արևելքի երկրներում, Բալկաններում և այլուր՝ ահավոր վիշտը սրտերում, հուսալքման արցունքը կոկորդում, հոգեկան անհուն խոովքների ու մղձավանջային երազների մեջ։ Օտար ափեր, դատարկ աղբարկղներ՝ շուրջբոլորը վիտացող սովալլուկ որբերով։ Դրախտավայր հայրենիքը մնացել էր հեռվում, իբրև մի պատրանք։

Այսպիսով, Թուրք զավթիչների և օկուպանտների դեմ հայ ժողովրդի երկարատև ազգային-ազատագրական պայքարը վերջացավ սոսկալի աղետով։ Պետություն չունեցող անզեն ժողովուրդը «պատժվել» էր իր բնօրրանում։ Ազատագրության համար օսմանյան բռնակալության դեմ պայքարի ելած բազմաթիվ ազգերի մեջ թերևս հայ ժողովրդից ավելի շատ կորով ու ճիգ թափող չեղավ։ Իր ազատության համար նա մղեց երկարաշունչ կռիվներ, տվեց անգին զոհեր, կրեց անլուր տառապանքներ, ջարդվեցին տարաբախտ հազարները։ Իսկ արդյունքը ազգովին ողջակիզումն էր։ Այդպես եղավ...

«Մի կորցրած պայքար»— այսպես է բնութագրել հայկական շարժումը նրա մասնակիցներից մեկը։

Մեծ եղեռնը մարեց հարյուր հազարավոր հայ օջախներ, բայց չկարողացավ սպանել հայության կորովը, նրանից խլել իբրև ազգ ու ժողովուրդ ապրելու կամքն ու հավատը։ «Հայաստանը ավանդում է հոգին,— ասում էր Անատոլ Ֆրանսը,— բայց նա կվերածնվի։ Արյան այն փոքր մասը, որ նա դեռևս պահպանել է, թանկագին արյուն է, որից հերոսական սերունդ կծնվի։ Մի ժողովուրդ, որը չի կամենում մեռնել, չի մեռնի երբեք...»[1]

Պատերազմի բոցերից փրկվել էր Ռուսաստանին ապավինած հայ ժողովրդի արևելյան հատվածը։ Հայկական հարցը դեռ մնում էր բաց։

[1] «Геноцид армян в Османской империи», с. 444.

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ։ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ։ ԱՐԵՎԵԼԱՀԱՅՈՒԹՅԱՆՆ ԻՍՊԱՌ ԲՆԱՋՆՋԵԼՈՒ ԾՐԱԳՐԻ ՁԱԽՈՂՈՒՄԸ

1916 թվականին թուրքական զորքերը մի շարք նոր պարտություններ կրեցին։ Չնայած տեղանքի և կլիմայի դժվարին պայմաններին, ռուսական բանակը զարգացրեց հարձակումն Անատոլիայում և գրավեց Էրզրումը, ապա՝ Տրապիզոնը և Էրզինջանը, ռազմակալման ենթարկեց Արևմտյան Հայաստանի մեծ մասը։

Ռուս սպաներն ու զինվորներն ականատես էին լինում ահավոր տեսարանների։ Կործանվել էր մի ամբողջ ժողովուրդ։ Ցասումով ու սարսուռով նրանք կանգնում էին մորթված հայերի դիակույտերի առջև, հրդեհված գյուղերի փլատակների միջից, լեռներում ու քարայրներում ապաստանած և հրաշքով փրկված հայ երեխաներին գթասրտորեն հավաքում, խորապես վերապրում անպաշտպան որբի նրանց դժբախտ ճակատագիրը։

Հայ բնակչությունից դատարկված Արևմտյան Հայաստանի կացությունը լուրջ խորհրդածությունների առիթ էր տալիս ռուսական պետական և ռազմական շրջաններին։ Ռուսական կառավարությունը շահագրգռություն էր հանդես բերում, որպեսզի ջարդերից փրկված հայերը նորից վերադառնան իրենց բնակավայրերը։

Կառավարությանը հղած մի զեկուցագրում[1] *Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությունը մտահոգություն հայտնելով Արևմտյան Հայաստանի կացության առթիվ, շեշտում էր, որ «եթե գերմանացիներին և թուրքերին Հայաստանը պետք է առանց հայերի, եթե նրանց անհրաժեշտ է հայկական սեպի ոչնչացումը...», ապա Ռուսաստանի խնդիրն է՝ «ինչ կերպ ուզում է լինի» վերստեղծել Հայաստանը*[1]։ *Նշելով, որ ջարդերից փրկված 200 հազար հայեր ապաստան են գտել Ռուսաստանում, մինիստրությունն այնուհետև գրում էր. «Հայկական բնակչության պահպանումը անհետաձգելի խնդիր է։ Այդ իսկ պատճառով ամեն կերպ անհրաժեշտ է աջակցել այդ անբախտ փախստականների գոյությանը մեր սահմաններում, նրանց պատերազմից հետո իրենց հայրենիքը վերադարձնելու նպատակով»*[2]։

1917 թվականի փետրվարին Ռուսաստանում տեղի ունեցավ հեղափոխություն և ցարը տապալվեց. ստեղծվեց ժամանակավոր կառավարություն, որի մեջ մտան բուրժուազիայի և համաձայնողական կուսակցությունների ներկայացուցիչները։ Սակայն երկրում ռեալ իշխանությունը ոչ միայն ժամանակավոր կառավարությանն էր, այլև ամենուրեք հանդես եկած բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների սովետներինը։ Վստահություն չտածելով բուրժուական ժամանակավոր կառավարության նկատմամբ, բոլշևիկները հանդես եկան իմպերիալիստական պատերազմն անհապաղ դադարեցնելու, ամբողջ իշխանությունը սովետներին հանձնելու պահանջով։

Ժողովրդական լայն մասսաների կամքին հակառակ, կառավարությունը հանդես եկավ դաշնակիցների հետ կնքած պայմանագրերին հավատարիմ մնալու, Քառյակ դաշինքի երկրների դեմ մղվող պատերազմը հաղթական վախճանին հասցնելու ծրագրով։

1917 թվականի մարտի 9-ին ժամանակավոր կառավարու-

---

[1] *Զեկուցագիրը, որ պահվում է Մոսկվայի Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում, թվագրված չէ, բայց բովանդակությունից երևում է, որ այն գրված է 1916 թվականին։ Փաստաթուղթն ամբողջական ձևով առաջին անգամ հրատարակել է Բագրատ Բորյանը իր* «Армения, международная дипломатия и СССР» *գրքում, իբրև հավելված (տե՛ս* часть II, Госиздат, М.—Л., *էջ* 32)։

[1] *Տե՛ս* **Б. А. Борьян**, Армения, международная дипломатия и СССР, часть II, *էջ* 418։

[2] *Նույն տեղը։*

թյունը կազմեց Անդրկովկասում իշխանության իր տեղական օրգանը՝ Անդրկովկասյան առանձին կոմիտե («Օզակոմ»)։

1917 թվականի ապրիլի 26-ին ժամանակավոր կառավարությունն ընդունեց մի որոշում, որով ռուսական զորքերի գրաված Արևմտյան Հայաստանը զատվում էր Կովկասի վարչական ու ռազմական շրջագծից և, իբրև աշխարհագրական ու քաղաքական առանձին միավոր, անմիջականորեն ենթարկվում էր կենտրոնական իշխանությանը։ Նշանակվեց Հայաստանի ընդհանուր կոմիսար։ Երկրի կառավարումն իրականացնելու համար կազմվեց հատուկ վարչություն, որի մեջ գերակշռող դիրքեր գրավեցին հայերը։

1917 թվականի մայիսին Երևանում տեղի ունեցավ արևմտահայերի առաջին համագումարը, որտեղ և ստեղծվեց Արևմտահայ խորհուրդը։ Այն կոչված էր նպաստելու արևմտահայերի ազգային հարցերի լուծմանը, մասնավորապես, զբաղվելու նրանց հայրենիք վերադարձնելու և իրենց բնակավայրերում տեղավորելու խնդիրներով։

Արևմտյան Հայաստանի տարածքներում 1916—1917 թվականներին ռուսական զորքերի հաջողությունները նպաստավոր պայմաններ ստեղծեցին, որպեսզի հայերը վերադառնան ավերակ դարձած ու արյամբ ողողված հարազատ վայրերը։ Ռուսական «կուպացիոն իշխանությունների հովանավորությունից գոտեպնդված՝ հազարավոր հայեր վերադարձան իրենց երկիրը և լծվեցին քանդված օջախների վերաշինմանը։ Հատկացվեցին պետական վարկեր ու գումարներ։ Հայ ազգաբնակչությամբ վերակենդանացան Վասպուրականը, Տարոն-Տուրուբերանը։ Վան—Մուշ—Բասեն գիծը բռնված էր տասնյակ հազարավոր հայ գաղթականներով։ 1917 թվականին իրենց բնակավայրերը վերադարձած և տեղավորված հայերի թիվը կազմում էր. Հին Բայազետում և շրջակա գյուղերում՝ 10 000 մարդ, Դիադինում՝ 5000, Ալաշկերտում՝ 30 000, Բասենում՝ 22000, Խնուսում՝ 28 000, Դերջանում՝ 4000, Երզնկայում՝ 3000, Բուլանրիխ-Մանազկերտում՝ 4500, Տրապիզոնում՝ 1500, Վասպուրականում՝ 22 425։ Ընդամենը երկիր էր վերադարձել 142 425 հայ[1]։

Սկսվեցին երկիրը վերաշինելու տենդագին աշխատանքներ։ Գյուղերի տարբեր թաղերում սկսեցին ծխել շինականների

[1] Տե՛ս «Հորիզոն», 1 հունվարի 1918 թ.։

օջախները, արտերը մշակվում էին, բացվում էին դպրոցներ։ Միայն Վասպուրականի շրջանում բացվեց 25 նախակրթարան[1]։ Արևմտահայաստանը մոխիրներից կարծես հարություն էր առնում։ Բոլորի հոգում նոր հույսեր էին առկայծում։

Ժամանակավոր կառավարությունը Արևմտահայաստանին ինքնավարություն տալու շուրջ խոստումներ էր տալիս։ Նա խոստացավ Արևմտահայաստանի ազատագրության խնդիրը անպայմանորեն միջազգային դիվանագիտական սեղանին դնել և իրական լուծում տալ դրան։ Մինչև հաշտության խորհրդաժողովի գումարումը ռուսական զորքը պետք է մնար Հայաստանում՝ հայերին մենակ չթողնելու նկատառումով։ Կառավարությունը կարգադրություններ արեց, որպեսզի Ռուսաստանում գտնվող հայ զինվորականությունը Հայաստան տեղափոխվի։ 1917 թվականի հուլիսին որոշվեց կազմել հայկական առանձին գնդեր, որոնց թիվը շուտով հասավ 8-ի։

Այդ ամենը տեղի էր ունենում շարունակվող իմպերիալիստական պատերազմի պայմաններում։ Ուստի ոչ մի երաշխիք չկար, թե իրենց երկրում վերահաստատված հայերը վաղը, մյուս օրը ռազմական գործողությունների բերումով նորից չեն բռնելու գաղթի ճանապարհները։ Ռուսական կովկասյան բանակը կռվող կողմերից մեկի՝ ցարական կառավարության, իսկ 1917 թվականի Փետրվարյան հեղափոխությունից հետո՝ բուրժուական ժամանակավոր կառավարության իմպերիալիստական ձգտումների իրականացման գործիքն էր։ Բայց իբրև պատմության պարադոքս, պատերազմական տվյալ իրադրության մեջ այդ բանակը հենց իմպերիալիզմի զոհ արևմտահայությանը հետագա կոտորածներից փրկելու ընդունակ միակ ռեալ ուժն էր նաև։ Ռուսական զորքերի կողմից Թուրքիայի բռնակալած Արևմտահայաստանի տարածքի գրավումը փրկություն էր արևմտահայության կենդանի մնացած բեկորների համար։

Կապիտալիստների ու կալվածատերերի տիրապետության տակ գտնվող Ռուսաստանը անկարելի էր համեմատել փաշաների, մոլլաների, շեյխերի իշխանության տակ գտնվող Թուրքիայի հետ։ Դրանց չէր կարելի կողք կողքի դնել ոչ մի տեսակետից։ Չնայած երկու երկրներն էլ վարում էին իմպերիալիս-

[1] Richard Hovannisian G., Armenia on the Rood to Independence, 1918, p. 79.

տակ-ան, ուրիշի հողերը կավթելու քաղաքականություն, բայց ռուսական և թուրքական բանակների գործելակերպի միջև այնքան մեծ էին տարբերությունները, որ համեմատության կարիք գրեթե չկային։ «Ենթադրենք,— գրել է Վ. Ի. Լենինը,— երկու երկիր պատերազմում են իրար դեմ բուրժուական, ազգային և ազատագրական շարժումների դարաշրջանում։ Ո՞ր երկրին հաջողություն ցանկանալ ժամանակակից դեմոկրատիայի տեսակետից։ Պարզ է, որ այն երկրին, որի հաջողությունն ավելի ուժգին առաջ կմղի և առավել փոթորկալի կծավալի բուրժուազիայի ազատագրական շարժումը, ավելի ուժգնորեն կքայքայի ֆեոդալիզմը»[1]։

Մարքսիստները հարցի այս կողմը չեն անտեսում ռուս-թուրքական պատերազմները լուսաբանելիս։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կռվելով թուրքական բանակների դեմ, ռուսական զինված ուժերը դրանով իսկ ազատագրական միսիա էին իրականացնում օսմանյան բռնատիրության տակ հեծող ոչ թուրք ժողովուրդների հանդեպ, մասնավորապես նպաստում արաբական և քուրդ ժողովուրդների ազգային ազատագրությանը, հայ ժողովրդի մնացորդների գոյատևմանը։

Այնուհանդերձ, Վ. Ի. Լենինը, բոլշևիկները գտնում էին, որ ժողովուրդների իսկական ազատագրությունը չի կարող ձեռք բերվել իմպերիալիստական պատերազմի սվիններով։ Պատերազմը շարունակելու ժամանակավոր կառավարության քաղաքականությունը նորանոր թշվառություններ էր բերելու ժողովրդական մասսաներին։ Ահա թե ինչու նրանք առաջնահերթ խնդիր էին համարում նախ պատերազմից դուրս գալը և ապա՝ գավթած բոլոր տարածքներից հրաժարվելը, անիրավահավասար, գաղտնի պայմանագրերը չեղյալ հայտարարելը և այլն։ Այդ բանում ամենից շատ շահագրգռված էին բանվորները և գյուղացիները, որոնք էլ հենց զինվորի շինել հագած պայքարում էին իրենց համար խորթ նպատակների համար։

Վ. Ի. Լենինը, բոլշևիկյան կուսակցությունն այս ընդհանուր սկզբունքներից ելնելով էին դնում նաև հայ ժողովրդի երկու հատվածների ազատագրության հարցերը։ Հայ ժողովրդի արևելյան հատվածի ազատագրության խնդրի լուծման ուղին պարզ էր. նա պետք է ազատություն ստանար Ռուսաստանի բոլոր

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 26, էջ 168։

ժողովուրդների հետ միասին՝ համառուսաստանյան պրոլետարիատի հաղթական հեղափոխության միջոցով։ Առավել բարդն ու խճճվածը հայ ժողովրդի մյուս՝ արևմտյան հատվածի և Արևմտահայաստանի խնդիրն էր։ Ռուսական զորքերի կողմից Արևմտահայաստանի գրավումը ռուսական բուրժուազիայի զավթողական նպատակների իրականացումն էր, մի բան, որ հիմքից անընդունելի էր բոլշևիզմի համար, որն ընդհանրապես մերժում էր ամեն մի զավթում և բռնագրավում։ Արևմտահայաստանի մասնավոր հարցի լուծումը բոլշևիկները կապում էին իմպերիալիստական պատերազմից դուրս գալու, պրոլետարական հեղափոխության հաղթանակի, բոլոր տեսակի նացիոնալիստական, շովինիստական գաղափարախոսությունների դեմ վճռական և անզիջում պայքարի հետ։

Դեռ Ռուսաստան վերադառնալու նախօրյակին՝ 1917 թվականի մարտի 4 (17)-ին Վ. Ի. Լենինը հանդես եկավ «Ուրիշին պատկանող երկրների՝ Հայաստանի, Գալիցիայի, Կոստանդնուպոլսի և այլնի կողոպտման ու նվաճման» դեմ[1]։ Երեք օր հետո, մարտի 7-ին գրած «Նամակներ հեռվից»-ում Վ. Ի. Լենինը նորից անդրադարձավ Արևմտահայաստանի խնդրին և մերկացրեց ժամանակավոր կառավարությանը, նշելով, որ այն «պատերազմի կառավարություն է, իմպերիալիստական սպանդը շարունակելու կառավարություն, կողոպուտի կառավարություն, որն ուզում է կողոպտել Հայաստանը, Գալիցիան, Թուրքիան, խլել Կոստանդնուպոլիսը, նորից նվաճել Լեհաստանը, Կուրլանդիան, Լիտվական երկրամասը և այլն»[2]։ «Ռուսաստանը պատերազմ է մղում Հայաստանը, Թուրքիան, Գալիցիան կողոպտելու համար»[3],— նորից շեշտում էր նա։ Նույն բանը Լենինը կրկնել է 1917 թվականին գրած «Հեղափոխությունը Ռուսաստանում և բոլոր երկրների բանվորների խնդիրները»[4]», «ՌՍԴԲԿ խնդիրների մասին ռուսական հեղափոխության մեջ»[5], «Հրաժեշտի նամակ շվեյցարական բանվորներին»[6], «Պատերազմը և

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 31, էջ 2։
[2] Նույն տեղը, էջ 26։
[3] Նույն տեղը, էջ 62, տե՛ս նաև էջ 64, 65։
[4] Նույն տեղը, էջ 82։
[5] Նույն տեղը, էջ 89։
[6] Նույն տեղը, էջ 105։

ժամանակավոր կառավարությունը»[1], «Բարեխիղճ պաշտպանողականությունը ցույց է տալիս իրեն»[2], ««Խայտառակություն» ասելով ինչ են հասկանում կապիտալիստները և ինչ՝ պրոլետարները»[3], «Իմպերիալիզմի պաշտպանությունը, որ քողարկված է բարեհաճ ֆրազներով»[4], «Տխրալի փաստաթուղթ»[5] և այլ հոդվածներում, ՌՍԴԲ(բ)Կ VII (ապրիլյան) համառուսաստանյան կոնֆերանսում ունեցած ելույթներում[6] և այլն։

Հատկանշական է, որ այդ հոդվածներում և ելույթներում Լենինը Հայաստանը դիտում էր ոչ թե Թուրքիայի օրգանական մաս, այլ որպես առանձին միավոր, հիշատակելիս դրանց դնելով կողք կողքի։

Դատապարտելով իմպերիալիստական պետությունների զավթողական քաղաքականությունը, բոլշևիկները միաժամանակ քաջ գիտակցում էին, որ Արևմտյան Հայաստանից ռուսական զորքերի հեռացումը նոր սպանդներ էր նշանակելու հայության բեկորների համար, և հայ ժողովրդի այդ բնօրրանը շարունակվելու էր մնալ է՛լ ավելի ագրեսիվ, վայրենի շովինիստական պետության՝ Թուրքական պետության ձեռքին։

Կ. Մարքսը, Ֆ. Էնգելսը, Վ. Ի. Լենինը բազմիցս նշել են, որ Թուրքական բռնապետական ռեժիմից Օսմանյան կայսրության ազգերի ազատագրությունը առաջադիմական պրոցես է։ Նրանք հատկապես նկատի ունեին իրենց տնտեսական և կուլտուրական զարգացմամբ Թուրքերից բարձր կանգնած բալկանյան ժողովուրդներին և հայերին, որոնք ազգային անկախության համար իրենց պայքարով ըստ էության նպաստում էին հասարակական առաջադիմությանը՝ ֆեոդալական կապանքների ոչնչացմանը և բուրժուական հարաբերությունների հաստատմանը։

1917 թվականի Փետրվարյան հեղափոխությունից հետո Վ. Ի. Լենինը հրատարակեց «Ուրիշի դրոշի տակ» հայտնի հոդվածը, որը նա գրել և տպագրության էր պատրաստել դեռևս 1915 թվականին։ Նշելով, որ «մարքսիստները երբեք չեն ժխտել ֆեոդալական-աբսոլյուտիստական ուժերի դեմ մղվող

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 31, էջ 255։
[2] Նույն տեղը, էջ 384։
[3] Նույն տեղը, էջ 402։
[4] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 32, էջ 13։
[5] Նույն տեղը, էջ 16։
[6] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 31, էջ 458—460։

բուրժուական-ազգային ազատագրական շարժումների առաջադիմականությունը»[1], Վ. Ի. Լենինը այնուհետև գրում էր. «Ոչ միայն 1855, 1859, 1864, 1866, 1870, այլև 1877 թվականի (ռուս-Թուրքական) և 1896—1897 թվականների պատերազմների (Հունաստանի դեմ Թուրքիայի պատերազմի և հայկական հուզումների) ժամանակ, պատմական երևույթների հիմնական օբյեկտիվ բովանդակությունը եղել են ազգային-բուրժուական շարժումները կամ ֆեոդալիզմի տարբեր ձևերից ազատագրվող բուրժուական հասարակության «ջղաձգումները»»[2]։

Ուստի պահանջելով ռուսական զորքերի դուրս բերումը Հայաստանից, բոլշևիկները կողմնակից չէին դրա անհապաղ և անկազմակերպ իրականացմանը։ Ընդհակառակը, ենթադրվում էր, որ Հայաստանի տարածքից ռուսական զորքերի հեռանալու դեպքում նրանց տեղը պիտի բռնեն ոչ թե Թուրք զավթիչները, այլ՝ Հայաստանի իսկական տերը՝ հայ ժողովուրդը։

1917 թվականի հոկտեմբերի 2—7-ը Ստ. Շահումյանի ղեկավարությամբ Թիֆլիսում տեղի ունեցած ՌՍԴԲ(բ)Կ Կովկասյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարն արծարծեց նաև Արևմտահայաստանի հարցը։ Իր ելույթում անդրադառնալով ազգային հարցի լուծման ճանապարհին Անդրկովկասի բոլշևիկների առջև կանգնած խնդիրներին, Ստ. Շահումյանը ասում էր. «Ազգային հարցի լուծման ժամանակ անխուսափելիորեն դրվում է նաև Թուրքահայաստանի հարցը։ Այդ հարցի լուծումը մենք պետք է թողնենք հենց այդ մարզի բնակչությանը, որն ինքը պետք է որոշի իր բախտը։ Ռուսաստանին միանալու՝ նրանց որոշման դեպքում նրանք պետք է միացվեն հայերին»[3]։

Բայց հայ ժողովրդի դեմ Թուրքերի և պանթուրքականների դավերը չէին պակասում։ Դրանք, ինչպես և նախկինում, Ռուսաստանի դեմ ուղղված դավերի մի մասն էին կազմում։

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 26, էջ 165։
[2] Նույն տեղը, էջ 172։
[3] Ստեփան Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հինգ հատորով, հ. III, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1978, էջ 270։ Տե՛ս նաև «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», փաստաթղթերի ժողովածու, էջ 83, Հ. Ս. Մելիքյան, Հոկտեմբերյան հեղափոխությունը և Կովկասյան բանակը, Երևան, 1970, էջ 226։

1916 թվականից սկսած Ռուսաստանում պանթուրքական-ների գործունեության աշխուժացման համար նոր, բարենպաստ պայմաններ էին ստեղծվել՝ կապված Միջին Ասիայում հակացարական պայքարի վերելքի հետ։ Այդ նույն տարում այնտեղ ապստամբություն ծագեց, որն ուներ ընդգծված հակաֆեոդալական բնույթ։ Թուրքեստանի ֆեոդալական-կղերական, պանիսլամական և մյուս հետադիմական շրջանները փորձեցին ապըստամբությունն ուղղել հակառուսական հունով՝ «անհավատների» դեմ պայքարի դրոշի տակ։ Նույն՝ 1916 թվականին Լոգանում հրավիրվեց Ռուսաստանից անջատվել տենչացող պանիսլամական-պանթուրքական գործիչների համագումար։ Համագումարը ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնին հղեց մի ուղերձ, որը ստորագրել էին համագումարին տոն տվող ռուսաստանյան թուրքալեզու ազգայնամոլ պարագլուխներից Ղազի Աբդուռաշիդ Իբրահիմը, Ահմեդ Աղա օղլին, Յուսուֆ Աքչուրա օղլին և Ալի Հուսեին զադեն։ Նրանք համագումարի անունից Վիլսոնին խնդրում էին ամեն գնով նպաստել «ռուսական երդվյալ, անհաշտ ու հավիտենական թշնամուց» Ռուսաստանի 25 միլիոն մահմեդականների՝ թաթարների, բաշկիրների, կիրգիզների, սարթերի, տաջիկների, թուրքմենների, կովկասյան լեռնականների և ադրբեջանցիների ազատագրմանը։

Պանթուրքականներին ընդհանուր առմամբ չհաջողվեց նենգափոխել Միջին Ասիայի ըստ էության սոցիալական ժողովրդական ապստամբության նպատակը և այն ուղղել Ռուսաստանի, ռուս «անհավատների» դեմ։ Բայց քանի որ ցարական կառավարությունը ճնշեց ապստամբությունը, պանթուրքականներն այս անգամ էլ միապետական գործերի գործողությունները ներկայացրին որպես «անհավատների դաժանություններ»։

Թուրքեստանում 1916 թվականի ապստամբությունների փորձը ցույց տվեց, որ դեհկանները կարող են ազատագրվել միայն ռուս բանվորների օգնությամբ, բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ։

1917 թվականի Փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխության հաղթանակից հետո ստեղծվել էր այնպիսի իրադրություն, երբ Ռուսաստանը աշխարհում դարձել էր ամենադեմոկրատական երկիրը։ Առաջանում էին նորանոր սովետներ, միություններ, խմբակներ, կուսակցություններ, որոնք ունեին

տարբեր ծրագրեր, տարբեր կանոնադրություններ և կազմակերպական կառույց։ Նույնպիսի պատկեր ենք տեսնում բոլոր ազգային ծայրամասերում, այդ թվում՝ Ադրբեջանում, Հյուսիսային Կովկասում, Պովոլժիեում, Թաթարիայում, Բաշկիրիայում, Ղազախստանում, Թուրքեստանյան երկրամասում։

Ռուսաստանի մուսուլմանական ծայրամասերում ձևավորված դարձափարաքաղաքական չորս հոսանքներին (սոցիալ-դեմոկրատական, լուսավորական-դեմոկրատական, ջադիդիզմ, քադիմիզմ) համապատասխան 1917 թվականի փետրվարից հետո ձևավորվեցին չորս քաղաքական խմբեր՝ բոլշևիկյան (այն ժամանակ կոչվում էր «թուրքական կոմունիզմ»), աշխատավորական, բուրժուազգայնական և կղերաֆեոդալական[1]։

Բոլշևիկյան գաղափարները թափանցում էին մուսուլմանական ամենահեռավոր տարածքները։ Ադրբեջանում նորից սկսեցին ակտիվ գործունեություն ծավալել «Հումմեթ» և «Ադալեթ» կազմակերպությունները։ Մուսուլման կոմունիստների թիվն արագորեն աճում էր Թաթարիայում և Բաշկիրիայում։ 1917 թվականի մարտ-ապրիլ ամիսներին սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ սկսեցին գործել Թուրքեստանյան երկրամասի մի շարք քաղաքներում՝ Սամարղանդում, Սկոբելևում (Ֆերգանայում), Կոկանդում, Անդիջանում, Խոջենթում, Աշխաբադում և այլ վայրերում[2]։

Ամենուրեք հանդես էին գալիս նաև բոլշևիկներին հարող աշխատավորական կազմակերպություններ, որոնք հատկապես մեծ ուժ ունեին Դաղստանում և Հյուսիսային Կովկասում։ Հեղափոխական շարժման ալիքի վրա ամրապնդվում էին Բուխարայի էմիրության և Խիվայի խանության՝ սոցիալիստական գաղափարների ազդեցություն կրած ընդդիմադիր տարրերը, որոնք պայքար էին սկսել էմիրի և խանի իշխանությունը սահմանափակելու, դեմոկրատական ռեֆորմների անցկացման համար։ Հեղափոխական իրադարձությունների աճից սարսափած Բուխարայի էմիրը և Խիվայի խանը ապրիլի սկզբին հրապարակեցին մանիֆեստներ՝ խոստանալով պետական կառավարման

---

[1] Տե՛ս «Национальный вопрос накануне и в период проведения Великой Октябрьской Социалистической революции», էջ 50—51։

[2] Տե՛ս «Очерки истории Коммунистической партии Узбекистана», Ташкент, 1964, էջ 25։

բուրժուական որոշ ռեֆորմներ։ Բայց խոստացած ռեֆորմները չիրականացվեցին։ Ընդդիմադիր տարրերին սկսեցին դաժանորեն հալածել։ Բուխարայում և Խիվայում դրանից հետո դեռ երեք տարի էլ շարունակվեց ֆեոդալական ռեակցիայի իշխանությունը[1]։

Ցարի տապալումից հետո մեծ ակտիվություն էր ծավալել մուսուլմանական տարածքների ազգային բուրժուազիան։ Նրա նախաձեռնությամբ ամենուրեք հրավիրվում էին համագումարներ և այլ համաժողովներ, որոնցում բանաձևեր էին ընդունվում ազգային-մուսուլմանական ինքնավար միավորներ ստեղծելու մասին։ Ըստ որում, Թուրքալեզու ազգայնական համագումարները, որպես կանոն, բաղձանք էին հայտնում դաշնակցային կապերով միանալ «եղբայրակից» Թուրքերին։

1917 թվականի ապրիլին Բաքվում տեղի ունեցավ Կովկասի մահմեդականների առաջին կոնգրեսը, ուր մուսավաթ կուսակցությունն առաջադրեց Ռուսաստանի մահմեդականների գործուն կենտրոնական մարմին ստեղծելու պահանջը, մի մարմին, որ ենթակա լիներ Թուրքական կառավարությանը։ Նույն թվականի հունիս և օգոստոս ամիսներին Բաքվում տեղի ունեցան Կովկասի մահմեդականների երկրորդ և երրորդ կոնգրեսները, որոնք ընդունեցին ավելի անհաշտ պանթուրքական որոշումներ։

Ուֆայում հրավիրված թաթարա-բաշկիրական ազգային ժողովն առաջադրեց ինքնուրույն պետություն կազմելու պահանջը։ Այդ պահանջը հատկապես մեծ եռանդով իր էջերում քննարկում էր թաթարական ձեռներեց բուրժուազիայի օրգան «Կուրուլթայ» թերթը, որը միաժամանակ հակաբոլշևիկյան կատաղի պրոպագանդա էր մղում։ «Անկախության» գաղափարի ջերմեռանդ ջատագով էր բաշկիրական բուրժուազիայի կողմից ստեղծված Ազգային խորհուրդը։ Բախչիսարայում հրավիրված կուրուլթայը (համագումարը) պահանջեց Ղրիմը հռչակել մահմեդական անկախ պետություն։ Նույնպիսի պահանջներ էին առաջադրում Միջին Ասիայի և Ղազախստանի ազգայնականները։ 1917 թվականի ամռանը հրավիրված Կիրգիզիայի ազգայնականների համագումարը ժամանակավոր կառավարությունից պահանջեց անհապաղ ազգային և կրոնական ինքնավարություն տալ իրենց։

[1] Տե՛ս «Очерки истории...», էջ 25—26:

իսկ չաղաթայ թաթարները պահանջեցին անկախություն տալ Խիվայի և Բուխարայի խանություններին։

1917 թ. մայիսին Օսեթիայի, Դաղստանի, Չեչնիայի, Ինգուշեթիայի, Կաբարդայի, Բալկարիայի լեռնական ազնվականության, բուրժուազիայի, մուսուլմանական հոգևորականության կողմից հիմնվեց «Միավորյալ լեռնականների միության» կենտկոմը։ Դրա ղեկավարներն էին գրողնեցի նավթարդյունաբերող, միլիոնատեր Չերմոևը, կումիկ խոշոր կալվածատեր Կապլանովը, ձիաբուծարանների տեր, կաբարդին իշխան Կոցևը և այլոք։ «Լեռնականների միության» գործունեությունն ուղղված էր ազգային բուրժուազիայի ուժերի համախմբման, Կովկասի ժողովուրդներին Ռուսաստանի աշխատավորներից կտրելու նպատակին։ «Լեռնականների միության» ծրագիրը հռչակում էր Հյուսիսային Կովկասի անջատումը Ռուսաստանից և «անկախ» պետության կազմավորումը, որի կազմի մեջ պետք է մտնեին Դաղստանը, Թերեքի մարզը, Ստավրոպոլի երկրամասը, Կուբանը, այսինքն՝ Կովկասի տարածքը Կասպից ծովից մինչև Սև ծովը[1]։

1917 թվականի մայիսին Ռուսաստանի բուրժուազգայնական մուսուլմանական կուսակցությունների ջանքերով հրավիրվեց համառուսաստանյան մուսուլմանական առաջին համագումարը, որն ընդունեց «Ռուսաստանի բոլոր մուսուլմաններին» կոչը։ Այնտեղ մասնավորապես ասված էր. «Քաղաքացի մուսուլմաննե՛ր։ Մենք մի լոզունգ ունենք՝ «Կազմակերպվե՛ք» լոզունգը։ Մենք, մուսուլմաններս, մեր գերակշռող մեծամասնությամբ հասարակական միջին խավ ենք, այսինքն՝ մենք դեմոկրատիա ենք։ Մեզանում աննշան թիվ են կազմում կապիտալի և խոշոր հողատիրության ներկայացուցիչները։ Մուսուլմանների մոտ ծայրաստիճան թույլ է դասակարգային շերտավորումը...»[2] Այստեղից հետևություն. մուսուլմանների միջավայրում դասակարգային պայքարի մասին խոսք լինել չի կարող, նրանք բոլորը պետք է մտահոգվեն միայն իրենց ազգային խնդիրներով։

Այդ նույն ժամանակ մուսուլմանական բուրժուազիայի շարքերում տենդագին կերպով տեղի էին ունենում քաղաքական ուժերի բևեռացում և համախմբում։ 1917 թվականի կեսերին

[1] Տե՛ս **Х. М. Бербеков**, Переход к социализму народов Кабардино-Балкарии, Нальчик, 1963, էջ 54:

[2] **Г. Касимов**, Пантюркистская контрреволюция и ее агентура султангалиевщина, Казань, 1931, с. 2.

ավարտվեց այդ բուրժուազիայի քաղաքական կազմակերպությունների վերջնական ձևավորումը։

Այսպես, օրինակ, Թուրքեստանյան երիտասարդ բուրժուազիան և ազգայնականորեն տրամադրված մտավորականությունը միավորվեցին նացիոնալիստական տարբեր կազմակերպություններ մեջ։ Ջադիդների աջակցությամբ այստեղ ստեղծվեց «Թուրան» կազմակերպությունը, որը 1917 թվականի հուլիսին վերանվանվեց «Թուրկադամ մարքազիսա»։ 1917 թվականի օգոստոսին Թուրքեստանում ստեղծվեց քաղաքական ջադիդական մի այլ կազմակերպություն՝ «Թյուրք ադամի մարքազիյաթը», որի գործունեության հիմքում ընկավ ազգրեջանական մուսավաթ կուսակցության ծրագիրը[1]։ Չգտելով օգտվել Փետրվարյան հեղափոխության պտուղներից, Թուրքեստանյան ազգային բուրժուազիան կազմակերպեց նաև այսպես կոչված «մուսուլմանական կոմիտեներ», «Թուրքմենական մարզային գործադիր կոմիտեն», «Կիրգիզական կոմիտեն» («Ալաշ») և բուրժուանացիոնալիստական այլ կազմակերպություններ, որոնք ձգտում էին գրկել ժողովրդական շարժումը, նրան հաղորդել «համազգային» բնույթ և ոչ մի դեպքում թույլ չտալ դասակարգային պայքարի հետագա խորացում տեղական ժողովուրդների մեջ։

Ջադիդների ամենախոշոր քաղաքական կազմակերպությունը, այնուամենայնիվ, դարձավ «Շուրո-ի իսլամիյա» կուսակցությունը։ Սկզբնական շրջանում քաղաքական այդ կազմակերպության մեջ էին միավորվել ո՛չ միայն մուսուլմանական բուրժուազիայի ներկայացուցիչները, այլև ֆեոդալական տարրերը, մուսուլմանական հոգևորականությունը։

«Շուրո-ի իսլամիյան» առաջին իսկ օրերից աշխատում էր տեղական բնակչությանը համախմբել իր դրոշի տակ և այդ նպատակով ծավալել էր տպագիր ու բանավոր լայն պրոպագանդա։ Ջադիդիզմի պարագլուխները փորձում էին աշխատավորներին համոզել, թե բոլոր մուսուլմանները մի միասնական ազգի զավակներ են և որ այդ «իսլամի ազգի» զանազան դասակարգերի միջև ոչ մի հակասություն չկա։ Մուսուլման (բայց ոչ թուրք) տաջիկ ջադիդներից բացի, միջինասիական բոլոր

[1] Տե՛ս «Очерки истории Коммунистической партии Узбекистана», էջ 32։

ջադիդները հանդես էին գալիս նաև այն քարոզով, թե թրքալեզու բոլոր ժողովուրդները մեկ թյուրքական ազգ են, որ այդ ազգը մի միասնական ընտանիք է, որի բոլոր անդամները եղբայրներ են, անկախ նրանց գույքային վիճակից[1]։

«Շուրո-ի իսլամիյա» միացյալ հակահեղափոխական կուսակցության ֆեոդալական տարրերը, հետադիմական մուսուլմանական հոգևորականության ներկայացուցիչները և տեղական բուրժուազիայի առավել հետադեմ մասը 1917 թվականի ամռանը անջատվեցին այդ կուսակցությունից, ապա միավորվելով ստեղծեցին ֆեոդալակղերական իրենց առանձին քաղիմական կազմակերպությունը «Շուրո-ի ուլեմա» անունով։ Քաղիմականների հեռանալուց և իրենց ինքնուրույն կազմակերպությունը ստեղծելուց հետո «Շուրո-ի իսլամիյա» կուսակցությունը դարձավ զուտ ջադիդական բուրժուազգայնական կազմակերպություն[2]։

Ի տարբերություն ջադիդական «Շուրո-ի իսլամիյա» կազմակերպության, որի գաղափարախոսությունը և՛ պանիսլամիզմն էր, և՛ պանթուրքիզմը, քաղիմականների «Շուրո-ի ուլեմա» առավել հետադիմական կուսակցության հիմնական գաղափարախոսությունը պանիսլամիզմն էր։ Ուլեմականները կանգնած էին մուսուլմանական ժողովուրդների կենցաղում և նրանց հասարակական կյանքում նահապետական-ֆեոդալական հիմքերը անաղարտ պահելու դիրքերում։ Նրանք մուսուլմանական կազմակերպություններին կոչ էին անում միավորվել նաև «Իթթիֆաքի մուսլիմի» և «Ջումիյաթի ուլեմա» հետադիմական կուսակցությունների մեջ[3]։ 1917 թվականի հուլիսի 30-ի քաղաքային դումաների ընտրություններում բացարձակ մեծամասնություն ստանալով, ուլեմականները ուժեղացրին ռեակցիայի հարձակումը Թուրքեստանյան երկրամասի դեմոկրատական ուժերի վրա[4]։

[1] Տե՛ս «Национальный вопрос накануне и в период проведения Великой Октябрьской социалистической революции», էջ 57։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 56։

[3] Տե՛ս «Труды Узбекского университета им. А. Навои. Новая серия. Выпуск 61. Исторический факультет. Самарканд, 1956, էջ 210։

[4] Տե՛ս «Очерки истории Коммунистической партии Узбекистана», էջ 32։

Պետք է ասել, որ Ռուսաստանի մուսուլման ժողովրդական զանգվածների հետամնացության և անբավարար քաղաքական պատրաստվածության հետևանքով նրանց զգալի մասը սկզբնական շրջանում վստահությամբ էր վերաբերվում «Մուսավաթ» կուսակցությանը Ադրբեջանում, «Ուլեմա» և «Շուրա-ի իսլամիյա» կազմակերպություններին Թուրքեստանում և այլն։ Բայց հեղափոխության հետագա խորացմանը զուգընթաց, աշխատավորներն աստիճանաբար հեռանում էին բուրժուական նացիոնալիստներից։ Վերջիններս և ընդհանրապես բոլոր մուսուլման հակահեղափոխականները, դեռևս չհրաժարվելով Թուրքիայի հետ միավորման գաղափարից[1], միաժամանակ վստահություն էին հայտնում բուրժուական ժամանակավոր կառավարությանը։ Իրենց ընդունած բանաձևերով հենց այդպես վարվեցին, օրինակ, 1917 թվականի գարնանը կայացած «Շուրո-ի իսլամիայի» երկրամասային առաջին և ջադիդների համաթուրքեստանյան համագումարները։ Ղազախ, կիրգիզ, թաթար, ադրբեջանցի նացիոնալիստները նույնպես չհապաղեցին իրենց «անկեղծ նվիրվածությունը» հայտնել ժամանակավոր կառավարությանը։ Դա պատահական չէր։ Չէ՞ որ այդ կառավարությունը հետևողականորեն պայքարում էր բոլշևիկների դեմ։ Իսկ բոլշևիկները հանդես էին գալիս Ռուսաստանի բոլոր ազգերի աշխատավորների ինտերնացիոնալ համախմբման լոզունգով, մի բան, որ տրամագծորեն հակառակ էր մուսուլման նացիոնալիստների, պանթուրքականների և պանիսլամականների պլաններին։ Այստեղից էլ՝ բոլշևիկների դեմ պայքարող ժամանակավոր կառավարությանը ցույց տրվող վստահությունը և նրա պաշտպանությունը։

Նման պայմաններում էր, որ հայ ազգայնականների մոտ ևս հղացան Ռուսաստանից անջատվելու, «ազատ» ու «անկախ» լինելու մասին մտքեր, այսինքն՝ նրանց մոտ ցանկություն առաջացավ քայլել Ռուսաստանի թրքալեզու ազգայնականների ճանապարհով։ Բայց եթե վերջիններս Ռուսաստանից անջատվելով գնում էին դեպի իրենց «մեծ եղբոր»՝ Թուրքիայի գիրկը, ստանում նրա անվերապահ հովանավորությունը, ապա ո՞ւմ էին ապավինում հայ ազգայնականները, նրանց կարծիքով ում մոտ պետք է պաշտպանություն գտներ հայ ժողովուրդը, ում հետ էր նա կապելու իր գոյության հույսը։ Այս հարցերը անհետաձգելի պատասխաններ էին պահանջում։

[1] Այդ շրջանում Թուրքիայի հետ միավորման լոզունգի ամենաեռանդուն քարոզիչները Թուրքեստանում ջադիդներն էին, Բուխարայում՝ երիտբուխարացիները, Խորեզմում՝ երիտխիվացիները, Ղազախստանում՝ ալաշորդինցիները։ Եթե 1905—1907 թվականներին, որոշ չափով նաև մինչև 1917 թվականի Փետրվարյան հեղափոխությունն ընկած ժամանակաշրջանում Միջին Ասիայի և Ղազախստանի ազգային բուրժուազիան հանդես էր գալիս համազգային լո-

* * *

1917 թվականի հոկտեմբերին Ռուսաստանի պրոլետարիատը, չքավոր գյուղացիության հետ դաշնակցած, բոլշևիկյան կուսակցության գլխավորությամբ, Վ. Ի. Լենինի առաջնորդությամբ գրոհի գնաց բուրժուակալվածատիրական կարգերի դեմ և փայլուն հաղթանակով պսակեց շահագործման կապանքներից ազատագրվելու համար աշխատավորների երկարատև պայքարը։

Ճեղքելով միջազգային իմպերիալիզմի ճակատը նրա թույլ օղակներից մեկում՝ Ռուսաստանում, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը հաստատեց պրոլետարիատի դիկտատուրա, ստեղծեց աշխարհում առաջին բանվորագյուղացիական կառավարությունը՝ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ։

Հոկտեմբերյան հեղափոխությունը, որը մարդկության պատմության մեջ ամենախոշոր իրադարձությունն է, սկիզբ դրեց կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամին, կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու համաշխարհային-պատմական պրոցեսին։ Հեղափոխությունը կապիտալիստական ստրկությունից վերջնականապես ազատագրեց Ռուսաստանի աշխատավոր մասսաներին, ազատություն բերեց երկրի բոլոր ճնշված ու տառապած ազգերին ու ժողովուրդներին, նրանց տվեց ազգային վերածննդի, առաջընթացի ու արարման բոլոր հնարավորությունները։

զունգներով, որոնք այն ժամանակ օբյեկտիվորեն որոշակի առաջադիմական բովանդակություն ունեին, ասա Հոկտեմբերյան հեղափոխության նախապատրաստության և անցկացման ժամանակաշրջանում այդ բուրժուազիան ռեակցիոն դիրքերից բացեիբաց հանդես եկավ հեղափոխական Ռուսաստանից անջատվելու և Թուրքիայի ու Անգլիայի հովանավորության տակ բուրժուական «անկախ» պետություն ստեղծելու պահանջով (այդ մասին տե՛ս «Истоки прогресса», Ташкент, изд-во «Фан», 1985, էջ 21, 23 26)։

Հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո ստեղծվեց Ազգությունների գործերի ժողկոմատ։ Սովետական կառավարությունը 1917 թվականի նոյեմբերի 2 (15)-ին հռչակեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որն օրենսդրական կարգով սահմանեց երկրի բոլոր ազգությունների ազատ զարգացումն ու լիակատար իրավահավասարությունը[1]։ 1917 թվականի նոյեմբերի 20 (դեկտեմբերի 3)-ին հրապարակվեց «Ռուսաստանի և Արևելքի բոլոր մուսուլման աշխատավորներին» դիմումը[2], որով ազատ և անձեռնմխելի հայտարարվեցին մուսուլմանների ազգային և կուլտուրական հաստատությունները, երաշխավորվեց նրանց կրոնական լիակատար ազատությունը։

Սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո սկսվեց նրա հաղթական երթն ամբողջ երկրով մեկ։ Ոգեշնչված նրա գաղափարներով, Կենտրոնական Ռուսաստանի բանվորների և գյուղացիների օրինակով Անդրկովկասի և Հայաստանի աշխատավորները նույնպես, բոլշևիկյան կազմակերպությունների գլխավորությամբ, պայքար սկսեցին երկրամասում սովետական իշխանություն հաստատելու համար։ Սակայն հակահեղափոխական ուժերին հաջողվեց ժամանակավորապես կասեցնել սոցիալիստական հեղափոխության հաղթական երթն Անդրկովկասում, մի բան, որ չափազանց ծանր նստեց երկրամասի ժողովուրդների, առաջին հերթին հայ ժողովրդի վրա։

1917 թվականի նոյեմբերի 27-ին ժամանակավոր կառավարության անդրկովկասյան վարչությանը՝ «Օզակոմին» փոխարինելու եկավ այսպես կոչված «Անդրկովկասյան կոմիսարիատը»՝ երկրամասի բուրժուազգայնական կուսակցությունների միացյալ քաղաքական օրգանը, որը զավթեց իշխանությունը և կատաղի պայքար սկսեց բանվորների և աշխատավոր գյուղացիների հեղափոխական շարժումների դեմ, որոնք ոտքի էին ելել Անդրկովկասում սովետական իշխանություն հաստատելու համար։ Կոմիսարիատը բռնեց երկրամասը սովետական Ռուսաստանից մեկուսացնելու և անջատելու ուղին։

Այդ ծանր ժամանակներում նորաստեղծ սովետական կառավարությունը ոչ միայն մտահոգված էր Անդրկովկասի ժողովուրդների, այդ թվում երկրամասի հայության բախտով, այլև, լինելով բոլոր ճնշվածների, հարստահարվածների ու տառապյալների իղձերի արտահայտիչը, բնականաբար ձեռք պետք է մեկներ և մեկնեց բազմաչարչար արևմտահայության բեկորներին։

1917 թվականի դեկտեմբերին ժողկոմխորհն ընդունեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, որը հրապարակվեց Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի ստորագրությամբ։ Դա պատմական մեծ նշանակություն ունեցող փաստաթուղթ էր, որով նորաստեղծ սովետական կառավարությունն իրավաբանորեն ճանաչում էր հայ ժողովրդի արևմտյան հատվածի օրինական իրավունքներն իր հայրենիքի՝ Արևմտահայաստանի նկատմամբ։ Սովետական կառավարությունը նաև երաշխիքներ էր տալիս հայ ժողովրդի իրավունքներն Արևմտահայաստանի ողջ տարածքի վրա իրականացնելու համար։ Սակայն այդ դեկրետը, որը վճռորոշ նշանակություն պետք է ունենար արևմտահայ ժողովրդի հետագա բախտի համար, այնպես էլ չիրագործվեց կյանքում։ 1918 թվականը, համաշխարհային պատերազմի վերջին տարին, նոր աղետներ բերեց բազմաչարչար հայ ժողովրդին։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը հսկայական ազդեցություն էր գործել միջազգային իրադրության վրա ընդհանրապես, Մերձավոր արևելքի իրավիճակի վրա՝ մասնավորապես։ Սովետական նորաստեղծ կառավարությունը բոլոր պատերազմող կողմերին արյունահեղությունը դադարեցնելու կոչ արեց, չեղյալ համարեց այլ երկրների հետ ցարական կառավարության կնքած անիրավահավասար պայմանագրերը, հայտարարեց իր հարևանների հետ հաշտ ու խաղաղ ապրելու, մասնավորապես Թուրքիայի հետ հաշտություն կնքելու պատրաստակամության մասին։

Ստեղծված նոր իրադրությունը Թուրքիայի համար չափազանց բարենպաստ էր։ Նա կարող էր պատերազմից դուրս գալ և իր համար ձեռնտու պայմաններով հաշտության բանակցություններ սկսել Սովետական Ռուսաստանի հետ։ Բայց Թուրքական կառավարող շրջանները չկարողացան, ավելի ճիշտ՝ չցանկացան օգտվել պատմության ընձեռած այդ բացառիկ հնարավորությունից։

Սովետական հանրապետության համար ստեղծված դժվա-

---

[1] Տե՛ս «Документы внешней политики СССР», том I, Политиздат, Москва, 1957, էջ 34—35։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 34—35։

ին կացությունը թևավորեց իթթիհադական կառավարող կլիկին, որը շարունակում էր հավատարիմ մնալ գերմանական իմպերիալիզմի հետ կնքած դաշինքին։ Միջազգային կացությունը, մասնավորապես Անդրկովկասի խառն իրավիճակը երիտթուրքերը շատ նպաստավոր համարեցին նորանոր արկածախնդրական քայլեր կատարելու համար։

Թուրքական զավթիչներին հատկապես ոգեշնչում էր այն, որ Անդրկովկասի բուրժուազգայնական կուսակցությունների մեղքով ռուս զինվորները մասսայաբար թողնում էին կովկասյան ռազմաճակատը և վերադառնում հայրենիք։ «Նացիոնալիզմը և ռազմաճակատի մերկացումը» հոդվածում, որը լույս է տեսել «Բակինսկի ռաբոչի» թերթում 1917 թվականի դեկտեմբերի 17-ին, Անդրկովկասի բոլշևիկների ղեկավար Ստեփան Շահումյանը գրում էր, թե կործանարար այն կուրսը, որ վարում են Անդրկովկասի երեք խոշոր բուրժուանացիոնալիստական ուժերը՝ վրացական մենշևիկները, մուսավաթականները և դաշնակցականները, «առաջին իսկ քայլերից ամենացավալի հետևանքների է հասցնում»[1]։ Ռուս զինվորները ռազմաճակատը թողնում ու հեռանում էին այն պատճառով, որ Անդրկովկասի նացիոնալիստական կուսակցությունները երկրամասը կտրելով հեղափոխական Ռուսաստանից, ստեղծում էին ազգային զորամասեր[2], դրանք զինում ու զգեստավորում ռուս զինվորների հաշվին՝ երբեմն նրանց զինաթափելու միջոցով։ Պարզ է, որ այսպիսի պայմաններում կեսմիլիոնանոց ռուսական բանակը, որն իր Հայրենիքից կտրված երեք տարի պատերազմ էր մղում հենց Անդրկովկասի ազգությունների շահերը պաշտպանելու համար, պետք է որ վրդովվեր իրադարձությունների ընթացքից, չենթարկվեր Անդրկովկասի կոմիսարիատին և չճանաչեր նրա իշխանությունը, հեռանար Ռուսաստան և իրեն դներ Պետրոգրադի բանվորագյուղացիական կառավարության տրամադրության տակ[1]։

Ստ. Շահումյանը նշում էր, որ վրացական մենշևիկները «վայնասուն են բարձրացրել այն առթիվ, թե իբր բոլշևիկներն իրենց ագիտացիայով ռուս զինվորներին գրգռում են բնիկների դեմ և իբր թե զինվորների՝ ռազմաճակատից շարժվելը մեր ագիտացիայի հետևանքն է»[2]։ Հակահարված տալով մենշևիկներին, Շահումյանը շեշտում էր, որ բոլշևիկներն այդ վտանգի մասին Անդրկովկասի կառավարող կուսակցություններին նախազգուշացրել են դեռևս մի քանի ամիս առաջ, նկատի ունենալով, որ նրանց քաղաքականությունն անխուսափելիորեն կհանգեցնի նրան, որ թուրքերի առջև կբացվի ռազմաճակատը։ «Բանակը, ասում էինք մենք, ձեր ազգայնական քաղաքականությունից դժգոհ՝ տարերայնորեն, անկազմակերպ կերպով կհորդի ռազմաճակատից և կսրբի ու կհեղեղի ձեզ։ Այժմ այդ բոլորը արդարացավ»։ Այնուհետև նա նշում էր, որ «ներկայումս կովկասյան բանակի համար ամենահեղինակավոր ձայնը կլիներ մեր կուսակցության ձայնը, բայց մենք բոլորովին անզոր ենք կանգնեցնելու ռազմաճակատից եկող այն տարերային շարժումը, որ սկսվել է գրեթե ամեն տեղ»[3]։

Կովկասյան ճակատից ռուսական զորքերի հեռացման պայմաններում բոլշևիկները դնում էին հեղափոխական կողմնորոշմամբ զինված նոր ուժերի ստեղծման խնդիրը։ Այդ ուժերը պետք է բռնեին հեռացող ռուսական զորքերի տեղը և թուրքական ներխուժման վտանգից պաշտպանեին երկրամասը։

«Կովկասյան բանակի ետ քաշվելու առթիվ» հոդվածում Ստ. Շահումյանը 1917 թվականի դեկտեմբերին գրում էր, որ որքան էլ քիչ հավանական լինի Թուրքիայի հետ պատերազմի վերսկսումը, այնուամենայնիվ ռազմաճակատում անհրաժեշտ է անպայման ունենալ որևէ պաշտպան զորամաս։ «Եթե թուրքական բանակը չի ուզում և չի կարող պատերազմել,— նշում էր նա,— ապա բաց տեղում առաջ շարժվել նա ազատ կերպով

---

[1] Ստեփան Շահումյան, եկ, հ. 4, Երևան, 1978, էջ 56։

[2] Դեռևս 1917 թվականի կեսերին Կերենսկու հրամանով Կովկասի 4 ազգությունները՝ ռուսները, վրացիները, հայերը, ադրբեջանցիները, արտոնություն էին ստացել յուրաքանչյուրը 64 հազարանոց զորաբաժին կազմելու մասին։ Ժամանակավոր կառավարությունը խոստացել էր այդ զորամիավորումներին տրամադրել անհրաժեշտ զենք ու զինամթերք։ Կառավարությունը հույս ուներ, թե ռուսական բանակը Կովկասյան ճակատից քաշվելու դեպքում ազգային այդ զորամասերը ի վիճակի կլինեն կասեցնելու թուրքերի ներխուժումը Կովկաս։ Սակայն դրանք ոչ թե երկրամասը պաշտպանելու ուժ, այլ ազգամիջյան արյունալի կռիվների գործիք դարձան։ Ինչ վերաբերում է մուսավաթականներին ենթակա ազգային զորամասերին, ապա դրանք ուղղակի նպաստեցին թուրքերի ներխուժմանն Անդրկովկաս։

[1] Տե՛ս Ստեփան Շահումյան, եկ, հ. 4, էջ 56։

[2] Նույն տեղը, էջ 58։

[3] Նույն տեղը, էջ 57։

կարող է։ Իսկ մենք այնտեղ ունենք շատ գույք, ամրություններ ու հանդերձանք, որոնք պաշտպանության կարիք են զգում»[1]։

Շահումյանը նշում էր, որ ռազմաճակատից ռուսական բանակի անակնկալ հետ քաշվելը հատկապես «չափազանց ծանր դրություն է ստեղծում Թուրքահայաստանում։ Իմանալով իրերի դրությունն այդ դժբախտ երկրում, մենք պետք է հավատացած լինենք, որ այնտեղ մի նոր դժոխք է ստեղծվում, անմեղ խաղաղ բնակչության արյան նոր գետեր են հոսելու...»[2]

Բոլշևիկների կանխատեսությունն իրականացավ։ Երիտթուրքերը գտան, որ եկել է ժամանակը իրենց պանթուրքական և պանիսլամական նպատակներն իրականացնելու. այն է՝ զավթել Կովկասը, Ղրիմը, Անդրկովկասյան երկրամասը, Պովոլժիեն, Միջին Ասիան։ Պանթուրքական հովերով տարված էնվերը և երիտթուրքական կլիկը հույս ունեին Կովկասում համալրել մարդկային և նյութական իրենց ռեսուրսները՝ պատերազմը հաղթական ավարտին հասցնելու համար, ձեռք բերել հարուստ ավար և, որ հատկապես կարևոր էր, խոչընդոտել սովետական իշխանության աճող հեղինակության տարածմանը Թուրքիայի աշխատավորների շրջանում, ամրապնդել իրենց խարխլված դիրքերն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային ասպարեզում։

Անդրկովկասում թուրքական իմպերիալիստների զավթողական պլանների իրականացմանը նպաստում էին երկրամասի հակահեղափոխական, բուրժուազգայնական ուժերը։ Աշխատավորների դեպուտատների հեղափոխական սովետների փոխարեն այստեղ ստեղծվեցին ռեակցիոն բուրժուակալվածատիրական «ազգային խորհուրդներ»[3], որոնք փաստորեն ազգային կառավարությունների դեր էին կատարում, տենդայնորեն կազմակերպում իրենց զինված ազգային գնդերը։ Բոլշևիկները զգուշացնում էին, որ ազգայնականների հակաժողովրդական քաղաքականության հետևանքով Կովկասը և մասնավորապես Անդրկովկասը անխուսափելիորեն գլորվելու են հակահեղափոխության և ազգամիջյան պատերազմների անդունդը, դրանով իսկ հեշտացնելով թուրքական իմպերիալիստների գործը։ Նրանք գտնում էին, որ ստեղծված կացությունից դուրս գալու միակ ելքը երկրամասում սովետական իշխանության հաստատումն է։ «Բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների բոլոր սովետներին, Կովկասի բոլոր բանվորներին, զինվորներին և գյուղացիներին» ուղղված դիմումում, Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանը զգուշացնելով, որ «Կովկասը կանգնած է անդունդի եզրին», կոչ էր անում. «Փրկեցե՛ք նրան։ Ստեղծեցե՛ք այստեղ ինտերնացիոնալ բանվորագյուղացիական կառավարություն, որը Ռուսաստանի սովետական կենտրոնների և ժողովրդական կոմիսարների խորհրդի հետ սերտ միասնություն ստեղծելով՝ վերջ կդնի Կովկասի հակահեղափոխությանը և երկրի բանվոր ու գյուղացի բնակչությանը կառաջնորդի դեպի լուսավոր ապագա, դեպի սոցիալիզմի թագավորությունը»[1]։ Բայց հակահեղափոխական ուժերը գնալով համախմբվում էին, միավորում իրենց ուժերը՝ երկրամասում հեղափոխությունը խեղդելու համար։

Այդ շրջանում անդրկովկասյան հակահեղափոխության գլխավոր ուժը դարձավ ադրբեջանական բուրժուազիայի մարտընչող կուսակցությունը՝ «Մուսավաթը», որը մինչև 1917 թվականի վերջերը երկրամասի բուրժուական կուսակցություններից ամենաթույլն էր։ Ստ. Շահումյանի արտահայտությամբ, այն «մի խղճուկ, չնչին կուսակցություն»[2] էր, որը «չուներ ոչ մի կազմակերպություն, ոչ մի իշխանություն, որը ոչ մի դեր չէր խաղում հեղափոխության սկզբում»[3]։ Բայց արդեն 1918 թվականի սկզբին, նշում էր նա, «Մուսավաթը» Անդրկովկասի ամենաուժեղ քաղաքական կուսակցությունը դուրս եկավ և սկսեց վճռել երկրամասի բախտը[4]։ Կարճ ժամանակամիջոցում այդ կուսակցության ուժեղացման հիմնական պատճառները Ստ. Շահումյանի կարծիքով՝ մի կողմից վրացական մենշևիկների, Անդրկովկա-

---

[1] Ստեփան Շահումյան, երկ, հ. 4, էջ 60։

[2] Նույն տեղը, էջ 61։

[3] «Հայոց ազգային կառավարության» դեր էր ստանձնել Թիֆլիսում գործող Կովկասի Հայոց ազգային խորհուրդը, որը ստեղծվել էր Կովկասի հայոց կամավորական շարժումը ղեկավարող ազգային բյուրոյի վերակառուցման միջոցով (տե՛ս Վարդգես Անարոնեան. Անդրանիկ. մարդը և ռազմիկը, էջ 146)։

---

[1] Ստեփան Շահումյան, երկ, հ. 4, էջ 101։

[2] Ստեփան Շահումյան, երկ, հ. 5, էջ 16։

[3] Նույն տեղը, էջ 15։

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 16։

սում իշխանության գլուխ անցած ազնվականական և մանրբուրժուական կուսակցությունների դավաճանական քաղաքականությունն էր (նրանք բլոկի մեջ էին մտել «Մուսավաթի» հետ և մեծապես ուժեղացրել բեգերին ու խաներին), մյուս կողմից՝ «մուսուլմանական դեմոկրատիայի տգիտությունն ու անկազմակերպվածությունը»[1], որոնցից օգտվելով, ադրբեջանական բուրժուական նացիոնալիստները, վրացական մենշևիկների աջակցությամբ, դիմեցին մի նոր չարագործության։ 1918 թվականի հունվարի 9—12-ին մուսավաթական բազմաքանակ զինված բանդաները Ելիզավետպոլի մուսուլմանական ազգային կոմիտեի անդամների գլխավորությամբ բռնությամբ զինաթափեցին կովկասյան ճակատից Ռուսաստան մեկնող զորամասերը իրենց ազգային գնդերը զինելու նպատակով։ Թիֆլիս—Ելիզավետպոլ երկաթուղային հատվածում և հատկապես Շամխոր կայարանի շրջակայքում նրանք սպանեցին և վիրավորեցին հազարավոր ռուս զինվորների։ Մուսավաթական բանդաները խլեցին մինչև 15 հազար հրացան, 70 գնդացիր, երկու տասնյակ թնդանոթ[2] և այլն։

Տենդայնորեն զինելով ազգային զորամասերը, «Մուսավաթը» նախապատրաստվում էր մի կողմից հաշվեհարդար տեսնելու բեգերի ու կալվածատերերի դեմ ոտքի ելած ադրբեջանական աշխատավոր գյուղացիության հետ, մյուս կողմից՝ Թուրքական բանակների Անդրկովկաս ներխուժելու դեպքում նպաստելու նրանց զավթողական պլանների իրականացմանը։

Ռուսական զորամասերի զինաթափումը խստորեն դատապարտեցին բոլշևիկները։

1918 թվականի մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում կնքված պայմանագրով հաշտություն հաստատվեց ոչ միայն Գերմանիայի և Սովետական Ռուսաստանի, այլև Թուրքիայի և Ռուսաստանի միջև։ Այդ հաշտարար դաշնագիրը պետք է սկիզբ դներ նրանց միջև նոր հարաբերությունների։

Բրեստ-Լիտովսկի դաշնագրի 4-րդ հոդվածով նախկինում Ռուսաստանի կազմում գտնված Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների բնակչությանն իրավունք էր վերապահվում «հարևան պետությունների և հատկապես Թուրքիայի հետ համախորհուրդ ճշտելու նոր դրությունը»[1]։ Նշված շրջանների հետագա ճակատագիրը պետք է որոշվեր այդ շրջանների բնակչության կամքի ազատ արտահայտությամբ։

Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով դադարեցվում էին պատերազմական գործողությունները Ռուսաստանի և Թուրքիայի միջև։ Այնինչ, դաշնագիրը ստորագրելուց դեռ մեկ ամիս չանցած, մարտի վերջերին, Թուրքական բանակները պատերազմական գործողություններ սկսեցին Սովետական Ռուսաստանի դեմ։ Նրանք հրով ու սրով մտան Անդրկովկաս, դրանով իսկ ոտնահարելով ստանձնած պարտավորությունները և միջազգային իրավունքի տարրական նորմերը։ Թուրքիան դարձավ հակասովետական ինտերվենցիայի առաջին իրականացնողներից մեկը։

Թուրքական կանոնավոր զորքերը, մուսուլմանական տեղական ավազակային խմբերի հետ միասին, շուտով գրավեցին սովետական հանրապետության հողերը, այդ թվում Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները, քաղաքների ու գյուղերի քրիստոնյա բնակչությանը ենթարկելով ահավոր բռնությունների և կողոպուտների։ Գրավված վայրերում ամենուրեք հաստատվեց Թուրքական վարչություն։

Այնուհետև, իբրև «ի կատարումն» Բրեստ-Լիտովսկի դաշնագրի 4-րդ հոդվածի, օկուպանտները հաջորդ քայլն արեցին. նրանք ձեռնարկեցին հիշյալ երեք շրջանների բնակչության «ազատ կամքի արտահայտության» կազմակերպումը, այսինքն՝ հանրաքվեի անցկացումը, որը պետք է հաստատեր «նոր պետական դրություն»։

Նախքան «քվեարկության» անցկացումը, գրավված Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների բնակչությունն արդեն ենթարկվել էր ահաբեկման և մատնված էր այնպիսի մի վիճակի, որի պայմաններում նրան տրամադրված «իրավունքը» պարզապես ծաղր էր։

«Հանրաքվեի» նախօրյակին Թուրքերը ձերբակալեցին և գնդակահարեցին աչքառու այն բոլոր քաղաքացիներին, որոնք կարող էին դեմ արտահայտվել օկուպանտների կամքին։ Նման պայմաններում «հանրաքվեի» արդյունքները չէին կարող կան-

[1] Ստեփան Շահումյան. երկ, հ. 5, էջ 16։

[2] Տե՛ս Ստեփան Շահումյան. երկ, հ. 4, էջ 132։

[1] Ю. В. Ключников, А Сабанин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, часть II, с. 175.

խապես որոշված չլինել։ «Հանրաքվեին» ըստ էության մասնակցեց մուսուլման բնակչությունը, և նա էլ որոշեց մնալ Թուրքիայի կազմում։

Սովետական կառավարությունը խստորեն դատապարտեց Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը ոտնահարած թուրք զավթիչների գործողությունները և անօրինական համարեց վերոհիշյալ օկուպացված շրջաններում անցկացրած «հանրաքվեն»։ Ազդարարելով, որ Ռուսաստանից անջատված շրջանների բնակչության վրա գործադրված բռնությունն ըստ էության ոչնչացնում է դաշնագրի 4-րդ հոդվածը, սովետական կառավարությունն այդ շրջանների նոր վիճակի հարցը համարեց բաց։

Թուրքական զորքերի դեմ Կովկասյան ռազմաճակատի ամբողջ երկայնքով կռվում էին միայն հայկական ազգային զորամասերը։ Հեռանալով Ռուսաստան, ռուսական զորքերն իրենց սպառազինությունը, ռազմանյութերը, ինչպես նաև պարենի ու հանդերձանքի մի մասը հանձնեցին հայկական ազգային զորամասերին[1]։ «Ռուս սպաներ հայ վարիչներուն տեղեակ կը պահեին ռազմաճակատի կացութեան մասին և կը թելադրեին անոնց, որ ամեն ճիգ թափեն այդ գիծը հայերով լեցնելու համար»[2]։ Անհավասար արյունահեղ կռիվներ էին տեղի ունենում թուրքական կանոնավոր բանակների և հայ կամավորների միջև։ Թուրք-անդրկովկասյան պատերազմը փաստորեն վերածվեց թուրք-հայկական պատերազմի։ Հայերը դիմադրում էին համառորեն, հերոսաբար։ Ինչպես հետագայում նշել է Լյուդենդորֆը, Կովկասյան ճակատից ռուսական բանակի հեռանալուց հետո այնտեղ Թուրքիայի դեմ կռվում էին միայն հայերը, որոնք «1918 թվականի սկզբին և (հետագա) ութ ամիսներին կասեցրին Բաքվի գրավումը»[1]։

Մինչև ատամները զինված թուրքական զորքերի դեմ հայերի ինքնապաշտպանական կռիվներն ուղղված էին նաև Անդրկովկասի հակահեղափոխական ուժերի և, առաջին հերթին, մուսավաթականների դեմ, որոնք գրկաբաց և անհամբերությամբ սպասում էին իրենց «կրոնակից եղբայրներին»։ Ըստ էության այդ ինքնապաշտպանությունը մեծ աջակցություն էր նաև Բաքվի սովետական իշխանությանը։

Կովկաս ներխուժած թուրքական և գերմանական դաշնակից-զավթիչների միջև շուտով տարաձայնություններ ծագեցին։ Դրանք սրվեցին հատկապես կովկասյան տարածքների բաժանման հարցում։ Կողմերից ոչ մեկը չէր ուզում զիջել։ «Էնվերը,— գրում է Ա. Ֆ. Միլլերը,— վերածնելով իր պանթուրքական, պանիսլամական պլանները, ձգտելով գրավել ողջ Կովկասը, երազում էր նաև արշավել դեպի Վոլգա, Թուրքեստան և Հնդկաստան»[2]։ Գերմանացիները բացահայտորեն դժգոհում էին թուրքերի գործողություններից, որոնք հակասում էին Կովկասում, Թուրքեստանում, Պովոլժիեում իրենց ազդեցությունն ամրապնդելու պլաններին։ Հետագայում իր հուշերում Լյուդենդորֆը տրտունջ էր հայտնում, որ զավթելով Բաթումի նավթի պահեստները, թուրքերը նավթավարից բաժին չհանեցին իրենց։ «Մենք կարող էինք Բաքվի նավթի հետ հույս կապել այն դեպքում,— գրում էր նա,— եթե այն վերցնեինք ինքներս»[3]։ Կովկասում իրենց թուրք դաշնակցի գործելակերպի հանդեպ հետագայում դառնացած էր արտահայտվում գերմանական զինվորականության սյուներից մյուսը՝ Հինդենբուրգը։ Պանթուրքիզմն ու պանիսլամիզմը Կովկասում խոչընդոտ համարելով գերմանացիների համար, նա ուղղակի գրում էր, որ մասնավորապես պանիսլամիզմը «խոց է ռազմական տեսակետից»[4]։

---

[1] Ռուսական բանակը հայերին թողեց մոտավորապես 3 հազար թնդանոթ, 3 հազար գնդացիր, մոտ մեկ միլիոն ռումբ և շրապնել, մեկ միլիարդ փամփուշտ, 100 հազար հրացան, 100 հազար զինվորական համազգեստ, նույքան մարդու հատկացված պարեն, մասնավորապես Կարս բերդաքաղաքում եղած ցորենի հսկա ամբարները, մոտ 17 հազար ձի, մեծ թվով կառքեր, բեռնատար և մարդատար ավտոմոբիլներ, ձիու թամբեր, բենզին, հսկա հակերով կոշիկի կաշիներ, ամեն տեսակ զանազան պիտույքներ։ Բաքվի վրայով վերադարձող ռուսական զորամասերը քաղաքի պաշտպաններին թողեցին 160 թնդանոթ, 180 գնդացիր, 160 միլիոն փամփուշտ և այլն։ Բայց հայերը չկարողացան տեր կանգնել ռուսական բանակի թողած այդ հսկայական հարստությանը։ Այն, չնչին բացառությամբ, ընկավ հարձակվող թուրքերի ձեռքը (տե՛ս Ա. Միհրաեան, Ինչպես պետք է գրավել Թուրքահայաստանը (զոր. Անդրանիկի կարծիքը), Կ. Պոլիս, 1921, էջ 7—9)։

[2] Արտաշես Անդրեասեան, Ուրուագիծ հայոց պատմութեան և հայկական մշակոյթի, էջ 213։

[1] **С. Х. Карапетян,** Коммунистическая партия в борьбе за победу Октябрьской революции в Армении, Ереван, 1959, с. 113.

[2] **А. Ф. Миллер,** Краткая история Турции, с. 163.

[3] Նույն տեղը, էջ 164։

[4] Նույն տեղը։

Չնայած թուրքերի համառ ջանքերին, գերմանացիները նրանց խանգարեցին ներխուժելու Վրաստանի խորքերը։ Վրաստանը նրանք համարում էին իրենց բաժինը։ Ուստի թուրքերը գլխավոր ուժերը կենտրոնացրին Անդրկովկասի հարավ-արևելքում՝ նպատակ ունենալով գավթել Բաքվի նավթը, գրավել ողջ Ադրբեջանը։ Բաքուն գրավելուց հետո թուրքական զորքերը պետք է Կասպից ծովի ափերով առաջ շարժվեին, գավթեին Դաղստանի մի մասը, ներառյալ Պետրովսկը (այժմ՝ Մախաչկալա), Վլադիկավկազը (այժմ՝ Օրձոնիկիձե)։ Երիտթուրքական գավթիչները Բաքվի և Վլադիկավկազի վրա ձեռնարկած արշավանքը պաշտոնապես արդարացնում էին նրանով, որ անատոլիական թուրքերն իրենց սրբազան պարտքն են համարում «օգնության ձեռք մեկնել մուսուլման եղբայրներին»։ Էնվեր փաշան հայտարարում էր, թե Թուրքիան չի կարող անտարբեր դիտողի դերում մնալ, երբ տարածվում է «բոլշևիզմի վարակը», երբ «հայկական գազանություններից հանգիստ չունեն Անդրկովկասի մուսուլմանները»։

Երիտթուրքական հանցախմբի գավթողական ծրագրերը լիովին համընկնում էին ադրբեջանական բեգերի, կալվածատերերի և նավթարդյունաբերողների շահերին, մուսավաթականների քաղաքական ձգտումներին։

Թուրքական ներխուժմանը նպաստելու համար երկրամասի մուսուլմանական ազգայնամոլ կուսակցությունները, որոնք ամրացել էին Ելիզավետպոլում ու Թիֆլիսում և մենշևիկների ստոր ու վախկոտ քաղաքականության հետևանքով սանձարձակ ու ագրեսիվ էին դարձել, սկսեցին ակտիվ պայքար ծավալել Բաքվի սովետական իշխանության դեմ։ Փետրվար-մարտ ամիսներին հեղափոխական Բաքվի համար լուրջ վտանգ էր ստեղծվել։ Մուսավաթականները պատրաստվեցին քաղաքում խռովություն բարձրացնելու։ «Թուրքիայի պրոտեկտորատի՝ Ադրբեջանի ավտոնոմիայի կողմնակից բեգերը, խաներն ու աղալարները շտապեցին, քանի ուշ չէ, ջախջախել Բաքվի սովետը»[1]։

Բաքվի սովետը ջախջախելու պլանը մշակելիս մուսավաթականներն ամեն տեսակ աջակցություն էին ստանում Թուրքիայից։ Թուրքական սպաները մուսավաթականների զինված նոր հրոսակախմբեր էին կազմավորում Ադրբեջանում և այլուր,

[1] Ստեփան Շահումյան, *Երկ*, հ. 4, էջ 210։

նրանց նախապատրաստում զինված ելույթի Բաքվում։ Հենց այդ ժամանակ, ստանալով թուրքական ինտերվենտների աջակցությունը, Դաղստանի հակահեղափոխության պարագլուխ իմամ Ն. Գոցինսկին գրավեց Պետրովսկը և փակեց Բաքուն Սովետական Ռուսաստանի հետ կապող երկաթուղային ճանապարհը։

Մարտի վերջին մուսավաթականները միտումնավոր կերպով զինված ընդհարումներ առաջացրին Բաքվում։ Արյունահեղությունը կանխելու համար բոլշևիկները փորձում էին խաղաղ ճանապարհով կարգավորել կոնֆլիկտը։ Մարտի 30-ին Ն. Նարիմանովի նախագահությամբ և Ստ. Շահումյանի մասնակցությամբ տեղի ունեցավ ադրբեջանական «Հումմեթ» կոմունիստական կազմակերպության կոմիտեի նիստը, որը որոշեց բոլոր միջոցները ձեռք առնել քաղաքացիական պատերազմը կանխելու համար։ Մուսավաթականներին առաջարկվեց հեռու մնալ խռովության դիմելու փորձից։ Բայց ադրբեջանական ժողովրդի դավաճանները հենց նույն օրը ռազմական գործողություններ սկսեցին սովետական զորքերի դեմ։ Քաղաքի փողոցներում կատաղի մարտեր բռնկվեցին հեղափոխական և հակահեղափոխական ուժերի միջև։

Բոլշևիկների կողմից ղեկավարվող Բաքվի սովետի հեղափոխական ուժերին, որոնք բաղկացած էին կարմիրգվարդիական ջոկատներից և կարմիրբանակային զորամասերից, ծովից պաշտպանում էր Կասպիական ռազմական նավատորմիղը։ Բաքվի պրոլետարներից շատերը զենք վերցրին։ Ադրբեջանցի, հայ, ռուս և մյուս ազգությունների բանվորները միասին, համերաշխորեն մարտնչում էին մուսավաթական խռովարարների դեմ։

Սովետական մարտիկների առաջին շարքերում էին ադրբեջանցի կոմունիստներ Դ. Բունիաթ զադեն, Մ. Մամեդյարովը և ուրիշներ։ Ռազմական գործողությունները ղեկավարելու համար ՌԿ(բ)Կ Բաքվի կոմիտեի որոշմամբ կազմվեց Բաքու քաղաքի հեղափոխական պաշտպանության կոմիտե, ուր մտան Ստ. Շահումյանը, Ն. Նարիմանովը, Գ. Կորգանովը, Պ. Ջափարիձեն և այլոք։

Սկզբում մուսավաթականներին հաջողվեց գրավել քաղաքի զգալի մասը։ Հանկարծակի հարձակումով նրանք Սուրախանի նավթահանքային շրջանում զինաթափեցին կարմիրբանակայինների ջոկատը և հարձակում սկսեցին Սաբունչի շրջանի նավ-

թահանքերի վրա, բայց տեղացի կարմիրբանակայինների կողմից հետ շպրտվեցին։

Մարտի 31-ին սովետական զորքերը Կասպիական ռազմական նավատորմի հրետանու օժանդակությամբ վճռական հարձակման անցան, գրավեցին մի շարք թաղամասեր, կռվով վերցրին «Մետրոպոլ» հյուրանոցը և մոտեցան Բաքվի հին բերդի պատերին, ուր ամրացել էին մուսավաթականները։

Սովետական զորքերի հաջող հարձակման հետևանքով մուսավաթականների խռովությունը, որ տևեց երեք օր, ապրիլի 1-ին ճնշվեց։ Ապրիլի 2-ից սկսած Բաքվում վերականգնվում էր հեղափոխական կարգ ու կանոն։ Հակահեղափոխական խռովությունը ճնշելու շնորհիվ ամրապնդվեց սովետական իշխանությունը։ Բաքվի սովետը դարձավ քաղաքի և նրան հարող շրջանների իսկական տերը։

Բաքվի բազմազգ բանվորները ջերմորեն ողջունեցին քաղաքում հակասովետական խռովության ջախջախումը։ Շ. Ասադուլաևի ֆիրմայի բանվորները Բաքվի սովետի գործկոմին ուղղած դիմումով հավաստիացնում էին. «Մենք բոլորս, բանվորներս, մուսուլմաններս..., հենց սկզբից համախմբվելով բանվորների, գինվորների և նավաստիների դեպուտատների սովետի շուրջը..., կպաշտպանենք սովետական կարգերը մինչև արյան վերջին կաթիլը»։ «Բակինսկի ռաբոչի» թերթն այդ առթիվ գրում էր. «Բանվորները՝ մուսուլմանները, հայերը, ռուսները, այդ օրերին ներկայացնում էին միասնական եղբայրական ընտանիք։ Մենք դա նշում ենք որպես հսկայական կարևորություն ունեցող փաստ։ Մենք դա համարում ենք Կովկասում բանվորական շարժման մեծագույն հաղթանակ»[1]։

Հակահեղափոխական խռովության ջախջախումը խափանեց մուսավաթական գործակալության օգնությամբ Բաքվին տիրելու թուրքական ինտերվենտների առաջին փորձը։ Անդրադառնալով մարտյան իրադարձությունների արդյունքներին և մերկացնելով մուսավաթականների դիվային նպատակները Ստ. Շահումյանը նշում էր, որ «եթե նրանք հաղթանակեին Բաքվում, քաղաքը կհայտարարվեր Ադրբեջանի մայրաքաղաք, բոլոր ոչ մուսուլմանական տարրերը գինաթափ կարվեին ու կկոտորվեին։ Մուսուլմանական հակահեղափոխականները դրության տերը կդառնային ամբողջ Անդրկովկասում։ Եթե նկատի ունենանք նրանց քաղաքական նպատակները՝ Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից և ենթարկումը թուրքական հովանավորությանը, պարզ է, որ նրանց հաղթանակը Բաքվում կտաներ դեպի Անդրկովկասի կորուստը Ռուսաստանի համար»[1]։

Մուսավաթականների այդ խռովության իսկական պատճառները բացահայտված են Բաքվի պաշտպանության հեղափոխական կոմիտեի ապրիլի 6-ի դիմումում, որտեղ մասնավորապես ասված է. ««Մուսավաթ» կուսակցությունը հանդիսանում է ոչ միայն բեգերի կուսակցություն։ Դա մի կուսակցություն է, որը ցանկանում էր և ցանկանում է Կովկասը, ողջ գյուղացիական Կովկասը, կալվածատիրական, ֆեոդալական Թուրքիայի համար կեր դարձնել... «Մուսավաթի» հաղթանակն անխուսափելիորեն հող կնախապատրաստեր Թուրքիայի համար։ Թուրքական զորքերը գործում են Կովկասյան ռազմաճակատում, իսկ «Մուսավաթը»՝ թիկունքում։ Բաքուն Կովկասյան ռազմաճակատի թիկունքն է։ Բաքուն Ռուսաստանից կտրել՝ նշանակում է Կովկասը կտրել ողջ հեղափոխական Ռուսաստանից։ Գրավելով թիկունքը, մուսավաթականները դրանով իսկ անջատում են Կովկասը բանվորագյուղացիական Ռուսաստանից...»[2]

Մուսավաթականների կողմից Բաքվի գրավումը նաև պետք է հեշտացներ Թուրքիայի առաջխաղացումը դեպի Թուրան։

Խռովությունը ճնշելուց հետո Բաքվի պրոլետարիատին վիճակված էր նոր մարտեր մղելու կովկասյան հակահեղափոխության և թուրքական ինտերվենտների միացյալ ուժերի դեմ։ 1918 թվականի ապրիլին վրացական մենշևիկների, մուսավաթականների, դաղստանյան ազգայնականների զինված ուժերը և պարսկական շախսեվանների ավազակախմբերը երեք ուղղություններով համատեղ հարձակման անցան Բաքվի դեմ։

Բոլշևիկները մեծ աշխատանք էին տանում Ադրբեջանի գավառներում։ Ապրիլ-մայիս ամիսներին սովետական իշխանություն հռչակվեց Լենքորանի, Ջեվաթի և Ղուբայի գավառներում, Շեմախա քաղաքում, Սալյանում։ Սովետական իշխանության հաստատմանը և նրա մարմինների ստեղծմանը եռանդով մաս-

[1] «Бакинский рабочий», 12 апреля 1918 г.

[1] Ստեփան Շահումյան, եկ. հ. 4, էջ 201։

[2] «Бюллетень Комитета революционной обороны г. Баку и его районов», № 3, 6 апреля 1918 г.

նակցում էին ադրբեջանական ժողովրդի լավագույն զավակներ Մ. Ազիզբեկովը, Մ. Մամեդյարովը, Բ. Էֆենդիևը, Դ. Բունիաթ զադեն և ուրիշներ։ Բաքվի սովետի գործադիր կոմիտեի որոշմամբ Մ. Ազիզբեկովը նշանակվեց Բաքվի նահանգի նահանգային կոմիսար, Մ. Իսրաֆիլբեկովը՝ Ջևաթի և Լենքորանի գավառների արտակարգ կոմիսար, Ա. Յուսուֆ զադեն՝ Քուբայի գավառի կոմիսար։ Ադրբեջանցի բոլշևիկներ Կ. Աղասիևը, Ա. Իսմայիլովը, Գ. Թազի զադեն Բաքվի կուսակցական կազմակերպության հանձնարարությամբ մեծ աշխատանք էին տանում Դաղստանում՝ կազմակերպելով մուսուլման աշխատավորների պայքարը սովետական իշխանության համար։

Բնութագրելով Բաքվի բոլշևիկների և պրոլետարիատի անձնազոհ պայքարը, նրանց ավանգարդ դերն Անդրկովկասի աշխատավոր մասսաների մեջ, Ի. Վ. Ստալինը 1918 թվականի մայիսին «Պրավդայի» էջերում գրում էր. «Բաքուն՝ Անդրկովկասում սովետական իշխանության հենարանը, իր շուրջը համախմբելով ամբողջ Արևելյան Անդրկովկասը, Լենքորանից և Քուբայից մինչև Ելիզավետպոլ, զենքը ձեռքին հաստատում է Անդրկովկասի ժողովուրդների իրավունքները, որոնք ամբողջ ուժով ձգտում են պահպանել կապը Սովետական Ռուսաստանի հետ»[1]։

Պարտություն կրելով սովետական զորքերից, ադրբեջանական հակահեղափոխական ուժերը, «Մուսավաթ» կուսակցության ղեկավարությունը, պանթուրքիզմի և պանիսլամիզմի ադրբեջանցի պարագլուխները ապաստանեցին Գյանջայում (Ելիզավետպոլ)։ Այստեղ «մուսուլմանական ինքնավարության» հիմքերն էին դնում Ռասուլզադեն, Աշուրովը, Թազիևը, Խասմամեդովը, Խան-Խոյսկին, Նազիևը, Մելիք-Ասլանովը, Սաֆիքյուրդսկին, Աղա Բալա Ղուլիևը, Արդուլաևը, Ջիաթխանովը և ադրբեջանական ժողովրդի մյուս թշնամիները, որոնք աներևակայելի վայնասուն բարձրացնելով հայերի և բոլշևիկների երևակայական «գաղանությունների» առթիվ, երկրամասում սերմանում էին ազգային թշնամություն, մուսուլմաններին գրգռում հայերի դեմ, նրանց եղբայրասպան կռիվների մղում։ Միաժամանակ Բաքվի սովետական իշխանությունը տապալելու, քաղաքում և նահանգում նախկին շահագործողական կարգերը վերականգնելու նպատակով մուսավաթական պարագլուխները, ադրբեջանական բեկերն ու խաները աղեկտուր աղաղակով պանիսլամիզմի և պանթուրքիզմի լոզունգներով օգնության էին կանչում թուրքական միլիտարիստներին՝ նրանց հետ միասին շարժվելու Բաքվի վրա և համատեղ ուժերով արյան մեջ խեղդելու Անդրկովկասում առաջին սովետական իշխանությունը[1]։ Մուսուլմանական ֆեոդալական խառնախումբը գտնում էր, որ սեյմը չի ներկայացնում իր շահերը, ուստի ուղղակի պահանջում էր Թուրքիային միացնել Անդրկովկասի մուսուլմանական մարզերը։ Սեյմում մուսավաթականների ֆրակցիայի ներկայացուցիչ Ռուստամբեկովը հայտարարում էր, որ մուսուլմանական դեմոկրատիան կրոնական պատճառներով չի կարող «ակտիվ մասնակցություն ունենալ Թուրքիայի դեմ ուղղված մարտական գործողություններին»[2]։ Մուսավաթական մյուս պարագլուխ Ուսուբբեկովը սեյմում ասում էր. «Անդրկովկասի ողջ տարածքում անարխիան այնպիսի վիթխարի չափեր է ընդունել, որ այլևս անհնարին է այն ճնշել մեր սեփական ուժերով. դրությունն է՛լ ավելի է վատթարանում նրանով, որ արևելքից (այսինքն՝ Բաքվից։— Հ. Ս.) հարձակվում են բոլշևիկները՝ դաշնակցած մեր դարավոր թշնամիների (հայերի։— Հ. Ս.) հետ, իրենց հետ ավերածություն ու վերջնական կործանում բերելով թյուրք ժողովրդին։ Իրերի այդպիսի դրության մեջ, մեր այդպիսի անօգնականության պայմաններում մենք ուրիշ ելք չունենք, քան դիմել օտարերկրյա միջամտությանը...» «Մեզ համար բարեկամական ու եղբայրական այդ ուժը Թուրքիան է։ Եկել է ժամանակը, երբ մեր պատվիրակությունը պետք է գնա Բաթում և Արևելյան Անդրկովկասի թյուրքերի անունից օգնություն խնդրի Օսմանյան կայսրությունից»[3]։ 1918 թվականի մայիսի 6-ին մուսուլմանական պատգամավորությունը Անդրկովկասյան սեյմի կառավարությանը նորից հայտարարեց, որ ստիպված է պաշտոնապես դիմելու Թուրքիային՝ Բաքվի և Շամախիի շրջանների մուսուլմաններին փրկելու համար[4]։

---

[1] Ի. Վ. Ստալին, *Երկեր*, հ. 4, էջ 96։

[1] Տե՛ս Ն. Նարիմանովի *1920 թ. հունվարին գրած բաց նամակը Ն. Ուսուբբեկովին*, «Коммунист» (Баку), 17 мая 1920. № 13.

[2] Ставровский, Закавказье после Октября. 1925, с. 27.

[3] *Նույն տեղը, էջ 50—51։*

[4] Տե՛ս Ստեփան Շահումյան. *Երկ.*, հ. 4, էջ 214։

Բաքվի և Անդրկովկասի հայ, ռուս, վրացի, ադրբեջանցի բոլշևիկները հայ և ադրբեջանցի ժողովուրդների համերաշխության ու եղբայրության կոչերով հսկայակուն աշխատանք էին տանում երկրամասում ազգամիջյան նոր կոտորածներ թույլ չտալու համար։ Նրանք հատկապես կարևոր նշանակություն էին տալիս մուսուլմանական մասսաների մեջ տարվող բացատրական աշխատանքին։

Այդ տագնապալի օրերին դիմելով մուսուլման գյուղացիությանը, Բաքվի կոմունայի առաջնորդ Ստ. Շահումյանն ասում էր. «Դուք չպետք է հավատաք իմամին, որը ձեզ կոչ է անելու պաշտպանելու ձեր ազգությունը, ձեր կրոնը, նա այդ անելու է հանուն ոչ ձեր շահերի, այլ հանուն բեգերի ու խաների շահերի։ Դուք պետք է միավորվեք բանվորների ու հայ գյուղացիների հետ՝ սովետական իշխանությունը պաշտպանելու համար։ Որպես միասնական ընտանիք, որպես միասնական բանակ, դուք պետք է զինված ուժերով պաշտպանեք բանվորագյուղացիական կառավարությունը բեգերից ու խաներից և նրանց պաշտպան Թուրքիայից»[1]։

Ադրբեջանական խաներին ու բեգերին «օգնության» շտապող թուրքական բանակների դեմ շարունակում էին հերոսաբար կռվել զենքի դիմած հայ գյուղացիները, կամավորական երկրապահ զորամասերը։ Բայց ուժերն անհավասար էին։ Կոտրելով հայերի համառ դիմադրությունը, թուրքական զորքերը գրավեցին նորանոր տերիտորիաներ։ Վրացական մենշևիկների պարագլուխների դավաճանական քաղաքականության հետևանքով համարյա առանց կռվի հանձնվեց Կարսի անառիկ ամրոցը։ Ապա մեկը մյուսի հետևից ընկան Արդահանը, Ալեքսանդրապոլը և այլ քաղաքներ։ Արևելյան Հայաստան ներխուժած թուրքական բռնադատիչները նպատակ էին դրել բնաջնջելու նաև հայ ժողովրդի արևելյան հատվածը։ Նրանք գրավված բոլոր վայրերում նոր արյունահեղություններ սարքեցին։

Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում թուրքերի հեշտ առաջխաղացման հիմնական մեղքն ընկնում էր Անդրկովկասյան սեյմի հակահեղափոխական կառավարության, հակազգային դաշնակցության վրա, որոնք այդ կառավարության մեջ դարձել էին վրացական մենշևիկների և մուսավաթականների կամակատարը։ Իրենց հակասովետական դավաճանական քաղաքականությամբ դաշնակցականները փաստորեն ջուր էին լցնում թուրքական իմպերիալիստների ջրաղացին, նպաստում նրանց զենքի հաջողությանը։ «Այն կրիտիկական դրությունը, —ասում էր Ստ. Շահումյանը,— որի մեջ դրվել են հայ մասսաները, դրդում է հայ գյուղացիներին զենքը ձեռքին դուրս գալ ու տապալել իրենց անամոթ ղեկավարներին, դաշնակցականներին, որոնք խայտառակ կերպով դավաճանել են նրանց»[1]։ Նրա կարծիքով «օբյեկտիվ պայմաններն այնպես են դասավորվել, որ Անդրկովկասում կար հսկայական զինված ուժ, որը պատրաստ էր դուրս գալու թույլ Թուրքիայի դեմ»[2]։ Վերջինս հենց դաշնակցականների հետախուզության տվյալների համաձայն, ամբողջ ռազմաճակատում՝ սկսած Սև ծովից մինչև Պարսկաստան ուներ ընդամենը 18—20 հազար հոգնած, կազմալուծված զորք[3]։ Շահումյանը նշում էր, որ միայն հայկական ուժերը բավական էին թուրքերի առաջխաղացումը կանգնեցնելու համար։ Դաշնակցականների տրամադրության տակ կար 30 000 հայ ճակատային զինվոր։ «Այդ ուժով հրաշքներ կարելի էր գործել։ Ես էլ չեմ խոսում զինված գյուղացիության հսկայական մասսայի մասին, որը մենակ կարող էր հաշիվ տեսնել թե՛ թուրքերի և թե՛ Անդրկովկասի բոլոր հակահեղափոխական ուժերի հետ»[4]։ Զայրույթով դիմելով դաշնակցական պարագլուխներին, Շահումյանն ասում էր, որ «դուք մենշևիկների ու մուսավաթականների հետ կազմալուծեցիք զորքերի շարքերը, ոչ թե այն զորքերի, որոնք երեք տարվա պատերազմից հետո ծարավի են հաշտության, այլ այն հայկական զորքերի, որոնք պատրաստ էին մեռնել և պահել իրենց երկիրը։ Դուք այլասերեցիք այդ զորքերը,— ահա որն է ձեր մեղքը, ահա որն է ձեր ոճրագործությունը»[5]։ Նա նշում էր, որ «եթե հայ գյուղացիների գլուխ անցած լինեին ոչ թե Չխենկելիից ու Ժորդանիայից ոչնչով չտարբերվող դավաճաններ, այլ իսկական հե-

[1] Ստեփան Շահումյան. *Երկ*, հ. 4, էջ 214։

[1] Ստեփան Շահումյան, *Երկ*, հ. 5, էջ 26։
[2] Նույն տեղը, էջ 30։
[3] Տե՛ս նույն տեղը, էջ 36։
[4] Նույն տեղը, էջ 26։
[5] Նույն տեղը, էջ 30։

դափոխականներ, ապա ժողովուրդը նման խայտառակ վիճակի չէր հասնի»[1]։

Օսմանյան կառավարողների ճնշման տակ Բաթումում սկսած բանակցությունները, այդ բանակցությունների ընթացքում անդրկովկասյան հակահեղափոխական իշխանությունների պատվիրակությունների բռնած բացահայտ կապիտուլյանտական դիրքը լիովին մերկացրին երկրամասի բուրժուազգայնական կուսակցությունների դեմքը։ Թուրքական զավթիչները բավարարված չէին, որ ռազմակալել են Հայաստանի ընդարձակ շրջանները, քանի որ նրանց հիմնական խնդիրը Բաքվի գրավումն էր։ Ուստի բանակցությունների ժամանակ առաջին հերթին եռանդուն քննարկվում էր այն հարցը, թե ինչպես վարվել Բաքու քաղաքի հետ, թե զորքերն ինչպես շարժել Բաքվի դեմ, որպեսզի իրենց ձեռքը վերցնեն Անդրկովկասը[2] և այնտեղից թափանցեն Թուրան։ Որպեսզի հեշտացնեն իրենց գործը, թուրքական իմպերիալիստներն Անդրկովկասյան սեյմին առաջարկեցին երկրամասն անկախ հայտարարել։ Նույնը պահանջեց նաև «Մուսավաթը»։ Թուրքերի ու մուսավաթականների ճնշման տակ այդ ծանր օրերին սեյմը գնաց բացահայտ դավաճանության։ 1918 թվականի ապրիլի 22-ին սեյմը որոշում ընդունեց Անդրկովկասը «անկախ» հայտարարել Ռուսաստանից։ Դա չափազանց ծանր հետևանքներ ունեցավ երկրամասի ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի համար։ Հմտորեն օգտագործելով այդ քայլը, թուրք ագրեսորներն անտեսում էին Բրեստի պայմանագիրը, անպատկառորեն հայտարարելով, թե այժմ «Անդրկովկասն անկախ է»։

Իրենց սոցիալիստ անվանող մենշևիկները, զայրույթով նշում էր Ստ. Շահումյանը, փոխանակ իրենց բեգերի դեմ ապստամբած մուսուլման գյուղացիների հետ կապվելու, գործարքի մեջ մտան հենց այդ բեգերի հետ, զինեցին, ուժեղացրին նրանց և նրանց հետ միասին դավաճանեցին ու Անդրկովկասը վաճառեցին թուրք փաշաներին[3]։ Հայ ժողովուրդը նորից միայնակ մնաց թուրքական իմպերիալիզմի դեմ։ Այդ պահին դրված էր արդեն ոչ թե ինքնավար Հայաստանի, այլ հայ բնակչության մնացորդների ֆիզիկական գոյության հարցը։ Թվում էր, թե անդրկովկասյան «դեմոկրատական», «հանրապետական» կառավարությունն ինչ-որ միջոցների կդիմի մի ամբողջ ազգի կործանումը կանխելու համար։ Բայց զուր... Թուրքիայի ուժի դիմաց կանգնած էր անդրկովկասյան կառավարության անզորությունը[1]։ Վրաց մենշևիկները փորձում էին իրենց սեփական մորթին փրկել և իրենց «ազգային գործերը» կարգավորել Հայաստանի հաշվին։ Մուսավաթականները, որքան ներում էին իրենց հնարավորությունները, հարվածում էին հայության թիկունքին՝ թուրքերի գործը հեշտացնելու, նրանց կողմից Անդրկովկասը հնարավորին չափ շուտ օկուպացնելու նպատակով, իսկ «հայ դիվանագետները, որոնք լողում էին անդեկ ու անառագաստ, սպասում էին սեփական ազգի կործանմանը...»[2]

Իրենց պարագլուխների դավաճանական վարքագիծը զայրույթով դատապարտում էին նաև շարքային դաշնակցականներից, մտավորականներից, գործիչներից շատերը։ Վանեցի դաշնակցական մտավորականների մի խումբ 1917 թվականի մայիսից Երևանում լույս տեսնող «Աշխատանք» թերթում գրում էր. «Միակ օգնությունը, որ կարող էր հասցնել Անդրկովկասին, միակ օժանդակող ձեռքը, որ պիտի երկարեր մեզ շնչահեղձությունն փրկելու համար, ատիկա որքան քայքայված, բայց դեռ ապրող Ռուսաստանն էր հանձինս բոլշևիկներու, բայց եկուր տես, որ մեր խելոքները այդ դուռն ալ փակեցին Կովկասը անկախ հայտարարելով..., առանց կշռադատելու, թե որպիսի ծանր և տխուր հետևանքներ կունենա ատիկա»[3]։

Այդ ամենը խոր վրդովմունք առաջ բերեց երկրամասի աշխատավորների մեջ։ Իր հերթին ադրբեջանական աշխատավոր մասսաները, հատկապես աշխատավոր գյուղացիությունը գնալով համոզվում էին «Մուսավաթի» հակաազգային քաղաքականության մեջ, սկսում սթափվել և ըմբռնել, որ «թուրքերին հրավիրած բեգերը կվերականգնեն բոլոր հին կարգերը, որ զավթողական քաղաքականությունից կտուժի մուսուլմանական բնակչությունը»[4]։ Իսկ հեղափոխական Բաքուն, որը չէր ճանա-

[1] Ստեփան Շահումյան, երկ, հ. 5, էջ 26։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 17—18։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 46։

[1] Տե՛ս Б. А. Борьян, Армения, международная дипломатия и СССР, часть II, էջ 47—48։

[2] Նույն տեղը, էջ 47։

[3] «Աշխատանք», 14 ապրիլի 1918 թ.։

[4] Ստեփան Շահումյան, երկ, հ. 5, էջ 46։

չում Անդրկովկասի սեյմի իշխանությունը, բարձր պահած սովետական իշխանության դրոշը, մերժեց նաև Անդրկովկասի «անկախությունը»։

Դատապարտելով Թուրքերի ներխուժումը Հայաստան, 1918 թվականի մայիսի 15-ին Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Վ. Չիչերինը կառավարության անունից բողոքի հայտարարություն արեց այն բանի դեմ, որ Անդրկովկասի հակահեղափոխական կուսակցությունների ներկայացուցիչները Բաթումում բանակցություններ են վարում Թուրքերի հետ և նրանց հետ կնքել են ստորացուցիչ պայմանագիր, որն առաջին հերթին ուղղված էր Անդրկովկասի աշխատավոր մասսաների բուն կենսական շահերի դեմ։ ՌՍՖՍՀ կառավարությունը, ասված էր այդ հայտարարության մեջ, «առանց իր մասնակցության կնքած պայմանագիրը» համարում է անօրինական և այն չի ճանաչի[1]։

Արևելյան Հայաստանի գրավված վայրերում Թուրքական զորքերը, հատկապես նրանց հետ գործող տեղական մուսուլմանների անկանոն ջոկատները և մուսավաթական ղոչիներն ահավոր ավերածություններ էին գործում, կազմակերպում մասսայական սպանություններ, կողոպուտներ և ամեն տեսակ անկարգություններ հայ խաղաղ բնակչության նկատմամբ։ Հազարավոր հայեր, գլխավորապես զորակոչային տարիքի, հարկադիր աշխատանքի էին քշվում Թուրքիա, որտեղ նրանք մեռնում էին սովից, գանակոծություններից, ուժից վեր աշխատանքից։ Շտապ կարգով Թուրքիա էին ուղարկվում համբարակային մեծ պաշարներ։ Ռազմավարի անվան տակ տարվում էր սպանված հայերից, հույներից և ասորիներից թալանված «անտեր» գույքը։

Թուրքական հրոսակների վայրագություններից խույս տալով, 1918 թվականին ավելի քան 500 հազար կովկասահայեր թողեցին իրենց բնակավայրերը և հեռացան Ռուսաստան։ Հայ գաղթականների մեծ զանգվածներ ապաստանեցին Հյուսիսային Կովկասում, Ղրիմի քաղաքներում, Դոնի ավազանում, Մերձվոլգյան տափաստաններում, Միջին Ասիայում և այլուր։ Գաղթական հայերի դժբախտ քարավանների ծայրը հասել էր մինչև Չինաստան։

[1] Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923)», էջ 435։

Օրհասական այդ պահին հայ ժողովուրդը, այնուամենայնիվ, կարողացավ համախմբել իր վերջին ուժերը։ 1918 թվականի մայիսին Սարդարապատի հերոսական ճակատամարտում Թուրքերը պարտվեցին և հետ շպրտվեցին։ Նրանք մեծ կորուստներ տվեցին նաև Բաշ-Ապարանի կռիվներում և Համամլուից Ղարաքիլիսա ընկած տարածքում։ Գնահատելով Ղարաքիլիսայի մոտ կռվող հայկական ժողովրդական ջոկատների հերոսությունը, այն ժամանակվա Կովկասյան ռազմաճակատի Թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Մեհմեդ Վեհիբ փաշան մատնանշում էր. «Դա մի հազվագյուտ մարտ էր այդ պատերազմի պատմության մեջ... Ղարաքիլիսայի մոտ հայերը ցույց տվեցին, որ կարող են լինել լավագույն զինվորները աշխարհում»[1]։ Իսկ Ջուլֆայից Արաքս գետով և Մուղանի վրայով դեպի Բաքու շտապող Թուրքական մեծաքանակ զորքերը, հանդիպելով զանգեզուրցիների հերոսական դիմադրությանը, գամվեցին Նախիջևանի հարթավայրում։

Բայց այդ օրերին «ազգի ճակատագիրը» տնօրինող դաշնակցականները ստեղծված բարենպաստ իրադրությունից օգտվելու, հայկական զինված, փոքրաթիվ ուժերը համախմբելու և Թուրքերին հակահարված տալու փոխարեն, նորից վերհիշեցին տվյալ ժամանակաշրջանում միայն զրկանքներ պատճառող անկախության գաղափարը։ «Անկախություն». ահա դաշնակցություն կուսակցության պարագլուխների գերագույն նպատակներից մեկը, թեկուզ դա իրականացվեր Հայաստանի տարածքների նոր կորուստներով, հայության նոր սպանդներով։ Այդ «գերագույն» իդեալի իրականացման համար նրանք պատրաստ էին լիզելու Թուրքերի գարշապարը։ Դաշնակցության պարագլուխները շոյված էին նրանով, որ մենշևիկների և մուսավաթականների հետ միասին Թուրքիան իրենց նույնպես բանակցելու համար Բաթում է կանչել։

Սեյմի միջոցով Անդրկովկասը Ռուսաստանից «անկախ» հայտարարելուց հետո Թուրքերը հաջորդ քայլն արեցին. նրանց ճնշման տակ և մուսավաթականների համառ պահանջով սեյմը ցրվեց և երկրամասը բաժան-բաժան արվեց։ Օգտվելով Վրաստանի «ինքնավարությունը» հովանավորության տակ վերցնե-

[1] Е. Ф. Лудшувейт, Турция в годы первой мировой войны 1914—1918 г., с. 188.

լու մասին գերմանական իմպերիալիստների հավաստիացումներից և Թուրքերի համաձայնությունից, 1918 թվականի մայիսի 26-ին վրացական մենշևիկները Վրաստանը հայտարարեցին «անկախ հանրապետություն»։ «Վրաստանի անկախության հայտարարումը,— նշում էր Ստ. Շահումյանը,— վկայում է մենշևիկների նոր ոճրագործության մասին։ Դա հեղափոխական ելք չէ ստեղծված դրությունից։ Դա դավաճանության մի նոր փորձ է Վրաստանի հարևան հայ ժողովրդի հանդեպ, աներևակայելի, անամոթ դավաճանություն։ Նրանք ծանր վիճակ ստեղծեցին Անդրկովկասում ու այժմ լվանում են իրենց ձեռքերը»[1]։ Անդրադառնալով այդ հակահեղափոխական ակտի հնարավոր հետևանքներին, Ստ. Շահումյանն այնուհետև ասում էր. «Մինչդեռ դավաճան Ջխենկելին և ընկ. երևակայում են, թե իրենք փրկեցին Վրաստանը, ամբողջ մնացյալ Անդրկովկասի համար մնում է հետևյալը. կամ ամբողջ Հայաստանի միացումը Թուրքիային, մնացած մասն ինքնավար Ադրբեջան հայտարարելով, կամ Էնվեր-փաշայի ծրագիրը, ըստ որի Թուրքիան օկուպացիայի է ենթարկելու ամբողջ Անդրկովկասը»[2]։ Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ տարբերակը ձեռնտու էր «Մուսավաթին», որը մայիսի 27-ին «անկախ» հայտարարեց Ադրբեջանը, որի կենտրոնը մինչև Բաքվի գրավումը պետք է լիներ Գյանջան (Ելիզավետպոլ)։ Դատապարտելով մուսավաթականների հակաժողովրդական քաղաքականությունը, այդ օրերին «Известия ВЦИК» թերթը գրեց. «Իրականում ովքեր են այդ «մուսավաթականները», եթե ոչ Թուրքիայի էմիսարները, որոնք ձգտել և ձգտում են իրենց լատիֆունդիաները միավորել ֆեոդալական Թուրքիային»[3]։

Հետևելով վրացական մենշևիկների և մուսավաթականների օրինակին, 1918 թվականի մայիսի 28-ին դաշնակցականները Երևանի նահանգի մի մասը «անկախ Հայաստան» հայտարարեցին։ Դա Թուրքերի գեհենային մտահղացումն էր հենց։ Վրացական և ադրբեջանական ազգայնականների հետ դաշնակցականների դասակարգային համերաշխությունը շատ թանկ նստեց հայ

[1] Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հ. 5, էջ 22։

[2] Նույն տեղը, էջ 23։

[3] Մեջբերումը ըստ А. Е. Токаржевский, Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане, Баку, 1957, с. 84:

ժողովրդին։ Այդ դավաճանական ակտից հետո Անդրկովկասի հակահեղափոխական կառավարությունները Բաթումում համաձայնագրեր կնքեցին Թուրքիայի հետ։

Իբրև Վրաստանի «անկախության» ճանաչման վարձատրություն, Թուրքերը խլեցին Ախալցխայի և Ախալքալակի գավառները։ Բաթումի պայմանագրով Թուրքիան ճանաչեց նաև «Արարատյան հանրապետության» «անկախությունը»։ Բայց ի՞նչ գնով։ Իբրև Հայաստանի «անկախության» ճանաչման վարձատրություն նրանից խլվեցին Կարսի, Արդահանի, Կաղզվանի և Օլթիի շրջանները, Երևանի նահանգից՝ Սուրմալուի գավառը, Ալեքսանդրապոլ քաղաքը և Ալեքսանդրապոլի ու էջմիածնի գավառների երեք քառորդը, Երևանի գավառի կեսը, Շարուր-Դարալագյազի գավառի մեկ հինգերորդը[1]։ Դաշնակ «քաղաքագետների» աղիողորմ խնդրանքներից հետո Թուրքերը համաձայնություն տվեցին «անկախ Հայաստանին» զիջել Համամլու—Երևան խճուղին, սահմանն անցկացնելով Արագած լեռան գագաթով, ուղիղ իջնելով էջմիածնի վրա[2]։ Այլ խոսքով, Բաթումի միակողմանի դաշնագրով Թուրքերը Ռուսահայաստանից խլեցին 28 հազ. քառ. կմ հողատարածություն[3], որի բնակչության միայն 30%-ն էին Թուրքեր և ադրբեջանցիներ[4]։ «Արարատյան հանրապետությունը» ամփոփվեց ընդամենը 9 հազար քառ. կիլոմետր տարածության մեջ։ Իսկ ադրբեջանական մուսավաթականները Թուրքերին հուշում էին հայերից նոր տերիտորիաներ վերցնել, իբրև բուն մուսուլմանական տերիտորիաներ։ Մասնավորապես Բաթումի խորհրդաժողովում ադրբեջանցի պատվիրակները պնդում էին, թե Երևանն իր բնակչությամբ ու պատմությամբ ադրբեջանական քաղաք է, ուստի պահանջեցին այն կցել Ադրբեջանին, իսկ Հայաստանի հանրապետության մայրաքաղաքը, ըստ նրանց, պետք է լիներ էջմիածին գյուղը (նախկին Վաղարշապատը)։

[1] Տե՛ս Ա. Մ. Պողոսյան. Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կարսի մարզում, 1878—1920, Երևան, 1961, էջ 307։

[2] Տե՛ս Ալ. Խատիսեան. Հայաստանի հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բ. տպագրութիւն, Պեյրութ, 1968, էջ 87։

[3] Տե՛ս Ա. Մ. Պողոսյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կարսի մարզում, 1878—1920, էջ 303։

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 307։

Հայկական պատվիրակությանը ցույց տալով «Արարատյան հանրապետության» իրենց կազմած քարտեզը, որտեղ, այնուամենայնիվ, Երևանը «մեծահոգաբար» թողնված էր այդ «հանրապետության» սահմաններում, թուրքական պատվիրակության անդամ, բանակի հրամանատար Վեհիբ փաշան ասաց. «Դուք տեսնում եք, որ ճակատագիրը թուրքիային արևմուտքից քշում է արևելք։ Մենք հեռացանք Բալկաններից, հեռանում ենք նաև Աֆրիկայից, բայց պետք է տարածվենք դեպի արևելք։ Այնտեղ է մեր արյունը, մեր կրոնը և լեզուն։ Եվ դա տարերային ձգողություն է։ Մեր եղբայրները Բաքվում, Դաղըստանում, Թուրքեստանում և Ադրբեջանում են։ Մենք պետք է ճամփա ունենանք դեպի այնտեղ։ Եվ դուք՝ հայերդ, կանգնած եք մեր այդ ճանապարհի վրա։ Պահանջելով Վանը՝ դուք փակում եք մեր ճանապարհը դեպի Պարսկաստան։ Պահանջելով Նախիջևանն ու Զանգեզուրը՝ դուք մեզ արգելք եք դառնում իջնելու Քոռի հովիտը և գնալու Բաքու։ Կարսն ու Ախալքալակը փակում են մեր ճամփան դեպի Ղազախ և Գանձակ։ Դուք պետք է մի կողմ քաշվեք և մեզ ճանապարհ տաք։ Ահա թե որտեղ է մեր հիմնական վեճը։ Մեզ պետք են երկու լայն ճամփաներ, որոնք մեր բանակներին հնարավորություն կտան առաջ շարժվելու և պաշտպանվելու։ Մի ճանապարհը Կարս-Ախալքալակ-Բորչալու-Ղազախն է, որը տանում է դեպի Գանձակ, մյուսը գնում է Շարուր-Նախիջևան-Զանգեզուրով Քոռի հովիտը։ Դուք կարող եք մնալ դրանց մեջտեղում, այսինքն՝ նոր Բայազետի և Էջմիածնի շուրջը (ընդգծումը իմն է։— Հ. Ս.)»[1]։

Այսպիսով, Բաթումում Թուրքիան ճանաչում էր Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունները, իսկ, ինչպես նշում էր Լեոն, «Հայաստանին տալիս էր մի տարածություն, որ հազիվ բավական կլիներ հայ ժողովրդի գերեզմանը դառնալու։ Դա... մի լեռնոտ, մեծագույն մասով անպտուղ երկիր է Սևանի լճի արևմտյան, հարավ-արևելյան կողմերում»[2]։

Դաշնակցական պարագլուխները, որոնք Սովետական Ռուսաստանի կառավարությանն այնպես ամբարտավան կերպով մեղադրում էին Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը կնքելու համար, անդադրում տարփողում, թե դրանով իսկ «բոլշևիկները թուրքերին են վաճառել Հայաստանի հողերը», այժմ Բաթումի պայմանագրից շատ գոհ էին. չէ՞ որ նրանք թուրքերից «նվեր» էին ստացել ծաղրանկարային «Արարատյան հանրապետությունը»։

Բաթումի կոնֆերանսից հետո Կ. Պոլիս «հյուր» գնացած դաշնակցական «դիվանագետ» Ավետիս Ահարոնյանը և «Արարատյան Հայաստանի» արտաքին գործերի մինիստր Ալեքսանդր Խատիսյանը միմյանց հետ մրցելով, Թուրքիայի հասցեին հաճոյախոսության մրցանակներ էին շահում։ «Հայկական պատվիրակության իմ մասնակցությունը մանավանդ նրա համար է,— թուրքական լրագրի թղթակցին հայտարարել էր Ա. Ահարոնյանը,— որ ես Թուրքիան ու թուրքերն ավելի մոտեն կը ճանչնամ։ Ես միշտ թուրք և հայ անկեղծ բարեկամության մը կողմնակից եղած եմ։ Վերջերս Թիֆլիսի մեջ տեղի ունեցած իմ մեկ բանախոսությունն այդ սկզբունքին վրա էր... Իմ այդ զգացումը խիստ անկեղծ է և իմ պատվիրակ ընկերներս նույն այդ զգացումով է, որ այսօր հոս կը գտնվին»[1]։ Իսկ Ալ. Խատիսյանի հետ հանդիպած թուրքական մի ուրիշ լրագրի խմբագիր գրում էր. «Խատիսովը, որ Կովկասի հաշտության [խորհրդաժողովի] մեջ հայկական պատվիրակն էր, երախտագիտությամբ խոստովանել է, թե հայությունը Կովկասում իր գոյության տերը լինելու համար պարտական է օսմանյան տերությանը, և բացահայտ ու անկեղծ լեզվով հայտարարել է, թե նոր-նոր կյանք առնող փոքր [հայկական պետության] կառավարությունը Թուրքիային դիտում է իբրև վեհանձն բարերարի»[2]։

Անդրկովկասն «ազգային հանրապետությունների» բաժանելը մեծապես հեշտացրեց թուրք զավթիչների գործը, որոնք ձգտում էին օր առաջ տեր դառնալ Բաքվի նավթին և Կովկասի հարստություններին։ Նրանք չէին թաքցնում իրենց պանթուրքական հեռու գնացող նպատակները, որոնց իրականացման գոր-

---

[1] Ալ. Խատիսեան, *Հայաստանի հանրապետութեան ծագումն ու զարգացումը*, էջ 86։

[2] Լեո, *Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանությունը*, հատոր Բ., Փարիզ, տպագրություն Պահրի եղբարց, 1935, էջ 201։

[1] Լեո, *Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանությունը*, հատոր Բ., էջ 201։

[2] Նույն տեղը, էջ 202։

ծում, անշուշտ, շարունակում էր առաջնակարգ տեղ գրավել կովկասահայության ոչնչացման ծրագիրը։

Իթթիհադական պարագլուխներից կուսակցության քարտուղար Բեհաեդդին Շաքիրը, որը Հայաստանը համարում էր մի անտանելի սեպ՝ խրված Անատոլիայի և «իդեալ հայրենիքի» միջև, նույն Բաթումի խորհրդաժողովում հայկական պատվիրակության անդամ Ալեքսանդր Խատիսյանի հետ ունեցած զրույցի ժամանակ ցինիկաբար ասելով, թե ինքը հայերի ոխերիմ թշնամին է, այնուհետև ավելացրել է. «Հայերը կանգնած են մեր պանիսլամական և պանթուրքական սրբազան իդեալների իրականացման ճամփի վրա, և մենք անխուսափելիորեն բախվում ենք նրանց հետ։ Դա վեր է և դուրս է մեր անձնական զգացումներից և տրամադրություններից։ Մենք հարկադրված ենք մեր ճանապարհին տարերայնորեն ոչնչացնելու այն ամենը, ինչ արգելք է հանդիսանում մեր ազգային սրբազան իդեալների [իրականացմանը]։ Եվ հետո, դուք միշտ ռուսների հետ եք. դուք նրանց առաջապահն եք, իսկ ռուսները մեր ոխերիմ թշնամիներն են։ Պատմական թշնամիները։ Մտածեցեք այս մասին, փոխեցեք ձեր հոգեբանությունը և օրիենտացիան։ Դուք թշնամի եք, և ես էլ թշնամի եմ, բայց մենք գործընկերներ ենք։ Մենք հասկանում ենք կենդանի մարմնի կյանքը. նրա մեջ չկա մարդասիրություն կամ կամքի թուլություն։ Ջորավոր և կենսունակ մարմնի իրավունքն է այն միակ իրավունքը, որով ապրում է մարմինը։ Այդպես է և ազգերի կյանքում։ Այստեղ չկա մեղկ զգայականություն, կա միայն ինքնապաշտպանության բնազդ և զգացում»[1]։

1918 թվականի օգոստոսի 31-ին Խալիլ փաշան Երևանում դաշնակների հետ ունեցած բանակցությունների ժամանակ ասել է. «Մենք Թուրքերս... մի իդեալ ունենք և ուզում ենք այդ իդեալն իրագործել։ Մենք ցանկանում ենք վերականգնել մեր կապը մեր հայրենիքի՝ Թուրանի հետ և դրա համար ուզում ենք, որ մեր երկու հայրենիքներն իրար միացնող ճանապարհը ուրիշների տիրապետության տակ չլինի»[2]։

---

[1] Ալ. Խատիսեան, *Հայաստանի հանրապետութեան ծագումն ու զարգացումը*, էջ 77։

[2] *Մեջբերումն ըստ* Մ. Վ. Առզումանյանի «*Արհավիրքից վերածնունդ դեպի*, Երևան, *Հայաստան*, 1973, էջ 171։

Իր պանթուրքական-պանիսլամական պլաններն իրականացնելու նպատակով թուրքական գլխավոր հրամանատարությունը ստեղծեց զորքերի խմբավորումներ ինչպես Թավրիզում, այնպես էլ Ջուլֆայում, Ելիզավետպոլում և Բաթումում։

Սովետական Բաքվի վրա արշավող թուրքական զորքերի ընդհանուր հրամանատարությունը ստանձնեց Նուրի փաշան՝ Էնվեր փաշայի կրտսեր եղբայրը։ Անդրկովկասի հայաբնակ գավառները թողնելով իրենց թիկունքում և արևելահայության գլխովին ոչնչացումն առայժմ թողնելով մոտ ապագային, թուրքական զորքերն արագ երթով առաջանում էին Բաքվի ուղղությամբ։ Առաջ շարժվելով Ղազախ—Աղստաֆա գծով, 1918 թվականի հունիսի սկզբներին թուրքական զորքերը մուսավաթականների գործուն աջակցությամբ գրավեցին Գյանջան (Ելիզավետպոլ)։ Մուսավաթականները հանդիսավորությամբ և ցնծությամբ ընդունեցին թուրքական զավթիչների մուտքը քաղաք։ Այստեղ թուրքական սվինների պաշտպանության տակ կազմվեց խամաճիկային հակահեղափոխական «Ադրբեջանի կառավարությունը» Խան Խոյսկու գլխավորությամբ։ Կառավարության մեջ մտան Խ. Մելիք-Ասլանովը, Ն. Ուսուբբեկովը, Խ. Խասմամեդովը և ուրիշ կատաղի թուրքասերներ։ Կառավարության նախագահ Խան Խոյսկին մզկիթում, հազարավոր հավատացյալների առջև ջերմորեն ողջունեց Նուրի փաշային և թուրքական զորքերին։

Նախքան թուրքական զորքերի Ադրբեջան մտնելը, այստեղ մուսավաթական «ազգային» բոլոր զինված բանդաներն արդեն միավորվել էին այսպես կոչված ադրբեջանական ազգային կորպուսի մեջ, որի հրամանատար էր նշանակվել ցարական բանակի նախկին գեներալ-լեյտենանտ Ալի Աղա Շիխլինսկին։ Թուրքական զորքերի Գյանջա մտնելուց հետո ադրբեջանական կորպուսը լուծարքի ենթարկվեց։ Ապակազմավորված ադրբեջանական-մուսավաթական «ազգային» զորամասերը և թուրքական զորքերը միավորվեցին։ Ստեղծվեց այսպես կոչված կովկասյան մուսուլմանական բանակ («Իսլամի բանակ»), որի գլուխ կանգնեց Նուրի փաշան։

1918 թվականի հունիսի կեսերին «Իսլամի բանակը» շարժվեց Բաքվի վրա։

---

[1] *Տե՛ս* **Г. А. Галоян,** Октябрьская революция и возрождение народов Закавказья, изд-во «Мысль», Москва, 1977, էջ 57։

Սեպտեմբերի 15-ին Թուրք-մուսավաթական զորքերը խալիլ և Նուրի փաշաների գլխավորությամբ մտան Բաքու, իրենց հետ բերելով Գյանջայում նախապես կազմված մուսավաթական կառավարությունը։ Թուրքերն ու մուսավաթականները դաժան հաշվեհարդար տեսան բոլշևիկների հետ, միաժամանակ կազմակերպեցին քաղաքի հայ բնակչության սոսկալի ջարդ։ Դա պատահական չէր. հայ զինվորների և հայ բնակչության ամիսներ տևած համառ դիմադրությունը նրանց կատաղության էր մատնել։

Բաքվի գավթումը ցնծությամբ դիմավորեցին բոլոր պանթուրքականները և պանիսլամականները։ Էնվեր փաշան թուրքական զորքերի «փայլուն հաղթանակի» մասին անձամբ հեռախոսով հայտնեց Ադրբեջանական ազգային խորհրդի նախագահ Մեհմեդ Էմին Ռասուլզադեին, որն այդ ժամանակ գտնվում էր Ստամբուլում[1]։

1918 թվականի սեպտեմբերի 20-ին Սովետական Ռուսաստանի կառավարությունը վերջնագիր ուղարկեց Թուրքիայի կառավարությանը՝ վճռական բողոք հայտնելով թուրքական զորքերի նվաճողական գործողությունների դեմ, որոնք փաստորեն լոկ թղթի կտոր էին դարձրել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը։ Այնտեղ մասնավորապես ասված էր. «Օսմանյան կառավարությունը վերջին վեց ամիսների ընթացքում անվերջ խախտել է Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը։ Այժմ, վերջապես, ի լրումն այդ ամենի, նա հափշտակել և ավերածությունների է ենթարկել Ռուսաստանի Հանրապետության կարևոր քաղաքներից մեկը։ Օսմանյան կառավարությունը դրանով իսկ հաստատում է, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը Ռուսաստանի և Թուրքիայի միջև այլևս գոյություն չունի։ Սովետական Ռուսաստանի Ֆեդերատիվ Հանրապետության կառավարությունը հարկադրված է ընդունել, որ օսմանյան կառավարության ընթացքը փաստորեն վերացրել է Ռուսաստանի և Թուրքիայի միջև խաղաղ հարաբերություններ հաստատող Բրեստ-Լիտովսկի դաշնագիրն այդ երկու պետությունների նկատմամբ»[2]։

---

[1] Տե՛ս Е. Ф. Лудшувейт, Турция в годы первой мировой войны 1914—1918 гг., էջ 258։

[2] Ю. В. Ключников, А. Сабинин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, часть II, с. 175.

Բաքուն գրավելուց հետո թուրքերը շարունակեցին առաջխաղացումը դեպի հյուսիս, դեպի Դաղստան, այնտեղից ավելի հեռուները գնալու համար։ Թուրքական բանակի մի այլ թև խորվել էր Հյուսիսային Պարսկաստանում և մտադիր էր առաջանալու դեպի Կենտրոնական Ասիա։ Նրա նպատակն էր Թուրքիային միացնել Թուրքմենստանը, որպես թուրանական կայսրության ստեղծման առաջին օղակ։

Կովկասում երիտթուրքական ինտերվենցիան թուրքական միլիտարիզմի վերջին ջղաձգությունների արտահայտությունը և միաժամանակ Օսմանյան կայսրության վերջնական կործանման պատճառներից մեկն էր։ Էնվերի կովկասյան արկածախնդրության անմիջական հետևանքն այն եղավ, որ մյուս ռազմաճակատներում թուրքական զորքերը չստացան անհրաժեշտ համալրում և անհաջողություններ կրեցին։ Մակեդոնական ռազմաճակատում ֆրանսիացիները, իսկ Պաղեստինի ռազմաճակատում անգլիացիները ջախջախեցին թուրքական զորքերին, որոնք սկսեցին անկանոն հետ նահանջել։ Սեպտեմբերի վերջին կապիտուլյացիայի ենթարկվեց Գերմանիայի և Թուրքիայի դաշնակից Բուլղարիան, որի շնորհիվ բացվեց դեպի Ստամբուլ տանող ճանապարհը։ Սուլթանը և երիտթուրքական կառավարությունն տագնապի մատնվեցին։

Հաղթողների հետ բանակցությունները հեշտացնելու համար 1918 թվականի հոկտեմբերի 9-ին երիտթուրքական կաբինետը, որը գլխավորում էր Թալեաթ փաշան, հրաժարական տվեց։ Իրենց պոստերը թողեցին մեծագույն ոճրագործներ Էնվերը, Թալեաթը, Ջեմալը։ Իթթիհադականներն իշխանությունից հեռացան ոչ միայն պատերազմում Թուրքիայի կրած պարտության պատճառով, այլև, ինչպես 1932 թվականին «Միլիեթ» թերթում գրել է հայտնի թուրք գրող Ֆալիհ Ռըֆկին (Աթայ), այն պատճառով, որ երիտթուրքական կառավարությունը կանգնած էր «ամբոխի ապստամբության վտանգի դեմ հանդիման»[1]։

Երիտթուրքական կաբինետի անկումից հետո մեծ վեզիր կարգվեց իթթիհադականներին մոտ կանգնած, բայց ձևականորեն անկուսակցական, խոշոր հողատեր Ահմեդ Իզզեթ փաշան։ Ինչպես նշում էր սովետական թուրքագետ Աբ. Ալիմովը, Իզ-

---

[1] Аб. Алимов, Турция. В книге «Очерки по истории Востока в эпоху империализма», с. 59.

զնթ փաշայի կաբինետի անդամները նույնպես խոշոր ֆեոդալներ էին, անգլոֆիլ կոմպրադորներ, որոնք երկրպագում էին Աբդուլ Համիդին, երանությամբ հիշում նրա կառավարման տարիները[1]։

Դեռ չէր ավարտվել նոր կառավարության ձևավորումը, երբ 1918 թվականի հոկտեմբերի 14—19-ին տեղի ունեցավ «Միություն և առաջադիմություն» կուսակցության՝ նրա պատմության մեջ վերջին համագումարը։ Համագումարում նախկին վարչապետը՝ ոճրագործ Մեհմեդ Թալեաթ փաշան, ստիպված էր խոստովանել իր կուսակցության ներքին ու արտաքին քաղաքականության կրախը։ «Մեր քաղաքականությունը պարտություն է կրել,— հայտարարեց նա։— Այդ իսկ պատճառով այլևս անհնարին է, որպեսզի մենք որևէ ձևով պահպանենք իշխանությունը»։ Բուռն վիճաբանություններից հետո որոշում ընդունվեց կուսակցության ինքնալիկվիդացման մասին[2]։

1918 թվականի հոկտեմբերի 27-ին, Էգեյան ծովի Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում խարիսխ գցած անգլիական «Ֆուրսայթ» ռազմանավի վրա պաշտոնապես բանակցություններ սկսվեցին հաղթողների և պարտված Թուրքիայի միջև։ Հոկտեմբերի 30-ին նույն Մուդրոս նավահանգստում կանգնած «Ագամեմնոն» հածանավի վրա ստորագրվեց զինադադարի պայմանագիր, որը պատմության մեջ մտավ «Մուդրոսի զինադադար» անունով։ Թուրքիան իրեն լիովին պարտված ճանաչեց։ Ըստ այդ պայմանագրի Օսմանյան կայսրությունը փաստորեն դադարեց գոյություն ունենալուց։

Այսպիսով, գլուխ բերելով հայ ժողովրդի արևմտյան հատվածի ոչնչացումը, որը թուրքական ազգայնամոլության հաղթանակն էր, այնուամենայնիվ, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտասարդ թուրքերի պանթուրանական քաղաքականությունը, ամբողջությամբ վերցրած, ձախողվեց։ Հույս ցնդեց Ռուսաստանի և Իրանի թուրքալեզու ժողովուրդներով բնակեցված տարածքները Օսմանյան կայսրությանը կցելու իդեան։ Չիրականացավ նաև կովկասահայությունն ամբողջովին ոչնչացնելու ծրագիրը։ Ինչպես ժողովուրդն է ասում՝ «ոսկորը կոկորդում մնաց»։

---

[1] Տե՛ս **Аб. Алимов**, Турция. В книге «Очерки по истории Востока в эпоху империализма», էջ 59։

[2] Տե՛ս **Е. Ф. Лудшувейт**, Турция в годы первой мировой войны 1914—1918 гг., էջ 295

ԴՈՒՍԱՍՏԱՆԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ՊԱՅՔԱՐՈՒՄ։ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՆԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՁԱԽՈՂՈՒՄԸ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունն ազատություն բերեց Ռուսաստանի բոլոր, այդ թվում մուսուլման ժողովուրդներին։ Ռուսաստանի մուսուլմաններով բնակեցված ծայրամասերն իրենց զարգացման մակարդակով տարբեր աստիճանների վրա էին։ Թաթարիայի և Ադրբեջանի տեղական բնակչության շրջանում ձևավորվել էր բանվորական խավ, որն ընդգրկվել էր պրոլետարական շարժման մեջ։ Ղրիմում, Բաշկիրիայում, Ղազախստանի և Միջին Ասիայի մի շարք մարզերում տեղական չքավոր գյուղական բնակչության դասակարգային պայքարը զուգորդվում էր ռուսական պրոլետարական շարժման հետ, դառնում նրա ուղեկիցը։ Իրենց սոցիալական ու ազգային ազատագրության համար մուսուլմանական ժողովրդական մասսաների երկարատև պայքարը կոչված էր հաղթանակով պսակվելու Ռուսաստանի պրոլետարիատի օգնությամբ և բոլշևիկյան կուսակցության գլխավորությամբ։

Սովետական իշխանության համար պայքարը հատկապես համառ բնույթ ընդունեց Հյուսիսային Կովկասում և Դաղստանում։

Բնակչության չափազանց խայտաբղետ ազգային կազմը, պանիսլամական, պանթուրքական գաղափարների ազդեցությունը, մուսուլմանական հավատի սպասավորների ակտիվ գործունեությունը, ֆեոդալական բազմաթիվ մնացուկներն այստեղ բարդացնում էին սովետների համար մղվող պայքարը։

Սոցիալիստական հեղափոխության դեմ պայքարելու նպատակով Հյուսիսային Կովկասի և Դաղստանի տեղական կալ-

վածատիրական-կղերական հետադիմությունը դաշինքի մեջ մտավ Թերեքի կազակության հետ։

Արդեն 1917 թվականի հոկտեմբերի 28-ին Վլադիկավկազի սովետն արտահայտվեց սովետական իշխանության օգտին։ Նման որոշում նոյեմբերի 7-ին ընդունեց Պորտ-Պետրովսկի սովետը։ Նոյեմբերի 21-ին այստեղ ստեղծվեց ռազմահեղափոխական կոմիտե, որի մեջ մտան Ռ. Բույնակսկին, Ա. Իսմայիլովը, Դ. Աթաևը և տեղական ժողովուրդների ուրիշ ներկայացուցիչներ[1]։

Աջակցություն ստանալով էսէռներից և մենշևիկներից, մուսուլմանական հակահեղափոխական ուժերը և կազակական վերնախավը տենդագին գործունեություն ծավալեցին սովետական իշխանության հաղթանակը կանխելու համար։ Ստեղծվեց Թերեքի հակահեղափոխական «կառավարությունը», որը նպատակ ուներ մարզն անջատել Սովետական Ռուսաստանից։ Հակահեղափոխական ուժերը ցրեցին Գրոզնու և Վլադիկավկազի սովետները, ամենուրեք արյունալի ընդհարումներ հրահրեցին քրիստոնյա և մուսուլման բնակչության միջև։

Սակայն Հյուսիսային Կովկասում հեղափոխական շարժումը կանգ չառավ։ Սովետական իշխանության համար աշխատավորների պայքարը գլխավորում էին բոլշևիկները՝ Ս. Մ. Կիրովի գլխավորությամբ։

1918 թվականի հունվարի վերջերին Մոզդոկում բացված Թերեքի ժողովուրդների I համագումարն ընտրեց Թերեքի ժողովրդական սովետ, որը բաղկացած էր մարզի բոլոր ազգությունների և դեմոկրատական կազմակերպությունների ներկայացուցիչներից[2]։ 1918 թվականի մարտի սկզբին Պյատիգորսկում տեղի ունեցած Թերեքի ժողովուրդների II համագումարը մարզում հռչակեց սովետական իշխանություն։

Հեղափոխության և հակահեղափոխական ուժերի միջև պայքարն է՛լ ավելի համառ ու տևական բնույթ ստացավ Դաղստանում, որը 1918—1919 թվականներին դարձել էր այն ժամանակվա հեղափոխական իրադարձությունների գլխավոր օջախներից մեկը։

1918 թվականի հունվարին դաղստանյան բուրժուական ազգայնամոլներն իրենց հրոսակախմբերը կենտրոնացրին Դաղստանի վարչական կենտրոն Թեմիր-Խան-Շուրայի մոտ և մտադիր էին Թուրքիայի աջակցությամբ այստեղ հռչակել միապետություն՝ մոլի ռեակցիոներ իմամ Գոցինսկու գլխավորությամբ։ Սա լեռնաշխարհի ազգություններին կոչ արեց «սրբազան պատերազմ» սկսել բոլշևիկների դեմ։ Աշխատավորների զինված ջոկատները, սակայն, խափանեցին նրա մտահղացումները։

1918 թվականի մարտի վերջերին հակահեղափոխական ուժերին, այնուամենայնիվ, հաջողվեց գրավել Պետրովսկը, որն այն ժամանակ Դաղստանի միակ քաղաքն էր, որտեղ հաղթանակել էր սովետական իշխանությունը։ Պայքարը գնալով խորացավ։ 1918—1919 թվականներին արյունահեղ կռիվներ ծավալվեցին Դաղստանի լեռներում և կիրճերում։

Սպիտակ լեռնականների հակահեղափոխական գործողությունները գլխավորում էին Ցալիկովը, Ջերմոևը, Բամատովը, Ջաբագիևը և ուրիշ բուրժուական ազգայնականներ և թուրքական գործակալներ։ Մեծ ակտիվություն էր հանդես բերում մուսուլմանական, հատկապես բարձրաստիճան, հոգևորականությունը Գոցինսկու գլխավորությամբ, որը Դաղստանի ապագան տեսնում էր Թուրքիային միանալու մեջ։ Սրանց ակտիվորեն աջակցում էին պանիսլամական շարժման գործիչներ Ալի-Հաջի Ակուշինսկին և Ուզուն Հաջին (նույն ինքը՝ Ուզուն-Հայրի Հաջի խանը)։

Բայց լեռնականների համար ճակատագրական այդ օրերին մուսուլմանական կրոնի ոչ բոլոր սպասավորներն էին հակահեղափոխության հետ։ Հոգևորականությունը պառակտվել էր երկու խմբի։ Անդրադառնալով դաղստանցիների ընդհանուր պայքարում տեղի հոգևորականության ունեցած դերին, Ա. Ի. Միկոյանը հետագայում նշում է. «Ի հակակշիռ իմամ Գոցինսկու գլխավորած ռեակցիոն հոգևորականության, որն արտահայտում էր շահագործող վերնախավի շահերը, Դաղստանում կային հոգևոր անձինք, որոնք կանգնած էին հեղափոխական շքավորության կողմը և հաճախ նույնիսկ իրենց գործողությունները կոորդինացնում էին կոմունիստների հետ»[1]։

Բացի այդ, բոլշևիկները հեղափոխության կողմը գրավեցին Մ. Դաղաևի և Դ. Կորխմասովի գլխավորած դաղստանյան լեռ-

---

[1] Տե՛ս ЦГАОР СССР, ф. 9, 1318, оп. 1, д. 23, л. 4—7.

[2] Տե՛ս С. М. Киров, Избранные статьи и речи, М., 1957, էջ 21։

[1] Ա. Միկոյան, Պայքարի ուղիով. Երևան, 1972, էջ 621։

նականների սոցիալիստական խմբին, որը մերկացնում էր կղերական հետադիմությանը, հանդես գալիս Դաղստանի հեղափոխական և դեմոկրատական ուժերի համախմբման օգտին։

Օգտագործելով այդ բոլոր ուժերին, բոլշևիկները մեծապես ընդլայնեցին հեղափոխության սոցիալական բազան։ Վերագրավելով Պետրովսկը, հեղափոխական ջոկատներն այնուհետև գրավեցին մարզային կենտրոն Թեմիր-Խան-Շուրան։ 1918 թվականի մայիսի 2-ին այստեղ կազմավորվեց մարզային ռազմահեղափոխական կոմիտե, որը հռչակեց սովետների իշխանություն ամբողջ Դաղստանում։ Հեղափոխության ալիքն իր մեջ էր առնում մուսուլման աշխատավորների նորանոր զանգվածներ։ Ժողովրդական մասսաների ամենաակտիվ աջակցությամբ անցկացվում էր արդյունաբերության ազգայնացում, իրականացվում էին սոցիալական կարգի այլ խոշոր միջոցառումներ[1]։

Բաքվի կոմունայի պարտությունը և թուրքական զորքերի կողմից Անդրկովկասի ընդարձակ շրջանների գրավումը նոր ոգևորություն առաջ բերեցին լեռնական հակահեղափոխական ուժերի շարքերում։ Թուրքական զորքերը պատրաստվում էին մուսավաթական Ադրբեջանից թափանցել Դաղստան և Հյուսիսային Կովկաս, իրականացնելու իրենց պանթուրքական մտադրությունները։

Չնայած գերմանա-թուրքական բլոկի պարտության հետևանքով օսմանյան զավթիչները 1918 թվականի վերջերից սկսել էին հեռանալ Անդրկովկասից, սակայն թուրքական բանակի ոչ քիչ թվով միավորումներ մնացել էին մուսավաթական Ադրբեջանում, Դաղստանի առանձին վայրերում։

Անդրկովկասում բուրժուազգայնական կուսակցությունների տիրապետության ժամանակաշրջանում թուրքերը՝ ինչպես ջախջախված երիտթուրքերը, այնպես էլ նրանց հաջորդած քեմալականները, չէին հրաժարվել ռուսներին Անդրկովկասից վերջնականապես «դուրս քշելու» մտքից։ Ռուսական «վտանգը» շարունակում էր մղձավանջի մեջ պահել թուրքական հետադիմությանը, որն առաջվա նման Ռուսաստանի նկատմամբ որոճում էր պանիսլամական պլաններ, Բաքուն դիտում իբրև Թուրանի բանալի, իսկ Անդրկովկասի նվաճման գործում ակտիվ ուժ էր դիտում ադրբեջանցի բեգերին ու աղալարներին։ Ավելին, իրենց պանիսլամական և պանթուրքական ծրագրերի իրականացման նպատակով թուրքերը նույնիսկ մտածում էին օգտագործել Վրաստանի և Հայաստանի բուրժուական կառավարություններին։ Դրա վկայությունն է երիտթուրքերի նախկին պարագլուխներից Ջեմալ փաշայի 1919 թվականին գրած «Նոթերը», որտեղ նա մասնավորապես ասում էր. «Եթե... մենք չորսս՝ Օսմանյան կայսրությունը, Ադրբեջանական, Վրացական և Հայկական հանրապետությունները, Մերձավոր արևելքի ժողովուրդների հետ միասին դաշինք չկնքենք Ռուսաստանի դեմ՝ մեզ պաշտպանելու համար, եթե մենք համերաշխ չգործենք և չօգնենք հանրապետության կազմավորմանը Հյուսիսային Կովկասում, մենք կասկած չունենք, որ նորից կդառնանք Ռուսաստանի զոհը, որը միշտ ձգտել է մեզ իր լծի տակ դցելու»[1]։ Այնուհետև Ջեմալ փաշան շարունակում էր. «Հարկավոր է «բոլոր ջանքերը գործադրել, որպեսզի թույլ չտանք, որ ռուսական հեղեղը անցնի Կովկասյան լեռնաշղթայով։ Այդ նպատակի համար այդ չորս պետությունները պետք է միմյանց միջև կնքեն պաշտպանողական դաշինք, որն ուղղված լինի մոսկվացիների հնարավոր ներխուժման դեմ»[2]։

1919 թվականին Հյուսիսային Կովկասի և Դաղստանի աշխատավորները նոր արհավիրքների ենթարկվեցին։ Դեպի Մոսկվա արշավող իր բանակների թիկունքն ամրապնդելու նպատակով գեներալ Դենիկինը մեծ թվով զորքեր նետեց Հյուսիսային Կովկասի և Դաղստանի դեմ, որտեղ շարունակվում էր սովետական իշխանության համար մղվող դժվարին պայքարը։ Սպիտակգվարդիական զորքերի թիկունքում շատ ակտիվ գործում էին Գիկալոյի գլխավորած հեղափոխական-ապստամբական ջոկատները։ Դենիկինը հանդիպեց ոչ միայն լեռնականների հեղափոխական ուժերի, այլև այն ուժերի դիմադրությանը, որոնք իսլամի դրոշի ներքո պայքարում էին Հյուսիսային Կովկասի և Դաղստանի «անկախության» համար։ Իսկ սպիտակ գեներալը, պայքարելով ռուսական միապետական կարգերի վերականգնման

---

[1] Տե՛ս «Борьба за установление и упрочение Советской власти в Дагестане (1917—1921 гг.)». Сборник документов и материалов. М., 1958, էջ 76, 77։

[1] **Джемаль паша**, Записки 1913—1919, изд. Закрайкома РКП(б), Тифлис, 1923, с. 239.

[2] Նույն տեղը, էջ 238—239։

համար, ոչ մի խոսք չէր ուզում լսել լեռնականներին որևէ ինքնավարություն տալու մասին։ Այստեղից էլ լեռնական մուսուլմանական ուժերի և հեղափոխական ուժերի ժամանակավոր միավորումը ընդհանուր թշնամու՝ Դենիկինի դեմ համատեղ պայքար մղելու համար[1]։

Այսպես, օրինակ, ընդգրկվելով դենիկինյանների դեմ մղվող պայքարի մեջ, Զեյնիայի հոգևորականության առաջնորդներից շատերը, այդ թվում շեյխ Ուզուն Հաջին կապ էին պահպանում դենիկինցիների թիկունքում գործող տեղի հեղափոխական-ապստամբ ջոկատների ղեկավար Գիկալոյի հետ։

Չնայած համառ դիմադրությանը, Դենիկինի մեծաթիվ զորքերը գրավեցին Հյուսիսային Կովկասի և Դաղստանի լայնարձակ շրջանները։ Սպիտակ գեներալը մեծ ռազմատուգանք դրեց լեռնականների վրա, պահանջեց կազմել և իրեն տրամադրել զորամիավորումներ՝ սովետական իշխանության դեմ կռվելու համար։

1919 թվականի օգոստոսի վերջերին Դենիկինի դեմ ապստամբություն բարձրացրին Կովկասի ժողովուրդները՝ դաղստանցիները, ինգուշները, չեչենները և կաբարդիները։ Պայքարը կատաղի բնույթ ընդունեց։ Ոչ մի տեղից օգնություն չստանալով, լեռնականները միայն հրացաններով ու դաշույններով արյունահեղ մարտի նետվեցին կազակական-սպայական ուժերի դեմ։ Զեռք գցելով մեծ քանակությամբ ռազմական ավար, լեռնական ապստամբ ջոկատները զինվեցին։ Սեպտեմբերի 28-ին Գրոզնու մոտ տեղի ունեցած խոշոր ճակատամարտում դենիկինյանները պարտություն կրեցին։ Մինչև հոկտեմբերի կեսերն ապստամբները սպիտակգվարդիականներից մաքրել էին բոլոր լեռնային ամրացված կետերը և գրավել Գրոզնի, Թեմիր-Խան-Շուրա և Դելբենտ քաղաքները[2]։

Այս իրադարձությունների ժամանակ խիստ բնութագրական էր Ադրբեջանի մուսավաթական կառավարության բռնած դիրքը։ Ապստամբության թեժ պահին Ադրբեջանի մուսուլմանական գործիչները և պանթուրանականները մուսավաթական կառավարությունից պահանջեցին ակտիվ զինված աջակցություն ցույց տալ հավատակից լեռնականներին։ Բայց այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ լեռնականների ապստամբական շարժումը ծավալվում է բոլշևիկյան դրոշի ներքո, և ենթարկվելով Ադրբեջանը ռազմակալելու դենիկինյանների սպառնալիքներին, մուսավաթական կառավարությունը, ինչպես նշում էր Ս. Մ. Կիրովը, ստանձնեց «պարապ ու անտարբեր դիտողի դեր, ոչ մի օգնություն ցույց չտալով ապստամբներին»[1]։

Ընդհանուր թշնամու՝ դենիկինյանների պարտությունից անմիջապես հետո նորից կտրուկ սահմանազատում տեղի ունեցավ լեռնականների մեջ։ Եթե մուսուլման աշխատավորներն այդ հաղթանակի մեջ տեսնում էին լեռնաշխարհում սովետական իշխանության վերջնական հաղթանակի և ամրապնդման երաշխիքը, ապա, ընդհակառակը, Թուրքիայի, Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի և Դաղստանի մահմեդական ռեակցիան փորձեց լեռնականների ապստամբական շարժումն օգտագործել իր պանիսլամական և պանթուրքական նպատակներին։

1919 թվականի աշնանը Զեյնիայում (Վեդենո գյուղ) մարմին առավ այսպես կոչված «շարիաթական միապետությունը» կամ «Հյուսիսկովկասյան էմիրությունը»։ Այդ «պետությունը» ստեղծվեց տեղի ռեակցիոն մուսուլման հոգևորականության կողմից։ Ղեկավար դեր էր խաղում շեյխ Ուզուն Հաջին, որը կապերը խզել էր Գիկալոյի հետ։ Նրան աջակցում էր ծայրահեղ ռեակցիոներ, թուրքական գործակալ Դիշնինսկին։ Սա հայտարարում էր, թե ինքը հատուկ հավատարմագրով Զեյնիա է եկել «օսմանյան կայսեր» անունից Հյուսիսային Կովկասում «շարիաթական միապետություն» կազմակերպելու համար։

1920 թվականի փետրվարին կարմիրբանակայինների մի ջոկատ չեչենների օգնությամբ Շատոյ գյուղում հայտնաբերեց էմիրական զինված ջոկատներին և զինաթափ արեց։ Թուրքական գործակալները, այդ թվում Դիշնինսկին, ձերբակալվեցին։ «Շարիաթական միապետությունը» պայթեց օճառի պղպջակի պես[2]։

Հեղափոխական դարաշրջանը լեռնական ժողովուրդների ծոցից երևան հանեց լենինյան գործիչների մի փայլուն համաստեղություն։ Նրանցից էին կաբարդիներ Բետալ Կալմիկովը,

---

Տե՛ս Ա. Կարինյան, Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1934, էջ 51—54։

Տե՛ս С. М. Киров, Статьи, речи, документы. Партиздат ЦК ВКП(б), М., 1936, էջ 148։

[1] Ա. Կարինյան, Երկերի ժողովածու, էջ 147—149։

[2] Տե՛ս С. М. Киров, Статьи, речи, документы, էջ 214։

Մաժիդ Ֆանգիևը, Տեմբոտ Ախոխովը, Մուրզաբեկ Շուքովը, բալկարներ Մահմեդ Էնեևը, Սոլտան-Համիդ Կալաբեկովը, ադիգեյ Մուսա Հովգենովը, կարաչայեցի Ումար Ալիևը, օս Գեորգի Ցագոլովը, չեչեն Ասլանբեկ Շերիֆովը, ինգուշ Գաֆուր Ախրիևը, դաղստանցիներ Ուլուբիյ Բույնակսկին, Մախաչ Դախադաևը և ուրիշներ[1]։ Զքավոր լեռնականների այդ խիզախ առաջնորդները ոգեշնչում էին անկուսակցական մասսաներին, գլխավորում նրանց պայքարը սովետական իշխանության հաղթանակի համար։ Նրանցից շատերն ընկան ժողովրդական ընդհանուր գործի հաղթանակի համար մղված պայքարի ճանապարհին։

Հյուսիսային Կովկասում սովետական իշխանությունը վերականգնելուց հետո կոմունիստական կուսակցության առջև ծառացավ Ադրբեջանում և ամբողջ Ադրկովկասում սովետական կարգեր հաստատելու խնդիրը։

Մուսավաթական ռեակցիայի պանթուրքական-պանիսլամական պրոպագանդայի և թուրքական չդադարող դավերի պայմաններում Ադրբեջանի բանվորներն ու գյուղացիները շարունակում էին պայքարը Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարների հաղթանակի համար։ Բոլշևիկները մերկացնում էին մուսավաթականների հակաժողովրդական քաղաքականությունը, ցույց տալիս, որ Ադրբեջանի «անկախ» կառավարությունը բանվորներին և գյուղացիներին թշնամի կառավարություն է, ադրբեջանական խանների ու բեգերի, ադրբեջանցի նավթարդյունաբերողների շահերի արտահայտիչը։

Չնայած աշխատանքի դժվարին պայմաններին, Ադրբեջանի բոլշևիկները կարողացան կանոնավորել բոլշևիկյան մամուլի լուսընծայման ու տարածման գործը։ 1918—1920 թվականներին ադրբեջաներեն հրատարակվում էին բոլշևիկյան կամ բոլշևիկամետ «Ֆուգարա սադասի» («Զքավորության ձայն»), «Ադերբայջան ֆուգարասի» («Ադրբեջանական չքավորություն»), «Բակի ֆեխլե կոնֆրանսընեն ախբարի» («Բաքվի բանվորական կոնֆերանսի տեղեկագիր»), «Հուրիեթ» («Ազատություն») պարբերականները[1]։ Դրանց միջոցով բոլշևիկները լայն մասսաների մեջ տարածում էին մարքսիզմ-լենինիզմի գաղափարները, մերկացնում մուսավաթականների արյունալի ռեժիմը, պանթուրքականների և պանիսլամականների մեքենայությունները, աշխատավորներին նախապատրաստում առաջիկա դասակարգային մարտերին։

Արդեն 1919 թվականի սկզբներից Ադրբեջանի մի շարք շրջաններում ծայր առան բացահայտ հակակառավարական ելույթներ։ Գյանջայի, Ղազախի, Լենքորանի գավառներում և այլ վայրերում գործում էին գյուղացիների զինված ջոկատներ։ Մուսավաթական զորքերի հետ բազմաթիվ ընդհարումներ ունեցավ, օրինակ, Կադրը Մահմեդովի գլխավորած ջոկատը, որի մեջ ընդգրկված էին ոչ միայն ադրբեջանցի, այլև հայ գյուղացիներ։

Բոլշևիկյան կազմակերպությունների անմիջական աջակցությամբ գյուղացիական պարտիզանական ջոկատները 1920 թվականի մայիսին սովետական իշխանություն հաստատեցին Լենքորանում և ամբողջ Մողանում։ Ապստամբները երեք ամիս շարունակ դիմադրում էին մուսավաթականների և օտարերկրյա ինտերվենտների միացյալ ուժերի հարձակումներին, բայց գերակշիռ ուժերի ճնշման տակ ստիպված էին տեղի տալ ու նահանջել։

Միաժամանակ Ադրբեջանի կոմունիստական կազմակերպություններն ամրապնդում էին սեփական շարքերը, ընդլայնում կապերը մասսաների հետ։ Մեծ ակտիվությամբ էին գործում նաև «Հումմեթ» և «Ադալեթ» կոմունիստական կազմակերպությունները։

1920 թվականի փետրվարին Բաքվում անլեգալ պայմաններում տեղի ունեցավ Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպությունների առաջին համագումարը, որտեղ և ստեղծվեց Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունը (ԱԿԿ)։ Այն ստեղծվեց տերիտորիալ սկզբունքով, որպես ՌԿ(բ)Կ անբաժան մաս։ Լինելով ադրբեջանական ժողովրդի առաջավոր ջոկատը, ստեղծման հենց առաջին պահից նա իր մեջ զուգակցեց Ադրբեջանի բանվոր դասակարգի, ադրբեջանական ժողովրդի ինտեր-

---

[1] Տե՛ս **Р. Х. Гугоев, У. А. Улигов,** Борьба трудящихся за власть советов в Кабарде и Балкарии, Нальчик, 1957, էջ 72, **Бербеков,** Переход к социализму народов Кабардино-Балкарии. Нальчик, 1963, էջ 54:

[1] Տե՛ս «Очерки истории Коммунистических организаций Закавказья. 1883—1921 гг.», изд. ЦК КП Грузии. Тбилиси, 1967, էջ 433:

նացիոնալ և ազգային խնդիրները։ «Հումմեթ» և «Ադալեթ» բոլշևիկյան կազմակերպությունները, որոնք հաջողությամբ կատարել էին իրենց խնդիրները, ձուլվեցին Ադրբեջանի կոմունիստական կուսակցության մեջ և իրենց ֆունկցիաները հանձնեցին ԱԿԿ նորաստեղծ Կենտկոմին։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի ցուցումներով և ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի անմիջական ղեկավարությամբ Ադրբեջանի կոմունիստները գլխավորեցին աշխատավոր մասսաների պայքարը մուսավաթական կառավարությունը տապալելու և Ադրբեջանում սովետական իշխանություն հաստատելու համար։

Այդ պատմական խնդիրը կատարելու համար արդեն 1920 թվականի գարնանը ստեղծվել էին նպաստավոր պայմաններ։ Կարմիր բանակի զորամասերը, մարտի վերջերին Հյուսիսային Կովկասում գլխովին ջախջախելով դենիկինյան դորքերին, ապրիլի կեսերին ընդհուպ մոտեցան Ադրբեջանի սահմաններին։

1920 թվականի ապրիլի 27-ին Ադրբեջանի կոմունիստական կուսակցության գլխավորությամբ Բաքվի բանվորական զինված ջոկատները մարտական պատրաստության մեջ դրվեցին։ Կոմունիստների պատվիրակությունը վերջնագիր ներկայացրեց մուսավաթական կառավարությանն ու պառլամենտին՝ իշխանությունը հանձնելու մասին։ Մինչ պառլամենտը քննարկում էր վերջնագրի պահանջները, բոլշևիկների գլխավորած հեղափոխական զինված ջոկատները գիշերվա դեմ արդեն գրավել էին կառավարական շենքերը և քաղաքի կարևոր կետերը։ Ստեղծվեց ժամանակավոր ռազմահեղափոխական կոմիտե։ Ադրբեջանը հայտարարվեց սովետական սոցիալիստական հանրապետություն։ «Ադրբեջանի հեղկոմը և Բաքվի պրոլետարիատը,— գրում էր Գ. Կ. Օրջոնիկիձեն,— օգնության կանչեցին կարմիր բանակին, որի հայտնվելը խուճապ առաջացրեց մուսավաթական կառավարության շրջանում. վերջինս պառլամենտական ակտով իշխանությունը հանձնեց Ադրբեջանի կոմունիստական կուսակցությանը»[1]։ Ապրիլի 28-ին ժամանակավոր ռազմահեղափոխական կոմիտեի նիստում հաստատվեց Ադրբեջանի սովետական հանրապետության առաջին ժողովրդական կոմիսարների խորհուրդը Ն. Նարիմանովի գլխավորությամբ։

[1] **Г. К. Орджоникидзе,** Избранные статьи и речи. 1918—1937. ОГИЗ. Госполитиздат, 1945, с. 48.

Այսպիսով, իր ազատության և անկախության համար երբայրական ադրբեջանական ժողովրդի երկարատև պայքարը վերջացավ փայլուն հաղթանակով, որը նրան կանգնեցրեց սոցիալական ազատագրության և ազգային վերածնության լուսավոր ճանապարհի վրա։

1920 թվականի մայիսի 5-ին Վ. Ի. Լենինը ՌՍՖՍՀ ԺողԿոմխորհի անունից Ադրբեջանի նորաստեղծ սովետական կառավարությանն ուղարկեց ողջույնի հեռագիր[1]։

Ադրբեջանի հայ աշխատավորները նույնպես ջերմորեն ողջունեցին սովետական կարգերի հաղթանակը։ Ապրիլի 29-ին հայկական Լեռնային Ղարաբաղի կենտրոնում՝ Շուշիում ստեղծվեց հեղկոմ։ Մայիսի 12-ին Շուշի մտավ 11-րդ կարմիր բանակի 32-րդ հրաձգային դիվիզիայի 281-րդ գունդը։ Ղարաբաղի բնակչությունը ցնծության մեջ էր։ Մայիսի 18-ին Շուշի եկավ Գ. Կ. Օրջոնիկիձեն, որը մայիսի 22-ին Բաքվից հեռագրեց Վ. Ի. Լենինին, թե Ղարաբաղում «հայ և մուսուլման բնակչությունը ուրախությամբ է դիմավորում ռուսական կարմիր բանակին»[2]։

Մայիսի 26-ին Ղարաբաղի հայության 10-րդ համագումարը ողջունեց կարմիր բանակի զորամասերին։ Լեռնային Ղարաբաղը հայտարարվեց սովետական։ Ստեղծվեց Ղարաբաղի հեղկոմ՝ Սաքո Համբարձումյանի նախագահությամբ։ Մինչև հունիսի վերջը հեղկոմներ ստեղծվեցին մարզի բոլոր բնակավայրերում։

Ղարաբաղում սովետական կարգերի հաղթանակը նոր լիցք հաղորդեց հարևան հայկական մարզերի՝ Զանգեզուրի և Նախիջևանի աշխատավորների պայքարին։

Սովետական իշխանության հաղթանակն ազատագրություն բերեց Միջին Ասիայի ժողովուրդներին, որոնք ցարիզմի ժամանակ ենթարկվում էին ազգային ճնշման ու շահագործման։

Թուրքեստանում մղվող հեղափոխական պայքարի կենտրոնը Տաշքենդն էր։ 1917 թվականի հոկտեմբերի 28-ին բոլշևիկների գլխավորությամբ այստեղ ապստամբություն սկսվեց Ժամանակավոր կառավարության Թուրքեստանյան կոմիտեի իշխանու-

[1] *Տե՛ս Վ. Ի. Լենին, երկ, հ. 41, էջ 143։*
[2] *ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4005, ց. 1, գ. 105, թ. 1։*

թյան դեմ։ Ապստամբած Տաշքենդին օգնության եկան Թուրքեստանյան մյուս քաղաքների, գյուղերի և ղշլաղների աշխատավորները։ Ապստամբությունը տարածվեց Ղզզել-Արվաթի, Բայրամ-Ալիի, Մերվի, Չիմքենտի, Թերմեզի և այլ քաղաքներում և ղշլաղներում։ Ռուս բանվորների և զինվորների հետ ուս ուսի մարտնչում էին ուզբեկները, տաջիկները, ղազախները, Թուրքմենները։ Նրանց գլուխ էին կանգնած հեղափոխականներ Ս. Կասիմխոջաևը, Ա. Բաբաջանովը, Դ. Քամալովը, Տ. Աբդուրահմանովը, Մ. Միրիխոդիևը և ուրիշներ։ 1917 թվականի հոկտեմբերի 31-ին Տաշքենդում հաղթեց սովետական իշխանությունը։ Նոյեմբերի կեսերին այնտեղ տեղի ունեցավ սովետների երկրամասային համագումար, որը կազմեց Թուրքեստանի երկրամասի Ժողովրդական կոմիսարների խորհուրդ՝ Ֆ. Ի. Կոլեսովի գլխավորությամբ[1]։

Թուրքեստանի երկրամասում սովետական իշխանության հաղթանակն առաջ բերեց բայերի և մանապների, խաների և մուխուրդարների[2], բեգերի և էմլյակդարների[3], բայամիների[4], մուսուլմանական հոգևորականության և ռուս սպիտակգվարդիականների կատաղի դիմադրությունը։ Երկրամասի հակահեղափոխական ուժերն անգլիական իմպերիալիստների հետ միասին, որոնք վախենում էին իրենց ասիական գաղութների վրա սովետական Թուրքեստանի հեղափոխական ազդեցությունից, կազմակերպում էին հակասովետական դավադրություններ ու խռովություններ։

Ուզբեկական, ղազախական, տաջիկական և կիրգիզական բուրժուական ազգայնականները 1917 թվականի նոյեմբերի վերջերին Կոկանդ քաղաքում հրավիրեցին «համամուսուլմանական» երկրամասային IV համագումարը[5]։ Տեղի ընտրությունը պատահական չէր։ Կոկանդում շատ ուժեղ էր ռեակցիոն հոգևորականության ազդեցությունը։ Բացի այդ, այստեղ գտնվում էին մեծ թվով Թուրք ռազմագերիներ, որոնց մեջ քիչ չէին պանթուրքա-

[1] Թուրքեստանում սովետական իշխանության հաստատման մասին տե՛ս «Подготовка и проведение Великой Октябрьской социалистической революции в Туркестане». Сборник документов, Ашхабад, 1954.

[2] Ֆեոդալական-ցեղային առաջնորդներ։

[3] Բուխարայի էմիրի ատենանավորներ։

[4] Հարուստ գյուղացիներ (կուլակներ)։

[5] Տե՛ս ЦГАОР СССР, 1318, оп. 1, д. 23, л. 15.

կանները, մարդիկ, որոնք կատաղի ատելությամբ էին լցված սովետական իշխանության հանդեպ։ Համագումարին ներկա էին «Ալաշ», «Միլլի-Շուրո», «Շուրո-ի-իսլամիյա», «Ուլեմա» կուսակցությունները, հակասովետական մուսուլմանական այլ ուժեր, որոնք հանդես էին գալիս «Արևելքը մուսուլմաններին», «Թուրքեստանը թուրքեստանցիներին» դեմագոգիկ լոզունգներով։ Համագումարը, ի հակակշիռ Թուրքեստանի սովետական իշխանության, երկրամասը հայտարարեց «ինքնավար տերիտորիա», որը ստացավ «կոկանդյան ինքնավարություն» անունը։ Համագումարը ստեղծեց Թուրքեստանի ժամանակավոր կառավարություն Չոկաևի և Տինիբաշևի գլխավորությամբ։ Հակահեղափոխական այդ կառավարության մեջ մտան մուսուլման բարձր հոգևորականության ներկայացուցիչներ, բամբակի արտադրության և վաճառքի խոշոր կոմերսանտներ, հողատերեր, Ֆերղանայի քաղաքային բուրժուազիայի ներկայացուցիչներ։ Այդ ողջ խայտաբղետ կամպանիան բռնեց կատաղի հակահեղափոխական դիրք։ «Կոկանդյան ավտոնոմիայի» կառավարությունն օրենքներ ընդունեց, որոնցով հողը և ձեռնարկությունները հայտարարվեցին անձեռնմխելի մասնավոր սեփականություն։ «Ավտոնոմիստների» հակասովետիզմը մերթ ընդունում էր պանիսլամիզմի, մերթ պանթուրքիզմի ձև։ Հակահեղափոխական բուրժուանացիոնալիստական ինքնավարության դրոշի ներքո համախմբված մուսուլմանական բուրժուական նացիոնալիստների գլխավոր նպատակը Թուրքեստանը Սովետական Ռուսաստանից անջատելն էր։

«Կոկանդի ինքնավարության» հետ սերտ կապեր հաստատեցին անգլիական իմպերիալիստները, սպիտակգվարդիականները, ատաման Դուտովը, Բուխարայի էմիրը և Խիվայի խանը։ Ոտնատակ տալով իրենց իսկ ազդարարած «ազգային ինքնուրույնության» սկզբունքները, նրանք դիմեցին ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնին՝ Թուրքեստանի «ութ միլիոնանոց բնակչությանը ազատագրելու» խնդրանքով[1]։

Կոկանդը դարձավ հակահեղափոխության վտանգավոր օջախ։

[1] Տե՛ս И. С. Занушкин. Советская национальная политика и буржуазные историки. Становление Советского многонационального государства (1917—1922 годы) в современной американской историографии, М., «Мысль», 1917, էջ 77—78։

Ավտոնոմիստներին աջակցում էին Ղազախստանի և Անդրկասպյան երկրամասի ազգայնականները։ Շուտով «Կոկանդյան ավտոնոմիան» դարձավ ուլեմականների, աջ էսէռների, մենշևիկների և ռուս սպիտակգվարդիականների, հակահեղափոխական բոլոր ուժերի ձգողական կենտրոնը։

Ավտոնոմիստներին, սակայն, չհաջողվեց զգալի թվով զինված ուժեր հավաքել։ Նրանք դիմեցին սպիտակգվարդիական կազակային զորամասերի օգնությանը։ Ծավալվեցին արյունահեղ մարտեր հեղափոխական և հակահեղափոխական ուժերի միջև։ 1918 թվականի փետրվարին կոկանդյան հակահեղափոխական ուժերը պարտություն կրեցին, ինքնակոչ «ինքնավար կառավարությունը» ցրվեց։ Սովետական իշխանությունն ամբողջ Թուրքեստանում ամրապնդեց իր դիրքերը[2]։

Պետրոգրադում սոցիալիստական հեղափոխության հաղթանակից մի քանի օր չանցած սովետական կարգեր հաստատվեցին Ղազախստանի մի շարք քաղաքներում։ 1917 թվականի հոկտեմբերի 30-ին սովետական իշխանություն հռչակվեց Սիր-Դարիայի մարզի Պերովսկ քաղաքում։ Այնուհետև սովետական իշխանությունը հաղթանակեց Աուլիե-Աթայում, Բուկեևյան օրդայում, Կազալինսկում, Ակմոլինսկի և Կոկչետավի մարզերում, Սեմիպալատինսկում, Վերնիում, Օրենբուրգում և Ուրալսկում։

Ղազախ բայերը, մոլլաները և բուրժուական ազգայնականները ձեռնարկեցին բոլոր միջոցները Հոկտեմբերյան հեղափոխության հաղթարշավը Ղազախստանում կանգնեցնելու համար։

1917 թվականի նոյեմբերին Սեմիրեչիեի կազակական դորքի պարագլուխները բայերի և կուլակների աջակցությամբ ստեղծեցին հակահեղափոխական դիրեկտորիա՝ կազակային զորային կառավարություն։ Նույն թվականի դեկտեմբերին Օրենբուրգում տեղի ունեցած ղազախական բուրժուակալվածատիրական վերնախավերի համագումարը որոշում ընդունեց ղազախական մարզերի ինքնավարության և սեփական մուսուլմանական զինված ուժերի ստեղծման մասին։ Կազմվեց բուրժուաազգայնական Ալաշ օրդայի կառավարություն (ժամանակավոր ազգային խորհուրդ) կադետ Ա. Բուկեյխանովի գլխավորությամբ, որը ներկայացնում էր բուրժուաֆեոդալական վերնախավերի «Ալաշ» կուսակցությունը։ Միաժամանակ Ղազախստանի տարբեր մասերում կազմակերպվեցին սպիտակգվարդիական ուրիշ «զորային կառավարություններ», որոնք Ալաշ օրդայի հետ միասին հանդես էին գալիս սովետական իշխանության դեմ։

Տեղական բոլշևիկների գլխավորությամբ բուրժուական նացիոնալիստների դեմ ոտքի ելան ղազախ աշխատավորները, որոնք և վերջին հաշվով որոշեցին «Ալաշ օրդայի» բախտը։ Սովետական իշխանության հաստատման ու ամրապնդման համար պայքարի առաջին գծում էին ղազախ ժողովրդի լավագույն զավակներ Տ. Ուտեպովը, Ա. Ջանգիլդինը, Կ. Կուշելկովը, Ա. Ռոզիբակիևը, Յու. Բաբաևը, Ս. Նուրամովը և շատ ուրիշներ։ Ծավալված մարտերում հակահեղափոխականների հիմնական ուժերը ջախջախվեցին, որոնց մնացորդները որոշ ժամանակ ապաստան գտան կոլչակյանների մոտ և նրանց հետ միասին էլ վերջնականապես ջախջախվեցին։

Սոցիալիստական հեղափոխությունը համառ պայքարի գնով հաղթանակեց Թաթարիայում և Բաշկիրիայում։

1917 թվականի հոկտեմբերի 26-ին (նոյեմբերի 8-ին) սովետական իշխանություն հաստատվեց Կազանում։ Բոլշևիկյան կուսակցության առաջադրանքով թաթար աշխատավորների շրջանում հեղափոխական լայն աշխատանք էին ծավալել թաթար բոլշևիկները՝ Քամիլ Յակուբովը, Սահիպգարե Սաիդ-Գալիևը, Մինուլլա Վախիտովը, Յակուբ Չանիշևը, Սադիկ Ախտյամովը և ուրիշներ։ Թաթար ժողովուրդը խանդավառությամբ ընդունեց սովետական իշխանության պատմական դեկրետները և մեծ ոգևորությամբ ձեռնամուխ եղավ նորաստեղծ կարգերի ամրապնդմանը։

1917 թվականի հոկտեմբերի 26-ին սովետական իշխանություն հռչակվեց Բաշկիրիայում։ Ուֆայում ստեղծվեց նահանգային հեղկոմ, որի ռեալ իշխանությունը տարածվեց Բաշկիրիայի տարածքի մեծ մասի վրա։

Թաթարիայում, Բաշկիրիայում, ողջ Պովոլժիեում սովետական իշխանության հաղթանակի գործում կարևոր դեր խաղացին Հարավարևելյան ռազմաճակատում կռվող մուսուլմանա-

---

[1] Տե՛ս **Н. Ф. Шитов,** В. И. Ленин и пролетарский интернационализм (1917—1924 гг.), изд-во Политической литературы, Москва, 1974, էջ 22:

[2] Տե՛ս «Упрочение Советской власти в Узбекистане». Сборник документов, т. 2. Ташкент, 1972, էջ 75—76:

կան զորամասերի մարտիկները[1]։ Սրանք զորացրվելով, իրենց հավատարմությունն էին հայտնում սովետական իշխանությանը և վերադառնալով հայրենի աուլներն ու քաղաքները, լծվում նոր, սովետական կարգերի հաղթանակի համար մղվող պայքարի գործին[2]։

Սակայն ինչպես թաթարական, այնպես էլ բաշկիրական բուրժուական նացիոնալիստները Հոկտեմբերյան հեղափոխությունը դիմավորեցին զենքը ձեռքին։ Նրանք հրաժարվեցին ճանաչել սովետական իշխանությունը, հանդես եկան ամբողջ իշխանությունը Սահմանադիր ժողովին հանձնելու պահանջով։ Շատերն էլ համալրեցին Դուտովի, Կոլչակի և մյուս հակահեղափոխական բանդաների շարքերը։

Այն բանից հետո, երբ բուրժուազգայնական ուժերին պարզ դարձավ, որ իրենց այդ պահանջն անիրագործելի է, նրանք իրենց ողջ ջանքերը կենտրոնացրին թաթարական և բաշկիրական ազգային ինքնավարության խնդրի վրա։

Սովետական իշխանությունն առաջադրեց թաթարներին և բաշկիրներին ՌՍՖՍՀ կազմում ազգային սովետական ինքնավարություն ապահովելու ծրագիրը[3]։ Թաթար և բաշկիր աշխատավորները ջերմորեն ընդունեցին սովետական իշխանության այդ կարևոր նախաձեռնությունը և պատրաստակամություն հայտնեցին ամեն գնով նպաստելու գործի հաջողությանը[4]։ Աշխատավոր մասսաների ընդերքում ծնունդ էին առնում կարմիր բանակի թաթարաբաշկիրական զորամիավորումներ, որոնք կանգնում էին սովետական իշխանության պաշտպանության դիրքերում[5]։ Ամենուրեք հրավիրվող սովետների համագումարները, կոնֆերանսները, նիստերը արտահայտվում էին սովետական ինքնավարության օգտին[6]։ Եվ երբ 1918 թվականի մարտ-ապրիլին սովետական կառավարությունը կոնկրետ աշխատանքներ ծավալեց այդ ուղղությամբ, թաթար և բաշկիր բուրժուական նացիոնալիստները ասարածեցին այն վարկածը, թե բոլշևիկներն այդ քայլին են դիմում տակտիկական նկատառումներով, ստիպողաբար, հիմնականում այն պատճառով, որ թուրքական զորքերը ներխուժել են Կովկասի խորքերը։ Ժամանակավոր, խաբուսիկ ու անցողիկ այդ քայլով, ասում էին նրանք, սովետներն ըստ էության պրոպագանդիստական սրշավ են սկսում, փորձելով պատասխան բարոյական հարված հասցնել թուրքերին, ինչպես նաև Ռուսաստանի թուրքալեզու ժողովուրդներին ցույց տալ, թե մուսուլմանների իսկական ազատությունը բոլշևիկյան հեղափոխության մեջ է։

Միաժամանակ բուրժուական նացիոնալիստները թաթարների ու բաշկիրների ազգային սովետական ինքնավարությանը հակադրեցին ազգային բուրժուական ինքնավարություն ստեղծելու իրենց պլանները։ Նրանք, որ 1917 թվականի փետրվար-հոկտեմբերին հանդես էին գալիս կուլտուր-ազգային ինքնավարություն ունենալու պահանջով, սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո արագորեն վերակառուցեցին իրենց տակտիկան, մի կողմ դնելով կուլտուր-ազգային ինքնավարության հարցը, առաջ քաշեցին բուրժուական ազգային պետականություն ունենալու պահանջը։ Հեղափոխության և հակահեղափոխության միջև այդ խնդրի շուրջը ծավալվեց երկարատև և արյունալի պայքար։

Դեռևս 1917 թվականի նոյեմբերի 29-ին Ուֆայում հրավիրված ներքին Ռուսաստանի և Սիբիրի թյուրք-թաթարների ազգային ժողովը որոշում ընդունեց կազմակերպել թաթարա-բաշկիրական միացյալ բուրժուական պետություն՝ Իդել-Ուրալ շտատ (Ուրալա-Վոլգյան նահանգ) անունով[1]։ Այդ գաղափարը մուսուլմանական բուրժուական նացիոնալիստները փայփայում էին նաև հետագա երկու տարիներին։ Հենց այստեղ էլ՝ Ուֆայի ազգային ժողովում կազմավորվեց Ուրալա-Վոլգյան նահանգի ստեղծումն իրականացնող կոլեգիա, ինչպես նաև ձևա-

---

[1] Տե՛ս «Разложение армии в 1917 году», М.—Л., 1925, էջ 85. «Из истории борьбы за установление Советской власти», ноябрь 1917—февраль 1918 г. «Сборник исторических документов и материалов», М., 1943, էջ 56:

[2] Տե՛ս ЦГВИА, ф. 2067, оп. 3, д. 36, лл. 256, 257; д. 673, л. 294.

[3] Տե՛ս ЦГАОР СССР, ф. 1318, оп. 1, д. 37, л. 6.

[4] Տե՛ս ЦГАОР СССР, ф. Р—1318, оп. 1, д. 27, л. 37; д. 38, л. 44.

[5] Տե՛ս ЦГАОР СССР, ф. 1318, оп. 1, д. 21, л. 49—51; д. 23, л. 53—56; д. 82, л. 3.

[6] Տե՛ս ЦГАОР СССР, ф. Р—1318, оп. 1, д. 73, л. 71.

[1] Տե՛ս «Образование Башкирской Автономной Советской Социалистической республики». Сборник документов и материалов. Уфа, 1959, էջ 128, 129:

վորվեց Ազգային վարչություն (Միլլի իդարա)՝ Ս. Մաքսուդովի գլխավորությամբ։

Իդել-Ուրալ շտատի ստեղծման օրերին թաթարական և բաշկիրական բուրժուական ազգայնականները ծավալեցին բուռն ագիտացիա և պրոպագանդա։ Ենթադրվում էր, որ շտատը հրակայատարած պետություն է լինելու, որը միավորելու է Կազանի, Ուֆայի, Սիմբիրսկի, Վյատկայի, Պերմի նահանգները։ Բուրժուական ազգայնամոլները բնավ հաշվի չէին նստում այն իրողության հետ, որ ստեղծվելիք Ուրալա-Վոլգյան պետության տարածքներում թաթարները և բաշկիրները փոքրամասնություն էին կազմում։ Օրինակ, Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին թաթարները բնակչության մեջ կազմում էին. Կազանի նահանգում՝ 31, Ուֆայի՝ 15, Սամարայի՝ 11, Սիմբիրսկի՝ 9, Վյատկայի՝ 5, Պերմի նահանգում՝ 5,5 տոկոս[2]։

Բուրժուական ազգայնականները լի էին իրենց երազած բուրժուական պետությունն «ազգային սվիններով» պաշտպանելու վճռականությամբ։

Այդ նպատակով Թաթարիայում ստեղծվեց բուրժուաազգայնական մի խոշոր զինվորական կազմակերպություն՝ Հարբի շուրա (ռազմական խորհուրդ) անունով, որի կենտրոնը Կազանն էր։ Ստեղծվեցին նաև առանձին թաթարական գնդեր, որոնց մեջ մոբիլիզացվեցին հազարավոր մարդիկ. Կազանում՝ 20 հազար, Օրենբուրգում՝ 12 հազար, Ուֆայում՝ 15 հազար, Պովոլժիեի քաղաքներում՝ մոտ 10 հազար մարդ[3]։ Հարբի շուրոն կապեր հաստատեց ուկրաինական Կենտրոնական ռադայի, Բաշկիրական կուրուլթայի, ազրբեջանական մուսավաթականների, Թուրքեստանյան ավտոնոմիստների, ղազախական ալաշ-օրդացիների, չուվաշ, մարի, ուդմուրտ ազգայնականների հետ։

Բաշկիրական բուրժուական ազգայնականները նույնպես հենվում էին իրենց ենթակա ազգային զորամասերի վրա և ամուր

---

[1] Տե՛ս «Образование Татарской АССР». Сборник документов и материалов, Казань, 1963, էջ 30։

[2] Տե՛ս Г. Ибрагимов, К истории организации ТССР,— «Информационный бюллетень ВОКС», 1927, № 23—25, էջ 2։

[3] Տե՛ս М. А. Сайдашев, Ленин и социалистическое строительство в Татарии 1918—1923, էջ 58։

կապերի մեջ էին մուսուլմանական մյուս տարածքների ազգայնական «կառավարությունների» հետ։

Թաթարական Հարբի շուրոյի և բաշկիրական բուրժուաազգայնական ուժերի շուրջը համախմբվեցին ռուս հակահեղափոխական տարրերը, այդ թվում ուղղափառ հոգևորականները։ Սրանք հանկարծ սկսեցին խոսել թաթարների և բաշկիրների կուլտուրականության և մարդասիրության մասին։ Ավելին, նրանք նույնիսկ ասում էին, թե «ճակատագիրը թաթարներին է վստահել ռուսական պետության փրկիչների դերը»։ «Լավ է թաթարական խանությունը, քան բոլշևիկյան թագավորությունը»,— ասում էին նրանք[1]։

Ի պատասխան ռուսական բուրժուազիայի, նրա կադետական և էսէռամենշևիկյան սպասավորների թուրքամետ հայտարարությունների, Հարբի շուրոն խոստացավ զինված պայքար սկսել սովետական իշխանության դեմ։

Իմանալով այդ մասին, Կազանի սովետը և նրա մուսուլմանական կոմիսարիատը որոշեցին վճռական գործողություններով վերացնել հակահեղափոխական օջախները։ Արգելվեց բուրժուաազգայնական կազմակերպությունների գործունեությունը, փակվեցին նրանց տպագիր օրգանները, զինաթափվեց թաթարական և բաշկիրական ազգային զորամասերի մի մասը, իրականացվեցին սովետական կարգերի ամրապնդման նպատակին ուղղված այլ միջոցառումներ[2]։

Սակայն 1918 թվականի ամռանը Թաթարիայում, Բաշկիրիայում և Պովոլժիեում հաստատված սովետական իշխանությունը ժամանակավորապես ընկավ։ Հուլիսի սկզբներին սպիտակ չեխերը և ռուսական սպիտակգվարդիականները զավթեցին Ուֆան, Զելյաբինսկը, Օրենբուրգը, Կազանը։ Հաստատվեց ինտերվենտների և սպիտակգվարդիականների ժամանակավոր արյունալի տիրապետությունը, առաջ եկան սպիտակգվարդիական, կազակական բազում «կառավարություններ»։

1918 թվականի ամռանը սպիտակգվարդիական «կառավարություն» ստեղծվեց Սամարայում։ Դրա ոգեշնչողը այսպես

---

[1] Տե՛ս М. А. Сайдашев, Ленин и социалистическое строительство в Татарии 1918—1923, էջ 58։

[2] Տե՛ս «Образование Татарской АССР». Сборник документов и материалов, էջ 314—315։

կոչված Սահմանադիր ժողովի անդամների կոմիտեն էր (Комитет членов Учредительного собрания— КОМУЧ): Սամարայի «կառավարությունը» իր իշխանության տակ առավ նաև թաթարական տարածքները, այդ թվում՝ Կազանը։ ԿՈՄՈՒՉ-ի կառավարությանը կից ստեղծվեց հատուկ մուսուլմանական կոլեգիա, որը հենց սկզբից հետևողական հակաբոլշևիկյան ուղղություն վերցրեց։ Գ. Բատալի խմբագրությամբ կրկին սկսեց լույս տեսնել «Կուրուլթայ» ծայրահեղ հետադիմական, բացահայտ հակահեղափոխական թերթը։ Թաթարական բուրժուական ազգայնականներն ակտիվորեն մասնակցում էին սպիտակգվարդիականների կողմից վերականգնված և հակահեղափոխության օջախ դարձած Կազանի քաղաքային դումայի աշխատանքներին։ Կոմուչականներին փութաջանորեն աջակցում էին թաթարական բուրժուական ազգայնականներ Ֆուադ Թուկտարովը, Սաիդգարեյ Ալկինը, Ամիր Մամլեևը, Իսհակ Ալմաշովը, մոլլաներ Հաբդրահման Իսհակովը, Կասիմ Սալիևը և ուրիշներ։ Միլլի շուրոն, Հարբի շուրոն, Միլլի իդարան (Ազգային վարչություն) և թաթարական բուրժուազիայի մյուս քաղաքական օրգանները դրվեցին սպիտակգվարդիականների տրամադրության տակ։ Այդպես վարվեց նաև թաթարական հասարակության տականքներից մեկի՝ երշիկագործ Աբդուլլա Կիլդիշևի հրամանատարությամբ կազմակերպված հեծյալ բանդիտների խումբը, որին տրվեց «մուսուլմանական էսկադրոն» մեծադղորդ անունը։

Հակասովետական պայքարի միասնական նպատակները կոմուչականների հետ էին միավորել նաև չուվաշական բուրժուական ազգայնականներին, որոնց գլուխ կանգնած էին Գ. Ալյունովը, Ս. Նիկոլաևը, Դ. Պետրով-Յումանը, Ի. Վասիլևը և ուրիշներ։ Վերջինս նաև խմբագրում էր «Խիպար» կատաղի հակասովետական լրագիրը, որը սկսել էր լույս տեսնել 1918 թվականի օգոստոսից։

ԿՈՄՈՒՉ-ի «մայրաքաղաք» Սամարան թաթար, բաշկիր, չուվաշ հակահեղափոխականների համար յուրատեսակ Մեքքա դարձավ, որտեղ նրանք ստանում էին «կառավարական դեկավար հրահանգներ» ու հանձնարարականներ և, վերադառնալով տեղերը, ճգնում էին անթերի կատարել դրանք։

1918 թվականի ամռան վերջերին Զելյաբինսկում, իսկ սեպտեմբերին Ուֆայում տեղի ունեցան սպիտակգվարդիական պարագլուխների «պետական» խորհրդակցություններ, որտեղ քննարկվեց «Համառուսաստանյան կառավարություն» կազմելու հարցը։ Զելյաբինսկի «պետական» խորհրդակցությանը մասնակցեցին մուսուլմանական հակահեղափոխության մի շարք պարագլուխներ, այդ թվում Թուրքեստանի ժամանակավոր կառավարության նախագահ Մուստաֆա Չոկաևը, բաշկիր նացիոնալիստ Զեքի Վալիդովը, թաթար նացիոնալիստներ Թուհվաթուլլինը, Մամլեևը և ուրիշներ։

Ավելի բազմամարդ էր Ուֆայի «պետական» խորհրդակցությունը։ Եկել էին սպիտակգվարդիական, կազակական բազմաթիվ «կառավարությունների» ներկայացուցիչներ, կադետներ, էսէռներ, մենշևիկներ։ Ներկա էին նաև թյուրք-թաթարական ազգայնականներ։

Նախօրյակին դարձյալ Ուֆայում հավաքվեց թաթարական, բաշկիրական, կիրգիզական, ղազախական և այլ ազգայնամոլների մի խառնաժողով, որն իրեն հայտարարեց «Թյուրք-թաթարների համառուսաստանյան կոնֆերանս»։ «Կոնֆերանսի» անունից բուրժուական ազգայնականները մի խնդրագիր ներկայացրին Ուֆայի «պետական» խորհրդակցությանը։ Նրանք, որ մինչ այդ հավակնում էին ստեղծել Իդել-Ուրալի, Թուրքեստանի, Ղրիմի և այլ մուսուլմանական պետական կազմավորումներ, այժմ բավարարվում էին միայն նրանով, որ խնդրում էին ապագա «Համառուսաստանյան կառավարության» մեջ Ռուսաստանի մուսուլմաններին մինիստրական մեկ տեղ տալ։

Խորհրդակցությունում կազմավորվեց հինգ հոգուց բաղկացած «Ժամանակավոր համառուսաստանյան կառավարություն»՝ այսպես կոչված Ուֆայի դիրեկտորիան։ «Կառավարության» մեջ մուսուլման ազգայնականները չստացան ոչ մի տեղ։ Դիրեկտորիան նպաստեց Կոլչակի հրոսակների ժամանակավոր հաջողությանը և նրա արյունալի դիկտատուրայի հաստատմանը։

1918 թվականի աշնանը կարմիր բանակը նորից ազատագրեց Թաթարիան, Բաշկիրիան, Պովոլժիեն։ Բայց մի քանի ամիս հետո սովետական իշխանությունը նորից ժամանակավորապես ընկավ։

Ստանալով օտարերկրյա իմպերիալիստական տերությունների առատաձեռն օգնությունը և հավաքելով հսկայական բանակ, նախկին ցարական ծովակալ Կոլչակը սկսեց հակասովետական արշավ, գրավելով զգալի տարածություններ, այդ թվում Թաթարիան ու Բաշկիրիան։ Հաստատվեց հակահեղափոխության

արյունալի դիկտատուրա։ Վերացվեցին սովետական հիմնարկները, ֆիզիկապես անխնա ոչնչացվում էին հեղափոխության նվիրյալ մարտիկները։

Թաթարական և բաշկիրական նացիոնալիստները կոլչակյանների օգնականներն էին ռազմաճակատում և թիկունքում, խոսքով և գործով աջակցում էին նրանց։ Հավատարիմ հպատակի փութաջանությամբ նրանք փնտրում-գտնում և սպիտակ բանդաների հոշոտմանն էին հանձնում կուսակցական և սովետական աշխատողներին, թաթար և բաշկիր առաջավոր մտավորականներին։ Կազանում մոլեգնում էին մոլլա Աբդուլլա Ապանասևի բանդաները, որոնք գնդակահարեցին նշանավոր հեղափոխական բոլշևիկ Քամիլ Յակուբովին։ Բուգուլմայի գավառում անթիվ չարագործություններ կատարեց Ալմատևսկ գյուղի մոլլա Հադի Ատլասովը։ Այդ ամենը կրկին հաստատում էր լենինյան այն դրույթը, որ «ամեն մի իսկապես լուրջ և խոր քաղաքական հարցում խմբավորումը տեղի է ունենում ըստ դասակարգերի և ոչ թե ըստ ազգերի»[1]։ Արյունալի հաշվեհարդարներով բուրժուական ազգայնականներն իրենց վերջնականապես մերկացրին աշխատավոր մասսաների աչքում։

Չնայած այն բանին, որ բուրժուական նացիոնալիստները կաշվից դուրս էին գալիս, որպեսզի շահեն Կոլչակի վստահություն, վերջինս բնավ մտադիր չէր ազգային հարցում որևէ զիջում անելու նրանց։

Այսպես, բուրժուական ինքնավարություն ստանալու նպատակով ներքին Ռուսաստանի և Սիբիրի մուսուլմանների հոգևոր վարչության ղեկավար, մուֆթի Գալիմջան Բարուդին, նրա օգնականներ Սալիհջան Ուրմանովը և Գայազ Իսհակովը մեկնեցին Կոլչակի զորակայան և ընդունելություն խնդրեցին «գերագույն կառավարչից»։ Ունկնդրելով թաթարական բուրժուազիայի պատվիրակներին, Կոլչակը հայտարարեց, որ մեծ Ռուսաստանում տեղ չի լինի որևէ ազգային վարչության, ազգային պառլամենտի կամ համագումարի համար և որ Ռուսաստանի մուսուլմանները լավագույն դեպքում կունենան «Մահմեդական հոգևոր ժողով» Եկատերինա II-ի 1778 թվականի հրամանագրի համապատասխան։ Կոլչակը լսել անգամ չէր ուզում նաև Բաշկիրիային ազգային ինքնավարություն տալու մասին։

[1] Վ. Ի. Լենին, նշված, հ. 24, էջ 168։

Մուսուլմանական բոլոր գրավված շրջաններում վերականգնելով հին կարգերը, Կոլչակը վարում էր ցարիզմի ժամանակների մեծապետական, ռազմագաղութային քաղաքականություն։ Նրա կառավարության ներքին գործերի մինիստրությանն առընթեր ստեղծված այսպես կոչված «տեղաբնիկների բաժինը» իր գործունեությունը սկսեց նրանով, որ ոչնչացրեց ազգային ինքնավարության բոլոր մարմինները։

Պատիտակ ծովակալին հակահարված տալու համար սովետական հանրապետությունը մոբիլիզացրեց իր ուժերը։ Մոսկվայից, Պետրոգրադից և այլ քաղաքներից անընդհատ հոսանքով Արևելյան ռազմաճակատ էին ուղևորվում պրոլետարական գնդեր։ Նրանց կողքին էին նաև մուսուլմանական ազգային կազմավորումները։ Քաղաքացիական պատերազմի տարեգրության մեջ հերոսական էջեր գրեցին Առաջին թաթարական հրաձգային բրիգադը, բաշկիրական կարմիր զորամիավորումը։ Կարմիր բանակի ուրիշ զորամիավորումների կազմում նույնպես սպիտակգվարդիական զորքերի դեմ կռվում էին թաթար և բաշկիր ժողովուրդների հազարավոր զավակներ։

Սովետական իշխանության համար պայքարը համառ բնույթ ընդունեց Ղրիմում։ 1918 թվականի հունվարին ամբողջ թերակղզում հաստատվեց բանվորագյուղացիական իշխանություն։ Նույն թվականի մարտին ստեղծվեց Տավրիդայի սովետական սոցիալիստական հանրապետությունը, որը հայտարարվեց ՌՍՖՍՀ անբաժանելի մաս։ Սկսվեցին իրականացվել արմատական սոցիալիստական վերափոխումներ։ Սովետական իշխանությունը հսկայական ուշադրություն էր նվիրում ազգային հարցի արդարացի լուծմանը։ Ղրիմի թաթար բնակչությունը ստացավ բոլոր իրավունքներն ու ոչ մի հնարավորություններ ակտիվորեն մասնակցելու սովետական պետական շինարարությանը։ Մուսուլմանական եկեղեցին անջատվեց պետությունից, դպրոցներում արգելվեց կրոնի ուսուցումը։

Տավրիդայի սովետական հանրապետությունը գոյություն ունեցավ մինչև 1918 թվականի ապրիլ ամիսը։ Խախտելով Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, գերմանական զորքերն ապրիլի կեսերին ներխուժեցին Ղրիմ և ռազմակալեցին այն։ Ղրիմի թաթար նացիոնալիստները «Միլլի-Ֆիրկա» բուրժուական կուսակցության գլխավորությամբ Բախչիսարայում ստեղծեցին «Կուրուլթայ», որը կազմավորեց իր կառավարությունը՝ դիրեկ-

տորիան։ Ստանալով օկուպանտների լիակատար պաշտպանությունը, սպիտակգվարդիականները և թաթար նացիոնալիստները արյունալի հաշվեհարդարների ենթարկեցին Ղրիմի կուսակցական և սովետական աշխատողներին։ Ալուշտայի շրջանում նրանք գնդակահարեցին Տավրիդայի սովետական հանրապետության կառավարության համարյա բոլոր անդամներին։ 1918 թվականի նոյեմբերին Ղրիմում ափ իջան Անտանտի զորքերը՝ փոխարինելով գերմանական օկուպանտներին։ 1919—1920 թվականներին անգլո-ֆրանսիական օկուպանտների հետ միասին Ղրիմը տնօրինում էին Դենիկինի, իսկ հետո նաև Վրանգելի սպիտակգվարդիական զորքերը։

Բոլշևիկների գլխավորած պարտիզանական ջոկատներն անընդհատ հարվածներ էին հասցնում հակահեղափոխության ուժերին։ ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ Հարավարևմտյան ռազմաճակատի Ղրիմի հատվածը 1920 թվականի սեպտեմբերի 21-ին առանձնացվեց որպես ինքնուրույն՝ Հարավային ճակատ (հրամանատար՝ Մ. Վ. Ֆրունզե, ռազմհեղկոմի անդամներ՝ Ս. Ի. Գուսև և Բելա Կուն)։ 1920 թվականի նոյեմբերին Ղրիմը լիովին ազատագրվեց։ Ստեղծվեց կուսակցության մարզկոմ, որի քարտուղար ընտրվեց Ռ. Ս. Զեմլյաչկան (Սամոյլովա)։ Պատասխանատու կուսակցական պոստեր ստանձնեցին Բելա Կունը, Դ. Ի. Ուլյանովը և ուրիշներ։ 1920 թվականի նոյեմբերի 16-ին կազմակերպվեց Ղրիմի հեղկոմը, որի նախագահ նշանակվեց Բելա Կունը։ 1921 թվականի հոկտեմբերի 18-ին սովետական կառավարությունը դեկրետ ընդունեց ՌՍՖՍՀ կազմում Ղրիմի ԻՍՍՀ ստեղծելու մասին[1]։

Ինչպես Ղրիմում, այնպես էլ մուսուլմանաբնակ մյուս աուլներում և գյուղերում սոցիալիստական հեղափոխությունն ավելի դանդաղ էր զարգանում, քան քաղաքներում և ռուսական գյուղերում։ Դա բացատրվում էր մուսուլման գյուղացիների վրա իրենց բեգերի, բայերի, մանապների, մոլլաների ուժեղ ազդեցությամբ, նահապետական-ֆեոդալական հարաբերությունների մնացուկների առկայությամբ, թուրքական էմիսարների և գործակալների, տեղական բուրժուազգայնական ուժերի ակտիվ գործունեությամբ։

Չնայած դրան, սոցիալիստական հեղափոխության հաղթանակը Ադրբեջանում, Հյուսիսային Կովկասում և Դաղստանում, Թաթարիայում և Բաշկիրիայում, Թուրքեստանում և Ղազախստանում՝ ցարական Ռուսաստանի հետամնաց գաղութային ծայրամասերում վիթխարի նշանակություն ունեցավ ամբողջ Արևելքի համար։ Ցարիզմի, ռուսական բուրժուազիայի և իրենց շահագործող դասակարգերի դեմ մղվող պայքարում աշխատավոր մուսուլման մասսաները համախմբվել էին բոլշևիկյան կուսակցության դրոշի ներքո, որը նրանց ցույց էր տալիս սոցիալական և ազգային ճնշման կապանքներից դուրս գալու, նոր կյանք կառուցելու ճշմարիտ ուղին։

Վ. Ի. Լենինը, կուսակցության Կենտկոմը ելնում էին այն բանից, որ հաղթանակած սովետական իշխանությունը երկրի ծայրամասերում կարող է ամրապնդվել միայն այն դեպքում, եթե տեղական ժողովուրդների ծոցից դուրս եկած ամենաառաջավոր և գիտակից տարրերը մտնեն կոմունիստական կուսակցության շարքերը և հետևողական պայքար ծավալեն նրա քաղաքականության իրականացման համար։

ՌԿ(բ)Կ անդամության ինտերնացիոնալ սկզբունքը լայն հնարավորություններ էր ստեղծում կուսակցության մեջ ներգրավելու երկրի բոլոր ժողովուրդների առաջավոր ներկայացուցիչներին, այդ թվում նաև այն ժողովուրդներին, որոնց միջավայրում բանվոր դասակարգը սակավաթիվ էր, իսկ պրոլետարական շարժումը դեռ գտնվում էր սաղմնային վիճակում։

Կոմունիստական կուսակցության մեջ էին մտնում ոչ միայն մուսուլման առաջավոր բանվորները, այլև դեռևս 1917 թվականի գարնանն ու ամռանը Ռուսաստանի ծայրամասային շրջաններում ձևավորված մուսուլմանական սոցիալիստական կոմիտեների (ՄՍԿ) առավել հեղափոխական տարրերը։ ՄՍԿ շարքերից կոմունիստական կուսակցության շարքերն անցան զգալի թվով թաթարներ և բաշկիրներ։ Այդպես վարվեցին նաև 1917 թվականի գարնանը Դաղստանում ստեղծված լուսավորական-ագիտացիոն բյուրոյի և սոցիալիստական խմբի, նույն թվականի ամռանից Օսեթիայում գործող «Կերմեն» խմբի, Թուրքեստա-

[1] 1945 թվականի հունիսին ՌՍՖՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Ղրիմի ինքնավար սովետական հանրապետությունը վերակազմվեց Ղրիմի մարզի։ 1954 թվականին, Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման 300-ամյակի առթիվ, Ղրիմի մարզը ՌՍՖՍՀ-ից անցավ Ուկրաինական ՍՍՀ-ին։

նում գործող «Իթթիֆակ» և «Իլլյաթիա» աշխատավոր մուսուլմանների միությունների առավել հեղափոխական տարրերը։

1918 թվականի հունիսին կայացած Թուրքեստանի բոլշևիկյան կազմակերպությունների I համագումարը Սովետական Թուրքեստանի ողջ տարածքում գտնվող կուսակցական բոլշևիկյան կազմակերպությունները միավորեց երկրամասային կազմակերպության մեջ, և ձևավորվեց Թուրքեստանի կոմկուսակցությունը՝ ՌԿ(բ)Կ-ի անբաժանելի բաղադրիչ մասը։ Ստեղծվեց նաև կուսակցության կենտրոն՝ ԹԿԿ երկրկոմ, որը մեծ գործունեություն ծավալեց ամբողջ երկրամասում սոցիալիստական հեղափոխության առաջադրած խնդիրների կատարման ուղղությամբ։ 1918 թվականի աշնանը ձևավորվեց Բուխարայի կոմունիստական կուսակցությունը։ Իրենց գաղափարական-քաղաքական ազդեցությունը մասսաների մեջ ուժեղացնում էին Թաթարիայի, Բաշկիրիայի, Ղազախստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասի և Դաղստանի բոլշևիկյան կազմակերպությունները։

Ազգային փոքրամասնությունների կոմունիստների և աշխատավորների շրջանում մայրենի լեզվով ագիտացիոն-պրոպագանդիստական և քաղաքական աշխատանք տանելու նպատակով կուսակցական կոմիտեներին առընթեր ստեղծվեցին ՌԿ(բ)Կ ազգային սեկցիաներ։ Դրանց մի մասը (Լատվիական, Լիտվական և Էստոնական) ձևավորվեց նախկինում գոյություն ունեցող ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների բազայի վրա։ Մյուս՝ հրեական, չուվաշական, մարիական, ուդմուրտական, մորդվական սեկցիաները, թաթարական սեկցիաների մեծ մասը, Միջին Ասիայի մուսուլմանական սեկցիաները և որոշ այլ սեկցիաներ դեռ նոր էին ձևավորվում։ ՌԿ(բ)Կ ազգային սեկցիաները հանդիսացան կազմակերպական այն ձևը, որ ազգային փոքրամասնությունների հեղափոխական, առաջադեմ տարրերին օգնեց առավել անհիվանդագին ձուլվել կուսակցության միասնական շարքերին։

ՌԿ(բ)Կ Կենտկոմը մշտապես փնտրում էր ազգային հանրապետություններում և մարզերում կուսակցական կազմակերպությունների աշխատանքի նորանոր ձևեր ու մեթոդներ։ 1918 թվականի նոյեմբերի 4—12-ը Մոսկվայում կայացավ Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների համառուսաստանյան I համագումարը, որը կարևոր նշանակություն

ունեցավ այդ կազմակերպությունների հետագա ամրապնդման, ՌԿ(բ)Կ Կենտկոմի շուրջը դրանց սերտորեն համախմբելու տեսակետից։ Համագումարն ընտրեց Մուսուլմանական կոմունիստական կազմակերպությունների կենտրոնական բյուրո, որը որոշ ժամանակ անց կոչվեց Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների կենտրոնական բյուրո։ Այս օրգանն ուղղություն էր տալիս կազմակերպությունների աշխատանքներին, կոորդինացնում դրանց գործողությունները[1]։ Կենտրոնական բյուրոն գործում էր ՌԿ(բ)Կ Կենտկոմի անմիջական ղեկավարությամբ ու ցուցումներով։ 1918 թվականին և 1919 թվականի առաջին ամիսներին բյուրոյի աշխատանքները գլխավորում էր Ի. Վ. Ստալինը, իսկ հետո՝ Ազգությունների ժողովրդական կոմիսարիատի պատասխանատու աշխատողներից մեկը՝ Սուլթան-Գալիևը։ Տեղերում նույնպես ստեղծվեցին մուսուլմանական կոմունիստական օրգաններ։ ՌԿ(բ)Կ Թուրքեստանի երկրամասային կոմիտեին առընթեր 1919 թվականի գարնանը ստեղծվեց Մուսուլմանական կոմունիստական կազմակերպությունների երկրամասային բյուրո (Մուսբյուրո)։ Պովոլժիեում, Ուրալում, Կովկասում և Թուրքեստանում կուսակցության գավկոմներին առընթեր ստեղծվեցին մուսուլմանական սեկցիաներ, իսկ նահանգկոմներին առընթեր՝ այդ սեկցիաների բյուրոներ[2]։ 1921 թվականի հունվարին դրանք վերակազմվեցին թյուրքական ժողովուրդների սեկցիաների և անցան ՌԿ(բ)Կ Կենտկոմի ենթակայության տակ։

1919 թվականի նոյեմբերի 22-ից դեկտեմբերի 3-ը տեղի ունեցավ Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների II համագումարը, որին մասնակցում էին Թուրքեստանի, Ադրբեջանի, Խիվայի, Բուխարայի, Կիրգիզիայի, Թաթարիայի, Չուվաշիայի, Բաշկիրիայի, Կովկասի և այլ վայրերի մուսուլմանական կոմունիստական կազմակերպությունների ներկայացուցիչները։ Համագումարում վ. Ի. Լենինը հանդես եկավ ընթացիկ մոմենտի մասին զեկուցումով։ Լենինի զեկուցումից բացի, համագումարը լսեց և քննարկեց նաև Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների կենտ-

---

[1] Տե՛ս ж. «Советское востоковедение», 1958, № 5, էջ 115, 120.

[2] Տե՛ս «История Коммунистической партии Советского Союза», т. 3, кн. 2, էջ 337։

ռոնական բյուրոյի, Կենտրոնական մուսուլմանական կոլեգիայի, ՌՍՖՍՀ Ազգությունների գործերի ժողկոմատին կից կենտրոնական մուսուլմանական կոմիսարիատի աշխատանքների մասին զեկուցումներ, թաթարա-բաշկիրական հարցի մասին հաղորդում։ Համագումարում ընդունվեցին որոշումներ ու հանձնարարականներ, որոնցում նշվեցին Արևելքում տարվելիք կուսակցական և սովետական աշխատանքի հետագա խնդիրները։

ՌԿ(բ)Կ X համագումարում նշվեց, որ կուսակցության Կենտկոմին առընթեր ազգային բյուրոներից առավել խոշորը՝ թյուրքական ժողովուրդների պրոպագանդայի և ագիտացիայի բյուրոն, շատ բան է արել լենինյան ազգային քաղաքականությունը պրոպագանդելու, այն աշխատավորական լայն մասսաներին հասցնելու ուղղությամբ[1]։ Միայն իր գոյության առաջին 10 ամիսներին Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների կենտրոնական բյուրոն մի քանի լեզուներով հրատարակել էր ավելի քան 4 մլն. օրինակ թերթ, բրոշյուր և թռուցիկ[2]։ Լույս էին տեսնում 15 անուն թերթեր, այդ թվում թաթարերեն «Էշչե» («Բանվոր») և թուրքերեն «Յենի դունյա» թերթերը[3]։ Մուսուլման աշխատավորների շրջանում կոմունիստական պրոպագանդայի ուժեղացման նպատակով ընդլայնվում էին գործող տպարանները, ստեղծվում նորերը, տեղերն էին ուղարկվում պատրաստված կուսակցական կադրեր։

1920—1921 թվականներին ՌԿ(բ)Կ Կենտկոմը մի շարք լրացուցիչ միջոցներ ձեռնարկեց արևելյան հանրապետություններում կուսակցական աշխատանքների մակարդակը բարձրացնելու համար։ Բայց ամենուրեք զգացվում էր ազգային կուսակցական կադրերի մեծ պակաս։ Ահա թե ինչու կուսակցության Կենտկոմի որոշմամբ 1921 թվականին Մոսկվայում, Ազգժողկոմատին առընթեր ստեղծվեց Արևելքի ժողովուրդների համալսարան, որը կոչված էր տեղական կուսակցական դպրոցների համար պատրաստելու որակյալ դասախոսներ, հրահանգիչներ, կուսակցական և սովետական ապարատների, կուլտուրայի և լուսավորության բնագավառի աշխատողներ։

[1] *Տե՛ս* «Десятый съезд РКП(б)». Стенографический отчет, *էջ* 810։

[2] *Տե՛ս* «История Коммунистической партии Советского Союза», т. 3, кн. 2, *էջ* 337։

[3] *Տե՛ս* ЦГАОР СССР, ф. Р—1318, оп. 1, д. 420, л. 70—76։ «История Коммунистической партии Советского Союза», т. 3, кн. 2, *էջ* 337։

Սովետական իշխանության կարևորագույն հերթական խնդիրներից մեկը ժողովրդական լայն մասսաներին պետական կառավարման մեջ ընդգրկելն էր։ Դա, իր հերթին, անխուսափելիորեն առաջ էր բերում պետական կառավարման կատարելագործման հարցը։

Մուսուլման աշխատավոր զանգվածների հեղափոխական վերազարթման պրոցեսն արագացնելու և դասակարգային պայքարի մեջ նրանց լայնորեն ներգրավելու համար Վ. Ի. Լենինի առաջարկությամբ 1918 թվականի հունվարին ՌՍՖՍՀ Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի կազմում ստեղծվեց Ներքին Ռուսաստանի մուսուլմանների գործերի կոմիսարիատ, որի կոմիսար նշանակվեց Մ. Վախիտովը։ Որոշ ժամանակ անց կազմակերպվեց նաև Կենտրոնական մուսուլմանական կոմիսարիատը։ 1918 թվականի հունիսի 17-ին Վ. Ի. Լենինը որոշում ստորագրեց տեղերում նույնպես մուսուլմանական կոմիսարիատներ կազմակերպելու մասին, որոնք անմիջականորեն ենթակա էին Կենտրոնական մուսուլմանական կոմիսարիատին։ Տեղական մուսուլմանական կոմիսարիատները կազմակերպվեցին Մոսկվայում, Պետրոգրադում, Պերմում, Բուգուլմայում, Սարատովում, Տյումենում, Զլատոուստում, Օրենբուրգում, Տաշքենդում, Տրոիցկում, Զելյաբինսկում, Մալմեժում, Սամարայում և այլ քաղաքներում։ Մի շարք տեղերում, որտեղ մուսուլմանները մեծ թիվ չէին կազմում, սովետներին առընթեր ստեղծվեցին մուսուլմանական բաժիններ, այլ տեղերում՝ այդ բաժինների ենթաբաժիններ[1]։

Մուսուլմանական կոմիսարիատները, բաժիններն ու ենթաբաժինները լուծում էին իրենց ազգությունների կյանքին վերաբերող բոլոր խնդիրները, որոնք առնչվում էին տնտեսությանը, կուլտուրային, լուսավորությանը, ռազմական գործին, սովետական իշխանության տեղական օրգանների կառուցման հարցերին և այլն։ Իրենց աշխատանքներում նրանք լայնորեն ընդգրկում էին մարդկանց, որոնք լավ գիտեին տեղական բնակչության լեզուն, բարքերը, հոգեբանությունը։ Մուսուլմանական կոմիսարիատները տեղական կուսակցական կոմիտեների հետ միասին ծավալեցին լայն աշխատանքներ բուրժուական նացիո-

[1] *Տե՛ս* **М. К. Мухарямов,** Октябрь и национально-государственное строительство в Татарии (октябрь 1917—1920). М., 1969, *էջ* 98։

նալիստների մեկուսացման, մուսուլման աշխատավոր մասսաներին սովետական իշխանության շուրջը համախմբելու համար։

Բայց կոմիսարիատների ստեղծումը միայն յուրատեսակ նախապատրաստական էտապ էր ազգային հարցի լուծման ճանապարհին։ Միաժամանակ դրանցից ամեն մեկն ապագա ազգային ինքնավարության նախատիպ էր, միջուկ։ Անհրաժեշտ էր առաջ գնալ, այսինքն՝ կազմել ազգային պետական ինքնավարություններ, ազգային հարցը լուծել արմատապես։

Կոմունիստական կուսակցությունը, Վ. Ի. Լենինը կոմունիստներին մշտապես հիշեցնում էին, որ անհրաժեշտ է ազգային հարցին շատ զգուշորեն վերաբերվել, նվաճված դիրքերը ամրապնդել, իսկ նորերը նվաճել աստիճանաբար, քայլ առ քայլ։ Մերժելի էր այն գործիչների ձգտումը, որոնք փորձում էին Կենտրոնական Ռուսաստանում սովետական աշխատանքի մեթոդներն անփոփոխ փոխադրել միանգամայն ուրիշ միջավայր, որտեղ ուժեղ էին նահապետական կենցաղն ու սովորությունները, մասսաների վրա մուսուլմանական կրոնի ազդեցությունը, որտեղ ամուր էին ֆեոդալական-բայական խավերի դիրքերը։

Վ. Ի. Լենինը 1919 թվականի մարտի 19-ին ՌԿ(բ)Կ VIII համագումարի զեկուցման մեջ ասում էր, որ Ռուսաստանի պրոլետարիատի օգնությունը կարող է արդյունավետ լինել «միայն այն դեպքում, եթե հեղաշրջումը կատարելապես հասունացել է։ Եվ դա պետք է անել զգուշությամբ, որպեսզի մեր միջամտությամբ չկասեցվի պրոլետարիատի շերտավորման հենց այն պրոցեսը, որը մենք պետք է արագացնենք։ Իսկ ի՞նչ կարող ենք անել այնպիսի ժողովուրդների վերաբերմամբ, ինչպես կիրգիզները, ուզբեկները, տաջիկները, թուրքմենները, որոնք մինչև այժմ գտնվում են իրենց մոլլաների ազդեցության տակ... Կարո՞ղ ենք, արդյոք, մոտենալ այդ ժողովուրդներին և ասել՝ «Մենք կտապալենք ձեր շահագործողներին»։ Մենք այդ անել չենք կարող, որովհետև նրանք ամբողջությամբ իրենց մոլլաների ազդեցության տակ են։ Այստեղ պետք է սպասել տվյալ ազգի զարգացմանը, պրոլետարիատի շերտավորմանը բուրժուական տարրերից, որն անխուսափելի է»[1]։

Կոմունիստական կուսակցությունը իրրև նպատակ հռչակեց

[1] Վ. Ի. Լենին, *Երկ*, հ. 38, էջ 199։

կամավորության, իրավահավասարության և ապատ ինքնորոշման հիման վրա բոլոր ազգերի աշխատավորների մոնոլիտ միասնության ստեղծումը։ «Մենք ազգերի կամավոր միություն ենք ուզում,— գրում էր Վ. Ի. Լենինը,— այնպիսի միություն, որը ոչ մի բռնություն թույլ չտար մի ազգի կողմից մյուսի նկատմամբ, այնպիսի միություն, որը հիմնված լիներ լիակատար վստահության վրա, եղբայրական միասնության պարզ գիտակցման վրա, միանգամայն կամավոր համաձայնության վրա»[1]։ Լենինը զգուշացնում էր, որ այդպիսի միություն անհնարին է միանգամից ստեղծել։ Մինչ այդ անհրաժեշտ էր համբերատար աշխատանք տանել, որպեսզի վերացնել այն անվստահությունը, որ առաջ էր եկել շահագործողների դարավոր ճնշումից, մասնավոր սեփականության տիրապետությունից[2]։

Անշեղորեն ձգտելով ազգերի միասնությանը, կոմունիստական կուսակցությունը կարևորագույն խնդիր էր համարում որքան հնարավոր է արագ վերացնել այն բոլոր պատճառները, որոնք միմյանցից բաժանում էին ազգերին։ Կոմունիստ-բոլշևիկների անունից Վ. Ի. Լենինը հայտարարում էր. «Մենք ազգային թշնամության, ազգային պառակտման, ազգային առանձնացվածության հակառակորդներ ենք։ Մենք միջազգայնականներ, ինտերնացիոնալիստներ ենք»[3]։ Վ. Ի. Լենինը հսկայական նշանակություն էր տալիս ազգային ծայրամասերի հետ ՌՍՖՍՀ-ի ճիշտ փոխհարաբերություններին։ Նա կոմունիստներից պահանջում էր ոչ ռուս ժողովուրդների հետ ստեղծել իսկական ընկերական հարաբերություններ, գործով ապացուցել, որ բոլշևիկներն անկեղծորեն են ցանկանում վերջ տալ անցյալից մնացած անիծյալ հետամնացությանը։ Մյուս կողմից չափազանց կարևոր էր, որպեսզի ծայրամասային ժողովուրդները քաջ ըմբռնեն, որ իրենց պետական-քաղաքական միավորումները «չեն կարող գոյություն ունենալ առանց Ռուսաստանի Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության հետ ռազմական և տնտեսական սերտ միության»[4]։ «Սովետական բանվորագյուղացիական

[1] Վ. Ի. Լենին, *Երկ*, հ. 40, էջ 52։
[2] Տե՛ս նույն տեղը։
[3] Նույն տեղը, էջ 51։
[4] «КПСС в резолюциях...», т. 2, с. 147 – 148

հանրապետության վերաբերմունքը դեպի թույլ, մինչև այժմ ճնշված ժողովուրդները գործնական նշանակություն կունենան ամբողջ Ասիայի համար, հազարավոր ու միլիոնավոր մարդկանց համար»[1],— գրում էր Լենինը։

Առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, կոմունիստական կուսակցությունը լայն գործունեություն ծավալեց ազգային սովետական ինքնավարությունների ստեղծման ուղղությամբ։

Մուսուլմանական տարածքներում առաջին սովետական ինքնավարությունները ստեղծվեցին 1918—1919 թվականներին։ 1918 թվականի ապրիլին Թուրքեստանի սովետների երկրամասային համագումարը հռչակեց Թուրքեստանյան Ինքնավար Սովետական Սոցիալիստական Հանրապետության ստեղծումը։ Երկրամասի բոլոր ժողովուրդների անունից համագումարը ազդարարեց, որ «Թուրքեստանյան երկրամասի տարածքը հայտարարվում է Ռուսաստանի Սովետական Ֆեդերացիայի Թուրքեստանյան Սովետական Հանրապետություն»[2]։ 1918 թվականի աշնանը Բուխարայի էմիրության աշխատավորները, տապալելով շահագործողների իշխանությունը, հռչակեցին Բուխարայի Ժողովրդական Սովետական Հանրապետություն։

Կարմիր բանակի կողմից ազատագրված բաշկիրական տարածքներում 1919 թվականի մարտին հռչակվեց ինքնավար սովետական սոցիալիստական հանրապետություն։ Բաշկիրական ԱՍՍՀ-ն ՌՍՖՍՀ կազմում ստեղծված առաջին ինքնավար հանրապետությունն էր։ 1919 թվականի հունիսին ազատագրված Ուֆան դարձավ այդ հանրապետության մայրաքաղաքը։

1919 թվականի հունիսին կարմիր բանակը կոլչակյաններից մեկընդմիշտ ազատագրեց նաև Թաթարիայի ողջ տարածքը։ Հաջորդ տարվա մայիսի 27-ին համառուսաստանյան Կենտգործկոմը հաստատեց Թաթարական Սովետական Սոցիալիստական Ինքնավար Հանրապետության կանոնադրությունը։ Նորաստեղծ հանրապետության կենտրոն դարձավ Կազան քաղաքը։

Թաթարիայի և Բաշկիրիայի ինքնավարությունների հռչակումը լայն արձագանք գտավ բազմամիլիոն մուսուլմանական աշխարհում՝ Պարսկաստանում, Աֆղանստանում, Թուրքիայում, Հնդկաստանում։ Դա ակնառու ապացույց էր այն բանի, թե կապիտալի կապանքներից ազատագրված աշխատավորները որպիսի հաջողությամբ են լուծում նաև իրենց ազգային խնդիրները։ Արևելքի բանվորները և գյուղացիները ականատես էին լինում Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության մեջ հետևողականորեն իրականացվող կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության մեծ հաղթանակին։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը անդուլ ջանքեր էին գործադրում տնտեսապես և կուլտուրապես առավել հետամնաց մուսուլմանական շրջաններում պետական շինարարություն ծավալելու, տնտեսական և կուլտուրական մակարդակը բարձրացնելու, անգրագիտությունը վերացնելու համար։ Այդ տեսակետից հատկապես բնորոշ էր Միջին Ասիայի, մասնավորապես Թուրքեստանի Ինքնավար Հանրապետության օրինակը։

Թուրքեստանյան ԻՍՍՀ կազմակերպվելու կապակցությամբ 1918 թվականի ապրիլին Վ. Ի. Լենինը նրա ժողկոմխորհին հղած հեռագրում հայտնում էր, որ հանրապետությանն օգնելու համար ձեռնարկված են բոլոր հնարավոր միջոցները։ Հատկապես զգալի էր տնտեսական օգնությունը[1]։ ՌՍՖՍՀ կառավարությունը Թուրքեստանում ոռոգման աշխատանքների կազմակերպման համար հատկացրեց 50 մլն. ռուբլի, այնտեղ ուղարկեց մասնագետներ, տեխնիկական սարքավորումներ, գույք[2]։ Կենտրոնից գնացքներ էին մեկնում հացաստով, կոշիկով, դեղորայքով։ Ավելի ուշ, 1919—1920 թվականների ձմռանը Ռուսաստանի կենտրոնական նահանգներից Թուրքեստանյան Հանրապետություն ուղարկվեց 100 հազար փութ չուգուն, արդյունաբերական ապրանքներ, 200 նավթային շարժիչ։ Այն ժամանակվա պայմաններում դա ծանրակշիռ օգնություն էր, հատկապես եթե հաշվի առնենք Սովետական Ռուսաստանի համեստ ռեսուրսները[3]։

Վ. Ի. Լենինը խնդիր էր դնում ոչ միայն նյութական աջակ-

[1] Վ. Ի. Լենին, երկ, հ. 39, էջ 372։

[2] «История Коммунистических организаций Средней Азии», с. 259.

[1] Տե՛ս ЦГАОР СССР, ф. Р—1318, оп. 1, д. 42, л. 21—25.

[2] Տե՛ս ЦГАОР СССР, ф. 1235, оп. 137, д. 42, л. 95.

[3] Տե՛ս Б. Якубов, Деятельность Ферганской областной организации Коммунистической партии Туркестана. Автореферат докторской диссертации. Ташкент, 1970, էջ 41։

[4] Տե՛ս М. С. Соломенцев, Российская федерация, М., 1978, էջ 203—204։

ցություն ցույց տալ ծայրամասային ժողովուրդներին, այլև նրանց օգնել դուրս գալու անկուլտուրականության խավարից։ Դեռ այն դժվարին ժամանակներում, 1918 թվականի մարտի 9-ին, ՌՍՖՍՀ Ժողկոմխորհը հանձնարարեց լուսավորության ժողկոմ Ա. Վ. Լունաչարսկուն անմիջապես ձեռնամուխ լինել Տաշքենդում համալսարան և բարձրագույն պոլիտեխնիկական ինստիտուտ կազմակերպելու գործին։ Ուսումնական այդ հաստատությունների կազմակերպման համար սովետական կառավարությունը բաց թողեց 12 միլիոն ռուբլի[1]։ Սակայն հակահեղափոխական խռովությունները առժամանակ ձգձգեցին ուսումնական այդ հաստատությունների ստեղծումը, և միայն 1920 թվականի սեպտեմբերի 7-ին Լենինը դեկրետ ստորագրեց Տաշքենդի պետական համալսարան ստեղծելու մասին։

Վ. Ի. Լենինը, կոմունիստական կուսակցությունը միաժամանակ շարունակում էին հսկայական նշանակություն տալ Միջին Ասիայում կուսակցական և պետական շինարարության բնագավառի անհետաձգելի լուծում պահանջող խնդիրներին։

Հարկ է նշել, որ լենինյան ինտերնացիոնալիստական հիմունքներով Միջին Ասիայում կատարվող կուսակցական և պետական շինարարության ընթացքում անհրաժեշտ էր լինում հաղթահարել մեծ դժվարություններ, որոնք հիմնականում արտահայտվում էին երկրամասի կոմունիստական շարժման ներսում հանդես եկած, դեպի մեծապետական շովինիզմ կատարվող թեքումների տեսքով։

Թուրքեստանում մեծապետական շովինիստների և տեղական ազգայնականների գործունեության ակտիվացումը կատարվում էր տնտեսական նոր քաղաքականության անցկացմանը զուգընթաց։ Երկու թեքումներն էլ հավասարապես վտանգավոր էին և տանում էին դեպի կուսակցության և սովետական իշխանության ազդեցության թուլացում։

Դեպի մեծապետական շովինիզմ տեղի ունեցած թեքման էությունն այդ ժամանակաշրջանում արտահայտվում էր նրանում, որ դրա կողմնակիցները թերագնահատում էին Թուրքեստանի ժողովուրդների պատմականորեն ստեղծված էկոնոմիկայի, դասակարգային կառուցվածքի, կուլտուրայի ու կենցաղի առանձնահատկությունները։ Ավելին, ռուս առանձին կոմունիստներ և բանվորներ գտնում էին, որ քանի դեռ կիրգիզների, ուզբեկների և տեղի մյուս ժողովուրդների մոտ չկա ֆաբրիկագործարանային պրոլետարիատ, ուստի Թուրքեստանում պրոլետարիատի դիկտատուրայի օրգանները կազմված պետք է լինեն միայն ռուսներից։ Դրանով իսկ նրանք մեծ վնաս էին հասցնում ռուս ժողովրդի հետ Արևելքի ժողովուրդների եղբայրական դաշինքին, խախտում տեղի ժողովուրդների հավատը սովետական իշխանության ազգային քաղաքականության հանդեպ։

Նացիոնալ-ուկլոնիստները թերագնահատում էին սոցիալիստական շինարարության խնդիրները երկրամասում, պանիսլամիզմի և պանթուրքիզմի գաղափարների ազդեցության տակ շափազանցնում տեղական ազգային առանձնահատկությունների նշանակությունը, շարունակում պնդել, թե տեղական բնակչության շրջանում չկան դասակարգային հակասություններ, որ Միջին Ասիայի հիմնական ժողովուրդներն իրենցից ներկայացնում են միասնական թյուրք ժողովուրդ, թյուրք ազգ։

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, ՌՍՖՍՀ Կենտգործկոմը և Ժողկոմխորհը 1919 թվականի հոկտեմբերին Թուրքեստանի գործերի գծով ստեղծեցին հեղինակավոր մի հանձնաժողով՝ Շ. Զ. Էլիավա (նախագահ), Մ. Վ. Ֆրունզե, Վ. Վ. Կույբիշև, Ֆ. Ի. Գոլոշչեկին, Յա. Է. Ռուձուտակ կազմով։ Հանձնաժողովը գործում էր ՌՍՖՍՀ Ժողկոմխորհին առընթեր։ Նույն թվականի հոկտեմբերին համառուսաստանյան Կենտգործկոմի նախագահությունը որոշում ընդունեց ռուսաստանյան և թուրքեստանյան հանրապետությունների տնտեսական միասնական քաղաքականության կուրս ընդունելու մասին։ Նրանց տնտեսական կյանքը սկսվեց ղեկավարվել միասնական օրգանի՝ ՌՍՖՍՀ համառուսաստանյան Կենտգործկոմի կողմից։ Թուրքեստանի առանձնահատկությունները հաշվի առնելով, երկրամասում տնտեսական քաղաքականության իրականացման՝ տնտեսական օրգանների կազմավորման և նրանց աշխատանքը ՌՍՖՍՀ Կենտգործկոմի հետ համաձայնեցնելու բոլոր աշխատանքների ղեկավարումը դրվեց Թուրքեստանի գործերի հանձնաժողովի վրա։

ՌԿ(բ)Կ Կենտկոմը 1920 թվականի փետրվարի 21-ին ընդունեց դիրեկտիվներ, որոնք ձևակերպվեցին «Արևելյան հարցի

[1] Տե՛ս К. Е. Житов, Победа Великой Октябрьской социалистической революции в Узбекистане, Ташкент, 1957, էջ 17, 18։

վերաբերյալ» շրջաբերական նամակում։ Այնտեղ մատնանշվում էր, որ կուսակցական աշխատանքը Միջին Ասիայում պետք է կրի խիստ ինտերնացիոնալիստական բնույթ, ուղղված լինի ամբողջ երկրի աշխատավորների հետ մուսուլման աշխատավորների սերտ դաշինքի ամրապնդմանը։

Շարունակելով իրենց կազմալուծիչ գործունեությունը. նացիոնալ-ուկլոնիստները մուսուլման կոմունիստների III երկրամասային կոնֆերանսում անցկացրին «Թյուրքական ազգային հանրապետություն» և «Թյուրքական կոմունիստական կուսակցություն» ստեղծելու մասին սխալ որոշումը։ Դրա հիման վրա Թուրքեստանի երկրամասային կուսակցական մարմինները ՌԿ(բ)Կ Կենտկոմից պահանջեցին «իրականացնել թյուրք կոմունիստների իղձերը» և հաստատել վերոհիշյալ կոնֆերանսի որոշումը։ Ըստ որում, առաջ քաշելով «Թյուրքական կոմունիստական կուսակցության» խիստ «ազգային դեմք և ազգային բնույթ» ունենալու պահանջը, նրանք գտնում էին, որ այդ կուսակցության մեջ պետք է մտնեն միմիայն թյուրքական ծագում ունեցող անձինք։

ՌԿ(բ)Կ Կենտկոմը մանրամասն քննության առավ Թուրքեստանի մուսուլման կոմունիստների III երկրամասային կոնֆերանսի՝ լենինյան սկզբունքներին խիստ հակասող որոշումը և, կտրականապես մերժելով նացիոնալ-ուկլոնիստների նկրտումները, 1920 թվականի մարտի 8-ի որոշմամբ չեղյալ հայտարարեց այն։ Միաժամանակ ՌԿ(բ)Կ Կենտկոմի այդ որոշումը նախատեսում էր, որ Թուրքեստանի տարածքում պետք է գոյություն ունենա միասնական կոմունիստական կազմակերպություն, բայց ոչ թե «Թյուրքական կոմունիստական կուսակցություն», այլ «Թուրքեստանի կոմունիստական կուսակցություն» անվամբ։ Այն գործելու էր մարզային կուսկազմակերպության իրավունքներով և մտնելու էր ՌԿ(բ)Կ կազմի մեջ։

ՌԿ(բ)Կ Կենտկոմը հաստատեց նաև Թուրքեստանի ինքնավարության մասին կանոնադրությունը, որով այդ երկրամասը ճանաչվում էր որպես այնտեղ ապրող բոլոր հիմնական ժողովուրդների՝ թուրքմենների, ուզբեկների, կիրգիզների, ղազախների ինքնավար հանրապետություն։ Կանոնադրության մեջ նշված էր, որ Թուրքեստանի Ինքնավար Հանրապետության կազմի մեջ մտնող հինգ մարզերում ողջ լիիշխանությունը պատկանում է Թուրքեստանի Կենտգործկոմին (ԹուրքԿԳԿ), իսկ ամբողջությամբ վերցրած Թյուրքհանրապետության պաշտպանության, արտաքին հարաբերությունների, ֆինանսների, երկաթուղիների, փոստի, հեռագրատան կառավարման հարցերը ենթակա էին ՌՍՖՍՀ վերադաս մարմինների իրավասությանը։

Չհամաձայնելով «Թուրքեստանի ինքնավարության մասին կանոնադրությանը», նացիոնալ-ուկլոնիստները Տ. Ռիսկուլովի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկեցին ՌԿ(բ)Կ Կենտկոմ՝ Թյուրքհանրապետության պետական կառուցվածքի իրենց նախագիծը պաշտպանելու համար։ Կենտկոմ ներկայացրած զեկուցագրում ազգայնականներն առաջ էին քաշում կոմունիստական կուսակցության քաղաքականության հետ ակնհայտորեն անհամատեղելի պահանջներ, այն է՝ Թուրքեստանում ամբողջ լիիշխանությունը հանձնել ԹուրքԿԳԿ-ին և Թյուրքժողկոմխորհին, վերացնել Թուրքեստանյան հանձնաժողովը, սահմանափակել Թուրքեստանյան ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի իրավունքները, Թուրքեստանից դուրս բերել կամ զինաթափել ռուսներից կազմված կարմիր բանակի զորամասերը և կազմել զուտ մուսուլմանական զորքեր և այլն։ Նրանք պահանջում էին նաև երկաթուղիների, հեռագրատների, կապի միջոցների կառավարումը և արտաքին հարաբերությունների, ֆինանսների հարցերի լուծումը ՌՍՖՍՀ-ի իրավասությունից հանձնել ԹուրքԿԳԿ-ի իրավասությանը։

Զեկուցագրում նրանք ժխտում էին ուզբեկների, ղազախների, կիրգիզների և թուրքմենների գոյության փաստը որպես ինքնուրույն ազգերի, դրանց դարձնելով մեկ «թյուրքական» ազգ։ Նացիոնալ-ուկլոնիստները փորձում էին վերարծարծել III երկրամասային կոնֆերանսում իրենց առաջ քաշած այն թեզը, որի համաձայն հետադիմական պանիսլամիզմը և պանթյուրքիզմը իբր կորցրել են ամեն մի հող Սովետական Թուրքեստանի պայմաններում։

ՌԿ(բ)Կ Կենտկոմը համբերատար և ուշադիր քննության առավ պատվիրակության բոլոր պահանջները։ Կազմվեց Կենտկոմի քաղբյուրոյի հանձնաժողով Գ. Վ. Չիչերին, Ն. Ն. Կրեստինսկի և Շ. Զ. Էլիավա կազմով, որին հանձնարարվեց որոշման նախագիծ պատրաստել Թուրքեստանի կոմունիստական կուսակցության խնդիրների մասին։ Ներկայացված նախագծի մեջ կարևոր տեղ էր հատկացված մեծապետական շովինիզմի դեմ մղվելիք պայքարի հարցերին։ Հանձնաժողովն առաջար-

կում էր երկրամասում ստեղծել մշտական գործող օրգան, որը պետք է կազմված լիներ ՌՍՖՍՀ Կենտգործկոմի, Ժողկոմխորհի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի ներկայացուցիչներից։ Այդ օրգանը անմիջականորեն ղեկավարելու էր այն բնագավառները, որոնք բացառապես ենթակա էին ֆեդերալ կառավարությանը։

1920 թվականի հունիսի 13-ին Վ. Ի. Լենինը ծանոթացավ հանձնաժողովի նախապատրաստած նախագծին և էական լրացումներ մտցրեց նրա մեջ։ Նացիոնալ-ուկլոնիստների պատվիրակության պահանջները Վ. Ի. Լենինի կողմից մերժվեցին որպես կուսակցության ազգային քաղաքականությանը հակասող պահանջներ։ Խիստ դատապարտելով պանիսլամիզմը և պանթուրքիզմն արդարացնելու նացիոնալ-ուկլոնիստների փորձերը, Վ. Ի. Լենինն առաջարկեց «առանձնապես լավ մշակել» հոգևորականության, պանիսլամիզմի և բուրժուաազգայնական շարժման դեմ պայքարի եղանակները[1]։ Լենինը գտնում էր նաև, որ անհրաժեշտ է մտածել երկրամասի ազգային սահմանազատման մասին, որն իրականացվեց նրա մահվանից հետո։

Այսպիսով, ամբողջությամբ և հիմնականում հավանություն տալով որոշման նախագծին, Լենինը նրանում այնպիսի փոփոխություններ մտցրեց, որոնք կապահովեին ուզբեկների, թուրքմենների, տաջիկների և մյուս ժողովուրդների լիակատար սուվերենությունը։

Հանձնաժողովի նախապատրաստած նախագիծը Վ. Ի. Լենինի արած լրացումներով հունիսի 22-ին ներկայացվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի քննարկմանը։ Շ. Էլիավային և Ն. Կրեստինսկուն հանձնարարվեց Վ. Ի. Լենինի դիտողությունների և քաղբյուրոյում ընկերների արած առաջարկների հիման վրա վերամշակել որոշման նախագիծը[2]։ Հունիսի 29-ին քաղբյուրոն ընդունեց չորս որոշում, որոնք հրապարակվեցին մեկ ընդհանուր անվան տակ՝ «Թուրքեստանում ՌԿ(բ)Կ խնդիրների մասին»։ Այդ հայտնի որոշման հիմքում դրված էին այն դրույթներն ու մտքերը, որ Վ. Ի. Լենինն արտահայտել էր Թուրքեստանի կոմունիստներին հղած նամակում, Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների համառուսաստանյան II համագումարում տված զեկուցման մեջ, ազգային և գաղութային հարցերի մասին թեզիսներում և ՌԿ(բ)Կ Կենտկոմի հանձնաժողովի նախագծի վերաբերյալ արված դիտողություններում։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի որոշման մեջ նշված էր հանրապետության տնտեսական կյանքում ֆեոդալական-նահապետական հարաբերությունների մնացորդները վերացնելու, աշխատավորական զանգվածներին կոմունիստական կուսակցության մեջ համախմբելու, գյուղացիների դեպուտատների սովետներ ստեղծելու և ամրապնդելու, Թուրքեստանի աշխատավորների և Ռուսաստանի բոլոր ժողովուրդների միջև ինտերնացիոնալ բարեկամությունն ամրապնդելու և զարգացնելու համար անդուլ պայքար մղելու անհրաժեշտությունը։ Որոշման մեջ ընդգծվում էր, որ, հենվելով փոխադարձ եղբայրական օգնության և առաջին հերթին ռուս պրոլետարիատի օգնության վրա, սովետական կարգերի պայմաններում սոցիալիզմի ուղիով կարող են ազատ զարգանալ բոլոր ժողովուրդներն ու ազգությունները, այդ թվում և Թուրքեստանի ժողովուրդները, որոնք ազատության և հավասարության հիմունքներով մտել են ՌՍՖՍՀ կազմի մեջ։ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն անհրաժեշտ համարեց պահպանել Թուրքհանձնաժողովը՝ որպես Թուրքեստանում ՌԿ(բ)Կ Կենտկոմի և ՌՍՖՍՀ կառավարության ներկայացուցչություն և որոշեց նրա ֆունկցիաներն ու իրավասությունները։ Քաղբյուրոն վճռականորեն մերժեց հատուկ «Թյուրքական կոմկուսակցություն» ստեղծելու մասին նացիոնալ-ուկլոնիստների գաղափարը, որն ուղղված էր Թուրքեստանի տեղական կոմունիստական կազմակերպությունները Ռուսաստանի կոմունիստական կուսակցությունից խզելու նպատակին։ ՌԿ(բ)Կ Կենտկոմը հաստատեց երեք տեղական երկրամասային կոմիտեները միասնական ԹԿԿ Կենտկոմի մեջ միավորելու անհրաժեշտությունը[1]։

Կենտկոմի քաղբյուրոյի որոշման և «Թուրքեստանի ինքնավարության մասին կանոնադրության» մեջ հստակորեն որոշվեցին ինքնավար հանրապետության սահմանները, տարածքը և բնույթը։ Այդ ամենը համապատասխանում էր Թուրքեստանի

---

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկ, հ. 41, էջ 525։

[2] Տե՛ս И. И. Грошев, Исторический опыт КПСС по осуществлению ленинской национальной политики, Москва, «Мысль», 1967, էջ 181—182։

[1] Տե՛ս «Очерки истории Коммунистической партии Узбекистана», Ташкент, 1964, էջ 78։

ժողովուրդների տերիտորիայ, տնտեսական և կենցաղային պայմաններին։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի 1920 թվականի որոշումը մեծ դեր խաղաց Թուրքեստանի կոմունիստական կուսակցության միասնության հետագա ամրապնդման գործում։ Այն հանդիսացավ Թուրքեստանի ժողովուրդների կյանքի յուրահատուկ պայմանների նկատմամբ լենինյան ազգային քաղաքականության սկզբունքների կիրառման, նախկինում հետամնաց երկրում սոցիալիզմի շինարարության հեղափոխական տեսության ու տակտիկայի մարքս-լենինյան ընդհանրացման օրինակ։

Նացիոնալ-ուկլոնիստների խումբը, չհամաձայնելով Կենտկոմի քաղբյուրոյի որոշմանը, դիմում տվեց ԹԿԿ-ի երկրկոմի և ԹուրքԿԳԿ-ի կազմից դուրս գալու մասին։ Այդ մասին հաղորդելով ՌԿ(բ)Կ Կենտկոմին, Վ. Վ. Կույբիշևը գրում էր. «Լիազորությունները ցած դնելու դրդապատճառների մեջ նրանց մեծ մասի մոտ կային նաև Կենտկոմի գծի հետ անհամաձայնության դրդապատճառներ»[1]։ Սակայն ազգայնական տարրերի քաղաքական սաբոտաժը անկարող էր շեղելու կուսակցության ամուր գիծը։

Զարգացնելով և կոնկրետացնելով սովետական ազգային քաղաքականության դրույթները, որոնք շարադրվել էին կուսակցության X համագումարի որոշումներում, Վ. Ի. Լենինը 1921 թվականի օգոստոսի 7-ին Թուրքհանձնաժողովի և Թուրքբյուրոյի ղեկավարներին խորհուրդ էր տալիս մշտական հոգատարություն հանդես բերել մուսուլման չքավորության, նրա կազմակերպման և լուսավորման նկատմամբ։ Նա առաջարկեց մշակել և ճշգրիտ կազմված դիրեկտիվներում ամրապնդել այնպիսի ազգային քաղաքականություն, որը «օրինակ լինի ամբողջ Արևելքի համար»[2]։

Վ. Ի. Լենինը հետևում էր, որպեսզի Թուրքեստանում անցկացվող քաղաքականությունը չխեղաթյուրվի, դրանով իսկ մշտապես բարձրացվի սովետական իշխանության հեղինակությունը։ Այսպես, օրինակ, երբ ՌՍՖՍՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի Թուրքհանձնաժողովի նախագահ Մ. Պ. Տոմսկու և ՌԿ(բ)Կ Կենտկոմի Թուրքբյուրոյի անդամ Գ. Ի. Սաֆարովի միջև լուրջ տարաձայնություններ ծագեցին երկրամասում տնտեսական քաղաքականության հարցերի շուրջը, Վ. Ի. Լենինը անմիջապես միջամտեց գործին[1]։ Տոմսկին հաշվի չէր առել երկրամասի ազգային առանձնահատկությունները, իսկ Սաֆարովը, ընդհակառակը, գերագնահատում էր դրանք, խոչընդոտում սովետական տնտեսական քաղաքականության անցկացմանը։ Տարաձայնությունները պարզելու և հաղթահարելու համար ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն 1921 թվականի օգոստոսին Թուրքեստան ուղարկեց Ա. Ա. Իոֆֆեին։ Տեղում ծանոթանալով գործերի վիճակին, Իոֆֆեն Վ. Ի. Լենինին և ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի մյուս անդամներին հաղորդեց, որ դրանք թշնամանք են բորբոքում մի կողմից ռուսների, մյուս կողմից՝ ուզբեկների և մյուս ազգությունների միջև[2]։

1921 թվականի սեպտեմբերի 13-ի Իոֆֆեին ուղարկած նամակում Վ. Ի. Լենինը նրան խնդրում էր է՛լ ավելի խորամուխ լինել իրավիճակի մեջ՝ հատուկ ուշադրություն դարձնելով տեղի ազգությունների շահերի ճիշտ ըմբռնմանը։ Վլադիմիր Իլյիչը գրում էր. «Ես անձամբ շատ եմ կասկածում «Տոմսկու գծի»... վրա՝ վելիկոռուսական շովինիզմի մեջ կամ, ավելի ճիշտ, այդ կողմը ունեցած թեման մեջ։

Մեր ամբողջ Weltpolitik-ի (համաշխարհային քաղաքականության։— Հ. Ս.) համար անչափ կարևոր է նվաճել բնիկների վստահությունը. եռակի ու քառակի անգամ նվաճել. ապացուցել, որ մենք իմպերիալիստներ չենք, որ մենք չենք հանդուրժի թեմումը դեպի այդ կողմը։

Դա համաշխարհային հարց է, առանց չափազանցության՝ համաշխարհային։

Այստեղ պետք է լինել վերին աստիճանի խիստ։

Այդ բանը կանդրադառնա Հնդկաստանում, Արևելքում, այստեղ կատակ անել չի կարելի, այստեղ պետք է լինել 1000 անգամ զգույշ»[3]։

Թուրքեստանի կոմունիստական կուսակցության օրինակով 1920 թվականին ՌԿ(բ)Կ կազմի մեջ մտավ Բուխարայի կոմունիստական կուսակցությունը, որը մինչ այդ ղեկավարվում էր

---

[1] ЦГАОР СССР, ф. 130, оп. 4, д. 348, л. 33.

[2] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 53, էջ 124։

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկ, հ. 53, էջ 123։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 491—492, ծանոթագրություն 220։

[3] Նույն տեղը, էջ 226։

ՌԿ(բ)Կ ծրագրով։ Իսկ նույն թվականի հոկտեմբերի 6-ին, ինչպես արդեն վերևում նշվեց, Բուխարայում կայացած ժողովրդական ներկայացուցիչների համաբուխարական I կուրուլթայը որոշում ընդունեց Բուխարան Ժողովրդական Սովետական Հանրապետություն հռչակելու մասին։

Նույն թվականին ՌԿ(բ)Կ կազմի մեջ մտավ նաև Խորեզմի կոմունիստական կուսակցությունը և կազմվեց Խորեզմի Ժողովրդական Սովետական Հանրապետություն։

Թուրքեստանի, Բուխարայի և Խորեզմի կոմունիստական կուսակցությունները միավորելու և դրանց գործունեությանն ուղղություն տալու համար ՌԿ(բ)Կ Կենտկոմի Թուրքբյուրոն, ինչպես արդեն նշվել է, 1920 թվականին վերակազմվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի Միջինասիական բյուրոյի։

Հիմնական խնդիրը, որ ծառացավ Թուրքեստանի, Բուխարայի և Խորեզմի կոմկուսակցությունների առջև, ֆեոդալական հարաբերությունների մնացուկների վերացումն էր և այդ նպատակով աշխատավորների մոբիլիզացումը, սոցիալիստական ուղուն անցնելու անհրաժեշտ պայմանների ստեղծումը։

Թուրքեստանի, Բուխարայի և Խորեզմի կոմունիստական կուսակցությունների՝ իբրև ՌԿ(բ)Կ անբաժան ջոկատների ստեղծմանն անմիջապես աջակցություն ցույց տվեցին կոմունիստական կուսակցության և սովետական պետության ականավոր գործիչներ Մ. Ի. Կալինինը, Վ. Վ. Կույբիշևը, Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ն. Ի. Պոդվոյսկին, Մ. Վ. Ֆրունզեն և ուրիշներ։ Այդ կոմունիստական կուսակցությունների շարքերում, սոցիալիզմի հաղթանակի համար տեղական ազգությունների կոմունիստների հետ միասին ակտիվորեն պայքարում էին նաև ռուս, ուկրաինացի, բելոռուս, վրացի, հայ և մեր բազմազգ հայրենիքի մյուս եղբայրական ժողովուրդների ներկայացուցիչները։

* * *

Կոմունիստական կուսակցությունը և սովետական իշխանությունը կարևոր նշանակություն էին տալիս Ռուսաստանում գտնվող օտարերկրյա ռազմագերիների՝ չինացիների, կորեացիների, պարսիկների, հնդիկների, հունգարների, չեխերի և այլ ներկայացուցիչների շրջանում տարվող աշխատանքներին։ Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցության տակ նրանց մոտ արդեն ձևավորվել ու զարգանում էր կոմունիստական շարժումը։ Նրանց շրջանում ևս կազմակերպվում էին զինվորական միավորումներ, որոնք կարմիր բանակի ընդհանուր հրամանատարության ներքո կռվում էին քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում։

1918 թվականի մայիսին Մոսկվայում ՌԿ(բ)Կ Կենտկոմին առընթեր կազմակերպվեց օտարերկրյա կոմունիստների ֆեդերացիա, որը միավորում էր բազմաթիվ կոմունիստական խմբեր, որոնք առաջացել էին Արևմտյան և Արևելյան Եվրոպայի երկրների նախկին ռազմագերիների շրջանում։

Ինչ վերաբերում է արտասահմանյան Արևելքի երկրներից Ռուսաստան եկած աշխատավորներին, որոնք ընդգրկվել էին կոմունիստական շարժման մեջ, ապա նրանց գործունեությանը նույնպես ուղղություն էր տալիս ՌԿ(բ)Կ Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների կենտրոնական բյուրոն։ Հիմնական խնդիրներից մեկն էլ պրոպագանդիստական լայն աշխատանքների կազմակերպումն էր ասիացի օտարերկրացիների շրջանում։ Օրինակ, նրա միջազգային պրոպագանդայի բաժինն ուներ 10 սեկցիա, այդ թվում ադրբեջանական, բուխարական, կովկասյան լեռնականների, կիրգիզական, թաթարական, կալմիկական, ինչպես նաև արաբական, չինական, պարսկական և թուրքական։ Սեկցիաներում աշխատանքի էին ընդգրկված վճռականապես հեղափոխության կողմն անցած տասնյակ ու հարյուրավոր օտարերկրացի ինտերնացիոնալիստներ։ Սեկցիաների միջոցով էր իրականացվում կապը երկրով մեկ ցրված հայրենակիցների հետ, դրանց ջանքերով էին ստեղծվում և տեղեր առաքվում պրոպագանդիստական նյութեր։

Հեղափոխությունը մեծ ազդեցություն էր գործել նաև Ռուսաստանում գտնվող թուրքերի վրա։ Նրանց մեծագույն մասն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռուսական զորքերի կողմից գերի վերցրած զինվորներն ու սպաներն էին, որոնց թիվը Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին հասնում էր 63 հազարի[1]։ Դրանք ներկայված էին երկրի զանազան շրջաններում տեղաբաշխված ռազմագերիների համբար-

[1] Տե՛ս «Россия в мировой войне 1914—1918 годов (в цифрах)», М., 1925, էջ 41, табл. 33։

ներում։ Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո արմատապես փոխվել էր ինչպես բոլոր, այնպես էլ թուրք ռազմագերիների վիճակը, որոնք ստացել էին քաղաքական կյանքին ազատորեն մասնակցելու հնարավորություն։

Թուրքերի երկրորդ խումբը, մոտավորապես 50—60 հազար մարդ[1], կազմում էին թուրքական ծագում ունեցող ռուսահպատակները, որոնք հիմնականում ապրում էին Ռուսաստանի հարավային շրջաններում։ Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց հետո նրանք տարաբնակեցվել էին Ռուսաստանի խորքերում[2]։

Վերջապես, թուրքերի երրորդ խումբը թուրքահպատակ տարագնաց աշխատավորներն էին, որոնք դեռ պատերազմից առաջ Ռուսաստան էին եկել վաստակի համար։

1918—1920 թվականներին թուրքերի քիչ թե շատ նշանակալի խմբեր կային Կենտրոնական և Հարավային Ռուսաստանում (Ռյազանում, Օդեսայում, Ղրիմում), Թուրքեստանում (Տաշքենդում, Աշխաբադում, Ալմա-Աթայում), Պովոլժիեի շատ քաղաքներում (Կազանում, Աստրախանում, Սարատովում, Սամարայում)։

Կուսակցական կազմակերպությունները և սովետական իշխանության օրգանները կարևոր նշանակություն էին տալիս թուրք նախկին գերիների և թուրք բնակչության շրջանում քաղաքական, ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքների ճիշտ կազմակերպմանը, նպատակ ունենալով նրանց բերել հեղափոխության կողմը։ Թուրք նախկին գերիներից շատերն իսկապես կանգնում էին սովետական իշխանության կողմը, ընդգրկվում կոմունիստական շարժման մեջ։

Այդ տեսակետից նշանակալից եղավ այն թուրք նախկին ռազմագերիների դերը, որոնք համախմբվել էին Մուստաֆա Սուբհիի շուրջը։ Առաջին համաշխարհային պատերազմից առաջ թուրքական բանտից փախչելով Ռուսաստան, նա, որպես թուրքահպատակ, տարաբնակեցվել էր Ուրալ։ Նրա վրա վճռական ազդեցություն էին գործել Ռուսաստանի 1917 թվականի հեղափոխական իրադարձությունները։ Նախապես ունենալով դեմոկրատական հայացքներ, նա արագորեն ընդգրկվեց հեղափոխական շարժման մեջ և Սովետական Ռուսաստանում դարձավ համոզված կոմունիստ-ինտերնացիոնալիստ։ Նրա համախոհները հեղափոխականորեն տրամադրված թուրք գերիներն էին, որոնց թվում կային նաև մտավորականներ[1]։

1918 թվականի հունիսի 17-ին Մ. Սուբհին Կազանում, տեղական սովետական և կուսակցական մարմինների օգնությամբ հրավիրեց նախկին ռազմագերի թուրք սոցիալիստ-ինտերնացիոնալիստների կոնֆերանս։ Մեկ ամիս հետո (հուլիսի 22—25-ին) Մոսկվայում անցկացվեց երկրորդ կոնֆերանսը, որին մասնակցում էին 20 պատգամավորներ Ռուսաստանի թուրք սոցիալիստների Մոսկվայի, Օրյոլի, Իվանովոյի, Ռիբինսկի, Կոստրոմայի, Յուրևի, Կազանի, Աստրախանի, Ուֆայի, Ռյազանի և Ուրալի խմբերից[2]։ Կոնֆերանսը վճռական բողոք հայտնեց Անդրկովկասում հակասովետական զինված ինտերվենցիայի դեմ, որ այն ժամանակ սկսել էին երիտթուրքերը։ Ռուսաստանի թուրք նախկին ռազմագերիներին կոչ արձակվեց մտնել կարմիր բանակի շարքերը, կռվել սովետական իշխանության թշնամիների դեմ[3]։ Կոնֆերանսի պատգամավորներն արտահայտվեցին Թուրքիայում իմպերիալիզմի դեմ ուղղված շուտափույթ հեղափոխական պայքար սկսելու օգտին։ Նրանք գտնում էին, որ պետք է բացառել ամեն տեսակ համագործակցություն ինչպես ավատապետական ուժերի, այնպես էլ թուրք ազգային բուրժուազիայի հետ։

Մոսկվայի կոնֆերանսում ընտրվեց թուրք սոցիալիստ-կոմունիստների ղեկավար խումբ, որի կազմում էին Մուստաֆա Սուբհին, Ջևդեթ Ալին, Իբրահիմ Ահմեդը, Նիհատ Նուսրեթը, Ասիմ Նեջաթին։ Նրանք իրենց անվանում էին «Սոցիալիստ-կոմունիստների թուրքական կուսակցության կենտկոմ»[4]։ Դա,

---

[1] Տե՛ս «Востоковедческий сборник АН Армянской ССР», Ереван, 1964, т. II, էջ 174։

[2] Տե՛ս «Жизнь национальностей», 4 января 1920, էջ 1։

[1] Տե՛ս ЦПА ИМЛ, ф. 17, оп. 4, д. 109, л. 6։

[2] Մ. Սուբհիի ելույթը թուրք սոցիալիստ-կոմունիստների Մոսկվայի կոնֆերանսի մասին տե՛ս ЦПА ИМЛ, ф. 17, оп. 4, д. 109, л. 45։ Մ. Սուբհիի և հիշյալ կոնֆերանսների մասին տե՛ս «Исторический архив», 1962, № 4, էջ 222, «Жизнь отданая борьбе», М., 1966, էջ 491—502, «Народы Азии и Африки», 1967, № 5, էջ 59—67։

[3] Տե՛ս ЦПА ИМЛ, ф. 17, оп. 4, д. 109, л. 12։

[4] Նույն տեղը, թ. 13, հակ.։

ըստ էության, առաջին քայլն էր Թուրքիայի կոմունիստական կուսակցության ստեղծման ճանապարհին։

Մոսկվայի կոնֆերանսից հետո Թուրք սոցիալիստ-կոմունիստների Կենտկոմի երաշխավորությամբ և Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների կենտրոնական բյուրոյի մանդատներով Թուրք կոմունիստ-ագիտատորները մեկնեցին Սովետական Ռուսաստանի տարբեր քաղաքներ, որտեղ կային Թուրք նախկին ռազմագերիների հոծ խմբեր և տարբեր դասերի Թուրք բնակիչներ։ 1919 թվականի սկզբին պրոպագանդիստական-կազմակերպչական աշխատանքի ուղարկվեցին Հաֆիզ Ալին՝ Կազան, Ջեմալ Նեջաթին՝ Ղրիմ, Հասան Ալին՝ Ռյազան, Ջևդեթ Ալին՝ Սամարա և Սարատով[1]։ Քանի որ Թուրք և ընդհանրապես արևելյան նախկին ռազմագերիները և արտասահմանյան արևելքցիները մեծ թիվ էին կազմում Թուրքեստանում, ուստի այնտեղ աշխատանքի ուղարկվեց Մուստաֆա Սուբհին։

Տեղերում Թուրք կոմունիստները ծավալեցին կազմակերպական-պրոպագանդիստական եռանդուն աշխատանք։ Նրանց մեծ օգնություն էր այն, որ Մոսկվայում և տեղերում Թուրքերեն հրատարակվում էին մեծաքանակ պրոպագանդիստական նյութեր՝ գրքույկներ, հրահանգներ, կոչեր, որոնք լայնորեն տարածվում էին Թուրք բնակչության շրջանում[2]։ Հատկապես կարևոր նշանակություն էր տրվում Թուրք ռազմագերիների ժողովների անցկացմանը, որոնք սովորաբար ավարտվում էին կոմունիստական բջիջների և կոմունիստական կամավորական ջոկատների ստեղծմամբ։ Ժողովականների քաղաքական տրամադրությունների վրա, անշուշտ, անդրադառնում էր նաև Թուրքիայում նկատելիորեն աշխուժացած բանվորական շարժումը։

Հատկապես եռանդուն աշխատանքի էր լծվել Թուրքեստան մեկնած Մուստաֆա Սուբհին։ Մինչ այդ Տաշքենդում արդեն ստեղծվել էր հատուկ օրգան՝ համառուսաստանյան Կենտգործկոմին առընթեր Թուրքեստանի գործերի հանձնաժողով, որն ուներ ագիտացիայի և պրոպագանդայի ենթաբաժին։ 1919 թվականի դեկտեմբերին այդ ենթաբաժինը վերակազմվեց Ինտերնացիոնալ պրոպագանդայի խորհրդի (Սովինտերպրոպ) որի

[1] Տե՛ս ЦПА ИМЛ, ф. 17, оп. 4, д. 109 л. 8, 11.

[2] Տե՛ս նույն տեղը, оп. 4, д. 109, л. 33.

նախագահ ընտրվեց Մուստաֆա Սուբհին։ Խորհրդի կենտրոնական քաղաքական մարմինը քաղբաժինն էր, որը ղեկավարում էր սեկցիաների (պարսկական, Թուրքական, բուխարական, խիվայական, չինական) հեղափոխական աշխատանքը, ինչպես նաև ազգային հեղափոխական կազմակերպությունների կենտրոնական մարմինները[1]։

Մուստաֆա Սուբհին և նրա խումբը ոչ միայն կոմունիստական աշխատանք էին ծավալել Սովետական Ռուսաստանում, այլև կարողացել էին կենդանի կապ հաստատել բուն Թուրքիայի հեղափոխական շարժման հետ։ Օդեսայի վրայով սիստեմատիկաբար հայրենիք էին վերադառնում Թուրք կոմունիստները[2]։ Շուտով կոմունիստական խմբեր սկսեցին ծագել բուն Թուրքիայում, առաջ բերելով քեմալականների տագնապն ու զայրույթը։

* * *

Սակայն Ռուսաստանի մուսուլմանական տարածքներում սովետական իշխանության հաստատումը չէր նշանակում, թե քաղաքական ասպարեզից հեռացել և իրենց գործունեությունը դադարեցրել են բուրժուական ազգայնականները, պանթուրքականները ու պանիսլամականները։ Ընդհակառակը, նրանք նախ երկչոտաբար, ապա բացահայտորեն հանդես եկան կոմունիստական կուսակցության սոցիալական միջոցառումների, նրա լենինյան ազգային քաղաքականության կենսագործման դեմ, ազգային հանրապետությունների և մարզերի ստեղծման ու ամրապնդման ուղղությամբ ծավալած ամբողջ վիթխարի աշխատանքին հակադրելով պրոլետարիատի դիկտատուրայի քայքայմանն ուղղված իրենց ծրագիրը։

Դա իր առավել անսքող արտահայտությունը գտավ թաթարական բուրժուական նացիոնալիզմի գործակալության՝ սուլթան-գալիևականության մեջ։

Քաղաքական այդ հոսանքի ճանաչված պատգամավորը Սուլթան-Գալիևն էր, որը, ինչպես ասվեց, գլխավորում էր ՌԿ(բ)Կ Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունը-

[1] Տե՛ս ЦПА ИМЛ, ф. 122, оп. 1, д. 29, л. 262—263.

[2] Տե՛ս «Жизнь национальностей», 29 июня 1920 г.

ների կենտրոնական բյուրոն։ Դեռ Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ նա մասնակցել էր թաթարների շրջանում ծավալված ազգային և կրոնական շարժմանը։ Լինելով թուրքերենի ուսուցիչ, Սուլթան-Գալիևը միաժամանակ աշխատակցում էր «Սուզ» («Խոսք»), «Իլ» («Հայրենիք») և այլ ազգային-կրոնական, բուրժուական թերթերի և հանդեսների։ Հոկտեմբերից հետո դարձել էր բոլշևիկյան կուսակցության ուղեկից, 1918 թվականին մտել նրա շարքերը, ապա և հասել պետական, զինվորական ու կուսակցական կարևոր պաշտոնների։

Որպես բուրժուաազգայնական թեքում, սուլթանգալիևականությունը որոշ տարածում էր գտել Թաթարիայում, Բաշկիրիայում և Ղրիմում։ Իր հանցավոր գործողություններով Սուլթան-Գալիևը փորձում էր առաջ բերել ճնշված ժողովուրդների անվստահությունը Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատի նկատմամբ, ստեղծել պանթուրքական քաղաքական կազմակերպություն և այդ նպատակով դավաճանաբար գործարքի մեջ էր մտել արտասահմանյան մուսուլմանական առանձին ռեակցիոն գործիչների հետ։

Սուլթան-Գալիևը կարողացավ իր շուրջը համախմբել թաթար բուրժուական մտավորականների մի մասին (Ֆիրդևս, Մուխթարով, Ենբաևը և այլոք), որոնք նույնպես խոսքով հայտարարելով պրոլետարիատի դիկտատուրայի նկատմամբ իրենց բարյացակամության մասին, ձևականորեն հանդես գալով սովետական իշխանության կողմնակիցներ, կարողացել էին թափանցել կուսակցության շարքերը, սողոսկել կուսակցական և պետական ղեկավար մարմինների մեջ, փորձելով անցկացնել իրենց քաղաքականությունը։

Իրենց պայքարի սլաքը սուլթանգալիևականներն ամենից առաջ ուղղեցին մարքսիստական-լենինյան տեսության դեմ։ Սուլթան-Գալիևը գտնում էր, որ «գերմանական մարքսիզմի ռուսական տարբերակը», այսինքն՝ լենինիզմը, ընդունելի է միայն Արևմուտքի և այն երկրների համար, որոնցում առկա է պրոլետարական շարժումը։ Ինչ վերաբերում է Ռուսաստանի և ընդհանրապես Արևելքի մուսուլման ժողովուրդներին, ասում էր Սուլթան-Գալիևը, ապա դրանց համար լենինիզմն անընդունելի է, քանի որ այն խորթ է նրանց ոգուն, անհարիր նրանց ազգային ավանդույթներին ու հոգևոր կերպարին։ Դրա հիմնական

պատճառը, նրա կարծիքով, այն էր, որ իբր լենինիզմը հաշվի չի նստում այդ ժողովուրդների ազգային առանձնահատկությունների հետ։ Պրոլետարիատը, ասում էին սուլթանգալիևականները, անընդունակ է գլխավորելու Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը։ Դրանով իսկ նրանք հետապնդում էին մի հիմնական նպատակ՝ Արևելքի նախկինում ճնշված ժողովուրդներին կտրել համապրոլետարական հեղափոխական շարժումից, նրանց զարգացումը սոցիալիստական ուղուց տեղափոխել բուրժուական ուղի։

Ելնելով մարքսիզմ-լենինիզմի նկատմամբ այդ բացահայտ բուրժուական սկզբունքից, Սուլթան-Գալիևը հանդես եկավ ազգերի ինքնորոշման լենինյան քաղաքականության դեմ։ Նա պրոտեստում էր, որ մուսուլմանական ազգերի սովետական սկզբունքներով ինքնորոշումը չի համապատասխանում նրանց ձգտումներին և որ սովետական կառավարության ազգային քաղաքականությունն իր էությամբ հակառակ է նրանց շահերին ու պահանջմունքներին։

Լավագույն դեպքում, ասում էր Սուլթան-Գալիևը, մարքսիզմը պետք է «հարմարեցնել» իսլամին, այսինքն՝ «միավորել» նրա հետ, որովհետև իբր իսլամը մարմնավորում է մուսուլմանական բոլոր ժողովուրդների «ազգային առանձնահատկությունները», ողջ ազգայինը, հանդիսանում է մուսուլմանների սոցիալ-քաղաքական և կուլտուրական ամբողջ կյանքի «հոգը»։

Ի հակակշիռ սովետական իշխանության կողմից թաթար ազգին և Ռուսաստանի մյուս մուսուլմանական ժողովուրդներին տրված ինքնավարությանը, Սուլթան-Գալիևը և նրա խումբը, շարունակելով մինչհեղափոխական ժամանակաշրջանի պանթուրքականների գործը, նոր պայմաններում՝ դասակարգային անողոք պայքարի մեջ օրեցօր ամրապնդվող պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, երազում էին ստեղծել **Թուրանական պետություն**։

Ըստ սուլթանգալիևականների Թուրանի պետությունը պետք է իր մեջ ներառեր ժամանակակից Թաթարիայի, Բաշկիրիայի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի, Տաջիկստանի

[illegible] «Жизнь национальностей» [illegible]

տարածքները։ Ծրագրի նախագծի հեղինակի՝ Սուլթան-Գալիևի պարծենկոտ հայտարարության համաձայն, Թուրանի պետությունը պետք է լիներ «պետական կապիտալիզմի վրա հիմնված ժողովրդադեմոկրատական հանրապետություն», թուրանական ժողովուրդների ֆեդերացիա, որտեղ գերիշխող տարրը լինելու էր թաթար բուրժուազիան[1]։ Մի կողմ դնելով պետության՝ որպես տիրապետող դասակարգի գործիքի մասին մարքսիստական-լենինյան ըմբռնումը, սվաղելով մուսուլմանական միջավայրի դասակարգային հակասությունները, սուլթանգալիևականները գտնում էին, որ այդ պետությունը հենվելու է բնակչության բոլոր խավերի, հասարակության բոլոր դասակարգերի վրա։

Թուրանական պետությունում սուլթանգալիևականների սոցիալական քաղաքականությունը հիմնական կետերում պետք է համընկներ մուսուլմանական ազգայնական բուրժուազիայի՝ դեռ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունն առաջադրած պահանջներին։ Նրանց կարծիքով Արևելքի ազգային հանրապետություններում դասակարգային պայքար չպետք է մղվի։ Ելնելով այդ ընդհանուր հարցադրումից, նրանք գտնում էին, որ հետամնաց ազգությունների տնտեսական վերելքին և նրանց կուլտուրական աճին նպատակաուղղված կոմունիստական կուսակցության քաղաքականությունը պետք է հավասարապես տարածվի և՛ մուսուլմանական չքավորության, և՛ նախկին շահագործողական դասակարգերի վրա և որ նոր իշխանության ընձեռած հնարավորություններից բոլորը պետք է հավասարապես օգտվեն, քանի որ «բոլորն էլ աղքատ են»։ Հենց այդպիսի քաղաքականություն վարելը ապագա թուրանական պետության ղեկավարների առաջնահերթ պարտականությունն էր լինելու։

Ինչ վերաբերում է Ռուսաստանից «լիովին անկախ» Թուրանի արտաքին քաղաքականությանը, ապա այն պետք է կողմնորոշվեր դեպի կապիտալիստական տերությունները։ Սուլթան-Գալիևն ուղղակի ասում էր, թե Թուրանի և այդ տերությունների փոխհարաբերություններն այնպիսին կլինեն, որ «վերջիններս գոհ կմնան»։ Թուրանական շահագործողական պետության մեջ առաջատար դիրք զբաղեցնող թաթար ազգայնականները դառնալու էին իմպերիալիստների հլու կամակատարը։ Այլ խոսքով նախանշվում էր իմպերիալիզմի առաջ լիակատար կապիտուլյացիայի ծրագիր։

Իբրև բուրժուական քաղաքական հոսանք, սուլթանգալիևականությունն իր գործողությունները չսահմանափակեց թաթարների շրջանում, այլ դուրս գալով, տարածվեց մուսուլմանական այլ մարզեր ու տարածքներ։

Իրենց ծրագրերի, մասնավորապես թուրանական բուրժուական պետության գաղափարի իրականացման համար սուլթանգալիևականները մտադիր էին ստեղծել մուսուլմանական «կոմունիստական» կուսակցություն։

Զրպարտելով, թե ՌԿ(բ)Կ-ն չի արտահայտում Ռուսաստանի մուսուլմանական ազգերի և ազգությունների շահերն ու ձգտումները, Սուլթան-Գալիևը միաժամանակ գտնում էր, որ նրանք պետք է ունենան իրենց միացյալ «կոմունիստական» կուսակցությունը։ Խոսքն ըստ էության ՌԿ(բ)Կ-ից լիովին անկախ թյուրք-թաթարական մանրբուրժուական կուսակցության մասին էր։

Առաջին փորձն արվեց 1918 թվականի հունիսին, երբ Կազանում հրավիրված մուսուլման-կոմունիստների համառուսաստանյան խորհրդակցություններում ստեղծվեց ինքնուրույն Ռուսաստանյան մուսուլմանական կոմունիստական կուսակցություն՝ իր Կենտրոնական կոմիտեով։ Ի տարբերություն Բունդի, որ ստեղծվել էր զուտ ազգային սկզբունքով, Սուլթան-Գալիևը և նրա համախոհները փորձում էին կուսակցությունը ստեղծել զուտ կրոնական սկզբունքով՝ նրանում ընդգրկելով միայն մուսուլման կոմունիստներին։ Բանը հասավ նրան, որ 1918 թվականի նոյեմբերին ՌԿ(բ)Կ Կենտկոմի կողմից Մոսկվայում հրավիրված կոմունիստ-մուսուլմանների I համագումարում Մ. Սուլթան-Գալիևը, հանդես գալով թաթար կոմունիստների ներկայացուցիչ Քամիլ Յակուբովի ինտերնացիոնալիստական տեսակետների դեմ, միաժամանակ վճռականորեն արտահայտվեց թաթար և բաշկիր կոմունիստներին ռուս կոմունիստների հետ մի կազմակերպության մեջ միավորելու դեմ, դրանով իսկ բացահայտորեն հակադրվելով կոմունիստական կուսակցության կառուցման

[1] Տե՛ս **М. А. Сайдашев**, Ленин и социалистическое строительство в Татарии 1918—1923, изд. «Наука», М., 1969, էջ 20։

ինտերնացիոնալիստական սկզբունքներին[1]։ Մուսուլման-կոմունիստների համագումարը ճնշող մեծամասնությամբ մերժեց սեփական Կենտկոմ ունեցող առանձին մուսուլմանական կոմունիստական կուսակցություն ստեղծելու առաջարկը[2]։

Մուսուլմանական կոմունիստական կուսակցություն ստեղծելու գաղափարը պաշտպանություն էր գտնում առանձին մուսուլման-կոմունիստների շրջանում։ Այսպես, 1918 թվականի աշնանը չուվաշական ազգայնականները կազմեցին ինքնուրույն «Չուվաշական կոմունիստական կոմիտե», որը չէր մտնում ՌԿ(բ)Կ-ի մեջ և փորձում էր կատարել կուսակցության չուվաշական Կենտկոմի ֆունկցիա[3]։

Կոմունիստական կուսակցության կազմակերպման ինտերնացիոնալիստական սկզբունքներից նման շեղումներ թույլ էին տրվում նաև մյուս ազգային ծայրամասերում, որտեղ որոշ կուսակցական ղեկավարներ տեղերում փորձում էին մեկուսացնել իրենց կազմակերպությունները և պարփակել ազգային կեղևի մեջ։ Օրինակ, ՌԿ(բ)Կ Կազանի նահանգկոմին կից ստեղծված մուսուլմանական բյուրոն պահանջում էր իրեն իրավունք տալ կուսակցության մեջ ընդունելու կամ կուսակցությունից հեռացնելու ազգությամբ թաթար կոմունիստներին։ Իսկ Թուրքեստանի մուսուլմանական կոմունիստական կազմակերպությունների երկրային բյուրոն Տ. Ռասկոլովի գլխավորությամբ ո՛չ միայն հաշվի չէր առնում կուսակցության երկրային կոմիտեին, այլև իրեն հակադրում էր նրան։ 1919 թվականին այդ բյուրոն տեղերում ստեղծեց մուսուլմանական կոմունիստական կազմակերպություններ[4], փայփայելով այն հույսը, թե դրանք միավորելով հնարավոր կլինի ստեղծել ՌԿ(բ)Կ-ից անկախ «Թյուրքական ժողովուրդների կոմունիստական կուսակցություն»[5]։ Բաշկիրիայի կուսակցական կազմակերպությունում նացիոնալ-ուկլոնիստներ Բիկիշևը և Խալիկովը, պրոպագանդելով անջատողական հայացքներ, ՌԿ(բ)Կ Կենտկոմից պահանջում էին հետ կանչել ռուս կոմունիստներին[1]։

1919 թվականին հղացավ Ադրբեջանի բոլոր կոմունիստական կազմակերպությունները միավորելու և Ադրբեջանի միասնական կոմունիստական կազմակերպություն ստեղծելու գաղափարը։ Այն պետք է կազմակերպվեր ինտերնացիոնալիստական սկզբունքներով և հանդիսանար ՌԿ(բ)Կ ու նրա համակովկասյան երկրամասային կազմակերպության բաղկացուցիչ մասը։ Այդ գաղափարը պաշտպանեցին կուսակցության Բաքվի կոմիտեն, Ադրբեջանի կոմունիստների մեծամասնությունը։ Սակայն ադրբեջանցի ընկերների մի մասը, հատկապես մուսուլման կոմունիստների «Հումմեթ» կազմակերպության առանձին ղեկավարներ սկզբում հակված չէին ընդունելու անկախ ազգությունից բոլոր կոմունիստներին միավորելու և Ադրբեջանի միասնական կոմունիստական կուսակցություն ստեղծելու առաջարկը։

Այդ մասին Ա. Ի. Միկոյանը վերհիշում է. «Սկզբում եղան տարակարծություններ։ Այսպես, «Հումմեթի» առավել ազդեցիկ ղեկավարներից մեկը՝ Կարաևը, պահանջեց ՌԿ(բ)Կ ինքնուրույն կազմակերպություն զուգահեռ պահպանել «Հումմեթը» որպես համադրբեջանական կազմակերպություն (առաջարկելով նրան միացնել նաև «Ադալեթը»)։ «Հումմեթի» մեկ ուրիշ ոչ պակաս ազդեցիկ ղեկավար Միրզա Դավուդ Հուսեյնովը առաջարկեց «Հումմեթի» ու «Ադալեթի» փոխարեն կազմակերպել թյուրքական կոմունիստական կուսակցություն, որը պետք է գոյություն ունենար ՌԿ(բ)Կ կազմակերպության հետ մեկտեղ»։

Այնուհետև Ա. Միկոյանը նշում է, որ դրանից ավելի ուշ հայտնի դարձավ, որ «Հումմեթի» աջքի ընկնող գործիչներից մեկը՝ Բաքվում սովետական իշխանության ժամանակավոր անկման կապակցությամբ Մոսկվա տեղափոխված Ս. Մ. Էֆենդիևը, 1919 թվականի հուլիսի 27-ին «Ժիզն նացիոնալնոստեյ» թերթում հրապարակել էր մի հոդված, որտեղ գրել է. «Ներկայումս հասունացել է «Հումմեթ» կազմակերպության գործունեության ասպարեզն ընդլայնելու պահանջմունքը, քանի որ սոցիալիստական Ռուսաստանում անհրաժեշտ է ներգործության ոլորտի մեջ առնել Արևելքի ժողովուրդների բազմամիլիոն ողջ զանգվածին։ Կազմակերպության և կուսակցական աշխատանքի կա-

---

[1] Տե՛ս «История Коммунистической партии Советского Союза», т. 3, кн. 2, М., Политиздат, 1968, էջ 336։

[2] Տե՛ս «История КПСС», т. 3, кн. 2, էջ 336։

[3] Տե՛ս նույն տեղը։

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 338։

[5] Տե՛ս «Пролетарский интернационализм боевое оружие Коммунистической партии», М., 1959, էջ 248։

[1] Տե՛ս «Пролетарский интернационализм...», էջ 244։

րիք ունեն ոչ միայն նախկին ռուսական կայսրության մուսուլմանները, այլև Պարսկաստանի, Թուրքիայի, Աֆղանստանի և արտասահմանյան այլ երկրների մուսուլմանները։ Այժմ այդ խնդիրը դրվում է «Հումմեթի» վրա, որը կոմունիզմի շեփորն է Արևելքում»։ Միկոյանը վերհիշում է, որ կարդալով այդ հոդվածը, մենք ծայրաստիճան զարմացել էինք. այդ ինչպե՞ս կարելի է առաջարկել կրոնական հատկանիշով «Հումմեթում» միավորել տարբեր ազգությունների բոլոր մուսուլմաններին, ընդամենը ոչ միայն Ռուսաստանի, այլև Արևելքի արտասահմանյան երկրների քաղաքացիներին»[1]։

Մուսուլմանական «կոմունիստական» կուսակցության գաղափարի իրականացման համար գլխավոր մարտը սուլթանգալիևականները տվեցին Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների համառուսաստանյան II համագումարում (1919 թ. նոյեմբեր-դեկտեմբեր), որտեղ ուղղակի փորձեցին անցկացնել մուսուլմանական կոմունիստական կուսակցության ստեղծման նախապես կազմած նախագիծը։ Բայց համագումարի մեծամասնությունը դեմ արտահայտվեց այդ նախագծին։

Չնայած կրած պարտությանը, սուլթանգալիևականները չթուլացրին այդ ուղղությամբ իրենց ջանքերը։ 1920 թվականի սեպտեմբերին Բաքվում հրավիրված Արևելքի ժողովուրդների I համագումարում նույնպես նրանք առաջ քաշեցին իրենց ծրագիրը, բայց այստեղ էլ նրանց փորձը դատապարտվեց ձախողման։

Համոզվելով, որ լեգալ ճանապարհով մուսուլմանական ազգայնական կուսակցության ստեղծումն իր և իր համախոհների ուժից վեր է, Սուլթան-Գալիևը բռնեց գաղտնի գործելու ճանապարհը։ Նա Կազանում և մի շարք ուրիշ վայրերում անլեգալ խմբակներ ստեղծեց, որոնց մեջ կարողացավ ներգրավել մի քանի հարյուր տատանվող թաթար մտավորականների և ուսանողների։

Իրենց քայքայիչ գործունեությունը չսահմանափակելով Ռուսաստանի շրջանակներով, սուլթանգալիևականները փորձեցին դուրս գալ միջազգային ասպարեզ։ Դրա նպատակն էր՝ Ռուսաստանում ստեղծվելիք մուսուլմանական «կոմունիստական» կուսակցության հիմքի վրա միավորել գաղութային և կախյալ երկրների, առաջին հերթին արտասահմանյան մուսուլմանական երկրների «հեղափոխական-ազգայնական» խմբերին և ստեղծել այսպես կոչված «Չորրորդ գաղութային ինտերնացիոնալ»։ Սուլթանգալիևականների մտահղացմամբ դա պետք է հակադրվեր Վ. Ի. Լենինի ստեղծած Երրորդ կոմունիստական ինտերնացիոնալին։

«Ազգային և գաղութային հարցերի վերաբերյալ թեզիսների սկզբնական ուրվագծում» Վ. Ի. Լենինը գրել է. «...Կոմինտերնի ամբողջ քաղաքականության անկյունաքարը պետք է դառնա բոլոր ազգերի և երկրների պրոլետարների ու աշխատավոր մասսաների մերձեցումը՝ միահամուռ ուժերով հեղափոխական պայքար մղելու կալվածատերերի ու բուրժուազիայի տապալման համար։ Որովհետև միայն այդպիսի մերձեցումն է երաշխավորում կապիտալիզմի դեմ հաղթանակը»[1]։ Լավ հայտնի է, թե ինչպիսի վիթխարի հեղափոխականացնող աշխատանք էր կատարում Կոմինտերնը՝ գաղութների և կախյալ երկրների ժողովուրդներին արթնացնելու և քաղաքական գիտակից կյանքի կոչելու։ Սակայն սուլթանգալիևականներին դա չէր հետաքրքրում։ Նրանց խորթ էր կապիտալիստական ստրկության դեմ մղվող պայքարում բոլոր երկրների աշխատավորներին մերձեցնելու և միավորելու III Ինտերնացիոնալի գերագույն նպատակը։ Բուրժուական այս նացիոնալիստների համար կարևորը իսլամ դավանողների, առաջին հերթին թուրքալեզու մուսուլմանների միավորումն էր՝ զուտ ազգային խնդիրներ իրագործելու համար։ Ուստի սուլթանգալիևականները ձգտում էին վարկաբեկել Կոմինտերնի գործունեությունը, պրպարտում էին, թե նա չի կարողանում և ունակ չէ դեկավարելու Արևելքի երկրների հեղափոխական պայքարը, որ նման խնդիր իր առջև կարող է դնել միայն ստեղծվելիք «Գաղութային ինտերնացիոնալը»։

Մուսուլման կոմունիստների մի մասի մոտ երևակված ազգայնական բնույթի սխալներն ուղղելու և կուսակցական կազմակերպություններն ամրապնդելու համար ՌԿ(բ)Կ Կենտկոմը ձեռնարկում էր անհրաժեշտ միջոցներ։ Կենտկոմը շեշտը դնում էր կոմունիստների և անկուսակցականների ինտերնացիոնալ

---

[1] Ա. Ի. Միկոյան, Պայքարի ուղիով, դիրք առաջին, Երևան, 1972, էջ 650։

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 41, էջ 195։

դաստիարակության գործը բարելավելու վրա։ Բաշկիրիայի կուսակցական կազմակերպությունն ամրապնդելու նպատակով այնտեղ ուղարկվեց Ֆ. Ի. Գոլոշչեկինը։ Կուսակցության Կենտկոմի երաշխավորությամբ համաբաշկիրական կուսակցական կոնֆերանսը 1922 թվականի հունվարին փոխեց կուսակցության մարզկոմի կազմը, նոր մարզկոմին հանձնարարելով կյանքում անշեղորեն անցկացնել պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները։ Ազգայնական թեքումը դատապարտվեց նաև Կիրգիզական (Ղազախական) երկրամասի կուսակցական կազմակերպությունում։ 1921 թվականի հունիսին տեղի ունեցած երկրամասային I կուսակցական կոնֆերանսը, որին մասնակցում էր ՌԿ(բ)Կ Կենտկոմի ներկայացուցիչ ընկ. Յարոսլավսկին, առաջարկեց վճռականապես ուղղել «ազգային քաղաքականության գիծը», նվաճել աշխատավոր կիրգիզ և ղազախ մասսաների լիակատար վստահությունը[1]։

Հեղափոխության և սովետական իշխանության համար ոչ պակաս վտանգավոր էր թյուրք-թաթարական բուրժուական նացիոնալիստների կողմից առաջ քաշված մյուս՝ մուսուլմանական բանակի ստեղծման գաղափարը։

Հարկ է նշել, որ Հոկտեմբերյան հեղաշրջումից անմիջապես հետո, մանավանդ քաղաքացիական պատերազմի ճակատներում կարմիր բանակի տարած առաջին լուրջ հաղթանակներից հետո մուսուլման կոմունիստների, Ռուսաստանի օտարերկրյա ասիացիների և մանավանդ այնտեղ գտնվող նախկին ռազմագերիների շրջանում լայն տարածում գտավ ձախ, արմատական այն թևը, թե օտարերկրյա ինտերվենտներին և սպիտակգվարդիականներին վերջնականապես ջախջախելուց հետո կարմիր բանակը պետք է ռազմական ապատագրական արշավ սկսի դեպի Արևելք, իմպերիալիզմի լծից ազատագրի Ասիայի գաղութային բոլոր ժողովուրդներին, կապիտալիստական տերություններին վերջնականապես դուրս մղի մայրցամաքից և այդպիսով մեծապես արագացնի համաշխարհային հեղափոխության ընթացքը։

Ռազմական ապատագրական արշավի մասին թեկն առաջին անգամ պաշտոնապես առաջ քաշվեց Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների (ԱԺԿԿ) համառուսաստանյան I համագումարում (1918 թ. նոյեմբեր)։ Համագումարի աշխատանքներին մասնակցում էր նաև Ռուսաստանի թուրք կոմունիստների պատվիրակությունը՝ Մուստաֆա Սուբհի, Ջևդեթ Ալի, Մոհամեդ Նազմի, Իսմայիլ Լուֆթի կազմով։ Թուրք կոմունիստները գտնում էին, որ Թուրքիայում «հեղափոխություն առաջ բերելու» նպատակով «հարկավոր է համաթիլ ուժերը և դուրս գալ կռվի դաշտ»։ Մի շարք գործնական միջոցների թվում առաջարկվում էր «ձևավորել բոլոր թուրքական կոմունիստական ջոկատների կենտրոնացմանը հարավային ռազմաճակատում, դրանք լրացնել Ռուսաստանում գտնվող թուրք ռազմագերիներով»[2]։

Համագումարը որոշեց այդ առաջարկությունը հանձնել ՌԿ(բ)Կ մուսուլմանական կազմակերպությունների կենտրոնական բյուրոյի քննարկմանը[3]։ Համագումարը միաժամանակ նպատակահարմար գտավ «շտապ միջոցներ ձեռնարկել կենտրոնացնելու թուրք ռազմագերիների բանվորներին և գյուղացիներին, նպատակ ունենալով նրանցից ստեղծել կարմիր բանակ և ուղարկել հարավային ռազմաճակատում»[4]։ 1919 թվականի գարնանը թուրք ինտերնացիոնալիստները սկսեցին կենտրոնանալ Ղրիմում, որտեղ կազմեցին զորամասեր։ Այն ժամանակ հայտնվում էր, որ «Ղրիմում կան 10 հազար թուրք պրոլետարներ», որոնք միավորված են կամավորական զորամիավորումների մեջ[5]։

Որքան կարմիր բանակն ավելի էր շարժվում դեպի արևելք, ազատագրելով Միջին Ասիան, Կովկասը, Սիբիրը, Հեռավոր արևելքը, այնքան աճում էր բանակը որպես գաղութային և կախյալ երկրների ազգային և սոցիալական ազատագրության գրչավոր ուժ։ Գաղափարի կողմնակիցների թիվը

Ինչպես հայտնի է, կոմունիստական կուսակցությունը հենց սկզբից մեծագույն բանակի օգնությամբ ուրիշ երկրներում հեղափոխություն առաջ բերելու մնասակար ձախ տեսակետը Վ. Ի. Լենինը գտնում էր, որ հարկավոր է ոչ թե «հեղափոխության արագացում՝ այլ հեղափոխության նախապատրաստություն

---

[1] Տե՛ս «Пролетарский интернационализм — боевое знамя Коммунистической партии», էջ 244—245։

[2] ШПА [illegible] ф. 17, [illegible] 2, д. 1, л. 196.

[3] Տե՛ս [illegible] «[illegible]», 24 [illegible] 1919 թ.։

[4] ШПА [illegible] ф. 17, [illegible] 2, д. 1, л. 196.

[5] Տե՛ս [illegible] «[illegible]», 27 [illegible] 1919 թ.։

արագացում»։ Հենց դա էլ մի կողմից կոմունիստական կուսակցության ու Վ. Ի. Լենինի, մյուս կողմից ձախ ուղղության հեղափոխականների միջև եղած սկզբունքային տարբերությունն էր։ Լենինը վճռականապես մերժում էր ռազմական միջոցներով հեղափոխությունն արտածելու մեթոդը, նշելով, որ հեղափոխությունը տվյալ երկրի ներքին օրինաչափ զարգացման արդյունքն է։

Շատ չանցած, 1918 թվականի վերջերից սկսած, ռազմական ազատագրական արշավի ձախ արմատական գաղափարը վերաճեց մուսուլմանական բանակի ստեղծման գաղափարի, որը պաշտպանություն գտավ ամենից առաջ աջերի, բուրժուական ազգայնականների կողմից։

Եթե դեպի Ասիա ռազմական ազատագրական արշավը ենթադրվում էր իրականացնել Ռուսաստանում գտնվող չինացիների, կորեացիների, հնդիկների, պարսիկների, թուրքերի և բոլոր ասիացիների ուժերով, ապա մուսուլմանական բանակի ստեղծման ջատագովները շեշտը դնում էին մուսուլմանական Արևելքի՝ Հնդկաստանի մահմեդական տարածքների, Ինդոնեզիայի, Աֆղանստանի, Պարսկաստանի, Թուրքիայի, արաբական աշխարհի, Աֆրիկայի մուսուլմանաբնակ գաղութների ազատագրության վրա։

Ենթադրվում էր, որ մուսուլմանական բանակը կազմված է լինելու հետևյալ բաղադրամասերից. նրա մեջ մտնելու էին կարմիր բանակի կազմում գտնվող թաթարական, բաշկիրական, ղազախական և զուտ թյուրք-թաթարական անձնակազմ ունեցող ազգային այլ զորամիավորումները, կովկասյան լեռնականներից կազմված այսպես կոչված «շարիաթական գնդերը», ինչպես նաև այն բոլոր մուսուլմանները, որոնք ծառայում էին կարմիր բանակի մյուս զորամասերում։ Դրանք բոլորը պետք է հետքաշվեին ռազմաճակատներից և մտցվեին նոր բանակի մեջ։ Մուսուլմանական բանակի մեջ հավաքագրվելու էին նաև զորակոչային տարիքի Ռուսաստանի մուսուլման տղամարդիկ։ Վերջապես, այդ բանակի գլխավոր հարվածող ուժը կազմելու էին մուսուլման նախկին ռազմաղերիներից ստեղծված կամավորական զորամասերը։ Ըստ որում այդ հարվածող ուժի առավել մարտունակ մասը թուրք նախկին ռազմագերիներից կազմված զորամասերն էին լինելու։ Ենթադրվում էր նաև, որ բանակը զինելու էր սովետական կառավարությունը, իսկ զինվորների մարզանքներն ու դինավարժություններն անցկացնելու էին ռազմագերի թուրք սպաները։

Հենց այստեղ տեղին է հիշեցնել, որ նախկին թուրք ռազմագերիների բացարձակ մեծամասնությունը, բարյացակամ տրամադրված լինելով սովետական իշխանության նկատմամբ, այնուամենայնիվ չէր թոթափել երիտթուրքական մտայնությունը։ Նման պայմաններում բնական է, որ ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ռուսաստանի պանթուրքականներն ամեն կերպ փորձում էին իրենց մութ նպատակներին օգտագործել ռազմագերիներին, ուստի դիմում էին թուրք գերի սպաների աջակցությանը, որոնց թվում հատկապես շատ էին համոզված պանթուրքականներն ու երիտթուրքերը։

Դեռ իմպերիալիստական պատերազմի տարիներին երիտթուրքական կառավարության ուղղակի առաջադրանքով Կոկանդում ստեղծվել էր թուրք ռազմագերի սպաների մի գաղտնի կազմակերպություն՝ «Իթթիհադի թերաքի» անվամբ (այսպես կոչված «միավորված պրոգրեսիստների» կազմակերպություն)։ Նրա անդամները գերազանցապես զբաղված էին սուլթանական Թուրքիայի օգտին ռազմական և տնտեսական բնույթի տեղեկություններ հայթայթելով։ Կազմակերպությունը սերտորեն կապված էր Տաշքենդում աշխատող գերմանական գործակալ Վիմերմանի հետ։

Հարկ է նշել, որ պատերազմի տարիներին շատ թուրք սպաներ թուրքական հետախուզական մարմինների հատուկ հանձնարարությամբ գերի էին հանձնվում, որպեսզի լրտեսական և դիվերսիոն աշխատանքներ տանեն ռուսական բանակի թիկունքում, մասնավորապես Կովկասում և Միջին Ասիայում։ Հայտնի է նաև, որ թուրք ռազմագերիներից շատերը Կովկասից Միջին Ասիա էին փոխադրվել տեղի բայերի և մուսուլմանական հոգևորականության ակտիվ միջնորդությամբ ու աջակցությամբ։ Թուրք ռազմագերի սպաներն այստեղ չէին գտնվում համակենտրոնացման ճամբարներում, գրեթե բոլորն էլ ազատության մեջ

---

[1] Տե՛ս «Труды Узбекского Государственного университета им. А. Навои». Новая серия. Выпуск 61. Исторический факультет, изд-во узбекского Госуниверситета. Самарканд, 1956, էջ 210։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 212։

էին և հաջողությամբ իրականացնում էին իրենց լրտեսական և դիվերսիոն մտահղացումները[1]։

Միջին Ասիայի թուրք սպաների կազմակերպություններն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ավելի էին ակտիվացրել իրենց գործունեությունը թուրք ռազմագերիների և տեղի թուրք բնակչության մեջ։ Այդ կազմակերպությունների գլուխ էին կանգնել այնպիսի փորձված թուրք լրտեսներ, ինչպիսիք էին Գերմանիայում հատուկ պատրաստություն ստացած Աբաս էֆենդին, դիվերսիաների մասնագետ Մուհամեդ-Ամին էֆենդիզադեն և ուրիշներ[2]։ Վերջինս, որ Թուրքիայի ռազմական խորհրդի անդամ էր, անցել էր Միջին Ասիա, թափանցել Թուրքեստանյան Սովետական Հանրապետության զինվորական կոմիսարիատի մարմինները, աչքի ընկնող դեր կատարել Ֆերգանայի «Իթթիհոդիմիլլի» պանթուրքական կուսակցության կազմակերպման գործում։ Նա մերկացվեց ու հեռացվեց աշխատանքից, բայց շարունակեց գաղտնի գործել և դարձավ Ֆերգանայում բասմաչական շարժման ոգեշնչողներից մեկը։

Թուրք սպաների կազմակերպությունները, որոնք իրենց լրտեսական գործունեությունը միավորել էին տեղի բուրժուական ազգայնականների հակահեղափոխական, պանթուրքական գործունեության հետ, քայքայիչ աշխատանք էին տանում մուսուլմանների շրջանում, շարունակում էին բորբոքել կրոնական մոլեռանդություն, հակառուսական, հակաքրիստոնեական ուրամադրություններ։

Մուսուլմանական բանակի ստեղծման հարցն լայնորեն քննարկվեց Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների (ԱԺԿԿ) համառուսաստանյան II համագումարում (1919 թ.)։ Զեկուցումով հանդես եկավ Սուլթան-Գալիևը։ ԱԺԿԿ կենտրոնական բյուրոյի նախագահը, որը, միաժամանակ այսպես կոչված կենտրոնական մուսուլմանական զինվորական կոլեգիայի ղեկավարն էր, զարգացնում էր այն միտքը, թե Կոլչակի, Դենիկինի և սպիտակգվարդիական մյուս գեներալների նկատմամբ կարմիր բանակի հաղթանակը դեռ Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի ավարտ չի նշանակում, թե դրանով չեն ավարտվելու պատերազմական գործողությունները։

[1] Տե՛ս «Труды Узбекского Государственного Университета им. А. Навои». Новая серия. Выпуск 61. Исторический факультет, էջ 210։

[2] Տե՛ս նույն տեղը։

Ընդհակառակը, ասում էր նա, անխուսափելիորեն քաղաքացիական պատերազմ է սկսվելու Ասիայի ողջ մայրցամաքում։ Կռվող կողմերն են լինելու՝ մի կողմից գաղութատեր իմպերիալիստները, մյուս կողմից՝ Ռուսաստանում կազմակերպվելիք մուսուլմանական բանակը և ճնշված Արևելքի՝ Պարսկաստանի, Թուրքիայի, Հնդկաստանի, Աֆղանստանի մուսուլման ժողովուրդները։ «Մենք պետք է պատրաստվենք այդպիսի պայքարի,— ասում էր Սուլթան-Գալիևը,— այդ նպատակով Արևելքի արդեն հեղափոխականացված ժողովուրդներից՝ թաթարներից, բաշկիրներից, թուրքեստանցիներից, կիրգիզներից մենք պետք է կազմենք արևելյան կարմիր բանակ.... որը կգործի Արևելքում... միջազգային իմպերիալիզմի դեմ, կամ հենց Արևելքի դեմ, եթե Արևելքն օգտագործվի... իմպերիալիզմի կողմից»[1]։

Սուլթան-Գալիևը համագումարին տեղյակ պահեց, որ մուսուլմանական կամ արևելյան կարմիր բանակ ստեղծելու գաղափարը պատկանում է Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների կենտրոնական բյուրոյին, որը և պաշտպանություն է գտել Տրոցկու կողմից[2]։ Վերջինս նաև համաձայնություն էր տվել, որպեսզի մուսուլմանական բանակը լիովին գտնվի մուսուլման հրամանատարների տրամադրության տակ։

Ճիշտ դիրքերի վրա կանգնած համագումարի պատվիրակները քննադատության ենթարկեցին մուսուլմանական բանակ ստեղծելու և այն Արևելքի վրա ուղղելու առաջարկի կողմնակիցներին։ Սուլթան-Գալիևին ուժեղ հակահարված տվեց Ի. Պ. Քաթանյանը, որը համագումարին մասնակցում էր որպես ԴՍՖՍՀ ռազմահեղափոխական խորհրդի ներկայացուցիչ։ Նոյեմբերի 27-ի նիստում նա ասաց. «Երբ ընկ. [Սուլթան-Գալիևը] ասում է, թե հարկավոր է մուսուլմանական գորամասերը կենտրոնացնել որոշակի տեղերում, որպեսզի նրանք գտնվեն մուսուլմանների տրամադրության տակ, ես կցանկանայի հարցրնել, իսկ դուք մոռացե՞լ եք, որ երբ Պետրոգրադի վրա հարձակվում էր Յուդենիչը, բաշկիրական բրիգադը վիթխարի ծառայություն մատուցեց հեղափոխությանն այն բանով, որ կռվում էր Նեայի ափերին։ Հարձակվում է Դենիկինը։ Այժմ ամեն մի

[1] ՍԱԻՄԼ, ֆ. 17, օպ. 2, դ. 4, թ. 206—207։

[2] Տե՛ս նույն տեղը, թ. 179։

ավելորդ մարդ մեզ պետք է... իսկ մեզ ասում են՝ ետ բաշեք այդ (մուսուլման։— Հ. Ս.) զինվորներին։ Եվ ես ուզում եմ հարցնել՝ որտե՞ղ ենք գտնվում մենք, ջախջախվա՞ծ է արդյոք Դենիկինը։ Եվ մի՞թե մուսուլմանական զորամասերն իրենց համար խորթ գործ են անում։ Եվ մի՞թե, ետ քշելով Դենիկինին, նրանք չեն գնում ազատագրելու Դաղստանը, Ադրբեջանը, չեն նպաստում այն բանին, որ հեղափոխությունն անցնի Պարսկաստան, [իսկ ապա] շարունակվի շարժվել, որպեսզի ընդգրկի Ասիան... Մուսուլմանական զորամասերը պետք է մնան այնտեղ, որտեղ նրանց պահանջում է հեղափոխությունը»։

Ռ. Քաթանյանը պարզաբանեց, թե ինչ է հարկավոր հասկանալ Արևելքի հեղափոխականացում ասելով։ Արևելքի հեղափոխականացումը պետք է իրականացվի ոչ թե սվինների օգնությամբ, ասում էր նա, այլ գաղափարների տարածման միջոցով։ «Հարկավոր է, որ կոմունիստները, մեկնելով Արևելք, կարողանան ժողովրդին տալ որոշակի սոցիալական լոզունգներ»։ Ամենից առաջ պետք է առաջադրվի «Ամբողջ հողը ժողովրդին» լոզունգը, և երբ այդ լոզունգը իրականանա, «այնտեղ տեղում կստեղծվի մեծ քաջարի կարմիր բանակը, որը կմիանա մեր բանակի հետ, կգնա առաջ և վերջիվերջո կհաղթի»[1]։ Ռ. Քաթանյանին համագումարում պաշտպանեցին Վ. Լ. Լուկաշովը, Սայիդ-Գալիևը և ուրիշներ։ Նրանք նույնպես հանդես եկան այն տեսակետի դեմ, թե անհրաժեշտ է «ռազմական ուժեր կենտրոնացնել Արևելքում»[2]։ «Մենք չենք կարող այժմ գնալ դեպի Արևելք սվինների բանակով,— ասաց Սայիդ-Գալիևը։— Չի կարելի հեղափոխությունը ներմուծել դրսից։ Հեղափոխությունը հարկավոր է կատարել ներսից»[3]։

Սակայն համագումարի պատվիրակների մեծ մասը, որը գնում էր Սուլթան-Գալիևի հետևից, պաշտպանեց մուսուլմանական բանակ ստեղծելու տեսակետը։ Արևելյան հարցի վերաբերյալ Սուլթան-Գալիևի զեկուցման առթիվ ընդունված բանաձևում հանձնարարվում էր «ձեռնամուխ լինել արևելյան ինտերնացիոնալ դասակարգային կարմիր բանակի ստեղծմանը՝ որպես միջազգային կարմիր բանակի մի մասի»[4]։

[1] ЦПА ИМЛ, ф. 17, оп. 2, д. 4, лл. 231—232.
[2] Նույն տեղը, л. 261։
[3] Նույն տեղը, л. 235—236։
[4] ЦПА ИМЛ, оп. 65, д. 9, л. 56.

ՌԿ(բ)Կ-ն, սովետական կառավարությունը, անձամբ Վ. Ի. Լենինը վճռականորեն մերժեցին մուսուլմանական բանակ ստեղծելու գաղափարը։

Այդ կապակցությամբ շատ հետաքրքրական է այն խոսակցությունը, որ 1920 թվականի հունվարին ուղիղ գծով տեղի է ունեցել Թուրքեստանի ռազմաճակատի գլխավոր հրամանատար Մ. Վ. Ֆրունզեի, որն այն ժամանակ գտնվում էր Սամարայում, և ՌԿ(բ)Կ Կենտկոմի Թուրքբյուրոյի անդամ, այն ժամանակ Տաշքենդում գտնվող Շ. Զ. Էլիավայի միջև։ Ահա մի հատված նրանց խոսակցության գրառումից.

«Էլիավա։ Առաջին հարցը մուսուլմանական զորամասերի կազմավորման մասին է։ Մուսուլմանական կոմունիստները համառորեն պահանջում են անհապաղ ձեռնամուխ լինել մուսուլմանական զորամասերի կազմավորմանը։ Ըստ որում նրանք այդ բանը պատկերացնում են մուսուլմանական կարմիր բանակ ստեղծելու ձևով, համառորեն պահանջում են կազմակերպել հրամանատարական կազմի դասընթացներ, դասավանդումը վարելով թուրքերեն։ Այդ երկու հարցերում էլ նրանց ոգեշնչողներն են գերի թուրք սպաները, որոնք իրենց ծառայություններն են առաջարկում որպես դասախոս-հրահանգիչներ։ Մուսուլմաններին ոչ թե որպես ինքնուրույն մուսուլմանական բանակ, այլ որպես առանձին զորամասեր կազմելու և մոբիլիզացնելու հարցը ես սկզբունքորեն համարում եմ լուծված... Ես անհրաժեշտ եմ գտնում վերացնել մուսուլմանական բանակի շտաբը, որը այստեղ ստեղծվել էր մինչև մեր գալը։

Ֆրունզե։ Բարև, Շալվա Զուրաբովիչ։ Առաջին՝ մուսուլմանական շտաբի և կազմավորումների հարցի մասին... Ոչ մի առանձին շտաբ և ոչ մի մուսուլմանական բանակ չպետք է լինի։ Այդ հարցի վերաբերյալ ես մի անգամ ես կարծիք եմ փոխանակել Իլյիչի հետ... և ոչ մի խոսակցություն լինել չի կարող։ Բնիկների կազմավորումներ, իհարկե, թույլատրելի են, ոչ թե դավանաբանական սկզբունքով, այլ, ինչպես դու միանգամայն ճիշտ էիր ասում, ազգային սկզբունքով»[1]։

Մուսուլմանական բանակի ստեղծումը դեմ էր բանվորագյուղացիական բանակի կառուցման ինտերնացիոնալիստական

[1] «Коминтерн и Восток». изд-во «Наука». Москва, 1969, с. 95.

սկզբունքներին։ Դա, անշուշտ, ուժգին հարված կլիներ կոմունիստական գործին, միջազգային հեղափոխական շարժմանը։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հանձինս սուլթանգալիևականության, սովետական իշխանությունը գործ ուներ պանթուրքական և պանիսլամական բուրժուական շարժման տարատեսակության հետ։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական մարմինները ժամանակին մերկացրին և ջախջախեցին սուլթանգալիևականությունը։

Այն բանից հետո, երբ Սուլթան-Գալիևին և նրա համախոհներին չհաջողվեց լեգալ ճանապարհով ստեղծել մուսուլմանական բանակ և մուսուլմանական կոմունիստական կուսակցություն, նրանք անցան ընդհատակյա հակակուսակցական և հակասովետական քայքայիչ աշխատանքի։

Բանն այնտեղ հասավ, որ Սուլթան-Գալիևը կապեր հաստատեց օտարերկրյա հետախուզությունների հետ[1]։ Նրա թշնամական գործողությունների մերկացման առիթ եղավ սովետական անվտանգության օրգանների ձեռքն ընկած նամակը, որը «Ռուստեմ» ստորագրությամբ նա ուղարկել էր Պարսկաստան՝ ոմն Թաջի-Բախշի անունով պարսկական քաղաքական գործչի։ Նամակում Սուլթան-Գալիևն ակնարկում էր, որ Ռուսաստանում ալդեն գործում է Կոմինտերնին և սովետական իշխանությանն ընդդիմադիր մի քաղաքական կազմակերպություն, որը բոլոր ջանքերը թափում է Ռուսաստանի կոմունիստ-մուսուլմանների մի մասին և թուրքական ու պարսկական քաղաքական գործիչներին իր շուրջը համախմբելու համար[2]։

Բաշկիրիա ուղարկած նամակներից մեկում նույնպես Սուլթան-Գալիևը առաջ էր քաշում քաղաքական գաղտնի կազմակերպություն ստեղծելու և ազգային հարցում սովետական իշխանության միջոցառումներին անհապաղ հակադրվելու պահանջը[3]։ Բաշկիրիա ուղարկած մի ուրիշ ծածկագիր նամակում, որը հասցեագրված էր տեղի լուսավորության ժողովրդական կոմիսար

[1] Տե՛ս Касымов, Пантюркистская контрреволюция и ее агентура султангалиевщина, Казань. Татиздат, 1931, էջ 88—89։

[2] Տե՛ս «Четвертое совещание ЦК РКП(б) с ответственными работниками национальных республик и областей в Москве 9—12 июня 1923 г.». Приложение II, էջ 16։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 3։

Ա. Ադգամովին, Սուլթան-Գալիևը հայտնում էր, որ գարնանը սպասվում է բասմաչության ավելի կազմակերպված ելույթ Թուրքեստանում և Բուխարայում և որ պետք է պատրաստ լինել սպասվող իրադարձություններին։ Նա Ադգամովին նաև հանձնարարում էր կապ հաստատել բաշկիրական հայտնի բուրժուական նացիոնալիստ Զ. Վալիդովի հետ, որպեսզի միասնաբար գործեն «ազատության» համար[1]։

Սուլթան-Գալիևը կապեր էր հաստատել նաև Ղրիմի հանրապետության արդարադատության ժողկոմ Ի. Ֆիրդևսի, Թաթարական ազգայնականության պարագլուխներ Կ. Մուխթարովի, Գ. Մանսուրովի, Ռ. Սաբիրովի, Մ. Բուրունդուկովի և այլոց հետ։

Հակակուսակցական և հակասովետական գործունեության համար Սուլթան-Գալիևը 1923 թվականին վտարվեց կոմունիստական կուսակցությունից և հեռացվեց զբաղեցրած պաշտոնից։ Իրենց արժանի պատիժը ստացան նաև նրա համախոհները։ Սուլթանգալիևականությունը, որպես բուրժուանացիոնալիստական քաղաքական հոսանք, լիակատար ձախողանք կրեց։

[1] Տե՛ս «Четвертое совещание ЦК РКП(б) с ответственными работниками национальных республик и областей в Москве 9—12 июня 1923 г.». Приложение II, էջ 16։

ՔԵՄԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՊԱՆԻՍԼԱՄԻԶՄԻ ԴՐՈՇԻ ՏԱԿ: ԳՈՐԾ ԳԱՅԼԸ ՆՈՐ ԹԻԿՆՈՅՈՎ: 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻ ՄԱՍՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՇՐՋԱԴԱՐՁ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳՐՈՒՄ

Մուդրոսի զինադադարից անմիջապես հետո անգլիական և ֆրանսիական ռազմանավերը մտան Սև ծով: Ուկրաինայում, Դոնի շրջանում, Ֆինլանդիայում, Էստոնիայում, Լատվիայում հայտնվեցին անգլիացիները: Ֆրանսիացիները ցամաք իջան Ղրիմում և Օդեսայում: Հեռավոր արևելքում և Սիբիրի ուղղությամբ առաջ էին շարժվում ճապոնական միլիտարիստները: Անդրկովկասում Թուրքերին և գերմանացիներին փոխարինեցին անգլիացիները: Սովետական Ռուսաստանը բոլոր կողմերից ենթարկվեց շրջափակման:

Բուրժուական ազգայնականների կարճատև տիրապետությունն անասելի ծանր նստեց Անդրկովկասի աշխատավոր մասսաների վրա: Առավել ահավոր վիճակ ստեղծվեց Հայաստանի աշխատավոր դասակարգերի համար:

Մուդրոսի պայմանագրի 11-րդ հոդվածի համաձայն հեռանալով Անդրկովկասից, Թուրքական պարտված զորքերը կողոպտեցին և իրենց հետ տարան Հայաստանի տարածքի վրա գտնվող մնացած քիչ թե շատ արժեք ներկայացնող իրերը, պարենի խղճուկ պաշարները, անասունները: Թուրքերի մտադրությունը պարզ էր. ոչինչ չթողնել հայերին, բոլոր միջոցներով սաստկացնել սովի տագնապը երկրում:

1919 թվականին խմորվեց անկախության համար Թուրք ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը (milli mücadele), որն ուղղված էր թալանչիական այն պահանջների դեմ, որ արևմտյան իմպերիալիստական տերությունները ներկայացրել էին առաջին համաշխարհային պատերազմում պարտված Թուրքիային:

Շարժումը սկսվեց օտարերկրյա օկուպացիայի և ռազմական նոր ներխուժման պայմաններում: Ազգային-ազատագրական պայքարի անմիջական առիթ դարձավ հունական զորքերի կողմից 1919 թվականի մայիսի 15-ին Զմյուռնիայի (Իզմիրի) գրավումը: Այդ ժամանակվանից սկսած շարժումը ծավալվեց և մի քանի ամսում ընդգրկեց ամբողջ երկիրը[1]:

Թուրքիայում հակաիմպերիալիստական պայքարի հիմնական ուժը գյուղացիությունն էր: Դեռ համաշխարհային պատերազմի ժամանակ բանակ զորակոչված հազարավոր թուրք գյուղացիներ, չցանկանալով կռվել օսմանյան կառավարողների և նրանց աջակցող գերմանական իմպերիալիստների՝ իրենց համար խորթ շահերի համար, դասալիք էին դառնում և թաքնվում Անատոլիայի սարերում: Նրանցից շատերն իրենց գյուղերն էին վերադառնում զենքը ձեռքին և կազմում պարտիզանական ջոկատներ: Պատերազմի ժամանակ առաջ եկած այդ շարժումը, որն ուղղված էր գերմանական իմպերիալիստների և նրանց երիտթուրքական դաշնակիցների դեմ[2], պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո ուղղվեց օկուպանտների դեմ[3]:

Դասակարգային ուժերի բարենպաստ դասավորության դեպքում հնարավոր է, որ շարժումը ղեկավարեին հեղափոխական ուժերը: Բայց բանն այն է, որ այդ շրջանում Թուրքիայի պրոլետարիատը չափազանց սակավաթիվ էր ու քաղաքականապես թույլ, որպեսզի կարողանար գլխավորել ազգային-ազատագրական շարժումը: 1915 թվականի տվյալներով երկ-

---

[1] *Քեմալական շարժման սկզբնավորմանը և ընթացքին են նվիրված սովետական և արտասահմանյան հետազոտողների շատ աշխատություններ: Շարժման լուսաբանումը տրված է նաև սիյուռքահայ պատմական գրականության մեջ և հուշագրություններում: Մասնավորապես հիշատակելի են Պ. Հայկունու «Թոփալ Օսման և դեպքերը Մարզվանի մեջ» (Աթենք, 1924), Զարևանդի «Ինչ կծրագրեն Թուրքերը՝ միացյալ անկախ Թուրանիա» (Բոստոն, 1926), Ա. Աթանասյանի «Կիլիկիայի մոտավոր անցյալեն» (Փարիզ, 1937), Գ. Սյուրմելյանի «Երզնկա» (Կահիրե, 1937), Ս. Սաղրյանի «Կեսդարեան հուշամատեան» (Փարիզ, 1948), Հ. Հովակիմյանի «Պատմություն հայկական Պոնտոսի» (Բեյրութ, 1966) և այլ գրքերում:*

[2] *Տե՛ս* **А. М. Шамсутдинов,** Национально-освободительная борьба в Турции (1918—1923 гг.), М., изд-во «Наука», 1966, *էջ* 55:

[3] *Տե՛ս* **Аб. Алимов,** Турция. В книге «Очерки по истории Востока в эпоху империализма», *էջ* 61:

ում հաշվվում էր ամենաշատը 50 հազար բանվոր[1], որից միայն արդյունաբերական բանվորներ էին 13 հազարը[2]։ Նրանք փոշիացած էին զանազան քաղաքների մանր ձեռնարկություններում, բաժանված ազգային-կրոնական թշնամանքով։ Սոցիալիստական և կոմունիստական շարժումը նոր-նոր էր սաղմնավորվում։ Բանվորների թիվը պատերազմի ընթացքում է՛լ ավելի կրճատվեց։

Մնացել էր մյուս ուժը, որն աճել ու ամրապնդվել էր պատերազմի տարիներին։ Դա անատոլիական թուրք բուրժուազիան էր, հիմնականում առևտրական բուրժուազիա, որի շահերին անմիջականորեն սպառնում էր իմպերիալիստական օկուպացիան։ Հենվելով քաղաքային մանր բուրժուազիայի վրա, անատոլիական առևտրական բուրժուազիան ամրապնդվում էր նաև քաղաքականապես և կազմակերպչական տեսակետից[3]։ Հենց այդ բուրժուազիան էր, որ գյուղական կուլակության հետ միասին զավթեց ըստ էության գյուղացիական ազգային-ազատագրական շարժման ղեկավարությունը և շարժումը տարավ իր համար ձեռնտու հունով, թույլ չտալով, որ այն թևակոխի հաջորդ՝ ագրարային հեղափոխության էտապը[4]։

Ինչպես հայտնի է, ազգային-ազատագրական շարժումները չի կարելի դիտել որպես գաղութային և կախյալ երկրների ազգային բոլոր ուժերի համատարած ճակատ, քանի որ «ազգային շարժման հեղափոխական տարրերի հետ միասին բուրժուազիայից ծնվում են համաձայնողական, ռեակցիոն տարրեր, որոնք իմպերիալիզմի հետ գործարքը գերադասում են իրենց երկրի ազատագրության գործից»[5]։ Այդ տեսակետից թուրքական բուրժուազիան բացառություն չկազմեց և չէր էլ կարող կազմել։ Նրա «հակաիմպերիալիստական հեղափոխությունը» խիստ վերնախավային, խիստ դասակարգային էր, իսկ շարժման ղեկավարներն իրենց դասակարգային էությամբ նույն երիտթուրքերն էին՝ միայն թե աստառը շուռ տված, որոնք կարողանում էին

[1] *Տե՛ս* **Е. Еремеев,** На стыке Азии и Африки, *էջ* 127—128:

[2] *Տե՛ս* **Инал Бутаев,** Проблемы Турции, изд-во «Прибой». Ленинград. 1925, *էջ* 101:

[3] *Տե՛ս* **Аб. Алимов,** Турция. В книге «Очерки по истории Востока в эпоху империализма», *էջ* 61:

[4] *Տե՛ս նույն տեղը։*

[5] **Ի. Վ. Ստալին,** *Երկեր, հ. 7, էջ 118։*

հաջողությամբ քողարկվել «հեղափոխականների» դիմակով և հակաիմպերիալիստական պայքարի լոզունգներով։

Միլլիական շարժումը պարզապես ազգային շարժում էր, որ ո՛չ ունեցել է, ո՛չ էլ հետապնդել է հեղափոխական նպատակներ։ Բայց ունենալով խորունկ առարկայական հիմքեր, այն ձգտում էր վերականգնել Թուրքիան, պայքար մղել նրա պառակտման դեմ, վերահաստատել նրա գերիշխանությունն այն սահմաններում, ուր հնարավոր էր։

Անդրադառնալով շարժման բնույթին, Ի. Վ. Ստալինը նշել է, որ այն «հնարավոր է միայն այնպիսի երկրներում, ինչպես Թուրքիան, Պարսկաստանը, Աֆղանստանը, որտեղ չկա կամ համարյա չկա ագրարային-գյուղացիական հզոր հեղափոխություն», որ այն «ազգային առևտրական բուրժուազիայի վերնախավային հեղափոխություն է, որ ծագել է օտարերկրյա իմպերիալիստների դեմ մղած պայքարում և իր հետագա զարգացմամբ, ըստ էության, ուղղված է գյուղացիների ու բանվորների դեմ, ագրարային հեղափոխության բուն իսկ հնարավորությունների դեմ»[1]։

Թուրք առևտրական բուրժուազիան իբրև շարժման ղեկավար առաջ քաշեց Մուստաֆա Քեմալին, որը նախկինում, դեռ համաշխարհային պատերազմից շատ առաջ, երիտթուրքական ակտիվ գործիչներից էր։ Զինվորական ծառայությունը շարունակելու համար Դամասկոս ուղարկված սուլթանական բանակի երիտասարդ սպա Քեմալը դեռևս 1906 թվականին դարձել էր երիտթուրքական մի ընդհատակյա խմբակի ղեկավար, որի մեջ մտնում էին այդ քաղաքում տեղաբաշխված զինվորական միավորումների սպաներ[2]։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Քեմալը մի շարք խոշոր զորամիավորումների հրամանատար էր և մեծ հռչակ էր վաստակել Դարդանելի պաշտպանության, կովկասյան ճակատում ռուսական զորքերի դեմ մղած մարտերում։

Շուտով դեպքերը ցույց տվեցին, որ քեմալական շարժումը շատ ավելի աջ է, քան կարծում էին նրա դեռևս խանձարուրի մեջ գտնվելու օրերին։

[1] **Ի. Վ. Ստալին,** *Երկեր, հ. 9, էջ 285։*

[2] *Տե՛ս* **А. Ф. Миллер,** Формирование политических взглядов Кемаля Ататюрка. «Народы Азии и Африки», 1963, № 5, *էջ* 71:

Սովետական թուրքագետ Ե. Սարգսյանը իրավացիորեն քննադատական խոսք է ասում այն հետազոտողներին, որոնք հանդես չեն բերում պատշաճ դասակարգային մոտեցում քեմալական շարժումը գնահատելիս, հաճախ անզուսպ հիացմունքով են արտահայտվում Քեմալի և քեմալականների մասին, մոռանալով նրանց հակակոմունիստական, բուրժուակադետական, շովինիստական էությունը։ Մանավանդ գերագնահատվում է քեմալականների դերը Անտանտի ուժերի դեմ թուրք ժողովրդի տարած հաղթանակի գործում, այն դիտվում է իբրև քեմալականների (այլ ոչ թե թուրք հասարակ ժողովրդի) հերոսության արդյունք։ Միաժամանակ հաճախ մոռացության է տրվում այն իրողությունը, որ նույնիսկ Թուրքիայի համար դժվարին օրերին քեմալականները պատրաստ էին օգնության ձեռք մեկնելու Անտանտի ուժերին, նրանց հետ համատեղ ռազմական գործողություններ սկսելու Սովետական Ռուսաստանի դեմ[1]։ Էլ ավելի հաճախ մոռացության է տրվում այն, թե գրավված վայրերի խաղաղ բնակչության նկատմամբ քեմալականներն ինչպիսի ոճրագործություններ էին կատարում։

Իշխանության գլուխ անցած քեմալական բուրժուակադետական վերնախավը հատկապես սարսափում էր բուն Թուրքիայի ժողովրդական մասսաների հնարավոր հեղափոխական ելույթներից։ Դա պատահական չէր. այն պայմանավորված էր քեմալական շարժման և քեմալական պետության դասակարգային բնույթով։ Քեմալականները փակեցին Էսկիշեհիրում լույս տեսնող «Յենի դունյա» թերթը, որտեղ հոդվածներ էին երևացել ագրարային հեղափոխություն անելու պահանջով։ Կանոնավոր բանակ ստեղծելու պատճառաբանությամբ ջախջախվեցին Արևմտյան Անատոլիայում գործող գյուղացիական-պարտիզանական ջոկատները, լուծարքի ենթարկվեց գյուղացիական «Յեշիլ օրդու» («Կանաչ բանակ») կազմակերպությունը, ձերբակալվեցին նրա ղեկավարները[2]։ Երկրի տարբեր վայրերում դաժանորեն ճնշվեցին բանվորական ելույթները և հակաֆեոդալական գյուղացիական հուզումները։ Ինքը՝ Մուստաֆա Քեմալն այդ առթիվ գրել է. «Ներքին ապստամբությունները ճնշելու համար ռազմաճակատից որոշ զորամասեր հանելը ավելի կարևոր և անհրաժեշտ միջոցառում էր, քան դրանք հունական զորքերի դեմ օգտագործելը, չնայած այս վերջինը նույնպես մեծ կարևորություն ուներ»[1]։

Բանվորների և գյուղացիների դեմ իրենց պայքարը քեմալականներն արդարացնում էին դեմագոգիկ հայտարարություններով։ Ասում էին, թե Թուրքիայում դասակարգեր չկան, հետևապես չկա նաև դասակարգային պայքար։ «Չի կարելի տարբեր մասնագիտության անձանց բաժանել դասակարգերի. նրանք բոլորն էլ, ամբողջությամբ վերցրած, կազմում են ժողովուրդ»[2],— ասված է քեմալականների պաշտոնական փաստաթղթերից մեկում։ Հետևությունն այն է, որ միասնական ժողովրդին դասակարգերի բաժանող կոմունիստական գաղափարախոսությունը իբր խորթ է թուրք ժողովրդին, որ Թուրքիայում դասակարգային պայքարի ամեն մի արտահայտություն պետք է խեղդել ամենայն անողոքությամբ։ Պատահական չէ, որ «... քեմալականների կառավարությունը բանվորների ու գյուղացիների դեմ պայքարող կառավարություն է, մի կառավարություն, որտեղ կոմունիստները տեղ չունեն և չեն կարող ունենալ»[3],— նշել է Ի. Վ. Ստալինը։

Մերկացնելով քեմալականների հակաժողովրդական քաղաքականությունը, թուրք կոմունիստ Ս. Ուստյունգելը գրում է. «Ժողովրդի նկատմամբ բռնության գազանային քաղաքականությունը շարունակվում է Թուրքիայում արդեն հարյուրավոր տարիներ։ Քեմալականները, վերցնելով իշխանությունը, այդ բանում գերազանցեցին նույնիսկ արյունոտ սուլթաններին»[4]։

Քեմալական շարժումը դեռ իր արյունոտ խանձարուրի մեջ էր, սակայն արդեն պարզորոշ երևում էր, որ նրա բուրժուակադետական ղեկավարությունը նոր աղետներ է բերելու երկրի ոչ թուրք ժողովուրդներին։ Լինելով բուրժուական կատաղի նացիոնալիստներ, քեմալականները հենց սկզբից ոտնահարեցին հույ-

---

[1] Տե՛ս **Е. К. Саркисян,** Положение трудящихся масс в современной Турции. Изд-во АН Арм. ССР, Ереван, 1955, էջ 14։

[2] Տե՛ս **Аб. Алимов,** Турция. В книге «Очерки по истории Востока в эпоху империализма», էջ 71—73։

[1] **М. Кемаль,** Путь новой Турции, т. III, М., 1932, с. 102.

[2] Մեջբերված է **Е. К. Саркисян,** Положение трудящихся масс в современной Турции, с. 42.

[3] **Ի. Վ. Ստալին,** Երկեր, հ. 9, էջ 328։

[4] **С. Устюнгель,** В тюрьме и на «воле». Перевод с турецкого. Москва, 1952, с. 80.

ների, արաբների, հայերի, լազերի, քրդերի մարդկային տարրական իրավունքները, նրանց ազատագրական ձգտումները։ «Թուրքական ասիմիլյատորները,— գրել է Ի. Ստալինը,— բոլոր ասիմիլյատորներից ամենադաժանները, հարյուրավոր տարիներ խոշտանգում և խեղդում էին բալկանյան ազգերին... պարսկական ու թուրքական ասիմիլյատորները հարյուրավոր տարիներ ծվատում, խոշտանգում ու բնաջնջում էին հայ և վրացի ազգերին»[1]։ Քեմալականները ամբողջովին հավատարիմ մնացին թուրքական պատմության արյունոտ ավանդույթներին։ Դեռևս շարժման ձևավորման ժամանակ Մուստաֆա Քեմալը, թուրք ազգը առանձնացնելով երկրի մյուս ազգերից, գրում էր, թե «թուրքը օժտված է մեծ և բարձր հատկություններով»[2]։

Սարսափ և ատելություն տածելով ժողովրդական մասսաների դասակարգային ինքնագիտակցության աճի, նրա դասակարգային պայքարի հանդեպ, «Նոր Թուրքիայի» կառավարողներն ամեն կերպ փորձեցին արգելել բոլշևիկյան գաղափարների ներթափանցումը Թուրքիա։

Թուրքական առաջին կոմունիստական կազմակերպությունները, ինչպես վերևում տեսանք, ձևավորվեցին դեռևս 1918 թվականին՝ Սովետական Ռուսաստանի տերիտորիայում գտնվող թուրք ռազմագերիների շրջանում։ 1920 թվականի կեսերին կոմունիստական խմբեր հանդես եկան Անատոլիայի և Թրակիայի զանազան շրջաններում։ Անտանտի դեմ մղած պայքարում աչակցելով մանր և միջին բուրժուազիային, թուրք կոմունիստները նաև խնդիր ունեին իրենց դրոշի ներքո համախմբելու նվիրված աշխատողների ու մարտիկների աննկուն կադրերի, ստեղծելու բանվորագյուղացիական աշխատավոր զանգվածների՝ բուրժուազիայից անկախ գործող առանձին քաղաքական կազմակերպություն, որն ի վիճակի լիներ ապահովելու իր գոյությունը որպես անկախ մի կուսակցություն, պաշտպանելու աշխատավոր զանգվածների շահերը III Ինտերնացիոնալի դրոշով։

1920 թվականի սեպտեմբերին Բաքվում հրավիրվեց թուրքական կոմունիստական կազմակերպությունների I համագումարը, որը հռչակեց Թուրքիայի կոմունիստական կուսակցության ստեղծումը։ Համագումարը քննարկեց և ընդունեց կուսակցության ծրագիրը և կանոնադրությունը, ընտրեց Կենտրոնական կոմիտե՝ Մուստաֆա Սուբհիի գլխավորությամբ, վերստուգիչ հանձնաժողով, քարտուղարություն, Կենտկոմի արտասահմանյան բյուրո՝ Կոմունիստական ինտերնացիոնալի հետ կապ պահպանելու համար։ Կոմկուսի ծրագրում ձևակերպվեցին Թուրքիայի բանվոր դասակարգի, աշխատավոր մասսաների քաղաքական և սոցիալ-տնտեսական պայքարի խնդիրները։

Դեռ նախքան համագումար հրավիրելը և հատկապես դրանից հետո Թուրքիայի կոմկուսի ղեկավար խումբը Մուստաֆա Սուբհիի, Իզմայիլ Հաքքիի և ուրիշ ընկերների գլխավորությամբ եռանդուն գործունեություն էր ծավալել սոցիալիստական բովանդակությամբ թուրքերեն գրականություն հրատարակելու և տարածելու ուղղությամբ։ Այդ խմբի ջանքերով թուրքերեն թարգմանվեցին և հրատարակվեցին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», Լենինի «Թեզիսները բուրժուական դեմոկրատիայի և պրոլետարական դիկտատուրայի մասին», Վ. Ի. Լենինի կենսագրությունը, «Կոմունիզմի այբուբենը», «Ի՞նչ է բոլշևիզմը», «Բոլշևիկ կոմունիստների ծրագիրը», «Ի՞նչ է սովետական իշխանությունը», «Աշխատանքը և կապիտալը» գրքույկները, ՌԿ(բ)Կ ծրագիրը, թուրքական կոմունիստական կուսակցության ծրագիրը, ՌՍՖՍՀ սահմանադրությունը։ Այդ հրատարակությունները, ինչպես նաև Բաքվում լույս տեսնող թուրք կոմունիստների օրգան «Յենի դունյա» շաբաթաթերթը տարածվում էին Թուրքիայում։ Մուստաֆա Սուբհիի խումբն իր համախոհների միջոցով ղեկավարում էր կոմունիստական բջիջները Տրապիզոնում, Սամսունում, Անկարայում, Կոնյայում, Ադանայում, Զմյուռնիայում։ Կոմունիստական այդ բջիջներն ընդհատակյա աշխատանք էին տանում Անատոլիայում, որի մեջ ներգրավվում էին սովետական Ռուսաստանից վերադարձած թուրք նախկին ռազմագերիները։

Բանվոր դասակարգի կուսակցության առաջացումը, նրա ազդեցության ուժեղացումը լուրջ անհանգստություն և վախ առաջացրեց Թուրքիայի կառավարող շրջաններում։ Քեմալականները սկսեցին ամեն տեսակ խոչընդոտներ հարուցել արտակարգ դրժվարին պայմաններում գործող կոմունիստական կուսակցության

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 11, էջ 395։

[2] Мустафа Кемаль, Путь Новой Турции, т. I, с. 15.

առջև։ Իշխանությունները ծայրահեղ կասկածամտությամբ էին վերաբերվում Թուրք կոմունիստների ազդեցության տակ գտնվող Սովետական Ռուսաստանից վերադարձած նախկին ռազմագերիների նկատմամբ, նրանց պահում հսկողության տակ, հետապնդում, ձերբակալում։

Անլեգալ կոմունիստական կուսակցության աշխատանքը Թուրքիայում դեմ էր առնում նաև այլ կարգի մեծ դժվարությունների ու խոչընդոտների։ Այսպես, նույնիսկ առավել արդյունաբերական շրջանների փոքրաթիվ Թուրք բանվորների մեծ մասը, ինչպես և միլիոնավոր ծեծված ու խավար գյուղացիները չէին գիտակցում իրենց դասակարգային շահերը և չէին կարողանում ճիշտ կողմնորոշվել, թե քաղաքական որ ուժերն են իրենց շահերի արտահայտիչը։ Բնազդաբար համակրանք տածելով դեպի կոմունիզմը, նրանք, սակայն, հեշտությամբ ընկնում էին ամեն տեսակ ինքնակոչների, երեսպաշտների, գառան մորթի հագած իսկական գայլերի ծուղակը[2]։

Աշխատավորներին նորաստեղծ կոմունիստական կուսակցությունից կտրելու և կոմկուսի միասնությունը ջլատելու համար քեմալականները ռեպրեսիվ միջոցներից բացի դիմեցին նաև խորամանկ դիվային քայլի։ Ներքին գործերի մինիստրության հատուկ շրջաբերականով և կառավարությանը մոտ կանգնած ու իրենց կոմունիստներ հայտարարած պանթուրքականների և պանիսլամականների խմբի ջանքերով 1920 թվականին Անկարայում ստեղծվեց կառավարական Թուրքական «կոմունիստական կուսակցություն», այսինքն՝ կեղծ կոմունիստական կուսակցություն՝ ի հակակշիռ Թուրքիայի մարքսիստական-լենինյան կոմունիստական կուսակցության։ Անկարայում իշխանությունների աջակցությամբ ստեղծվեց «կոմկուսի» Կենտրոնական կոմիտե, որի մեջ մտան կառավարության կողմից նախապես երաշխավորված անձինք։ Պաշտոնական կոմկուսի գլուխ կանգնեցին կատաղի պանթուրքականներ, «Միություն և առաջադիմություն» նախկին կուսակցության ակտիվ գործիչ, համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայի պարենավորման մինիստրի օգնական Կարա Ալի Էսհան բեգը, նախկին երիտթուրքեր Մահմուդ Էսադը, Յունուս Նադիր բեյը և ուրիշներ։ Վերջինս նաև կեղծ կոմկուսի տպագիր օրգան «Յենի գուն» թերթի գլխավոր խմբագիրն էր[2] և տպարանի տնօրենը։

Ինչպիսի՞ հայացքներով էր առաջնորդվում պաշտոնական Թուրքական կոմունիստական կուսակցությունը։ Ահա թե ինչպիսի։

Կուսակցության պաշտոնական փաստաթղթերից մեկում ասված էր. «Թուրք ժողովուրդը կրոնին նվիրված լինելու պատմական պատճառներով տվյալ պահին չի կարող ամբողջությամբ ընդունել կոմունիստական ծրագիրը. նրան պետք է այդ բանին մղել երկար ժամանակ ու համառորեն... Իսկ ներկա պահին կոմունիստական գաղափարների պրոպագանդան ոչ միայն վնասակար, այլև կործանարար է երկրի համար։ Երբ զինվորն իմանա, որ չպետք է հայրենիք լինի, նա չի գնա պաշտպանելու այն. լսելով այն մասին, որ ազգերի միջև չպետք է թշնամանք լինի, նա չի գնա կռվելու հույների դեմ. լսելով հավասարության մասին՝ կդադարի ղեկավարությանը հնազանդվելուց։ Բացի այդ, մեր կուսակցական գործիչները ծանոթ չլինելով սովետական Ռուսաստանի պետական օրգանիզմին, ի վիճակի չեն լինի որևէ դրական բան ստեղծելու, միայն կքանդեն տնտեսական կյանքի հին հիմքերը և երկիրը կհասցնեն կործանման։ Ամենից առաջ անհրաժեշտ է լավ ծանոթանալ սովետական Ռուսաստանի, նրա տնտեսական պլանների, իրավակարգի հետ... Ինչ վերաբերում է ներկա պահին, ապա երկրի շահերից ելնելով մենք պետք է հակազդենք բոլոր այն ագիտատորներին, պրոպագանդիստներին, որոնք հանդես են գալիս իրենց նախաձեռնությամբ, առանց մեր ղեկավար մարմինների գիտության։ Բոլշևիզմն իրենց երկրում արմատավորել կարող են միայն իրենք՝ Թուրքերը, ընդ որում բոլշևիզմը երկրում կարմատավորվի վերևից»[3]։

Իր կոչերից մեկում պաշտոնական Թուրքական կոմունիստական կուսակցությունը հանդիսավորապես հայտարարելով, թե «Թուրքական կոմունիստական կազմակերպությունը Ալլահի օգ-

---

[1] Տե՛ս **А. Ф. Миллер,** Краткая история Турции, էջ 180:

[2] Տե՛ս **Мих. Павлович (М. Вельтман),** Революционная Турция. Государственное издательство, Москва, 1921, էջ 110—111:

[1] Տե՛ս **Мих. Павлович (М. Вельтман),** Революционная Турция, էջ 113, 114, 116:

[2] Տե՛ս **Д. С. Завриев,** К новейшей истории Северо-Восточных вилаетов Турции, Тбилиси, 1947, էջ 130:

[3] **Мих. Павлович.** Революционная Турция, с. 111.

նությամբ վերջնականապես կարգավորված է», այնուհետև զարգացնում էր հետևյալ թեզերը. «Մենք մերժում ենք այն կարծիքը, ըստ որի մարդկային հասարակության մեջ կոմունիստական հիմունքներ հաստատելու համար անհրաժեշտ է դիմել արյունալի հեղափոխությունների և դրանց բնական ուղեկիցներին՝ չարաշահումների ու ծայրահեղությունների։ Առանց բացառության ամբողջ մարդկության համար բարձր իդեալ իրականացնելու, երջանկություն, հանգստություն և երանություն ապահովելու համար չի կարելի դիմել այնպիսի միջոցների, որոնք արմատապես հակադրված են առաջադրված նպատակին։ Այն հեղափոխությունները, որոնք ծագել են կոմունիզմ իրականացնող երկրներում, այդ երկրների սոցիալական կյանքի պայմանների ծնունդ են միայն» և չեն կարող կիրառվել ուրիշ երկրներում[1]։ Նույն փաստաթղթում կեղծ կոմկուսակցությունը ազդարարում էր, թե ինքը կողմնակից է խաղաղ հեղաշրջման, որն առաջադիմական երևույթ է, իսկ ինչ վերաբերում է հեղափոխությանը, ապա այն «դեպի առաջադիմություն տանող ամենավերջին և արտակարգ միջոցն է»[2]։

Թուրքական կեղծ կոմունիստական կուսակցության գաղափարական ու քաղաքական սկզբունքները ցայտուն են արտահայտված նրա ծրագրում, որը պանթուրքական և պանիսլամական հայացքների յուրատեսակ խառնագումար է։ Ծրագրի նախագիծը կազմել էր Ալի Էսհան բեգը, որին «Յենի գուն» թերթն անվանում էր «Թուրքական Կարլ Մարքս»։ «Ալի Էսհան բեգը,— գրում էր թերթը,— Թուրքիայի պատմության հետ այն է արել, ինչ Կարլ Մարքսն արել է աշխարհի պատմության հետ։ Այն նույն ակնոցները, որոնց միջոցով Մարքսը հետազոտել է աշխարհի պատմությունը, Ալի Էսհան բեգը օգտագործեց Թուրքիայի պատմությունը հետազոտելու և ուսումնասիրելու համար։ Հետազոտելով պատմությունը, Մարքսը ցույց տվեց մարդկության ապագան, Ալի Էսհան բեգը ուսումնասիրելով օսմանյան պատմությունը, ջանաց բացահայտել Անատոլիայի ճակատագիրը և ապագան»։ Թերթը նշում էր, որ Ալի Էսհան բեգը «ներանցից չէ, որոնք հավատում են ամբողջ աշխարհում կոմունիզմի հաղթանակին, թեև նա միաժամանակ վճռականապես չի պնդում հակառակը»[1]։

Անկարայում քեմալականների կողմից ստեղծված կեղծ կոմունիստական կուսակցության իսկական բնույթն ըմբռնելու համար դիմենք «Յենի գուն» թերթում 1920 թվականի հոկտեմբերի 20-ին լույս տեսած «Կանաչ խնձոր» վերնագրով հոդվածին, որի հեղինակը Մահմուդ Էսադն է։ Այս «կոմունիստ»-երիտթուրքը գրում էր. «Մեր դժբախտ երկիրը, որն իր կուրծքը դեմ է տվել բազմապիսի արհավիրքների, այժմ երես առ երես կանգնած է հյուսիսից եկող սարսափելի փոթորկի՝ բոլշևիզմի դեմ։ Մեզանից ոմանց կարծիքին հակառակ ես միանգամայն կտրականապես եմ արտահայտվում կոմունիզմի ռուսական ձևի, այսինքն՝ ռուսական ազգային կոմունիզմի, ավելի ճիշտ՝ բոլշևիզմի դեմ»[2]։ Նշելով, որ «Թուրքիան Ռուսաստան չէ և թուրքերը ռուսներ չեն», հոդվածի հեղինակը պնդում էր, որ բոլշևիզմը զուտ ռուսական երևույթ է և Թուրքիայի համար ոչ պիտանի[3]։ «Մենք մեզանում չենք կարող պատվաստել բոլշևիզմը, որն առաջ է եկել Ռուսաստանի պայմանների և ռուսական ազգի կարիքների թելադրանքով»[4]։ Նա պնդում էր, որ թուրքերը երբեք չպետք է հրաժարվեն ազգայնականությունից և ընկնեն կոմունիստական կոլեկտիվիզմի ծուղակը։ «Որպեսզի կոլեկտիվիզմը օգտակար լինի, այն անպայմանորեն պետք է ձեռք բերի ազգային երանգ։ Թուրքիզմը մշտապես պետք է ունենա ազգային իդեալ, ազգային ինքնագիտակցություն, ուստի բոլոր ծրագրերը պետք է ծառայեն այդ գաղափարի շահերին և ենթակա լինեն դրան։ Անհրաժեշտ է ըստ ամենայնի և ինչպես պետք է ըմբռնել, որ արդի ժամանակաշրջանի կարևորագույն տնտեսական փաստը մրցակցությունն է և գոյության պայքարը»[5]։

Վերհիշենք Գեոքալփի «ոսկե» կամ «կարմիր խնձորը»՝ պանթուրքիզմի խորհրդանիշներից մեկը։ Մահմուդ Էսադի հոդվածի «Կանաչ խնձորը» վերտառությունը պատահական չէր։ Թուրքական կեղծ կոմկուսի ղեկավարներն իրենց կուսակցությունն անվանում էին նաև «կանաչ խնձոր», որը հասունանալով անխու-

---

[1] Տե՛ս **Мих. Павлович**, Революционная Турция, էջ 111։

[2] Նույն տեղը, էջ 112։

[1] **Мих. Павлович**, Революционная Турция с. 113.

[2] Նույն տեղը, էջ 111։

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 111։

[4] Նույն տեղը, էջ 115։

[5] Նույն տեղը, էջ 116։

սափելիորեն դառնալու էր «կարմիր» կամ «ոսկե խնձոր»։ Այլ խոսքով, կեղծ կոմկուսի քաղաքական իդեալը նույնպես պանթուրքիզմն էր։ Այդ բանում համոզվելու համար նորից դիմենք Մահմուդ Էսադի հոդվածին։ «Կոմունիստ»-երիտթուրքը գրում էր. «Կոմունիզմը ոչ թե իդեալ, այլ միջոց է թուրքերի համար։ Իսկ թուրքերի իդեալը թուրքական ազգի միավորումն է՝ ոսկե խնձորը։ ...Ազգային միասնությունը միակ և ամենաթանկ բանն է մարդու համար։ Եվ բոլշևիկները հակառակը չեն պնդում, ընդհակառակն, նրանք այդ ուղղության միանգամայն գիտակից կողմնակիցներ են։ Այլ կերպ չէր էլ կարող լինել։ Թուրքիզմը իսլամի հակառակորդ չէ, ինչպես որ, չգիտես ինչու, կարծում են ոմանք։ Դա դարի անհրաժեշտությունն է, գիտականորեն հիմնավորված անհրաժեշտությունը։ Թուրքերի միասնությունը պետք է գանի ամբողջ պանիսլամական աշխարհի աջակցությունն ու հավանությունը։ Եթե թուրքերի միասնության գաղափարը դատարկ երազանք լիներ, ապա ավելի վատ բախտի կարժանանար պանիսլամիզմը։ ...Մենք ամբողջությամբ հակառակորդներ ենք քաղաքական և ազգային այն միասնության, որ մինչև այժմ գոյություն է ունեցել Եվրոպայում և հանգեցրել է իմպերիալիզմի։ Մենք կամենում ենք թուրքերի սոցիալական և կուլտուրական միասնություն։ ...Մենք ամբողջ թուրքական աշխարհի համար կամենում ենք լեզվի, գրականության և պատմության, դաստիարակության և կոլեկտիվ սիստեմների միասնություն։ Անհրաժեշտ է հասնել այն բանին, որ երկրի վրա գոյություն ունենա կարմիր խնձորը։ Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիայի ազգային կողմը ու ազգային սկզբունքները XIX դարում առաջին պլան մղած իտալացի Մաձինիի արդարացի սկզբունքը կհաղթանակի XX դարում հետևյալ ձևով.— Մենք սպասում ենք, թե երբ կծագի արևը ոսկե լեռների հետևից, որը միակն է, որ կցրի այս մռայլ գիշերները։

Պատմությունը և կյանքը կրկնվում են»[1]։

Այսպիսիք էին թուրքական պաշտոնական կեղծ կոմունիստական կուսակցության կողմից «կանաչ խնձոր» լոզունգով առաջ քաշված ծրագրային դրույթները, այդ կուսակցության քաղաքական-գաղափարական հայացքները։ Ինչպես տեսնում ենք, քեմալական կեղծ կոմունիստները խնդիր էին դրել կոմունիզմի գաղափարն օգտագործել նախկին երիտթուրքական կուսակցության պանթուրքիզմի և պանիսլամիզմի հին իդեալները նոր պայմաններում իրականացնելու համար։ Կոմունիզմի գաղափարները թուրքական կեղծ կոմունիստական կուսակցության ձեռքին քեմալականների իմպերիալիստական բաղձանքները քողարկելու միջոց էին միայն, չնայած այդ կուսակցության պարագլուխները ցուցադրական եռանդով «հարձակումներ էին գործում» եվրոպական իմպերիալիզմի վրա։

Թուրքական կեղծ կոմունիստական կուսակցության գաղափարական-քաղաքական սկզբունքները բացահայտելու նպատակով մենք ստիպված եղանք ծանրանալու խնդրի վրա, անելու նաև երկարաշունչ մեջբերումներ։ Դա, հավանաբար, ավելորդ չէ, մանավանդ եթե նկատի ունենանք, որ այդ կուսակցությունը, ինչպես կտեսնենք ստորև, շարաղետ դեր կատարեց 1920 թվականի թուրք-հայկական պատերազմական ընդհարման ժամանակ։

Կեղծ կոմկուսի միջոցով քեմալականները քայքայում էին Թուրքիայի նորաստեղծ մարքս-լենինյան կոմունիստական կուսակցության բջիջները, հետապնդում դրանցում գրանցված անձանց, զրպարտում Մուստաֆա Սուբհիին և նրա զինակիցներին, ամեն ինչ անում, որպեսզի աշխատավոր մասսաների մոտ վարկաբեկեն բոլշևիզմի գաղափարները, բանվորական շարժումը դուրս բերեն այդ գաղափարների ազդեցությունից, շարժումը լիովին ենթարկեն իրենց վերահսկողությանը։

Ընդհանուր գծերով այսպիսին էր իշխանության գլուխ անցած թուրքական առևտրական բուրժուազիայի և նրա շահերի արտահայտիչ քեմալականության ներքին քաղաքականությունը։

Քեմալականներն հենց սկզբից կրոնական գունավորում տվեցին թուրք ժողովրդի ազգային-ազատագրական շարժմանը, վերակենդանացրին ու հովանավորեցին պանիսլամիզմը, այն դարձնելով իրենց պայքարի դրոշը։

1919 թվականին մահմեդական աշխարհում սկսեց ծավալվել քեմալականությունը պաշտպանող լայն շարժում։ Թուրքական էմիսարները շրջում էին մուսուլմանական երկրներում, ամենուրեք գրգռում կրոնական մոլեռանդություն։ Այդ տեսակետից նրանք հատկապես մեծ հաջողության հասան Հնդկաստանում։ 1919 թվականի սեպտեմբերին Լուկնովում գումարվեց Հնդկաստանի մուսուլմանների կոնգրես, որը համերաշխություն հայտ-

[1] Мих. Павлович, Революционная Турция, с. 116.

նեց քեմալականների պայքարին։ Նույն թվականի նոյեմբերին Դելիում տեղի ունեցավ մուսուլմանների համահնդկական նոր կոնգրես, որտեղ նախագահում էր Մ. Գանդին՝ իբրև Հնդկաստանի մուսուլմանների հետ ինդուսների համերաշխության արտահայտություն[2]։ Երրորդ կոնգրեսը գումարվեց մեկ ամիս հետո՝ 1919 թվականի դեկտեմբերին, Ամրիտսարում։ Այստեղ ազդարարվեց, որ մահմեդական Հնդկաստանը պայքարելու է «իր հավատքի և իր կրոնական ազատության նկատմամբ հարգանք տածելու համար»[3]։

Ամրիտսարի կոնգրեսի որոշման համաձայն Հնդկաստանի մուսուլմանական առաջնորդներ Մուհամմեդ Ալու, Սիյուդ Խոսանի, Սաիդ Սուլեյման Նադվիների և Աբդուլ Քասեմի գլխավորությամբ պատվիրակություններ կազմվեցին, որոնք 1920 թվականի հունվարին մեկնեցին եվրոպական մայրաքաղաքներ՝ Հռոմ, Փարիզ, Լոնդոն, ինչպես նաև Ամերիկա և Թուրքիա։ Այդ պատվիրակությունները վեց ամիս շարունակ Արևմուտքի երկրների կառավարությունների հետ բանակցություններ էին վարում, որպեսզի նրանց համոզեն կանգնելու մուսուլմանական աշխարհին բավարարող դիրքերի վրա, այսինքն՝ պաշտպանելու խալիֆաթը և Թուրքիան[4]։

Թուրքական ազգային շարժման պաշտպանության համար մեծ ջանքեր էին գործադրում նաև Սովետական Թուրքեստանում տարագրության մեջ գտնվող հնդկական մուսուլմանական գործիչները Բարակատուլլայի, Աշարիայի և Աբդուր Ռաբի գլխավորությամբ[5]։ 1919—1920 թվականներին Հնդկաստանից Աֆղանստան էին եկել մեծ թվով ազգայնականորեն տրամադրված մուսուլման երիտասարդներ (մուհաջիրներ՝ հավատի մարտիկներ)[6]։ Սրանք նպատակ էին դրել անցնել Թուրքիա և մասնակցել միլլիական շարժմանը՝ սուլթան-խալիֆի առանձնաշնորհումները պահպանելու լոզունգով։ Աֆղանստանում հավաքված այդ խալիֆաթականներին ակտիվորեն աջակցում էր աֆղանական էմիրը։ Մուհաջիրներին ուղղված նրա ուղերձը, որտեղ կոչ էր արվում անհապաղ օգնության հասնել Թուրքիային, պարտադիր ընթերցվում էր մուսուլմանական երիտասարդների միտինգներում և ժողովներում։ Սակայն հանդիպելով մեծ դժվարությունների, մուհաջիրների մեծ մասը վերադարձավ Հնդկաստան և միայն փոքր մասին հաջողվեց տարբեր ճանապարհներով թափանցել Միջին Ասիա։ 1920 թվականի ընթացքում աֆղանա-սովետական սահմանն անցավ մուհաջիրների երեք խումբ՝ ընդհանուր թվով մոտ 200 հոգի։ Նրանց կեսը շուտով վերադարձավ Հնդկաստան, 30 հոգի մնաց Տաշքենդում, որոնց միավորելով՝ Աշարիան և Աբդուր Ռաբին հիմք դրեցին Հնդկական հեղափոխական ասոցիացիայի Տաշքենդի բաժանմունքին։ Մյուսները մեկնեցին Թուրքիա՝ օգնության հասնելով քեմալականներին[1]։

Քեմալականների դրդմամբ պանիսլամականները մուսուլմանական հավատքի պաշտպանության համար բողոք էին բարձրացրել նաև Եգիպտոսում, Պարսկաստանում, Աֆղանստանում, Կովկասյան հանրապետություններում, Միջին Ասիայում։ Թուրքիայի պաշտպանության օգտին պանիսլամական բողոքի ձայներ էին լսվում նույնիսկ հյուսիսաֆրիկյան գաղութներից[2]։

Քեմալականների արտաքին քաղաքականությունը նույնքան ռեակցիոն էր, որքան ներքինը։ Այն ըստ էության երիտթուրքերի արտաքին քաղաքականության մի տարբերակն էր, խարբսխված թուրքական իմպերիալիզմին բնորոշ երկու ռեակցիոն գաղափարախոսությունների՝ կրոնական պանիսլամիզմի և քաղաքական պանթուրքիզմի յուրահատուկ զուգակցման վրա։

Արտաքին քաղաքականության բնագավառում այլևս հնարավոր չէր փարվել Գերմանիային, բախտը կապել նրա հետ։ Դեպի Գերմանիա միակողմանի կողմնորոշումն իրեն չէր արդարացրել։ Ուստի իթթիհադականների գերմանասիրությանը հաջորդեց

---

[1] Տե՛ս Ж. Кайзер, Европа и новая Турция, էջ 47։

[2] Տե՛ս Д. Смирнов и А. Сулейман, Индия. В книге «Очерки по истории Востока в эпоху империализма», ОГИЗ Соцэкгиз, М.—Л., 1934, էջ 197։

[3] Ж. Кайзер, Европа и новая Турция, с. 47.

[4] Տե՛ս նույն տեղը։

[5] Տե՛ս К. А. Антонова, Г. М. Бонгард-Левин, Г. Г. Котовский. История Индии, Краткий очерк, изд-во «Мысль», Москва, 1973, էջ 404։

[6] Ջանազան աղբյուրների հաղորդմամբ այդ թիվը տատանվում է 30—50 հազարի միջև։

[1] Տե՛ս К. А. Антонова, Г. М. Бонгард-Левин, Г. Г. Котовский, История Индии. Краткий очерк. М., 1973, էջ 404։

[2] Տե՛ս Ж. Кайзер, Европа и новая Турция, էջ 49։

միլլիականների պատերազմությունը։ Սրանց հաջողվեց իթթիհադի քաղաքական հնարանքներին միացնել Թուրքիայի ավանդական դիվանագիտությունը։

Եվ ահա Թուրքիան կարողացավ առավելագույն չափով օգտագործել այն հակասությունները, որոնք կային մի կողմից Սովետական Ռուսաստանի և Անտանտի երկրների, մյուս կողմից՝ հենց արևմտյան տերությունների միջև։

Պատերազմում Թուրքիայի պարտությունը բնավ չէր նշանակել թուրքական ազգայնամոլության պարտություն։ Մնացել էր թուրք ցեղամոլությունը, պանթուրքական մտայնությունը, մնացել էին զինվորական և մտավորական կադրերը, ազգայնամոլ երիտասարդությունը։

Միլլիական շարժումն, անկասկած, թուրքերի ըմբոստացումն էր եոյակ համաձայնության՝ Թուրքիան անդամահատելու ծրագրի դեմ։ Բայց միլլիականությունն իթթիհադականության լոկ կերպարանափոխումը չէր նոր անվան տակ։ Այն իթթիհադականության ամենաշովինիստական տարրերի վերակազմությունն էր՝ նոր ծրագրով ու կարգախոսով։ Միլլիականությունը օսմանցիությունից և իթթիհադից վերցրեց նրանց ծայրահեղ ցեղապաշտական կողմերը և ստեղծված նոր պայմաններում կարողացավ առավել ճարպկությամբ ծառայեցնել թուրքերի զավթողական նպատակներին։

Սկզբնական շրջանում քեմալական շարժումը տարերային վիճակում էր, բայց 1919 թվականի կեսերից այն հանդես եկավ որպես կազմակերպված, իր քաղաքական ուժը խորապես գիտակցող շարժում՝ որոշակի ու ամբողջական ծրագրով։ Իրենց գաղափարի մեջ ունենալով Օսմանյան կայսրության նախկին փառքի ու մեծության վերականգնման իթթիհադական, պանիսլամական ու պանթուրքական տենչերն ու ձգտումները, քեմալականները, սակայն, ըստ ամենայնի հաշվի էին առնում տիրող միջազգային քաղաքական դրությունը, նախորդ երիտթուրքական իշխանության սայթաքումները և դասերը։ Ակամայից հաշտվելով տեղի ունեցած մի շարք անդարձ կորուստների հետ, մյուս կողմից քեմալական շարժումն ամեն գնով ձգտում էր փրկել այն, ինչ դեռ հնարավոր էր փրկել։

Միջագետքը, Սիրիան, Պաղեստինը, Արաբիան և մասամբ նաև Թրակիան արդեն կորած էին Թուրքիայի համար։ Օրվա խնդիրն էր՝ դեռ աննվաճ հողամասերից ստեղծել միատարր, ուժեղ և միակամ ազգային ամբողջություն։ Այդ նպատակին հասնելու համար ազգային շարժումը ձգտում էր. 1) վերադարձնել Հունաստանի տիրապետության տակ գտնվող փոքրասիական թերակղզու ամբողջ արևմտյան մասը՝ Իզմիրի հետ միասին, 2) վերադարձնել Պոլիսն ու նեղուցները դաշնակից զորքերից, 3) մի նեղ հողաշերտ ձեռք բերել Եվրոպական Թուրքիայում՝ Պոլսի անվտանգությունն ապահովելու համար, 4) լիակատար անկախություն ստացած ազգային սահմաններում գանց առնել բոլոր ազգային փոքրամասնությունների շահերն ու պահանջները և ստեղծել «նոր Թուրքիա՝ թուրքերի համար»։

Քեմալական շարժման մեջ առաջ էին եկել երկու հոսանքներ՝ «արևմտականների» և «արևելյանների», որոնք միմյանց հետ բուռն բախումների մեջ էին։ «Արևմտականները» գտնում էին, որ Թուրքիան կարող է փրկվել արևմտյան տերությունների հետ համաձայնության գալու միջոցով միայն, որ բդկված երկիրը կարելի է վերականգնել Արևմուտքի տնտեսական-ֆինանսական օգնությամբ, որ Պոլիսն ու նեղուցները կարելի է փրկել բանակցությունների միջոցով, հակառակ դեպքում պետք է ձեռք քաշել Եվրոպական Թուրքիայից։ Առարկելով «արևմտականներին» և չընդունելով նրանց փաստարկումները, «արևելյանները» գտնում էին, որ Արևմուտքը միշտ չարիք է եղել Թուրքերի համար, ուստի այժմ էլ նրանից փրկություն սպասելու ոչ մի հիմք չկա։ Նրանք գտնում էին, որ հենվելով Պարսկաստանի, Աֆղանստանի, արաբների, Հնդիկների և, հատկապես, Ռուսաստանի մահմեդականության վրա, անհրաժեշտ է անդիշում կռիվ մղել Պոլսի ու արևմտյան ուժերի դեմ՝ ազգային շահերի պաշտպանության համար։

Ինչպես հայտնի է, միլլիական շարժման մեջ լիակատար հաղթանակ տարավ այս վերջին դիծը։

Երիտթուրքերի ցարդարարական քաղաքականությունը քեմալականներն անշեղորեն շարունակեցին հատկապես հայ ժողովրդի նկատմամբ։ Հայկական հարցում Քեմալը ամբողջովին հարազատ մնաց իր երիտթուրքական անցյալին, դեպի հայ ժողովուրդը թուրք շովինիստների վերաբերմունքին։

Թուրքական քաղաքական գործիչներից շատերն իրենք հոստովանում էին, որ Թուրքիան ավելի հեշտությամբ համակերպվեց արաբական ոչ տարածքի կորստյան հետ, քան այն մտքի հետ, թե իր արևելյան նահանգներն անջատվելու են և ստեղծվելու է

միացյալ ու անկախ Հայաստան։ Թուրքերը չէին կարողանում հանդուրժել, որ Թուրանականության երազի իրականացման ճանապարհին կանգնելու է Հայաստանը։ Ամեն գնով արգելել Կովկասյան Հայաստանի ամրապնդմանը, Արևմտյան Հայաստանից տերիտորիալ ոչ մի վիճում չանել հայությանը, ավելին, շարունակել ջանքերը հայ ժողովրդին ասպարեզից վերջնականապես վերացնելու համար,— այս էր գրված միլլիականության քաղաքականության դրոշին։

Դեռ նոր էր սկսվել միլլիական շարժումը (1919 թ. գարուն), երբ նրա ղեկավարներն ազդարարեցին, թե «Արևելյան Անատոլիայի բնակչությունը պատրաստ է մինչև մահ դիմադրելու հայ պետությանը»։ Այդ նույն ժամանակ կազմակերպված «Մյուդաֆաայը միլլիյեն» («Ազգային պաշտպանությունը») իր գոյության հիմնական նպատակը համարեց՝ ամեն գնով արգելակել «արևելյան նահանգների կցումը Հայաստանին»[1]։ Արտաքին-քաղաքական իրենց նպատակները քեմալականներն ի լուր ամենքի հռչակեցին և պաշտոնապես ձևակերպեցին ծրագրային փաստաթղթերի մեջ։

1919 թվականի հուլիսի 10-ից օգոստոսի 6-ը Էրզրումում տեղի ունեցավ քեմալականների հայտնի կոնգրեսը, որտեղ նրանք պաշտոնապես ձևակերպեցին իրենց անզիջում հակահայկական քաղաքականությունը։ Կոնգրեսի փաստաթղթերի ուսումնասիրումը բերում է այն համոզման, որ քեմալականներին իմպերիալիստական տերությունների դեմ պայքարից ոչ պակաս մտահոգում էր «հայերի չար մտադրությունների և բռնությունների» դեմ պայքարի խնդիրը, այսինքն՝ պայքարը հայության արդարացի պահանջների դեմ։

Թե քեմալականները որքան կարևորություն էին տալիս իրենց շարժման այս կողմին, երևում է թեկուզ նրանից, որ կոնգրեսի որոշման հենց առաջին կետում վճռականորեն դրվում էր Անատոլիայի վեց վիլայեթները, այսինքն՝ Արևմտյան Հայաստանը Թուրքիայի կազմի մեջ պահելու խնդիրը։ Այդ վիլայեթներում «հայկական համայնքի ստեղծման» արգելումը Թուրքերի համար հռչակվեց իբրև սրբազան գործ[2]։

[1] Ջաբեվանդ, Ինչ կծրագրեն Թուրքերը՝ միացեալ անկախ Թուրանիա, էջ 163։

[2] Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», էջ 47։

Եթե մյուս խնդիրներում քեմալականները, որպես աստառ շուռ տված երիտթուրքեր, քողարկում էին իրենց գործողությունները, ապա հայ ժողովրդի նկատմամբ ունեցած վերաբերմունքում նրանք դրա կարիքը չէին զգում։

Երիտթուրքերի մի քանի ղեկավարների ցուցադրական դատավարությունից հետո Քեմալը բանտերից ազատ արձակեց հայ ժողովրդի բոլոր դահիճներին։ Ավելին, նա Թուրքիա հրավիրեց արտասահմանյան տարբեր երկրներում ապաստանած երիտթուրքական համարյա բոլոր նշանավոր գործիչներին, որոնք մեղսակից էին հայության բնաջնջմանը։

Թուրքիայի ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ շովինիստական դիրք բռնեց նաև քեմալականների հաջորդ կոնգրեսը, որը տեղի ունեցավ 1919 թվականի սեպտեմբերի 4—11-ը՝ Սրվազում։ Այս կոնգրեսի ընդունած որոշումները թույլ չէին տալիս կասկածել անգամ, որ պայքար մղելով անկախության համար, քեմալականները, սակայն, հարազատ են մնալու երկրի ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ երիտթուրքերի մարդատյաց քաղաքականությանը։ Այս կոնգրեսը նույնպես անցավ հայ ժողովրդի դեմ անզիջում պայքարը շարունակելու լոզունգով։ Հատուկ ընդունված որոշման մեջ քեմալականները ազդարարում էին, որ իրենք վճռական կռիվ են մղելու ամեն մի շարժման դեմ, որն իր առջև նպատակ կդնի ստեղծել անկախ Հայաստան։

Այս կոնգրեսում հիմք դրվեց նաև Թուրք-ադրբեջանական գաղտնի դաշինքին, որը կնքվեց մեկ ամիս հետո՝ 1919 թվականի հոկտեմբերին, Պոլսում։ Դաշնագիրը ստորագրեցին Ադրբեջանի պատվիրակ Քերիմովը և Քեմալի ներկայացուցիչ Ջևադ բեյը։ Այս դաշնագրով Թուրքերն ու ադրբեջանական ազգայնականները պարտավորվում էին. 1. Ամեն գնով օգնել միմյանց պահպանելու համար և՛ Թուրքիայի, և՛ Ադրբեջանի հողային ամբողջականությունը. 2. Ադրբեջանը հանձն էր առնում առանց Թուրքիայի հավանության դաշինք կամ համաձայնություն չկնքել որևէ երկրի հետ։ 3. Թուրքիան պարտավորվում էր ադրբեջանական բանակը մարզել Թուրք սպաների միջոցով։

Սրվազի համաժողովում որոշում ընդունվեց նաև Վրաստանի մասին։ Թուրք և ադրբեջանցի պատվիրակներն այն եզրակացությանն եկան, որ ամեն ինչ պետք է անել, որպեսզի ձախողվի հայ-վրացական հնարավոր մերձեցումը։ Պատահական չէ, որ

համաժողովից անմիջապես հետո թուրքերը բանակցություններ սկսեցին Թիֆլիսի հետ։

Մուստաֆա Քեմալը 1919 թվականի նոյեմբերի 17-ի հեռագրում գրում էր. «Ինչպես հետևում է Սրվազի և Էրզրումի կոնգրեսների որոշումներից, ազգը մի թիզ հող անգամ չի զիջի Հայաստանին...»[1] Խոսքը Կարսի, Արդահանի, Սարիղամիշի, այսինքն՝ Ռուսաստանի նախկին տերիտորիաների մասին էր, որ 1918 թվականին զավթել էին թուրքական զորքերը, իսկ համաշխարհային պատերազմում Թուրքիայի կրած պարտությունից հետո, իբրև բուն հայկական հողեր, անցել էին Հայաստանի հանրապետությանը։

1920 թվականի սկզբին Մուստաֆա Քեմալի գլխավորած ներկայացուցչական կոմիտեի նիստում ընդունվեց հետևյալ որոշումը. «Արևելյան ռազմաճակատում անցկացնել պաշտոնական զորահավաք և սկսել զորքերի կենտրոնացումը՝ Կովկասյան խոչընդոտը թիկունքից վերացնելու համար»[2]։

1920 թվականի հունվարին Կ. Պոլսում գումարվեց համաթուրքական պառլամենտ՝ Թուրքիայի ազգային ժողովը։ Այստեղ քեմալականները մեծամասնություն կազմելով, առաջարկեցին մի բանաձև, որն ընդունվեց որպես օրենք՝ «Թուրքական ազգային ուխտ» անվամբ։ Քաղաքական այդ դավանանքի հիմքում դրվեցին ծրագրային այն դրույթները, որոնք ընդունվել էին Էրզրումի և Սրվազի կոնգրեսներում։ «Ուխտի» մեջ իր մարմնավորումն էր գտել նաև ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ մեծապետական, շովինիստական քաղաքականությունը։ Ազդարարելով թուրք ժողովրդի ազգային անկախությունը, այդ օրենքը միաժամանակ կտրականապես մերժում էր Թուրքիայում բնակվող այլազգի ժողովուրդների իրավունքները, հատկապես նրանց ազգային ինքնորոշման իրավունքը։

Բրիտանական զորքերի կողմից օկուպացված Ստամբուլում 1920-ի ապրիլին շեյխ-ուլ-իսլամը Մուստաֆա Քեմալին և ազգային-ազատագրական շարժումը հայտարարեց օրենքից դուրս։ Սուլթան Մեհմեդ VI-ը հավաքեց զորք, որը հույների հետ միասին պետք է ջախջախեր Անատոլիայի ապստամբներին։ Դրան ի պատասխան հավաքվելով Անկարայի Հաջի Բայրամ մեչեթում, քեմալականները կոչով դիմեցին բոլոր մուսուլմաններին՝ գրավել Ստամբուլը և «խալիֆին ազատագրել գերությունից»։

1920 թվականի ապրիլի 23-ին Անկարայում բացվեց թուրքական նոր պառլամենտ (մեջլիսը), որը ստացավ Թուրքիայի Ազգային մեծ ժողով (Türkiye Büyük Millet Meclisi) անունը։ Մեջլիսի կազմը խիստ ռեակցիոն էր։ Այնտեղ բացառապես ընտրված էին բուրժուական վերնախավերի, մուսուլմանական հոգևորականության և սպայության ներկայացուցիչներ։ Ազգային ժողովը իշխանությունը տվեց թուրքական առևտրաարդյունաբերական բուրժուազիային, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ՝ թուրքական կադետներին։ Ստեղծվեց թուրքական ազգային պետություն, ընտրվեց նոր կառավարություն, որի գլուխ կանգնեց Մուստաֆա Քեմալ փաշան (1934 թվականից ընդունել է Աթաթուրք՝ թուրքերի հայր, ազգանունը)։ Քեմալի կաբինետի անդամների մեծ մասը նախկին երիտթուրքեր էին, ռեակցիոներներ և շովինիստներ։ Բնական է, որ Թուրքիայի Ազգային մեծ ժողովը և քեմալական կառավարությունն իրենց դասակարգային բնույթին համապատասխան պետք է անցկացնեին և անցկացրին հակաժողովրդական քաղաքականություն։

Կովկասում զավթողական քաղաքականությունը հաջողությամբ իրականացնելու համար, հաշվի առնելով Քյազիմ Կարաբեքիր փաշայի կատաղի պանթուրքական հայացքները և ծառայությունները, մասնավորապես 1914—1918 թվականների պատերազմում հայերի նկատմամբ կիրառած գազանային հաշվեհարդարները, Մուստաֆա Քեմալը նրան նշանակեց Արևելյան բանակի հրամանատար։ 1920 թվականի ապրիլին Կարաբեքիրը տեղ հասնելուն պես հեռագրեց Անկարա, Քեմալին. «Մոտակա օրերին ես կկարողանամ տեղեկացնել այն մասին, որ Հայաստանը ջնջված է աշխարհի քարտեզից»[1]։

Թուրքական զավթիչները գործում էին մեծ զգուշությամբ։ Նրանք մտավախություն ունեին, որ թուրք-հայկական ռազմական ընդհարման ժամանակ Սովետական Ռուսաստանի կառավարությունը հաղիվ թե մնա անտարբեր դիտողի դերում։ Ուս-

---

[1] **Мустафа Кемаль**, Путь новой Турции, т. III, с. 313.

[2] Նույն տեղը։

[1] Gemal Kytay, Karabekir Ermanistani nasil yok etti («Ինչպես Կարաբեքիրը ոչնչացրեց Հայաստանը»), Istanbul, 1936, s. 36.

տի ջանում էին ցույց տալ սովետների նկատմամբ իրենց դրական վերաբերմունքը։

1920 թվականի ապրիլի 26-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովն ընդունեց իր առաջին արտաքին-քաղաքական ակտը՝ Վ. Ի. Լենինին ուղղված նամակ-դիմում, որտեղ ասվում էր, որ Թուրքիան ցանկանում է սովետական երկրի հետ լինել բարի դրացի և հաստատել դիվանագիտական հարաբերություններ։ Ազգային ժողովը նաև խնդրում էր Թուրքիային ցույց տալ դրամական և ռազմական օգնություն։ Այդ փաստաթուղթը Մուստաֆա Քեմալի ստորագրությամբ ուղարկվեց ՌՍՖՍՀ կառավարությանը։

Սովետական պետությունը, հավատարիմ իր խաղաղասիրական քաղաքականությանը, հետևողականորեն հանդես էր գալիս բոլոր երկրների հետ խաղաղ գոյակցության լոզունգով, պատրաստակամություն էր հայտնում աջակցելու իմպերիալիզմի դեմ պայքարող ժողովուրդներին։ Ընդառաջ գնալով Թուրքական ազգային շարժման ղեկավարների խնդրանքներին, ՌՍՖՍՀ կառավարությունը իմպերիալիստական զավթիչների դեմ մղվող պայքարում օգնության ձեռք մեկնեց Թուրք ժողովրդին, հրաժարվեց Թուրքիայի հետ ցարական կառավարության կնքած անիրավահավասար բոլոր պայմանագրերից։

Սովետական Ռուսաստանի և Թուրքիայի մերձեցմանը նպաստեց այն, որ երկուսն էլ պայքարում էին Արևմուտքի իմպերիալիստական տերությունների դեմ։ Թուրքիան իր ինքնուրույնությունը պաշտպանելու համար կարիք ուներ դաշնակցի, իսկ Սովետական Ռուսաստանը շահագրգռված էր, որ այդ երկիրը չներգրավվի հակասովետական բլոկների մեջ։

Ողջունելով Սովետական Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար «նոր Թուրքիայի» կառավարողների հանդես բերած նախաձեռնությունը, ՌՍՖՍՀ կառավարությունը, սակայն, չէր կարող ընդունել Ազգային մեծ ժողովի ապրիլի 26-ի նամակում բովանդակած այն առաջարկները, որոնք բացահայտում էին Հայաստանի և Անդրկովկասի նկատմամբ Թուրքական ազգայնամոլների զավթողական նկրտումները։ Նամակի երկրորդ կետում ասված էր.

«Եթե սովետական ուժերը մտադիր են ռազմական գործողություններ սկսել Վրաստանի դեմ կամ դիվանագիտական

ճանապարհով իր ազդեցության միջոցով Վրաստանին հարկադրել մտնել միության մեջ և ձեռնարկել անգլիացիների արտաքսումը Կովկասի տերիտորիայից, Թուրքական կառավարությունն իր վրա է վերցնում ռազմական գործողությունները իմպերիալիստական Հայաստանի դեմ...»[1]

Չնայած այն բանին, որ դաշնակցականների հանցավոր, անհեռատես քաղաքականության հետևանքով Հայաստանը կտրվել էր Սովետական Ռուսաստանից, սովետական կառավարությունը կտրականապես հանդես եկավ ի պաշտպանություն Հայաստանի՝ որպես Թուրքիայի կողմից նախապատրաստվող ագրեսիայի զոհի։

1920 թվականի գարնանը Սովետական Ռուսաստանի կառավարությունը դիմեց Հայաստանի դաշնակցական կառավարությանը՝ բանակցություններ սկսելու և երկու երկրների միջև բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար։ Բայց դաշնակները այլազան պատրվակներով հետաձգում էին իրենց պատասխանը սովետական կառավարությանը։ Վերջապես, 1920 թվականի ապրիլի 29-ին Մոսկվա մեկնեց դաշնակցական կառավարության պատվիրակությունը՝ Լ. Շանթի գլխավորությամբ։ Պատվիրակությունը տեղ հասավ մեծ ուշացումով՝ մայիսի վերջին, բայց դրանից հետո էլ չէր շտապում բանակցություններ սկսելու։ Այնուամենայնիվ հունիսին սովետական կողմին (ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Վ. Չիչերին և նրա տեղակալ Լ. Մ. Կարախան) հաջողվեց բանակցություններ սկսել և շարադրել սովետական կառավարության դիրքը Հայաստանի նկատմամբ։ ՌՍՖՍՀ կառավարությունը ճանաչում էր Հայաստանի անկախությունը, խոստանում տնտեսական լուրջ օգնություն ցույց տալ նրան, առաջարկում նաև իր միջնորդությունը Թուրքիայի հետ Հայաստանի տերիտորիալ-հողային հարցերը արդարացիորեն լուծելու համար։ «Բոլորը գիտեն,— ասում էր Գ. Վ. Չիչերինը,— որ Սովետական Ռուսաստանն ամեն մի փոքր ազգության անշահախնդիր բարեկամն է, որ միայն Սովետական Ռուսաստանում ամեն մի ազգություն կարող է պաշտպանություն և հովանավորություն գտնել ընդդեմ հարձակման, ընդդեմ իր ազգային գոյության սպառնալիքի։ Եվ նույն դերը

[1] «Архив внешней политики (АВП) СССР», ф. 132, оп. 3, п. 2, д. 1, л. 11.

մենք կխաղանք Հայաստանի և Թուրքիայի միջև հենց այնտեղ, որտեղ սերունդների կյանքի ընթացքում տեղի է ունեցել մշտական կոտորած, հենց այնտեղ միայն Սովետական Ռուսաստանը շնորհիվ իր հեղինակության, շնորհիվ ժողովրդական մասսաների վրա ունեցած իր ազդեցության, միայն նա է ի վիճակի այս և մյուս կողմին հետ պահելու ազգային կոտորածից, մյուս ազգին կոտորելու ձգտումից»[1]։

Սովետական կառավարությունը գտնում էր, որ Հայաստանի սահմանները պետք է իրենց մեջ ներառեն նաև Վանի, Էրզրումի, Տրապիզոնի վիլայեթները։ Չիչերինը և Կարախանը դաշնակցական պատվիրակներին հասկացնել էին տալիս, որ Հայաստանի գործերը լավ կգնան, եթե Հայաստանի հանրապետության կառավարությունը հրաժարվի Սևրի խորհրդաժողովի հետ կապած ակնկալություններից, խզվի արևմտյան «դաշնակիցներից» և տերիտորիաների հարցի լուծումը հանձնի սովետական կառավարության իրավասությանը։ Սակայն Շանթի պատվիրակությունը, նախապես ունենալով արևմտյան իմպերիալիստական տերությունների հետ ամուր կապված իր հանցագործ կառավարության ցուցումները, ըստ էության վիժեցրեց բանակցությունները, անգամ չցանկանալով լսել արևմտյան տերություններից կտրվելու, դեպի արևմուտք ունեցած քաղաքական կողմնորոշումից հրաժարվելու մասին։

Նման պայմաններում էր, որ սովետական կառավարությունը 1920 թվականի հունիսին դիվանագիտական բանակցություններ էր սկսել Մոսկվա ժամանած թուրքական պատվիրակության հետ։ Բանակցությունները վարում էին սովետական կողմից Գ. Վ. Չիչերինը և Լ. Մ. Կարախանը, թուրքական կողմից՝ գեներալ Խալիլ փաշան։

Չնայած սովետական Ռուսաստանի նկատմամբ Հայաստանի դաշնակցական կառավարության բացահայտ թշնամական վերաբերմունքին, այնուամենայնիվ սովետական պատվիրակությունը բանակցությունների հունիսի 3-ի նիստում թուրքական կողմին տեղեկացրեց, որ ՌՍՖՍՀ կառավարությունը կտրականապես դեմ է Հայաստանի վրա ռազմական արշավանք սկսելու քեմալականների պլաններին։ «...Մենք միայն այն պայմանով

[1] **Г. В. Чичерин,** Статьи и речи по вопросам международной политики, Соцэкгиз, Москва, 1961, с. 167.

ենք բարեկամական հարաբերությունների մեջ մտնում Թուրքիայի հետ,— նշում էր Գ. Վ. Չիչերինը,— որ Թուրքիայի և հարևան ժողովուրդների միջև, ինչպես, ասենք, հայ ժողովրդի, հաստատվի փոխսահմանազատում, դադարեցվի փոխադարձ կոտորածը։ Այնտեղ մենք նույնպես հանդիսանում ենք խաղադարարներ, և Թուրքիան, ինչպես և Հայաստանը, արդեն համաձայնում է այն բանին, որպեսզի մենք դառնանք միջնորդներ, որպեսզի մեր ազդեցությամբ վերացվեն մինչև այժմ անելանելի այն հակասությունները Թուրք և հայ ժողովուրդների միջև, որոնք այնքան երկար ժամանակ թունավորում էին նրանց գոյությունը»[1]։

Այն ժամանակ, երբ լարված կերպով նախապատրաստվում էր Կարաբեքիր փաշայի զորքերի հարձակումը Հայաստանի վրա, Մոսկվայում գտնվող Խալիլ փաշան Գ. Վ. Չիչերինի և Լ. Մ. Կարախանի հետ վարած դիվանագիտական բանակցություններից հետո 1920 թվականի հունիսի 4-ին Մուստաֆա Քեմալին հաղորդեց. «Մեզ տեղեկացրին, որ անհրաժեշտ է հրաժարվել Հայաստանի դեմ ուղղված գործողություններից»[2]։

Բանակցություններն ավարտելուց հետո սովետական կառավարությունը նպատակահարմար գտավ Հայաստանի հանրապետության կառավարությանը տեղյակ պահելու, թե այնտեղ Հայաստանին վերաբերող ինչպիսի հարցեր են քննարկվել և ինչպիսի դիրքորոշում են ունեցել կողմերը։ Հայաստանի հանրապետության արտաքին գործերի մինիստրին հղած Գ. Վ. Չիչերինի 1920 թվականի հունիսի 19-ի հեռագրում ուղղակի ասված էր. «Բացառապես սովետական կառավարության խաղաղասիրական ձգտումների ազդեցության ներքո Թուրք նացիոնալիստները դադարեցրին իրենց սկսած գործողությունը, որի նպատակն էր նոր հարվածներ հասցնել հայ ժողովրդին»[3]։

Դեմ առնելով Սովետական Ռուսաստանի ամուր դիրքորոշմանը Քեմալ Աթաթուրքը սովետական կառավարությանն ուղղած 1920 թվականի հունիսի 20-ի իր նամակում գրում էր.

[1] **Г. В. Чичерин,** Статьи и речи по вопросам международной политики, с. 168.

[2] Karabekir Kâzım, İstiklal harbimiz («Մեր պատերազմը հանուն անկախության»), İstanbul, 1960, s. 799-800.

[3] ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 219, թ. 261։

«... կառավարությունն ընդունում է Ռուսական Սովետական Հանրապետության միջնորդությունը և հետաձգում է ռազմական գործողությունները Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանում»[1]։

Ստանալով Մուստաֆա Քեմալի հավաստիացումները, սովետական կառավարությունը պատրաստակամություն հայտնեց Թուրքիային ռազմական և այլ օգնություն ցույց տալու մասին։ Սովետական երիտասարդ երկիրը ծանր օրեր էր ապրում, բայց Վ. Ի. Լենինի առաջարկությամբ 1920 և 1921 թվականներին, ինչպես նաև հետագա տարիներին քեմալականներին անհատույց տրամադրվեց մեծ քանակությամբ սպառազինություն ու զինամթերք, ինչպես նաև դրամ[2]։ Սովետական կառավարությունը քեմալականներին զենք էր տալիս այն պայմանով, որ նրանք այդ զենքն ուղղեն միայն Թուրքիա մտած հունական զորքերի և նրանց թիկունքում կանգնած իմպերիալիստական ուժերի դեմ։ Բայց սովետական կառավարական շրջաններում այնուամենայնիվ մնում էր այն մտավախությունը, որ քեմալականները կարող են դրժել իրենց խոստումը և հարձակվել Հայաստանի վրա։

Հայ ժողովրդին նոր արյունահեղությունից փրկելը մնում էր հեղափոխական Ռուսաստանի կառավարության լուրջ մտահոգություններից մեկը։ Ահա թե ինչու Մոսկվայում Լ. Շանթի պատվիրակության հետ բանակցությունների ձախողումից հետո էլ ՌՍՖՍՀ կառավարությունը ամեն ինչ անում էր Հայաստանի կառավարության հետ նոր շփումներ հաստատելու համար։ Բանակցությունները Երևանում շարունակելու նպատակով 1920 թվականի հուլիսի վերջին Մոսկվայում կազմվեց պատվիրակություն ականավոր հեղափոխական և դիվանագետ Բ. Վ. Լեգրանի գլխավորությամբ։ Պատվիրակությունը ժամանեց Բաքու, այնտեղից Աղստաֆայի և Դիլիջանի վրայով Երևան գնալու համար։ Բայց դաշնակցական կառավարությունն անցանկալի համարեց Լեգրանի միսիայի ժամանումը Երևան։ Լեգրանը ստիպված էր անցնել Թիֆլիս, որտեղ էլ նախնական բանակցություններ սկսեց դաշնակցական կառավարության ներկայացուցիչների հետ, նրանց հանգամանորեն շարադրելով ՌՍՖՍՀ կառավարության

[1] „Die Velt Islams", vol. XVI. Berlin, 1934. s. 27-28.

[2] Տե՛ս «Документы внешней политики СССР». т. 3, էջ 675, **Д. Е. Еремеев**, На стыке Азии и Европы, էջ 129։

քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ։ Բանակցությունների ավարտին, 1920 թվականի օգոստոսի 10-ին, համաձայնագիր կնքվեց Սովետական Ռուսաստանի և Հայաստանի միջև[1]։ Բայց այս անգամ էլ դաշնակցական կառավարությունը երկդիմի խաղ էր վարում։ Նույն օրը, օգոստոսի 10-ին, նրա ներկայացուցիչ Ա. Ահարոնյանը Սևրում իր ստորագրությունը դրեց նույնանուն պայմանագրի տակ, դրանով իսկ մի նոր օղակով իրեն կապելով արևմտյան տերությունների իմպերիալիստական քաղաքականությանը։

Ի գիտություն ընդունելով իր նկատմամբ դաշնակցական կառավարության նոր թշնամական քայլը, սովետական կառավարությունը, սակայն, շարունակում էր անդուլ ջանքեր թափել հայ ժողովրդի գլխին կախված վտանգը հեռացնելու համար։ Մասսաների ճնշման տակ դաշնակների կառավարությունը ստիպված էր իր կողմից նույնպես որոշ քայլեր անելու Սովետական Ռուսաստանի հետ դիվանագիտական նորմալ հարաբերությունների մեջ մտնելու համար։ ՌՍՖՍՀ կառավարությունը ելնում էր այն բանից, որ Հայաստանի ժողովրդական լայն մասսաները բուռն ձգտում են դեպի հեղափոխական Ռուսաստան։ «Հայաստանում նույնպես բուրժուական կառավարություն է,— գրում էր Գ. Վ. Չիչերինը,— այնուամենայնիվ Հայաստանում ևս լայն զանգվածների ճնշումը հանգեցնում է այն բանին, որ կառավարությունը պատրաստ է ավելի շուտ մեզ հետ հաշտվելու, մեզ հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու, քան Անտանտի կառավարությունների»[2]։

Այն ժամանակ, երբ սովետական կառավարությունն ամեն կերպ ձգտում էր կարգավորել հայ-թուրքական հարաբերությունները, նույն ժամանակ Անտանտի պետություններն ամեն ինչ անում էին, որպեսզի պատերազմ հրահրեին Հայաստանի և Թուրքիայի միջև, որը նրանց հաշվարկներով անպայման պետք է վերածվեր սովետա-թուրքական մեծ պատերազմի։

Արևմտյան իմպերիալիստները մի բանում ճիշտ էին, այն է՝ թուրք-հայկական ռազմական ընդհարման ժամանակ Սովետական Ռուսաստանը չէր կարող անտարբեր դիտել, թե թուր-

[1] Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ. ֆ. 4047, ց. 2, գ. 58, թ. 14—30։

[2] **Г. В. Чичерин**, Статьи и речи по вопросам международной политики, с. 167.

քերն ինչպես են հոշոտում հայ ժողովրդին։ Պատահական չէ, որ ՌՍՖՍՀ կառավարությունը դիվանագիտական ճանապարհով շարունակում էր զսպել Թուրք ռազմամոլներին, նրանց նախազգուշացնելով, որ անհրաժեշտ է խուսափել երկու երկրների՝ Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև գոյություն ունեցող բարդությունների հետագա սրումից։ Քեմալականները շարունակում էին սովետական կառավարությանը հավաստիացնել, թե իրենք չեն հարձակվելու Հայաստանի վրա։

Բայց Քեմալը հերթական խաբեության էր դիմում։ Այդ նույն ժամանակ Թուրքերը տենդայնորեն վերջին նախապատրաստություններն էին տեսնում։ Իրենց հերթին «Անգլիան և Ֆրանսիան,— ասված է սովետական հեղինակավոր մի հրատարակության մեջ,— ամեն կերպ ջանում էին սպառնալիքների և խոստումների միջոցով հեղափոխական Թուրքիայի կառավարությանը հետ պահել Սովետական Ռուսաստանի հետ բանակցություններից։ Ընդ որում նրանք օգտագործում էին Թուրքական բուրժուազիայի ռեակցիոն տարրերին, որոնք հանդես էին գալիս Սովետական Ռուսաստանի հետ սերտ հարաբերություններ հաստատելու դեմ, իմպերիալիստական տերությունների հետ համաձայնություն կնքելու օգտին։ Այդ տարրերը երաշխիք էին Անդրկովկասում տերիտորիալ դավթումների մասին։ Ռեակցիոն ուժերի ճնշման ներքո քեմալական կառավարությունը մերժեց իր ավելի վաղ ընդունած սովետական կառավարության միջնորդությունը դաշնակցական Հայաստանի հետ բանակցություններում»[1]։

1920 թվականի ամռանը քեմալականները Հայաստանի դեմ կենտրոնացրին 50 հազարանոց բանակ, այն դեպքում, երբ նույն թվականի հունիս-օգոստոսին Թրակիայի և Անատոլիայի խորքերը շարժվող 60 հազարանոց հունական զորքերի դեմ նրանք դուրս էին բերել ընդամենը 15 հազար զինվոր։ Դա վկայում է, որ Անկարայի կառավարող շրջանների համար Արևելյան ռազմաճակատը հիմնականն էր։

Ավելի ուշ, բնութագրելով Թուրքական բանակի գլխավոր շտաբի ռազմաստրատեգիական պլանները, Թուրք գնդապետ Զեկեթ Քերիմը նշել է. «Հույների և ֆրանսիացիների դեմ սկզբնական շրջանում պաշտպանողական խնդիրներ էին դրվում։ Իսկ գլխավոր ուշադրությունը հատկացված էր արևելյան ռազմաճակատին, քանի որ այնտեղ հաջողություն ձեռք բերելու դեպքում պետք է ոչնչացվեին հայկական բանակն ու հայկական պետությունը...»[1]

Թուրքերը մտադրվել էին գավթել ոչ միայն Հայաստանը, այլև Սովետական Ադրբեջանը։ Արևմտյան ռազմաճակատի հրամանատար Ալի Ֆուադ Ջեբեսոյ փաշային 1920 թվականի սեպտեմբերի 14-ի նամակում Մուստաֆա Քեմալն ուղղակի մատնանշում էր. «Հայերի դեմ բարենպաստ պատերազմ սկսելով, պետք է չհրաժարվել նաև Ադրբեջանը Թուրքիային միացնելու մտքից»[2]։

Ինչպես տեսնում ենք, քեմալականների Թուրքիզմը չէր սահմանափակվում «նոր Թուրքիայի» շրջանակներով, այն պետք է վերաճեր և, իրոք, վերաճեց պանթուրքիզմի։ Թեև առաջին համաշխարհային պատերազմում պարտություն կրելուց հետո Թուրքիան պաշտոնապես հրաժարվել էր պանթուրքիզմի քաղաքականությունից, բայց հետագա դեպքերը ցույց տվեցին, որ «նոր Թուրքիայի» կառավարողները միայն խոսքով են հրաժարվել Թուրք ազգային բուրժուազիայի քաղաքական իդեալն իրականացնելուց։ Նրանք բնավ մտադիր չէին ձեռք քաշելու անցյալի ռասայական-շովինիստական բեռից։ Ա. Ֆ. Միլլերը նշում է, որ քեմալական ագրեսորները և շովինիստները, ձգտելով «վերջ տալ Հայաստանի պետական գոյությանը և նրան ամբողջովին ենթարկել Թուրքական տիրապետությանը», միաժամանակ երազում էին պանթուրքական պլանների վերածնման մասին[3]։

Իրենց ագրեսիվ պլանների իրականացումը հեշտացնելու համար Թուրքական իմպերիալիստներն ուժեղացրին պանիսլամական կազմալուծիչ աշխատանքը Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի մուսուլմանական բնակչության շրջանում։ Միաժամանակ նրանք շարունակում էին դեմագոգիկ հայտարարություններ-

---

[1] «История внешней политики СССР. 1917—1980», в двух томах, т. I, 1917—1945. Под редакцией **А. А. Громыко и Б. Н. Пономарева**, М., «Наука», 1980, с. 144.

[1] **Мустафа Кемаль,** Путь новой Турции, т. III, с. 314.

[2] A. F. Cebesoy, Milli mücadele hatiralari, Istanbul, 1953, s. 139-140.

[3] Տե՛ս **А. Ф. Миллер,** Краткая история Турции, էջ 183։

ռով թյուրիմացության մեջ գցել հասարակական կարծիքը, իրենց ներկայացնել որպես սովետական երկրի անկեղծ բարեկամներ։ Քեմալականներն այդ նպատակին էին ծառայեցնում Թուրքիայո կեղծ կոմկուսին, որը սկզբնական շրջանում կարողացել էր նույնիսկ վստահություն նվաճել III Կոմունիստական ինտերնացիոնալի որոշ շրջաններում։

Ավելին, քեմալականները և կեղծ կոմունիստները տարածում էին այն կեղծիքը, թե նախկին երիտթուրքերը, այդ թվում Թալեաթ, Էնվեր, Ջեմալ փաշաները, ինչպես նաև իթթիհադական մյուս պարագլուխները սովետական իշխանության և III Ինտերնացիոնալի հետ են։ Կեղծ կոմկուսի օրգան «Յենի գուն» թերթը գրում էր, թե Թալեաթ փաշան մեծ հեղինակություն և ազդեցություն ունի III Ինտերնացիոնալում և որ իբր Ինտերնացիոնալի ղեկավարությունը լիովին վստահում է երիտթուրքական կուսակցության երեկվա այդ արյունարբու պարագլխին[1]։

Քեմալականները և Թուրքիայի կեղծ կոմկուսի պարագլուխները փորձեցին իրենց մութ նպատակներին օգտագործել նաև Արևելքի ժողովուրդների I համագումարի ամբիոնը։

Կոմունիստական ինտերնացիոնալի գործկոմը և 1920 թվականի հունիսի վերջերին Մոսկվայում տեղի ունեցած Կոմինտերնի երկրորդ կոնգրեսի պատգամավորների մի մասը նախաձեռնություն էին հանդես բերել հրավիրելու Արևելքի ժողովուրդների համագումար։ Նախատեսվել էր համագումարի աշխատանքներին մասնակից դարձնել Արևելքի երկրների կոմունիստների և ազգային-հեղափոխական կազմակերպությունների ներկայացուցիչներին, ինչպես նաև հակաիմպերիալիստական տրամադրություններ ունեցող անկուսակցական գործիչների[2]։

Համագումարը տեղի ունեցավ 1920 թվականի սեպտեմբերի 1—8-ը Բաքվում։ Ներկա էին Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Դաղստանի, Թուրքեստանի Հանրապետության, Խիվայի, Բուխարայի, Բաշկիրիայի, Թաթարիայի, Կալմիկիայի ներկայացուցիչները, արտասահմանյան երկրների՝ Չինաստանի, Հնդկաստանի, Աֆղանստանի, Պարսկաստանի, Թուրքիայի, Ճապոնիայի,

---

[1] *Տե՛ս* **Мих. Павлович (М. Вельтман),** Революционная Турция, *էջ* 117։

[2] *Տե՛ս* **Ա. Ի. Միկոյան,** *Պայքարի ուղիով, գիրք առաջին, էջ 746—747։*

ինչպես նաև արաբների և քրդերի պատվիրակները[1]։ Համագումարին մասնակցում էին 37 ազգերի ու ազգությունների 1891 պատվիրակներ, որոնցից 1273-ը կոմունիստներ էին[2]։

Այդ ժամանակ Բաքվում էր գտնվում թուրք կոմունիստների բյուրոն (Մուստաֆա Սուբհի, Սուլեյման Նուրի և ուրիշներ)։ Թուրք կոմունիստների ղեկավարները համագումարի կազմակերպիչներին օգնում էին կապ հաստատելու Թուրքիայի հետ, ջանքեր էին գործադրում, որպեսզի Թուրքիայից համագումար գան միայն աշխատավորների ներկայացուցիչներ։

Համագումարը կարևոր նշանակություն ունեցավ Արևելքի ժողովուրդների հեղափոխական ուժերի միավորման և իմպերիալիզմի դեմ միասնական ճակատ հարդարելու գործում։

Բայց հենց սկզբից ասենք, որ համագումարի մուսուլման պատվիրակների զգալի մասը և հատկապես համագումարի պատերից դուրս գտնվող պանիսլամականները և պանթուրքականները արևմտյան և հատկապես անգլիական իմպերիալիստների դեմ ուղղված Արևելքի ժողովուրդների ազատագրական պայքարի լոզունգները սխալ էին ըմբռնում։ Նրանցից շատերի մոտ արևմտյան կապիտալի դեմ արևելյան ժողովուրդների կռիվը ոչ այլ ինչ էր, եթե ոչ մահմեդականության «սրբազան կռիվ» («ղազավաթ») քրիստոնեության դեմ[3]։ Իսկ Էնվեր փաշան, որ այդ օրերին Բեռլինից եկել[4] և գտնվում էր Բաքվում, պահանջում էր, որ Արևելքում մղվելիք առաջիկա այդ «սրբազան պատերազմում» մահմեդական բանակի հրամանատարությունը հանձնվի իրեն, որպեսզի իր «հեղինակությամբ և զինվորական մասնագիտական պատրաստությամբ կարողանա ոտքի հանել Թուրքեստանը, Հնդկաստանը, Պարսկաստանը, Տաճկաստանը և մյուս մահմեդական երկրները»[5]։

Իմպերիալիզմի դեմ ուղղված Արևելքի ժողովուրդների ազատագրական շարժման առնչությամբ համագումարը զգալի տեղ հատկացրեց Թուրքիային։ Դա պատահական չէր։ Ինչպես ար-

---

[1] *Տե՛ս* **Ա. Միկոյան,** *Պայքարի ուղիով, էջ 746—747։*

[2] *Տե՛ս* **Н. Ф. Шитов,** В. И. Ленин и пролетарский интернационализм (1917—1924 гг.). Политиздат, Москва, 1974, *էջ* 284։

[3] *Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 37, թ. 12։*

[4] *Տե՛ս նույն տեղը։*

[5] *Նույն տեղը, թ. 13։*

դեն ասվել է, այդ երկիրը համարվում էր Արևելքի հեղափոխական շարժման առաջամարտիկ։ Բայց նրա դերի գնահատման հարցում համագումարի պատվիրակները միակամ չէին։ Ելույթ ունեցողներից ոմանք գերագնահատում էին Թուրքիայի «ազատագրական միսիան», միաժամանակ զուգահեռաբար արդարացնում թուրքական իմպերիալիզմի, թուրքական ռեակցիայի գործած ավերները եվրոպական պատերազմը սկսելուց ի վեր։

Այսպես, քեմալական Թուրքիայի ներկայացուցիչ Վաղարդին Շաքիրն իր ելույթում պնդում էր, թե երբ ծագեց համաշխարհային պատերազմը, Թուրքիան նրա մեջ մտավ ակամայից և ակամայից էլ ստիպված էր Գերմանիայի կողքին գտնվել, բայց ոչ թե նվաճումներ կատարելու ձգտումով, այլ ինքնապաշտպանության նպատակով[1]։ Ելույթ ունեցողներից ոմանք էլ հախուռն, ոչ դասակարգային գնահատականներ էին տալիս քեմալական շարժմանը, չցանկանալով տեսնել նրա ռեակցիոն կողմերը, փորձում էին ապացուցել, որ Ռուսաստանի սովետների օրինակով Թուրքիայում նույնպես սովետներ են առաջացել, որոնք իբր արտահայտում են աշխատավորների շահերը։

Սակայն այս և նման կարգի ելույթները արժանի հակահարված ստացան ամենից առաջ համագումարի մուսուլման պատվիրակների կողմից։ Նրանցից շատերը զգուշորեն և վերապահությամբ էին խոսում Թուրքիայի հեղափոխական դերի մասին։ Դրվատելով թուրքական ազգային շարժման հակաիմպերիալիստական ուղղվածությունը, պատվիրակներից շատերը միաժամանակ խիստ քննադատում էին այդ շարժման ռեակցիոն կողմերը, ցույց էին տալիս, որ շարժումն ի վիճակի չէ լուծելու Թուրքիայի սոցիալական ներքին պրոբլեմները, այդ թվում ամենակարևորը՝ ագրարային-գյուղացիական հարցը։ Ելույթ ունեցող մուսուլման պատվիրակները դառն զգացումով էին արտահայտվում համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայի իմպերիալիստական պլանների և ձգտումների, Անդրկովկասի վրա կատարած ավերիչ արշավանքի, պանթուրքականների և պանիսլամականների կողմից երկրամասի բոլոր տարածքներում ծավալած քայքայիչ գործունեության մասին և այլն։

Այսպես, օրինակ, իր ելույթում մերկացնելով այն տեսակետը, թե Թուրքիան եվրոպական պատերազմի մեջ էր մտել իբր ինքնապաշտպանության նպատակով, Ադրբեջանի կոմունիստական կուսակցության ղեկավար գործիչներից Բունիաթ զադեն փաստերով ցույց էր տալիս, որ այդ երկիրը լիովին Գերմանիայի տրամադրության տակ դրեցին «Թուրքիայի իմպերիալիստները, ամեն տեսակ էնվերները»[1], որպեսզի զավթած ավարից ստանան իրենց բաժինը։ Անդրադառնալով նույն հարցին և հակադրվելով Վաղարդին Շաքիրին, համագումարի կոմունիստական ֆրակցիայի անունից հանդես եկած Հեյդարխանովը նշում էր. «Այստեղ մի ելույթ ունեցող ասաց, որ նա (Թուրքիան։— Հ. Ս.) մղել է պաշտպանողական պատերազմ, որ Թուրքիան գործիք չի եղել գերմանական իմպերիալիզմի ձեռքին և ինքը ոչ մի իմպերիալիստական ձգտումներ չի ունեցել։ Դա չի համապատասխանում իրականությանը, ընկերնե՛ր։ Թուրքիան ունեցել է իմպերիալիստական մեծ ձգտումներ։ Նա ամբողջովին գործիք էր եվրոպական իմպերիալիստների ձեռքին»[2]։

Համագումարն արժանի գնահատական տվեց նաև Անդրկովկասի վրա երիտթուրքերի 1918 թվականին կատարած ավերիչ արշավանքին։ Բունիաթ զադեն նշում էր, որ Անդրկովկաս մտած թուրքական զորքերին ցնծությամբ էին ընդունում ադրբեջանցի ազգայնամոլները, որոնք թուրքերի գալու հետ էին կապում «ռուսական լծից» ազատագրվելու իրենց հույսերը։ Նա ցույց էր տալիս, որ այդ հույսերը այժմ էլ փայփայում են Կովկասի պանթուրքական որոշակի շրջաններ, որոնց նա անվանում էր «թուրքական և գերմանական իմպերիալիստների մանեկեններ»[3]։

Լեռնականների ներկայացուցիչ կումիկ Կորխմազովը իր ելույթում պատմում էր, թե ինչպես 1918 թվականին Ադրբեջանը գրավելուց հետո թուրքական զավթիչները Յուսուֆ Իզզեթ փաշայի, Նուրի փաշայի և ուրիշ փաշաների ու բեյերի գլխավորությամբ ներխուժեցին Դաղստան։ Սակայն սովետական իշխանությունը հաղթեց։ Դրանից հետո էլ, ասում էր նա, մուսավաթական գործակալները և թուրքամետ հակահեղափոխականները Էնվեր փաշայի եղբայր Նուրի փաշայի գլխավորությամբ շարու-

[1] Տե՛ս «Первый съезд народов Востока, Баку, 1—8 сентября 1920 г.». Стенографические отчеты. Изд-во Коммунистического Интернационала, Петроград, 1920 էջ 77—78։

[1] «Первый съезд народов Востока», с. 76.

[2] Նույն տեղը, էջ 80։

[3] Նույն տեղը, էջ 76—77։

նակում էին պայքարը սովետական կարգերի դեմ[1]։ Հեղափոխության թշնամիները վերջիվերջո պարտություն կրեցին, Թեմիր-Խան-Շուրա, Դերբենտ և Պետրովսկ քաղաքների վրա վերջնականապես բարձրացավ սովետների կարմիր դրոշը[2]։

Համագումարը սկզբունքային գնահատականներ տվեց քեմալական շարժման բնույթին, նրա ընթացքին և նպատակներին։ Հռետորներից մեկը նշում էր, որ Թուրքիայի իրականությունը չի կարող իսկական հեղափոխության օրինակ տալ։ Իր միտքը հաստատելու համար նա ասում էր, որ քեմալական շարժումը նույնպես այդ երկրում չի փոխել կառավարման բռնապետական ձևերը։ «Ձեզ բոլորիդ հայտնի է,— իր ելույթում նշում էր Թուրքեստանից համագումար եկած Նարբուտաբեկովը,— որ Արևելքում դարեր ի վեր, սկսած Չինգիզ խանից, Թեմուրից և վերջացրած արյունարբու Աբդուլ Համիդով, չի եղել կառավարման այլ ձև, քան բռնապետությունը. գոյություն ունի ամենակարող աստվածը երկնքում, իսկ երկրի վրա՝ սուլթանը»[3]։ Մի ուրիշ հռետոր հիշեցնում էր, որ ինքը՝ Մուստաֆա Քեմալն ասում էր, որ «խալիֆի և սուլթանի անձը սուրբ է և անձեռնմխելի»[4]։ Ապա անդրադառնալով քեմալական շարժման բնույթին, նշում էր. «Թուրքիայում, ընկերնե՛ր, դուք գիտեք, սովետական կառավարություններ աջակցում է Քեմալին։ Մենք ոչ մի բոպե չենք մոռանում, որ Քեմալի գլխավորած շարժումը կոմունիստական շարժում չէ։ Մենք դա գիտենք»[5]։ Մենք գիտենք, որ Թուրքիայում իշխանությունների կողմից ստեղծվել են խաղալիք-«սովետներ», որոնք ոչ մի առնչություն չունեն աշխատավորների շահերի հետ[6]։

Համագումարում շատ խոսակցություն գնաց Հայաստանի և հայ ժողովրդի մասին[7]։ Պատվիրակներից ոմանք անդրադարձան արևմտահայության նկատմամբ թուրքական գազանություններին, 1918 թվականին երիտթուրքերի կողմից Արևելյան Հայաստանի ասպատակությանը և հետևանքներին, Հայաստանի հանրապետության մեջ հայ ժողովրդի ողբերգական կացությանը, խոսեցին դաշնակցականների տիրապետությունը տապալելու և Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու անհրաժեշտության մասին։

Սակայն հայ ժողովրդի մասին համագումարում արտասանած ոչ բոլոր ձայներն էին բարեկամական։ Բանն այն է, որ թուրք կոմունիստների ջանքերին հակառակ Թուրքիայից համագումար էին թափանցել ոչ միայն աշխատավորական շահերի ներկայացուցիչները, այլև կեղծ կոմունիստներ, քեմալականներ, բացահայտ նացիոնալիստներ, պանթուրքականներ և պանիսլամականներ, որոնք Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ շարունակում էին անհանդուրժողական գիծ։ Դա, ինչ խոսք, Մուստաֆա Քեմալի և նրա շրջապատի մտայնությունն էր, որ համագումար էին բերել ոչ աշխատավորական դասակարգերի ներկայացուցիչները։ Հենց այդ օրերին էր, որ քեմալականները կուրծք ծեծելով, ապացուցելու համար իրենց նվիրվածությունը սովետա-թուրքական բարեկամությանը, միաժամանակ դիվային պլաններ էին նյութում հայ ժողովրդի դեմ, «հայկական իմպերիալիզմը խեղդելու» պատրվակով նպատակ ունեին մեջտեղից վերացնել Հայաստանը, որպեսզի «կարմիր թուրքերը» կարողանային անմիջականորեն միանալ «հեղափոխական Արևելքի հետ»։ Առանց Հայաստանի վերացման, ասում էին նրանք, անհնարին է հասնել այդ նպատակին։ Այս գաղափարները կրող համագումարի թուրք պատվիրակներից ոմանք նույնիսկ հույս ունեին, թե իրենց հակահայ դիրքորոշումը պաշտպանություն կգտնի համագումարի մուսուլման մեծամասնության կողմից։ Բայց նրանց հաշիվները սխալ դուրս եկան։ Համագումարն արժանի հակահարված տվեց բացահայտ և ծպտյալ ազգայնականներին ու շովինիստներին և ինտերնացիոնալիստական դիրքերից գնահատական տվեց հայ ժողովրդի ազատագրական պայքարին։

Այդ տեսակետից բնութագրական էր հետևյալ փաստը։ Սեպտեմբերի 4-ին, համագումարի 4-րդ նիստի վերջում նախագահող Զինովևը հայտարարեց, թե թուրքական նշանավոր երկու քաղաքական գործիչներ, որոնք համագումարի պատգամավորներ չեն, բայց գտնվում են Բաքվում, համագումարի նախագահության անունով գրավոր հայտարարություններ են ուղարկել։ «Քանի որ այդ հայտարարություններն ունեն քաղաքական խո-

---

[1] Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 37, թ. 11։

[2] Տե՛ս **Мих. Павлович (М. Вельтман)**, Революционная Турция, էջ 95։

[3] «Первый съезд народов Востока», с. 87.

[4] Նույն տեղը, էջ 42։

[5] Նույն տեղը, էջ 40։

[6] Տե՛ս նույն տեղը։

[7] Տե՛ս նույն տեղը, էջ 40, 46, 58, 60, 61, 91, 113, 122, 123, 124, 125, 137, 141, 151, 226 և այլն։

շոր նշանակություն,— ասաց նա,— ուստի նախագահությունը որոշել է դրանք ամբիոնից հրապարակել, ապա հանձնել մամուլին»[1]։ Հայտարարություններից մեկը պատկանում էր նախկին երիտթուրքական պարագլուխ, հայ ժողովրդի դահիճ Էնվեր փաշային, մյուսը՝ նշանավոր քեմալական գործիչ, Անկարայի ազգային կառավարության ներկայացուցիչ Իբրահիմ Թալիհին։

Զինովևի հայտարարությունը բուռն վիճաբանությունների առիթ տվեց։ Համագումարի կոմունիստական ֆրակցիայի շատ անդամներ դեմ էին, որ Էնվերի հայտարարությունը կարդացվի, համարելով, որ դա անպատվաբեր է համագումարի մասնակիցների համար[2]։ Էնվերի դեմ կրակոտ ելույթ ունեցավ Մուստաֆա Սուբհին[3]։ Այնուամենայնիվ որոշվեց ընթերցել Էնվերի և Թալիհի հայտարարությունները։

Էնվեր փաշան իր դեմագոգիկ հայտարարության, կամ ինչպես ինքն էր վերնագրել՝ «դեկլարացիայի» մեջ հավաստիացնում էր, թե ինքը ներկայացնում է Մարոկկոյի, Ալժիրի, Թունիսի, Տրիպոլիի, Եգիպտոսի, Արաբիայի և Ինդուստանի այսպես կոչված «հեղափոխական կազմակերպությունների միությունը»[4], որն էլ, իբր, իրեն լիազորել և ուղարկել է Բաքու։ Էնվերի հայտարարության շարադրանքից ստացվում էր, թե իրեն է վիճակված բովանդակ Արևելքը իմպերիալիզմի դեմ ոտքի հանելու մեծ առաքելությունը։ Այնուհետև նա երդվում էր, որ ինքը և իր ընկերները միջազգային իմպերիալիզմի և կապիտալիզմի ոխերիմ հակառակորդներ են և հավատարմորեն կանգնած են III Ինտերնացիոնալի դիրքերում[5]։ Նա ասում էր նաև, թե ինքը վերջնականապես համոզվել է, որ սովետական իշխանությունը «բոլոր ճնշվածների բնական դաշնակիցն է»[6], ուստի դարձել է այդ իշխանության ջերմ պաշտպան[7]։ Միաժամանակ Էնվերն իրեն հատուկ արտիստականությամբ ու խաբեությամբ «ափսոսանք» էր հայտնում այն բանի համար, որ իրեն «չի հաջողվել» ավելի

[1] «Первый съезд народов Востока», с. 108.
[2] ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 37, թ. 12։
[3] Տե՛ս նույն տեղը, թ. 13։
[4] «Первый съезд народов Востока», с. 112.
[5] Նույն տեղը, էջ 108։
[6] Նույն տեղը, էջ 110։
[7] Տե՛ս «Первый съезд народов Востока», էջ 110։

վաղ դառնալ սովետների բարեկամը։ «Եթե Սև ծովի փոթորիկներն ինձ չմղեին դեպի հետ՝ կոտրելով իմ նավի կայմերը,— գրում էր նա,— եթե Կովելի և Ռիգայի բանտերի ցանցերն ու իմ նստած սավառնակների վայր ընկնելը չուշացնեին ինձ, ես ձեզ մոտ կգայի Ռուսաստանի համար ամենածանր պահին և ստիպված չէի լինի պատմելու այս ավելորդ բաները՝ որոշ ընկերների բացատրություն տալու համար»[1]։

«Դեկլարացիայում» Էնվերը ճիգ էր թափում արդարացնելու երիտթուրքերի վարած ներքին և արտաքին քաղաքականությունը[2]։ Իրեն ներկայացնելով որպես ադրբեջանական ժողովրդի շահերի պաշտպան, նա շեշտում էր. «Մենք գտնում ենք, որ Ադրբեջանը պատկանում է ադրբեջանցիներին»[3], ասել է թե՝ այնտեղ այլազգիները տեղ չունեն։

Քեմալական Իբրահիմ Թալիհն իր հայտարարության մեջ չէր թաքցրել հայ ժողովրդի հանդեպ «Նոր Թուրքիայի» իշխանավորների տածած թունավոր ատելությունը։ Անդրադառնալով քեմալական շարժման արտաքին պատճառներին, նա գրում էր, թե այդ պատճառների թվում գլխավորն այն է, որ «արևմտյան կապիտալիստները, որոնք թուրք գյուղացիներից խլել էին զենքը, որոշել էին այդ գյուղացիների դեմ ուղղել իրենց կամակատարներին՝ վենիզելոսյան հույներին Արևմուտքից և դաշնակ հայերին արևելքից։ Թուրք գյուղացին գիտեր, որ իմպերիալիստներն ու նրանց գործակալները «ամենուր, ուր հայտնվում են, գործում են հրով, սրով ու ռումբերով», անողոքաբար կողոպտում իր խաղաղ աշխատանքի պտուղները[4]։ Դա էր պատճառը, որ հայերը և հույները «նետվեցին Անտանտի գիրկը», իսկ «անատոլիական հեղափոխականները», իբր, «շուռ եկան դեպի արևածագի նման Արևելքում բարձրացող կարմիր հեղափոխությունը»[5]։

Համագումարն արժանի հակահարված տվեց և՛ երիտթուրքական պարագլխին, և՛ քեմալական կառավարության ներկայացուցչին։ Նրանց երկուսի հայտարարությունների առթիվ համագումարի նախագահությունը կազմեց և համագումարին ներկայաց-

[1] «Первый съезд народов Востока», с. 110.
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 109։
[3] Նույն տեղը։
[4] Տե՛ս նույն տեղը, էջ 113։
[5] Նույն տեղը, էջ 115։

րեց բանաձևի նախագիծ, որը քվեարկվեց և ընդունվեց առանց փոփոխության։ Ահա այդ փաստաթուղթը.

«Լսելով էնվեր փաշայի հայտարարությունը թուրքական ազգային շարժման մասին, Արևելքի ժողովուրդների համագումարն ընդունում է հետևյալ բանաձևը՝

1) Համագումարն իր համակրանքն է հայտնում թուրքական բոլոր մարտիկներին, որոնք պայքարում են արևելյան ժողովուրդներին կեղեքող ու շահագործող և ամբողջ աշխարհի աշխատավորներին ստրկության մեջ պահող համաշխարհային իմպերիալիզմի և ամենից առաջ անգլիական և ֆրանսիական իմպերիալիստական բանդիտների դեմ։ Ինչպես Կոմունիստական ինտերնացիոնալի II կոնգրեսը, [այնպես էլ] Արևելքի ժողովուրդների I համագումարը հայտարարում է, որ ինքը պաշտպանում է այն համազգային հեղափոխական շարժումները, որոնք ձգտում են Արևելքի կեղեքված ժողովուրդներին ազատել օտարերկրյա իմպերիալիստների լծից։

2) Սակայն, համագումարը գտնում է, որ Թուրքիայի համազգային հեղափոխական շարժումը ուղղված է միայն օտարերկրյա կեղեքիչների դեմ, և նրա հաջողությունը ամենևին չի կարող նշանակել թուրք գյուղացիների ու բանվորների ազատագրում ամեն տեսակ կեղեքումից ու շահագործումից։ Այդ շարժման հաջողությունը իր հետ չի կարող բերել թուրք աշխատավոր դասակարգերի համար ամենակարևոր հարցերի՝ ագրարային հարցի և հարկերի հարցի լուծում և չի կարող վերացնել Արևելքի ազատագրման ամենագլխավոր խոչընդոտները՝ ազգային երկպառակությունները։

3) Համագումարն անհրաժեշտ է համարում հատուկ զգուշություն [ցուցաբերել] շարժման այն առաջնորդների նկատմամբ, որոնք անցյալում սպանդանոց էին տանում թուրք գյուղացիներին ու բանվորներին ի շահ իմպերիալիստական մեկ խմբի և այսպիսով Թուրքիայի աշխատավոր մասսաներին հասցնում էին կրկնակի կործանման հանուն հարուստների ու բարձրաստիճան սպայության փոքր խմբի շահերի։ Համագումարն այդ գործիչներին առաջարկում է գործով ցույց տալ, որ նրանք այժմ պատրաստ են ծառայելու աշխատավոր ժողովրդին և շրջելու անցյալի սխալ քայլերը։ Թուրքիայի և ամբողջ Արևելքի աշխատավոր մասսաներին առաջարկելով պաշտպանել թուրքական համազգային հեղափոխական շարժումը, համագումարը

Թուրքիայի գյուղացիներին ու բանվորներին կոչ է անում համախմբվել ինքնուրույն կազմակերպությունների մեջ, պատրաստ լինել ազատագրման գործը հասցնելու մինչև վերջ և թույլ չտալ, որպեսզի օտարերկրյա իմպերիալիստները, ձգտելով խանգարել ազատագրման գործը, կարողանան օգտագործել իրենց կապերը և ազդեցությունը տեղացի հարուստների, կուլակների, բյուրոկրատների ու գեներալների վրա (փաշաներ, դերեբեյլերներ և այլն)։ Միայն այս ձևով Թուրքիայի աշխատավոր ժողովուրդը կարող է ազատագրության հասնել իր բոլոր կեղեքիչներից ու շահագործողներից և միայն այդ ժամանակ հողը, ֆաբրիկաները, հանքերը և ընդհանրապես երկրի բոլոր հարստությունները կծառայեն աշխատավորների և միայն աշխատավորների շահերին։ Միայն այս ձևով»[1]։

Վերադառնալով Հայաստան, Բաքվի համագումարին մասնակցած հայ պատվիրակները[2] մեծ աշխատանք ծավալեցին համագումարի գաղափարները աշխատավոր լայն մասսաների մեջ տարածելու ուղղությամբ։ Դաշնակցական իշխանությունը ճգնաժամի մեջ էր։ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները բանվորներին և գյուղացիներին նախապատրաստում էին առաջիկա վճռական գոտեմարտին՝ հայ բուրժուազիայի դիկտատուրան տապալելու և երկրում սովետական կարգեր հաստատելու համար։ Հայաստանն արագորեն գնում էր դեպի հեղափոխություն։

Սակայն ծավալված արտաքին քաղաքական դեպքերը փոխեցին իրադարձությունների ընթացքը։

1920 թվականի սեպտեմբերի 23-ին քեմալական բանակը Քյազիմ Կարաբեքիրի հրամանատարությամբ հարձակվեց Հայաստանի վրա՝ հայ ժողովրդին վերջին մահացու հարվածը հասցնելու համար։

Հարձակման առաջին իսկ օրը հայկական զորքերը բռնեցին նահանջի ճանապարհը։ Արդեն պատերազմի չորրորդ օրը թշնամու ձեռքն ընկավ Սարիղամիշը, ապա՝ Կաղզվանը[3]։

---

[1] «Первый съезд народов Востока», с. 116—117.

[2] Համագումարին մասնակցած պատվիրակներից հայերը թվով երրորդն էին (157 հոգի)՝ թուրքերից (235 հոգի) և պարսիկներից (192 հոգի) հետո։ Ըստ որում օսմանցի թուրքերը, ադրբեջանցիները և թաթարները հաշվարկված էին մի անվան տակ՝ թուրքեր (տե՛ս «Первый съезд народов Востока», էջ 5)։

[3] Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 677, թ. 1։

1920 թվականի հոկտեմբերի 9-ին ՌԿ(բ)Կ Մոսկվայի կազմակերպության ակտիվի խորհրդակցությունում հանդես գալով ՌՍՖՍՀ ներքին և արտաքին դրության մասին զեկուցումով, Վ. Ի. Լենինը նշեց. «Վերջերս Թուրքերը սկսել են հարձակում Հայաստանի վրա, նպատակ ունենալով գրավել Բաթումը, իսկ հետո, թերևս, նաև Բաքուն»[1]։

Հայկական հանրապետության կառավարությունն օգնություն էր կանչում արևմտյան «դաշնակիցներին»[2] և մենշևիկյան Վրաստանին[3], բայց նրանք խցանել էին իրենց ականջները։ Ու մինչդեռ «դաշնակիցների» կովկասյան ներկայացուցիչները հանգիստ դիտում էին, թե իրադարձություններն ինչպես են զարգանում Թուրք-հայկական ռազմաճակատում[4], իսկ Ազգերի լիգայի ականավոր անդամները զբաղված էին դատարկ ճառերով, Թուրքերը մեկը մյուսի հետևից գրավում էին Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, հայ հողը նորից էր ներկվում հազարավոր անմեղ մարդկանց արյունով։

Հայ ժողովրդի համար ծանրագույն այդ օրերին Սովետական Ռուսաստանի կառավարությունը մեծ ջանքեր էր գործադրում Թուրք զավթիչների ախորժակը սահմանափակելու, ավերիչ պատերազմը դադարեցնելու համար[5]։ Այդ նպատակին էր նա ծառայեցնում դիվանագիտական լծակները, մասնավորապես այն բանակցությունները, որ տեղի էին ունենում Սովետական Ռուսաստանի և Թուրքիայի միջև[6]։ ՌՍՖՍՀ կառավարությունը մի քանի անգամ իր միջնորդությունն առաջարկեց քեմալականներին՝ պատերազմող կողմերին հաշտեցնելու համար, սակայն ամեն անգամ ստանում էր Թուրքերի մերժումը։

1920 թվականի հոկտեմբերի 5-ին Գ. Վ. Չիչերինը հեռագրեց Թիֆլիս՝ Բ. Վ. Լեգրանին, հայտնելով սովետական կառավարության խիստ մտահոգությունը և հաստատ դիրքորոշումն այն մասին, որ «մենք չենք կարող թույլ տալ նրան (Հայաստանին։— Հ. Ս.) ճզմելու»[7]։ Ավելին, սովետական կառավարությունը գնաց

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 41, էջ 406։

[2] Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 622, թ. 5, գ. 677, թ. 2—8։

[3] Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 677, թ. 9։

[4] Տե՛ս նույն տեղը, թ. 11—14։

[5] Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 677, թ. 15։

[6] Տե՛ս նույն տեղը, թ. 16։

[7] Մեջբերված է՝ Մ. Վ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1973, էջ 333։

ծայրահեղ քայլի՝ դադարեցնելով զենքով և ոսկով Թուրքիային օգնություն ցույց տալը։ «Այդ ժամանակ Թուրքիայի և Ռուսաստանի հարաբերությունները ժամանակավորապես մթագնվեցին այն բանի հետևանքով,— հետագայում նշում էր Գ. Վ. Չիչերինը,— որ թուրքական կառավարությունը չէր ցանկանում թույլ տալ Ռուսաստանի միջնորդությունը Թուրքիայի և Հայաստանի միջև մղվող պատերազմում»[1]։

Դաշնակցական Հայաստանը պարտություն էր կրում։ Պատճառները մեկից ավելի էին։ Գլխավոր պատճառն այն էր, որ հայ ժողովուրդը աջակցություն ցույց չտվեց Հայաստանի հանրապետության կառավարությանը։ Դաշնակցական զինվորի շինել հագած հայ գյուղացին չէր ուզում կռվել իր համար խորթ իշխանության հրամաններով։ Երկրորդ, հայկական բանակի զգալի թվով զորամիավորումներ դաշնակցական կառավարությունը պահում էր Զանգեզուրում և հանրապետության հյուսիսային շրջաններում՝ «բոլշևիկների հնարավոր ներխուժումը կանխելու» համար։ Այնուհետև, ոչ բոլոր զորամասերն էին անհրաժեշտ չափով զինված ու հանդերձավորված։ Անտանտի տերություններն իրենց «փոքր դաշնակցին» գլխավորապես օգնում էին գործածությունից դուրս եկած զենքերով ու հնացած հանդերձանքով։ Մեծ Բրիտանիայի ապագա վարչապետ, իսկ այդ ժամանակ Լլոյդ Ջորջի կոալիցիոն կառավարության մինիստր Ստենլի Բոլդուինի արկածախնդիր որդին՝ Օլիվեր Բոլդուինը, որ մի դիպվածով ընկել էր Հայաստան և 1920 թվականին դաշնակցական բանակում ծառայում էր փոխգնդապետի պաշտոնով, հետագայում իր հուշերում գրում էր, թե որքան ընչին էր անգլիական օգնությունը հայկական բանակին։ Անգլիայից ուղարկած բոլոր հրացանները հին nnu սիստեմի էին, «որոնք առաջին իսկ հարվածից պայթում էին, ուղարկած զինվորական կոշիկները չափազանց փոքր էին հայ գյուղացու լայն ոտքերի համար, հետևաբար՝ անպետք»[2]։

Վերջապես, չի կարելի հաշվից դուրս նետել այն դիվային աշխատանքը, որ քեմալականները եռանդով տարան հայկական

[1] Г. В. Чичерин, Статьи и речи по вопросам международной политики, с. 196.

[2] Օլիվեր Պոլդուին, Վեց բանտ և երկու յեղափոխություն, Ալեքսանդրիա, 1933, էջ 27։

բանակը ներսից քայքայելու համար։ Ինչպես միշտ, թուրքերը այս անգամ էլ դիմեցին անլուր խորամանկության։ Նրանք գործի դրեցին իրենց զենքերից մեկը՝ թուրքական կեղծ կոմունիստական կուսակցությունը, հրապարակ բերեցին իթթիհադական-միլլիական «կոմունիզմի» խեղկատակությունը։ Քեմալական գործակալները սկսեցին հայկական զորքի մեջ կեղծ լուրեր տարածել, թե «քեմալականները նույնպես բոլշևիկներ են» և որ քեմալական զորքերի մեջ նաև «ռուսներ կան»։ Կրելով կոմունարկաներ, իսկ դրանց վրա՝ կարմիր կիսալուսին ու հնգաթև աստղ[1], պարզելով նաև կարմիր դրոշակներ, քեմալական կեղծ կոմունիստները դաշնակցական զինվորներին կոչ էին անում «լինել ինտերնացիոնալիստներ», չդիմադրել Հայաստան ներխուժած թուրքական զավթիչներին, չենթարկվել սեփական հրամանատարներին, զենքն ուղղել նրանց դեմ»[2]։ Հայ զինվորների մեջ արձագանք էր գտնում քեմալականների տարածած այն սուտը, թե «հեղափոխական թուրքերը» հաշիվներ ունեն միայն դաշնակների հետ և որ եթե սրանք զրկվեն իշխանությունից, ապա «եղբայր թուրքերը» բոլոր պայմանները կստեղծեն, որպեսզի հայ ժողովուրդը նոր ձևով կառուցի իր կյանքը։

Դաշնակներն իրենց հերթին կրկնում էին քեմալականների կեղծիքները, ձգտելով դրանք ուղղել Սովետական Ռուսաստանի դեմ։ Հայկական զորքը կազմալուծվեց։ Հայերի հասկացությունից վեր էր կռվել ռուսների, առավել ևս ռուս բոլշևիկների դեմ, եթե նրանք նույնիսկ գային «թուրքերի հետ»։ Հայաստանի աշխատավոր դասակարգը մտածում էր, թե «Ռուսաստանը մեր բարեկամն է, բոլշևիկները մեր փրկարարները և ազատարարներն են, բոլշևիկների դեմ մենք չենք պայքարի»։ Հայ զինվորի խղճի դեմ էր նաև «բոլշևիկացած» և «ռուսների հետ բարեկամացած» քեմալականներին վնաս հասցնելը, նույնիսկ եթե այդ զինվորը դաշնակցական բանակային համազգեստ էր կրում։ Կարծելով, թե քեմալականները իրոք Ռուսաստանի անկեղծ բարեկամներն են, հայ զինվորները մտածում էին, որ եթե նրանց չդիմադրեն, դրանով իսկ կօգնեն բոլշևիկներին, առաջին հերթին հայ բոլշևիկներին՝ տապալելու դաշնակների ատելի տիրապետությունը և կազմակերպելու Հայաստանի բանվորների և գյուղացիների պետությունը։

Չնայած դրան, սխալ կլիներ կարծել, թե հայկական բանակն ընդհանրապես ի վիճակի չէր դիմադրելու թուրքական զավթիչներին։ Շուրջ 50 հազարանոց այդ բանակում մեծ թիվ էին կազմում առաջին համաշխարհային պատերազմի մարտերում կոփված կադրային ռազմիկները, որոնցից շատերը պարգևատրված էին Գեորգիևյան խաչերով և ռուսական այլ պարգևներով։ Հայկական զորքում կար ռուսական զինվորական ծառայություն անցած 10 գեներալ, 1400-ից ավելի բարձրաստիճան սպա, շտաբայիններ, ինտենդանտներ և զորքերի այլ տեսակների հրամանատարներ։ Բանակն իր սպառազինությունների մեջ ուներ ռուսական և անգլիական հեռահար թնդանոթներ, հեծելազորային զորամասեր, զրահագնացքներ, գնդացրային ջոկեր, կապի և սակրավոր վաշտեր։ Մի խոսքով, չի կարելի ասել, թե դա մարտունակ բանակ չէր։ Բայց բանն այն է, որ այդ բանակը չէր կռվում։ Զորքերը մասսայաբար լքում էին դիրքերը, «թուրք եղբայրների» առջև բացում ռազմական ամրությունների դռները, հանձնվում քեմալական թիկնոց հագած զորշ գայլի ողորմածությանը։ Ընդամենը երկու և կես տարի առաջ, 1918 թվականի մայիսին, Սարդարապատի հերոսական ճակատամարտը հաղթականորեն վարած հայ փորձված հրամանատարներ Դանիել բեկ Փիրումյանը, Սիլիկովը և մյուսներն անզոր էին կասեցնելու իրենց զորքերի կազմալուծման կործանարար ընթացքը։ Ցնցված այդ բոլորից, հայկական բանակի կադրային շատ սպաներ ինքնասպանությամբ վերջ էին տալիս իրենց կյանքին։

Այդ ամենը տեսնելով, քեմալական արևելյան ճակատի հրամանատարությունը, որի տրամադրության տակ, ինչպես վերևում ասվեց, 50 հազարի հասնող բանակ կար, կռվի առաջավոր գծում սկսեց պահել 8—10 հազարից ոչ ավելի զորք։

Սովետական Ռուսաստանի կառավարությունը շարունակում էր իր անդուլ ջանքերը ահավոր նոր դժբախտությունից հայ ժողովրդին փրկելու համար։ ՌՍՖՍՀ կառավարությունը դաշնակցական կառավարությանն առաջարկեց թույլատրել, որպեսզի կարմիր բանակի զորամասերը մտնեն Հայաստան և պատնեշ կանգնեն թուրքական զորքերի դեմ։ Բայց դաշ-

[1] Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Երևան, 1960, էջ 397։

[2] ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 714, թ. 4 (էջի մյուս երեսը)։

[1] Տե՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 706, թ. 3։

նակները, կուրացած բոլշևիզմի դեմ տածած թշնամանքով, հավատարիմ իրենց հակասովետական պայքարի ընթացքին, հայ ժողովրդի համար ճակատագրական այդ պահին նույնիսկ մերժեցին սովետական կառավարության մարդասիրական առաջարկը։

Թուրք-հայկական պատերազմում թերևս ամենաողբերգականը 1920 թվականի հոկտեմբերի 30-ին համարյա առանց կռակոցի Կարսի անառիկ բերդի հանձնումն էր թշնամուն։ Վերևում հիշատակված Օլիվեր Բոլդուինը անդրադառնալով Կարսի խայտառակ անկման հանգամանքներին, նշում էր, որ քաղաքի բերդի միայն երկու թնդանոթներից մի քանի արկ արձակվեց բերդը գրոհող քեմալական զորքերի վրա[1]։

1921 թվականի սկզբին Ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակով ամերիկահայ գաղութների առաջնորդ նշանակված Տիրայր սրբազանը էջմիածնից իր պաշտոնավայրը ուղևորվելիս կանգ է առնում Փարիզում և հյուրընկալվում Պողոս Նուբարի մոտ։ Վերջինս նրա պատվին ճաշկերույթ է տալիս, որին ներկա է լինում նաև Անդրանիկ Օզանյանը։ Նա սրբազանին հարցուփորձ է անում Հայաստանում տեղի ունեցած ողբերգական դեպքերի մասին, կապված թուրք-հայկական պատերազմի հետևանքների հետ։ Ահա նրանց զրույցից մի հատված.

«— Սրբազան, Կարսի աղետեն առաջ հայկական բանակը որքա՞ն զինուոր ուներ։

— 47.000, զորավար։

— Քանի՞ զորավար և սպա ունեիք։

— Տասի մոտ զորավարներ և հազարի չափ ալ այլ և այլ աստիճանի սպաներ։

— Կարսի բերդերը քանի թնդանոթ ունեին։

— 300 հատ։

— Որչա՞փ արագահարուած (գնդացիր։— Հ. Ս.)։

— Մոտավորապես 200 հատ։ Կարսի բերդերեն երկու թընդանոթ միայն տասը վայրկեանի չափ խոսեցան և յետոյ լռեցան, թուրքերը եկան և 11.000 հայ գերիներ վերցրին։

— Թրքական ուժերը որչա՞փ էին, սրբազան։ Լսած եմ, թե ութ հազար հոգի եղած են, իրա՞վ է։

— 7 800 հոգի եղած է ամբողջը և այն ալ ոչ կանոնավոր զինուոր»[1]։

Ապա թուրքերը նույնպիսի հեշտությամբ նոյեմբերի 5-ին գրավեցին Ալեքսանդրապոլը և նրա նշանավոր բերդը։ Ինչպես քաղաքի մատույցներում, այնպես էլ քաղաքում թշնամին չհանդիպեց ո՛չ զորքի և ո՛չ էլ բնակչության դիմադրության[2]։

Անդրադառնալով թուրք-հայկական պատերազմի ընթացքին և ավարտին, Բ. Բորյանը գրում էր. «Ամբողջ զորամասերի կամավոր հեռանալը ռազմաճակատից և դասալքությունը լուծեցին հարցը, և թուրքերը արագ ու առանց դիմադրության գրավեցին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի կեսը։ Կարսի և Ալեքսանդրապոլի բերդերը քաղաքների հետ թուրքերի ձեռքում էին, և հայկական կառավարությունը ծնկի էր բերվել»[3]։

Գրավելով Կարսը, Արդահանը և Ալեքսանդրապոլը, Կարաբեքիրի զորքերը տիրացան մեծ քանակի ռազմական ավարի, ձեռք գցեցին հարյուրավոր թնդանոթներ, գնդացիրներ, տասնյակ հազարավոր հրացաններ, հազարավոր արկեր, միլիոնավոր փամփուշտներ։ Դրանով Կարաբեքիրը զինեց իր բանակը, որը դարձավ թուրքական ազգային բանակի առավել լավ զինված և տեխնիկապես հագեցված մասը։ Ավելին, իր զորքը լիովին հագեցնելով զավթած ավարով, Կարաբեքիրը ավել մնացած մեծ քանակությամբ զենք, զինամթերք և հանդերձանք ուղարկեց Քեմալին[4]։

Պատերազմը նոր աղետներ բերեց հայ ժողովրդին։ Միլիոնավոր հայերի արյունը դեռ ձեռքերից չլվացած, թուրք զավթիչները, այս անգամ քեմալական արյունարբուները, հայերի արյան նոր բաղնիքներ էին սարքում գրաված շրջաններում։ Շփացած ու հարբած իրենց ազգայնամոլությամբ, առանց ենթարկվելու որևէ պատժի ու հատուցման, նրանք հետևողական կերպով ու աներկբայորեն շարունակեցին երիտթուրքական դահիճների կիսատ թողած գործը։ Թուրքերը, գրում էր Բ. Բորյանը,

---

[1] Տե՛ս Օլիվեր Պոլտուին, Վեց բանտ և երկու յեղափոխություն, էջ 27։

[1] Արսեն Ժամկոչեան, Զորավար Անդրանիկ կը պատասխանե իր հակառակորդներուն, Փարիզ, 1945, էջ 76։

[2] Տե՛ս ՄԼի ՀՄԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 702, թ. 1։

[3] **Б. А. Борьян,** Армения, международная дипломатия и СССР, часть II, с. 121.

[4] Տե՛ս **Мих. Павлович (М. Вельтман),** Революционная Турция, էջ 82։

հայ բնակչության նկատմամբ «կիրառում էին բառիս լրիվ իմաստով բաշիբուզուկական իրավունքի վրա հիմնված կառավարական միջոցներ...»[1]

Կարսը գրավելուց հետո քեմալականներն ամբողջ երկու շաբաթ զբաղված էին քաղաքի և շրջակա գյուղերի հայերին կոտորելով։ «Հայ ազգաբնակչության նկատմամբ Կարսում տաճիկների գործադրած անօրինակ գազանությունները,— գրում էր «Կոմունիստ» թերթը,— գերազանցում են անգամ 1895—1896 թվականներին Սուլթան Համիդի և 1908 թվականին երիտասարդ թուրքերի ձեռքով կազմակերպված կոտորածներին»[2]։ Զավթելով Ալեքսանդրապոլ քաղաքը և գավառը, նրանք սրի քաշեցին 60 հազար հայի, կողոպտեցին բնակչության ողջ ունեցվածքը։ Միայն Աղբուլաղի և Ջաջուռի շրջաններում 1921 թվականին գտնվել է 12 հազար դիակ, որոնց 80 տոկոսը մինչև 12 տարեկան երեխաներ էին։ Թուրքերի գրաված շրջաններում հայ զոհերի թիվը, ոչ լրիվ տվյալներով, հասավ 198 հազարի[3]։

Դաժան բռնությունների էր ենթարկվում նաև Հայաստանի գրաված շրջանների ռուս բնակչությունը։ Միայն Կարսի շրջանում քեմալականները թալանեցին այնտեղի մոտ երեք տասնյակ ռուս մալականների գյուղերը, հրդեհեցին շինությունները[4]։

Քեմալական ջարդարարներից հայ ժողովուրդը փրկվեց սովետական իշխանության շնորհիվ։ 1920 թվականի նոյեմբեր-դեկտեմբերին սովետական կարգեր հաստատվեցին Արևելյան Հայաստանի այն տերիտորիայի վրա, որը գերծ էր մնացել քեմալականների արշավանքից։ Դեկտեմբերի 2-ին Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ Ս. Կասյանի անունով ուղարկած հեռագրում Վ. Ի. Լենինը գրեց. «Հանձին ձեզ ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին»[5]։

Ավելի ուշ, դեկտեմբերի 21-ին, զեկուցումով հանդես գալով սովետների VIII համագումարի ՌԿ(բ)Կ ֆրակցիայում, Վ. Ի. Լենինը նորից անդրադարձավ Թուրք-հայկական պատերազմին։ Խոսելով այդ պատերազմի հետևանքների մասին, նա ասաց. «Թուրքական հարձակումը մեր դեմ էր ուղղված։ Անտանտը մեզ համար էր փոս փորում և ինքն ընկավ այնտեղ, որովհետև մենք ձեռք բերեցինք Սովետական Հայաստանը»[1]։

Սովետական իշխանությանը բաժին ընկան Հայաստան ընդարձակ ու բարեբեր երկրի մի քանի գավառները միայն՝ մեծ մասամբ քարակույտերով ու քարաժայռերով ծանրաբեռ, մեռյալ ու անբերրի։ Բայց ազատության անսահման նախանձախնդիր հայ ժողովուրդը, նա, որ այդ ազատության համար այնքա՞ն արյուն տվեց[2], իր տանջանքներով ու տենչանքներով գնում էր դեպի նոր կյանքի այգաբացը։ «Ռուսաստանն է մեր փրկությունը։ Եվ էս անգամ էլ... ռուսները մեզ ազատեցին վերջնական փչացումից»[3],— 1921 թվականի հոկտեմբերի 6-ին Թիֆլիսից Արշակ Զոպանյանին գրել է Հովհաննես Թումանյանը։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ վճռական շրջադարձ եղավ։ Սկսվեց այդ պատմության նոր դարագլուխը։ Վեց հար-

---

[1] **Б. А. Борьян,** Армения, международная дипломатия и СССР, честь II, с. 135.

[2] «Կոմունիստ», 5 փետրվարի 1921 թ.։

[3] Տե՛ս «Советская историческая энциклопедия», т. I, Москва, 1961, էջ 753:

[4] Տե՛ս «Կոմունիստ», 23 հունվարի 1921 թ.։

[5] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 42, էջ 65։

[1] Վ. Ի. Լենին, Երկ, հ. 42, էջ 154։

[2] Թուրքիայում հայոց առաջին զանգվածային ջարդերից տկսած մինչև 1920 թվականի վերջերը հայ ժողովրդի կրած մարդկային կորուստները հետևյալ թվերով են արտահայտվում։ 1894—1896 թվականներին թուրքերը ոչնչացրին 300 հազար հայի։ 1897—1915 թվականների խժդժություններին զոհ գնաց նվազագույնը 50—60 հազար մարդ։ 1915 թվականի գարնան ու ամռան ամիսներին ամենաանգութ չարչարանքներով ոչնչացան 1,6 միլիոն հայեր։ Հետագա շրջանում, մինչև 1918 թվականի զինադադարը Թուրքիայում սպանվեց կամ հարեմներում ու որբանոցներում թուրքացավ շուրջ 500 հազար հայ։ Զինադադարից հետո քեմալական գնդերը շարունակեցին սպանդի նույն ոճիրը և Կիլիկիայից մինչև Կարս, Նախիջևան և Ալեքսանդրապոլ իրենց հարձակումների ընթացքում ոչնչացրին ավելի քան 300 հազար մարդ։ Իսկ այդ կռիվներին իբրև հետևանք Կովկասյան Հայաստանում 1918—1920 թվականներին, մինչև երկիրը սովետական հանրապետություն դառնալը, սովից ու համաճարակներից մահացան ևս 350 հազար հայեր։ 1922—1923 թվականներին Կիլիկիայում, Իզմիրում և այլ վայրերում քեմալականները ոչնչացրին ևս 200 հազար հայի։ Այսպիսով, թուրքերի գործադրած ցեղասպանության հետևանքով ընդամենը քառորդ դարում՝ 1890-ական թվականների կեսերից մինչև 1920 թվականը հայ ժողովուրդը կորցրեց իր ընդհանուր թվաքանակի ավելի քան 60 տոկոսը՝ ավելի քան 3 300 000 մարդ։

[3] Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարան (ԳԱԹ), ց. 1, գ. 1, № 2658։

յուր տարի շարունակ պարտություններ տեսած ժողովուրդը ազգային ստորացումից, կոտորածներից ու ջարդերից դուրս գալով, կանգնում էր սոցիալիզմի ճանապարհին, որի վրա նա պիտի հեքիաթային վերածնունդ ապրեր, տաներ մեկը մյուսից փառապանծ հաղթանակներ։

Հայաստանում իրենց իշխանությունը կորցրած դաշնակցական պարագլուխները դիմեցին նոր ոճրագործության։ 1920 թվականի դեկտեմբերի 2-ին, այսինքն իշխանությունից զրկվելու չորրորդ օրը, նրանք Թուրքերի կողմից գրավված Ալեքսանդրապոլում պայմանագիր կնքեցին Կարաբեքիրի հետ։ Արդեն լիազորություններից զրկված դաշնակցական պատվիրակությունն իր ստորագրությունով օրինականացրեց քեմալական ագրեսորների տերիտորիալ զավթումները[1]։

Ալեքսանդրապոլի պայմանագրով Թուրքիան Հայաստանից բռնագրավեց Կարսը և Արդահանը, որոնք 1878 թվականից ի վեր Ռուսահայաստանի մասն էին կազմում, Կաղզվանի, Օլթիի, Արդվինի օկրուգները, Սուրմալուի ընդարձակ գավառը Իգդիր քաղաքով, նաև Արարատ լեռը՝ Հայաստանի, հայ ժողովրդի գոյության խորհրդանիշը։ Թուրքիան այդ պայմանագրով Հայաստանից անջատեց նաև նրա հենց կենտրոնում գտնվող Նախիջևանի, Շարուրի և Շահթախտի շրջանները։ Հայաստանի ամբողջ ներքին կյանքը և արտաքին հարաբերությունները լիովին ենթարկվում էին Թուրքիայի վերահսկողությանը։ Այլ խոսքով Հայաստանը Ալեքսանդրապոլի պայմանագրով վերածվում էր Թուրքիայի մի վիլայեթի։

Ալեքսանդրապոլի դաշնագրի դեմ բուռն կերպով բողոքեց Անդրանիկը, բողոքեցին հայ քաղաքական բոլոր կուսակցությունները, բացի դաշնակցությունից[2]։

Անդրադառնալով Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագրի կնքման հանգամանքներին, Գ. Վ. Չիչերինը նշում էր, որ «Հայաստանի համար չափից դուրս ծանր հաշտության պայմանագրի... համաձայն նրա նույնիսկ ձևականորեն անկախ մնացած մասը փաստորեն լրիվ կախման մեջ էր ընկնում Թուրքիայից։ Այդ պայմանագիրը չճանաչվեց ո՛չ Սովետական Հայաստանի, ո՛չ Ռուսաստանի Սովետական միութենական հանրապետության կողմից, և նրա չեղյալ հայտարարելը Ռուսաստանի և Թուրքիայի միջև տեղի ունեցած հետագա բանակցությունների գլխավոր առարկաներից մեկն էր։ Մինչդեռ Թուրքիայի և Ռուսաստանի բանակցությունները սպառիչ քաղաքական համաձայնագրի վերաբերյալ շարունակվում էին»[1]։

«...Թուրքական ռեակցիոն շրջանների ավանտյուրան, որը ռազմական զգալի ուժեր պահանջեց Հայաստանի դեմ ագրեսիայի համար, թուլացրեց Թուրքիային իմպերիալիստների դեմ մղած նրա պայքարում»[2],— ասված է «ՍՍՀՄ արտաքին քաղաքականության պատմություն» կոլեկտիվ աշխատության մեջ։ Չնայած դրան, քեմալականների Հայաստանի հաշվին ձեռք բերած արտաքին քաղաքական հաջողությունները ամրապնդեցին նրանց դիրքերը երկրի ներսում։ Նրանք լիակատար ազատություն տվեցին բանվորների և գյուղացիների դեմ իրենց գործողություններին, ձեռնարկեցին բոլոր միջոցներն՝ ամրապնդելու Թուրք առևտրաարդյունաբերական բուրժուազիայի դիրքերը։

Տեսնելով, որ կեղծ-կոմկուսի գործունեությունն անբավարար է Թուրքիայի մարքս-լենինյան կուսակցությունը քայքայելու համար, քեմալականները որոշեցին արյունալի հաշվեհարդար տեսնել իսկական կոմունիստների հետ, նրանց ֆիզիկապես ոչնչացնելու միջոցով վերջ տալ կոմունիստական շարժմանը երկրում։

Արևելքի ժողովուրդների I համագումարին մասնակցած Թուրքիայի կոմկուսի 9 հոգուց բաղկացած պատվիրակությունը քեմալականների «համաձայնությամբ» 1920 թվականի դեկտեմբերին Բաքվից մեկնեց Թուրքիա՝ այնտեղ կոմունիստական աշխատանք տանելու համար։ Ուղին անցնում էր հենց նոր սովետականացված Հայաստանի վրայով։ Գալով Հայաստան, Թուրքիայի կոմկուսի Կենտրոնական կոմիտեի նախագահ Մուստաֆա Սուբհին, Կենտկոմի քարտուղար Նեժաթը, Կենտկոմի արտա-

---

1 ՏԵ՛ս ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 712, թ. 1—2, գ. 713, թ. 1—3։

2 ՏԵ՛ս Արսեն Ժամկոչեան, Զորավար Անդրանիկ կը պատասխանե իր հակառակորդներուն, էջ 62։

---

1 **Г. В. Чичерин,** Статьи и речи по вопросам международной политики, с. 196.

2 «История внешней политики СССР. 1917—1980», в двух томах, т. I, 1917—1945 гг., с. 144.

սահմանյան բյուրոյի նախագահ Հաքքին, բյուրոյի քարտուղար Մեսուդին, Կենտկոմի անդամներ Նազիմին, Խիլմիոզլուն, Զիտոզլուն հանդիպումներ ունեցան սովետական նորաստեղծ հանրապետության ղեկավար աշխատողների հետ, ելույթներ ունեցան աշխատավորական միտինգներում։ Նրանք իրենց բուռն ուրախությունն էին հայտնում բազմաչարչար հայ ժողովրդի ազատագրության և ազգային ինքնորոշման առթիվ[1]։ Լինելով հայ և թուրք ժողովուրդների բարեկամության ջատագովներ, նրանք իրենց ելույթներում շեշտը դնում էին երկու ժողովուրդների միջև նոր հարաբերություններ ստեղծելու անհրաժեշտության վրա[2]։

Կարսի վրայով Անկարա մեկնելուց առաջ Սուրհին և Նեժաթը Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի հասցեով ուղարկեցին համատեղ ստորագրած մի նամակ, որը տպագրվեց Կենտկոմի օրգան «Կոմունիստ» թերթում։ «Մի քանի օր գտնվելով Հայաստանի տերիտորիայի վրա և ականատես լինելով բազմաթիվ փաստերի և դեպքերի,— գրում էին նրանք,— մենք եկանք այն խոր համոզման, որ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները լցված են պետական նոր կյանք ստեղծելու տենչով։ Այսօր, երբ մենք մեկնում ենք ապստամբած Անատոլիա, հավատացած ենք, որ Հայաստանի խորհրդային հանրապետությունը, իրեն պաշտպան ունենալով աշխատավոր մասսաներին, կհանդիսանա Արևելքում ամենակարևոր հեղափոխական կենտրոններից մեկը»։ Ապա նամակի հեղինակները հավաստիացնելով, որ «մենք Թուրքիայում՝ աշխատավորական մասսաների մեջ կդնենք ամեն տեսակ ուժ և կարողություն Հայաստանի խորհրդային իշխանությունն ամրապնդելու և պաշտպանելու համար», միաժամանակ համոզմունք էին հայտնում, որ իրենց հերթին Հայաստանի կոմունիստները ամեն ինչ կանեն «հայ և թուրք բանվորների ու գյուղացիների միջև եղբայրական հարաբերություններ ստեղծելու» համար։ «Միայն փոխադարձ աջակցության ճանապարհով կարող ենք մեր ստրկացած ժողովուրդների գինվորական մութ և թշնամական ոգացումներն արմատախիլ անել, միայն այդ ճանապարհով կարող ենք թուրքերին և հայերին մոլել իրար ձեռք ձեռքի տալու, կազմելով մի

[1] ՏԼՆ «Կոմունիստ», 31 դեկտեմբերի 1920 թ։

[2] ՏԼՆ «Կոմունիստ», 29 հունվարի 1921 թ։

մարմին և ուղղելով նրան կոմունիզմի լուսավոր հորիզոնին, որը խոստանում է ամբողջ մարդկության հավիտենական երջանկություն»[1],— այսպես էին վերջացնում նրանք իրենց նամակը։

Սուրհիի խմբին միացան Անատոլիա մեկնող այլ կոմունիստներ։ Անցնելով թուրքական սահմանը, նրանք անմիջապես հանդիպեցին իշխանությունների թշնամական վերաբերմունքին։ Ամենուրեք սկսվեցին դրպարտիչ լուրեր պատվել, թե Սուրհին և նրա ընկերները հայերի և հույների գործակալներն են, թե նրանք ռուս բոլշևիկների կողմից կաշառվել են, որպեսզի Թուրքիայում ցանեն ներքին պառակտումների սերմեր, կրոնը հետապնդելու միջոցով վերջնականապես թուլացնեն Թուրքիան և նրան հաշտեցնեն դարավոր թշնամիների հետ։ Արդեն Էրզրումում իշխանությունները տգետ ամբոխի ցույց կազմակերպեցին։ Ոստիկանության դրդմամբ քրեական տարրերը հարձակվեցին կոմունիստ ընկերների վրա, քարկոծեցին նրանց և դեռ այդտեղ փորձեցին արյունալի դատաստան տեսնել նրանց հետ։

Անկարա հասած, քեմալական կառավարության գիտությամբ և հրահանգով Թուրքիայի կոմկուսի ղեկավարները ձերբակալվեցին։ Նրանց՝ Կենտկոմի նշված անդամներին և 12 ուրիշ կոմունիստների տարան Տրապիզոն և հունվարի լույս 29-ի գիշերը, նստեցնելով մոտորային նավակներ, դուրս բերեցին բաց ծով։ Դահիճները սվինահարեցին բոլորին և, դիակներին քար կապելով, նետեցին ջուրը։ «Սև ծովը ալեկոծ էր»,— այս էր եղել քեմալականների սառնարյուն պատասխանը սովետական պաշտոնյաների հարցապնդմանը։

Ի դեմս տանջամահ արված Մուստաֆա Սուրհիի կոմունիստական շարժումը կորցրեց Թուրքիայի բանվորության ամենաանձնավոր հեղափոխական գործչին։ Նա թուրքական կապիտալիստների ու կալվածատերերի և Անկարայի կեղծ-կոմունիստական կուսակցության անհաշտ հակառակորդն էր, որոնց անխնա մերկացնում էր իր բազմաթիվ հոդվածներով ու ելույթներով։ Միաժամանակ Սուրհին ջերմորեն էր վերաբերվում եվրոպական իմպերիալիստների դեմ ուղղված Անատոլիայի գյուղա-

[1] «Կոմունիստ», 31 դեկտեմբերի 1920 թ։

[2] Մ. Մեսուդ (Մ. Վելտման) Революционное Турция. Հայերեն՝ Ս. Ն. Կարապետյան. 1920 թվականի հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը։ «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1965, էջ 52։

ցիության ազատագրական պայքարին, հնարավոր բոլոր միջոցներով նպաստում էր այդ պայքարի հաջողությանը։ Սուբհին և նրա մարտական ընկերները արյամբ ապացուցեցին իրենց հավատարմությունը կոմունիստական իդեալներին։

Թուրք կոմունիստների նկատմամբ քեմալական դահիճների գազանային հաշվեհարդարը կայրությամբ դատապարտեցին սովետական մարդիկ։ Մուստաֆա Սուբհիի և նրա ընկերների եղեռնական մահը խոր վիշտ պատճառեց հայ կոմունիստներին, Սովետական Հայաստանի աշխատավորությանը։

Տրապիզոնյան հաշվեհարդարից հետո թուրքական իշխանությունները գործեցին մի շարք ստոր չարագործություններ ևս։ Երկու շաբաթ հետո նույն բախտին արժանացավ Սովետական Ռուսաստանից Անատոլիա անցած Նազիմ-Ագյախը։ Կարսում քեմալականները կախեցին Արևելյան Անատոլիայի ազգային շարժման կազմակերպիչներից մեկին՝ արիասիրտ մարտիկ Մեսուդին։ Սովետական թուրքագետ Ա. Շամսուտդինովը գրում է. «Հենց այդ շրջանում սպանվեցին նաև կոմունիստական կուսակցության ակտիվ գործիչ, կապիտան Գուլյամ Նեգիմը և թուրքական ազգի տասնյակ այլ անհայտ հերոսներ։ Գագանային այդ սպանությունները թուրքական բուրժուազիայի դասակարգային ատելության արտացոլումն են»[1]։ Միաժամանակ Անատոլիայում դատի տրվեցին 27 ուրիշ կոմունիստներ։ 1922 թվականի սեպտեմբերին Թուրքիայի կոմկուսը օրենքից դուրս հայտարարվեց, անցավ խոր ընդհատակ, որտեղ և գտնվում է մինչև այսօր։

Չնայած դրան, քեմալականները շարունակում էին հաջողությամբ խաղալ «հակաիմպերիալիստական» ուժի, համաշխարհային հեղափոխական շարժման ջատագովների և սովետական երկրի «բարեկամների» դերը։ Բայց արդեն այն ժամանակ գնալով հաճախակի էին լսվում բողոքի ձայներ քեմալականների վարած հակաժողովրդական քաղաքականության նկատմամբ, սովետական պարբերական մամուլի էջերում ավելի ու ավելի ուժգին էին քննադատության ենթարկվում «նոր Թուրքիայի» կառավարողները։

Այսպես, «Խորհրդային Հայաստան» թերթը 1921 թվականի օգոստոսին «Թուրքիան և իր ազատագրական պայքարը» հոդվածում բացահայտում էր քեմալականների հակաժողովրդական էությունը, գրելով, որ իրենց «քաղաքական ձգտումներով ու տնտեսական հեռանկարներով ղեկավարվող Անատոլիայի վարիչները համաշխարհային հեղափոխական շարժումը նկատել են միայն որպես նպաստավոր մի երևույթ, որից կարելի է օգտվել, և որի մասին կարելի է խոսել այնքան, որքան դա ձեռնտու է թուրքերի քաղաքական շահերին»[1]։ Նշելով, որ քեմալական շարժումը գնալով ավելի ու ավելի ռեակցիոն է դառնում, թերթը գրում էր. «Սկզբներում, 1919 թվականին, երբ Անատոլիայում ապստամբները դեռ նոր էին ձեռնարկել անկախության պայքարին, նրանք սիրով խոսում էին (տես էրզրումի «Ալ-Բայրակ» թերթը) համաշխարհային հեղափոխության, ռուսական հեղափոխության նվաճումների և ձգտումների մասին։ Բայց երբ արդեն Անգորայում հաստատվեց օրինական կառավարությունը, երբ վերածնվեցին Թուրքական կայսրության վերականգնումի հույսերը, այդ բոպեից Անատոլիայի ղեկավարները ոչ միայն լռում են համաշխարհային հեղափոխության մասին, այլև իրենց սակավաթիվ «սոցիալիստներին» ու ռեֆորմիստներին խստորեն արգելում են անգամ ակնարկել այդ մասին»[2]։ Դա պատահական չէ, շարունակում էր թերթը, քանի որ քեմալականները, ինչպես կրակից, սարսափում են ժողովրդական մասսաների սոցիալական ելույթներից։ «Չէ՞ որ թուրք գյուղացին և բանվորը, որոնք հեծում են կալվածատերերի, բեգերի, փաշաների, բռնավոր բյուրոկրատիայի կեղեքման տակ և տալիս են պետության պահպանման համար պահանջվող ամբողջ արյունն ու ամբողջ ծախսերը, այդ դեպքում կբարձրացնեին ապստամբության դրոշը այսօրվա իրենց տերերի դեմ։ Չէ՞ որ թուրք արիստոկրատիայի, հոգևորականության դիկտատուրան այդ դեպքում, ռուսական հեղափոխության օրինակով, կփոխարինվեր բանվորագյուղացիական դիկտատուրայով»[3]։ Թերթը նախազգուշացնում էր, որ չնայած Թուրքիայի նոր կառավարողները հրապարակայնորեն հրաժարվել են պանթուրքիզմի քաղաքականությունից, սակայն նրանք ներքնապես բնավ ձեռք չեն քաշել այդ խելացնոր գաղափարից և բացառված չէ, որ օգտագործելով մահմեդական կրոնն՝ առաջիկայում փորձ կանեն թափանցելու Ռուսաստանի

---

[1] **А. М. Шамсутдинов,** Национально-освободительная борьба в Турции (1918—1923 гг.), с. 173.

[1] «Խորհրդային Հայաստան», 6 օգոստոսի 1921 թ.։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը։

Թուրքալեզու ժողովուրդներով բնակեցված շրջանները։ «Թուրքական ռոմանտիզմը մինչև այսօր էլ հնարավոր է համարում պանթուրանիզմը և կառչած կմնա այդ գաղափարին, քանի դեռ մահմեդական կրոնի կապը ղեկավար դեր կխաղա մուսուլման ժողովուրդների մտածության մեջ։ Տաճկաստանի նվաղագույն ծրագիրը մոտիկ ապագայի համար կլինի Կովկասի և Հյուսիսային Ադրբեջանի միացումը որպես տնտեսապես հարուստ երկրներ, որոնց մեջ բավական պատսպարվել է թուրքական կուլտուրան (լեզուն ու գրականությունը) վերջին տասնամյակի ընթացքում։

Բայց Թուրքիան իհարկե մոռանում է, որ ոչ մի տվյալ չունի այդ նվազագույն ծրագիրն անգամ իրականացնելու, բացի տեղական ժողովուրդների միջև իր էմիսարների և ագիտատորների զարթնեցրած որոշ հակումից դեպի Թուրքիան, որ պահպանվել է վերջինիս զինվորական հաջողություններով»[1]։

Քաղաքական պայմանագիր կնքելու համար 1921 թվականի մարտին Մոսկվայում բացվեց սովետա-թուրքական կոնֆերանս։ Նախօրյակին, փետրվարի 18-ին, դաշնակցականները Հայաստանում խռովություն էին բարձրացրել, գրավել Երևանը և հանրապետության մի քանի շրջաններ։ Ստեղծվել էր այսպես կոչված «Հայրենիքի փրկության կոմիտե» Սիմոն Վրացյանի գլխավորությամբ։ Իրենց խելահեղ քայլով «Հայրենիքի փրկարարները» նոր դժբախտություններ բերեցին արյունաքամ երկրին, նոր հարված հասցրին նրա կենսական շահերին։

Թե այդ օրերին դավաճանության ինչպիսի մրցանիշներ էին խփում դաշնակցական արկածախնդիրները, լավ երևում է թեկուզ այն հեռագրերից, որ Անկարա և Մոսկվա էր ուղարկել քաղաքական հոգեվարքի մեջ գտնվող Սիմոն Վրացյանը։ Այդ պնակալեզը, ընկնելով քեմալական մարդասպանների ոտքերը, նրանցից գթություն էր աղերսում, նույնիսկ օգնություն մուրում։ 1921 թվականի մարտի 15-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովին հղած հեռագրում Վրացյանը գրում էր. «Իմ կառավարությունը Տաճկաստանի և Հայաստանի միջև միջազգային նորմալ և բարեկամական հարաբերություններ ստեղծելու բաղա է համարում այն պայմանները, որոնք ձևակերպված են անցյալ տարվա դեկտ[եմբերի] 2-ին Ալեք[սանդրա]պոլում կնքված հայ-տաճկական դաշնագրի մեջ, և հետագային ստեղծված իրական պայմանները»[1]։ Հովհ. Քաջազնունու, Հ. Օհանջանյանի, Վ. Մինախորյանի և իր «շրջապատի մարդոց գիտությամբ և հավանությամբ»[2] Ս. Վրացյանը կազմում և երեք օր հետո, մարտի 18-ին, Երևանում թուրքական արևելյան ճակատի հրամանատարության ներկայացուցիչ Բեհաեդդինի միջոցով Անկարա, Ազգային մեծ ժողովին է ուղարկում նոր դիմում, չմոռանալով միջնորդին խնդրել, որ այն «շտապ կերպով հասցնի» թուրքական կառավարությանը, որպեսզի և «շուտափույթ պատասխան ստացվի»[3]։ Վրացյանը հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներին խնդրում էր. «1.— Վերադարձնել Երևանի ռազմաճակատում գտնվող հայ զինվորական գերիներին։ 2.— Տալ որոշ պայմանով հայ բանակին ռազմամթերք, առաջին հերթին ռուսական երեք գծանի հրացանի կամ տաճկական մաուզերի փամփուշտներ և կամ ռոս ու լեբելի սիստեմի հրացաններ։ 3.— Հաղորդել մեզ, թե արդյոք Ազգային մեծ ժողովի կառավարությունը հնարավոր գտնո՞ւմ է հասցնել Հայաստանին զինվորական օժանդակություն և, եթե կարող է, ի՞նչ չափով ու եղանակով և ի՞նչ ժամանակամիջոցում»[4]։ Ապա դիմումի վերջում Վրացյանը գրում էր. «Սույն դիմումը անելով՝ Հայաստանի կառավարությունը հիմնվում է այն բարեկամական հարաբերությունների վրա, որոնց հիմքն է դրված Ալեքսանդրապոլի դաշնագրից սկսած և որոնք խանգարված էին բոլշևիկների իշխանության ժամանակ»[5]։

Որքան գարշելիության չափ զզվելի էին Անկարա ուղարկած գետնամած աղաչանքները, նույնքան ամբարտավան էր մարտի 12-ին Ս. Վրացյանի կողմից Մոսկվա, ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողկոմ Գ. Վ. Չիչերինին ուղարկած հեռագրի տոնը։

Այս հեռագրի առիթը Մոսկվայի սովետա-թուրքական կոնֆերանսն էր։ Դեռ 1921 թվականի փետրվարին Սովետական Հայաստանի արտաքին գործերի ժողկոմ Ալեքսանդր Բեկզադյանը, գլխավորելով հայկական պատվիրակությունը, մեկնել էր Մոսկվա, նախատեսվող կոնֆերանսին մասնակցելու համար։

[1] «Խորհրդային Հայաստան», 6 օգոստոսի 1921 թ.։

[1] Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով, հ. Զ., տպ. «Համազգային», Բեյրութ, 1967, էջ 66—67։

[2] Նույն տեղը, էջ 68։

[3] Նույն տեղը, էջ 67—68։

[4] Նույն տեղը, էջ 68։

[5] Նույն տեղը։

Եվ ահա, հենց կոնֆերանսի օրերին Մոսկվայում ստացվեց Ս. Վրացյանի հեռագիրը։ Դաշնակ արկածախնդիր շեֆը հոխորտում էր, թե քանի որ Հայաստանում արդեն տապալված է սովետական իշխանությունը, ուստի Ալ. Բեկզադյանն այլևս լիազորված չէ կոնֆերանսում ներկայացնելու Հայաստանը։ «...Բեկզադյանի հանդես գալն իբրև Հայաստանի ներկայացուցչի՝ իրեն չպատկանող իրավունքների մի կոպիտ շահագործում է հանդիսանում»,— ասված էր հեռագրում։ Ուստի «Հայաստանի կառավարությունը սրանով հայտարարում էր, որ իրեն համար պարտավորեցուցիչ չեն Հայաստանի հանրապետության անունով Բեկզադյանի կնքած բոլոր պայմանագրերը, նաև նրա կողմից հանձն առնված բոլոր պարտավորությունները, ինչ չափով, ինչ իմաստով էլ լինեն դրանք»[1]։ Ս. Վրացյանի չարաղետ հեռագրի հետևանքն այն եղավ, որ Թուրքական պատվիրակությունը օգտագործեց այդ հանգամանքը և Սովետական Հայաստանի ներկայացուցիչը չկարողացավ մասնակցել կոնֆերանսին, որտեղ քննարկվում էին հայ ժողովրդի համար բախտորոշ հարցեր։

1922 թվականին, Ջենովայի կոնֆերանսի օրերին, հայ ականավոր գրող Ալեքսանդր Շիրվանզադեն տեսակցություն է ունենում սովետական պատվիրակության անդամ Ալ. Բեկզադյանի հետ և զրուցում Հայաստանին վերաբերող հարցերի շուրջը։ Տեսակցության ընթացքում խոսք է գնում Ս. Վրացյանի նշված հեռագրի մասին։ «Անցյալ տարի, —ասում է Ալ. Բեկզադյանը,— երբ ես նոր հայտարարված Սովետական Հայաստանի կողմից իբրև պատգամավոր ուղարկված էի Մոսկվա, խնդրելու, որ Ալեքսանդրապոլի դաշնագրությունը վերաքննվե, ամենուրեք հանդիպեցի կենտրոնական կառավարության բոլոր շրջանների անկեղծ համակրությանը։ Ես լիովին հավատացած եմ, որ այսօր Կարսն էլ իր շրջանով և Նախիջևանի ու Սուրմալուի գավառներն էլ կցված կլինեին Սովետական Հայաստանին, եթե տեղի չունենար դժբախտ դեպք։ ...Երբ ես Չիչերինի մոտ էի և գրեթե ստացել էի նրա հավանությունը՝ Կարսը և հիշյալ նահանգները մեզ վերադարձնելու..., ստացվեց նախկին հանրապետության վարչապետ պ. Վրացյանի չարաբախտ հեռագիրը։ ...Այդ վայրկյանին ես այլևս ոչինչ չէի կարող անել և ստիպված եղա վերադառնալ Կովկաս ձեռնունայն»[2]։

[1] Ս. Վրացեան, *Կեանքի ուղիներով*, հ. Զ., էջ 70։

[2] Շիրվանզադե, *Երկերի ժողովածու*, հ. 9, էջ 580։

Մոսկվայի սովետա-թուրքական բանակցությունները տեղի էին ունենում լարված մթնոլորտում։ Հատկապես մեծ դժվարություն էր առաջ բերում տերիտորիալ հարցերի կարգավորումը։ Թուրքերը ոչ մի մտադրություն չունեին Հայաստանից զավթած հողերից մի թիզ անգամ վերադարձնելու նրան։

Սովետական Ռուսաստանը չէր կարող նոր բարդություններ ստեղծել Թուրքիայի հետ հարաբերություններում, որը պատրաստ էր նետվելու Անտանտի գիրկը։ Բանն այն է, որ այն օրերին, երբ Թուրքական պատվիրակությունը Մոսկվա էր եկել ՌՍՖՍՀ կառավարության հետ բարեկամության պայմանագիր կնքելու համար, այդ նույն ժամանակ Թուրքական մի ուրիշ պատվիրակություն Լոնդոն էր ժամանել և բանակցում էր անգլիական կառավարության հետ։ Քեմալը բոլշևիկների «հավատարիմ զինակիցը» լինելով, առիթը բաց չէր թողնում անգլիացիներին ներշնչելու, թե պատվար է ստեղծում բոլշևիզմի դեմ։ Այդ շրջանում ոչ միայն քեմալականներն էին լայն գործունեություն ծավալել Անգլիային և Ֆրանսիային մերձենալու համար, այլև Թուրքական կառավարության հանձնարարությամբ նույն գործին լծվել էին Եվրոպայում ապաստանած իթթիհադական գործիչները։ Օրինակ, դեռ այն ժամանակ հայտնի էր դարձել, որ 1921 թվականի փետրվարին Թալեաթը Բեռլինից գալով Ժնև, այնտեղ տեսակցություն էր ունեցել անգլիական մի դիվանագետի հետ՝, որին քեմալականների անունից հավաստիացրել էր, որ «նոր Թուրքիայի» կառավարողները Անգլիայի և նրա դաշնակիցների հանդեպ տածում էին անկեղծ համակրանք։

Դեռ 1918 թվականից Բեռլինում ապաստան գտած կատաղի իթթիհադական, ապա քեմալական գույն ստացած կաղանցի թաթար Իդրիս բեյը այդ նույն ժամանակ եռանդուն պանթուրքական պրոպագանդա էր մղում, մեկնում Եվրոպական կենտրոններ, ամենուրեք կոչ անում շարունակել անհաշտ պայքարը բոլշևիզմի դեմ։ Երբ Մոսկվայում տեղի էր ունենում սովետա-թուրքական կոնֆերանսը, խիզախ հայորդի Սողոմոն Թեհլիրյանը Բեռլինում գնդակահարեց հայ ժողովրդի արյունարբու դահիճ Թալեաթին։ Մեծ ոճրագործի հուղարկավորության ժամանակ հանդես գալով

[1] Տե՛ս Սողոմոն Թեհլիրեան, *Վերյիշումներ*, էջ 288։

դամբանական ճառով, Իդրիս բեյը Թուրքերին և բոլոր մուսուլմաններին կոչ էր անում չընկնել «բոլշևիկյան ծուղակը», շարունակել պայքարը «մուսուլմանների բնական թշնամու»՝ Ռուսաստանի դեմ, հետևողականորեն շարունակել այն գործը, որին իր կյանքը անմնացորդ նվիրաբերել է Թալեաթը։

Ահա թե ինչու Վ. Ի. Լենինը նախազգուշացնում էր. «Թուրքիան ղեկավարում են կադետները, օկտյաբրիստները, ազգայնականները, որոնք պատրաստ են մեզ վաճառել Անտանտին»[1]։ Սովետական Ռուսաստանի կառավարությունը 1921 թվականի մարտի 16-ի սովետա-թուրքական պայմանագրով ստիպված էր Թուրքիային զիջել նրա գավթած տերիտորիաների մեծ մասը[2]։ Սովետական կողմը համաձայնեց նաև կենտրոն ունենալ Բաթումի նավահանգիստը, ստեղծել մուսուլմանական բնակչությամբ Աջարական Ինքնավար Հանրապետություն, ինչպես և կազմավորել Նախիջևանի միջանկյալ Ինքնավար Հանրապետությունը՝ Սովետական Ադրբեջանի պրոտեկտորատի տակ։

Անդրադառնալով թուրք-հայկական պատերազմի արդյունքներին և Մոսկվայի կոնֆերանսի բանակցություններին, Ա. Ֆ. Միլլերը նշում է. «Հայ ժողովուրդը շատ զոհեր կրեց թուրքական շովինիստների այդ թալանչիական քաղաքականությունից»[3]։ Իր հերթին ֆրանսիացի հետազոտող Ժ. Կայզերը շեշտում է, որ Մոսկվայի բանակցությունները ընդհանուր առմամբ խիստ նպաստավոր եղան Թուրքիայի համար, որը շատ ավելին ստացավ, քան տվեց սովետներին[4]։ Նա գրում է, որ մարտի 16-ի պայմանագիրը «անկասկած քաղաքական հաղթանակ եղավ թուրքական նացիոնալիստների համար»[1]։

Մոսկվայի կոնֆերանսից հետո թուրքերը փորձ արեցին չկատարել կոնֆերանսի որոշման այն մասը, որը վերաբերում էր Ալեքսանդրապոլ քաղաքին և գավառին։ Օլիվեր Բոլդուինը, որը 1921 թվականի գարնանը Հայաստանից Թուրքիայի վրայով մեկնել էր Եվրոպա, նկարագրելով քեմալական զորքերի օկուպացման տակ գտնվող Ալեքսանդրապոլը, գրում էր, որ քեմալականները հաստատապես վճռել էին Թուրքիային միացնել այդ քաղաքը և նույնանուն գավառը։ Նրանք ուղղակի ասում էին. «Պատճառ չկա, որ Ալեքսանդրապոլը վերադարձնենք հայերին. դա թուրքական քաղաք է»[2]։

Օկուպանտները Ալեքսանդրապոլի խաղաղ բնակիչներին հարյուրներով գնդակահարում էին հնարովի պատրվակներով, կողոպտում ու տանում ամեն ինչ[3]։ Նրանք ամենափոքր անգամ հաշվի չէին առնում բոլշևիկների բողոքները։ Քեմալականները արհամարհանքի ու ծաղրի էին ենթարկում օկուպացված Ալեքսանդրապոլում հայ բոլշևիկների ստեղծած հեղկոմը, որը կյանքի էր կոչվել «թուրք բոլշևիկների» օգնությամբ քաղաքում վերացնելու դաշնակների տիրապետության հետևանքները և հաստատելու սովետական կարգեր։ Ալեքսանդրապոլի հեղկոմը շուտով համոզվեց, որ Հայաստան արշաված թուրքերի մեջ չկան բոլշևիկներ, որ քեմալականները հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներն են և ոչնչով չեն տարբերվում երիտթուրքական դահիճներից[4]։ Հեղկոմի անդամները բոունցքները սեղմած անզոր զայրույթով տեսնում էին, թե ինչպես են քեմալականներն անպատիժ մորթում, բռնադատում և կողոպտում հարազատ ժողովրդին[5]։

Համառորեն մնալով Ալեքսանդրապոլում, թուրքերը բոլոր միջոցներով ձգտում էին Հայաստանի շրջափակման օղակը նեղացնել, մանուկ սովետական հանրապետությունը կտրել Ռուսաստանից։ Ալեքսանդրապոլի երկաթուղին իր ձեռքում պահելով՝

---

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 42, էջ 154։

2 Մոսկվայում հաջողվեց համաձայնություն ձեռք բերել Ալեքսանդրապոլ քաղաքը և գավառը Սովետական Հայաստանին վերադարձնելու մասին։ Բայց Թուրքերին մնացին Հայաստանից խլած մյուս տերիտորիաները՝ 19.915 քառ. կմ տարածությամբ (տե՛ս «Бюллетень Центрального статистического управления», 1921 г., № 55, էջ 10)։ Մոսկվայի պայմանագրով որոշվեց սովետա-թուրքական այն սահմանագիծը, որը գոյություն ունի մինչև այժմ։ Այդ պայմանագիրը ստորագրելուց յոթ ամիս հետո՝ 1921 թվականի հոկտեմբերի 13-ին, ՌՍՖՍՀ ներկայացուցչի մասնակցությամբ Թուրքիայի և Անդրկովկասի երեք հանրապետությունների միջև Կարսում կնքվեց պայմանագիր, որն ըստ էության Մոսկվայի պայմանագրի վերահաստատումը լինելով, որևէ փոփոխություն չմտցրեց ստեղծված սահմանային ռեժիմի մեջ։

3 **А. Ф. Миллер,** Краткая история Турции, с. 183—184.

4 Տե՛ս **Ж. Кайзер,** Европа и новая Турция, էջ 52։

1 **Ж. Кайзер,** Европа и новая Турция, с. 54.

2 Օլիվեր Պոլտուին, Վեց բանտ և երկու յեղափոխություն, էջ 181։

3 Տե՛ս «Կոմունիստ», 27 և 28 հունվարի 1921 թ. և 2 և 3 փետրվարի 1921 թ.։

4 Տե՛ս «Կոմունիստ», 3 փետրվարի 1921 թ.։

5 Տե՛ս «Կոմունիստ», 8 փետրվարի 1921 թ.։

Թուրքիան փակել էր Սովետական Հայաստանը արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհը։

Չնայած ՌՍՖՍՀ և Սովետական Հայաստանի կառավարությունների բազմաթիվ բողոքներին, Քյազիմ Կարաբեքիրը հրաժարվում էր իր ասկյարներին դուրս հանել Ալեքսանդրապոլից, հայտարարելով, որ միայն զենքի ուժով կարող են թուրքական զորքերին տեղից շարժել։ Այդ մասին Գ. Կ. Օրձոնիկիձեն հաղորդում է Գ. Վ. Չիչերինին, ավելացնելով, որ Կարաբեքիրը ասել է նաև, թե ինքը չի ճանաչում Մոսկվայի դաշնագրի այն կետը, որի համաձայն Ալեքսանդրապոլն անցնում էր Հայաստանին։ Ի պատասխան Օրձոնիկիձեի այդ հաղորդման, Չիչերինը ապրիլի 6-ին նրան շտապ գրում է. «Ալի Ֆուադը (Սովետական Ռուսաստանում Թուրքիայի դեսպան։— Հ. Ս.) ինձ խոստացել է անհապաղ ազատել Ալեքսանդրապոլը։ Նրան իսկույն-ևթ հաղորդում եմ Կարաբեքիրի խուլիգանության մասին, մատնանշելով, որ Թուրքիայի և Սովետական Հայաստանի միջև պատերազմը կնշանակի պատերազմ Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև»[1]։

Այդ օրերին 11-րդ կարմիր բանակի հրամանատար Ա. Ի. Գեկկերը Ալեքսանդրապոլի մոտ հանդիպում է Կարաբեքիրի հետ և պահանջում զորքերն անմիջապես հանել քաղաքից և Մոսկվայի պայմանագրով որոշված սահմաններից։ Տեսնելով, որ հետագա համառումը կարող է պատերազմ առաջ բերել Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև, զավթիչները հարկադրված եղան հեռանալ Ալեքսանդրապոլից։ Ապրիլի 23-ին 11-րդ կարմիր բանակի մեկ բրիգադ Վելիկանովի հրամանատարությամբ մտավ քաղաք և կանգնեց թուրք-սովետական սահմանի պաշտպանական գծի վրա[2]։

[1] «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 511։

[2] Տե՛ս «Կոմունիստ», 23 ապրիլի, 1921 թ.։

ԲԱՍՄԱՉԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՋԱԽՋԱԽՈՒՄԸ։ ԹՈՒՐՔԱԼԵՋՈՒ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՎԵՐԵՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ։ ՊԱՆԻՍԼԱՄԻԶՄԻ ԵՎ ՊԱՆԹՈՒՐՔԻԶՄԻ ԿՐԱԽԸ ՍՍՀՄ-ՈՒՄ

Միջին Ասիայում սովետական իշխանության հաղթանակից անմիջապես հետո այնտեղ սկսեցին իրականացվել սոցիալ-տնտեսական և քաղաքական արմատական վերափոխումներ։ Տապալված, բայց դեռևս չվերացած շահագործողական դասակարգերը չէին ուզում հաշտվել ստեղծված նոր իրավիճակի հետ, ուստի բռնեցին սովետական կարգերը բռնի ուժով տապալելու, Թուրքեստանի, Խիվայի և Բուխարայի կոմկուսակցությունների միջոցառումները խափանելու ճանապարհը։ Հակահեղափոխությանը հաջողվել էր իշխանության կենտրոնական և տեղական մարմինների ղեկավար պոստերում խցկել իր ներկայացուցիչներին, մի բան, որ զգալի չափով հեշտացնում էր նրա գործը։

Ներքին հակահեղափոխությունը գնալով ավելի ու ավելի շատ էր հակում ցուցաբերում համաձայնության գալու և միավորվելու արտաքին հետադիմական ուժերի հետ, որն ամեն գնով ձգտում էր այդ երկրներում վերականգնել հին կարգերը կամ դրանց զարգացումն ուղղել կապիտալիստական հունով։

Տապալված շահագործող դասակարգերն ու խմբերը՝ ազգային բուրժուազիայի առավել հետադիմական մասը, ֆեոդալները, հին վարչակարգի պաշտոնյաները, ցեղապետերն ու տոհմապետերը, բայերը, իշխանները և մոլլաները, ընդհանրապես մուսուլմանական հոգևորականությունը, որոնց ղեկավարում էին իմպերիալիստական պետությունների գործակալները, ամեն տեսակ միջոցներ էին ձեռնարկում, որպեսզի ստեղծեն կազմակերպված բասմաչական հակահեղափոխական շարժում։ Այդ շարժման գաղափարախոսական դրոշը նացիոնալիզմն էր, որը հանդես էր գալիս պանիսլամիզմի և պանթուրքիզմի տեսքով։

Բասմաչների շարժումը Հոկտեմբերյան հեղափոխության կողմից տապալված տեղական շահագործող տարրերի դասակարգային պայքարի ձևն էր, այդ պայքարի արտահայտությունն ընդգծեմ պրոլետարիատի դիկտատուրայի։ Չարաշահելով ազգային և կրոնական զգացմունքները, երեկվա տիրողները կարողացել էին բասմաչների շարժման մեջ ներգրավել աշխատավոր դեհկանության առանձին խավերի։

Սակայն բասմաչությունն սոցիալ-քաղաքական կայուն բազա չուներ։ Հենց այդ պատճառով էլ ամբողջ քաղաքացիական պատերազմի ընթացքում բասմաչական բանդաները բազավորվում էին գերազանցապես քաղաքներից հեռու ընկած և դժվարամատչելի լեռնային շրջաններում, որտեղից նրանք ավազակային հարձակումներ էին գործում քաղաքների, բանվորական ավանների և կիշլակների վրա[1]։

Դեռևս 1918 թվականի կեսերին բասմաչական հակահեղափոխական շարժում ծավալվեց Ֆերգանայի հովտում։ Նախապես մշակված պլանով Ֆերգանայի հակահեղափոխությանը պետք է աջակցեին ինտերվենտներն ու սպիտագվարդիականները՝ հարձակում գործելով Սեմիրեչիեի, Ակտյուբինսկի, Անդրկասպյան և Ֆերգանայի ռազմաճակատներում։ Այդ պլանի համաձայն միաժամանակ հակասովետական խռովություններ էին իրականացվելու Թուրքեստանի մի շարք շրջաններում։

Այդ նույն ժամանակ Խալ-Խոջայի գլխավորությամբ բասմաչների մի խոշոր ջոկատ սկսեց գործել Օշ գավառում։

Որոշ ժամանակ անց բասմաչական շարժումը ծայր առավ Բուխարայում։ Այստեղ բասմաչները դնում էին հետևյալ պայմանները. «Ռուսական զորքերը, որոնք գրավել են սրբազան Բուխարան, պետք է անպայման դուրս բերվեն, և Բուխարայի կառավարությունը պետք է երկրում կարգուկանոնը պահպանի մուսուլմանական զորքերի օգնությամբ»[2]։ Այդ պահանջը համառորեն առաջադրում էին արևելաբուխարական բասմաչության պարագլուխները՝ Ֆուզայլ Մաքսումին, Դավլյաթմանդ-բիյին և ուրիշներ։

[1] Տե՛ս «Очерки истории Коммунистической партии Таджикистана». Третье издание, т. I, Душанбе, 1980, էջ 50։

[2] Նույն տեղը, էջ 82։

Ժողովրդական հեղափոխության կողմից տապալված շահագործող տարրերի ու նրանց զինված ջոկատների՝ բասմաչների դիմադրությունը Բուխարայում ավելի ուժեղ էր, քան Միջին Ասիայի մյուս շրջաններում։ Դա բացատրվում է նրանով, որ նախկին Բուխարայի խանությունում գոյություն ուներ բազմաքանակ և ազդեցիկ ֆեոդալական վերնախավ։ Բուխարա քաղաքն իրենից ներկայացնում էր Միջին Ասիայում խոշորագույն առևտրական կենտրոն՝ առևտրականների մեծ միջնախավով, բազմաքանակ և ազդեցիկ մուսուլմանական հոգևորականությամբ։ Բուրժուազգայնական տարրերն այստեղ ունեին ուժեղ հենարան, որը խիստ բարդացնում էր Բուխարայի կոմունիստական կուսակցության գործունեությունը, նրանից պահանջում ճկուն և իսկական հեղափոխական տակտիկա։

1918 թվականի կեսերին ծայր առած բասմաչական շարժումը ուժեղացավ և 1919 թվականի գարնանը լայն չափեր ընդունեց։ Ավազակախմբերը թալանում էին բնակչությանը, սպանում սովետական և կուսակցական ակտիվ աշխատողներին, հրդեհում դպրոցական շենքերը, ավերում երկաթուղային ճանապարհները, խախտում հեռախոսային կապը, ոչնչացնում ցանքսերը և այլն։ Այդ ամենը դժվարացնում էր սովետական, տնտեսական և կուլտուրական շինարարությունը։

Հակահեղափոխության արագ ջախջախման համար ստեղծվեց Թուրքեստանյան հատուկ հանձնաժողով։

Պաշտպանություն կազմակերպելու և սպիտակգվարդիական ու բասմաչական հակահեղափոխությունը ճնշելու համար Թուրքեստանյան հանրապետության ռազմահեղափոխական խորհրդի որոշմամբ տեղերում ստեղծվեցին հակահեղափոխության դեմ պայքարի շտաբներ։ Կարմիր բանակի զորամասերի մարտունակությունը բարձրացնելու նպատակով 1919 թվականի մայիսին Թուրքեստանում անցկացվեց կոմունիստների 25 տոկոսանոց զորահավաք[1]։ Մոբիլիզացվում էին չքավորները, ստեղծվում էին կամավորական ջոկատներ, կուսակցական-բանվորական դրուժիններ և ուղարկվում հակահեղափոխության դեմ պայքարի ռազմաճակատ։ Մոբիլիզացվածների թվում զգալի տոկոս էին

[1] Տե՛ս «Очерки истории Коммунистической партии Таджикистана», т. I, էջ 82։

կազմում տեղական ազգությունների անձինք։ Սրանցից կազմված կամավորական ջոկատները գործում էին կարմիր բանակի զորամասերի ստորաբաժանումների հետ համատեղ և անհրաժեշտության դեպքում մասնակցում էին ռազմական այս կամ այն գործողությանը, կատարում բասմաչների հրոսակախմբերի ոչնչացման առանձին հանձնարարություններ։ Նրանք նաև պահպանում էին պահեստները, ռազմական օբյեկտները, ուղեկցում պարենով ու զենքով բեռնված տրանսպորտը։

1919 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացվեցին ռազմական խոշոր գործողություններ, որի հետևանքով Ֆերգանայի հովիտը մաքրվեց բասմաչներից։ Հետապնդվելով կարմիր բանակի զորամասերի կողմից, բասմաչների մնացորդները թաքնվեցին Հարավային Կիրգիզիայի լեռնային շրջաններում և, կրելով մեծ կորուստներ, 1920 թվականի հունվար-փետրվար ամիսներին սկսեցին հանձնվել սովետական հրամանատարությանը։ Մարտի սկզբներին ստիպված էր անձնատուր լինել այսպես կոչված մուսուլմանական սպիտակ բանակի շտաբը Մադամինբեկի գլխավորությամբ[1]։

Սովետական իշխանության մարմինները և կուսակցական կազմակերպությունները ձգտում էին առաջին հերթին քայքայել բասմաչների դեռ գործող հրոսակախմբերը, շարժումից կտրել ֆեոդալական-ցեղային առաջնորդների հետևից գնացող խավար շարքային «ռազմիկներին»։ Դրա շնորհիվ մի շարք դեպքերում հաջողվեց հասնել այն բանին, որ բասմաչների առանձին խմբեր, իսկ առանձին դեպքերում նաև ամբողջ հրոսակախմբեր կամավոր անձնատուր եղան։

1920 թվականի ամռան և աշնան ամիսներին նույնպես Ֆերգանայի հովտում և Հարավային Կիրգիզիայի լեռնային շրջաններում իրականացվեցին մի շարք հաջող գործողություններ բասմաչների հրոսակախմբերը ջախջախելու համար։ Կուսակցական կազմակերպությունները աշխատավորների շրջանում ծավալում էին քաղաքական և ագիտացիոն մեծ աշխատանք։ Կոմունիստ քաղաշխատողները բնակչությանը բացատրում էին բասմաչության դեմ պայքարի նպատակները և խնդիրները։ Հակահեղափոխության դեմ պայքարի հարցերը քննարկվում էին

[1] Տե՛ս «Очерки истории Коммунистической партии Таджикистана», т. I, էջ 51։

տեղական սովետների նիստերում, դեհկանների թումենական, քենտական և ջամոաթական ժողովներում, այսպես կոչված ազդեցիկ տարբերի՝ ցեղապետերի, բայերի և հոգևորականության հետ հրավիրված խորհրդակցություններում։ Բնակչության շրջանում տարածվում էին թռուցիկներ, որոնցում կոչ էր արվում ակտիվ աջակցություն ցույց տալ զորամասերին և սովետական իշխանության մարմիններին։ Ամենուրեք աշխատավոր մասսաները լայնորեն ներգրավվում էին բասմաչության դեմ պայքարի մեջ։

Չնայած բասմաչների ահաբեկչությանը, աշխատավոր մասսաներն ավելի ու ավելի վճռականորեն էին կանգնում սովետական իշխանության կողմը։ Բասմաչության դեմ մղած մարտերում աչքի ընկան մուսուլման աշխատավորներից՝ ուզբեկներից, կիրգիզներից, թուրքմեններից, տաջիկներից, դաղախներից կազմված կամավորական ջոկատները և կարմիր բանակի ստորաբաժանումները։ Ալայում հաջողությամբ իրականացրած օպերացիայի համար Մ. Վ. Ֆրունզեն Թուրքեստանյան ռազմաճակատի գծով տված հրամանով հատուկ շնորհակալություն հայտնեց կիրգիզական դիվիզիոնին, որը գործում էր Լ. Ֆ. Կուժելլոյի հրամանատարությամբ գործող բրիգադի կազմում։ Բասմաչների դեմ մղվող մարտերին մասնակցում էին նաև Առաջին կիրգիզական գունդը, կիրգիզական ջոկատը, որը գործում էր Առաջին հեծյալ բրիգադի կազմում, ինչպես նաև մինչև 1000 մարդ ունեցող պահեստային գունդը, որը բաղկացած էր կիրգիզներից և ուզբեկներից[1]։

1920 թվականին բասմաչության ջախջախման գործում մեծ դեր խաղաց Առաջին թաթարական բրիգադը, որը կազմված էր աշխատավոր թաթարներից, բաշկիրներից և Պովոլժիեի մյուս ազգություններից։

Կարմիրբանակային զորամասերը և կամավորական ջոկատները, որոնք կռվում էին բասմաչների դեմ, ինտերնացիոնալ դաստիարակության և մարտական պատրաստության լավ դպրոց էին անցնում։ Տեղական ազգությունների աշխատավորների թվից պատրաստվում էին սովետական առաջին հրամանատարները։

Բայց բասմաչությունը զենքը ցած չդրեց։ 1921 թվականին

[1] Տե՛ս «Очерки истории Коммунистической партии Киргизии», изд. второе, Фрунзе, 1979, էջ 105։

Միջին Ասիայի մի շարք մարզերում, հատկապես Ֆերգանայում, Բուխարայի և Խորեզմի ժողովրդական հանրապետություններում դեռ ակտիվ կռիվներ էին գնում։ Ավազակախմբեր էին գործում Մերվի և Թեջենի գավառներում, Պոլտորացկու գավառի Կարակալա շրջանում, Կարակումի և Կզլկումի ավազուտներում։

Բասմաչության դեմ մղվող պայքարում էական բեկում տեղի ունեցավ Թուրքեստանի կոմկուսակցության VI համագումարից հետո (1921 թ. օգոստոս), որը նշեց հակահեղափոխական այդ շարժումը ոչնչացնելու քաղաքական, տնտեսական և ռազմական բնույթի կոնկրետ միջոցները։ Համագումարը միաժամանակ խնդիր առաջադրեց վերացնել նախորդ ժամանակաշրջանում թույլ տրված առանձին սխալները։ Մասնավորապես վերականգնվեցին մի քանի հին կրոնական և հասարակական ինստիտուտներ, թույլատրվեց մզկիթների, մեդրեսեների և մակթաբների, կազիների ու բիների դատարանների գործունեությունը։ Կրոնի սպասավորների և նախահեղափոխական տեղական ադմինիստրացիայի թվից ազդեցիկ անձինք, որոնք լոյալ կերպով էին վերաբերվում սովետական իշխանությանը և վայելում էին մասսաների վստահությունը, սկսեցին ներգրավվել կիշլակների ու վոլոստների սովետների կազմի մեջ։ Դրա հետ մեկտեղ կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը իրենց տեղական մարմինների ուշադրությունը հրավիրեցին պանթուրքիզմի և պանիսլամիզմի նացիոնալիստական գաղափարների դեմ պայքարն ուժեղացնելու, գյուղական սովետներում բոլշևիկյան ազդեցությունն ամրապնդելու, դրանցում պրոլետարական և կիսապրոլետարական տարրերը միավորելու անհրաժեշտության վրա։ Այդ քաղաքականությունը մեծապես նպաստեց բասմաչության սոցիալ-քաղաքական արմատների խարխլմանը, դեհկանական զանգվածների վրա նրա ազդեցության թուլացմանը։

Միաժամանակ ուժեղացան ռազմական գործողությունները բասմաչական բանդաների դեմ։ 1921 թվականի ապրիլին կարմիր բանակի զորամասերը և կամավորական ջոկատները Խոջենթի (Տաջիկստան) շրջանում ջախջախեցին կատաղի պանիսլամական Ռախմանկուլու բանդան, մայիսին բասմաչներից մաքրեցին Կոկանդի և Խոջենթի շրջանների նշանակալի մասը[1]։

[1] Տե՛ս «Очерки истории Коммунистической партии Киргизии», էջ 115։

Բուխարայի էմիրը, որ փախել էր արտասահման, 1921 թվականին այնտեղից մի ուղերձ հղեց Բուխարայում գտնվող իր կողմնակիցներին, որտեղ ասված էր. «Պատրաստվեք և սպասեք, շուտով կգա առաջնորդը, որ կգլխավորի իսլամի բանակը»[1]։

«Իսլամի բանակի առաջնորդ» դարձավ միջազգային հին արկածախնդիր, երիտթուրքերի նախկին պարագլուխ, անգլիական իմպերիալիզմի դրածո, հայ ժողովրդի դահիճ Էնվեր փաշան։ Բուխարայի նախկին էմիրի կողմից պաշտոնապես «իսլամի բոլոր զորքերի գլխավոր հրամանատար» նշանակված Էնվերը Արևելյան Բուխարա եկավ 1921 թվականի վերջերին։ Իր տերերի մտահղացմամբ նա պետք է միավորեր Միջին Ասիայի բոլոր բասմաչներին, ոչնչացներ այնտեղ սովետական իշխանությունը և Անգլիայի հովանու ներքո այդ երկրամասի ողջ տարածքում ստեղծեր «Մուսուլմանական մեծ տերություն»[2]։

Էնվեր փաշայի ժամանման հետ բասմաչական շարժումը էմիրաթը վերականգնելու համար ֆեոդալական-կրոնական շարժման նեղ շրջանակներից վերաճեց հակահեղափոխական լայն շարժման՝ պանիսլամիզմի և պանթուրքիզմի դրոշի տակ։

Դործողությունների հիմնական վայր ընտրելով Ֆերգանայի հովիտը, Էնվեր փաշան կապեր հաստատեց Սամարղանդի, Արևմտյան Բուխարայի և Խորեզմի բասմաչների պարագլուխների հետ, միավորեց նրանց գինված հրոսակախմբերը։ Շուտով շարժումը տարածվեց Սամարղանդի, Սիրդարիայի մարզերը, Զերավշանի հովիտը և այլ վայրեր։ Նրան ակտիվորեն աջակցում էին Միջին Ասիայի հակահեղափոխական ընդհատակյա պանիսլամական կազմակերպություններ «Միլլի իթթիհոդը» («Ազգային միավորումը»), իսկ փոքր-ինչ ավելի ուշ՝ «Թուրքեստանում խալիֆաթի հաստատման միությունը»։

Յաքուցրիվ բանդաների միավորումը արագացնելու և նրանց գործողությունները համաձայնեցնելու նպատակով Էնվեր փաշան իր շտաբը տեղավորեց Արևմտյան Բուխարային ավելի մոտ, Յուրչիում։ Կարասուում նա հրավիրեց մոլլաների, իշանների և բասմաչական բանդաների պարագլուխների համագումար։ Այդ «ներկայացուցչական» խառնաժողովը «ղազավաթ»

[1] Н. Равич, Молодость века, М., 1961, с. 279.

[2] «Очерки истории Коммунистической партии Таджикистана», т. I, с. 58.

(«սրբազան պատերազմ») հայտարարեց «անհավատներին», ավելին, սովետական իշխանությանն ուլտիմատիվ պահանջ ներկայացրեց՝ բոլոր ռուսներին, ընդհանրապես քրիստոնյաներին Թուրքեստանից, Բուխարայից, Խորեզմից, Միջին Ասիայի մուսուլմանաբնակ մյուս բոլոր վայրերից արտաքսելու մասին։ Շարժումը սպառնում էր ոչ միայն Բուխարայի, այլև ամբողջ Միջին Ասիայի հեղափոխական նվաճումներին։ Հետևաբար պայքարը նրա դեմ դառնում էր ոչ միայն Բուխարայի ԺՍՀ-ի, այլև Սովետական Ռուսաստանի աշխատավոր մասսաների հարազատ գործը։

Թուրքեստանի սովետական կառավարությունը և կոմկուսակցությունը մոբիլիզացրին բոլոր ուժերն ու միջոցները՝ ներքին և արտաքին հակահեղափոխության միացյալ ուժերը ջախջախելու համար։ 1922 թվականի սկզբից բասմաչության դեմ պայքարի ղեկավարությունը հանձնվեց զինվորական հրամանատարությանը, ստեղծվեցին միլիցիայի կամավոր ջոկատներ, ուժեղացվեց ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքը բնակչության շրջանում։

Կուսակցական և սովետական մարմիններին գործնական օգնություն ցույց տալու նպատակով ՌԿ(բ)Կ Կենտկոմը Միջին Ասիա ուղարկեց Գ. Կ. Օրջոնիկիձեին և Շ. Զ. Էլիավային։ Տեղ հասնելով, սրանք վերլուծեցին այստեղ ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունը, միջոցներ ձեռնարկեցին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի նույն թվականի մայիսին ընդունած՝ «Թուրքեստանա-Բուխարական գործերի մասին» որոշումը կատարելու ուղղությամբ[1]։ Այդ որոշմամբ մասնավորապես նախատեսված էր ՌԿ(բ)Կ Թուրքեստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն (Թուրքբյուրոն) վերակազմել ՌԿ(բ)Կ Կենտկոմի միջինասիական բյուրոյի։ 1922 թվականի մայիսի 19-ին տեղի ունեցած Թուրքեստանի կոմկուսի Կենտկոմի պլենումն այդպես էլ վարվեց։ Ընտրվեց միջինասիական բյուրո, որի պլենումն իր հերթին Միջին Ասիայի կուսակցական կազմակերպություններին առաջարկեց անցկացնել լայն կամպանիա էնվերյան արկածախնդրությունը մերկացնելու և Արևելքում կարմիր բանակի ագիտագրական առաքելությունը աշխատավոր մասսաներին պարզաբանելու համար։ Պլենումը նաև ընտրեց միջինասիական բյուրոյի գործադիր հանձնաժողով, որը մայիսի 20-ին Գ. Կ. Օրջոնիկիձեի և Շ. Զ. Էլիավայի մասնակցությամբ մշակեց ու հաստատեց բասմաչության վերացման կոնկրետ պլան։ Մասնավորապես Թուրքեստանի, Բուխարայի ու Խորեզմի կուսակցական և սովետական ղեկավարներին հանձնարարվեց գործնականորեն լուծել վաքուֆները վերադարձնելու, տեղական ազգային դատարաններ թույլ տալու, շարքային բասմաչներին ներում շնորհելու հարցերը։ ՌԿ(բ)Կ Կենտկոմի ցուցումով ընդունված տնտեսական, ռազմական և քաղաքական բնույթի միջոցառումները տվեցին դրական արդյունքներ, ուժեղացավ պայքարը բասմաչության դեմ։

Բասմաչությունը վերջնականապես ոչնչացնելու համար 1922 թվականի հունիսից մինչև հոկտեմբեր կարմիր բանակի զորամասերը իրականացրին լայն գործողություններ։ Կարմիր զորամասերի մարտական օգնականը դարձյալ սովետական իշխանությանը նվիրված դեհկաններից կազմված կամավորական և միլիցիայի ջոկատներն էին։ Արդեն այդ ժամանակ միլիցիոներների երկու երրորդից ավելին տեղական ազգությունների ներկայացուցիչներ էին։ Կամավորական ջոկատների գլուխ էին կանգնած բնակչության շրջանում հեղինակություն ձեռք բերած կոմունիստներ և անկուսակցական ակտիվիստներ։ Սովետական մարմինները կամավորական ջոկատներին անհրաժեշտ օգնություն էին ցույց տալիս զենքով, պարենով, հանդերձանքով։

Արագ հարվածներով բասմաչությանը ջախջախելով Արևմտյան Բուխարայում, կարմիր բանակի զորամասերը 1922 թվականի հունիսի 15-ին վճռական հարձակման անցան Էնվեր փաշայի հիմնական զորքերի դեմ։ Զորամասերի առաջխաղացումն իրականացվում էր երկու զորասյուներով. ձախ թևից շարժվում էր դեպի Դենաու, Հիսար, Դուշանբե, Կաֆիրնիգան, Ֆայզաբադ, աջը՝ Թերմեզից Ամուդարիայով դեպի վեր՝ դեպի Կարանադի, Կուրգան-Թյուբե, Կուլյաբ, Բալջուան։ Բուխարայում բասմաչության ոչնչացման մարտական գործողությունների ընդհանուր ղեկավարությունն իրականացնում էր զորքերի Բուխարայի խմբի հրամանատար Ն. Ե. Կակուրինը։

Հակառակորդը մեծ կորուստներ կրեց և նահանջեց հյուսիս-արևելյան ուղղությամբ։ Թշնամու բանակում առաջացավ խուճապ։ Բասմաչները նետում էին զենքերը և դիմում փախուստի։

[1] Տե՛ս **В. М. Устинов**, Ленинская политика партии на Востоке, 1. 63, էջ 143—144։

1922 թվականի հուլիսի 14-ին Առաջին Թուրքեստանյան հեծյալ բրիգադի զորամասերը գրավեցին Դուշանբեն։

Պարտություն պարտության հետևից կրելով և հնարավորություն չունենալով ղեկավարել բասմաչների ջոկատները, Էնվեր փաշան 1922 թվականի հուլիսի 26-ին 300 հոգիանոց մի ջոկատով որոշեց անցնել արտասահման, բայց օգոստոսի 4-ին Բալչուանից ոչ հեռու շրջապատվեց 16-րդ գնդի հեծյալ զորամասերի կողմից և ճեղքել-անցնելու փորձ կատարելու ժամանակ սպանվեց[1]։

Միջին Ասիայում սովետական իշխանությանն անմիջականորեն սպառնացող Էնվեր փաշայի ղեկավարած բասմաչական խմբավորումների դեմ Սովետական Ռուսաստանի և Բուխարայի ԺՍՀ-ի զորամասերի ռազմական հաջողություններն ակնառու կերպով ցույց տվեցին սովետական իշխանության ուժն ու անպարտելիությունը, իշխանություն, որը հարազատորեն կապված էր աշխատավոր լայն մասսաների հետ[2]։

Չնայած 1922 թվականի ընթացքում հիմնականում ոչնչացվեցին կամ ցրվեցին բասմաչների առավել ակտիվ խմբավորումները, սակայն բասմաչությունը դեռ վերջնականապես չէր վերացվել։ Ամրանալով հատկապես անասնապահական շրջաններում՝ լեռնային վայրերում, Կարակումի և Կզլկումի ավազուտ տափաստաններում, որտեղ կային ջրհորներ, բասմաչները շարունակում էին դիմադրությունը։

Նախկին էմիրի երաշխավորությամբ և անգլիական գործակալների համաձայնությամբ սպանված Էնվեր փաշայի փոխարեն «իսլամի բանակի» հրամանատար կարգվեց նրա գործակից Սելիմ փաշան։ Սրա անվան հետ է կապված 1923 թվականին բասմաչության որոշ աշխուժացումը Բուխարայում։

Սակայն բասմաչության պարագլուխների շրջանում երևան եկան տարաձայնություններ։ Նրանցից շատերը հրաժարվեցին ենթարկվել Սելիմին։ Էնվեր փաշայի մահից հետո էմիրին և անգլիական գործակալներին այդպես էլ չհաջողվեց բասմաչական շարժումը միավորել միասնական հրամանատարության

[1] Տե՛ս «Очерки истории Коммунистической партии Таджикистана», т. I, էջ 86: Я. А. Мелкумов, Туркестанцы, М., 1960, էջ 127:

[2] Էնվեր փաշայի միջինասիական արկածախնդրության և նրա վախճանի մասին տե՛ս «Труды института востоковедения АН Узбекской ССР», Ташкент, вып. 2, 1954, էջ 33 43:

ներքո։ Բասմաչությունն արագորեն կորցնում էր քաղաքական գունավորումը և ստանում քրեական-բանդիտական բնույթ։

Հաշվի առնելով բասմաչների դեմ Միջին Ասիայի հանրապետությունների կուսակցական, սովետական և զինվորական մարմինների պայքարի փորձը, Համկ(բ)Կ Կենտկոմի միջինասիական բյուրոն 1924 թվականին համակողմանիորեն և մանրամասն մշակեց բասմաչների բանդաներին կոմբինացված հարվածներ հասցնելու, նրանց վերջնական ոչնչացման պլան, նախատեսեց տնտեսական, քաղաքական, զինվորական-պատժիչ և վարչական միջոցառումների միաժամանակյա իրականացում։

1924 թվականին բասմաչական շարժման կենտրոնը տեղափոխվեց Խորեզմ։ Հակասովետական բոլոր տարրերը սկսեցին հավաքվել Ջունաիդ խանի բանակում, որի հրոսակախմբերին անել հասել էին մինչև 20 հազար մարդու։ Նրան պաշտպանում էին Խիվայի մուսուլմանական հոգևորականությունը, խոշոր ֆեոդալները, ուզբեկական բուրժուազիան։ Զինված խռովություն բարձրացնելով Խորեզմի ԺՍՀ կառավարության դեմ, հակահեղափոխական դավադիրները «դաղավաթ» հայտարարեցին բոլշևիկների և նրանց կողմնակիցների դեմ։ Սակայն Խիվան դավթելու խռովարարների փորձը ձախողվեց։ Քաղաքի փոքրաքանակ կայազորը, որին պաշտպանում էր աշխատավոր բնակչությունը, հետ մղեց բասմաչների բոլոր գրոհները։ Իմանալով, որ Ջարջոուից մոտենում են սովետական զորքերը, Ջունաիդ խանը դադարեցրեց Խիվայի պաշարումը և շտապ հեռացավ ավազուտները։ Հետապնդելով նրան, կարմիր բանակի 82-րդ հեծյալ գունդը մարտերով անցավ Կարակումը, ոչնչացրեց Ջունաիդ խանի ավազակախմբերը և նրան ստիպեց փախչել արտասահման։

Խորեզմում հակահեղափոխական խռովությունը ճնշելու և Ջունաիդ խանի հրոսակախմբերը ցախցախելու գործում մեծ դեր կատարեցին ուզբեկ և թուրքմեն աշխատավորների կամավորական ջոկատները, որոնք կարմիր բանակի զորամասերի հետ կողք կողքի հարվածում էին ընդհանուր թշնամուն։

Հաջորդ՝ 1925 թվականին բասմաչական շարժման գլուխ անցավ Իբրահիմ բեկը։ Նույն թվականի հունվարին բասմաչների պարապետը 650 բանդիտների գլուխն անցած Լոայդ պարապետը դեպի Սուրխանի հովիտը։ Օգտվելով նախորդ

տարվա վատ բերքի հետևանքով Միջին Ասիայում ստեղծված ծանր դրությունից, 1925 թվականի գարնանը և ամռանը Իբրահիմ բեկը և բասմաչների մյուս պարագլուխները գործադրեցին բոլոր միջոցները, ընդհուպ մինչև տեռորը, իրենց բանդաները մարդկանցով համալրելու համար։ Զենք ու դինամիտերքը նրանք կանոնավոր ստանում էին արտասահմանից։ Նրանց մեծ օգնություն էին ցույց տալիս մոլլաներն ու բայերը, որոնք հակասովետական պրոպագանդա ու ագիտացիա էին մղում բնակչության հետամնաց մասի շրջանում, նրա հաշվին համալրում բասմաչության շարքերը։

Սուրխանի հովտում փոքր-ինչ մեծացնելով իր բանդաները, Իբրահիմ բեկը հարձակման պատրաստվեց։ Դեռևս չհամարձակվելով բացահայտ մարտական գործողություններ սկսել կարմիր բանակի զորամասերի դեմ, բասմաչները շարունակում էին արյունալի չարագործություններ կատարել խաղաղ բնակչության նկատմամբ, թալանում ու ամայացնում էին կիշլակները, սպանում մարդկանց, անասունները քշում արտասահման։ 1924—1926 թվականներին միայն Արևելյան Բուխարայի բնակչությունից հավաքվել և Բուխարայի նախկին էմիրին է ուղարկվել ավելի քան 3 մլն. ռուբլու ոսկի և հարյուր հազարավոր գլուխ անասուն[1]։ Բասմաչների վայրագությունների հետևանքով վիթխարի վնաս էր հասցվում գյուղատնտեսությանը։

Նեպ-ին անցնելու, գյուղատնտեսության սկսած վերելքի և երկրում կենսամակարդակի ընդհանուր բարձրացման պայմաններում բասմաչների վայրագություններն առաջ էին բերում աշխատավոր լայն զանգվածների վրդովմունքը, որոնք արդարացիորեն բասմաչներին համարում էին իրենց կատաղի թշնամիները և ակտիվ պայքարի մեջ էին մտնում հակահեղափոխության դեմ։

1925 թվականի աշնանն ու ձմռանը կարմիր բանակի զորամասերը և կամավորական ջոկատները մարտական ակտիվ գործողություններ ծավալեցին բասմաչների դեմ։ Հարձակողական մարտերի շնորհիվ բասմաչները մեծ կորուստներ կրեցին, և նրանց թվաքանակն արագորեն կրճատվեց։ 1926 թվականի գարնանը բասմաչները գործում էին միայն առանձին լեռնային շրջաններում և անապատների խորքերում։

Հակահեղափոխական բանդաների մնացորդները ջախջախելու ուղղությամբ կուսակցական կազմակերպության ծավալած ողջ գործունեությունը անմիջականորեն ղեկավարում էր Համկ(բ)կ Կենտկոմի միջինասիական բյուրոն, որին առընթեր ստեղծված էր բասմաչության դեմ պայքարի հանձնաժողով։ Օրինակ, 1926 թվականի մարտին այդ հանձնաժողովը ավելց «Տաջիկստանում բասմաչության ոչնչացման մասին» դիրեկտիվը, որի մեջ լայն միջոցառումներ էին նշվում այդ ուղղությամբ կուսակցական, սովետական և դինվորական մարմինների գործունեությունը կոորդինացնելու մասին[2]։ Դիրեկտիվում առաջարկվում էր ակտիվացնել ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքները, ժողովրդական մասսաներին բացատրել կարմիր բանակի և սովետական իշխանության նպատակները ու խնդիրները։ Մեծ ուշադրություն էր դարձվում տնտեսական հարցերին, հատկապես գյուղատնտեսական վարկի ճիշտ կազմակերպմանը, ոռոգման աշխատանքների ընդլայնմանը, բամբակագործության և գյուղատնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը։ Կարևոր նշանակություն էր տրվում կիշլակի հետագա սովետականացմանը, միլիցիայի, ժողովրդական դատարանների վիլայաթական մարմինների ստեղծմանը, սովետական դպրոցների և բժշկական հիմնարկների ցանցի ընդլայնմանը։ Համկ(բ)կ Կենտկոմի միջինասիական բյուրոյի այդ դիրեկտիվը դարձավ կուսակցական կազմակերպությունների հետագա գործողությունների մարտական ծրագիրը։

1926 թվականին կուսակցական կազմակերպությունները ագիտացիոն-մասսայական լայն աշխատանքներ էին ծավալում հատկապես բասմաչական բանդաների առավել ակտիվ գործողությունների շրջաններում՝ Կուլյաբում, Լոկայում, Կարատագում, Կուրգան-Թյուբեում և այլ վայրերում, որտեղ կազմակերպում էին միտինգներ, ժողովներ, կիշլակային հավաքույթներ, դեհկանների անկուսակցական կոնֆերանսներ։ Բնակչության շրջանում մեծ քանակությամբ կոչեր և թռուցիկներ էին

---

[1] Տե՛ս «Очерки истории Коммунистической партии Таджикистана», т. I, էջ 130։

[1] Տե՛ս «Новый Восток», книга 29, Москва, 1930, էջ 126—141։

[2] Տե՛ս «Очерки истории Коммунистической партии Таджикистана», т. I, էջ 131։

տարածվում ուզբեկերեն, թուրքմեներեն, տաջիկերեն՝ «Բասմաչությունը չախչախված կարգերի վերջին հենարանն է», «Բասմաչները զենք են գավթիչների, կեղեքիչների, իմպերիալիստների ձեռքին», «Ընտեսությունը վերականգնել կարելի է բասմաչությունը ոչնչացնելով միայն», «Մահ գլխավոր ավազակին ու արյունախումին, էմիրի և անգլիացիների դաշնակցին՝ Իբրահիմ բեկին»:

Քաղաքական-բացատրական և ագիտացիոն աշխատանքը մեծապես նպաստեց աշխատավոր դեհկանության մոբիլիզացմանը: Քաղաքական աշխատանքը զուգակցվում էր բասմաչությունից տուժած բնակչությանը սովետական պետության ցույց տված տնտեսական օգնության հետ: Նշանակալի միջոցներ էին հատկացվել դեհկանական աշխատավորական տնտեսությունները վարկավորելու, քաղաքացիական պատերազմի տարիներին անկում ապրած ոռոգման համակարգերը վերականգնելու, բամբակի ցանքատարածությունները ընդլայնելու համար: Պետության օգնությունն ստանում էին նաև վտարանդիությունից վերադարձածներն ու կամովին հանձնված բասմաչները: Կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ իրականացված բոլոր այս միջոցառումները վերջին հաշվով հանգեցրին բասմաչության կատարյալ մեկուսացմանը:

Կարմիր բանակի գորամասերը կամավորական ջոկատների հետ համատեղ 1926 թվականի գարնանն ու ամռանը իրականացրին մարտական մի շարք գործողություններ, որոնց շնորհիվ ջախջախվեցին բասմաչների հիմնական ուժերը: Բասմաչության պարագլուխ Իբրահիմ բեկը թողեց Լոկայը (Տաջիկստան) և փորձեց իր ծեծված բանդաների մնացորդների հետ թաքնվել լեռներում: Սակայն, շարունակ հետապնդվելով կարմիր բանակի գորամասերի կողմից և չստանալով բնակչության աջակցություն, նա ստիպված փախավ արտասահման:

Բասմաչության նկատմամբ հաղթանակը նվաճվեց ամենից առաջ կոմունիստական կուսակցության ճիշտ քաղաքականության շնորհիվ, որը հաշվի էր առնում Միջին Ասիայի տարբեր շրջանների կոնկրետ պատմական պայմաններն ու առանձնահատկությունները: Կուսակցության քաղաքականությունն ու պրակտիկ գործունեությունը, պայքարի սեփական փորձն աշխատավորներին մի կողմից համոզեցին բասմաչության հակահեղափոխական էության և մյուս կողմից՝ սովետական իշխանության

իսկական ժողովրդական բնույթի մեջ: Բասմաչության դեմ մղած պայքարում կազմակերպչական և քաղաքական մեծ աշխատանք կատարեցին և արիություն ու հերոսություն ցուցաբերեցին Միջին Ասիայի կուսակցական և սովետական բազմաթիվ այլի բնակող գործիչներ, ժողովուրդների լավագույն զավակներ Յա. Ա. Ֆազալին, Ռահմանբերդի Բարաչանովը, Դարիպ Նազարովը, Յակոբ Կուլիևը, Կարա Ալիմովը, Կարշի Օգինաևը և ուրիշներ:

Բասմաչության դեմ մղած պայքարի գլխավոր ծանրությունն իրենց ուսերին կրեցին հերոսական կարմիր բանակի գորամասերը: Հակահեղափոխական բանդաների ջախջախմանը մասնակցած այլի բնակ գորապետների թվում էին Վ. Մ. Բոնովը, Ն. Ե. Կակուրինը, Պ. Ա. Պավլովը, Զ. Ա. Պուտովսկին, Բ. Վ. Տոլպիգոն, Ն. Դ. Տոմինը, Տ. Տ. Շապկինը, Ի. Ֆ. Ֆեդկոն, Ա. Տ. Ֆեդինը: Այդ գորապետների թվում էին հայ ժողովրդի քաջարի զավակներ Յա. Ա. Մելքումովը (Մելքումյան), որը Թուրքեստանյան առաջին հեծյալ բրիգադի հրամանատարն էր, Թ. Հայկազյանը (Անդրկասպյան առաջին հեծյալ գնդի հրամանատար), Պ. Պետրոսովը (Աշխաբադի կարմիր բանակի կոմիսար), Ն. Հունանովը (Թաթարական բրիգադի 10-րդ գնդի հրամանատար) և ուրիշներ: Միջին Ասիայի աշխատավորները կարոտացան հաղթել ՍՍՀՄ ժողովուրդների ամբողջովին բարեկամության, Ռուսաստանի բանվոր դասակարգի, ողջ սովետական ժողովրդի եղբայրական օգնության շնորհիվ: Ուզբեկները, դաղախները, տաջիկները, թուրքմենները, կիրգիզները, կարա կալպակները ինտերնացիոնալիզմի խոր գաղափարի ոգեշնչումով են պահպանում ազգերի ու ազգությունների բերանները, վրացիների, հայերի և եղբայրական սովետական մյուս ժողովուրդների լավագույն զավակների հիշատակը որպես մեծ դժվարությունների գնով օգնության ձեռք մեկնեցին իրենց մուսուլման եղբայրներին բասմաչական խանական էմիրական կարգերից և բասմաչների բռնությունից նրանց ազատագրելու համար:

Հանրապետություններն կենսագործելով ինքնության ազգային քաղաքականության հիմնական սկզբունքները, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը միջոցներ ձեռնարկեցին պանիսլամիզմի և պանթուրքիզմի դպրակարգությունը վերջնականապես ջախջախելու: Նպաստելով ուկլոնիստների ազգայնական տարրերի ու պրակտիկ գործունեության ազգին

հարված հասցնելու և նրանց քաղաքական ասպարեզից վերջնականապես վերացնելու համար։ Այդ տեսակետից անգնահատելի նշանակություն ունեցավ այնպիսի մի խոշորագույն միջոցառում, ինչպիսին Միջին Ասիայի ազգային-պետական սահմանազատումն էր և դրա տարածքում ազգային սովետական հանրապետությունների ստեղծումը, որն իրականացվեց 1924 թվականի վերջերին։

Միջին Ասիայում ազգային-վարչական գոյություն ունեցող սահմանազատումը հակասում էր այնտեղ ապրող ժողովուրդների շահերին, բացասական դեր էր խաղում նրանց հետագա զարգացման ճանապարհին։

Այդտեղ սահմանները որոշվել էին ֆեոդալական արյունահեղ պատերազմների և դավթումների, իսկ հետագայում՝ ցարիզմի գաղութային քաղաքականության հետևանքով։ Դրանք չէին համապատասխանում երկրամասում գոյություն ունեցող ո՛չ տնտեսական և ո՛չ էլ ազգագրական իրավիճակին։ Միջինասիական հիմնական ազգություններից ամեն մեկն առաջվա նման բաժան-բաժան էր, մասնատված և գտնվում էր պետական-վարչական տարբեր կազմավորումներում։ Միջին Ասիայի սովետական երեք հանրապետություններից (Թուրքեստան, Բուխարա, Խորեզմ) և ոչ մեկում չկար այս կամ այն ազգության բնակչության կոմպակտ մեծամասնություն։ Այսպես, օրինակ, Միջին Ասիայում ապրող տաջիկների 47,7 տոկոսը գտնվում էր Թուրքեստանյան ԻՍՍՀ-ի տարածքում և 53,3 տոկոսը՝ Բուխարայի ԺՍՀ-ում[1]։ Թուրքեստանյան հանրապետությունում ապրում էր Միջին Ասիայի թուրքմենների 43,2 տոկոսը, Բուխարայի հանրապետությունում՝ 27 տոկոսը, Խորեզմի հանրապետությունում՝ 29,8 տոկոսը[2]։ Այսպիսին էր նաև Միջին Ասիայի հիմնական մյուս ազգերի վարչատերիտորիալ տեղաբաշխման պատկերը։

Անցյալից ժառանգություն մնացած այս արհեստական մասնատվածությունը, բնակչության ազգային-տերիտորիալ տարանջատվածությունը մեծ դժվարություններ էր ստեղծում սովետական և կուսակցական շինարարության գործում, խոչընդոտում էր ազգերի համախմբմանը, սրում ազգամիջյան հարաբերու-

[1] Տե՛ս «Революционный Восток», 1934, № 6, էջ 115։

[2] Տե՛ս նույն տեղը։

թյունները և ազգային բախումները, լրիվ չէր ապահովում Միջին Ասիայի ժողովուրդների տնտեսական և կուլտուրական զարգացումը, որի հեռանկարներն ու հնարավորությունները ստեղծվել էին Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ։ Հենց այդ ամենը, մասնավորապես ազգային համախմբումն արգելակող իրադրությունը չափազանց բարենպաստ հող էր ստեղծում պանիսլամականների և պանթուրքականների համար, որոնց տեսակետով ոչ մի տարբերություն չկար այդ ժողովուրդների միջև։ Նրանք ժխտում էին այն հանգամանքը, որ միջինասիական ժողովուրդներից ամեն մեկն ունի իր ազգային առանձնահատկությունները, իսկ դա պահանջում էր տնտեսական, քաղաքական և կուլտուրական հարցերը լուծելիս կիրառել աշխատանքի յուրահատուկ ձևեր ու մեթոդներ։ Հանդես գալով «միասնական իսլամական ազգի» լոզունգով, պանիսլամականները և պանթուրքականները միաժամանակ նպաստում էին ազգամիջյան հարաբերությունների վատթարացմանը, խորացնում անցյալում տիրողների կողմից բորբոքված թուրքմենների և ուզբեկների, ղազախների և կիրգիզների, տաջիկների և ուզբեկների միջև եղած թշնամանքը։

Միջին Ասիայում վարչական և պետական սահմանները փոփոխելու հարցը, սովետական ազգային-պետական շինարարության հետագա ծավալման խնդիրը կոմունիստական կուսակցությանը դրաղեցրել է դեռ քաղաքացիական պատերազմի տարիներից։ Վ. Ի. Լենինը, որ բազմիցս անդրադարձել էր այդ հարցին, գտնում էր, որ այդ փոփոխման ընթացքում պետք է անշեղորեն ելնել բնակչության ազգային կազմից, կենցաղային պայմաններից, պատմական և կուլտուրական ավանդույթներից։ Թուրքեստանում կուսակցության հիմնական խնդիրների մասին Թուրքեստանյան հանձնաժողովի կողմից 1920 թ. նախապատրաստված՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի որոշման նախագծի վերաբերյալ իր դիտողություններում Վ. Ի. Լենինը գրում էր.

«1) Հանձնարարել կազմելու Թուրքեստանի (ազգագրական և այլն) քարտեզ՝ ստորաբաժանելով Ուզբեկիայի, Կիրգիզիայի Թուրքմենիայի։

2) Ավելի մանրակրկիտ պարզել այդ 3 մասերի միաձուլման կամ բաժանման պայմանները»[2]։

[1] Տե՛ս «Революционный Восток», 1934, № 6, էջ 115։

[2] Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 41, էջ 525։

Սակայն այն ժամանակ անհնար էր իրականացնել Թուրքեստանի, առավել ևս ամբողջ Միջին Ասիայի ազգային սահմանազատումը, քանի որ կուսակցության և ժողովրդի բոլոր ուժերն ուղղված էին հակահեղափոխության զինված ուժերի լրիվ ջախջախմանը, իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների հետևանքով առաջացած տնտեսական քայքայման հաղթահարմանը։ Թուրքեստանի սահմանազատումն այն ժամանակ Վ. Ի. Լենինը համարում էր վաղաժամ միջոցառում, բայց գրտնում էր, որ առաջին իսկ բարենպաստ հնարավորության դեպքում պետք է ձեռնարկել այդ կարևորագույն գործը։

Եվ ահա, երբ արդեն ջախջախված էին բասմաչների հիմնական ուժերը, կոմունիստական կուսակցությունը գտավ, որ եկել է խնդրի լուծման ժամանակը։

Միջին Ասիայի ազգային-պետական սահմանազատման նպատակին ուղղված կոմունիստական կուսակցության գիծը, որը բխում էր լենինյան ազգային քաղաքականության սկզբունքներից, լիովին համապատասխանում էր երկրամասի բոլոր ժողովուրդների կենսական շահերին։ Այդ քաղաքականության մեջ դրսևորված էր նրանց ձգտումը՝ ստեղծել իրենց ազգային պետությունները, իշխանության իրենց սեփական մարմինները։ «Սահմանազատման իրականացումը վերևից թելադրված կամ կաբինետային աշխատանքի պայմաններում հորինված ակտ չէր,— գրում էր Մ. Ի. Կալինինը։— Այն սովետական Արևելքում ապրող աշխատավոր ժողովուրդների իրական իղձերի ու ակնկալությունների արտացոլումն էր»[1]։ Աշխատավոր լայն զանգվածները միահամուռ պաշտպանում էին սահմանազատման գաղափարը, պահանջում որքան հնարավոր է արագ իրականացնել այն։

Միջին Ասիայի ազգային-տերիտորիալ սահմանազատման հետ կապված հարցերը բազմիցս քննարկվեցին ՌԿ(բ)Կ Կենտկոմում և նրա միջինասիական բյուրոյում։ Այդ մեծ ակտի նախապատրաստմանը և իրականացմանն ակտիվորեն մասնակցում էին Մ. Ի. Կալինինը, Վ. Վ. Կույբիշևը, Ի. Վ. Ստալինը, Յա. Է. Ռուձուտակը, Մ. Վ. Ֆրունզեն, Գ. Վ. Չիչերինը և կոմունիստական կուսակցության ու սովետական պետության ուրիշ նշանավոր գործիչներ։

[1] «Туркменская искра», 13 ноября 1924 г.

ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն հանգամանորեն ուսումնասիրելով համապատասխան նյութերը և առաջարկությունները, 1924 թվականի հունիսի 12-ին ընդունեց «Միջին Ասիայի հանրապետությունների ազգային սահմանազատման մասին» պատմական որոշումը, որը համաժողովրդական լայն քննարկման դրվեց։ Քննարկումը վերածվեց քաղաքական հզոր կամպանիայի, որի նմանը դեռ չգիտեր Միջին Ասիան։ Այդ կամպանիան ընթանում էր ժողովուրդների բարեկամության ամրապնդման նշանաբանով, լենինյան կոմունիստական կուսակցության շուրջը Միջին Ասիայի աշխատավոր մասսաների սերտ համախմբման լոզունգով։ Միջինասիական բոլոր ազգությունների աշխատավորները լավ էին հասկանում առաջիկա սահմանազատման վիթխարի նշանակությունը, նրա մեջ տեսնելով իրենց դարավոր խոհերի և իղձերի իրականացումը։ Լայնորեն քննարկելով առաջիկա ազգային-պետական սահմանազատման հարցերը, նրանք դա գնահատում էին որպես նախկինում ճնշված ժողովուրդների ըստ ամենայնի զարգացման մասին կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության անխոնջ հոգատարության վառ դրսևորում[1]։

Ամենուրեք, գյուղացիների և բանվորների ընդհանուր ժողովներում, անկուսակցական դեհկանների կոնֆերանսներում, ազգային փոքրամասնությունների ժողովներում, սովետական իշխանության և կուսակցական կազմակերպությունների մարմինների նիստերում և պլենումներում, քաղաքների, վոլոստների, շրջանների, գավառների կուսակցական ակտիվների ժողովներում ընդունվում էին որոշումներ, որոնցում ջերմորեն հավանություն էր տրվում Միջին Ասիայի ազգային սահմանազատմանը, ազգային հանրապետությունների և ինքնավար մարզերի կազմավորմանը։

Կուսակցության Կենտկոմի որոշման համաժողովրդական քննարկման ժամանակ ազգային-տերիտորիալ սահմանազատման դեմ նորից բացահայտորեն հանդես եկան հակասովետական տարրերը՝ բուրժուական ազգայնականները, մուսուլմանական

[1] Տե՛ս «Исторические записки», изд. АН СССР, 1954, № 48, էջ 156—201։

հետադիմական հոգևորականությունը, որոնք գիտակցում էին, որ սահմանազատումն աշխատավորներին վերջնականապես դուրս կբերի իրենց ազդեցությունից։ Ազգային հանրապետությունների կազմավորումը նրանք փորձում էին ներկայացնել որպես մուսուլմանների արհեստական տարանջատում, պանթուրքականների հորինած միասնական «թյուրքական ազգի» մասնատում[1]։ Իրականում տեղական ազգությունների աշխատավորների լայն մասսաները հասկացողություն չունեին առասպելական «թյուրքական ազգի» մասին, որ հորինել էին ջադիդ-պանթուրքականները։

Վերջապես 1924—1925 թվականներին կոնկրետ իրականացվեց միջինասիական ազգերի պետական սահմանազատումը և կազմավորվեցին ազգային-պետական նոր միավորներ։ Ստեղծվեցին Ուզբեկական և Թուրքմենական Սովետական Սոցիալիստական Միութենական Հանրապետությունները ՍՍՀՄ-ի կազմում, Կարա-Կիրգիզական (Կիրգիզական) Ինքնավար Մարզը՝ ՌՍՖՍՀ-ի կազմում, Տաջիկական Ինքնավար Մարզը՝ Ուզբեկական ՍՍՀ-ի կազմում, Կարա-Կալպակյան Ինքնավար Մարզը՝ Ղազախական ՍՍՀ-ի կազմում։ 1932 թվականին Կարա-Կալպակյան Ինքնավար Մարզը վերակազմվեց Ինքնավար հանրապետության և մտավ Ուզբեկական ՍՍՀ-ի կազմի մեջ[2]։ 1929 թվականին Տաջիկական Ինքնավար Մարզը վերակազմվեց միութենական սոցիալիստական հանրապետության և մտավ ՍՍՀՄ-ի կազմի մեջ։ 1936 թվականին միութենական հանրապետություն դարձավ նաև Կիրգիզիան։

Ազգային-տերիտորիալ սահմանազատման կապակցությամբ հրամայական անհրաժեշտություն առաջացավ վերակազմել նաև կուսակցական կազմակերպությունները։ Այսպես, մինչև 1924 թվականը Տաջիկական ՍՍՀ-ի ներկայիս տարածքում գործող կուսակցական կազմակերպությունները մտնում էին Թուրքեստանի կոմկուսակցության կազմի մեջ (Տաջիկստանի հյուսիսային շրջանները և Պամիրը) և Բուխարայի կոմկուսակցության կազմի մեջ (Կենտրոնական և Հարավային Տաջիկստանի շրջանները)։ Այդպիսին էր դրությունը նաև միջինասիական մյուս կուսկազմակերպություններում։ Ուստի Թուրքեստանի, Բուխարայի և Խորեզմի կոմկուսակցությունները վերակազմվեցին Ուզբեկստանի և Թուրքմենստանի կոմկուսակցությունների և Տաջիկստանի ու Կիրգիզիայի մարզային կուսկազմակերպությունների։ Տաջիկական մարզային կուսակցական կազմակերպությունը մտավ Ուզբեկստանի Կ(բ)Կ կազմի մեջ։ 1929 թվականին Տաջիկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության կազմավորման կապակցությամբ մարզային կուսկազմակերպությունը վերակազմվեց Տաջիկստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության, իսկ Կիրգիզիայի մարզային կազմակերպությունը վերակազմվեց Կիրգիզիայի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության։

Ազգային-պետական սահմանազատումն էլ ավելի առաջ շարժեց Միջին Ասիայի նախկինում ճնշված ժողովուրդների փաստական անհավասարության վերացման խնդրի հաջող իրականացման և նրանց սոցիալիստական շինարարության մեջ ակտիվորեն ներգրավելու գործը, այն նպաստեց ազգամիջյան բախումների վերացմանը, ամրապնդեց երկրամասի ժողովուրդների եղբայրական համագործակցությունն ու բարեկամությունը։ Ազգային սահմանազատումը և Սովետական Արևելքի սուվերեն հանրապետությունների ստեղծումը համապատասխանում էր միջինասիական ժողովուրդների ազգային-պետական զարգացման, ամբողջությամբ վերցրած սոցիալիստական հասարակարգի կառուցման խնդիրներին։ Այն մեծագույն հարված էր մեծապետական շովինիզմին և տեղական նացիոնալիզմի, պանիսլամիզմի և պանթուրքիզմի գաղափարներին։

---

[1] Այսօր էլ հետադիմական բուրժուական պատմագրությունը (Ռ. Փայփս, Ռ. Քերոու, Ա. Փարք և ուրիշներ) փորձում է Միջին Ասիայի ազգային-պետական սահմանազատումը ներկայացնել որպես միասնական «թյուրքական ազգի» «տրոհում», «մասնատում», որը, իբր, հակասում է Թուրքեստանի ժողովուրդների շահերին (տե՛ս К. Новоселов, Против буржуазных фальсификаторов истории Средней Азии, Ашхабад, Туркменгосиздат, 1962, էջ 190—195, 199)։ Այդպես է ասված նաև ամերիկյան «հետազոտողի» այն հոդվածում, որ արտատպվել է դաշնակցական «Ազդակ շաբաթօրյակ» թերթում (տե՛ս 1984 թ. հունվարի 14-ի համարը)։ Փաստերը պերճախոս վկայում են, որ աշխատավոր լայն մասսաները վճռականորեն պաշտպանում էին սահմանազատումը և ազգային սովետական հանրապետությունների ստեղծումը։

[2] Տե՛ս БСЭ, третье издание, т. 11, М., 1973, էջ 381։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3
Կապիտալիստական հարաբերությունների ձևավորումը Օսմանյան կայսրության մեջ։ Թուրք ազգային բուրժուազիայի կազմավորումը . 7
Սահմանադրական շարժումը։ Օսմանիզմի գաղափարախոսությունն առաջին գծի վրա 34
Աբդուլ-Համիդյան մղձավանջի տարիները։ Պանիսլամիզմը որպես կայսրության պաշտոնական ուսմունք 58
Երիտթուրքերի հանդես գալը։ «Օսմանյան ազգի» գաղափարը։ Պանիսլամիզմը թուրք ազգայնականների տեսական զինանոցում . 147
Թուրքիզմ 216
Պանթուրքիզմ 236
Նախապատերազմյան սարսափի տարիները 286
Արևմտահայությունը թուրքական ազգայնամոլության զոհ . . . 323
Հեկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը։ Թուրքական արշավանքը Անդրկովկաս և նրա պարտությունը։ Արևելահայությանն ըսպառ բնաջնջելու ծրագրի ձախողումը . 370
Ռուսաստանի մուսուլման աշխատավորները սովետական իշխանության համար մղված պայքարում։ Բուրժուական ազգայնականների պանթուրքական պլանների ձախողումը 417
Քեմալական շարժումը պանիսլամիզմի դրոշի տակ։ Գորշ գայլը նոր թիկնոցով։ 1920 թվականի թուրք-հայկական պատերազմը և հետևանքները։ Հայաստանի մի մասում սովետական իշխանության հաստատումը արմատական շրջադարձ հայ ժողովրդի պատմական ճակատագրում 482
Բասմաչական շարժումը Միջին Ասիայում և նրա ջախջախումը։ Թուրքալեզու սովետական սուվերեն հանրապետությունների ստեղծումը։ Պանիսլամիզմի և պանթուրքիզմի կրախը ՍՍՀՄ-ում . . 543

Հրաչիկ Ռուբենի Սիմոնյան

ԹՈՒՐՔ ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խմբագիր՝ Մ. Բ. Միքայելյան, *նկարիչ՝* Ֆ. Գ. Աֆրիկյան, *գեղ. խմբագիր՝* Ս. Ս. Մկրտչյան, *տեխն. խմբագիր՝* Ա. Մ. Բլբուլյան, *վերստուգող սրբագրիչ՝* Ա. Ա. Հակոբջանյան

ИБ — 5638

Հանձնված է շարվածքի 30. 05. 1986 թ.։ Ստորագրված է տպագրության 7. 12. 1986 թ.։ ՎՖ 03624։ Ֆորմատ 84×108 1/32։ Թուղթ տպագրական № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 29,61 պայմ. տպագր. մամ.։ 28,44 հրատ. մամուլ։ Տպաքանակ՝ 10000։ Պատվեր՝ 755։ Գինը 2 ռ. 10 կոպ.։ «Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Խսահակյան 28։

Издательство «Айастан», Ереван-9, ул. Исаакяна, 28.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 6 տպարան, Երևան, Թումանյան փող. № 23/1։

Типография № 6 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван, ул. Туманяна, 23/1.